Собственная

Дарь въ библіотеку
отъ маленькаго
Камсарахана.

208/84 1612
82
623-44
208

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՕՐՈՒՆՔ ԳՐՈՑ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՀԱՄԱՌՕՏԵԱՆ

ՏՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶՈՀՐԱՊԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՕԼՍԵՑՒՈՑ

ՊՕՏՈՄ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
9468-57
948

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՄԲԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1849

Ամենայն գիրք ՏԵԾ աշխատանք և օգտակարք՝ ի վարդապետութեան են, և ի յանդիմանութեան, և յուղղութեան. և ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Տեայ յամ գործս բարութեան հաստատեալ։ Բ. Տիմ. Գ. 16։

22

1184.

2004

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Աշաղունչի պատմութիւնը՝ ինչպէս իր անունը կը ցուցնէ, ամէն պատմութիւններէն աւելի պիտոյական ըլլալով մարդուս, ու հաւատացեալց՝ նաև խիստ հարկաւոր ըլլալով, որովհետև քրիստոնէական հաւատքին հիմը (կամ թէմէլն) է՝ ճծաշունչ նը գիրքը. շատոնցմէ տեսնելով որ այսպիսի շահաւոր բանը մեր ազգին մէջը կը ցանկի, պատրաստուելէնք որ տեղն ի տեղը ընդարձակ առ նը պատմութիւնները մեր սովորական գրքի լեզուով շարադրած տպենք ի լուսաւորուն ազգս։ Բայց եաքը առ մը մտածելով որ այնպիսի գրաբառ շարադրած մեծ գիրքմը այնչափ օգտակար չի կրնար ըլլար՝ մեր ազգին հիմանու որպէս սովորելը նայելով, որ հանարձակ գրաբառը հասկցողը քիչ է. ու ան քիչէն շատէն հասկցողնալ ուզենք բուն ճծաշունչէն իր փափաքը կրնա առնել։

Ինոր համար դարձուցինք համառօտ կերպով աշխարաբառ ոճով ըրինք. որ գրաբառ գիտցողնալ ասոր կարօտ չմնար, որ շատ տեղ լոյս կուտա ճծաշունչը աւելի լաւ հասկնալու. ու չի գիտցողը՝ որ կամ ամենևին չէր լսեր ճծաշունչի պատմութիւնները, կամ մէկ քանի նահապետներուն գործքերը վեր ի վերանց միան լսած էր՝ ասկէց կատարեալը կիմանա։ Կամ այնպիսին որ շատ պիտանացու գրաբառ գրքերէն զանկվեր, առ մէկրս կարդալով ու հասկնալով կրցուանք որ ըստ կարելութեան կրնա շատին տեղը լեցուներ, ոչ միան հոգեղէն կողմանէն որ բոլոր քրիստոնէական ճշմարիտ ուսումն ճծաշունչին ըստ ճծերուն վրա հաստատված է, հապա նաև բնական և քաղաքական ուսման դիտն, որ ան պատմութիւններով խելքը կը բացվի կը լուսաւորվի, ու անկէց ալ ուրիշ շատ բան կիմանա։

Իսկ աշխարհաբար շարադրութիւնն որ ըսինք, նայեցանք որ զուտ հայերէն ըլլա՝ առանց այլազգի բառերի մէջը խառնելու տառՃկերէն, կամ պարսկերէն, կամ Ֆրէնկերէն, (ինչպէս որ հիմակու Ժամանակը մեր ցիրուցան եղած ազգը ինչ ազգի հետ որ բնակերէնէ՝ կամաց կամաց անոր լեզուէն առեր խառներ է իր հայերենին մէջը,) որ ասով շատ աւելի է աշխարհաբառ լեզուն թիս, ու անանկ փոխվեր է որ՝ մէկ տեղացին մէկալին ըսածը դժվար կը հասկընա։ Ինչոր համար մենք ընտացինք որ այսպէս ջըլլա, հապա որչափ կարելի է ամմենքը հասկընան. ուստի ոճՃաղ ըստամպոլցիի հայերենի կերպով բանեցինք, որ բուն հայատատանցոցալ աւելի մնա է, ու պարսկահայալ կը հասկընան. միան թէ՝ ուր տեղ որ խօսքը այսպիսի աշխարհաբառէն կըպակսէր՝ ան տեղը գրաբառէն առած բանեցուցինք, և տեղ տեղալ՝ ՅՈՎ մեկնելով, զատ տառՃկերէնը գրինք. որ ասով կարգացողներուն քիչ քիչ գրաբառիալ դուռ բացվի։

Այս համառօտ ծանուցումս ընեէլէն ետև՝ ալ աւելորդ կը համարիմ որ ան գրքիս օգտակարութիւնը վրա երկան գովասանք ընեմ, ու յորդորեմ որ առնեն կարդան. որովհետև կը յուսամ որ միան անունը լսելով ետևէ իյնան որ ունենան, ու կարդալով ձեռքէ չի թողուն, մանաւանդ պարզամիտները ու նորավարժ տղաքը, որ գլխաւորաբար իրենց համար՝ ինչպէս ըսինք, շարադրվեցաւ ատ գիրքս. որով մեր փոքր աշխատանքնալ պարապ չէն հաներ. որ սիրով յանձն առինք, ի փառս ՅՈՎ, և ի յօգուտ ազգիս։

Այս գործուս երկրորդ տպագրութիւնը մէջը շատ տեղ աշխարհաբառ շարադրութիւնը ոճը աւելի յարմարցունելէն ի զատ, նաև իւրաքանչիւր պատմութիւնի սկիզբը ՅՈՎՀԱՆՆԷՍ գլխովը նշանեցինք. և Ժամանակագրական Թուականալ էվէլցուցինք, սկսեալ ի ըստեղծմանէ աշխարհի։ Բայց որովհետև ՅՈՎՀԱՆՆԷՍ Ժամագրութիւնը վրա կերպ կերպ կարծիք կան, (անանկ որ՝ սկսեալ 3740 էն ինչվան 6984 տարին քանի առաջ աշխարհի ստեղծումը գրին,) մենք հիմակու հիմա առանց մանաւանդ բնութիւնը մեր կարծիքը որոշելու, ասոր մէջը այն սովորականին հետևեցանք, որ աշխարհի ստեղծումը քանի Թուականէն 4000 տարի առաջ կըդնեն։

Գնացեալք յաշխարհ ամ՝ և քարոզեցէք զաւետարանն ամ արարածոց։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻՆ, ԸՍՏԵՂԾՄԱՆԻ ԱՇԽԱՐՔԻՍ ՄԻՆՉԵՒ ՅՈՎՍԵՓԱՅ ՄԱՀԸ.

ԳԼ. Ա.

Ստեղծումը աշխարհի՝ և առաջի մարդոն։

Ծննդոց. գլ. ա. բ։ = Սմ Յի ο։

Մեկնակաւն ՝ծ երբոր կամեցաւ աս աշխարքիս ստեղծել, պէտք առաջ հրամայեց որ ոչինչէն երկինքը ու երկիրս ըլլա՝ իր ամէն մէջի բաներովը, անպատրաստ (յ՝ խառնափնդոր, կամ թասլախ)։ Յետ անոր ստեղծումը վեց օրվան մէջ ուզեց որ աս կարգովս կատարէ։ Առաջի օրը՝ լուսը ստեղծեց։ Երկրորդ օրը՝ հաստատուելը ըրաւ, որ երկինք ըսվեցաւ։ Երրորդ օրը՝ երկրիս գունտը որ բոլոր ջրով պատած էր ջուրը անկէց բաժնեց, որով ցամաքը՝ երկիր ըսվեցաւ, ու մէկ տեղ կեցած ջուրը՝ ծովասակէ՝ 'ի զատ՝ հողուն մէջը ամէն բաներու սերմը (յ՝ թօխումը) դնելով հրամայեց որ

ամմէն կերպ խոտեր ու ծառեր բուսնին։ Չորրորդ օրը երկնքի բոլոր աստղերը ստեղծեց. և սահմանեց որ՝ արևը ցորեկը լուսաւորէ, ու լուսընկան՝ գիշերը. և ասոնց պտտելովը ըլլա՝ տարի, ամիս, ու օր։ Հինգերորդ օրը հրամայեց որ ջրերէն ամմէն ցեղ ձկներ և թռչուններ (յր խուշեր) ըլլան՝ մեծ ու պզտիկ, և ասոնք ամմէնքը աձին ու շատնան։ Եցերորդ օրը հրամայեց որ երկրէն՝ յր հողէն ամմէն ցեղ չորքոտանիներ ու անասուններ (յր հայվանները) ըլլան։ Այս ան օրը աս ամմէն կենդանիները ստեղծելէն ետև՝ ուզեց որ ասոնց մէկ տիրապետողմը դնէ. անոր համար հողէն առաւ շինեց առջին մարդը Ադամ, հասարակ անբան կենդանիներէն վեր՝ բանական հոգի տալով իրեն. որ ասով՝ ըստ պատկերի՝ և ըստ նմանութեան յր ըսվեցաւ մարդը։ Այսքը ուզելով՝ ինչ որ ադամա մէկ իրենն նման օգնականմընալ չէտը տա. ադամ քնացած ատենը՝ անոր մէկ կողը առաւ՝ ու անկէց շինեց Աւան՝ կնիկ մարդ։ Այս այսպէս՝ ինչ բոլոր աշխարքս իր մէջը եղած ամմէն բաներովը վեց օրվան մէջ ստեղծելէն ետև՝ եօթներորդ օրը դադրեցաւ 'ի ստեղծագործութենէն. և օրհնելով այն օրը ուզեց որ սուրբ պահվի 'ի յիշատակ հանգստեան իւրոյ։

ԳԼ. Բ.

Ալեհարց մեջը ու պարտիզը

Ծննդ. Գ. = Ամեն։

Ինչ ադամ ու Եւա ստեղծելուընպէս իրենը դրախտը դրաւ, որ հոն բանին՝ ան տեղը պա-

հեն։ Այս դրախտ ըսածը՝ մէկ ադվոր ու զը-
վարձալի պարտէզ (այ պախձա) մընէր՝ ամմէն
բարիքներով լեցված զարդարած. և ուրիշ գե-
ղեցիկ և պտղատու ծառերէն՝ի զատ՝ ան դրախ-
տին մէջ տեղը երկու ծառ ալ կային, որ ասոնց
մէկը կըսվէր՝ ծառ կենաց, և մէկալը՝ ծառ
գիտուն բարւոյ և չարի։ Հոն ամ ադամա ա-
պրսպրրեց ըսաւ որ՝ բոլոր դրախտին ծառե-
րուն պտուղներէն կընաք ուտել, միայն պտղոյն
գիտուն բարւոյ և չարի ծառէն չըլլա թէ ու-
տէք, գիտնաք որ անկէց ուտելնուդպէս կըմեռ-
նիք։ Այլ խորամանկ սատանան օձու կեր-
պարանք մտնելով երեւցաւ եւային ու խաբեց
զինքը, ըսաւ որ չէ՛ թէ ան ծառէն ուտեքնէ
կըմեռնիք դուք, հապա՝ գիտնալով ամ որ ան
ծառին պտուղէն ուտելնուդպէս՝ ձեր աչքը կը-
բացվի ու դուք ալ ամ կըլլաք՝ բարին ու չա-
ը կըճանչնաք, անոր համար ձեզի ապրսպրեց
ամ որ ան ծառին չի մօտենաք։ Այս երբոր աս
բանը ըսեց, ու մէկալգիկնալ տեսնելով ան
արգելած պտուղին աղվորութիւնը՝ չիդիմա-
ցաւ՝ գնաց ծառէն փրցուց ու կերաւ. և ան-
կեց իր երկիանալ տըվաւ, որ անալ առաւ կե-
րաւ։ Ուստի ասանկ ուտելնուսպէս՝ իրաւի
աչվընին բացվեցաւ, որ առաջ երկուքնալ մերկ
(այ չըլլախ) էին, և իրենց մերկութիւնը չէին
տեսներ, ան ատենը մերկուինին իմացան, ու
ամբընալով շուտմը թզենւոյ տերևով (այ ինձի-
ըի եաբրախներով) գոցեցին պարտըկեցին ի-
րենց մերկուիը, և երբոր այ դրախտը գալը
իմացան նէ՝ փախան ծառերուն մէջը պահվը-
տեցան։ Այտքը ամ որ կանչեց՝ ադամ՞ուր ես.
ադամ պէն տըվաւ ըսաց թէ՝ քու դրախտը

գալըդ խմացանէ՝ վախծա, ու մերկ ըլլալուս համար գացի պահվեցա։ Ասաւ ըսաւ, ովՔ ըսաց քեզի որ՝ դուն մերկ ես. ըլլա թէ ան պտուղն որ քեզի ապրսպրբեցի՝ որ չուտես, անկէց կերած ըլլաս։ Ադամայ պիտնեց, կնիկը որ ինծի ընկեր տրվիրնէ, անիկա ինծի տըվաւ որ ուտեմ։ Ինծ նորէն դարձաւ կնկանը հարցուց. հապա դուն ինչու ատ բանը ըրիր. անալ պիտնեց թէ՝ օձը իս խաբեց։ Ինատենը օձին դարձաւ ըսաց ՀՀծ. ատ չարուեդ համար՝ բոլոր կենդանեաց մէջ անիծեալ ըլլաս դուն. բերէքս 'ի վար փորուդ վրա քալես, ու քու կերակուրդ հողը ըլլա. քու մէջդ ու ատ կնկանը մէջը ձեր զաւակներովը թշնամութիւն ըլլա, որ ան քու ետևէտ իյնա գլուխդ ջախջախելու, ու դուն անոր գարշապարը (ՅՅ էօքՁէն) խածնելու։ Ատը կնկանալ ըսաւ. քու վիշտդ ու տառապանքդ շատնա՛, տղաքերքդ տրտմութիւ ու ցաւով ըլլա. երկանդ իշխանութիւն տակը ըլլաս, որ ինքը քու վրադ տիրապետէ։ Ինկէ ետև ադամայալ ըսաւ. դուն նալ որովհետև կնկանը մտիկ ըրիր՝ իմ արգելած պտուղէս կերար, ատ քու մեղքիդ համար՝ անիծեալ ըլլա երկիրը, փուշ և տատասկ քեզի բուսցունէ. որ երեսիդ քրտինքովը հացը ուտես՝ ինչվան որ նորէն հողդառնաս ուսկից որ ստեղծվեցար։ Ասպէս որ եղաւ, ՀՀծ կաշի լաթեր հագցուց ադամա ու եւայի, անանկ դրախտէն դուրս ըրաւ։ որ իրենքալ ան ատենէն սկսան բնակիլ աս թըշվառութեան երկիրըս, ու զաւակ բերելով օրէ օր շատցան։

ԳԼ. Գ.

Կայէնի և Հաբելի պատմութիւնը։

Ծննդ. դ։ = Սամ. 128 130։

Աղամայ առաջինեակ զաւակը կայէնը եղաւ, և անկեց ետքը՝ աբէլ։ Կայէն երկրագործուն (այ էքինճիութիւն) կընէր. ու իր եղբայրը աբէլ ոչխարներ ունէր՝ ինքնակ հովիւուն (այ չօպանութիւն) կընէր։ Հոնք երկուքնալ ուզեցին իրենց ունեցածներէն այ պատարագ (այ փեշկէշ) մատուցանել. կայէն նայեցաւ որ իր երկրին բերքերուն անշահները տա. բայց աբէլ անոր ներհակը՝ իր ոչխարներուն առաջինեկները՝ ու աղեկները զատեց այ տրվաւ։ Հնոր համար ուրախ սիրեց աբէլը՝ ու իր ըրած պտղոգը ընդունեցաւ, ու կայէնը ատեց՝ իր տրվածին երեսը դարձուց։ Հոս բանիս համար խիստ տրտմեցաւ կայէն երեսը կախեց։ Ետքը աստուծմէն յանդիմանուն լսեց թէ՝ ինչու երեսդդ կախեր տրտմերես՝ ու կընախանձիս եղբօրդդ վրա. մեղքը քուկդ է, թող դունալ աղեկները ինծի պտղոգ ընելիր։ Հետև թէպէտ ուրախ ասալ ըսաւ որ՝ կըներ եմ թողուն կուտամ քեզի՝ ու անդրանիկութենդ քեզ չեմ զլկեր. բայց այսու ամիս կայենի սրտին նախանձուն կրակը չի մարեցաւ. հապա մէկ օրմը խաբելով աբէլը՝ թէ զբօսանք երթանք մինաւոր հետը առաւ մէկ անապատ տեղմը տարաւ, ու հոն վրան ելաւ սպաննեց զինքը։

Հետը երբոր ուրախ հանդրպեցաւ կայենի հարցուց թէ՝ ուր է քու աբէլ եղբարդդ. կայէն սուտ պէնն տրվաւ թէ, ես ինչ գիտնամ, ես

եղբօրրս պահապանն եմ մի։ Ինչ ատենը ՝ծծալ ըսաւ իրեն. դուն ատ ինչ ըրիր, եղբօրդ արու-նը գետնէն ինծի կը բողոքէ (՝ի տատ ֆիրեաթ կրկանչէ). անոր համար՝ անիծեալ ըլլաս դուն ան գետնին վրա՝ որ քու ձեռքովդ եղբօրդ արունը խրմեց, ու քու աշխատանքիդ պտուղը անկէց չառնես. և բարբարական ըլլաս աս աշխարքիս վրա։ Այսու կերպիւ կայէնը ՝ի երեսէն ինկած, բոլոր իր կենացը մէջ յուսահատած բարբարական կրպրտրտէր, ինչվան որ անգամ՝ մը դամէք իր թոռը յանկարծ չի ճանչնալով թէ ովէ՝ ըսպաննեց զինքը։ Յետքը՝ աս կայէնի ցեղնալ իրենց հօրըպէս ՝ծծպաշտուէ պաղած, ինչպէս կրսեն՝ կամաց կամաց կռապաշտութիւն սկսան մէջերնին մտցուցնել։

Ասայ ՝ծծ՝ ադամա նախահօրը ուրիշ զաւկներէն՝ի զատ՝ անմեղ աբելին տեղը բարի որդիմը տրվաւ՝ սեթ անունով, որ ան խիստ սիրելի եղաւ ՝ի. ու սեթայ բարի զաւկները և թոռները՝ որդիք ՝ի ըսվեցան։ Այսոնց մէջէն ալ գլխաւորը՝ մէկմը ենովն նահապետը եղաւ, որ ՝ծծպաշտուելը շատ ծաղկեցուց. մէկալը ենովք նահապետը, որ չի մեռած՝ մարմնով երկինքը վերացաւ. ու մէկալ՝ մաթուսաղա ըսած, որ ամմէն մարդէն աւելի ապրեցաւ, ՝ի՝ ինը հարուր վաթսունը ինը տարի։

ԳԻ. ԳՈ.

Ի՝ մարդոց աղարունը ջրհեղեղով էղծածը։

Ծննդ. ղ. է. թ։ = Ամտի 1656. 1657։

Ստեղծմանէ աշխարքիս (ըստ եօթանասնից) երկու հազար երկու հարուր տարիի չափ

անցնելէն ետքը, երբոր ալ մարդիկը շատնալով լեցուցեր էին բոլոր աշխարքս. անոնց մեղքը ու անօրէնութիւնալ այնչափ շատցաւ որ՝ չափը անցուց. անոր համար ՆԾ սաստիկ սրդողելով վրանին ուզեց որ աշխարքէս ջնջէ վերցունէ մարդիկը՝ բոլոր կենդանիներնալ հետը՝ որ անոնց ծառայուն համար ստեղծեր էր։ Բայց աս բիւրաւոր մարդիկներուն մէջէն մէկ մարդը կար սեթա օրհնեալ ցեղէն Լոյ նահապետը, որ ինքը միան իր անմեղութիւնը և կատարեալ արդարութիւնը ՆՅ սիրելի եղեր էր. ուստի ասոր յայտնեց ՆԾ որ բոլոր աշխարքս ջրհեղեղով պիտի պատժէ կորսընցունէ, ու միան զինքը իր տղոցմովը պիտոր խալըսէ. որ անկէ ետև միան անոր ցեղէն ելլան աշխարքըս լեցունեն։ Բայց նոր համար հրամայեց ՆԾ նոյ նահապետին որ՝ մէկ մեծ տապանը (ՅՊ կէմիպէս շինվածքը) շինէ, իրեք հարուր կանգուն երկանքը, յիսսուն լանքը, ու եռասուն՝ բարձրութիւնը. մէջը՝ խորշ խորշ (ՅՊ պէօմիներով) բաժնած. և ասոր ներսը դուրսը բոլոր ձիւթով (ՅՊ զիֆտով) աղէկմը ծեփէ, որ մէջը ջուր չանցնի։ Լոյ նահապետը երբոր խալըսեցաւ աս տապանը շինելը՝ ՅՊ հրամանովը անոր մէջը մրտաւ ինքը իր կնիկովը ու իրեն իրեք տղոցմովը, որ կրավեին՝ սեմ, քամ, յաբեթ, անոնքալ իրենց կնիկներով. և աշխարքիս ցամաքի ամէն կենդանիներէն ու թռչուններէն երկու երկու արու և էգ, իսկ սուրբ կամ ուտելու կենդանիներէն՝ եօթը եօթը։ Լոյ. ու ասոնք ամէնը հոն մտնելէն ետև՝ ՆԾալ դրրսէն տապանին դուռը վրանին գոցեց. ու սկսաւ ջրհեղեղը. որ քառասուն օր քառասուն գիշեր անդադար սաստիկ

անձրևով ու ծովը բարձրանալով՝ բոլոր աշխարքիս ցամաքը ջրով ծածկվեցաւ, անանկ որ նաև պինտ բարձր լեռներուն ծարէն տամնը-հինկ կանգունալվեր եկաւ ջուրը. որով տապանէն դուրս մնացած բոլոր կենդանի ստեղծվածները խրխտրվեցան մեռան. ու միան նոյ նահապետը իր հետը եղածներովը ողջ մնացին ան տապանին մէջը, որ ջրին երեսը կըպրտրտեր։ Ցտքը հարուր յիսունն օրն որ եղաւ՝ ամէն մէկ հովմը հանեց, որ կամաց կամաց ան ջուրը ըսկըսաւ աշխարքիս երեսէն պակսիլ. ուստի նոյի տապաննալ ան ատենը հայաստանի կողմերը գանըվելով՝ Ցարարատ կամ մասիս ըսած լեռան վրա նստաւ։ Ցետտեներնոյ նահապետը տապանի պզտի պատուհանը (յր փէնձիրէն) բացաւ, ու երկրին ցամաքուելը փորձելու համար առաջ ագռաւմը (յր խառզամը) դուրս թողուցվաւ. երբոր տեսաւ որ ան ագռաւբեռ չի դարձաւ՝ անոր ետևէն մէկ աղաւնի (յր կիւվերճին) մը թողուց. բայց աս աղաւնիս ոտք դնելու տեղ չի գտնելով շուտմը դարձաւ։ Ցսոր վրա նոյ եօթն օր ալ սպասեց, նորէն թողուց աղաւնին. որ գնաց ուշացաւ, ու իրիկվան գէմբերանը ձիթենիի (յր զէթինի ծառի) կանանչ ճուղիկմը առած տապանը դարձաւ։ Ցնկէ եօթն օրէն ետև նորէն մէկմալ թողուց աղաւնին. երբոր տեսաւ որ ալ ետ չի դարձաւ աղաւնին, ու ջրս գին նայեցաւ տեսաւ որ ջուրը բոլորովին ցամքեր է. (ինչվան ան ատենը լըման տարիմը տապանին մէջը կենալէն ետև.) ՝ի հրամանովը ինքնալ դուրս ցամաքը եկաւ իր բոլոր ընտանիքովը, ու հետը դուրս հանեց ան բովանդակ կենդանիներն

ու թռչունները և՝ ի ինորհակալուն՝ այ ըրած բարերարութեը՝ սեղանմը շինեց՝ անոր վրա ողջակեզ մատուց այն սուրբ կենդանիներէն։ Ա՛ծալ սիրով ընդունեց նոյի պատրգը, օրհնեց զինքը իր տղաքներովը՝ որ նորէն աճին շատնան աշխարքիս վրա, ու բոլոր կենդանիները իրենց տերուն ներքևը ձգեց, որ անոնցմէ կարող ըլլան մորթելու ուտելու. նաև հետերնին ուիստ ու գաշինք ըրաւ որ մէյմալ երկիրս անիծելով ջրհեղեղ չընէ. և աս բանիս նշան՝ ծիրանի գոտին ըսաւ կըղնեմ երկինքը ամպերուն մէջը։

Ա՛նկէ ետքը նոյ նահապետը՝ առջինինպէս նորէն երկրագործուի ընելով՝ էգի անկեց, անոր խաւողովը գինի շինեց. ու մէկ հեղմը անգինին քիչը էվէլկէկ փախցունելով՝ անանկ գինովցաւ որ վրայի լաթերը հանած մերկ բըռնած ինկաւ պառկեցաւ։ Ա՛ռանկ խայտառակ կերպով պառկած տեսնելով իր քամ ըսած որդին՝ վազեց մէկալ եղբարներուն՝ ծաղր ընելով պատմել զրուցել իրենց հօրը խայտառակութեը։ Եմ ու յաբեթ եղբարներնալ երբոր աս լսեցին՝ սաստիկ ամըշնալով սրդոզեցան վրան, ու շուտը լաթեր առին կռնրկինին վրա՝ անանկ ետ ետ երթալով առանց տեսնելու գացին ծածկեցին իրենց հարը։ Ա՛նոր համար ետքը երբոր արթընցաւ զգաստացաւ նոյ նահապետը՝ ու բանը իմացուն՝, անիծեց ան քամ տղան իր բոլոր զաւկրներովը. ու օրհնեց սեմը և յաբեթը։ Ետև ջրհեղեղին վրա իրեք հարուր յիսսուն տարիալ ապրեցաւ նոյ նահապետը. ու ինը հարուր յիսսուն տարվան մեռաւ։

ԳԼՈՒԽ.

Ռաբելոնի աշտարակը։

Ծննդ. ԺԱ։ = Ամ Տի 1770

Այս նահապետին տղոցմէն օրէ օր նորէն մարդիքը սկսան շատնալ. և ասոնք ամէնքը աշխարհիս մէկ կողմը բնակած՝ մէկ լեզու կը խօսէին մէջերնին։ Այսքը ալ անչափ շատնալէն խիստ դժվար ըլլալով իրենց մէկ տեղ կենալը՝ մտածեցին որ մէյմէկ բաժնըվին երթան աստիս անդին բնակին։ Ինչպէսնը ասոնց միտքը հրպարտուն և յանդգնուն խորհուրդը ինկաւ, որ առաջ՝ քանի որ մէկտեղ են նէ՝ մէկ աշտարակի (այ խուլէի) ձեռով քաղաքմը շինեն, անանկ մեծ ու բարձրը՝ որ անոր ծայրը ինչվան երկինքը հասնի ըսին. որ անով իրենց յաւիտենական անունմը աշխարհիս վրա թողուն. ու մէկմալ՝ ինչպէս որ կըսեն, անկէ ետքը ջրհեղեղէն ազատ ըլլան՝ թէ որ ասանկ մարդիքը պատժելու ըլլան։ Այս ամբարտաւանական գործքս անչափ անհաճոյ եղաւ այ, և յիմարական երևցաւ ասոնց իմաստութէնէ առջևը, որ ուզեց հիմնայատակ ընել ոչնչացունել անիկա. և ան՝ այսպիսի կերպով ասոնց ուզածնէն կրձևացուցանէ։ Ինչ կըսէ՝ երբոր ինչաւ տեսաւ ասոր դէպ մարդկան շինած աշտարակը, դարձաւ ըսաց թէ՝ ասոնք բոլոր մարդիք մէկ ազգ ըլլալով և մէկ լեզու խօսելով ատ բանը շինեցին, և ոչինչ կողմանէ պակասութիւն քաշելով ինչ որ ուզենէ կրնան։ (ատանկ ըլլար,) հապա եկէք ասոնց լեզուն խառնենք շփոթենք, որ մէկը մէկալին զբրու-

ցածը չիհասկընա։ Ապստի կըսեն թէ՝ այս կեր-
պովըս ան աշտարակին շինվածքը խափանե-
ցած, որ երբոր անչափ հազարաւոր մարդիք
ներբողեր ըսած մէկմը քամա թոռը՝ իրենց վրա
գալուն առաջնորդ կեցած՝ աս շինվածքիս վը-
րան թափեր կըշնչեին. ցած յանկարծակի ի-
րենց գիտցած լեզուներն մոռցուներով խառ-
նելով՝ նոր կերպ կերպ արտաբերուն իրենց խօ-
սել տրվաւ. և այնպէս մէկըմէկու ըսածը չի-
մանալով՝ աշտարակին շինվածքը մընաց՝ առաջ
չիգնաց։ Բայց վրա նաև արտաքին պատմու-
թիներնալ կըսեն թէ՝ ցած մէկ սաստիկ փոթո-
րիկմը (կամ խայմը) հանեց որ ան բաբիլոնի
աշտարակը հիմնայատակ կործանեց։ Աշտա-
րակին բանը ասանկ որ եղաւ, այն միաբանած
մարդիքնալ անկէց ցըրվեցան, ու խումբ խումբ
բաժնըված սկսան աստին անդին երթալ, աշ-
խարքիս չորս կողմը բնակիլ։ Նաև ան լեզուներ-
ուն խառնըվելուն պատճառովը՝ աշտարակին
տեղին անունը որ առաջ սենաար կըսվեր, անկէ
ետև Բաբէլ կամ Բաբիլոն՝ ըսվեցաւ. որ խառ-
նակութի ըսել է։

ԳԼՈՒԽ Ը.

Հայր աբրահամ։ Հոլոմը, ու իրեն որդիքը գործերը։

Ծննդ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. = Ամ Տի 2083. 2092։

Աշտարակին բաժանումէն ետև աշխարքիս
մարդիքը էվելօք շատնալով՝ ու ցածպաշտու-
թէն նորէն կուապաշտութի դառնալով. ցած
ասոնց մէջէն իրեն հաւատարիմ ծառա ընտ-
րեց Հայր աբրահամը, որ սեմա նոյ նահապե-
տին օրհնեալ տղին ցեղէն էր, որ միջոց ետաց

երկիրը՝ խառան ըսած քաղաքը կրբնակեր իր հօրը հետ՝ որ Թարա կրսվեր։ Ասստի ՝ած անկեց կանչեց զինքը ու ըսաւ, ատ քու երկիրդ և քու ազգիդ մէջէն ու հայրենական տունդ ելիր, հոն եկոր բնակէ՝ ուր որ քեզի կրցուցնեմ. որ քեզ օրհնեմ ՝ածեցուցնեմ, քեզ անվանի ընեմ աշխարքիս. և քեզմով օրհնվին բոլոր աշխարքիս մարդիքը։ Աբրահամալ շուտ մը հնազանդեցաւ ՝այ, ելաւ՝ հետը առաւ իր սառա ըսած կնիկը, ու զովտը իր եղբօրորդին, ՝այ ցրցուցածինպէս եկաւ քանանացւոց երկիրը բնակեցաւ, որ պաղեստին ալ կրսվի։ Հոս տեղը նորէն ՝ած երևցաւ աբրահամու՝ ու ըսաց, քու զաւկիդ սիտոր տամ ասս երկիրներս. աբրահամալ հոն իր առջի սեղանը շինեց ՝ի պատիւ ՝այ, ու համարձակ սկսաւ ՝ած պաշտել։ Անն ատենները աս քանանացւոց երկիրը սովմը (ՅԷ խըԹլըխմը) ինկաւ, և ան պատճառով աբրահամ իր տունով տեղովը ելաւ անկէ եգիպտոս փախաւ։ Լոտը նորէն քանանացւոց երկիրն որ դարձաւ՝ տեսնելով որ խիստ շատվոր կրլլան զովտա հետ մէկտեղ բնակելով և ձեռվընին եղած երկիրնալ քիչ ըլլալով չօգտեր իրենց անասունները արծելու. անոր համար ուզեց որ զովտը իր քովէն զատէ. ու խրրկեց՝ որ իր բանտերովը երԹա յորդանան գետին կողմերը բնակի՝ որ աղէկ պարարտ երկիր էր. և հոն տեղվանքը կրլլար սոդոմ ու գոմոր ըսած քաղաքները, որ անոր մարդիքը խիստ չար ու մեղաւոր էին։

Լոբոր զովտ սոդոմ քաղաքը կրբնակեր՝ ան ատենները քովի եղած տերունիներէն չորսը մէկ տեղ միաբանած՝ մէկ պատճառովմը սոդոմա-

ցոց ու գոմորացոց՝ և անոնց հետ միաբանած թագաւորներուն վրա պատերազմ բացին. և յաղթելով անոնք՝ սոդոմացիքնալ գերի բրնեցին. և ան գերիներուն հետ զոլտնալ իր բոլոր ունեցածներովը քշեցին տարին։ Ի՚սբանրս երբոր լսեց աբրահամ, շուտմը կանչեց մէկ տեղ ժողվեց իր հաւատարիմ կտրեա՛ծառաները՝ բոլորը իրենք տանրուն թը հոգի, ու գրսէն ալ իրենք տանուտերներ իր հետը միաբանած՝ ան չորս թագաւորներուն վրան վազեց, ու իրենց աղեկ ջարդմը տալով՝ ինացածը փախցունելով, զոլորը ուրիշ բրռնրված գերիներնուն հետ ազատեց, ու թալլած բանեներնին ձեռվընէն առաւ։ Ի՚սանկ որ յաղթու�փառաւորապէս դարձաւ աբրահամ, սոդոմացւոց թագաւորը ընորհակալուիք առջեւ ելաւ դիմաւորեց ինքը, և հոն մելքիսեդեկ թագաւորը սաղիմայ՝ որ քհնայալ էր ՝ի՚ իրեն հաց ու գինի հանեց տրվաւ, ու ՝ի՚ կողմանէ օրհնեց զինքը։ Ի՚բրահամալ անոր տասանորդ, ՝ի՚ իր ունեցածներուն տասներորդ բաժինը հանեց իրեն տրվաւ։ Սոդոմայ թագաւորը ան ատենը ուզեց աբրահամու պարգև տալ ան թագաւորներուն իրմէ թալլած բանեերը՝ գերիներէն ՝ի զատ։ Ի՚այց աբրահամ երդումը նելով՝ քաւ լեցի ըսաւ, ամենեին քու բանեերդ բանմը չեմ առներ, որ ետքը վրաս չի պարծենաս ըսես թէ՝ աբրահամը ես հարստացուցի մեծցուցի։

9469-57

ՀԱՅԿ—СССР

ԳԼՈՒԽ

Ամբակումը հեղգ ազգ ոխով ու դաշնով կընդ, և երեն խոմայելը պատակ կոտրա։

Ծննդ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. = Ամն. 2094. 2107.

Երբոր ան պատերազմին դարձաւ աբրահամ, ազգ նորին իրեն երևցաւ, ու սիրտ տալով մխիթարեց որ ամենևին բանէ մը չի վախնա, ինքը կեցեր է պաշտպանելու։ Ան ատենը աբրահամը դարձաւ գանկտեցաւ այ իր ամլու

կախած Ամբան երթալնինի՝ հրեշտակը հան-
դրպեցաւ դէմը, ու խրատ տալով յորդորեց
զինքը որ տուն դառնայ՝ իրեն տիկնոջը (յիր խա-
թունին) հնազանդ ըլլա. և ասալ ըսաց թէ՝
քեզմէ տղամը պիտոր ըլլա իսմայէլ անունով.
անոր զաւակները ամ պիտի աճեցուսնէ ու շատ-
ցունէ։ Երբոր տուն դարձաւ ագար ու ժա-
մանակը հասաւ տղան որ բերաւ, աբրահամ
հրեշտակին ըսածինպէս անոր անունը իսմայէլ
դրաւ։

Ինկէ ետև մէկմալ երևցաւ ամ աբրահամու՝
նորէն օրհնեց զինքը, և աս բանիս նշան՝ թէ
շատ ազգերու նահապետ պիտոր ըլլա՝ անունը
որ առաջ աբրամ կըսվէր, փոխեց՝ աբրահամ
կամ աբրահամ դրաւ. ու հետը ուխտ ու դա-
շինք ընելով հրամայեց որ ինքը իր բոլոր մանչ
զաւակներովը որդւոց որդի թլփատվի. որ ան՝
ուրիշ անհաւատ ազգերէն բաժնըվելու նշան
ըլլա։ Ինքը ընկերոջը սարային անունն ալ
սարրա կամ սառա՝ կանչըվի ըսաց. ինչու որ՝ պիտի
ան ալ օրհնեմ, որ անկէց հարազատ որդի
մը ունենաս, և անանկ շատցունեմ անոր զա-
կրնները՝ որ թագաւորներ ըլլան իրեն ցեղէն։
Երբոր աս բանը ըսաց աբրահամ՝ երեսին վրա
ինկաւ սիտաւ խնտալ, և մտքին մէջը զարմա-
նալով ըսել՝ թէ ինչպէս կարելի է որ ես՝ ալ
հարուր տարվան ծերմէ՝ նորէն զաւակիտեր ըլ-
լամ, և սառա իմ ընկերոջս՝ որ ինքնալ ինսնուն
տարվան է՝ տղայ բերէ. հապա դարձաւ՝ տէր
ըսաւ, թող իսմայէլը ողջ մնա, աստ ըսած
բարիքներդդ անոր ըրէ։ Ինչ ալ իրեն պատաս-
խան տրվաւ, չէ՝ ատանկ չէ, հապա ինքոր ըսի
նէ՝ սառա քեզի զաւակ պիտի բերէ, որ ան ըլլա

քու հարաղատ ժառանգդդ. բայց քու աղա-
չանքիդ համար իսմայէլնալ երեսկ չեմ ձգեր,
անալ կօրհնեմ՝ ու շատցունելով մեծ ազգ կը-
նեմ ինքնալ։ Այսքը այ հրամայածին պէս շուա-
մը աբրահամ բոլոր իր տանը մարդիքը մէկ-
տեղ ժողվեց թլփատեց, ու ինքնալ իր ան ծե-
բուքնե ատենը թլփատվեցաւ։

ԳԼ. Ը.

Աբրահամա՝ ի ղովոյ հիւրասիրելը, ու սոդոմայ-
պատիժը։

Ծննդ. ԺԸ. ԺԹ. = Ամ Տի 2107։

Աստկէ ետև մէկ օրմը աբրահամ իր տանը
դրան առջևը կէս օրվան դէմ նստած հանդ-
չենինի՝ յանկարծ տեսաւ որ անդիէն 'ի դաս
իրեք կըտրիճ դէպի ինքը կուգան, (որ հրեշ-
տակներ էին մարդկային կերպարանքով.) ինք-
նալ շուտմը ելաւ վազեց՝ բարևելով առջևնին
գնաց ինկաւ, ու աղաչեց՝ սիրով առաւ իր տու-
նը բերաւ, և ան ատեն ի սովորուքը պէս՝ ջուր
բերաւ ոտվընին վըլաց, ու մէկ ծառիմը շու-
քի տակ հանդչեցուց նստեցուց՝ առջևնին սե-
ղան պատրաստեց դրաւ, և ինքը ամ յօժարու-
թիւ կեցեր կըծառայեր իրենց։ Վերակուրն որ
խալըսեցան, անոնցմէ մէկը աբրահամու ը-
սաց թէ՝ դալ տարի աս ատեն նորէն քու քո-
վըդ գալու ըլլամ նէ՝ պիտի տեսնեմ որ սառա
քու ընկերդ զաւակմը ունի։ Սառա որ ան-
դին դըրանը ետևէն մտիկ կըներ, աս խօսքիս
վրա սկսաւ ինքիրեն քթին տակէն խնտալ,
իբր թէ անկարելի բան է ըսածը. ան ատենը
հրեշտակնալ յանդիմանեց անոր թերեհաւա-

տուլթիը՝ որ ոչ կարողուեը վրա կրտարակու-
սի։ Հոտքը երբոր եկան ասունք երթալու եղան՝
յայտնեցին աբրահամու՝ թէ կերթանք որ սո-
դոմ ու գոմոր քաղաքները կործանենք, ինչու
որ մեղքերնին ալ չափը անցուցին։ Աբրա-
համ աս բանը լսելով՝ սաստիկ ցաւեցաւ խըղ-
ճաց վրանին. ուստի ոչ առջեը ինկաւ շատ
աղաչանք պաղատանք ըրաւ որ իրենց մեղացը
թողուլթի տա՝ չի պատժէ կործանէ ան քաղաք-
ները։ Հու ասոր վրա ոչ հետ խոնարուլթ եր-
կան խօսելով՝ բանը հոն հասաւ որ՝ ութծալ
խօսք տրվաւ ըսաւ՝ թէ որ միան տասը արդար
մարդ գտնրվելու ըլլա ան քաղաքներուն մէջը,
անոնց խնայելով՝ չեմ պատժեր մեկալոնք-
նալ. աս որ լսեց աբրահամ՝ ալ բանմը չըսաւ
կեցաւ մնաց։

Հոտքաս հրեշտակներուն երկուքը իրիկվան
դէմ երբոր եկան որ սոդոմ քաղաքը մտնին,
ղոտը տեսնելով ասունք աղվոր կարիթի կեր-
պարանքով, ու մեղքընալով վրանին որ չը-
լա թէ անօրէն սոդոմացիքը ասունց չարուհիմը
ընեն գնաց աղաչելով առաւ իր տունը բե-
րաւ, ու սեղան դրած առջևնին մեծարեց ի-
րենք։ Սոդոմացիները որ իմացան թէ ասանկ
մարդիք եկերեն ղոտայ քովը, գիշերանց եկան
եկան չորս դիին տունը պատեցին, ուզեցին
որ ղոտ ան մարդիքը հանե իրենց ձեռքը տա-
աս բանիս ղոտ շատ դէմ կեցաւ, բայց ճար
չեղաւ որ անոնք ետ կենան, անանկ որ ղոտ-
տը կը ծեծեին ու տանը դուռը կրկոտրեին,
թէ որ ան հրեշտակները զինքը ներս չիքաշեին՝
ու դուռը վրանին գոցելով անտեղը ան բոլոր
մարդիքը չի կուրացուցնեին նէ։ Հոս որ եղաւ՝

ան ատենը հրեշտակները քանը բացին զով-
տայ՝ ըսին թէ՝ գիտնաս որ ՀԱԾ մեզ խրկեց որ
ես քաղաքս պատժենք կործանենք, ու քեզ
խալըսենք. ուստի թէ որ՝ փեսա՝ տըղաք, կամ
ուրիշ ազգական ունիս նէ՝ շուտով ասկէ հա-
նէ։ Զովտայ եւաւ իր աղջիկներուն նշա-
նածներուն զուրուցեց աս բանը. բայց ա-
նոնք չի հաւատալով իրեն՝ ու ծաղր ընելով՝
տեղերնէն չի շարժեցան։ Լուստի առտուանց
կանուխ եւան հրեշտակները, ու արտորդը-
նելով զովտայ և կընկանը ու իր երկու աղջը-
կանը ձեռվընտերնէն բռնած սոդոմ քաղաքէն
դուրս հանեցին, ասլրսալրեցին իրենց որ շուտ
քալեն երթան՝ չըլլա որ կանկ առնեն ետե-
նէն դառնան նային։ Երբոր ասանկ արտոր-
նօք կերթային, զովտ աղաչեց ըսաւ որ գոնէ
սեգոր քաղաքը երթան խալըսին հոն հանդչին.
ու անանկ եղաւ որ ասոնք սեգոր հասանելու
եղան, ՀԱԾ սկսաւ ծոսկալի պատիժը սոդոմայ
ու գոմորայ վրա թափել, կրակ անձրև եր-
կինքէն ինջեցուց, որ բոլոր ան քաղքները
իրենց դաշտերովը երեց մրկեց մոխիր դար-
ձուց։ Ան ատենը զովտայ կնիկը՝ ինչպէս ե-
ղաւ որ, դարձաւ ետևը նայելու, (ինչպէս
կըսեն՝ հետաքրքրութիւնը կամ յաւակցելով սո-
դոմացոց ողորմելութիւնը տեսնալու համար,)
ու անտեղը պատժըվեցաւ՝ արձան աղի կամ
աղէ քար կարեցաւ.

ԳԼ. ԹԻ.

Լսաւոր ծնանելէն ետեւ՝ աբրահամ իսմայէլը Հագարէն ունեցաւ։

Ծննդ. իե։ = Ամ Տի 2108. 2115։

Այ բսածինպէս՝ երբոր ատենը եկաւ՝ սաւ ա որ ինսուն տարեան ծեր էր՝ մանչ զաւակ մը բերաւ. աբրահամալ ինպէս ՝ած իրեն հրամայերեր՝ անոր անունը իսահակ դրբաւ, և ութերորդ օրը թլփատեց զինքը։ Այսքը երբոր ատենը հասաւ որ տղան կաթէն կտրեցին, աբրահամ փառաւոր կոչունք ուրախութիւ ըրաւ անոր համար։ Ցղան որ սկսաւ օրէ օր մեծնալ առաջ գալ, սառա մէկ կողմանէ որ չափ կուրախանար իր մէկ հատիկ սիրելի զաւակին վրա. մէկալ դիէն տեսնելով որ իսմայէլ ագարայ որդին իսահակը բանի տեղ չիսեպէր՝ ու վրան նախանձելով ինքը կուզէ որ աբրահամու ժառանգութիւնը յափշտակէ, խիստ կրցաւէր կրտանջուէր, և կըմտածէր որ մօրը հետ տընէն դուրս վըռընտէ անոնք։ Այբրահամ՝ առջի բերանը խղճալով տղին վրա, որովհետև անալ իր զաւակն էր, աս բանիս դէմ կեցաւ. բայց ետքը աստուծմէ ալ որ լսեց թէ՝ սառայի ըսածը մտիկ ըրէ՝ ինչու որ իսահակէն պիտոր ըլլա քու հարազատ ցեղը. ան ատենը հնազանդեցաւ սառայի, ուստի մէկ օրմը արտրվանց կանուխ ելաւ, քիչմը հաց ու տիկով (ՅԹուլումով) ջուր ագարայ կռնակը տըվաւ, անանկ իսմայէլ տղան հետը՝ Ճամբեց իրենք որ ելլեն երթան։ Այսքը երբոր ելան դէպ 'ի անապատը կերթային՝ Ճամբան մոլո-

բեցան, և աստին անդին խյնալով՝ ջերմնինալ հատաւ, ու տղան սկսաւ սաստիկ ծարաւէն փրփրալ ու լալով ինկինկալով՝ ջուր ուզել. ա-նանկ որ մօրը ձարը հատաւ տարաւ տղան մէկ ծառիմը շուքին տակը ձգեց, ու ինքնալ քիչմը հեռու մէկ դին քաշվեցաւ ինկաւ, որ ա-չաց առջևը չիտեսնէ տղին մեռնիլը։ Ինատե-նը ՝ՀԾ ողորմեցաւ տղին, հոն տեղվանքը մէկ աղբուրմը ցրցուց ագարայ, որ գնաց տիկը ջրով լեցուց՝ բերաւ տղին տրվաւ. ու այնպէս ուժ առին, ելան փառան ըսած անապատը դացին բնակեցան. որ ետքը ՝ՀՍ ըսածինպէս աս իսմայէլի ցեղը անտեղվանքը շատնալով՝ մեծցաւ բռնեց։

ԿԻ. ԺՈ.

Ի՞Ծ ԷԲՐԱՀԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՈՒ՝ ՈՐ ԻՍԱՀԱԿԸ ԷՐԷՆ ՈՂՋԻԷՆ ԸՆԷ։

Ծն. ԺԲ։ = Սմ Ծի 2133։

Իսահակ երբոր ալ մեծցաւ կտրիճ եղաւ, ու աբրահամ բոլոր յոյսը անոր վրա դրեր կը-սիրեր. ՝Ծ աբրահամու կատարեալ հաւատ-քը և հնազանդութիւնը փորձով յայտնելու հա-մար՝ իրեն հրամայեց որ իսահակ առնէ մէկ բարձրը լեռմը տանի, ուհոն տեղը մորթէ ՝Ս ողջակէզ ընէ։ Ի՞նչ որ լսեց աբրահամ՝ շուտ-մը առտուանց կանուխ ելաւ ելը պատրաս-տեց, ողջակիզին համար փատ ջարդեց վրան բեռցուց, իսահակնալ մէկտեղ՝ հետը երկու ծառայալ առաւ, անանկ ՝Ամբա ելաւ՝ եկաւ հոն հասաւ որ ՝Ծ իրեն ըսերեր։ Իրեր օրին ետև ՝Ծ աբրահամու ցրցուց ան տեղը՝ ուր

որ աս ողջակէզս պիտոր ըլլար. ուստի ինքնալ ծառաներուն ապսպրեց որ իշուն հետ հոն կենան սպասեն՝ ինչման որ ինքը տղին հետը անդին մէկ տեղը երթան որ քիչը աղօթք ընեն, ու դառնան քովերնին։ Բանկ ըսելով՝ ան բերած փատերը խահակայ կրնակը տրվաւ. ու իր ձեռքնալ թուրը ու կրակը առած՝ սկսան մէկտեղ երթալ. Ամբան երթալնին՝ խահակ զարմանալով հարցուց հօրը թէ՝ հայր կրակը ու փատը ունինք հետերնիս, հապա ողջակէզ ընելու ոչխարը ուր է։ Բրահամալ իրեն պատասխան տրվաւ թէ՝ որդի ած կրպատրաստէ իրեն ողջակէզ ընելու ոչխարը։ Երբոր եկան հասան այ ցրցուցած տեղը, աբրահամ հոն մէկ սեղանմը շինեց, վրան ան բերած փատերը դիկեց, ու խահակնալ կապած անոր վրա հանեց։ Հտրը թուրը վերցուցածինպէս որ ալ տրղան մորթէ. ան վայրկեանը մէկէն հրեշտակ այ երկինքէն կանչեց իրեն՝ աբրահամ աբրահամ ձեռքդ քեզի քաշէ՝ տղին մի մօտենար. հիմա՝ աղէկ գիտցա որ ած ավախս մարդմընես դուն, որ այ հնազանդելու համար՝ քու սիրելի զաւակիդալ չես խնայեր։ Բ՚ս որ լսեց աբրահամ՝ մէկէն աչքը անդին դարձուցեր տեսներ որ մէկ ոչխարմը եղջուրներէն (այ պուչխուներէն) կախվեր կեցեր էր սաբեկա ըսած ծառէն՝ ի վար. ինքնալ իմացաւ բան. ու գնաց անկէց առաւ բերաւ, ան ոչխարը ողջակէզ ըրաւ խահակայ տեղը։ Հտրը նորէն հրեշտակ այ երկնքէն կանչեց ըսաւ, թէ ած կըսէ որ՝ իմ վրաս երդում կընեմ, որ քեզ ատ ըրած գործքիդ համար ձրշմարտապէս կօրհնեմ՝ կօրհնեմ, ուստի եր-

կընքին աստղերուն՝ ու ծովու աւազի (յիսուսի) չափ կրբազմացուցեմ կրշատացուցեմ քու զաւակդ, մանակ որ՝ իր թշնամիներուն քաղաքները երթա ինքը առնէ նստի. և բոլոր աշխարհիս մարդիքը քու զաւակովդ օրհնըվին. Այս եղբի ըսածովըս ճշ խոստացաւ աբրահամու՝ որ քիմ մեսիան իր զաւակէն պիտոր ըլլա. ինչպէս կրցուցունէ պօղոս առաքեալը. գալատ. գ. 16։ Ընդէ եռև երաւ եկաւ աբրահամ խահակայ հետ իր ծառաներուն քովը, ու ամանակ մէկտեղ նորէն տուն դարձան։

ԳԼ. ԺԷ.

Աբրահամ խահակը կըկարէ. և այնպէս կըվախճանի։

Ծննդ. իգ։ = ԱմՅի 2145. 2184։

Սառա հարուր քսանրեօթը տարի ապրեցէն ետքը երբոր մեռաւ, աբրահամ անոր սուգը կատարեցէն ու թաղեցէն ետև՝ ինքը աղաւելի ծերացած, պատրաստուի տեսաւ որ իր սիրական խահակ որդին կարդէ։ Լուսի կանչեց եղիազարը իր հաւատարիմ ծառան, որ բոլոր տանը կառավարութիւնը անոր ձեռքն էր, ու երդվընցուցնելով ապրսպրեց իրէն՝ որ ելլէ միջագետաց երկիրը երթա, անկից իրէն ազգականներէն մէկ կոյս աղջիկմը առնէ բերի՝ որ խահակայ հետ կարդէ. ու արդելեց որ՝ հապա թէ աղջիկը գալու չըլլանէ, իր մեռնելէն ետքը ամմենևին չըլլա որ խահակը առնէ հոն կարդելու տանի։ Եղիազարալ ճամբուն պիտանաւորուիր տեսաւ, տասը ուղտ առաւ հետը՝ գընաց. երբոր միջագետքը հասաւ՝ իրիկվան դէմ խառան ըսած քաղքէն դուրս մէկ

հօրումը քով կանկ առաւ. ու ՝այ խնդրեց որ ան քաղքին աղջիկներն որ պիտոր գային ջուր առնելու, ան ատենը շուտով իր բանը աշխոյժ։ Ի՛նչ ըսածինպէս ինքը աս բանիս ինչ նշան որ դրաւնէ՝ անանկ կատարվեցաւ. եկաւ սատրոյ ջուր առնելու ռեբեկա ըսած բաթուէլի աղջիկը խիստ աղվոր՝ որ աբրահամու եղբօրը թոռն էր. եղիազար իրմէ խմելու ջուր ուզեց. անալ չէ թէ միան իրեն՝ հապա իր ուղտերուն ալ ջուր խրմցուց նէ, ան ատենը եղիազար իրեն հարցուց. ու երբոր իմացաւ թէ ինքը ոմ է, ուրախութիւնով տարով ՝այ՝ հետը բերած ոսկի օղերը անոր անկրՃները դրաւ, ու ապարանջանները (՝ի պիլէզիկները) թևերը անցուց։ Ռեբեկանալ շուտմը դարձաւ տուն վազեց, աս բանիս իմացուց հօրը, և իր եղբօրը՝ որ լաբան կըսվեր։ Լաբանալ եկաւ առաւ եղիազարը տուն տարաւ. աղջիկանը հարը մարը երբոր իմացան՝ թէ աբրահամ խրկեր զինքը որ իրենց աղջիկը իր տղին ընկեր առնէ, աստուծմէ է ըսելով՝ աս բանիս ամենևին դէմ չիկեցան, խօսք տրվին որ աղջիկինն տան։ Ի՛զիազար ան ատենը նորէն ուրիշ ոսկիի ու արծթէ ընծաներ հանեց տրվաւ ռեբեկայի ու իրեն մօրը և եղբարներուն. և ան գիշերը հոն ուրախութիւն անցուցին։ Եւ՝ առտրվանց կանուխ ելաւ կաղաչէր որ շուտով զինքը թողուն՝ որ ռեբեկան հետը առած Ճամբա ելնէ երթա։ Ի՝ղջիկան ծընողքը և եղբարները տասն օր ալ կուզին բռնել՝ հարմնիքի պատՃառով. եղիազար կարտորար՝ չէր ուզեր մնալ. ինչվան որ խօսքը ռեբեկայի ձգեցին՝ իրեն հարցուցին. երբոր անալ ըսաց թէ շուտով հետը կերթամ,

հասպա վրան օրհնեալքներ կարդալով, իր ամմէն բանէրովը ու նաժիշտներովը (այ խալայէլիներովը) եղիազարի հետ ճամբա դրին։ Այրբոր ասոնք եկան հասան աբրահամու բնակած տեղը մօտեցան՝ իրիկվան դէմ, ան ատենը իսահակ դաշտը ելեր կըսպասէր. ու դէպ 'ի ասոնք որ կուգային, ռեբեկա ինքը տեսաձիներնէս՝ ուղտէն վար ինջաւ՝ եղիազարի հարցուց թէ ան մարդը ո՞վ է. ու իմանալուն պէս որ իսահակն է՝ լաչակը վրան առաւ. ու անանկ մէկ մէկու հանդիպեցան։ Այտքը աս բոլոր ճամբորդութէ բանը եղիազար տեղն 'ի տեղը իսահակայ պատմեց. անալ սիրով ռեբեկան իրեն ընկեր առաւ. ու անով միսիթարվեցաւ իր մօրը սառային մահվանը վրա։

Հայր աբրահամ այսպիսի կերպով ճծային օրհնութիւնը՝ իսահակ իր սիրական որդին կարդելէն ետև՝ խելմալ ապրեցաւ. ու ետքը սրբութիւնէ և ճծպաշտութիւնէ վախճանեցաւ հարուր եօթանասունը հինկ տարվան. որ իսահակ ու իսմայէլ իր տղաքը եկան պատվով թաղեցին իրեն գնած գերեզմանատեղը սառային քովը։

ԳԼՈՒԽ Ի Բ.

Իսահակայ որդիքը՝ Եսաւ ու Յակոբ։

Ծննդ. ԼԵ։ = ԱմՅԼ 2։68։

Ճծային օրհնութիւնը հայր աբրահամէն ետև թէպէտ իսահակայ վրա դարձաւ. բայց առջի բերանը քսան տարիի չափ ճծ իսահակայ զաւակ չի տվաւ. ինչվան որ ՅՀՎ շատ աղաչելէն ետքը երկու մանչ զաւակ մէկէն (այ

էքիզ) յղացաւ ռեբեկա։ Այս երկու տղաքը դեռ ռեբեկայի փորուն մէջը՝ մէկմէկու հետ կռիւ ընելուպէս շարժելով շատ նեղուն կուտային իրեն. ուստի ինքնալէն դիմանալով այս դիմեց. ասծ իրեն ըսաւ որ ան երկուքն ալ մէկմէկ ազգի գլուխ պիտոր ըլլան, ու մէկը մէկալին դէմ պիտոր ելլէ, և մեծը պզտիկին պիտի ծառա ըլլա։

Երբոր ատենը եկաւ, ռեբեկա առջինը ծնաւ կարմիր մորթով ու բըրդոտ՝ մազերով, անոր համար անունը եսաւ դրին. անոր ետեւէն մէկալը ամենեին առջինին ներհակ՝ լերկ առանց մազի, որ ձեռքով առջինին ոտքէն բռներ էր. ասորալ անունը՝ յակոբ կանչեցին։ Այսոնք որ մեծցան մարդ եղան, եսաւը անկէն դուրս ինկաւ որսորդութիւն (այ աւանիութիւն) տրվաւ գլնելքը, ու յակոբ տունը կրկենար տանը բանները կըհոգար. անոր համար ռեբեկան յակոբը աւելի կըսիրեր. բայց խահակ եսաւը կըսիրեր՝ որ դաշտերը կերթար կենդանիներ կորսար կրբռներ՝ ու անկէց իրեն կերակուրներ կըշիներ որ ուտէ։ Մէկ օրմը յակոբ ոսպէ ապուր շիներ էր որ ուտէ. եսաւ սաստիկ անօթի դարձաւ էկած ասոր վրա հասաւ, աղաչեց որ անկէց իրենալ տա։ Յակոբ ալ ըսաց՝ թէ որ ասոր տեղը քու անդրանիկութիւդ՝ այ առջինեկութիւդ իրաւունքը ինծի կըծախես՝ կուտամ։ Եսաւալ իրեն ըսաւ, ես մէկօրմը պիտի մեռնիմ՝ ինծի ինչ շահունի ան անդրանիկութիւնը։ Յակոբ երդումը ուզեց ասբանիս վրա. անալ որ երդվընցաւ, անատենը յակոբալ եսաւայ տըվաւ որ ուտէ։

ԳԼ. ԺԳ.

Յակոբ Հօրը օրհնութիւնը եղբօրը Յեսուէն կը յափշտակէ, ինքը կառնէ։

Ծննդ. ԼԷ։ = Ամ. Յի 2245։

Իսահակ երբոր ալծերացաւ Հարուր տարին անցաւ, աչքերը անանկ տկարացան որ դժվար կրտեսնէր։ Այս մէկ օրը կանչեց Եսաւը՝ իրեն ապրսպրեց որ երթա դաշտէն մէկ աղէկ բանը որսա՝ ինչպէս առաջուց կընէր, ու բերէ իր սրտին ուզածինպէս լաւ կերակուրը շինէ. որ ուտեմ ըսաւ, և մեռնելէս առաջ աղօթք ընեմ վրադ՝ քեզի օրհնելուս տամ։ Ռեբեկա աս բանը իմանալունպէս շուտը գաղտուկ յակոբը կանչեց՝ անոր պատմեց, ու խրատ տըվաւ որ եղբօրմէն առաջ ինքը վազէ երթա դաշտէն երկու գիրուկ ուլ (այ քէչի եաւրու) առնէ իրեն բերէ՝ որ անով իսահակայ սիրած կերակուրը շինէ, ու յակոբ տանի կերցունէ, որ ինքը առնէ օրհնութիւնը։ Յակոբ դարձաւ մօրը ըսաւ թէ՝ ատ ինչպէս կըլլա որ՝ Եսաւ եղբարս մազոտ է, ու իմ մարմինս լերկ. հապա թէ հարբը յանկարծ ինծի դըպչելու ըլլա և բանը իմանա նէ, ան ատենը ես խաբող ու ծաղր ընողմը կերևամ հօրըս առջևը. ու այնպէս՝ օրհնուէ տեղը՝ անոր անէծքը վրաս կառնեմ։ Մարնալ ըսաց, թող իմ վրաս ըլլա ատ անէծքը, միայն թէ դուրի՝ դու իմ ըսածս ըրէ։ Գնալ շուտմը գնաց ուլերը բերաւ. ու ռեբեկան ըսածին պէս առաւ ան ինչպէս որ պէտք էր եփեց պատրաստեց. Եաքը Եսաւայ աղէկ պահեստէն լաթերը առաւ յակոբայ վրան

հագցուց, ու ուլերուն մորթ նալ անոր վիզը ու թևերը անցուց, անանկ՝ շինած կերակուրը ձեռքը տրվաւ որ հօրը տանի։ Հրբոր տարաւ յակոբ, իսահակ զարմանալով իրեն հարցուց թէ դուն ո՞վ ես։ Յակոբ ալ ըսաց, ես քու եսաւ անդրանիկ որդիդ եմ, ահա ըսածիդպէս ըրի. ելի՛ հայր իմ նստէ՛ ու հրամմէ՛ կեր իմ ըրած որսը, որ իս օրհնես։ Իսահակ իրեն ըսաւ, որդի՛ ատ ինչպէս շուտով գտար. անալ պէտն տրվաւ, ՝ած ասանկ աջողեց։ Իսահակ նորէն վրան տարակուսելով ըսաւ, մօտ եկոր որ քեզ բռնեմ՝ անանկ Հանշնամ ու դու իմ եսաւ որդիս ես մի. անալ երբոր մօտեցաւ, իսահակ զինքը բռնեց ու ըսաւ, ձանը դյակոբայ ձանն է, ու ձեռքդ եսաւայ ձեռքն է։ Ան ըսելով իսահակ առաւ ախորժելով (ցր խշտահով) կերաւ յակոբայ բերած կերակուրը, ու գինիալ խմեց վրայէն. եւ զինքը պագնելենին երբոր յակոբայ վրայի լաթերէն անուշ հոտեր առաւ, ան ժամանակը օրհնելով ըսաւ. իմ որդուս անուշահոտութիւնը աստուծմէ օրհնած դաշտի հոտերուն կրնմանի. ՝ած երկինքէն եկած շաղով և երկրիս պարարտութը առատացուցնէ քու ցորենդ ու գինիդ. քեզի շատ ազգեր պիտի ծառայեն, ու իշխաններ երկրպագուն ընեն. եղբօրդ տէր ըլլաս, և քեզի երկրպագուն ընեն քու հօրդի զաւակները. քեզ անիծողը անիծած ըլլա՝ ու քեզ օրհնողը օրհնած ըլլա։ Հրբոր լմընցաւ. ու յակոբ ասօրհնութիւնները առած իսահակայ քովէն որ զատվեցաւ, ան ատենը եսաւ վրա հասաւ. և բանը չի գիտցած՝ ինքնալ իրեն ապսպրված կերակուրը իսահակայ որ բերաւ։ Իսահակ հար-

ցուց իրեն թէ՝ դուն ով էս. անալ պէտն տրվաւ թէ ես քու եսաւ անդրանիկ որդիդ եմ. իսա-հակ զարմանալով ըսաւ. հապա ան ով էր որ քեզմէ առաջ բերաւ, ու ես կերա՝ օրհնեցի ինքը, և օրհնեալ ըլլա. աս որ ըսեց եսաւ՝ կատ-ղեցաւ՝ ու սկսաւ պոռալով ըսել. հայր՝ իսալ օրհնէ։ Ընատենը բանը իմացաւ իսահակ. ա-նանկ էնէ քու եղբարդ էր ըսաւ՝ որ եկաւ քու օրհնուիդ առաւ։ Ըսաւալը ըսաց. իրաւի ա-նոր անունը յակոբ ըսվեցաւ որ՝ աս երկու հեղ կըլլա որ իս կըխաբէ. մէկ հեղմը՝ իմ անդրա-նիկութիս առաւ, հիմայալ՝ իմ օրհնութիս կառ-նէ. ու դարձաւ նորէն աղաչեց՝ գոնեա ըսաւ հայր մէկ օրհնութիմընալ ինծի համար չի պա-հեցիր մի։ Իսահակալ պէտն տրվաւ թէ՝ որով հետև անիկա քու վրադ տէր ըրի՝ և օրհնեցի զինքը. ալ քեզի ինչ ընեմ որդի։ Ըսաւ նորէն ըսաւ. միան մէկ օրհնութիմը ունիս դուն. իս ալ օրհնէ հայր։ Իսահակ անկէ ետև ալ չի դիմանալով եսաւայ ձեռքէն, մէկ հարևանցի օրհնութիմընալ անոր վրա կարդաց, այնպէս ձեռքէն խալըսեցաւ։ Ասայց աս բանիս համար սաստիկ ոխ պահեց եսաւ յակոբայ վրա, անանկ որ՝ միտքը դրաւ թէ հօրը վախճանելէն ետև յակոբը մեռցունէ։ Ընոր համար ռեբեկանալ եսաւայ չար միտքը գիտնալով՝ յակոբայ խրատ տրվաւ՝ որ անկեց բաժնըվի երթա միջագետքը լաբանայ իր եղբօրը քովը երթա, հոն կենա ինչվան որ եսաւ աս բաներըս մոռնա՝ ոխը անց-նի. չըլլա թէ ըսաւ՝ ձեզ երկուքտալ մէկէն մէկ օրը կորսընցունեմ։ Ընտրը ռեբեկա ա-ռանց աս բանիս պատճառը յայտնելու՝ գնաց իսահակայ հետալ խօսք անցուց որ յակոբը մի-

ջաղեստքը խրկէ, որ անկեց ըսաւ իրեն ցեղէն երթա աղջիկ առնէ. որովհետև երկուքնալ խիստ նեղացերէին եսաւայ առած հարսերուն ձեռքէն՝ որ քանանացի էին։

ԳԼ. ԺԴ.

Յակոբ դիմափեռ երթալուն պատճառը կը ցուցնէ, եւ Սոն հերթա հըմարտելի պատն պեղ հըլլա։

Ծննդ. իբ. իթ։ = Ամ Ծի 2246։

Յակոբ իսահակայ օրհնութիւնը նորէն առնելով Ճամբա ելաւ որ խառան քաղաքը իր մօրեղբայրան տունը երթա։ Այս Ճամբորդութեան մէջը մէկ օրմը իրիկվան դէմ որ տեղմը հասաւ, ան գիշերը հոն մնաց որ հանգչի, եւ ան տեղվանքէն մէկ քարմը առաւ իրեն բարձ ըրաւ գլուխը վրան դրրաւ քնացաւ։ Գիշերուն մէջը տեսիլք տեսաւ որ՝ մէկ սանդուխ (այ վերտիվէն) մը առջեւը տնկած կեցերէր՝ որ ծարը ինչվան երկինքը կը հասնէր, անոր վրան հրեշտակները կելլէին ու կիջնէին. եւ անոր ծարը տեսաւ որ ուռ կեցեր իրեն կը սէր. ես եմ ՀՐ ՀԱՅ քու հօրդ աբրահամու եւ ՀԱՅ իսահակայ, մի վախնար, աս երկիրը որ դուն պառկերես՝ քեզի եւ քու զաւկներուդ կուտամ. որ աւազի (այ՝ խումի) պէս շատվոր պիտի ըլլան, որ աշխարքիս չորս դին տարածվին. ու քեզմով եւ քու զաւկովդ բոլոր աշխարքիս մարդիքը պիտոր օրհնվին. ես ալ միշտ քու հետդ եմ՝ որ քեզ ամէն տեղ պահեմ, եւ ձեռքէ չեմ թողուր՝ ինչվան որ աս բանները կատարեմ։ Այսոր վրա երբոր արթնցաւ յակոբ՝ սահմռկելով ըսաց թէ՝ աս այ տեղ՝ եւ երկնքի

դուռ է եղեր, որ ես չեմ գիտցեր։ Հետև շուտմը առտվանց Էլեղեանպէս՝ ան իրեն բարձ ըրած քարը՝ աս տեսիլքիս յիշատակի համար՝ ան տեղը կայնեցուց, ու եղով օծեց. և ան տեղին անունը բեթէլ՝ ՅԻ տուն ՅԻ՝ դրաւ. և ՅԻ ուխտ ըրաւ՝ որ՝ թէ իր բանը յաջողած դառնանէ՝ անտեղը իրեն տուն ՅԻ, ՅԻ՝ ժամուպէս աղօթատեղի ընէ, և ամմէն ՅԻ իրեն տվլածին՝ անոր տասանորդ հանէ տա։

Հետքը անկէց ելաւ յակոբ, ու Համբան առաջ երթալով երբոր միջագետացերկիրը գնաց հասաւ, հոն մէկ դաշտիմը մէջ տեսաւ որ մէկ մեծ հորմը կար, ու անոր չորս դին հովիւները իրենց ոչխարներովը կեցեր կրսպասէին, որ ամմէնքը դան մէյտեղին, ու ան հորուն վրայի քարը վերցունէն՝ ամմէն մարդ իրեն անասուններուն ջուր տա։ Յակոբ ասոնց քովը գնաց մօտեցաւ, և հարցուց իմացաւ որ ասոնք խառան քաղաքէն են եղեր. ու ըսին թէ լաբան որ իրեն մօրը եղբարն էր, անալ ողջէ. և անոր ռաքէլ ըրած աղջիկնալ ահա իր ոչխարներովը կուգակոր։ Երբոր յակոբ ռաքէլը տեսաւ, ալ չիհամբերեց՝ գնաց շուտմը ան հորուն վրայի քարը ինքը մէկ դի առաւ, ու պինտ առաջ անոր ոչխարները խրմցուց. և սաստիկ ուրախութէն սկսաւ լալ. ու իրեն Հանծցուց զինքը թէ ռեբեկայի անոր հօրը քրոջը որդին է. երբոր աս իմացաւ ռաքէլ՝ շուտմը տուն վազեց հօրը ըսաւ։ Լաբանալ ուրախութէ եկաւ դրկեց պագաւ յակոբը՝ առաւ իր տունը տարաւ, և ամիսմը ատեն քովը պահելէն ետև՝ յակոբայ ըսաւ որ՝ չեմ ուզեր որ դուն ինծի ձրի (ՅԻ Հասպա) ծառայութի ընես, ըսէ՛ ինչ

վարձք կուզես։ Յակոբայ ասաց թէ եօթը տարի կը ծառայեմ քեզի, որ անոր տեղը ինծի ռաքէլ աղջիկդ տաս. լաբան անատեղը իրեն խօսք տրվաւ հաւանեցաւ ասոր։ Բայց եօթը տարին լըմընալէն ետեւ երբոր յակոբ իր կնիկը ուզեց, լաբան խաբեց զինքը՝ ռաքէլին տեղը լիա անունով մէկ ուրիշ մեծ աղջիկմայ ունէր՝ անիկա հանեց յակոբայ տրվաւ, յակոբայ անանկ հասկրցունելով՝ թէ մեր երկիրը օրէնք կա որ՝ առաջ մեծը կըկարգեն՝ ու հապա պզտիկը. ուստի ըսաւ՝ թէ որ ռաքէլնայ առնել կուզեմնէ, անոր համարայնորէն եօթը տարի ինծի ծառայուի ըրէ, որ անայ տամ։ Ինատեղը յակոբայ ձարը հատնելով, (ինչու որ՝ սաստիկ սիրով կապվերեր ռաքէլի հետը՝) ըսածինպէս եօթը տարիայ նորէն ծառայեց լաբանայ՝ ու անանկ ետքը ռաքէլնայ առաւ։

ԳԼ. ԺԱ.

Յակոբ կելէ էր երկիրը դառնալու։

Ծննդ. ՚ի = Ամ Տի. 2265։

Երբոր յակոբայ ծառայութիւնը տասնըչորս տարին լըմնցաւ. ու ամային օրհնու

ները իրեն վարձքը ըլլա։ Այս բանիս խօսք որ տրվաւ լաբան. ՝ այ օրհնուելը յակոբայ բաժինը եվելօք շատցաւ, և քիչմը ատենին մէջ անանկ հարուստցաւ անասուններով ու ծառաներով, որ սկսաւ լաբան անոր վրա նախանձիլ ու ծուռ նայիլ. և անկէ ետև ալ չէր ուզեր որ յակոբ քովէն զատվի երթա։ Բայց երբոր ատենը եկաւ՝ յակոբ ՝ այ հրամանովը լաբանէ դաղտուկ ժողվեց ժողվըտեց իր բոլոր ունեցած բարիքը, ու կնիկները տղաքները մէկտեղ առած՝ Ճամբա ելաւ որ իր երկիրը դառնա։ Իրեք օրէն ետև աս բանըս որ իմացաւ լաբան՝ սաստիկ կատղեցաւ վրան, ուստի ինքնալ իր մարդիքներովը եօթն օրվան Ճամբա՝ ետևէն վազեց գնաց յակոբայ հասաւ գաղաադու լեռներուն վրա. և լաբանի միտքը չար էր, շատ զէն կուզեր յակոբայ հասցունել, թէ որ ՝ած իրեն չերևնար զինքը չարգելէրնէ. անոր համար քիչմը աւելի պակաս յակոբայ զուրուցելէն ետև, յակոբալ իր անանկ դաղտուկ ելլելուն պատճառները անոր առջևը դնելով, հաշտութիւն ըրին մէկտեղ. ու մէջերնին ուխտ ու դաշինք դրին՝ որ մէյմալան կեցած տեղերնէն իրարու սահմանը (ՅԻ սինօռը) չանցնին։ Այսպէս լաբան թողուց՝ որ յակոբ իր Ճամբան առաջ երթա, ու ինքնալ իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԺԸ.

Յակոբայ Ճամբորդութիւն դէպ ռոբիշ հանդիպած բաները։

Ծննդ. ԼԲ. ԼԳ. ԼԴ. ԼԵ։ = Ամէն 2266. 2273. 2288։

Յակոբ լաբանայ ձեռքէն խալըսելէն ետև, անՃրկերեր թէ եսաւայ իր եղբօրը ձեռքէնալ ինչպէս պիտի ազատի, որ Ճամբուն վրա ան տեղվանքը կըլլար. ուստի մտածեց որ իրմէ առաջ մարդիք խրկէ՝ որ երթան իր կողմանէ քաղաքավարութիւն բարևէն եսաւը։ Բայց երբոր աս մարդիքը ետ դարձան պատմեցին թէ՝ եսաւ չորս հարիւր հոգի հետը առած՝ անանկ դիմացէն կուգակոր, ան ատենը յակոբ շատ վախ քաշեց, և ՝ այ ապաւինելով՝ որ զինքը աս փորձանքէսալ խալըսէ՝ ինչպէս որ իրեն խոստացեր էր. բոլոր հետը եղածը երկու բանակ (՝ պէօլիւկ) բաժնեց՝ մէկմէկէ 'ի զատ, որ թէ մէկը զարնըվինէ՝ գոնէ մէկալը խալըսի. ու ամմէն ունեցած անասուններէն խելմընալ ընծա հանեց տըվաւ որ եսաւայ տանին, որ ասով անոր սիրտը առնէ՝ հետը հաշտըվի։ Այսպէս որ բանը կարգաւորեց, ան գիշերը ՝ածալ ցրցունելու համար՝ թէ յակոբայ աղօթքը լսեր է՝ և միշտ զինքը կրպահպանէ, յակոբայ քով մէկ հրեշտակմը խրկեց մարդկային կերպարանքով, որ ինչվան առտու հետը (կիւրեշ բռնած,) ծեծ կըվիլ ցրցուց. ու հետքը իբր յակոբէն յաղթըված՝ ալ կուզեր որ զինքը թողու որ երթա. յակոբ չթողուց ինչվան որ ինքը չօրհնեց. անալ անատենը յակոբայ անունը փոխեց՝

Իսրայէլ դրաւ, որ կընշանակէ՝ յաղթող ընդ կամ ուծատես. որովհետև ըսաց՝ ես դէմ դիմացարնէ՝ մարդիքներէնալ ամենևին պիտի չի վախնաս։ Նկէ ետքը առտրվանց երբոր եկաւ յակոբ տեսաւ որ եսաւ չորս հարիւր մարդով դիմացը եկեր մօտեցերէ. կնիկները ու տղաքը ետ թողուց, ինքը միւնաւոր քալեց գնաց՝ եսաւայ առջևը եօթը անգամ իյնալով բարևեց երբ կրրպտգուն ըրաւ։ Ան որ տեսաւ եսաւ, բոլորովին սիրտը կակրդցաւ, ու դեռ յակոբ իրեն չի մօտեցած, ինքը վազեց յակոբը բռնեց գրկեց, անանկ լալով մէկտեղ պագտրվեցան։ Ետքը տեսնելով եսաւ յակոբայ ընտանիքը զաւկները՝ սիրով ուրախակից եղաւ իրեն. ու քաղաքաղարութիւն ընդունելով յակոբայ արված ընծաները, ուզեց որ յակոբայ ծառայութի ընելով հետը մէկտեղ առնէ զինքը, և անանկ ընկերուն տանի իրենց երկիրը. բայց յակոբ ընորհակալ ըլլալով՝ չեմ ուզեր ըսաւ քեզի ծանրութի տալ. մանաւանդ պէտք է ալ ըսաց՝ որ կամաց կամաց շարժիմ երթամ՝ ասմանրը տղոցը և անասուններուն պատճառովը։ Երբոր ասանկ եսաւ իրմէ բաժնվեցաւ՝ եկաւ տեղը դարձաւ, յակոբալ ետևէն քանանացոց երկիրը եկաւ հասաւ, և հոն սիկիմացւոց քաղաքին քով տեղմը գնեց առաւ՝ քիչմը ատեն հոն բնակեցաւ։

Ան սիկիմացոց քաղաքը յակոբայ որդիքը կերթային կուգային. և մէկ օրմընալ դինա ըսած յակոբայ մէկ հատիկ աղջիկը զբօսանքի (ցի սէյիրի) համար երբոր ինքնալ գնաց ասքաղաքը, հոն ան տեղին իշխանը սիւքէմ անուանով եմորայ որդին, աչք ձգեց ասդինայի

վրա, ու առաւ պղծեց. և եղբը իր հօրը աղաչէց որ՝ երթայ յակոբայ հետ խօսի որ դինան իրեն կնիկ առնէ։ Եմոր յակոբայ քով եկաւ որ աս բանս վրա խօսք անցունէ. ու կըյորդորէր կըսէր որ՝ ասկէ ետև մէկտեղ խնամութիւն ընենք՝ մէկմէկու աղջիկ տանք առնենք. նաև ալ ասկէց մի երթաք ըսաւ, հոս կեցէք՝ առուտուրնիդ հոս ըրէք։ Սիւքէմնալ կըսէր թէ՝ միան թէ աղջիկը տըվէք, ինչ օժիտ (ՅԷ ՀԷՀԷզ) որ կուզէքնէ կուտամ։ Եյսոնց ըսածին պատասխան տըվին յակոբայ տըղաքը՝ (մանաւանդ շմաւոն ու ղևի, որ մէկ մօրէ հարազատ քուրերնին ըլլալով դինան՝ աւելի սրտերնին էրած էր ան խայտառակութիւնը համար,) ու խաբէութիւն ըսին թէ, ատ չըլլալու բան է՝ որ մեր քուրը մէկ անթլփատիմը տանք. հապա ասանկ կըլլա, որ ձեր բոլոր էրիկ մարդիքը թլփատվին՝ մեզիպէս ըլլան, ու անկէ ետև մէկմէկու աղջիկ կուտանք կառնենք, ու մէյտեղ կըկենանք մէկ ազգ կըլլանք։ Խիստ հաւնեցան ասոր՝ Եմոր ու սիւքէմ, ուստի շուտմը գացին միամըտութիւն ան քաղաքի մարդիքներուն խելքնին մտուցին, որ իրենց հետ բոլոր էրիկ մարդիքը թլփատվեցան։ Երրորդ օրն որ եղաւ, երբոր աս թլփատածները աւելի ցաւի մէջ էին, և կարողութիւն չունէին ոտք ելլելու. շմաւոն ու ղևի յակոբայ բան չըսած՝ իրենց գլխուն թուրը ձեռվընին առած մտան քաղաքը, ու բոլոր ան էրիկ մարդիքը ջարդեցին՝ Եմորը ու սիւքէմալ մէկտեղ. ու դինա քուրերնին առին տուն բերին և բոլոր անոնց կնիկները ու անասունները և ամէն բաներնին կողոպտեցին առին։ Յակոբ աս բանիս համար շատ սրդո-

ղեցաւ տղոցը վրա, որ աւ վրէժխնդրութեան (ՅԷՕՆ՝ առնելուն) չափը անցուցերէին, և ինքնաւ վախի մէջ էր՝ որ աս պատճառով ան երկրին մարդիքը թշնամութիւն իր վրա հանէ։

Նոր համար ՝ած հրամայեց յակոբայ որ ան կէց ելլէ բեթէլ երթա, և հոն 'ի պատիւ ՝այ մէկ սեղանմը շինէ. աս ան տեղն է՝ որ ինքը եսաւայ ձեռքէն փախչելու ատենը ան սանդուխքին տեսիլքը տեսաւ։ Յակոբաւ առաջ պատրաստութի տեսնելով՝ սրբեց մաքրեց իր ընտանիքը ան կռապաշտական բաներէն՝ որ խառնէ առած հետերնին բերերէին. ու հոն հասածինպէս ան ըսած սեղանը շինեց 'ի շնորհակալուն ՝այ իրեն ըրած բարերարութեան, ինչպէս առաջ ինքնաւ ուխտ ըրերէր։ Եւ անտեղը մէյմալ երևցաւ ՝ած յակոբայ, ու նորէն ըսաւ որ՝ քու անունդ այսուհետև՝ Իսրայէլ. ու օրհնեց զինքը որ ՝ած՝ի շատնա, և խոստացաւ որ ան երկիրները իրեն և իր զաւակներուն տա՝ ինչպէս ըսերէր աբրահամու՝ իսահակայ։ Յետքը երբոր բեթելէն ելաւ յակոբ դէպ 'ի քեբրոն կուգար իսահակայ իր հօրը քով, ՝ամբուն վրա ռաքել բենիամին ըսած որդին ծընաւ, որ յակոբայ վերջին զաւակը եղաւ. բայց դժվարածին ըլլալով՝ տղաբերքէն մեռաւ ռաքել, ու հոն եփրաթայի ՝ամբուն վրա թաղեցաւ. որ ետքը ան տեղը բեթղեհէմ ըսվեցաւ։ Ինչ չափ ատենէն ետև ողջ առողջ ՝այ տրված հազար բարիքներով երբոր յակոբ եկաւ քեբրոն հասաւ՝ ալ խիստ ծերացած գտաւ իր իսահակ հայրը. որ քիչմընալ ապրելէն ետքը հարուր ութսուն տարվան վախճանեցաւ. և իր երկու որդիքը յակոբ ու եսաւ թաղեցին զինքը։

ԳԼ. ԺԷ.

Յակոբայ ՀԷՍԱՒ ՊՂՈՅԸ ՆԱԽԱՆՁՈՒԷԼ ԵՒ ԴԱՒԱՃԱՆՈՒԷԼ ՅՈՎՍԷՓ ՓԵՂԵՑԻԷՆ ՎՐԱ։

ԾՆՆԴ. ԼԷ։ = ԱՄՏԻ 2276։

Յակոբ նահապետը բոլոր տասներկու մանչ զաւակ ունեցաւ, ու մէկ աղջիկմը. և ան տղոցը անունները են. Ռուբէն. Շմաւոն. Ղեւի. Յուդա. Իսաքար. Զաբուղոն. Դան. Նեփթալի. Գադ. Ասեր. Յովսէփ. Բենիամին, որ ասոնք Իէլացոց տասներկու ցեղին նահապետները եղան։ Ասոնց մէջէն յակոբ Յովսէփը որ ռաքէլի առջինեկն էր, մէկալներէն աւելի կը սիրեր իր անմեղութեան համար, ու մէյմալ որ՝ անիկա որդի ծերութեան էր. անոր համար իրեն ծաղկեայ պատմուճան (ՅԻՇԷԿԼԻ կապա) մը նալ շիներ էր. որ Յովսէփ հագնելով իր բնական գեղեցկութեանը վրա աւելի աղջոր և շնորհալի կերևնար։ Այս պատճառաւոր մէկալ եղբարները խիստ կընախանձէին Յովսէփայ վրան. ու սուտ ամբաստանութիւններով (ՅԻՇԷՎԱՆԵՐՈՎ ԻՓԻԹԻՐԱՅՈՎ) կը ջանային որ հօրեղբուն առջև անոր անունը աւրեն. բայց յակոբ բանը գիտնալով անոնց մտիկ չէր ըներ։ Աղաւ որ երազ մը տեսաւ Յովսէփ, ու եղաւ ուրիշներուն նալ պատմեց. իբր թէ՝ մէկ դաշտիմը մէջ ինքը եղբարներուն հետ մէկտեղ ցորենի որայ (ՅՈՏԷՄԷԹ) կը կապէին. և իր կապած որան եղաւ շիտակ կայնեցաւ, ու եղբարներուն կապածները երկրպագուի տալու պէս իրենին առջևը կը ծռեցին։ Մէկ ուրիշ երազմընալ տեսաւ որ՝ արևը ու լուսնկան և տասնըմէկ աստղ՝ ի

բեն երկրպագութիւն կընէին։ Այս երածներըս լսելով իր եղբարները, ու հասկընալով որ ասոնք ատենով յովսեփայ գալու մեծութիւնը և իշխանութիւնը կրցրցունեն, անոր համար սկսան էվելօք վրան նախանձիլ՝ սատիկ ատել զինքը, ասնակ որ արունը կուզէին խըմել, ինչպէս գործքովալ յայտնեցին իրենց անողորմութիւնը. որ ասնակ եղաւ։ Որչամը ատենէն ետև՝ մէկ օրմը երբոր աս յակոբայ տըղաքը մէկ հեռու տեղը իրենց ոչխարները արածելու գացին ու հոն շատ ուշացան. յակոբայ սիրտը աս բանիս համար անհանգիստ ըլլալով, յովսէփը անոնց ետևէն խրկեց որ՝ երթա տեսնէ իր եղբարները նայի թէ ուր են՝ ինչ կրնեն կոր, ու գա իրեն զուրուցէ։ Յովսէփալ հնազանդեցաւ հօրը, ելաւ գնաց և աստիս անդին փնտռտելին ետքը դովդայիմ ըսած դաշտը գտաւ իրենը։

Այն տեղը երբոր եղբարները հեռըվանց տեսան ասիկա որ դէպ 'ի իրենց կուգար կոր, մէկ մէկու ծաղը ընելով սկսան ըսել՝ նայէ՛ նայէ՛ երած տեսնողը կուգա կոր, ու անատենը մէջերնին խօսք գրին՝ որ զինքը բռնեն ըսպանեն, իր մարմինը անտեղվանքի հորերուն մէկին մէջը նետեն, ու անանկ ձան հանեն որ մէկ գազանմը (այ՝ ձանաւարմը) յովսէփը բըզբաեր կերեր է. և ան ժամանակը ըսին՝ տեսնենք թէ՝ ինչ կըլլա իրեն երածները։ Ասուրբէն մեծ եղբարնին աս բանիս դէմ կեցաւ՝ չէ՛ ըսաւ, տղին արունը չի մտնենք, հապա աս տեղվանքներըս մէկ պարապ հորումը մէջ ձգենք որ ինքիրեն երթա կորսըվի. աս ձամբովըս ուրիշն ուզեց որ տղան մեռցունելին խորըսկ՝ ու ողջ իր հօրը ձեռքը հասցունէ։ Այն-

կաղնոնքալ ասոր ըսածին հաւնեցան. ուստի յովսեփը քովերնին հասածինպէս՝ քունեցին վրայէն ծաղկեայ պատմուճանը հանեցին, տարին մէկ պարապ ցամաք հորմը ձգեցին. ու էկան նստան հացերնին ուտելու։ Նստանելնը մէյմընալ դառնան նային որ՝ անդիէն իսմայէլացի վաճառականներ իրենց ուղտերով ուսապանքով գէպ 'ի Եգիպտոս կերթանկոր. աս որ տեսաւ յուդա՝ միտքը ինկաւ ըսաց թէ՝ մեզի ինչ շահ կրլլա որ եղբարնիս սպաննենք, հապա՝ ձեռվընիս մեր եղբօրը արունը չիթափխած՝ էկէք աս իսմայէլացիներուն ծախենք որ երթա։ Էկաղնոնց միտքնալ աս բանիս վրա պառկեցաւ, ուստի շուտմը գացին ան հորէն յովսեփը հանեցին, բերին անանկ աս իսմայէլացիներուն քսան դահեկանով (կամ խուռուշով) ծախեցին. որ անոնքալ հետերնին առին անմեղ յովսեփը եգիպտոս տարին։ Ետքը ասոնք իրենց ըրած չարուելը հօրերնուն առջևը գոցելու համար՝ յովսեփայ ծաղկեայ պատմուճանը առին՝ մէկ այծմը մորթեցին անոր արունովը թաթխեցին, անանկ յակոբայ խրկեցին ըսին թէ մենք ատ լաթը գտանք՝ նայէ՛ քու տղդ պատմուճանն է մի։ Ետքը յակոբ ան տեսաւ՝ ու ճանցաւ, սկսաւ լալով ողբալով ըսել. իմ տղիս է աս պատմուճանը չար գազանի հանդրպեցաւ իմ յովսեփ՝ որդիս՝ որ զինքը բրբրքատեց կերաւ. և անանկ սաստիկ կսկիծեցին իր վրայի լաթերը պատրատեց ձգեց, սգաւոր բիպէս քուրձմը (ցիր խարարմը) հագաւ. ու շատ ժամանակ ասանկ լալով՝ սուգը սրտէն չէր երթար, չէր մխիթարվեր, հապա՝ թողուցէք կրսէր՝ որ ես ալ մեռնիմ իմ սիրական տղիս ետևը երթամ։

ԳԼ. ԺԸ.

Յովսէփ եպիսկոսի մէջ կը ծախուի, ու հոն պրպտուի։ Բանդ կը մտնէ։

Ծննդ. լԹ. խ։ = Ամ. 2277։

Յովսէփ տասնըեօթը կամ տասնըութը տարեկան էր երբոր իր եղբարները զինքը իսմայելացոց ծախեցին. անոնքալ եգիպտոս որ տարին, հոն տեղը պետափրէս ըսած մէկ իշխանիմը, որ փարաւոն թագաւորին դահճապետ (ցի Ճեղլատ պաշի կամ սիլիհտար) էր, անոր ծախեցին։ Այս ՝ցի ՝ենորքը միշտ յովսէփայ վրան ըլլալով, իր խոհեմութիւնը և հաւատարմութիւնը խիստ սիրելի եղաւ իրեն տիրոջը, անանկ որ՝ տանը ամէն բանը ու կառավարութիւնը անոր ձեռքը հաւատացեր տըվեր էր. և անոր համար ՝ցի օրհնենքնալ ան մարդուն տունէն անպակաս էր։ Այայց յովսէփ տեսքով աղվոր կորիմը ըլլալով՝ իր տիրոջը կնիկը վրան սկսաւ աչք ձգել, ու շատ անգամ ետևէն ինկաւ որ իր հետը մեղանչէ։ Յովսէփալ քովէն հեռանալով իրեն պէս կուտար թէ՝ դուն ալ գիտես որ իմ տերս բոլոր իր ունեցածները իմ ձեռքս տըվեր հաւատացեր է, քեզ միայն իրեն պահեր է՝ որ իր կնիկն ես. հապա ինչպէս կարելի է որ ես անոր սա անհաւատարմութիւնը ընեմ, և ասով ՝ցի դէմալ մեղանչեմ. քանի լեցի ըսաւ՝ որ սատարութիւնը ընեմ։ Կնիկը այսու ՝ամիւ ետ չէր կենար՝ իր չար բազձանքը կուզէր որ առաջ տանի ուստի մէկ օրմը որ յովսէփ հարկաւոր բանի համար տունը մինաւոր հետը մնացերեր. անատենը սա կնիկս սկսաւ էվէլքբռնաբարել

(կամ՝ զօռ ընել) յովսեփայ, անանկ որ՝ վրայի լաթը բըռներ կըքաշեր. յովսեփալ Ճարը հատած՝ շուտմը լաթը (կամ՝ պէնիշը) հանեց ձեռքը թողուց՝ այնպէս վազեց անէն դուրս ելաւ։ Բ. սանկ որ ըրաւ յովսեփ՝ ալ ան ժամանակը վրան սատակի սրդողելով կատղեցաւ կըսիկը, ու պոռալով տանը մարդիքը սկսաւ կանչել թէ՝ եկէք տեսէք որ երիկը աս երբայեցի մանչը տունը բերաւ որ մեզ ոտքի տակ առնէ՝ խայտառակ ընէ. ու անոնց սուտ պատմեց թէ՝ անիկա քովը եկաւ որ հետը մեղանչէ. և երբոր ես ինքը քովէս վրընտելով կանչվրատեցի, շուտմը ան ալ արտորալէն իր լաթը քովը թողուց՝ փախաւ գնաց։ Դ. տքը երբոր երիկը տուն եկաւ՝ անորալ տանկ սուտ զուրուցեց. անալ հաւատալով կնկանը՝ յովսեփը բռներ տրվաւ բանտը դրաւ։ Բ. այց ան բանտին մէջնալ յովսեփ իր անմեղութիւնը և առաքինութիւնը անչափ սիրելի եղաւ բանտապետին, որ կամաց կամաց բանտին պահպանութիւնը և վերակացութիւնը իրեն ձեռքը տրվաւ. և հոնալ ոչ իր բանը կաղողեր։

Գ. ատենները փարաւոն եգիպտացւոց թագաւորը՝ մէկ յանցանքիմը (այ սուչիմը) համար իր տակառապետը (այ խատէհքեար՝ պաշին), ու մատակարարը (այ աշՃի պաշին) յովսեփը կեցած բանտը դրաւ։ Դ. Մէկ քանի օրէն ետև ասոնք երկուքնալ մէկ գիշերմը երազ տեսան. ու առտվանց երբոր յովսեփ քովերնին գնաց որ նայի իրենց պիտանաւորութիւնը հոգա, տեսաւ որ երկուքնալ երեսնին կախած չիսթվեր էին. յովսեփ հարցուց իրենց ասոր պատճառը։ Ե. Նոնքալ պատասխան տրվին թէ՝

երկուքս ալ մէյմէկ երազ տեսանք, ու մարդ չունինք որ մեզի մեկնէ ըսէ թէ ինչ պիտոյ ըլլա։ Յովսէփալ իրենց ըսաց, աստուծով ես կըմեկնեմ, թէ որ տեսածնիդ ինծի պատմէք։

Նշատակը տակառապետը առաջ ցաթկեց սկսաւ պատմել. երազըս ըսաւ տեսա որ՝ առջևըս մէկ որթմը (յր ասմայի քիւթիւկմը) կար, ու անոր վրա իրեք կանաչ ճուղ բուսած էին, իրեքնալ վրանին մէյմէկ կուզ հասած խաւող ունէին, ես ալ փարաւոնի գաւաթը ձեռքս բռնած՝ ան խաւողը կրփրցունէի՝ կը-ճզմէի գաւաթին մէջը, ու փարաւոնի կուտայի որ խըմէ։ Յովսէփալ իրեն պատասխանեց թէ, քու երազիդ մեկնուելը ասա է. ան իրեք ճուղը իրեք օր կըցրցունէ, որ իրեք օրէն ետև փարաւոն քեզ պիտի յիշէ, հորէն քեզ առջի պաշտօնդդ (յր մանսուալդդ) պիտոր հանէ. որ քու սովորութեդպէս գաւաթը փարաւոնի ձեռքը տաս. միան թէ ըսաւ՝ քեզի կաղաչեմ որ՝ ան ատենը իս յիշես փարաւոնի առջևը՝ ու աս բանտէս խալըսես, որ ես յանցանք մը չըրած՝ իս հոս բերեր դրերեն։ Նաքը մատակարարնալ տեսնելով որ յովսէփ աջող մեկնեց տակառապետին երազը, ինքնալ իրենը պատմեց. ես ալ ըսաւ տեսա որ՝ իրեք բարակ ալուրի աման գլխուս վրա դրած ունէի. և պինտ վրայի ամանին մէջը որ փարաւոնի ազնիւ կերակուրները կային՝ թռչունները կուգային անկեց կուտէին։ Նյոր մեկնու�նալ այսպէս տրվաւ յովսէփ. իրեք ամանները ըսաւ՝ իրեք օր կըցրցունէ, որ իրեք օրէն ետև քու գլխիդդ փարաւոն պիտի կըտրէ, ու քեզ կախէ. և անկեց թռչունները պիտոր գան

մարմնոյդ ուտեն։ Երբոր իրեք օրը եղաւ ամ-
մեն բան յոլսեփայ ըսածինպէս կատարվեցաւ.
ինչու որ՝ փարաւոն ան օրը իր ծննդեան տա-
ղեղարձին սեղան ըրաւ, և ան ուրախութիւն
մեջը աս երկուքսալ յիշեց. տակառապետը նո-
րէն իր պաշտօնին վրա հանեց՝ ու մատակա-
բարը կախել տրվաւ։ Բայց տակառապետը
յոլսեփը չյիշեց՝ յոլսեփայ ըսածը անսատենը
մոռցաւ։

ԳԼ. ԺԹ.

Յոլսէֆ փարաւոնի երազները մեկնելով՝ բանտէն ելլու-
լուն, և իշխանութիւն կը հասնի։

Ծննդ. խա։ = Ամէն 2289։

Անցեալ երկու տարիէն ետև փարաւոն թա-
գաւորը ասանկ երազ տեսաւ որ՝ իբր թէ ին-
քը գետին (ցոր չային) քովը կեցեր էր, ու գե-
տէն եօթը գեր աղվոր մատղաշ կովեր ելեր՝
ան տեղվանքը կարծէին. ետքը անոնց ետևէն
նորէն եօթը կովալ ելան ան գետէն՝ խիստ
անշնորք քաշված վատուժ. և ասոնք ալ հոն
արծելինին՝ գացին ան առջի եօթը աղէկ կո-
վերը կերան։ Անոր վրա արթընցաւ փարաւոն՝
ու մէյմալ քնացաւ տեսաւ որ՝ մէկ ցորենի բուս-
նէն եօթը լեցուն աղվոր ցորենի գլուխներ
բուսան. ու անոր քովէն մէյմալ նորէն եօթը
ցորենի գլուխներ ելան՝ չոր ու ցամաք. և աս
եաթինները՝ ան առջի աղէկները կըլլեցին։
Երբոր առտու եղաւ՝ փարաւոն աս երազնե-
բուս վրա շփոթելով տակնուվրա եղած՝ շուտ-
մը հրամայեց առջի կանչել տրվաւ բոլոր ե-
գիպտոսի կարդացողները՝ որ աս բանս իրեն

մեկնեն ասեն։ Նոնայմ երբոր մարդմը չի-
գանըվեցաւ որ կարող ըլլար փարաւոնի երածը
մեկնել, ան ատենը յանկարծակի տակառա-
պետին միտքը ինկաւ յոսեփը, ուստի սկսաւ
փարաւոնի պատմել թէ՝ անիկա ինչպէս ատե-
նով իրեն ու մատակարարին բանտին մէջը
տեսած երածները աղէկ մեկներ էր. անատենը
փարաւոնալ հրամայեց որ յոսեփը բանտէն
հանեն իր քովը բերեն։ Նանկ՝ յոսեփ վրան
գլուխը մաքրած՝ նոր լաթեր հագած փարա-
ւոնի առջևը եկաւ, (որ անատենը ալ եռասուն
տարվան կորիզ էր եղեր,) ու տեղն 'ի տեղը
սկսաւ իրեն մեկնել ան երածները. Նէ, ասաւ՝
ինչ որ էտքը ատենով ընելուէնն՝ ատ երած-
ներովը քեզի յայտնեց, որ երկուքնալ մէկ բա-
նի վրա են. ան եօթը ազվոր մատաղաշ կովերը,
և եօթը լեցուն ցորենի գլուխները՝ եօթը ա-
ռատուէ (ՅՊՕԼՈՒԽԻ) տարիներ կրցրցուն են,
և մէկալ եօթը քաշված կովերը՝ ու ցամաք
ցորենները՝ եօթը սովի (ՅՊԽԹԼԼԽԻ) տարի-
ներ են, որ առջի առատուէ ետևէն պիտի
գան։ Ասաւ ասաց՝ քեզի մէկ իմաստուն խե-
լացի մարդմը գտիր՝ որ աս բանիս վերակե-
ցու դնես, որ ան եօթը առատութէ տարինե-
րուն բարիքը ժողվէ՝ ետևէ եկած սովին ատե-
նին պահէ, որ ժողովուրդը անօթութէն չի-
ջարդըվի։ Հատ հաւնեցաւ փարաւոն ա-
յոսեփայ տրված մեկնուէը, ու միտքը աղ-
պառկեցաւ ըսածին. ուստի ինքնալ յոսե-
փայ դարձաւ ըսաւ որ՝ քեզմէ ուրիշ ով կա-
ւելի խոհեմ և իմաստուն, որ ատ ՅՊ քեզի
յայտնած բանը կատարէ. անոր համար եսալ
հիմա քեզ իշխան և վերակեցու կըդնեմ իմ

տանքս և իմ երկիրս վրա, որ բոլոր եգիպտա-
ցոց ժողովուրդը քու բերանդ նային՝ քեզի
հնազանդին, անանկ որ՝ ես միան աթոռովս
(կամ թախտովս) քեզմէ վեր նստիմ։ Լ՚սանկ
ըսելով փարաւոն՝ իր մատէն հանեց թագա-
ւորական մատանին յովսեփայ մատը դրաւ, ու
իրեն իշխանական կապա հագցուց, ոսկիէ զին-
ջիլ վիզը ձրգեց և իր երկրորդ կառքը (ՅԻ գօ-
ղին) նստեցուցած, հրամայեց որ այնպէս
փառաւորութիւն բոլոր քաղաքը պըտըտցունեն՝
առջևէն կանչելով՝ որ ամէնը զինքը եգիպ-
տոսի տեր ճանչնան։ Լ՚սկէ 'ի զատ՝ յովսեփայ
անունտալ փոխեց՝ եգիպտացիներն՝ փսոմ-
թոմփանէ դրաւ, ու կընշանակէ՝ փրկիչ աշ-
խարհի. ու ետքը մէկ մեծ իշխանիմը աղջի-
կալ ասանեթ անունով յովսեփայ տրվաւ հե-
տը կարգեց, որ անկէ երկու տղա եղաւ՝ մէկին
անունը մանասէ՝ ու մէկալինը եփրեմ։ Լ՚սյ-
պէս որ եղաւ, ան առատութիւն տարիները յով-
սեփ եկաւ բոլոր եգիպտացոց երկիրները պը-
տրտեցաւ՝ շատ ցորեն դիզեց պահեց, այնչափ
որ՝ երբոր եաւէն սովի տարիները եկաւնէ՝ ա-
նով չէ թէ միան բոլոր եգիպտացիները՝ հապա
նաև ուրիշ մօտաւոր երկիրներուն մարդիքնալ
կըշտացուց, որ չորս դիկնեգիպտոս կըթափէին
կերակուր գտնելու։ Լ՚ևաև ասով էվելքը շատ
շահ ըրաւ յովսեփ փարաւոնի և թագաւորա-
կան գանձին (ՅԻ խազնէին.) ինչու որ ալ սաս-
տիկ սովին ժողովուրդը չիկրնալով հացի ըստակ
հասցունել ինչ որ ունէին՝ գետին ըլլա՝ անա-
սուն ըլլա, և ետքը նաև իրենց անծերնին՝ գե-
ղիի պէս ըստրկի տեղ թագաւորին ծախեցին,
որ ցորեն առնեն՝ անով ապրին։

ԳԼ. Ի.

Յովսէփայ եղբարքները սովին պատճառովը իրեն որ հրդէսին, յովսէփ անոնց հրդեղջէ։

Ծննդ. խբ. խդ։ = Ամ Ցի 2297։

Եգիպտոսի սովը ինչման քանանացւոց երկիրը հասնելով, յակոբ նահապետը որ իր զաւակներովը հոն կրբնակեր, ինքնալ սկսաւ նեղութի քաշել. և լսելով որ եգիպտացւոց երկիրը ցորեն կրծախովի, իրեն տասը տղաքը մէկէն եգիպտոս խրկեց, որ անկէց երթան ցորեն բերեն. միայն պինտ պրզտի տղան բենիամինը՝ որ յովսէփայ մէկ մօրէ եղբարն էր, յակոբ քովը պահեց հետերնին չի թողուց, որ չըլլա թէ երթանէ ըսաւ՝ անորալ փորձանքմ հասնիլի։ Երբոր ասոնք եգիպտոս եկան յովսէփայ առջևը ելան երկրպագութի ըրին որ իրմէ ցորեն ուզեն, չի ճանծցան զինքը բայց յովսէփ անոնք տեսնելուն պէս շուտմ ճանծցաւ և միտքը ինկաւ իր երազները. և առջի բերանը առանց նշանմը ցոյց տալու՝ օտար մարդուպէս սկսաւ խստու

կերնէդ կերևցունէք որ դուք լրտես էք. ուստի
ես ձեր ըսածին Հնմարտուիր փորձելու համար
ձեզ չեմ թողուր որ երթաք, ինչվան որ ան ձեր
ըսած պզտի եղբարնիդալ առջևը չի գանէ։ Լ-
սանէք ըսելով՝ բռնեց ամմէնը բանտը դրաւ.
և իրեք օրէն ետև՝ իբր թէ վրանին խղճալով
բանտէն հանեց իրենք, ու հրամայեց որ միան
մէկերնին մընա, մէկալնունք երթան ցորենին
տանին. և մէյմալ դառնալու որ ըլլանէ ան
պզտի եղբարնինալ առնեն հետ բերեն, չէ նէ
ըսաւ՝ գիտնաք որ ձեզ կըսպաննեմ։ Լ-
նը ատե-
նը տասը եղբարներնալ սկսան մէջերնին մէկ-
մէկու ըսել, իրաւոր արժանապէս մենք աս նե-
զուները կըքաշենքկոր ան մեր եղբօրը ըրածնիս
համար, երբոր ան ողորմելին կաղաչէր մեզի՝
որ իրեն խնայենք, ու մենք մտիկ չէինք ըներ.
ուրեմնալ դարձաւ ըսաց, ես ձեզի չէի ըսեր
որ տղին արունը մի մտնէք, ու դուք ինծի
մտիկ չըրիք. ահա հիմա անոր արունը մեզմէ
կուզվի կոր։ Լ-ս բաներըս կրխօսէին մէջեր-
նին՝ ու չէին գիտեր որ յովսէփ կըհասկրնա կէ-
մանա կոր. ինչու որ ինքը իր հայրենական եբ-
բայեցոց լեզուն անոնցմէ պահելով՝ միշտ թարգ-
մանով (այ թէրճիմանով) կրխօսէր հետերնին։
Յովսէփ երբոր աս բաներըս լսեց, ալ սիրտը
լեցվելէն չիդիմացաւ, ու անոնց քովէն զատվե-
ցաւ որ երթա մինաւորը լայ. ետքը նորէն քովեր-
նին եկաւ հրամայեց որ անոնցմէ շմաւոն ըսա-
ծը բռնեն կապեն, որ հոն մնա՝ ինչվան մէ-
կալնունք դառնան. և իրենց ամմենները ցորե-
նով լեցունելէն ետև, գաղտուկ ապրսպրեց իր
ծառաներուն որ՝ անոնց տրված ցորենին գինը
ըստակը ամմէն մէկունը իրենց ամանին մէջը

դնեն՝ անանկ կապեն. անկէ 'ի զատ ուրիշ Ճամբու համար կերակուրալ տալաւ իրենց՝ ու անանկ Ճամբեց։ Ինքնալ միամտութ ան ցորենը իրենց իշերուն վրա բեռցուցած՝ երբոր եկան մէկ իջևանմը (ՅԻ խոնախմը) հասան, մէկերնին արձակեց իր քուրձը (ՅԻ չուվալը) որ իշուն կերակուր տա, ու տեսնելով որ իր բեռած ըստակը քուրձին բերանը դրած է՝ զարմացաւ. և ան որ տեսան՝ ամմէնքնալ չփոթվեցան՝ ու կրսէին թէ աս ՅԻ բանն է։

Յետքը երբոր իրենց տունը հասան՝ սկսան տեղն 'ի տեղը եգիպտոս իրենց գլխէն անցածները հօրերնուն պատմել. և հոն մէկալներնալ իրենց ցորենները պարպելու ատենը երբոր տեսան որ ամմէն մէկուն տարած ըստակը ծրարած իր քուրձին մէջը դրած էր, ան տեղը ամմէնուն սիրտը սաստիկ վախմը ինկաւ՝ չէին գիտեր ինչ ըսեն։ Ին ժամանակը յակոբ ծերունին ալ աս բաներըս լսելով ու տեսնելով սկսաւ երած սրտով ախ ընելով անոնց ըսել իս զաւկներէս զրկեցիք, յոսէփը չկա, շմաւոնը չկա, ու հիմա բենիամինալ կուզէք իս մէ առնել. աս ամմէն խղՃուկները իմ վրաս մի կուգան։ Ռուբէնը դարձաւ իրեն ըսաւ թէ՝ իմ երկու տղաս ըսպաննէ՝ թէ որ բենիամինը քեզի չի դարձուցնեմ բերեմ նէ, դուն միան թէ իմ ձեռքըս տաս։ Ինչ ըսաց յակոբ՝ չըլլար՝ իմ որդիս ձեզի հետ գալու չէ, ասոր եղբարը մեռած է, աս միան մնացեր է ուրիշ բերած տղոցմէն, թէ որ ասալ մէկ փորձանք իմը հանդիպիսնէ, անատենը իմ ծերութիս անմխիթար տրտմութիւն գերեզմանը կրդնէք։ Ռանը ասանկ մընաց ինչվան որ հատցնելու

եղան ան բերած ցորենին. Եւ քը սովը օրէ
օր աւելի որ կոխեց, յակոբայ Ճարը հատաւ՝
տղոցը ըսաւ որ նորէն երթան եգիպտոսէ ցո-
րեն բերեն։ Յուդայալ դարձաւ իրեն գիտնաս
ըսաւ՝ որ ան տեղի իշխանը մեր հետ ասանկ
խօսք դրեր ըսեր է՝ որ մէյմալ իմ երեսս չէք
տեսներ ինչլան որ ձեր պզտի եղբարը հետեր-
նիդ չիբերէք. ուստի թէ որ անիկա հետեր-
նիս չիտանէ՝ մենք չէնք երթար։ Յակոբ նո-
րէն ըսաց, ատ ինչ վայ բերիք վրաս, ինչու
անոր զուրուցէք որ դուք ուրիշ եղբարալ ու-
նիք։ Անոնքալ պատասխան տալին թէ՝ հապա
ինչ ընէինք՝ որ մեզի մէկիկ մէկիկ մեր ազգը
սկսաւ հարցնել, ըսէլ թէ՝ հարերնիդ ողջ է մի,
ուրիշ եղբարալ ունիք մի. մենքալ ինչ ընենք՝ էրեն
պատմեցինք. ով գիտէր որ մեզի պիտոր
ըսէր թէ՝ ան ձեր եղբարը բերէք։ Յոտքը յու-
դա նորէն մէջ մտաւ, ու ինքը երաշխաւոր
(ՅՔԵՓԻԼ)ըլլալով Ճորով յակոբայ ձեռքէն
տղան փրցուց որ հետը տանի. և անկէ 'ի զատ
յակոբ ըսաց որ՝ աս իրենց երկրի բերքերէն
ընծայալ առնեն տանին ան իշխանին, և ան
ետ դարձած ցորենի ըստակնալ հետերնին առ-
նեն. անանկ յակոբ վրանին օրհնենք կարդա-
լով՝ Ճամբա դրաւ որ երթան։

ԳԼ. ԻԸ.

Յովսէփ իր եղբարները տիմնաւ փորձելէն եւ՝ ինքը
անոնց հայտնէ։

Ծննդ. խգ. խե։ = ԱՄՏի 2297։

Լրբոր աս յակոբայ որդիքը բենիամինը հե-
տերնին առած եգիպտոս հասան, յովսէփ

հրամայեց իր տանը վերակացուին՝ (յո վեքիլ
խարձին) որ առնէ անոնք իր տունը տանի, ու
սեղան պատրաստէ՝ որ եղբը ինքնալ գա մէկ-
տեղ հաց ուտեն։ Այլ եղբարները անատեն
կարծիք երթալով՝ թէ ան ըստրկին համա-
տունը կըտանի՝ որ դատաստաննին կտրէ
սկսան ան մարդուն պատմել թէ՝ ինչպէս ան
ըստակները իրենք առանց գիտնալու՝ ամմէ-
մարդ իրեն ամանին մէջը գտաւ, ու հիմա ը-
սին անկէ 'ի զատ ուրիշ ըստակալ բերեր ենք
որ նորին ցորէն առնենք տանինք։ Այարդ
սիրտ տրվավ իրենց ըսաւ թէ ան ոյ բանն է
որ ձեր տրված ըստակը ձեզի դարձուց, ատ-
վրա հոգ մընէք, ես առնելիքը առերեմ
ու ասանկ ըսելով տուն տարաւ հանգչեցու-
իրենք, նա և շմաւոն եղբարնինալ արձակե-
քովերնին բերաւ։ Այտքը յովսէփ տուն եկաւ
սիրով ընդունեց իրենց բերած ընծաները
հարցուց խմացաւ հօրերնուն որպիսուներ, ու
սաւ՝ թէ ասոնց ծերունի հայրնուն
եաև բենիամենի վրան նայելով, (որ իր հա-
շաղատ աղբարն էր,) հարցուց թէ՝ ան է մի ձ-
ըսած պզտի եղբարը, ած քեզի ողորմի որդի՝
սաւ. և ան տեղը յովսէփայ սիրտը անանկ լե-
վեցաւ աղիքը կըտրտեցան, որ ալ արցունքը չ-
կրցաւ բռնել, ձրգեց իրենք՝ անդին մինաւ-
տեղմը գնաց որ լա։ Այտև կերակուրին ատենն
որ եկաւ՝ ամմէնը մէկ տեղ կարգով իր հեռ-
հաց նստեցուց, ու սեղանին վրա աւելի պատիւ
ցըցուց բենիամենի։ Այանկ ուրախ սրտով ու-
տել խմելէն եաև՝ յովսէփ վերակացուին ապրա-
պրեց որ իրենց ցորենին ամանները աղէկմը լե-
ցունէ, ու նորէն իրենց տրված ցորենին ըստա-

կը ամմէն մէկուն քուրձին բերանը դընէ կապէ. նաև ասալ ըսաւ որ իր արծրլթէ գաւաթը (կիթասը) բենիամենին ամանին մէջը անոր ըստրկին հետը դնէ։ Յոսու կերպով առաջվանց կանուխ ամմէնքը իրենց բեռներուն որ ձամբեց՝ ու ելան գացին, քիչմը անցնելէն ետքը՝ որ քաղքէն շատ չէին հեռացեր՝ յովսէփ ան վերակացուն իրենց ետևէն խրրկեց՝ որ երթա բռնէ անոնք ու երեսնին տա՝ թէ դուք ատանկ չար մի կրհատուցանէք ձեր բարերարին դէմ, որ իմ տիրոջս արծրլթէ գաւաթը գողցեր էք։

Յ՚ս բանըս երբոր լսեցին անոնք, ներքև վրա եղած՝ քաւ լիցի ըսին՝ մենք ադպէս բան չենք ըրած ու չենք գիտեր. ինչպէս կարելի է որ մենք արծաթ կամ ոսկի գողնանք քու տիրոջմէդ, որ մեր ամանին մէջը գտած ըստակնիս ալ նորէն ձեզի դարձուցինք բերինք։ Յս աս գողուէս վրա ամենևին կարծիք չունենալով՝ ասալ համարձակ իրեն ըսին թէ՝ մեր մէջը ո՞ւր ուն քովէն որ ելլէ ան գաւաթը՝ զինքը սպանեցէք և մենք ամմէնքս գերի ըլլանք ան իշխանին. ասանկ ըսելով շուտմը բեռերնին վար ինջեցուցին արձրկեցին։ Երակացունալ կարգով մէկիկ մէկիկ նայիլ բնտռելնին՝ ան գաւաթը եկաւ բենիամենին ամանին մէջէն որ հանեց, անտեղը ամմէնքը պաղեցան մնացին՝ ու սաստիկ յուսահատուէն վրայի լաթերնին պատռտելև անանկ գլուխնին կախած հետը քաղաքը դարձան։

Երբոր ասանք եկան յովսեփայ առջևը ելան՝ ու անալ սկսաւ իրենց ըսել թէ աս ինչ է ձեր ըրածը, յուդա շուտմը գնաց ոտքը ինկաւ ու ըսաւ, մենքալ պատասխան չունինք տալու՝

խօսքերնիս հատաւ, ինչ ըսենք որ խալըսինք, ՝ՈՏ մեղքերնիս երեսնիս տրվաւ. ահա ամմի-նրս հրամանոցդ գերին ենք։ Յովսէփալ չէ ատանկ չէ ըսաւ, հապա որուն քովէն որ գաւա-թը եկաւ՝ ան պիտոր իմ գերիս ըլլա. ու դուք ազատ եղիք՝ ձեր հօրը քով գացէք։ Ինատենը աս խօսքիս վրա քիչմը սիրտ առաւ, ու իրմի-թողուլթե ուզելով սկսաւ կարգով պատմել-թէ՝ ինչպէս իրենց հօրը ծերուէ սիրական զա-ւակն է բենիամինը, և ինքը որչափ դժվարուլ-քաշեր է՝ ինչվան որ տղան ան ծերին ձեռքէն փրցուցեր բերեր է, որ ըսաւ՝ չեր թողուր կը-սեր թէ՝ ռաքէլ կընիկրս ինձի միան երկու զա-ւակ բերաւ. մէկը քովէս բաժնըվեցաւ, որ դուք ըսիք թէ անիկա գազանը բզրքատեց կե-րաւ, որ ինչվան հիմա մէյմալ անիկա չտես-սա. հիմա թէ որ տալ քովէս առնէք՝ երթա-Ցամբան հիվընտա՝ իրեն փորձանքմը հանտ-պելու ըլլա նէ՝ իս կըմեռցունէք. անոր հա-մար ըսաց յուդա՝ ես հօրը առջևը աս տղի-երաշխաւոր (ՅՐ՝ քէֆիլ) եղա, ուստի անոր տեղը ես գերի կըլլամ հրամանոցդ, որ ինքը ազատվի հօրը քով երթա. թէ չէ՝ ինչ երե-սով ես հօրը առջևը պիտի ելնեմ. ու անոր կսկիծը տեսնեմ։

Ինատենը յովսէփ ալ չիկրցաւ համբերել ինքը զինքը բռնել. ուստի օտար մարդիքը քո-վէն դուրս հանել տրվաւ, և միան իր տասը-մէկ եղբարցը հետ մնալով՝ մէկէն լալով կան-չեց ըսաւ, ես յովսէփն եմ, իրաւցընէ իմ հա-ղը ողջ է մի։ Եղբարներնոր աս լսեցին՝ ան-տեղը պաղեցան մնացին՝ բերանին չեր բաց-վեր. յովսէփ նորէն իրենք քովը մօտ կանչե-

ու ըսաց, Ես յովսէփ ձեր եղբարն եմ. որ դուք իս ան վաճառականներուն ծախեցիք՝ որ անոնքաղ առին հոս եգիպտոս բերին. բայց մի վախնաք ան ձեր ըրածին համար. ուստ ասանկ կարգաւորեց որ ես աս ճամբուս հոս գամ, իշխան ու տեր ըլլամ եգիպտոսի. և աս սովիս ատենը ձեզ կերակրեմ, որ մեր ազգը աշխարքիս վրայէն չի հատնի. և հիմա սովին երկրորդ տարին է, հինգ տարի ալ կուզէ որ ետ թը տարի ըլլա։ Անանկ սիրով հետերնին գրկըվեղէն պագտըվեղէն ետքը՝ ապրսպրեց որ շուտով երթան իր հօրը զուրուցեն, որ ուստ՝ յովսէփը իր որդին եգիպտացոց վրա իշխան է ըրեր. ու պատմեն իրեն փառքը մեծուները, և ըսեն որ չիուշանա՝ ինքնաղ իր տնով տեղովը եկլէ եգիպտոս գա, որ զինքը աս սովիս ատենը կերակրեմ։ Ա՛ս յովսէփայ եղբարներուն յայտնըվիլը փարաւոն թագաւորնաղ երբոր իմացաւ՝ շատ ուրախացաւ. ու ինքնաղ յովսէփայ ապրսպրեց որ՝ անոնց սայլեր (ցռ առապաներ), և ուրիշ ճամբու պաշարներ տա, որ երթան հարերնին բոլոր տնով տեղովը եգիպտոս բերեն. յովսէփաղ փարաւոնի ըսածինպէս անոնց պիտանաւորութիւնը աղեկմը հոգալով, ու սիրտ տալով իրենց ճամբա դրաւ՝ որ քանանացոց երկիրը գացին։

ԳԼ. ԻԲ.

Յակոբ բոլոր ընտանիովը կելաւ Եգիպտացոյ երկիրը։ Եւ հոն իր զաւակները օրհնելով՝ բարի ծերութիւն կը վախճանի։

Ծննդ. խդ. խէ. խը. խթ։ = Ամոս 2298 2315։

Յակոբայ տանը մէկ որդիքը մէկէն երբ ուրախութիւն եկան իրեն ըսին թէ՝ յովսէփ տղադ ողջ է եղեր. և ինքն է եգիպտոսի իշխանը. յակոբ սատիկ շփոթուելեցաւ պաղեցաւ մընաց. առջի բերանը չի հաւատաց, ինչվան որ տեղն 'ի տեղը նորէն պատմեցին, ու ցրցուցին սայլերը և ուրիշ ճամբու պատրաստութիւնները, որ զինքը տանելու համար յովսէփ անդիէն հետերնին խրրկեր էր։ Ինչ ժամանակը յակոբայ սիրտնալ վառուելեցաւ ու ըսաց, առկեց աւելի ալ ինչ մեծ բարիք կրնամ ուզենալ՝ որ գիտնամ թէ իմ յովսէփս ողջ է. անանկ է նէ սիրով կերթամ որ չի մեռած՝ տեսնեմ զինքը. ուստի ամէն բաները պատրաստեց, ու իր տղաքներովը և թոռներովը բոլորը եօթանասունը հինգ հոգի ճամբա ելաւ։ Դայց աս երթալուս վրա յակոբ քիչմը տարակուսանքի մէջ էր, (ինչու որ՝ ան իրեն կեցած քանանացոց երկիրը՝ ած աբրահամու խսահակայ և իրենալ միշտ խոստացեալներ որ իրենց ազգին տա, ու հոն մնան շատանան,) ուստի երբոր եկաւ Ջրհոր երդման ըսած տեղը հասաւ, այ ուխտ ըրաւ զոհ մատուց որ զինքը լուսաւորէ։ Ինչ ալ ան գիշերը երևցաւ իրեն, ըսաւ որ՝ չի վախնա եգիպտոս երթա, որ յովսէփ մահվան ատենը իր աչքերը գոցէ. նաև ասալ խոս-

տացաւ որ հոն իր աղգը աՀեցունէ շատցունէ՝ ու եարքը նորէն իրենք եգիպտոսէն հանէ։ Ի՛նկ՝ աւելի սիրտ առաւ յակոբ, ու Ճամբան առաջ երթալով՝ երբոր եգիպտոսի մօտ գեսեմ ըսած երկիրը հասաւ, ան տեղը յովսեփալ գեմը եկաւ. ու իր հարը տեսնելուն՝ գնաց լալով վիզը պըլըվեցաւ. հարնալ զինքը գըրկելով ըսաւ, այսուհետև մեռնիմ երթամ որդի՝ որ քեզ մէյմալ ողջ տեսա։ Ի՛նքը յովսեփ տուն տրվաւ սորվըցուց իր հօրը և եղբարներուն՝ թէ փարաւոնի առջևը ինչ պիտոր ըսեն, որ եգիպտացիներէն զատ իրենք ան գեսեմ երկիրը բնակին, որ իրենց խիստ յարմար տեղ էր. ու հետը մէյտեղ առաւ իր յակոբ հարը՝ հինգ հոգիալ եղբարներէն՝ ա-նանկ փարաւոնի առջևը հանեց։ Փարաւոն ալ շատ ուրախացաւ վրանին, և սիրով յակոբ ծերունիին որպիսութիւնը հարցունելէն ետև՝ երբոր իմացաւ որ անոր տղոցը արվեստը հովիվուն է, յովսեփայ ուզածինպէս՝ իրեն ապըսպրեց որ՝ գեսեմ երկիրը անոնց տա հոն բնակին, (որ ան եգիպտացոց երկրին աւելի պարարտ կողմն էր)։ նաև ըսաւ որ թագաւորական ոչխարներուն վրայալ անոնցմէ վերակեցու դնէ։ Յովսեփալ գեսեմի երկիրը տեղաւորեց անոնք. և ան սովին մնացած հինգ տարինալ՝ իր հօրը տունը ինքը հոգաց կերակրեց՝ որ պակասութիւնմը չի քաշեցին։

Ի՛նչ տեղը յակոբ նահապետը տասնբեօթը տարիալ ապրելէն ետքը՝ երբոր ալ խիստ ծերացաւ, յովսեփը քովը կանչեց՝ ու երդվընցընելով ապրսպրեց որ զինքը հոն եգիպտացոց երկիրը չթաղէ, հապա առնէ քանանացոց

երկիրը տանի իրեն հայրենական գերեզմանը գնե։ Նկե եւս մէկ հեղմընալ յովսէփ իր երկու որդիքը մանասէ ու եփրեմառաւ ծերունի հօրը քով բերաւ, որ իր վերջի օրհնութիւնը տա իրենց։ Յակոբալ գիրկը առաւ պագաւ ասս տղաքը, ու էվէլոք վրանին միխիթարվելով. փառք ՝ի՛ ըսաւ՝ յովսէփայ, որ իս չէ՛ թէ միան քու տեսուդ կարօտ չիթողուց, հապա քու զաւակդալ ինձի ցրցուց։ Նոքը յովսէփ ասս տղաքը կարգով յակոբայ առջևնոր չոքեցուց, ՝ի՝ աջ ձեռքին գիէն մանասէն՝ որ անդրանիկ զաւակն էր, ու ձախը՝ եփրեմը որ պզտիկն էր, որ անանկ ձեռվընները վրանին դրած օրհնէ իրենք. յակոբ ՝ածային կարգաւորուքը՝ աջ ձեռքը երկընցուց եփրեմի վրա դրաւ՝ ու ձախը մանասէին վրա՝ այնպէս իր օրհնեանքները տվաւ։ Նու ատենը յովսէփ ալ ասս՝ գիպվածով (կամ թէվէքելի) բան մը կարծելով թէպէտ փոխել չըտկել ուզեց. բայց յակոբ մտիկ չըրաւ, հապա անանկ եփրեմը մանասէին վեր դասելով յովսէփայ սիրուն՝ երկուքնալիր հարազատ որդոյը կարգին մէջը դրաւ, որ անոնց հետը մէյտեղ իրենքալ առանձին բաժին առնեն իր թողած ժառանգութիւնին. ու սիկիմը մէկալ եղբարներին 'ի զատ մասնաւորապէս յովսէփայ տրվաւ։

Նու ասկէ ետքը յակոբ նահապետը ալ բուն իր վախճանելուն ատենը տասվերկու որդիքնալ մէկէն առջևը կանչել տրվաւ, ու առաջին անդրանիկէն սկսած ամմէն մէկուն ցեղին վրա զատ զատ մարգարէութիւններ խօսեցաւ, որ ատենով պիտի կատարվէին։ Նս ըսած մար-

գարեուենները ամենը յուդայինը շատ երևելի է, որ յայտնի կրգուշակէ Թէ ատենով անոր ցեղին մէջը պիտոր հաստատվի Եհեղացոց Թագաւորութիւնը, և ինչվան մեսիային գալուստը պիտի դիմանա, ինչպէս որ եղաւ։ Կտաւ իր վերջի հայրական օրհնութիւնը իրենց տալով, և նորէն կտակ ընելով որ մարմինը քանանացոց երկիրը իր հայրենական գերեզմանը տանին Թաղեն. այնպէս բարի ծերութիւն հարուր քառասունրեօթը տարվան վախճանեցաւ։

ԳԼ. ԻԳ.

Յովսէփ իր հարը կընաղէ, և եղբարներուն ընդունելի պալէն եկա ինչպալ կրվախճանի։

Ծննդ. Ն։ = Ամեն 2315. 2369։

Երբոր յակոբ վախճանեցաւ, յովսէփ եգիպտացոց սովորութեանպէս, զըմուսել տրվաւ անոր մարմինը, (ինչպէս որ մեծամեծ մարդիքը պատվելու համար կընէին.) ու եօթանասուն օր անոր սուգը կատարելէն ետև՝ փարաւոն Թագաւորին հրամանովը՝ իր բոլոր եղբարները մէյտեղ, ու շատ մարդիքալ եգիպտոսի իշխաններէն հետերնին՝ կառքերով և ձիաւորներով փառաւոր հանդէսով առաւ քանանացոց երկիրը տարաւ, իրենց հայրենական գերեզմանը Թաղեց, ինչպէս որ յակոբ իրեն կտակ ըրեր։ Այս փառաւոր Թաղումն որ ըմբնցան, և ամենքը նորէն եգիպտոս տներնին դարձան, ան ատենը յովսէփայ եղբարները վախճան որ՝ չըլլա Թէ յովսէփ ան անցած գացած բաներուն համար վրանին ոխ պահելով՝ հօրը մեռնելէն ետև իրենցմէ վրէժը (այ էօձը) առ-

նէ. ուստի եկան յովսեփայ ըսին թէ՝ հարեր-նիս մեռնելէն առաջ մեզի ապրստրեց որ՝ իր կողմանէ հրամանոցդ ըսէնք, որ քեզի դէմ բրած մեղքերնուս թողուի տաս. ուստի մեն-քալ որ ՝այ ծառայքն ենք, կրնդրենք որ մեր չարութիւնները ներուին չնորհես. և անանկ գացին յովսեփայ ոտքը ինկան՝ ահա մենք ամենքս քու ծառատ ենք ըսին։ Նատենը յովսեփայ սիրտնալ լեցվեցաւ՝ սկսաւ լալ. ու մխիթարե-լով իրենց ըսաւ, մի վախնաք՝ եսալ ՝այ ծառան եմ. իրաւի որ դուք ինծի չար ընել ուզեցիք, բայց ՝ած ան չարը 'ի բարին դարձուց, ինչպէս դուքալ տեսաք, որ անհամար մարդիք կերակ-րեցի. ուստի մի վախնաք՝ ասկէ ետև ալ ձեզ կըհոգամ ինչպէս որ մինչև հիմա ըրի։ Այս-պիսի անյիշաչարութեամբ թողութիւն տալով, և սրտերնին առնելով՝ համբեց իրենք. ու անանկ հոն ինչվան ետքը խաղաղութեամբ հանգիստ ապրեցան։

Այց յովսեփ հարուր տասը տարին որ հա-սաւ՝ վախճանելու մօտ ատենը, մնացած եղ-բարները քովը կանչեց՝ ինքնալ աս կրտակրս ա-նոնց ըսաւ, որ երբոր ՝ած իսրայելացիները՝ (ինչ-պէս ըսերեր,) եգիպտոսէ հանէ՝ ու աբրահա-մու իսահակայ և յակոբայ խոստացած երկիրը տանինէ, անժամանակը իր ոսկորներնալ եգիպ-տոսէ վերցունեն հետերնին մէյտեղ առնեն հոն տանին։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԼԻՑ ԵՒ ԹՈՒՈՑ ԳՐՔԵՐՈՒՆ ԻՍՐԱՅԵԼԱՑՈՑ ՀԱՆԴԷՊԱՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍ ՈՒ ԱՆԱՊԱՏԻՆ ՃԱՄԲԱՆ

ԳԼ. Ա.

Իսրայէլացւոց հալածումը և նեղումը Եգիպտացւոց յեռուէն։

Ելից. ա. = Ամ Հ. 2428։

Յովսէփ նահապետին մեռնելէն ետքը՝ վաթսուն տարիի չափ ալ իսրայէլացիք հանգիստ և խաղաղ անցուցանելով, օրէ օր անչափ աճեցան շատցան, որ իրենց բնակած գետեմ երկիրը մարդով լեցուեցաւ։ Այլ ետեւէ ետեւ Եգիպտացւոց նոր թագաւորներ նստելով մէկ-նալ եկաւ, որ ինքնալ փարաւոն կըսուէր, ասիկա աղէկմը չը գիտնալով և բանի տեղ չի դնելով Յովսէփայ՝ Եգիպտացւոց ըրած բարիքները, երբոր տեսաւ որ իսրայէլացիք այսպէս եկեղեցք կրշատնան կուժոռնան կոր՝ վախցաւ թէ ասոնք մէկ օրմը իրեն թշնամիներուն հետ մէկ եղած՝ իրենց դէն կըհասցուցնեն, ուստի խորհուրդ ըրաւ որ իսրայէլացիքը շինվածքներու աշխատցուցնելով. և ծանրը պարտքեր վրանին հեծցուցած՝ զիրենք նեղէ ու չարչարէ, որ ասով անչափ չի շատնան չուժոռնան։ Այս թէպէտ անանկ խիստ ու անտանելի չարչարանքով իսրայէլացիքը իրեք քաղաք շինեցին, այ՝ փիդոնի, ռա-

մեսէ, ու ոչն՝ ըսած. բայց փարաւոն իր միտքը դրածին չի հասաւ. ինչու որ՝ որքան եգիպտացիները իսրայելացիքը կըտանջէին՝ անոնք ՝ծծայլին օրհնութիւնը անչափ աւելի կըշատնային ու կըզօրանային։ Նոր համար մէկ ուրիշ բան նիմալ ձեռք զարկաւ փարաւոն. երկու վարպետ դահեկներ կային որ կերթային իսրայելացոց դահեկութիւն կընէին, ասոնց գաղտուկ հրամայեց որ՝ երբոր իսրայելացոց տղա առնելու ըլլան՝ մանչ ծնածները շուտմը խըլեսան, և աղջիկները միայն ողջ թողուն։ Դահեկները այն սիրտերնին ըլլալով՝ չի կատարեցին թագրին տըված հրամանը, ասոր համար ՝ծծալ օրհնեց իրենք՝ որ բանտերնին կաջողեր, կըհարուստանային։ Այսքը երբոր թագաւորը քովը կանչեց՝ վրանին սրդողեցաւ. անոնքալ ասանկ պէս տըվին թէ՝ ինչ ընենք, երբայեցոց կնիկները եգիպտացոցպէս չէն, հապա դահեկը քովերնին չի հասած՝ տղան կըբերեն։ Փարաւոն թագաւորը երբոր տեսաւ որ աս Ամբոխալիր ուզածը չեղաւ, անկէ ետև յայտնի հրաման հանեց որ բոլոր իսրայելացոց կամ երբայեցոց մանչ ծնած տղաքը գետը ձգեն որ խըլեստըվին, ու միայն աղջիկները խալըսին։

ԳԼ. Բ.

Փարաւոնի աղջիկը՝ Մովսէսը գետէն կըխալըսէ՝ իրեն որդեգիր կառնէ։

Եղից. բ։ = ԱմՏի 2433։

Այս ատենները իսրայելացոց աղգէն զանիին ցեղէն՝ ամրամ ըսաց մէկ մարդումը մանչ զաւակմը եղաւ, ասիկա տեսնելով ծնողքը որ

աղվոր տղեկմունք՝ մեղքունցան գետը ձգել, բայց անանկ՝ թէ՝ օրական հրամանին դեմ ի-րեք ամիս գաղտուկ պահելէն ետև՝ վախնալով որ մէկ օրմը յանկարծ բանը դուրս ելլա՝ ու իրենք պատիժը քաշեն, անոր համար մէկ պրտուէ, ՝ի՝ խսիրէ հուսած սրնտուկմը առին կպրաձիւթով (՝ի զիֆտով) ծեփեցին, ու տը-ղան մէջը դրրած գոցած՝ անանկ գետին քովն կողմը ձգեցին. ու յոլին քուրնալ սիրտը չիգի-մանալով քովէն չէր զատվեր՝ որ տեսնէ թէ ինչ կելլա։ Ան ժամանակնալ փարաւոն թա-գաւորին աղջիկը իր նաժիշտներովը (՝ի խա-յտեխներովը) անդին գետին քովերը ելեր ժուռգալնինի՝ երբոր տեսաւ աս սնտուկը՝ շուտմը խրկեց հանել տրվաւ, ու բանա նայի որ՝ մէջը մէկ տղեկմը դրած կուլակոր անոր վրա խիստ գութը շարժեցաւ կռահ գնաց որ աս եբրայեցոց բանը ելլա։ Տղին քուրը ան-ատենը քովը մոտեցաւ, կուզես ըսաւ որ մէկ եբրայեցի կաթտրվող կնիկմը կանչեմ որ ա-տիկա առնէ պահէ. անա՝ հա՛ ըսաւ. աղջիկ-նալ գնաց տղին մարը բերաւ. ու փարաւոնի աղջիկը անոր ձեռքը յանձնեց տղան, որ իր ծախքովը (՝ի խարճովը) պահէ մեծցունէ տը-ղան։ Ա՝ռնալ սիրով քովը առաւ պահեց. ու մեծցունելէն ետև նորէն տարաւ փարաւոնի աղջկան ձեռքը տրվաւ։ Ան ալ, ինչպէս կը-սեն՝ ուրիշ զաւակ չունենալով՝ աս տղան առաւ իրեն որդեգիր (՝ի օղուլլուխ) շինեց, և անու-նը Ա՝ռվսէս դրաւ, որ ջրէ հանած՝ ըսել է. և անկէ ետքը վարպետներու քով դրրաւ որ ե-գիպտացոց ուսումները ու իմաստութիւնները կարդա սորվի։

ԳԼ. Գ.

Մովսէս աղքատերուն պարգևով Մադիանացոց երկիրը կը փախչի, և Մորենիին հրաշքը կը տեսնէ։

Ելից. Գ. Դ. = Ամէն 2474. 2513.

Մովսէս երբոր մեծցաւ քառասուն տարվան մարդ եղաւ. ճշմարիտ հնարքով զօրանալով՝ Թագուհւոյ ձգեց անհաւատ Թագուհիին որդեգրուիը՝ և Թէրական տունը տեղը, ու գնաց իր իսրայէլացոց ազգին հետ կեցաւ։ Անկէց ետև մէկ հեղմը մովսէս տեսաւ որ եգիպտացի մարդմը մէկ եբրայեցիմը բռներ կը ծեծեր ու կը չարչարեր. ասանիկ չիդիմացաւ մովսէս՝ ասոնիս անդինանայեցաւ որ մարդ չիտեսնէ, շուտմը վրան վազեց սպանեց ան եգիպտացին՝ ու ան տեղը աւազին մէջը Թաղեց։ Հետքը անոր մէկալ օրը նորէն տեսաւ որ՝ երկու եբրայեցի մէկմէկու հետ կռիւ կընէին, մովսէսալ մէջ մտաւ որ հաշտեցունէ անոնք, մարդիք ըսաւ դուք մէյտեղ եղբար էք՝ ինչու մէկզմէկ կուզէք զրկել. անատենը զրկողը մովսէսի երեսը վազեց ու ըսաւ, քեզ ո՞վ մեր վրա իշխան կամ դատաւոր դրաւ. իսալ ըսպաննել մի կուզես՝ ինչպէս որ երեկ ան եգիպտացին ըսպաննեցիր։ Այս որ լսեց մովսէս՝ զարմացաւ մեանց Թէ ինչպէս բանը յայտնըվերէ, ու ետքը իմանալով որ փարաւոնի անկաճնալ հասեր է, ու անոր համար զինքը կը փընտռէ որ բռնէ մեռցունէ, եգիպտոսէ ելաւ մադիանացոց երկիրը փախաւ գնաց՝ որ կարմիր ծովուն մէկալ դին կը լլսոր՝ սինա լեռանը մօտ։ Հոն մընաց, կարգըվեցաւ՝ սեպփորայ ըսած մադիանացոց իշխանին

կամ քահանայապետին աղջիկը առաւ, որ անկեց իրեն երկու որդի եղաւ՝ գերսամ ու եղիազար. և քառասուն տարիի չափ ասանկ անիրաւ ջրքով կեցած, որ հռագուէլ կամ յոթ որ կրսվեր, անոր ոչխարները կարծէր. աս ատենները Թէպէտ Եգիպտոս՝ ան վերի ըսած փարաւոն Թագաւորը մեռաւ, բայց եռեէն ուրիշ փարաւոնմը տեղը նստաւ՝ որ իսրայեցոց հալածանքը աւելի սաստկացուց, հոգինին բերանին բերաւ, անանկ որ՝ ալ Հարեռնին հատած ախ վախ ընելով՝ այ սկսան դիմել, որ յիշէ իրեն ըրած խոստմունքները՝ իրենց նահապետացը աբրահամու իսահակայ և յակոբայ, ու խալրսէ ան ծանրը գերուէն։ Հոտը՝ այ սահմանած չափն որ հասաւ՝ իր անհուն ողորմութիւնը իսրայեցոց հառաչանքը լսելով կամեցաւ որ մովսէսի ձեռքովը անոնք եգիպտացոց անողորմ ծառայուէն ազատէ. այսու կերպով մովսէսի երևալով՝ և հետը խօսելով։

Ա՝էկ օրմը մովսէս ոչխարները առած արծէլու որ հանեց, ու եղաւ ինչվան քորեբ լեռը գնաց, ան տեղը յանկարծ դիմացը նայի որ՝ մէկ մորենիմը (այ՝ մորմենիի ծառմը) կրակ կտրած կրվառէր, ու ամենևին չէր երեր հատներ։ Ա՝ովսէս երբոր քիչմը առաջ գնաց մոտեցաւ՝ որ աս զարմանալի հրաշքս աղէկմը տեսնէ. անատենը մորենիէն այսպիսի ձան եկաւ իրեն, մովսէս մովսէս՝ հոս մի դար մոտենար, կօշիկներդդ ոտքէդ հանէ, ինչու որ՝ կայնած տեղդդ՝ սրբ գետին է. մովսէսալ զարհուրած չէր կրնար վրան նայիլ։ Հոտը ասաւ ըսաւ, ես եմ՝ ած աբրահամու իսահակայ և յակոբայ, տեսա իմ ժողովրդոցս չարչարանքը,

ու լսեցի անոնց հառաչանքը եգիպտացոց ձեռ-
քէն, անոր համար եկա որ իրենք եգիպտաց-
խալըսեմ, և իմ անոնց նահապետներուն խա-
տացած երկիրը տանիմ իրենք, որ անանկ աղ-
է՝ որ կաթ ու մեղր կըբխէ. ուստի եկէք ըսա-
քեզ փարաւոն թագաւորին քովը խրկեմ՝ ա-
դուն իմ ժողովուրդս եգիպտոսէ հանես-
Ա՝ովսէսալ պէտն տըվաւ, ՝որ՝ ես ո՞վ եմ որ փա-
բաւոնի առջևը երթամ, ու իսրայէլացիքը եգիպ-
տոսէ հանեմ։ Ա՝ծալ ըսաւ, ես քու հետդ
կըլլամ որ քեզի օգնեմ։ Ա՝ովսէս նորէն դար-
ձաւ ՝այ հարցուց, հապա թէ ես երթամ իս-
րայէլացոց ըսեմ որ՝ ձեր նահապետներու-
՝ածը իս ձեզի խրկեց, և անոնքալ հարցունե-
լու ըլլան թէ՝ անոր անունը ինչ է, ես ինչ
ըսեմ։ Ա՝ծալ իրեն պէտն տըվաւ, ՝ես եմ ՝ած՝ ա-
ՀՆ, իմ յաւիտենական անունս այս է. ուստի
այսպէս ըսէ անոնց, Ա՝որ ՀՆԸ՝ որ ձեր նահա-
պետներուն ՝ածն է՝ իս ձեզի խրկեց. ասանկ
գնա՛ բանը հասկրցու իրենց. և անոնց խօսքի
տեր մարդիքներէն հետդ առ մէյտեղ փարա-
ւոնի առջևը ելլէր ու ըսէ. մեր ՝որ ՝ածը մեզ
կըկանչէ որ իրեք օրվան հեռու Ճամբա դնէպ
՝ի անապատը երթանք, որ իրեն զոհ մատու-
ցանենք. գիտեմ ըսաւ ՝ած՝ որ փարաւոն ձեզ
պիտի չի թողու, ինչվան որ չարաչար պատժեմ
բոլոր եգիպտացիները՝ անանկոր՝ ետքը ակա-
մա թողու որ անկէց ելլէք։ Ա՝ովսէսի սիրտը
ասովալ չի հանդչեցաւ՝ նորէն հարցուց. հա-
պա ըսաւ ինչլացիները չի հաւատան թէ ՝ած ին-
ծի աս բաներըս յայտներ է, ես անատենը
ինչ պիտոր ըսեմ։ Ա՝ծալ ըսաց իրեն. հիմա
ատ ձեռքդի բռնած գաւազանդ (՝այ՝ տէրսկ-

կրդ) գետինը ձրգէ . անալ ձգելունպէս՝ գաւ
ազանը օձմը դարձաւ . ու մովսէս վախնալով
սկսաւ քովէն փախչիլ . ՇԾ հրամայեց որ պտչէն
բռնէ վերցունէ . և անանկ ձեռքը որ առաւ՝
ան օձը նորէն գաւազան եղաւ : Եւ տա մէյմալ
իրեն հրամայեց ՇԾ՝ որ ձեռքը ծոցը խօթէ . և
մովսէսալ անանկ ըրաւ , ու ետքը հանեց տե-
սաւ որ ան ձեռքը բոլոր բորոտած էր . ՇԾ նո-
րէն ծոցրդ դիր ըսաւ . ու դնելուն պէս՝ բորը
վրայէն գնաց . Թէ որ ըսաւ ՇԾ՝ ատ երկու
հրաշքը առջևնին ընես, ու չի հաւատանէ է-
տևէն աս ալ ըրէ գետէն ջուր առ գետինը
լեցուր , որ ան ջուրը տեսնան որ արուն կը-
դառնա : Մովսէս նորէն ետ կեցաւ՝ աս գործ-
քիս մէջ չուզեց որ մտնէ . կաղաչեմ ՇՇ ըսաւ՝
ես մէկ խօսող մարդմը չեմ , ատ բանը չեմ
կրնար պաշարեր : Ծալ իրեն ըսաւ , ես քու
բերանդ կրբանամ ու տուն կուտամ որ պէտք
եղածը զուրուցես : Մովսէս նորէն ըսաւ , ՇՇ
կաղաչեմ որ իս Թողուս՝ ու մէկ ուրիշ զօրա-
ւոր մարդմը ատ բանիդ վրա դնես : Նատե-
նը ալ ՇԾ վրան սրդողեցաւ՝ ու ըսաւ . ահա
քեզի ահարոնը քու եղբարդ , անոր բերանը
խօսք կա . երբոր երթանէ անիկա ուրախու-
թիւն առնիրդ կելնէ քեզ կընդունի . իմ ըսած-
ներըս դուն անոր բերանը դիր, ինքը քու դիէտ
ըսէ ժողովրդոցը , և ատ գաւազանդալ հե-
տրդ առ որ անով աս հրաշքները ընես :

ԳԼ. Դ.

Մովսէս Եգիպտոս չերթառնա. որ Իսրայելացիք Եգիպտացոյ ձեռքէն խալըսէ։

Եղց. գ. Ե։ = Ամ Տի 2513։

Մովսէս պէտք եղաւ թող հնազանդելով եր-
բոր քորեր լեռնէն տուն դարձաւ անիրողը կե-
ցիք բարով ըրաւ, և իր կնիկը տղաքը հետ-
ան իր գաւազաննալ ձեռքը առած Ամբա ե-
լաւ Եգիպտոս գնաց։ Ինչ հոն նորէն երևցաւ
իրեն՝ ու հրամայեց որ երթա ան հրաշքները
փարաւոնի առջևը ընելով ըսէ Թէ՝ ահա կը-
հրամայէ որ իմ իսրայէլացի ժողովուրդս ան-
դրանիկ որդիս Թողուս՝ որ գան իս պաշտեն,
հապա Թէ չէ՝ ես իրեն անդրանիկ որդին կը-
պանեմ. ու մկկալ դիւն ահարոնի ալ երև-
ցաւ ահա՝ հրամայեց որ ելլէ մովսէսի դիմացը
երթա։ Ուստի աս երկու եղբար մէկ զմէկ ո-
տեսան՝ սիրով պագտրվեցան մէյտեղ, ու ա-
նանկ գացին, ան թող նշան տրված հրաշքները
իսրայէլացոց առջևը ընելով հաւատացուցին՝ Թ-
ահա իրենց աղաչանքը ըսեր՝ կուզէ որ իրենք ե-
գիպտացոց ձեռքէն խալըսէ. ետքը երկուքն
ալ մէկտեղ փարաւոնի առջևը ելան ըսին Թ-
Իսրայէլացոց Տէր ահա ծը կրսէ որ Թող տաս իր ժողովդ
որ անապատը երթան իրեն տօնախմբութիւն ընեն
Փարաւոնալ իրենց պէտք տրվաւ Թէ՝ ով է աս
որ ես անոր խօսքը մըռեմ Իսրայէլը Թողում
ես ատ ձեր ըսած տէրը չեմ ճանչնար՝ ու Իսրա-
ելացիքնալ չեմ Թողուր որ երթան։ Այսաւ աս բա-
նիս վրա աւելի սրդողելով փարաւոն՝ երկուքնալ
քովէն վրդնտեց՝ Թէ դուք ժողովուրդը

գլխէ կը հանէք որ բանտերնէն կը մնան. և անկէց ետև հրաման հանեց որ ինչ լացող նէ-զուիր չարչարանքը էվելցունեն՝ չարաչար աշ-խատցունեն իրենք ան շինվածքներու վրա. ինչու որ՝ պարապ էն ըսաւ, բան ու գործ չու-նէին անոր համար այսպիսի փուչ բաներու ետևէ էն ինկեր։ Ինչլացիք երբոր իմացան թէ աս հալածանքիս աւելի գրգռվելուն պատ-ճառը մովսէս ու ահարոն եղեր էն. և երբոր անոնք փարաւոնէն ելած դիմացնին որ հան-տըպեցան, ան ատենը երած սրտով ասոնք ե-րեսնին վազեցին ըսին թէ, ՝ած ձեր դատաս-տանը կըտրէ, որ մեզ ասպէս ատելի ըրիք փա-ռաւոնի և եգիպտացոց առջևը. դուք թուրը անոր ձեռքը կուտաք որ մեզ ամենը ջարդէ։ Ինչ ատենը մովսէս ալ դարձաւ աս բանը գանկտեցաւ ՝այ առջևը. բայց ՝ած նորէն սիրտ տըվաւ իրեն, որ երթա իր կողմանէ աղէկմը բանը ինչլացող հասկըցունէ. ու ահարոնի հետ նորէն փարաւոնի երթան զուրուցեն որ ինչ-ցինները թողու, չէ նէ ըսաւ՝ իրենց անանկ սոս-կալի պատիժներ կուտամ, որ ան ատենը ինքը ուզէ չուզէ՝ իմ զորութիս իմ ժողովուրդս ան-կէց կըհանեմ. և ամսալ ապրսպրեց որ երթէ փարաւոն հրաշք տեսնել ուզէնէ՝ ան գաւազա-նին օձ դառնալու հրաշքը անոր առջևը ընէն։ Ինքնալ փարաւոնի առջևը ելան, և ան բա-ները ըսելէն ետև՝ ահարոն մովսէսի գաւազա-նը առաւ գետինը ձգելուն պէս՝ մէկ մեծ օձմը դարձաւ ան գաւազանը. անատենը փարաւոն աս կախարդական բան կարծելով ինքնալ իր կախարդները հոն բերել տըվաւ, որ անոնքալ իրենց գաւազանները օձ դարձուցին։ Ինչ որ

եղաւ՝ փարաւոն ան հրաշքը բանի տեղ չի սե-
պեց, ու սիրտը խստացաւ՝ այլ ըսածին մտիկ
չի դրաւ. Թէպէտ ետքը անալ տեսաւ որ մով-
սէսի օձ դարձած գաւազանը շուտմը գնաց ան
մէկալներունը կըլլէց։

Ը. Նոր համար ՝ՀԾ ինչպէս որ ըսեր էր, տասը
կերպ չարաչար հարվածներով պատժել սկսաւ
փարաւոնի և եգիպտացոց խստասրտութիւնը
(այ՝ ինատը,) ինչվան որ ետքի պատիժովը ալ
հոգինին բերաննին եկած՝ անանկ թող տըլլին
ինչացիները որ ելլեն երթան։

ԳԼ. Ե.

Եգիպտացոց տասը հարվածները՝ կամ պատիժները։

Ելից. Է. Ը. Թ. Ժ. = Սմ Յի 2513.

Ա. Գրջին հարվածը աս եղաւ որ՝ մովսէս
ու ահարոն գաւազանով գետին ջուրը զարնե-
լուն պէս՝ ան նեղոս գետը և բոլոր եգիպտոսի
լիճերը (այ՝ կէօլերը), հորերը, ու ուր տեղ
ինչ ամանի մէջ ջուր կար նէ՝ ամէնը արուն
դարձան ու հոտեցան, և մէջը եղած ձկները
սատկեցան. անանկ որ՝ ալ եգիպտացիները
խմելու ջուր չէին գտներ։ Այս պատիժըս եօ-
թը օր դիմանալէն ետքը, փարաւոն տեսնե-
լով որ իր կախարդներնալ ուրիշ տեղաց ջուր
բերին, իրենքալ անանկ արուն դարձուցին.
աս հրաշքովըս չի շարժեցաւ որ ինչացիները
թողու։

Բ. Նոր համար երկրորդ հարվածը եկաւ.
որ երբոր ահարոն մովսէսի գաւազանը երկն-
ցուց դէպ՝ի եգիպտոսի ջրերուն ու լիճերուն
վրա, անչափ գորտ (այ՝ խուրպաղի) բխեց ե-

լաւ անոնցմէ՝ որ բոլոր եգիպտացոց տղաները եկան լեցվեցան, և բոլոր անոնց պառկելու մահիճներուն վրա, թոնիրներուն ու կերակուրներուն վրա կրվրխտային ան գորտերը։ Ա՛ս ցուցանքը թէ պէտ եգիպտացոց կախարդներնալ ըրին՝ անոնքալ գորտ հանեցին. բայց այսու ամիւ փարաւոն կանչեց աղաչեց Մովսէսի ու Ահարոնի, որ աղօթք ընէն ՅՀ՝ աս պատիժը վերցուցնէն. և ինքնալ խօսք տրվաւ որ իսրայելացիները թողու։ Ա՝ովսէս ալ փարաւոնի ցցուցնելով թէ ինքը աս բաները կախարդութիւն չըներ, իրեն թողուց որ աս պատիժս դադրելու ատենը ինքը ըսէ. փարաւոնալ վաղ թող ըլլա ըսաւ. ու Մովսէս աղօթք ընելուն պէս, անանկ եղաւ՝ մկկալ օրը մկկէն սատկեցան ան գորտերը, որ բոլոր եգիպտացոց երկիրը հոտեցուցին։

Դ. Բրրորդ փարաւոն աս հարվածէս խաղսելէն ետև տրված խօսքէն որ ետ դարձաւ, ամ ետև էն երրորդ հարվածը տրվաւ, հրամայեց Մովսէսի՝ որ Ահարոն գաւազանովը գետնի հողը զարնէ։ Ա՝նանկ որ ըրաւ՝ բոլոր եգիպտոսի մարդիքը ու անասուններները մունով (յ՝ սիլրխսինէկով) ծածկրվեցան։ Փարաւոնի կախարդներնալ աս բանը ընել ուզեցին՝ ինչպէս մկկալ երկու առջինը ըրին, որ խախք ընեն Մովսէսը ու Ահարոնը. բայց երբոր չկրրցան ընել, դարձան փարաւոնի ըսին թէ՝ ՅՀ ձեռքը կա աս բանիդ մէջը. և անովալ փարաւոնի սիրտը չի կակուղցաւ, որ իսրայէլացիները թողու։

Դ. Ուստի չորրորդ հարվածը եղաւ շանաշանա՛ ըսած կենդանին՝ որ լեցվեցաւ բոլոր է-

գիպտացոց երկիրը, ու կըՀելով շատ մարդ և անասուն մեռցուց. բայց հոն մօտիկ դեսեմ երկիրը՝ որ իսրայելացիները կրկենային՝ ՀԾ միշտ աղաս պահեց աս պատուհասներէս։ Փարաւոն աս շանաՀանՀէն չի դիմանալով մովսէս ու ահարոնը կանչեց՝ ըսաւ որ գնացէք ձեր աստուծուն զոհ ըրէք իմ երկրիս մէջը։ Մովսէս ալ ըսաց թէ՝ աս ըլլալու բան չէ, որ մենք եգիպտացոց առջևը ան կենդանիները զոհ ընենք, որ անոնք մորթելը պղծուի կըսեպեն, որ տեսնենք մեզ կրքարկոծեն. հապա պէտք է որ իրէք օրվան Ճամբա հեռու անապատը երթանք՝ հոն զոհերնիս ընենք։ Փարաւոնալ ըսաց թէ գացէք՝ միան թէ շատ չի հեռուն. և ինծի համարալ աղօթք ըրէք։ Մովսէս քովէն ելաւ՝ ու աղօթք ընելուն պէս՝ բոլորովին շանաՀանՀը գնաց փարաւեցաւ իրենց վրայէն։

Ե. Բայց փարաւոնի սիրտը նորէն խստացաւ, ու խօսքին վրա չի կեցաւ, ուստի ՀԾ շուտմը հինկերդ հարվածը մովսէսի ձեռքովը խրրկեց անոնց անասուններուն վրա, որ եգիպտացոց կենդանիներէն՝ անհամար ձիեր, էշեր, ուղտեր, կովեր, ու ոչխարներ ջարդեց. բայց երբոր իմացաւ փարաւոն թէ իսրայելացոց կենդանիներուն ամենևին զէնմը չէ եղեր, աւելի դըժարը գալով՝ պինտ կեցաւ իսրայելացիները չի թողուց։

Զ. Նոր համար ՀԾ նորէն հրամայեց մովսէսի ու ահարոնի, որ փարաւոնի առջևը ելլեն, ու ափով տաք մոխիր առած դէպ 'ի երկինքը ցանեն։ Երբոր անանկ ըրաւ մովսէս՝ վերերորդ հարվածը եղաւ, որ մարդիկներուն

և մնացած անասունները ուն վրա անանկ խոցեր (այ՝ եարաներ) ու բշտած ուռեցքներ ելան, որ չէին կընար դիմանալ։ Այս խոցերը փարաւոնի կախարդներուն վրայալ եղաւ. և անով իրենք ալ սաստիկ չարչարվելով չկրցան Մովսէսի դիմացը ելլել, որ կախարդութիւն իրենքալ աս բանը փորձէին։

Դ. Այծ տեսնելով որ աս պատիժովսալ փարաւոնի սիրտը չի կակուղցաւ, նորէն Մովսէսը իրեն խրկեց, որ ըսէ թէ՝ դիտնաս որ վաղվան օրը անանկ սաստիկ կարկուտ պիտի վրանիդ թափեմ, որ եգիպտոս քանի եղած է նէ՝ առնանկ բան տեսած չէ. ու Մովսէս աս բանս որ զրրուցեց՝ ետևէն անալ ըսաւ որ՝ ովոր դուրս տեղը մարդիք կամ կենդանիներ ունի նէ՝ ներս առնէ, որ աս կարկուտս իրենք չի մեռցունէ։ Այս ասանկ ըսածինպէս՝ մէկալ օրը երբոր ատենը եկաւ, ու այ հրամանովը Մովսէս ձեռքը դէպ 'ի երկինքը վերցուց՝ սկսաւ սոսկալի կարկուտը՝ գոռալով ու կայծակներով այնպէս խոշոր ու սաստիկ ինջնալ, որ բոլոր կանանչները ծառերը՝ ջարդեց մոխիր դարձուց, և ով որ Մովսէսի խրատը չիմրռեց դաշտերը թողուց իրեն մարդիքը ու անասունները՝ անոնք ամմենը կարկուտը սպաննեց։ Այս պատուհասէս փարաւոն սոսկալով թեպէտ շուտը քովը կանչել տրվաւ Մովսէս ու Ահարոնը, և մեղա գոչելով իրենց աղաչեց որ՝ այ աղօթք ընեն դադրեցուցնեն, և իրէլացիները ալ թող կուտամ ըսաւ. բայց ետքը անոնց աղօթքովը աս պատիժը որ դադրեցաւ, ինքնալ խոսքէն ետ դարձաւ՝ թող չիտրվաւ։

Ե. Հատի նորէն այ հրամանովը Մովսէս ու

ահարոն փարաւոնի գացին ըսին թէ, Եբրայ-
եցոց ՝ածը կրսէ թէ աս ինչ աներեսուն է քու
ըրածդդ՝ որ իսմէ չես ամրչնար, իմ ժողովուրդս
չես թողուր՝ որ իս գան պաշտեն. չէ նէ
գիտնաս որ՝ վաղը աս ատեն բոլոր քու երկրիդ
վրա անանկ սաստիկ մորեխ (՝ի՛ չէքիրկէ) պի-
տի բերեմ, որ ոչ ձեր հաթը և ոչ անոնց պա-
պերը տեսեր են, որ թէ կարկուտէն բանմընալ
մընացերէնէ՝ ան ուտէ սրբէ։ Ապանկ ըսին
փարաւոնի՝ ու ձգեցին ելան քովէն։ Բայց աս
բանս որ ըսեցին փարաւոնի քովը եղած էր իպ-
տացիները, սկսան գանկտելով իրեն ըսել՝ թէ,
ալ ինչվան երբ մենք աս պատուհասներս պի-
տի քաշենք, թող տուր ատ մարդիքը որ եր-
թան իրենց ՝ածը պաշտեն. չէս տեսներ որ է-
գիպտոսը ատոնց պատճառովը բոլորովին կը-
կորսըվիկոր։ Ան ատենը երկուքնալ նորէն քո-
վը դարձուցին, ու փարաւոն իրենց ըսաւ որ՝
ձեզի հրաման կուտամ որ երթաք ձեր ՝ածը
պաշտեք. բայց կուզեմ գիտնալ թէ ովովսի-
տոր երթա։ Ովսկսալ պատասխան տրվաւ
թէ՝ մենք ամմէնս՝ ծեր ու տղա, մանչ ու
աղջիկ, մեր կովերովը՝ և ոչխարներովը պիտի
երթանք, որ մեր ՝ոյ տօնախմբութիւնը կա-
տարենք։ Ուրեմն բարով երթաք ըսաւ փա-
րաւոն, ձեզ կրթողում, բայց ատ ձեր ամմէն
բաներ ընալ հետ տանիլը՝ կերևցունէ թէ սիր-
տերնիդ չարութի կա. ատանկ չէ՛, հապա միան-
երիկ մարդիքը երթան՝ ինչպէս որ առաջ դուք
եկաք իսմէ խնդրեցիք. այսպէս ըսելով՝ փա-
րաւոնի առջևէն վռընտեցին իրենք։ Ովա-
սկսալ երբոր դուրս ելաւ՝ անատենը ՝ոյ հրա-
մանովը ձեռքը դէպ 'ի երկինքը երկնցունէ-

լունպէս՝ հարաւային կողմէն մէկ սաստիկ հով-
մը եկաւ, ու մէկ օրմը և գիշերմը փչելով ան-
չափ մորեխ բերաւ որ՝ բոլորովին եգիպտացոց
երկիրը ծածկեց, ու կերաւ չորցուց ինչ որ կար-
կուտէն մնացեր էր։ Այս պատուհասիս համար-
ալ փարաւոն մովսէսը քովը կանչեց՝ մեղա ը-
սաւ, աղաչեց որ աղօթք ընէ՝ վերցունէ. մով-
սէսալ՝ այ աղաչելով մէկալ դիշեն հովմը հանեց՝
որ ան մորեխը բոլոր տարաւ կարմիր ծովը թա-
փեց. բայց այսու՝ամենայնիւ իշխացիքը չի թողուց փա-
րաւոն։

Թ. Ինչ որ համար շատ չանցաւ որ՝ ետեւէն
ինները որդի հարվածը եկաւ, որ երբոր մովսէս
նորէն՝ այ հրամանովը ձեռքը դէպ 'ի երկինքը
երկնցուց՝ մէկ անանկ սոսկալի թանձրը մութ
ու խաւարմը պատեց բոլոր եգիպտացոց երկի-
ը, որ իրէք օր ամենևին մարդ զմարդ չէր
կրնար տեսներ. ու ինչպէս կրսեն՝ օդին սաստ-
իկ թանձրուէն ճրագ վառելով բան չէր
երևար. ուստի ան իրէք օրը ամենին մարդ պառ-
կած տեղը մընաց՝ չելաւ. և միան իշխացոց
բնակած գեսեմ երկիրը աս պատիժէս ազատ
մնաց, ինչպէս բոլոր մէկալ պատիժներէնալ։
Այս մութուն ատենը փարաւոն ճարմը գտաւ
որ նորէն մովսէս ու ահարոնը քովը կանչեց, և
ալ հրաման տրվաւ իրենց որ երթան, միան
թէ կովերնին ու ոչխարնին հոն թողուն՝ հետ
չտանին։ Մովսէսալ իրեն պատասխան տը-
վաւ թէ՝ մենք չի՛ թէ միան մեր բոլոր կենդա-
նիները պիտի տանինք՝ և անոնցմէ մէկ ոսկոր-
մընալ չի՛նք թողուր. հապա դունալ պէտք է
որ մեզի ողջակէզ ընելու բան տաս. որ տես-
նենք թէ ասոնց մէջէն որը՞ ճշ կուզէ որ՝ թ-

բեն ողջակէզ մատուցանենք։ Ինատենը փա-
բաւոնի սիրտը նորէն խստացաւ, ու սրդողե-
լով մովսէսի ըսաւ. դնա՛ քովէս կորիր, մէյմալ
առջևը չերևաս, հապա թէ չէ՝ քեզ կրսպան-
նեմ։ Մովսէսալ անոր՝ ըսածիդպէս կըլլա՝ ը-
սաւ, մէկմընալ քու առջևդ չեմ երևար. ու քո-
վէն ելաւ գնաց։ Այսպէս որ եղաւ, ՅԾ մովսէսի
ըսաւ որ՝ մէկ հարվածմընալ ՅՇաց եգիպտացոց
տալու, ան ատենը փարաւոն ալ ձեզ թողկուտա-
որ եգիպտոսէ ելլէք։

ԳԼ. Ը.

Տասներորդ եգիպտացոց հարվածը, ու իսրայէլացոց ե-գիպտոսէ ելլելը։

Ելից. ԺԱ. ԺԲ. ԺԳ. = Ամ Յն 2513։

Ա՛Յ տասներորդ մեծ հարվածը չըրած՝ ո-
րերով առաջ մովսէսի ապրսպրեց որ երթա
գաղտուկ ելլացոց հասկրցունէ որ՝ իրենց բա-
ղեկամ և դրացի եգիպտացիներէն ոսկիէ ար-
ծրթէ բաներ և ուրիշ ալ կնկան սուղ հագուստ-
ներ զարդարանքներ՝ փոխ ուզեն քովերնին
պահեն, որ եգիպտոսէ ելլելու ատենը՝ առնեն
մէյտեղ հետերնին տանին։ (Ամսոլ ինչպէս կը-
սեն, կամեցաւ ՅԾ վՅարել՝ կամ փոխարինել
ողորմելի իսրայէլացոց չարաչար աշխատանքը,
որ անչափ տարի եգիպտացիները չարչարելով
իրենց ծառայեցուցին։) Ամբը նորէն մովսէ-
սի ձեռքովը հրամայեց ՅԾ որ՝ ելլացիքը ամ-
մէն տան գլուխ մէկ մէկ ոչխար առնեն պատ-
ռաստ պահեն, որ աս ոչխարըս արու (յՅ երբէկ)
պիտոր ըլլա՝ ու մէկ տարվան. և անիկա իրենց
նիսան ամսուն տասնըչորսին իրիկվան դէմ

ամմէն մարդ իր տունը մորթէ. ու առանց
ջարդելու անանկ ամբողջ խորված (այ՝ քէպապ
ըրած) ան գիշերը սեղան դնեն, ու արտորնօք
Ճամբորդիպէս՝ կօշիկնին հագած մէյմէկ գա-
ւազան ալ ձեռվընին բռնած՝ անանկ բաղար-
ջով (այ՝ խամուրսուզով), ու եղեգով (կամ
լեղի սալաթայով) ուտեն։ Այս աս բանըս՝ (որ
իրենց լեզվովը Պասքա կամ պասէք՝ կոչեցաւ,
ու մեր մէջը հայերէն՝ Զատիկ ըսվեցաւ, իբր
թէ խրայէլացոց եգիպտոսէ զատվելուն կամ
ելլելուն բաժնըվելուն արարողութիւնը.) ըսաւ
որ անկէ ետեւալ միշտ իսրայէլացոց օրէնք ըլլա, որ
որդոց որդի ամմէն տարի ան օրը աս սեղանս
ընեն։ Այաւ ուրիշ օրէնքներալ տալէն 'ի զատ՝
Ճած ան ատենը զգուշուէ համար ասալ ապրսպ-
ըեց որ՝ ան մորթած ոչխարին արունէն առնեն
ամմէնը իրենց տանը դռան վերի շեմին վրա
քսեն, որ եգիպտացիները պատժող հրեշտակը
ան արունին նշանը տեսնելով՝ իրենք թողու չի՝
պատժէ։

Այրբոր եկաւ ան ըսած օրը՝ որ ալ իսրայէլիք
այ հրամայածինպէս զատիկնին պատրաստեր
կուտեին կոր, յանկարծ կէս գիշերուն սկսաւ
ասաներորդ հարվածը, որ բոլոր եգիպտացոց
անդրանիկները, այ առջինէկ տղաքը մեծ ու
զտի՝ փարաւոնի տղէն ինչվան ետքի աղքա-
տին տղան ինկան մեռան, ու նաև անքան կէս-
անասնեներունալ անդրանիկները ջարդըվեցան.
անանկ որ՝ ան գիշերը եգիպտոս տուն չի մը-
նաց որ մէջը մեռել չըլլա։ Այսկէց շատ իրա-
բանցումէ գոռումգոչումեղաւ բոլոր եգիպ-
տոսի մէջը, որ փարաւոն ալ սաստիկ շփոթված
ելաւ գիշերանց բուրդ ու փապուճ կանչելը

վաւ մովսէս ու ահարոնը, իրենց ըսաւ որ է-
լէք գացէք ասկէց ձեր ամէն բաներովը՝ ինչ-
պէս որ կուզէիքնէ. և բոլոր եգիպտացիներն-
ալ էտեւնին ինկած կարտորցնէին որ՝ շուտով
ելլեն երթան. կրվախնային թէ՝ չըլլա որ մեռ-
նելու կարգը ճեացածներուն վրա գա։ Ասա-
տի իէլացիք ալ այնպէս արտորնօք պատառը
բերաննին ձամբա ելան, որ թրած ալուրնին
ալ չի խմորած (՝ի՝ մայան չի հասած,) լաթի
մէջ փաթտած անանկ կռնակնին զարկին կեր-
թային. և իրենց մէկալ բաներուն հետ ան
եգիպտացիներէն փոխ առած ոսկիէ ու արծը-
թէ բաներնալ մէյտեղ առին տարին։

Այս անատենը՝ վերը ըսած զատկին օրէնքէն
'ի զատ՝ ՇԾ աս օրէնքսալ հրամայեց իէլացոց,
որ՝ ան եգիպտացոց անդրանիկներուն ջարդը-
վելուն յիշատակ, անկէ ետև միշտ և հանա-
պազ բոլոր իէլացոց արու անդրանիկները ՝ի՝
առջինեկ ծնածը՝ ՝ի՝ ընծայվի. անանկ որ ան
առջինեկին համար ամէն մարդ իր կարողութե
չափովը մէկ կովմը, կամ ոչխարմը, կամ թէ եր-
կու տատրակ (՝ի՝ խուրմրի,) կամ երկու աղաւ-
նի, տանին ՝ի՝ զոհ ընեն. և աս հրամանքս նաև
իէլացոց անբան անասուններուն վրայալ էր,
որ անոնց սուրբ ըսած կենդանիներուն առջի-
նեկներնալ պիտի ՝ի՝ զոհ մատուցվին, ու ան-
դրանեքուն տեղը՝ սքերէն պիտոր առնեն ընեն։

Իէլացիք երբոր եգիպտոսէ ելան՝ միան ի-
րենց երիկ մարդիքը վերցարուրհաղար էին՝
մանաքը տըղոցմէ ու կնիկներէն 'ի զատ. թո-
ղունք ուրիշ ազգէալ շատ մարդիքը որ հետեր-
նին խառնըված մէկտեղ ելան։ Այս իէլացոց
այսպիսի մեծ բանակին (կամ օստուին) առ-

ջևէն՝ ՝ճծ Ճամբա ցրցունող տրվաւ, բարձրը օդուն (՝ի՝ հաւային) մէջը կեցած, ցորեկը մէկ սեանպէս (՝ի՝ տիրեկիպէս) ամպմը, ու գիշերը՝ կրակէ լուսաւոր սիւնամը, անանկ որ՝ գիշեր ու ցորեկ ասոնք դէպ 'ի ուր որ կըշարժէին կերթային՝ բանակնալ անոնց ետևէն կերթար։

ԳԼ. Լ.

Ասրայէլացիք էարդէր ծովէն կանցնին, ու փարաւոն էր զբրովը հոն կըխլաբրվի։

Ելից. ԺԴ. ԺԵ։ = ԱմՏի 2613.

Մէկ քանի օրէն ետև՝ երբոր ինէլացոց բանակը ՝ճծային կարգաւորութիւնը կարմիր ծովուն քովերը հասեր էր անատենը անդին փարաւոնի և եգիպտացոց միտքը փոխվեցաւ, վախ ըսին՝ մենք ինչու ասոնք թող տրվինք որ երթան, որ մեզի աղէկ կըծառայէին. ուստի շուտմը փարաւոն պատրաստել տրվաւ բոլոր զօրքը երկուհարուր յիսուն հազարի չափ՝ ու վեցհարուրաւ պատերազմական կառքեր ի բնոց ձիերով և ամմէն զէնքերովը, ու երաւ դէպ 'ի կարմիր ծովը իսրայէլացոց վրա գնաց։ Երբոր հեռվանց տեսան ինէլացիքը աս սոսկալի եգիպտացոց բանակը, սաստիկ վախուն իրար անցած սկսան աղաղակել՝՝՝, ու մոլսի դէմ գանկտելով կըսէին թէ՝ եգիպտոս գերեզմանն մի կըպակսէր, որ մեզ աս անասպատ տեղը բերես սպանուես. մենք հոն քեզի չէինք ըսեր որ՝ թող տուր մեզի մենք եգիպտացիներուն կըծառայենք, շատ աղէկ էր որ եգիպտացոց ծառայուէ տակը ըլլայինք, քան թէ

աս անապատ տեղըս գանք մեռնինք։ Մովսէս իրենց սիրտ կուտար որ չվախենան. Հիմա կըսեր կըտեսնէք որ ինչպէս պիտի մեզ ազատէ, ինքը մեր տեղը անոնց հետ պատերազմ կընէ. աս ետքի անգամն է՝ որ մէյմընալ եգիպտացիները պիտի չի տեսնէք։ Երբոր ալ սկսան եգիպտացիները մոտենալ ու իրիկուննալ վրա հասնելու էր, մովսէս ՝ի հրամանովը ժողովուրդը առաջ քշեց ծովուն քովը տարաւ. և իրեն գաւազանը ջրին զարնելուն պէս՝ շուտմը ծովը ան տեղէն պատռեցաւ երկուք բաժնըվեցաւ. և երկու դիէն պարիսպի (՝ի՝ հիսարի) պէս ան ջուրը դիզված՝ մէջ տեղը լան ու արձակ չոր Ճամբա եղաւ. որ իսրայելացոց բանակը ան Ճամբուն մէջ մնած՝ առանց թրջելու բոլոր գիշերը քալեցին ծովին մէկալ դին անցան։ Երբոր եգիպտացիքալ իսրայելացոց ետևէն ան ծովին մէջը բացված Ճամբան իրենք ալ մտան, ու բոլոր բանակնին ցամաքէն կըտրըված ալ ծովին մէջն էին, և անդիէն բոլոր իսրայելացիները ցամաքը ելեր էին, ան ատենը ՝ի՝ եգիպտացոց սիրտը մէկ վախմը ձգեց թէ՝ մենք աս մութ գիշերը ինչպիսի տեղ կըքալենք կոր, ու սաստիկ շփոթվելով հոն ծովին մէջը կապվեցան մնացին, ոչ առաջ կընային երթալ՝ ոչ ետ դառնալ։ Ա՛յս որ եղաւ, առաջվան դէմ՝ ՝ի՝ մովսէսի հրամայեց՝ որ դառնա ձեռքը ծովուն վրա երկնցունէ. ու անանկ բաժնինպէս՝ ան երկու դի բաժնըված բոլոր ծովին ջուրը քովէ քովէ եկաւ, անտեղը բովանդակ եգիպտացոց բանակը փարաւոնալ հետը այնպէս ծածկեց որ՝ մարդմը չիսալըսեցաւ։ Ա՛յս մեծ հրաշքըս երբոր իսրայելիքը տեսան՝

այ ահը սրտերնին մէջը աւելի հաստատուեցաւ, ու աղէկ իմացան թէ մովսէս մարգարէն մեծ ծառայ այ է։ Նայատենը երիկ մարդիքը և կնիկ մարդիքը զատ զատ երկու դաս եղած, մէկուն դասագլուխը՝ մովսէս, ու մէկալինը մովսէսի քուրը մարիամ մարգարէն. սկսան ուրախութիւն այ գովութիւն տալ, և նրվագաբանով (այ չալղներով) պար բռնած կերգէին ան օրհնութիւնը որ կլսէ՝ Զրհնեցարուք տէր զի փառաւոր է փառաւորեալ. ևն։

ԳԼ. Ա.

Նապարը ած Իսրայելացոց Ջրին պակասուելը էջնոփա, և մանանան իրենց էջնոյ էջբակուր ելուպա։

Ելից. ԺԷ. ԺԷ։ Թուոց. ԺԱ։ = ԱմՏի 2514։

Իսրայելացոց բանակը կարմիր ծովէն ելաւ՝ դէպ 'ի սուր ըսած անապատն որ գնաց, հոն իրեք օր ճամբա ընելով՝ ալ խմելու ջրերնին պակսեցաւ, ու ան անապատը ջուր չէին գտներ. ետքը երբոր մեռա ըսած տեղը հասան, և հոնալ եղած ջուրը տեսան որ անանկ լեղի է՝ որ չէր խըմվեր, սկսաւ ժողովուրդը մովսէսի դէմ տրտրմնջալ՝ թէ ինչ պիտոր խըմենք։ Ա՝ովսէսալ ան ատենը այ որ դիմեց, ած իրէն մէկ կեղրմը փատ ցրցուց՝ որ անիկա ջրին մէջը դնելով կանուշնար, ու անանկ խըմելով ծարաւնին անցուցին. և ասով խրատեց ած ժողովուրդը որ՝ թէ իրէն տրված պատվիրանքները պահենին՝ ամէն փորձանքներէն իրենք կըպահպանէ՝ ու կըհոգա։ Նկէ ելան էջելացիքը եղիմ ըսած տեղը եկան. որ հոն տասներկու անուշ ջրի աղբուր կար, ու եօթա-

նասուն արմաւենի (՝ի՝ խուրմայի ծառ)։ ան տեղնալ քիչմը ատեն կենալէն ետքը, նորէն ձամբա ելան գայլին դէպ՝ի սին անապատը։ Նատեանը երբոր ալ ուտելիքնին սկսաւ պակսիլ, ամէնքը մէկբերան տրրանջալով մովսէսի ու ահարոնի վրա՝ կրսէին։ Երանի թէ Եգիպտոս ան ՝այ խրկած՝ պատուհասներովը մեռնալ մեռած ըլլայինք։ Երբոր մսին պտուկներուն քովը նըստած՝ կուշտ մեր հացը կուտէինք, քան թէ մեզ աս անապատ տեղրս հանեցիք բերիք՝ որ հոս ամէնրս սովէ ըսպանենք։ Մովսէս ու ահարոնալ իրենց՝ ըսին թէ՝ ինչ կրնէք, ատ ձեր տրտունջը մեզի չէ՝ հապա ՝այ վրա կերթա՝ որ ինքը ձեզ Եգիպտոսի հաներ է։ Եւ ՝այ դիէն իրենց խօսք տրվին՝ որ ան իրիկունը ուտելու միս գտնեն, ու մէկալ առտվանց հացալ ունենան։ Եւ աս մովսէսի խօսքը ՝ած իմէլացոց հաւատացունելու համար՝ ան իրենց առաջնորդող սիւն ամպոյ ըսածը աւելի լուսաւոր ու փառաւոր երևցուց ան ատենը։ Նտքը մովսէսի ըսածինպէս՝ իրիկվան դէմ անհունն անհամար լորամարգի (՝ի՝ պրլտրձին) եկաւ ինջաւ իրենց բանակին վրա։ ու մէկալ օրը առտրվանց կանուխ ելլէն տեսնեն որ բանակին չորս գին գեանին երեսը գինծի (՝ի՝ քիշնիշիպէս) մանտրտիկ կլոր ձերմակ բան մը ինջեր է։ ուստի իմէլացիք զարմանալով սկսան մէյմէկու երբայեցերէն հարցունելը սեր՝ Ա՝ն հո՜, որ ըսել է թէ՝ աս ինչ է։ Եւ ասով անոր անունը՝ մանանա մնաց։ Ա՝ովսէս ալ ըսաւ թէ՝ ահա աս է հացը որ ՝ած ձեզի կուտա որ ուտէք։ Նտքը ՝այ դիէն մովսէս անոնց ապրսպրեց՝ որ ամէնն առտու ելլէն իրենց մէկ

ովան պիտք եղածին չափ անկեց ժողվեն, որ
ան օրը ուտեն՝ մէկալ օրվան չիթողուն. ու
ուրբաթ օրերը երկու չափ ժողվեն, որ շա-
բաթ օրվանալ բաւական ըլլա։ Ինչու որ՝ շաբ-
թու մէջը միան վեց օր կիջնար աս մանանաս՝
շաբաթ օրերը չէր 'ի գար. և թէ առտըվանց
ուշանային՝ կանուխ չի ժողվէիննէ, արևը
վրան ցամաքինպէս կրհալեր բան չէր մը-
նար. և թէ շաբաթ օրէն 'ի զատ՝ ուրիշ օրվան
համար պահէիննէ՝ կաւրեր կորդնուտեր։ Ի՞նչ
մանանաս անանկ բանմըներ՝ որ առաջ կրծե-
ծէին աղուրիպէս կրնէին, ետքը շաղվելով հա-
ցի խմորիպէս կրշինէին, և այնպէս կեփէին
կուտէին. որ շատ անուշ ու համով բան կրլ-
լար, և մարդը ադեկ կրկրշտացուներ. անանկ
որ՝ բոլոր իշխանքը աս մանանայովը ապրե-
ցան ան քառասուն տարի Համբորդուած տեղն-
նին, ինչվան որ տեղերնին հասան։ Ինչ աս
ալ հրամայեց ՝ծծ իշխանոց՝ որ ան մանանայէն
մէկ ամանովմը առնեն զատ պահեն. որ ՝ծծայ-
ին բարերարութիւնը յաւիտենական յիշատակ
մընա իրենց ազգին մէջը, որով անապատը ի-
րենք կերակրեց ՝ծծ. և ան ամանով մանանան
ետքը տապանակին մէջը դրվեցաւ պահվեցաւ։
Ի՞նչ սին ըսած անապատն երբոր ելան ռափի-
դիմ ըսած տեղը եկան՝ հոնալ խմելու ջուր չի
գտան. ուստի նորէն ժողովուրդը սկսաւ տըր-
տընջալ ու բամբասել Մովսէսի դէմ. ինչու ը-
սին մեզ եգիպտոսէ հանեցիր աս անապատ
տեղը բերիր՝ որ մեզ ամէնքս ծարվէն ջար-
դես. և աս բանիս համար քիչ մնաց որ Մովսէ-
սը քարկոծէին։ Ի՞՝ Մովսէսալ գանկտելով ՝ծց
դիմեց՝ որ ասոր Հարը տեսնէ. անատենը ՝ծծալ

հրամայեց որ՝ մէկ քանի հոգիմը անոնց ծերե-
ըէն հետը առած Երթան դիմացը քորեբ լեռը,
և հոն իր գաւազանովը ապառաժ քարին զար-
նէ, որ անկէց բխած ջուրը ժողովուրդը խը-
մէ։ Ա՝ովսէսալ անանկ ջուրեբընէն խըմցուց,
և ան տեղին անունը՝ փորձուԹի դրաւ. ինչու
որ՝ իՀէլացիքը ասով՝ ած փորձել ուզեցին։

Գ։ Լ։ Ի։

Ա՝մաղէկացիքը կը՝ջարդեցէին Իսրայէլիներէն։ Յորոր կոչ-
մովսէսը Բարեխեցու։

Եղից. ԺԷ. ԺԸ. = Ամ Տի 2514։

Ա՝ս տեղվանքիս ամաղեկացի ըսած ազգը
պինտ առՀինը եղաւ որ իսրայէլացոց դէմ
կեցաւ, Հետեւընին պատերազմ ուզեց ընել։
Ա՝ովսէսալ զօրապետ դրաւ յեսու որդին Նաւ-
եայ եփրեմայ ցեղէն, և իրեն Հրամայեց որ
ժողովրդոց մէջէն կրտրիՀ՝ ուժով մարդիք ընտ-
տրէ Հետը առնէ, ամաղեկացոց դէմ պատե-
րազմ ելլէ. ու անատենը ինքալ գաւազանը
ձեռքը՝ ահարոնի ու ովրի Հետ լեռան վրա ե-
լաւ, որ անկէց պատերազմը տեսնէ, ու ա-
ղօԹք ընէ վրանին։ Ա՝ն պատերազմին ատենը
մովսէս Թեւերը վեր բռնած աղօԹք որ կընէր՝
իսրայէլացիները կրյաղԹէին, երբոր Հոգնե-
լէն մովսէսի Թեւերը վար կինջնար՝ ամաղեկա-
ցիները վրա կելլէին։ Ա՝ս որ տեսան ահարոն ու
ովրը՝ առին մովսէսը մէկ քարիմը վրա Հանգիստ
նստեցուցին, ու մէկը աս դիէն՝ մէկալը անդիէն
Այսքը ՝ուծ յեսուայ հրամայեց որ՝ բոլոր զօր-քով ելլէ նորէն գայի քաղքին վրա երթա, ու երիքովիսկէս անալ հիմնայատակ ընէ։ Յե-սուալ գիշերանց եռսուն հազար զօրք տարաւ քաղքին ետևները պահվրտցուց, ու ինքը առ-տրվանց քիչմը զօրքով քաղքին առջևը ելաւ երևցաւ։ Այսիի մարդիքնոր ասոնք դիմաց-նին տեսան՝ ամենքը իրենց թագաւորին հետ քաղքէն դուրս ելան որ իսրայեցոց դէմ պատե-րազմ ընեն. յեսու սուտ վախ ցրցուներով՝ ետ ետ քաշեց զօրքը՝ ինչվան անոնք աղեկմը իրենց

քաղքէն հեռուցան։ Լն ատենը յեսու ան պահվրտածներուն նշան տալունպես՝ ամմէնը տեղերնէն ելան քաղաքը մտան. մէջը մնացած մարդիքը ջարդեցին՝ ու քաղքին կրակ տրվին. ետև իրենք ատենն և մէկալ քանակը անդիէն ան քաղքէն դուրս ելած թշնամիները մէջերնին առին, առանց խնայելու բոլորը ջարդեցին. որ ամմէնը տասվերկու հազար հոգի էին՝ երիկ մարդ կնիկ մարդ՝ որ գայիի մէջը կրբնակէին։ Լյ իրենց թագաւորը ողջ բռնած, յեսու՝ երկձղի (ՅՐ՝ երկու բաժնած չաթալ) փայտի վրա կախել տրվաւ՝ որ ինչվան իրիկուն կախած կեցաւ. ետքը ինչեցուցին մէկ փոսմը ձգեցին՝ վրան քարեր դիզեցին, որ աս յաղթութիւս յիշատակ ըլլա։ Լյ երկու քաղաքները առնրվելէն ետև՝ յեսու նաւեան իէլացոց ժողովուրդը առաւ գեբաղ ու գարիզին ըսած լեռները տարաւ՝ որ մէկմէկու մօտ էին. հոն քարերով ՅՅ սեղանմը շինեց՝ վրան զոհ ըրաւ, և ՅՅաձային պատուիրանքներուն խօսքերը անոր վրա նորէն գրելով, դաս առ դաս երկու լեռնէն ան օրհնութիւնները ու անէծքները կարդալ տրվաւ. որ մովսէս Լրկրորդ օրինաց գրքքին մէջը գրեր՝ իսրայէլացոց ապրսպրեր էր, որ երբոր աւետեաց երկիրը մտնելու ըլլաննէ՝ աս բանը ընեն։

ԳԼ. Գ.

Գաբաւոնացոց խաբեբայութիւնը, և չանանացոց հինգ թագաւորներուն ջարդվիլը։

Յեսու. Թ. Ժ։ = Ամ Տի 2554։

Իսրայէլացոց այսպիսի յաղթութիւնները և առաջ գալը երբոր լսեցին ան կողմերու քա-

նանացոց ազգերը՝ սրտերնին սատիկ վախ ին-
կաւ, ու մէյտեղ եկան խօսք դրին որ ինչացոց
դէմ ելլեն։ Բայց ասոնցմէ գաբաւոնացի ը-
սածները՝ աղէկ հասկընալով որ իրենց ուժո-
վը ինչացոց դէմ բան չէն կրնար տեսներ,
մտածեցին որ խաբելով բարեկամութի ընեն
հետերնին, ու անանկ իրենք անոնց ձեռքէն
խալասին։ Ուստի հին պատրաստած Ամբոր-
դի լաթեր առին հագան վրանին, ու կրտրը-
տած մաշած կօշիկներ ոտքերնին, և գինիի
կարկտած տիկեր՝ ուքուրձեր կրռնակնին զար-
կած՝ մէջը չորցած որդնոտած հացի կտորվանք՝
իբր Ամբոր պիտանաւորուն համար. ասանկ
եկան յեսուայ առջևը ելան՝ այնպես ցուցնե-
լով թէ՝ հեռաւոր աշխարքէ դեսպան խրկը-
ված եկերին. որ ըսին թէ մեր կառավարնե-
ը ըսելով ինչացոց մեծ անունը՝ մեզ խրկեցին
որ հետերնիդ ուխտ ու դաշինք ընենք։ Յե-
սու ալ աս բանիս վրա այ չի հարցուցած՝ հաւ-
տաց անոնց ըսածին, և խօսք տրվաւ որ հե-
տերնին միշտ բարեկամութի պահէ. ինչացոց
իշխաններնալ երդումով աս դաշինքը հաստա-
տեցին։ Իրեք օրն ետև երբոր ինչացոց ժո-
ղովուրդը իմացաւ որ՝ աս գաբաւոնացիները
հոն քովերնին մօտ քանանացոց ազգերին են
եղեր՝ սկսան տրտնջալ մումրալ իրենց իշխան-
ներուն դէմ որ ասանկ խաբվեցան, ու սաս-
տիկ սրդոված ուզեցին գաբաւոնացիները ջար-
դել. բայց իշխանները անոնք բռնեցին չի թո-
ղուցին, որ այ անուանը վրա երդումնին
դէմ չիգործեն, ու պատժվին։ Ինչոր համար
յեսու ետքը կանչեց գաբաւոնացիները՝ և աս
խաբեբայուես համար բարկանալով վրանին,

իրենց պատիժ դրաւ՝ որ գերիներէն միշտ և հանապազ իսրայէլացոց ազգին՝ և այ խորանին փառ կոտրող՝ ջուր կրող ըլլան. անոնքալ սիրով խօսք տրվին որ ընեն։

Զանիրեղեկ երուսաղէմայ թագաւորը երբոր լսեց թէ գաբաւոնացիները իրենցմէ զատված գացին իսրայէլացոց տակը զիրենք ձգեցին, շատ զարմացաւ, ու սիրտը աւելի վախ ինկաւ եկեղեցիներէն, ինչու որ՝ գաբաւոնացիքը քանանացոց մէջը զօրաւորներէն էին։ Այց այսուհամիւ ինքը ուրիշ չորս քանանացոց թագաւորներու հետ միաբանած, անանկ հինկ թագաւոր մէկէն գաբաւոնացոց վրան պատերազմ բացին։ Ի պատճառովս գաբաւոնացիներնալ եկեղեցոց որ դիմեցին, որ իրենց տէր կենան ազատեն անոնց ձեռքէն. անատենը յեսու այ հրամանովը քաջ զօրքեր հետը առած՝ գիշերանց ճամբա ելաւ, ու լուսնալու ատենը յանկարծակի մէկէն գաբաւոն քաղքին քովերը ասոնց վրա վազեց. ու չարաչար կոտրելով իրենք, երբոր ալ փախչողներուն ետեւէն ինկաւ՝ ան ժամանակը ամբալ վերէն օգնեց եկեղեցոց, որ խոշոր քարերուպէս կարկուտ ան թշնամիներուն վրան թափեց. անանկ որ՝ ասով մեռնողները աւելի եղան քան թէ թրով ջարդվածները։

Ի յապիսկյաջողութիւն իսրայէլացոց պատերազմը ան օրը որ առաջ կերթար, յեսու վախնալով որ չըլլա թէ թշնամիները բոլոր չիջարդված՝ գիշերը վրա հասնի՝ ու ձեռքերենէն ազատին, այ խնդրեց որ քիչմը արեւը ու լուսնը կանգ տեղերնին կայնին։ Ի ծալ՝ ինչպէս կրսկ ամբաշուկը, յեսուայ խնդիրքը կատարեց, որ

մէկ օրվան ատենի չափ արևն ու լուսնկան ուր որ հասեր էին նէ՝ հրաշքով տեղերնին կանգ առնել տրվաւ, որով ան մէկ ցորեկվան օրը երկուք եղաւ. ինչվան իսրայէլացիքը անոնք բոլորովին ջարդեցին հատցուցին. և անոնց երկիրները բոլոր տիրապետելէն ետև՝ էլան գաղգաղա իրենց բանակը դարձան։ Այց աս պատերազմիս ատենը իմանալով յեսու որ ան հինգ թագաւորները փախեր՝ մակեդա բսած տեղը մէկ այրի (ՅՊ՝ մաղարայիմը) մէջ մտեր պահվեր են, հրամայեց որ ան այրին բերանը քարերով գոցեն՝ ինչվան որ պատերազմը խալըսին։ Այտքը բանալ տրվաւ ան հինգկնալ հանեց պառկրցուց, ու իսրայէլացոց զօրագլուխներուն ըսաւ որ՝ ելլէն ոտքով անոնց վզերուն վրան կոխէն. և ասով սիրտ առնեն չիվախնան անոնցմէ, որ ՅԾ բոլոր իսրայէլացոց թշնամիները ասանկ պիտոր ընէ։ Այտև ըսպանել տրվաւ ան թագաւորները. և ինչվան իրիկուն անոնց մարմինները կախեցին ետև՝ վար առին նորէն այրին մէջը ձգեցին՝ խոշոր քարերով այրը գոցեցին։

ԳԼ. Դ.

Յեսու բոլոր աւելեաց երկիրը տիրապետելով անիկ իսրայէլացոց հրաժանք, ու անանկ հրվախճանի։

Յես. ԺԾ. ԺԲ. ԼԳ։ = ԱմՅ 2560. 2570։

Այրբոր իսրայէլացիք աս հինգ քանանացոց թագաւորները ջարդեցին և երկիրնին տիրապետեցին. անատենը անդիին հիւսիսային կողմին՝ յաբին բսած սուրա թագաւորը՝ որ ինքնալ մեծերէն էր, ջրոս դին մարդ խրկեց մէ-

կալմնացած քանանացոց թագաւորներուն՝ ա-
մորհացոց, քետացոց, փերեզացոց, յեբուսա-
ցոց, խևացոց. և անոնքալ տրդեց ոտք հա-
նեց, որ ամմէնը մէկէն սև համար զօրք թա-
փեն, անանկ բոլորովին իրենց երկրէն խորայէ-
լացիքը ջնջէն վերցընեն։ Յասպիսի մեծ պատ-
բաստութիւն երբոր ասոնք անչափ բազմութիւն
իրենց ձիերով ու պատերազմական կառքերով
եկան ժողվեցան մառոն ըսած ջրին քովը. ան
ատենը ՅԾ յորդորեց սիրտ տրվաւ յեսուա՝ որ
ամենևին չվախնա. հապա վաղը ըսաւ ասա-
տեն ան ամմէնը ձեր ձեռքը պիտի տամ, որ ա-
նոնք տակ առնէք՝ իրենց ձիերուն ջղերը ջար-
դէք և կառքերը երէք։ Յեսուալ քաջուբ իր
զօրքովը եկաւ՝ լեռան դիէն յանկարծակի ա-
սոնց վրա ինջաւ, ու ՅՅ ըսածինպէս չարաչար
կոտրեց իրենք. ետքը փախչողներուն ետևէն
ինկաւ անչափ ջարդեց՝ որ մարդ չի խալըսե-
ցաւ. ու գնաց անոնց երկիրներնալ քաղաքներ-
նալ առաւ։ Յանկ յաղթուներ ընելով ան
ամմէն դէմ կեցող թագաւորներուն և ազգե-
րուն վրա, հինգ վեց տարվան մէջ բոլոր քանա-
նացոց երկիրը խորայէլացիք տակերնին առին
տիրապետեցին. անանկ որ՝ ան երկիրները ալ
բանի եկող թագաւորմը չի մնաց. հապա մէկ
քանի այլազգի տերութիւններ կամ նախարա-
րութիւններ թողուց ՅԾ՝ խորայէլացոց զգաս-
տուն և զգուշութիւն համար, որ պարապ կե-
նալով չվթուլնան. նաև պէտք եղած ատենը՝
անոնց ձեռքովը պատժէ խրատէ իրենք՝ որ խել-
վընին գլուխնին ժողվեն։

Ինկէ ետև ՅԾ հրամայեց յեսուա՝ որ յոր-
դանան գետէն աստին առած երկիրները՝ մէ-

կալ ինչուկէս իսրայէլացոց ցեղերուն բաժնէ. որ երկու ցեղ ու կէսը յորդանանէն անդին արդէն մովսէսի ատենը առերէին իրենց բաժինը։ Յեսուալ եղեազար քահանայապետին և իսրայէլացոց ցեղապետներուն հետ մէյտեղ եկած՝ մովսէսի սահմանած կարգինպէս ամէն մէկ ցեղին տեղվանքը զատ զատ որոշեցին ցրցուցին։

Այս ասոնցմէ՝ ղևտացոց ցեղը, որով հետև ոչ ոսերեր որ մասնաւոր տեղ չունենան, անալ առին աս բոլոր իսրայէլացոց ցեղերուն երկիրներուն մէջը ցրվեցին՝ քառասունը ութը քաղաք տրվին իրենց, և անոնցմէ ալ վեցը՝ քաղաք ապաստանի ըրին, որ հոն ակամա մարդ մեռցուցողը փախչէրնէ՝ կրնալըսկը՝ չէին բռներ, ինչպէս որ ոչ ապրսպրերեր մովսէսի։ Այսկէ 'ի զատ քաղեբայ ալ, որ ան մովսէսի խրկած տասվերկու լրտեսներէն մէկն էր, իր բարի վկայութիւը վարձ՝ (ինչպէս մովսէսի ձեռքովոչ ոչ իրեն խոստացեր էր,) մասնաւոր տեղ տրվին. նաև յեսուալ ոչ հրամանովը իրեն զատ տեղ առաւ իր եփրեմի ցեղին երկրին լեռանմը վրա՝ Թամնաթսարա ըսած. անտեղը քաղաք շինեց՝ ու ինչվան ետքը ինքնալ հոն կըբնակեր։ Այս տեղերուս բաժանմունքներուն վրա՝ ան ատենը թէպէտ իսրայէլացոց ցեղերուն մէջը շատ վէճեր եղան, բայց յեսու խաղաղեցուց իրենք՝ և ամէնքը որչափ կարելի էր գոհ ըրաւ։ Այսքը երբոր ամէն մարդ ալ սկսան իրենց տեղվանքը շինել որ բնակին, վկայութիւնե խորհանալ՝ տապանակովը և իր ամէն բանեբովը գաղգաղայէն վերուցին՝ սելով ըսած քաղաքը տարին, որ եփրեմի ցեղին երկ-

ըին մէջը կըլլար։ Եւ եթէ թէպէտ անկէ ալ իկեալցիք առին տեղէ տեղ տարին, բայց իր հաստատ տեղը հոն եղաւ՝ ինչպէս սամուէլ մարգարէին ատենը։

Յսուս կերպով յեսուս աս ամէն ցեղերը օրհնելով իրենց տեղը ճամբեցին։ Եւ, մէկ բանմը հանդըպեցաւ՝ որ իկեալցոց մէջը շատ շփոթութիւն ձգեց։ Ան երկու ցեղ ու կէսը՝ ինչպէս ըսինք, որ յորդանան գետէն անդին իրենց բաժինը առերին։ Երբոր ալ տեղերնին գացին տեղաւորվեցան, հոն յորդանան գետին քովը մէկ մեծ սեղանիպէս շինվածքմը շինեցին։ Միւ՝ էկալ տասը ցեղը աստիճն աս բանս որ իմացան՝ ծուռ միտք գացին վրանին, իբր թէ իրենցմէ զատված՝ նոր հաւատք կուզեն սահմանել. անոր համար մէյտեղ եկան խորհուրդ ըրին որ անոնց վրա պատերազմի ելլին։ Բայց նորէն բանը ազէկմը իմանալու համար՝ փենէհէս քահանան՝ ուրիշ խօսքի տեր մարդիքներու հետ մէկտեղ անոնց խրկեցին. որ գնացյանդիմանեց իրենք թէ ատպէս բան ընելով՝ կերևցունէք որ՝ դուք մէկալ իկեալցոց ցեղերէն զատված՝ ճշմարտութիւը թողուցեր՝ կռապաշտուն կըսկսիքկոր ըներ. որով բոլոր իկեալցոց աղգին վրա ալ բարկութիւը կըշարժէք՝ որ նորէն մեզ ամէնքս պատժէ, ինչպէս ատեն ատեն հանտրպեցաւ։ Ինքնաքաղարձան պատասխան տրվին թէ՝ քաւ լեցի որ մենք ատ պատճառով շինած ըլլանք աս սեղանը՝ որ զատ ճշմարտենք՝ կամ վրան զոհ մատուցանենք. ինչպէս աս բանիս մեր որ ճշնալ վկայ է. հապա մենք ասոր համար շինեցինք որ՝ մեր մէջը և ձեր մէջը՝ որ դուք մեր եղբարն էք՝ միաբանութիւն

շատակմը ըլլա ասիկա՝ մեր ետևէ եկող տղաքներուն։ Փենեհէսի սիրտնալ աս լսելով հանգչեցաւ՝ հաւնեցաւ անոնց ըրածը, և անանկ եկան հասկըցուցին մէկալնոնց. ու անոնքալ փառք տրվին այ՝ որ աս մեղքէս ազատ են եղեր։ Ինոր համար յեսուալ ան սեղանին անունը դրաւ՝ վկայութիւն կամ յիշատակ՝ որ ան ցեղերնալ մէկալնոնց հետ մէկ ՀԱԾ կըպաշտեն։

Այս ամէն բաներէն ետև յեսու երբոր ալ ծերացաւ, բոլոր Իսրայելացոց մեծերը քովը կանչեց, ու անոնց առջևը դնելով այ իրենց վրա ըրած անհամար բարերարութիւնները, բարի խրատներով յորդորեց իրենք, որ չըլլա թէ ան քովերնին մնացած կռապաշտ ազգերուն նայելով՝ կամաց կամաց թուլնան ՀԱԾպաշտութիւնը թողուն՝ անոնց կուռքերուն ետևէն երթան. որ ան ատենը ՀԱԾալ վրանին բարկանա, իրենք երեսէ ձգէ, ու նորէն երթան ան ազգերուն տակը գերի ըլլան՝ չարչարվին հոգինին ելլէ։ Եւ աստ վրա Իսրայելացոց բերնէն երդումով հաստատ խոսք առաւ՝ որ յաւիտեանս յաւիտենից իրենց ՀԱԾը պաշտեն, անկէց ալ ուրիշ ՀԱԾ չՀԱՆչնան. և աս բանիս յիշատակ՝ խորանին քովը մէկ մեծ քարմը տընկեց, որ որդոց որդի աս նորէն այ հետ ըրած ուխտ ու դաշինքը յիշեն։ Ինկէ ետքը բարի ծերուք հարուր տասը տարվան մեռաւ յեսու նաւէան՝ իր թամնաթսարա ըսած քաղաքը, ու հոն իրեն քարէ շինած դանակը հետը մէյտեղ դրած անանկ թաղվեցաւ։

Յեսուայ ետևէն շատ չանցաւ որ եղիազար քահանայապետնալ մեռաւ, և անոր տեղը քահանայապետ եղաւ փենեհէս իրեն որդին։

ԳԼ. Ե.

Յեսուայ եռա՝ դաստաւորաց ասելն իսրայելացոց որպիսու-թիւնը։

Դատ. ա. բ. գ։ = Ամ Հի 2585. 2591. 2662։

Յեսուայ մեռանելէն ետև՝ առջի տարիները քանի որ ան հին ծերերէն մնացած կային՝ իսրայելացիք ուծպաշտութիւնը չի Թողուցին. բայց երբոր անոնքալ մեռան Հատան՝ կամաց կամաց ժողովուրդը իրենց քովը եղած այլազգիներուն հետ բարեկամուի ընելով՝ հետերնին խառնըվեցան, ու անոնց նայելով իրենքալ սկսան կռապաշտուի ընել։ Ին ժամանակները ուծ իսրայելացոց հրեշտակը իջնկեց, որ եկաւ մեղքերնին երեսնին տրվաւ խրատեց իրենք. որ Թե չի դառնանանք ըսաւ՝ ուծ պատիժնին կուտա։ Խորայելացիք աս լսելով ան ատենը զղջում ցրցուցին լացին. և այսու ամիս իրենց բռնած չար ճամբէն որ ետ չի կեցան, ուծ վրանին բարկանալով շատ անգամ Թողուց որ երԹան գերի ըլլան ան այլազգիներուն, որ անոնց տակը տանջվելով խելքնին վրանին գա։ Ինանակ երբոր կրզդաստանային նորէն այ կրդիմեին, ուծալ իրենց ողորմելով ատեն ատեն մէյ մէկ ուժով մարդ կըՀաներ մէջերնին, որ ան Թշնամիներուն ձեռքէն խալըսէն, և պետք եղած ատենը իրենք կառավարէ. որ ասոնք Դատաւոր կըսվէին։

Ուստի պինտ առաջ երբոր իսրայելիքը այլազգիներուն ձեռքէն չարչարված այ ինկան՝ ու իրենց առաջնորդմը խնդրեցին, ուծ յուդայի ցեղը ցրցուց, որ անալ շմաւոնի ցեղը հետը ա-

ռած փերեզայիներուն դէմը ելան՝ տասը հազար հոգի ջարդեցին, և անոնց ազնիւ եղեկ ըսած թագաւորը բռնեցին, ու ձեռվընեներուն ոտվընեներուն ծարերը կտրեցին։ Իսրայէլ անատենը դարձաւ ըսաւ թէ՝ իմ ըրածիս հատուցումը աստուծմէ գտա, որ ես ալ եօթանասուն թագաւորներ որ բռնեցի, անոնց ձեռվընեներուն. և ոտվընեներուն ծարերը կտրած՝ սեղանիս ներքևը կրդնէի՝ որ շանպէս վար ինկած փշրանքներս բերնով առնեն ուտեն։

Իսրայէլացիք ասանկ քիչմը քաջուներ ընելէն ետև՝ նորէն ածպաշտուէ թուլցան, կռապաշտներուն հետ խառնըվեցան, մէջերնին աղջիկ տըվին առին, ու անոնց բահաղ ըսած կուռքնալ պաշտեցին. անոր համար ած սրդողեցաւ վրանին, քուսարսաթեմ ասորւոց թագաւորին ձեռքը տըվաւ իրենք։ Դայց ուրեմ տարի անոր տակը չարաչար ծառայելէն ետև երբոր խելվընին վրանին եկաւ՝ նորէն ՝այ դիմեցին. ՝ածալ անատենը իրենց առաջնորդ տըվաւ զոթոնիէլ քաղեբայ պզտի եղբարը,(կամ ինչպէս կրսեն՝ եղբօրը որդին,) որ քաջութիւն ելաւ յաղթեց անիկա, ու իսրայէլացիքը ազատեց անոր ձեռքէն. որ ասանկ քառասուն տարի իսրայէլացիք ազատ ինքնագլուխ մնացին.

Զոթոնիէլի մեռնելէն ետև նորէն իսրայէլացիք ըսկսան մեղանչել՝ ած թողուլ. ուստի ած իրենք նորէն մատնեց եդղոմ ըսած մոաբացոց թագաւորին ձեռքը. որ վրանին ելաւ տիրապետեց, ու տասնրուութը տարի տակը առած կըչարչարէր իսրայէլացիքը. ինչման որ ալ չի դիմացան ՝այ ինկան՝ որ իրենք անոր ձեռքէն խալըսէ։ Ի՞նչ ժամանակը ՝ածալ ողորմեցաւ

վրանին՝ աւուղ ըսած մէկ մարդմը բենիամ-
նի ցեղէն իրենց առաջնորդ ցրցուց. որ անանկ
քաջ մարդմընէր որ՝ երկու ձեռքնալ հաւա-
սար կրբանեցուներ։ Պէտք եղաւ որ աս ա-
ւուղը ինչացոց ընծան կամ տուրքը՝ եգղոմ
Թագաւորին տանի. անատենը ինքնալ մէկ
Թիզմը երկան երկայրի (՝՝՝

ատենը գնաց շուտով Իսրայէլացիքը Ժողվեց՝ ասոնց վրա եկաւ՝ տասը հազար հոգի մէկ օրվան մէջը ջարդեց. և անանկ Իսրայէլացիները մովաբացաց դերուէն խալըսեց. որ ութասուն տարիի չափ ազատ մնացին. ու ինքը աւոդինչվան մեռաւնէ անոնց դատաւորուն կըներ։ Յետևէն մէկ քաջ մարդմը եկաւ սամեգար ըսած որդի անաթա, որ աս ալ շատ օգնուԹի ըրաւ Իսէլացոց, անանկ որ՝մէկ հեղմը գետին տերկելու հարորովը (ՅՊ՝ սապանով) վեց հարուր այլազգի մեռուց, ու անոնց անասունները՝ կով, ոչխար, հորթ, շատ բան կողոպտեց աստին առաւ։

ԳԼ. Ը.

Դեբորայէ, Բարակայ, Սիսարայէ, և յայելէ՝ պատմուԹիւնը։

Դատ. Ե. Ե։ = Ամ Ցի 2700։

Սամեգարի մեռնելէն ետև՝ Իսրայէլացիք նորէն Ճամբանին որ փոխեցին, ՅԾ բարակացաւ վրանին՝ իրենք մատնեց յաբին ըսած քանանացոց Թագաւորին ձեռքը, որ քսան տարի տակը առած չարչարեց։ Ամ ատենները Իսրայէլացոց մէջը մէկ բարեպաշտ մարգարէ կիսկիմը կար դեբորա անուանով՝ Եփրեմի երկիրը նըստած. որ Իսէլացիք մէջերնին վէճմը ունենային՝ անոր կերԹային ան կրտեմներ իրենց դատաստանը։ Ամսիկա քովը կանչեց բարակ ըսած մէկ մարդմը Նեփթաղեմի ցեղէն, իրեն ըսաւ Թէ՝ ՅԾ քեզի կըհրամայէ որ Թափոր լեռը երԹաս, ու Նեփթաղեմի՝ զաբուղոնի ցեղերէն տասը հազար հոգի Ժողվէս հետդ առ-

նէս երթաս կիսոնի հեղեղատը (այ՝ չայը,) սկ-
սարա ըսած յաբին թագաւորին զօրապետին
դէմ. որ ես հոն անոր բոլոր զօրքը քու ձեռ-
քըդ պիտի մատնեմ։ Բարակ վախցաւ սիրտ
չըրաւ որ ինքը մինաւոր աս բանիս ձեռք զար-
նէ. ուստի դարձաւ դեբորայի ըսաւ, թէ որ
դունալ հետս կուգանէ՝ կերթամ, որ ինծի
ատենովը իմացուներս թէ ած երբ բանը կա-
ջողէ. չէնէ՝ չեմ երթար։ Դեբորանալ խօսք
տրվաւ թէ կուգամ, բայց գիտնաս ըսաւ՝ որ
անատենը յաղթութիւնը քուկըդ չըլլար. ու ա-
նանկ մէյտեղ եղան տասը հազար մարդ ժող-
վեցին թափոր լեռը գացին։ Բ. երբոր իմա-
ցաւ սիսարա զօրապետը՝ ինքնալ բոլոր իր
զօրքերը առաւ՝ ինքհարուր պատերազմական
երկրթէ կառքերով եկաւ կիսոնի հեղեղա-
տը պատրաստըված կեցաւ։ Բայց դեբորայի ըսածին-
պէս բարակը թափոր լեռնէն ինջաւ՝ որ թըշ-
նամիներուն դէմը պատերազմ ըսկսի, ան ժա-
մանակը ած անանկ վախմը ձգեց սիսարայի
սիրտը, և մէկ իրար անցումը թշնամիներ-
ուն բանակին մէջը, որ սաստիկ շփոթված
փախչող՝ փախչողի եղան, ու բարակը իր զօր-
քովը ետևնին ինկած ամմէնքը ջարդեց սրը-
քեց։ Սիսարան ան խառվուածքին մէջը շուտով
փախչիլ ուզելով իր կառքէն դուրս ցատկեց,
ու ոտքով վազելով դեպ 'ի կինեցոց կողմը
գնաց ինկաւ։ (Բ. կինեցի ըսածը պզտիկ
ազգմինէին որ եկեր վրանով ան տեղվանքը
կըշնակէին. և ինչպէս կրսեն՝ մովսէսի կնկա-
նը դիէն ինէլացոց խնամի ըլլալով հետերնին
բարեկամ էին. բայց այլազգիներուն հետալ

աւրրված չէին։) Ոչ ատենը յայել ըսած՝ քա-
բեր կինեցիին կնիկը սիսարայի դէմը հանտը-
պեցաւ, ու մեծարելով կանչեց իր վրանը առաւ
տարաւ սիսարան՝ որ հանգչի. անալ անանկ
յոգնած տաքցած խմելու ջուր որ ուզեց, յայ-
ելը ջրին տեղը իրեն կաթ տրվաւ որ գէն չընէ,
ու անանկ ներսը անոր ուզածինպէս գաղտուկ
տեղմը պառկրցուց վրան ծածկեց՝ որ մարդ գա-
լու ըլլանէ չիմանա թէ հոն փախեր է։ Յայելը
երեսանց ասանկ բարեկամութիւն ցրցուց սիսա-
բայի, բայց իր սիրտը իմացաց հետմէկ ըլլալով,
երբոր նորէն քովը դարձաւ տեսաւ որ պառկած
խորունկ քուն եղեր է, ան ատենը վրանին ցի-
ցը (ցի՝ չատրուին խազրիր) առաւ՝ անով գե-
տինը գամեց սիսարայի գլուխը, անանկ մեռ-
ցուց ինքը։ Ետքը երբոր բարակը վրա հասաւ՝
որ սիսարայի ետևէ ինկեր կրինտուեր, յայել
առջևը ելաւ ըսաց՝ եկոր որ քու փնտռած մար-
դըդ տեսնես. ինքնալ ներս գնաց տեսաւ որ
սիսարան անանկ ինկած մեռեր է։ Ոչ կերպո-
վրս ՝ած իմացիքը քանանացաց յարին թագա-
ւորին ձեռքէն խալըսեց. որ անկէ ետքը քառ-
սուն տարի ազատ հանգիստ մնացին։ Ոչերբո-
բայալ բարակա հետ՝ այսպիսի հրաշալի յաղ-
թուեց վրա փառք տալով ՝ այ՝ հնորհակալութիւն
գովասանքմը ըրին մէյտեղ։

ԳԼՈՒԽ

Գեդեոն զբաղեալ էր՝ ընտրելի՝ երեսուներեք մադիամացոց յեռաքէն կաղապէ։

Դատ. Ը. Է. Ը։ = Ամ Տի 2750։

Երեսուներեք կամաց կամաց նորէն ՝ուծ բարկացուցեալով՝ այ երեսէն կիսալով՝ անտէր անտերունք՝ մադիամացոց և ամաղեկացոց ձեռքէն անանկ բան քաշեցին, որ ալ տեսերնին տեղերնին ձգեր՝ աստիս անդին ցիր ու ցան եղած՝ լեռները այրերուն մէջ անպատարի տեղվանք փախեր՝ հոն կրկենային։ Յանկ եօթը տարի որ չարչարվեցան, և ալ ՝ձարերնին հատած դարձան՝ այ որ ինկան, ՝ուծ ողորմեցաւ վրանին, առաջ մարգարէմը խրկեց իրենց՝ որ ըրած մեղքերնին երեսնին տրվաւ՝ խրատեց իրենք։ Յետքը հրեշտակմը խրրկեց գեդեոն ըսած մարդումը, որ յովասի որդին էր մանասէի ցեղէն, երբոր ասիկա մադիամացոց ձեռքէն փախած՝ իր հօրը կալը (՝ի՝ հարմանը) կաշխատեր ցորեն կրծեծեր. ու հրեշտակը եկաւ իրեն ըսաց թէ՝ ՝ուծ քեզ ընտրելէ որ երթաս իսրայելացոց ժողովուրդը իրենց թշնամիներուն ձեռքէն խալըսես։ Գեդեոն աս բանիս վրա զարմանալով՝ ետ քաշվեցաւ, ըսաւ թէ՝ ես ով եմ, մէկ ողորմելի հասարակ մարդ մը, որ խսրայելացիքը ազատեմ։ Հրեշտակնալ պին տրվաւ թէ՝ ՝ուծ հետերդ որ ըլլա՝ բոլոր մադիամացիները մէկէն կրջարդես։ Յետոյ աստենը գեդեոնալ աս բանիս ՝նշմարտու

կենա՝ ինչվան ինքը երթա իրեն համար սեղան պատրաստել բերել. ու գնաց գեդէոն շուտով մէկ ուլմը խաշեց՝ ու բաղարջ հաց շինեց. առաւ ասոնք հրեշտակին առջևը որ բերաւ, հրեշտակը ըսաւ որ դիմացը քարին վրա դնել ան բաները, և ձեռքի գաւազանովը ան մինչ ու բաղարջին դպածինպէս՝ կրակմը ելաւ ան քարէն երեց լափեց կերակուրները, ու յանկարծակի հրեշտակը անտեսանելի եղաւ ան տեղէն։ Գեդէոն երբոր աս հրաշքս տեսաւ՝ սաստիկ ահռելեցաւ, իմացաւ որ հրեշտակ ՝այ է եղեր. և ան տեղը ՝այ մէկ սեղանմը շինեց։ Ի՛նչ գիշերը ՝ած գեդէոնի հրամայեց որ՝ երթա բահաղ կուռքին սեղանը քակէ կործանէ, անոր քովը եղած կռապաշտական ծառերը կտրէ. և ան կարած փատերովը՝ իր հօրը եօթը տարվան պարարտցուցած եղը առնէ՝ ՝այ ողջակեզ ընէ ան նոր շինած սեղանին վրա։ Գեդէոնաւ ցորեկը վախցաւ աս բանը ընելու. ուստի մէկ գիշերմը գաղտուկ ելաւ տասը հոգի իր հօրը ծառաներէն հետը առաւ՝ գնաց անանկ ան ՝այ հրամայածը կատարեց։ Ի՛նչ տրվանց երբոր ելան քաղքի մարդիքը աս բաներըս տեսան, և փնտռեցին իմացան որ գեդէոն ըրեր է, կատղած անոր հօրը վրան եկան, ու կուզէին որ գեդէոնը հանէ ձեռվընին տա՝ որ սպանեն։ Հարնալ ասով խալըսեց գեդէոնը, անոնց ըսաւ թէ՝ ձեր ինչ վրանիդ պէտք է, բահաղը թէ որ ած է նէ՝ թող ինքը իր սեղանը կործանողներուն վրէժը առնէ (կամ հախէն գա,) մեռցունէ. և աս պատճառովըս հարը գեդէոնի անունը յերոբոաղ դրաւ, իբր թէ ասով բահաղ կուռքը յաղթեց։

Բ՝ սկիզ եւ բոբը եբբոր խմացաւ գեդէոն որ մա-
դիամացիքը և ամաղէկացիք մէկտեղ նորէն
իրէլացոց վրա կուգան կոր, ինքնալ աստուծմէ
ուժ առած՝ կանչեց ժողովեց իրէլացիքը՝ ասերի,
զաբուլոնի և նեփթաղեմի ցեղերէն՝ որ անոնց
գէմ ելլէ։ Բայց նորէն հաստատ գիտնալու
համար՝ թէ իրաւ ՝ուած ինքը իրէլացոց առաջնորդ
ընտրեր է՝ որ մադիամացոց ձեռքէն իրենք խա-
լըսէ, ՝ոյ աս նշանը խնդրեց, որ մէկ գզաթ-
մը (՝ոյ՝ փէօստէքիմը) գիշերը դուրս տեղ փը-
ռած թողու. և բոլոր գետինը չոր ցամաք մը-
նա, ու ան գզաթին վրա միան անձրև գա.
՝ուծալ գեդէոնին խնդիրքը կատարեց, որ եր-
բոր առտըվանց ելաւ ան գզաթը քամեցնէ՝
վազած ջուրը կոնքմը (՝ոյ՝ լէյէնմը) լեցուց։
Բ՝ս հերիք չէ, ետևէն մէյմալ ՝ոյ խնդրեց որ՝
ասոր ներհակը՝ ան գզաթը չոր մընա, ու բոլոր
գետինը թրջվի։ Գեդէոն երբոր աս երկու
հրաշքը տեսաւ, ալ սաստիկ սիրտ առաւ.
ուստի իր բոլոր զօրքը ժողված թշնամիներուն
գէմ որ երթալու եղաւ՝ անատենը ՝ուծ դարձաւ
գեդէոնի ըսաւ որ՝ ատ զօրքդ շատ են, ես
ատչափովդ մադիամացիքը ձեր ձեռքը չեմ
Ի տար, որ չելլէն իրէլացիքը ըսեն թէ՝ մենք
մեր ուժովը անոնք յաղթեցինք. հապա իրենց
ըսէ որ մէջերնին վախկոտները ետ դառնան.
աս խօսքիս վրա՝ քսանվերկու հազար հոգի ե-
լան ետ դարձան, ու միան տասը հազար մնա-
ցին։ Բ՝տքը աս մնացածին համարալ ՝ուծ ըսաւ
թէ շատ են, ու գեդէոնի հրամայեց որ ասոնք
առնէ մէկ ջրիմը քով տանի, որ ծարվերէնին. ու
հոն խրմելնին՝ նայի թէ անոնցմէ ո՞ր ջուրը
ափը առած՝ մէջէն շանպէս լափէնէ, անիկա

մէկ դի կայնեցունէ, ու ով որ ծնկան վրա ինկած խրմէնէ՝ անալ մէկալ դին զատէ։ Յանկ որ ըրաւ գեդէոն տեսաւ որ միան իրեք հարուր հոգի շանպէս լափելով խրմեցին. ու բոլոր մէկալ մնացածը ծնկան վրա ինկած ջուրերնին խրմեցին. անատենը ՅԾ գեդէոնի ըսաւ թէ՝ ես իրեք հարուրովը ինձ լացիք պիտի մադիամացոց ձեռքէն ազատեմ. մէկալ բոլորը իրենց տունը Ղամբէ որ երթան. Յետքը ՅԾ իրենց նորէն սիրտ տալու համար՝ հրամայեց որ ինքը մինաւոր իր փարա ըսած մանչը հետը առած՝ գիշերանց գաղտուկ թշնամիներուն բանակը երթա, որ լսէ թէ անոնք մէջերնին ինչ կըզուրուցեն։ Գեդէոն ըսածինպէս գընաց՝ մտիկ ըրաւ որ զինվորին մէկը մէկալին կըպատմէր թէ՝ երազմը տեսա որ՝ մէկ գարիէ շինած նկանակմը (ՅՅ՝ առփայէ սոմունմը) ան դիէն կլտորվելով եկաւ դէպ 'ի մեզ, զարկաւ կործանեց բոլոր մադիամացոց բանակը. մէկալնալ անոր ըսաւ թէ՝ ատ գեդէոնի յովասի տղին թուրը պիտոր ըլլա, կերևա որ ՅԾ մեզ անոր ձեռքը տրվեր է։ Յետ որ լսեց գեդէոն՝ ՅՅ շնորհակալ ըլլալով շուտմը իր բանակը դարձաւ, ըսաւ թէ՝ ալ ելէք երթանք. ՅԾ մադիամացիքը մեր ձեռքը տրվաւ. ուստի ան իրեք հարուր հոգին իրեք դաս բաժնեց. և անոնց՝ զինքի տեղ, ամմէնուն մէկ մէկ ձեռվընին եղջուրէ փող (ՅՅ՝ պուշնուզէ շինած զուռնամը) տրվաւ, ու մէկալ ձեռվընին մէյ մէկ վառած Ղրագ սափորի (ՅՅ՝ տէխտիի) մէջ դրած որ չերևա. և իրենց ասլրսպլրբեց որ ինքը ինչ որ ընէ նէ՝ ամմէնքնալ անանկ ընեն։ Յանկ կէս գիշերվան մօտ ելան ասոնք յան-

կարծակի թշնամիներուն բանակը գացին, ու գեդէոնին ըսածին պէս մէկէն փողերին չալելով սափորնին կոտրեցին ճրագները դուլս երևցան, ու ամէնը մէկ բերան սկսան կանչվըռտել՝ Սուր ՝ն Է գեդէոնի։ Այս բանովըս ՝ն մադիամացոց բանակին մէջը մէկ այնպիսի սոսկումը ձգեց, որ ան տեղը իրար անցնելով՝ ան մութ գիշեր ատեն մէկը զմէկալը իրենց թշնամիներէն կարծելով՝ անինա առջևնին եկածը կըջարդէին. անանկ որ՝ հարուր քսան հազար հոգի անտեղը իրենցմէ կոտրըվեցան, ու տասնըհինգ հազարալ որ ասոնց ետին ցիր ու ցան փախեր էին, անոնց համարալ մարդ խրկեց գեդէոն մէկալ իսրայէլացոց, որ էլան դէմերնին առին անոնքալ ջարդեցին. ու անոնց երկու իշխաններուննալ՝ մէկը որեբ ու մէկալը զէբ ըսած՝ գլուխնին կտրեցին գեդէոնի բերին։ Այսքը գեդէոն ուրիշ երկու իշխաններալ բռնեց՝ զեբէէ ու սալմանա ըսած, և ասոնք ալ ինքը իր ձեռքովը մորթեց։

Գեդէոն երբորաս քաջուն ըրաւ լըմընցուց, անատենը իսրայէլիք իրեն եկան ըսին թէ՝ ասկէ ետև քեզի կըվայէ որ դուն՝ ու ետևէդ քու տղաքդ մեզի առաջնորդ իշխան ըլլաս՝ որ մեզ մադիամացոց ձեռքէն ազատեցիր։ Այնալ քաւ ելցի ըսաւ՝ ձեր իշխանը ՝ն Է. ես միան ըսաւ՝ աս մէկ բանըս ձեզմէ կըխնդրեմ, որ թշնամիներուն կողոպուտներէն մարդ գլուխ հանէք ինծի մէյմէկ օղ տաք. (պատճառն որ՝ ան կոտրը վածներուն մէջը շատ իսմայէլացիներալ կայէն, որ ոսկիներէն օղ կըդընէին.) անոնքալ սիրով հանեցին տըվին. որ ասանկ ընելով՝ բոլորը մէյտեղ՝ գեդէոն շատ բան ձեռք ձգեց, ան մա-

դիամացոց իշխաններուն ոսկիէ զարդարանք-
ներէն 'ի զատ։ Լտքը ինքնալ առաւ անով ա-
ւելորդապաշտական բաներ շինեց իր եփրա ը-
սած քաղաքին մէջը. որ ան ետքը մեղայ պատ-
Ճառ եղաւ իրեն՝ ու իր զաւկներուն՝ և բոլոր
մէկալ թիլացոցալ։ Լ)ուեպէտ ինքը իր ՝ճծպաշ-
տութենալ ձեռքէ չիթողուց, և հետը թիլացիք
ալ՝՝ ՝ծառայելով, քառասուն տարի՝ քանի որ
գեդէոն կարնէ՝ ազատ մընացին մադիամացոց,
և ուրիշ այլազգիներուն ձեռքէն։

Գ.Լ.Ը.

Լ.ԲԻՄԵԼԵԽԻ ԲՈՆՈԿԱԼՈՒԹԻՆ։

Դատ. Թ։ = Լ՚Ր Հի 2770։

Լ՚նկէ ետև թիլացիք ՝ճծ Թողուցին. ըսկը-
սան բահաղ բերիթ ըսած՝ սիկիմացոց կուռքը
պաշտել. և մեծ ապերախտութիւն ցըցուցին գե-
դէոնի՝ որ իրենց անչափ բարիք եր ըրեր. որ ա-
սանկ եղաւ։ Գեդէոն որ մեռաւ՝ իրեն առաջ
ինիկներէն եօթանասուն զաւակ թողուցեր եր.
ու ասոնցմէ զատ մէկ ուրիշմալ աբիմելէք ը-
սած՝ որ սիկիմացի կնիկէմը եղեր էր։ Լ՚սիկ-
ան ատենը իրեն մօրը դիէն ազգականներուն
ձեռքովը սիկիմացոց սիրտը իրեն քաշեց՝ որ ան
բոլոր մէկալ եօթանասուն մալ թողուն, ինքը
հօրը տեղը թիլացոց վրա իշխան դնեն. և իր
իշխանութիւնը ապահովցընելու համար՝ մէկէ-
առջի բերանը սիկիմացիներէն առաջ բտոր-
կովը՝ սրիկա (՝՝՝ հովարտա ու եարամազ) մար-
դիք վրան ժողվեց՝ ու շուտմը դնաց ան իր եօ-
թանասուն եղբարները բռնեց՝ վաթսունովին
մէկ քարիմը վրա մորթեց. որ մէջերնին

պինա պզտիկը միան՝ յովսեթամ ըսած՝ փախաւ պահվեցաւ մեռնելէն խալըսեցաւ։ Եւ տէրը երբոր սիկիմացիներէն ուրիշ ելլացող հետ մէկտեղ եկած՝ աբիմելեքայ թագաւորը դնելուն հանդէպը որ կընէին. ան ատենը յովսեթամ գնաց ասոնց դիմացը գարիզիմ ըսած լեռանը վրա ելաւ, ու հեռըվանց կանչելով ըսաւ իրենց. մտիկ ըրէք սիկիմացիք՝ ինչոր պիտի ձեզի ըսեմ։ Ցառաջը ուզեցին որ իրենց մէկ թագաւորմը դնեն, ու գացին ձիթենիին (յր՝ զեթինի ծառին) ըսին թէ՝ մեզի թագաւոր եղիր անալ իրենց պատասխան տըվաւ թէ՝ ես ինտոր թողում իմ պարարտ եղջը, որ անով ՝ծ ու մարդիք իս կըվեծարեն, ու գամ՝ ձեզիպէս ծառերուն իշխան ըլլամ. ետքը գացին թզենիին (յր՝ ենձիրի ծառին) ինկան՝ որ ան գա իրենց վրա թագաւորէ. ան ալ ըսաւ թէ՝ ինչպէս թողում իմ անուշ պտուղը, ու երթամ փատերուն իշխան ըլլամ։ Եւ ալ որ չեղաւ՝ գացին որթին (յր՝ ասմային). որթենալ պատասխան տըվաւ թէ՝ ես ինտոր կըլլա որ իմ գինիս թողում որ ՝ծ և մարդիքներուն ուրախութիւն է, ու գամ ձեզիպէս փատերուն իշխան ըլլամ։ Եւ ալ որ չէ՛ ըսաւ. ան ատենը ելան դրժնիկին (յր՝ գարա չալըին) ըսին՝ թէ գուն եկո՛ մեր վրա թագաւորէ. դրժնիկնալ ուրախացաւ՝ ու ըսաց իրենց՝ թէ որ իրաւ իս ձեր վրա թագաւոր կրդնեք՝ եկէք իմ շուքիս տակը պարտկվեցէք, չէ՝ դրժնիկէն կրակ կելլէ՝ ու ձեզիպէս եղևնափայտները (յր՝ չամի ծառերը) կերէ կուտէ։ Եւ առակիս եռևէն ըսաւ յովսեթամ. նայեցէ՛ք, ատ արդարութիւն էր մի՝ որ գեդէոնի ձեր բարերարին ատանկ հատուցում ըրիք, որ

անոր Եօթանասունն զաւակը մէկէն ջարդել ուզեցիք, որ աբիմելէքը անոր աղախնէն որդին՝ ձեզի թագաւոր դնէք. եթէ աս բանս շիտակ է նէ բարով կրվայլէք մէկզմէկ. հապա թէ չէ՝ պիտի կրակ ելլէ ան աբիմելէքէն՝ որ ձեզ երկ ու լափէ. կամ թէ ձեզմէ ելած կրակը ա նիկա կուտէ։

Յովաթամ՝ ասանկ ըսելով՝ ելաւ փախաւ գնաց Երեսը ծածկեց. և անոր ըսածը Ձշմարիտ ելաւ. ինչու որ՝ աբիմելէք իրեք տարիի չափ անկարգութիւն իսրայէլացոց տիրապետելէն ետքը, ալ Սիդիմացան սիկիմացիները անոր բրնակալութիւնը, ուստի գաղաղ ըսած իշխանիմը հետ մէկ եղան անկէ գլուխ քաշեցին, ու ետևէ էին որ զինքը բռնեն մեռցուցեն։ Այս որ եղաւ, աբիմելէք իր զօրքովը սիկիմացոց վրա գնաց, ու ջարդելով իրենք՝ բերդին կրակ տը վաւ հազար հոգիի չափալ հոն երեց։ Անկէց ելաւ թեբէս ըսած քաղքին վրա գնաց, որ ասոնքալ իրմէ գլուխ քաշեր էին. ան քաղքին մէջ տեղը մէկ ամուր բերդմը կար, քաղքին մեծամեծներէ խելմը անոր մէջը մտան պահ վեցան։ Այրբոր աբիմելէք բերդին տակը գընաց մօտեցաւ որ դռանը կրակ տա, ան ատենը վերէն մէկ կնիկմը երկանի (այ՝ տէյիրմէնի) քարի կտորմը ձգեց վրան. որ եկաւ աբիմելէքի գլխուն գագաթը ջարդուբուրդ ըրաւ. անալ շուտմը կանչեց իր կապարձակիրը (այ՝ սիլիհտարը) ըսաւ որ թուրը հանէ ինքը ըսպաննէ, որ չըսվի թէ մէկ կնիկմը ինքը մեռուցեր է։ Այս անանկ անտեղը չարաչար մեռաւ աբիմելէք, աստուծմէ առնելով իր անողորմութիւնը և չարութիւնը պատիժը՝ սիկիմացոց հետ, ինչպէս որ ան առակը բերելով իրենք անիծեր էր յովաթամ։

ԳԼ. ԹՈ.

ՅԵՓԹԱՅԷ ՊԱՊՄՈՒԹԻՒՆ։

Գաս. Ծ. Ժա. Ժբ։ = Ամ Յի 2800։

Ա.բիմելէքայ ետև իսրայէլացոց դատաւոր եղաւ Թովղա ըսած մէկմը խաքարի ցեղէն, որ քսանվիրեք տարի նըստաւ. անոր ետևէն յայիր գաղայադացին, որ եռասունվերկու որդի ունէր, ու ասոնք եռասունվերկու աւանակ հեծած անանկ կերԹային. և ամէն մէկը մէյ-մէկ քաղաք ունէին, որ՝ ասանք յայիրայ ըսվեցան։

Յայիր քսանվերկու տարի դատաւորուն ընէլէն ետքն որ մեռաւ, իր ցեղը նորէն կռապաշտու�ետևէ ինկան, սկսան ասորոց, մովաբացոց և ամոնացոց կուռքերը պաշտել. անոր համար ՅԱծալ սրդողեցաւ՝ իրենք երեսէ ձգեց, Թող տըվաւ որ տասնըուԹը տարի ան ազգերը աստին անդին իրենց երկիրները մտնեն՝ տակնուվրա ընեն։ Ա.յսպէս երբոր ալ ամոնացիք քանակով առաջ եկան դաղայադ ըսած գաւառին մօտիկ ցան, որ անկէց ալ երԹան կարգով բոլոր իսրայէլացոց երկիրները աղէկմը տիրեն. ան ատենը իր ցեղը ալ խելքնին գլուխնին ժողվեցին, ան կուռքերը մէջերնէն վերցուցին, մեղա ըսին՝ ՅՅ դիմեցին։ Ա.ս ատ ամոնացոց դէմ՝ գաղայադու մեծերը ասանկ խօսք դրին մէջերնին, Թէ ո՛վ որ առաջ իյնա պատերազմ ելլէ, անիկա իրենց իշխան նստեցունեն. բայց ետքը տեսնելով որ մարդ սիրտ չընէրկոր աս բանիս, մտմտացին որ յեփԹայէն կանչեն քերեն՝ անիկա աս պատերազմիս Ճարը հոգա։ Ա.ս յեփԹայէ ըսածը՝ մէկ ուժով քաջ գաղայա-

դացի մարդիմըներ, որ անկէց իրէն եղբարները հայրենէն ժառագուէն զրկելով տանէն դուրս վըռընտեր էին, դուն մեր հօրը խորթ զաւակն ես ըսելով. ու ինքնալ գացեր մէկ դի գլուխը քաշեր՝ քովը սրիկա մարդիք ժողված՝ առնանկ քաջուք ինքնագլուխ կրկենար։ Լուսոի երբոր ասոնք եկան իրէն աղաչեցին որ եղբ գա՝ ինքը աս պատերազմըս առաջ տանի. յեփթայէն առջի բերանը ծանրէն քաշեց, երես-նէն տրվաւ գաղայագացոց իրէն դէմ ըրած անիրաւութիւր։ Հոտը անոնցմէ երգուցմով խօսք առաւ՝ որ եթէ ած յաջողէ պատերազմը յաղթէնէ՝ ինքը իրենց վրա իշխան ըլա. անանկ եւաւ հետեւնէն եկաւ մասեփա ըսած տեղը, ուր որ ինէլացիք մէյտեղ ժողվեր էին. ու մէկէն դեսպան խրկեց ամոնացոց թագրին՝ թէ դուն ինչու իմ երկիրս եկեր պատերազմ կըներս։ Ամոնացոց թագաւորը իրէն պատասխան տրվաւ թէ՝ աս տեղվանքըս իմ երկիրներս էին, որ ինէլացիք եգիպտոսէ ելան եկան տիրապետեցին։ Յեփթայէնալ նորէն իրէն խրկեց ըսաւ թէ՝ ան ատենը երբոր աս տեղի մարդիքը մեզի չուզեցին Ճամբա տալ՝ հետերնիս պատերազմ բացին, մենքալ անոնք յաղթելով մեր այ օգնուքը՝ պատերազմական իրաւունքով աս երկիրները մեզի առինք, որ իրեքհարուր տարի կըլա ձեռվընիս է. ու դուն հիմա ելեր կուզես որ մեր ձեռքէն յափշտակես. ատ քու ըրած անիրաւուդ գատաստանը ըսաւ՝ ած ինքը տեսնէ։ Հոտը երբոր տեսաւ յեփթայէն որ ան իր խօսքին վրա կեցեր՝ կուզկոր առաջ գալ. ան ատենը ինքնալ աստուծմէ շարժած՝ շուտմը եւաւ նորէն զօրք ժողվեց. և դէմը

պատերազմ երթալու ժամանակը՝ այ ասանկ ուխտ ըրաւ որ՝ ան ամենացիքը յաղթելէն ետև խաղաղութիւն իր տունը դառնալու ըլլանէ, ով որ պինտ առաջ տանը դռնէն դուրս ելլէ իրեն դիմացը գալու, անիկա այ ողջակէզ ընէ։ Լ՚ սյս պիսի կերպով գնաց յեփթայէ, և այ օգնու�թիւն թշնամիները չարաչար կոտրելով, քսան քաղաքաշ ձեռվընէն ետ առաւ. ու մնացածները փախցուցնելով ցիրուցան ըրաւ. ետքը մասեփա քաղաքը իր տունն որ կրդառնար՝ տեսաւ որ իր մէկ հատիկ սիրական կոյս աղջիկը պար բռնած ուրիշ աղջիկներու հետ՝ ուրախութիւն թմբուկ զարնելով դիմացը ելաւ։ Լ՚ն ատենը յեփթայէնալ տակնուվրա եղաւ, սատիկ տրտմութիւն վրայի լաթը պատռեց՝ վայ ինծի ըսաւ իմ աղջիկս՝ ինչ ձուն բերին գըլուխս. որ ես չի գիտնալով՝ քեզի համար այ ուխտ եմ ըրեր. ու հիմա խօսքէս չեմ կրնար ետ դառնար։ Լ՚ղջիկնալ քաջասրրտութիւն վրա տրվաւ ըսաւ թէ՝ ինծի համար ինչ որ ուխտերես նէ՝ պէտք որ կատարես, որ անով ամ քեզի աս յաղթուիս տրվաւ. միան թէ ըսաց՝ աս կրենդրեմ որ՝ երկու ամիս ինծի ատեն տաս, որ աս իմ ընկերներուս հետ լեռները երթամ պրարտիմ, ու իմ կուսութիս լամ ողբամ։ Յետքը թայէնալ ըսածինպէս անանկ թող տրվաւ. և երկու ամսէն ետև որ դարձաւ՝ կատարեց այ ըրած իր ուխտը։ Լ՚ն ան ատենէն սովորութիւն մնաւ իսրայէլացոց մէջը՝ որ ամէն տարի չորս օր աղջիկ տղաքը մէյտեղ եկած յեփթայէի աղջկանը վրա ողբ կրնէին։

Լ՚նկէ ետքը եփրեմի ցեղը յեփթայէին վրա նախանձելով յորդանան գետը անցան իրեն

եկան սրդողելով ըսին թէ՝ ինչու մեզ մարդու տեղ չիդրբիր՝ հետզզ պատերազմ չիկանչեցիր. և աս բանիս համար վախ կուտային իրենց թէ՝ տունդզ տեղզդ վրադ կերենք։ Յեփթայէնալ անոնց պատասխան տրվաւ որ՝ ես ձեզ կանչեցի. բայց երբոր տեսա թէ մարդ չեկաւ, ես վտանգի մէջ դրբի, ու ՝ած ալ բանքս աջողեց։ Հետքը երբոր յեփթայէ տեսաւ որ անոնք նորէն հանդարտ չեն կենար՝ բան կրգրգռեն կոր՝ գազայագացոց սիրտը ծակելու խօսքեր կըսեն, շուտմը վրանին զօրք հանեց ետևէ եկողները ջարդեց, ու անոնցմէ փախչողները որ յորդանանի մէկ նեղուցէմը պիտոր անցնէին իրենց տեղը երթալու՝ բռնել կուտար, ու իրենք փոր ձելու համար թէ եփրեմի ցեղէն են մի՝ իրենց ըսել կուտար աս եբրայեցոց բառը՝ շիպոլէթ, որ կընշանակէ՝ հասկ, կամ ցորենի դլուխ. ու ով որ շիտակ չեր կրնար ըսեր, հապա (ինչպէս կըսեն) սիպոլէթ կըսեր, ան եփրեմի մարդոցը նշանը կըլլար՝ անիկա կրմեռցուներ. և ասով ալ բոլոր քառասունվերկու հազար հոգի կուտրբվեցան անոնցմէ աս պատերազմիս մէջը։ Յեփթայէ ասանկ վեց տարի դատաւորութիւն ընելէն ետքն որ մեռաւ, ետևէն դատաւոր եղաւ եսեբոն բեթղեհեմացին, որ վաթսուն զաւակ ունէր՝ եռասունը մանչ, եռասունը աղջիկ՝ և աս ամիհնալ ինքը իր ձեռքովը կարգեց. ու եօթը տարի իսրայելացոց դատաւորութիւն ըրաւ։ Նոր ետևէն նրատաւ էլոն զաբուղոնացի՝ տասը տարի։ Հետքը աբդոն փարաթոնացի եփրեմի ցեղէն, որ քառասուն տղաք ունէր, անոնցմէ ալ եռասուն եղած՝ բոլորը մէկէն եօթանասուն աւանակ կրհեծնէին. և ասով ալ ութը տարի դատաւորութիւն ըրաւ, ու մեռաւ։

ԳԼ. Ժ.

Սամփսոնի պատմութիւնը։

Դատ. ԺԳ. ԺԳ. ԺԵ. ԺԶ։ = ՆՄ Յի 2850։

Աերի ըսած դատաւորներէն ետև իսկայութիւնը ճոխպաշտուն Թուխալով և քառասուն տարիի չափ անտեր մնալով նորէն այլազգիներուն տակը իսկան։ Ինչ ատենները իսկայոց մէջը դանայ ցեղին մէկմը կար՝ մանաւանդ անունով, որ ասոր կնիկը ամուլ էր տղա չէր բերեր։ Մէկ օրմը հրեշտակ այ՝ մարդու կերպարանքով աս կնիկանը երևցաւ ըսաւ թէ՝ դուն տղա պիտի բերես, որ ան ուխտաւոր, այ՝ այ նուիրեալ պիտոր ըլլաանոր համար պիտի զգուշանաս որ բերանդ գինի, կամ օղի (այ՝ ըռախի,) և ուրիշ պիղծ կերակուրներ չի դնես, որ երբոր տղան ըլլա՝ ամենևին անոր գլխու մազերուն պիտի չի դիպչիլի չի կրտրիլի, ան պիտոր իսկայները այլազգիներուն ձեռքէն ազատե։ Մանավանդ որ աս բանը չէր գիտեր՝ երբոր իր ընկերոջմէն լսեց, աղաչեց այ որ անոր մարդը մէյմունալ խրկէ իրենց՝ որ նորէն աղէկմը իմանան թէ՝ ինչ պիտոր ընեն աս տղոյս։ Ինչալ հրեշտակը նորէն կնկանը երևցուց, որ անալ շուտմը վազեց երիկը կանչեց անոր քովը բերաւ. հրեշտակնալ ինչ որ առաջ կնկանը ըսեր էր՝ ան բանները նորէն իրենց ապրսպրեց. եարը մանաւանդ հրեշտակը մարդ սեպելով՝ իրենց եփած ուլմը բերաւ որ ուտե, անալ որ չի կերաւ՝ հապա այ նրվիրե ըսաւ. ան ատենը մանաւանդ ան ուլը այ զոհ ընելը նիսի հրեշտակը ան կրակին բոցովը դէպ'ի երկինքը երաւ անյայտ եղաւ, և ան տեղը՝ երիկ կնիկ

աս հրաշքս որ տեսան՝ սաստիկ վախցան, ու խմացան որ հրբեշտակ էր եղեր անիկայ։ Յետոյ ատենն որ եկաւ, կնիկը մանչ տղամը բերաւ, որ անունը սամիսոն դրին. և էր օրհնութիւնը միշտ անոր վրան ըլլալով մեծցաւնէ խիստ ուժով մարդը մը եղաւ. որ իր ծնողացը հետ մէյտեղ սարաս և եսթաուլ ըսած քաղաքներուն մէջ տեղը կը կենար։

Սամիսոն մէկ անգամը էր նախախնամութիւնը թամնաթա ըսած այլազգիներուն քաղաքը գընաց, ու հոն մէկ այլազգի աղջկանմը հետը սիրաը կապվեցաւ, եկաւ իր ծնողացը ըսաւ որ ան աղջիկը իրեն առնէն, ծնողքնալ չի գիտնալով որ աս բանը աստուծմէն է, (որ ան պատճառով սամիսոն այլազգիներուն մէջը մտնելով՝ անոնց ըրած անիրաւութիւններուն հատուցումը տա,) առջի բերանը իրեն դէմ կեցան, կըսէին թէ քու ազգէդ աղջիկ մի կը պակսի, որ երթաս այլազգիմը առնես. եթէ երբոր տեսան որ ձար չըլլար՝ իրենքալ սամիսոնի հետ մէյտեղ ելան թամնաթա երթալու որ աղջիկը առնեն։ Ճամբան որ կերթային՝ սամիսոն գլուխը քաշեց մինաւոր դէպ 'ի էգինէրուն մէջէն երթալնին՝ յանկարծակի մէկ առիւծի (էր՝ ասլանի) ձագմը իրեն դիմացը վազեց. սամիսոնալ ձեռքը զէնքմը չուներ, անանկ էր ուժ առած՝ ասիկա բռնեց բերանը բացաւ երկուք ծռեցաւ մեռցուց. ու նորէն դարձաւ եկաւ ծնողացը քովը՝ բանմը չըսաւ իրենց, անանկ եկան աղջիկանը հետ խօսքը կապեցին։ Վերջիմը տեսնէն ետև նորէն որ թամնաթա դառնալու եղաւ սամիսոն՝ որ ալ հարսնիքը ընեն, գնաց ան մեռցուցած առիւ-

ծը նայելու, ու տեսնէ որ՝ մեղուները մէջը մեղրը չիներ են, ինքնալ առաւ ձամբան սկսաւ ուտելով երթալ, Հօրը մօտնալ տրվաւ որ ուտեն։ Երբոր ալ հարսնիքը սկսան ընել, որ եօթը օր կըքըշեր. այլազգիքը վախծան իրմէն՝ անոր համար հետը եռսուն կորիձ մարդիք դրին՝ որ սամիսոն ասոնց հետ ընկերութիւն ընէ ուրախանա։ Ի՛ն հարսնիքի ուրախութիւն ատենը սամիսոն մէկ հանելուկմը (՝՝ պիլ-մէձէմը) ըսաւ ասոնց, որ ան եօթն օրվան մէջը գիտնալու որ ըլլանէ՝ իրենց եռսուն կը-ասոր (կամ թօփ) բարակ կտաւ տա, ու եռսուն-ալ հագնելու լաթեր. հապա որ չի կրնան գիտնալ, անոնք աս բանները իրեն տան. և հանելուկը աս էր. Ելիրոէն հեբէ-էր ելաա, ա ոՀ-ՀՀ-ՀՀ ՀՀ-ՀՀ ելաա։ Ի՛սոր վրա իրեք օր չարչըրվեցան ան կորիձները, ու եօթը երբոր տեսան որ չեն կրնար մեկներ՝ եկան գաղտուկ սամիսոնի հարսին ինկան, որ երիկը խաբելով բերնէն առնէ իրենց զուրուցէ, չենէ ըսին՝ գիտնաս որ՝ քեզ քու տղնովդ տեղովդ կերենք, որ մեզ աղքատցուցնելու համար հոս կանչեցիր։ Ինիկնալ սամիսոնի աղաչելով՝ լալով ամ-չափ բան ըրաւ՝ որ եօթնեըորդ օրը ալ ձար չեղաւ բերնէն առաւ, ու գնաց զուրուցեց ասոնց. որ եօթը անոնքալ դարձան սամիսոնի ասանկ ըսին։ Ի՛եղբէն ալ ՀՀ-ՀՀ ինչ էա, ա-ՀՀ-ՀՀ ՀՀ-ՀՀ-ՀՀ էա։ Ի՛ն ատենը սամիսոն անոնց խաբեբայութիւնը իմացաւ, և ինքնալ աս կերպով իրենց պատասխան տրվաւ՝ Ըէ որ ըսաւ, իմ էրինՀը (՝՝ էՀՀ ՀՀ-ՀՀ-ՀՀ) ՀՀեղը չի ՀՀՀՀ՝ իմ ՀՀ-ՀՀ-ՀՀ ՀՀՀ ՀՀՀՀ. ու սրդողելով շուտմը անկէ ելաւ ասկաղոն քաղաքը գնաց, ՀՀ օգնու-

թիր հոն եռսուն այլազգի սպանեց, անոնց վրայի լաթերը հանեց բերաւ ասոնց տրվաւ. ետքը կնիկնալ հոն տեղը ձգեց՝ ինքը սրդողած իր հօրը տունը դարձաւ։ Յետև ատենով սամիսոնի բարկութիւն որ անցաւ, մէկ ուրիշ հետը պարգև առած՝ նորէն ուզեց որ կնկանը քով երթա. և երբոր եկաւ տեսաւ որ անոնը իր կնիկը առեր ուրիշին հետ կարգեր է. ասոնցս պատճառ պտաւ սամիսոն՝ որ այլազգիներէն աղէկմը իր ոխը հանէ. ուստի գնաց իրեք հարուր աղուէս (ՅԻ՝ թիլքի) բռնեց, (որ ան երկիրները շատ կար կրսեն.) ասոնք երկու երկու պոչերնին մէյմէկու կապեց, և մէջ տեղը մէկ-մէկ ջահ կամ ճրագ դրաւ կապեց, ու անանկ այլազգիներուն ցորեանի արտերը թող տրվաւ. որ գացին կրակ ձգելով երեցին մոխիր դարձուցին անոնց բոլոր ցորենները էգինները ու ձիթենիները. որ բանմը չմնաց։ Յոնց տերերը երբոր իմացան թէ ասոնցս սամիսոնն է ըրեր, ու պատճառը իր անոնը եղեր է՝ որ կնիկը հաներ ուրիշի է տրվեր, եկան անոր տանը կրակ տվին, որ իր աղջիկնալ հետը տընով տեղով երեցաւ. բայց ասոնցս սամիսոն հերիք չիսեպելով. նորէն ուրիշ շատ այլազգիներալ ըսպաննեց. ու ետքը գնաց յուդայի ցեղին մէջը՝ ետեմ ըսած մէկ այրմը՝ հոն կրկեցնար։ Յայլազգիներն որ ասոնցս զօրք ժողվեցին՝ անանկ բանակով յուդայի ցեղին վրան գացին, ու անոնցմէ ուզեցին որ սամիսոնը կապած իրենց ձեռքը տան։ Յուդայի մարդիկնալ վախցան՝ իրեք հազար հոգի մէկէն ելան սամիսոնի եկան, ըսին թէ՝ ատ ինչ է քու ըրածդ, չէս գիտեր որ մենք այլազգիներուն

տերութեան ներքևն ենք. ուստի հիմա եկանք որ քեզ կապենք անոնց ձեռքը տանք։ Սամիսոնաալ առաջ երդվելնցուց իրենք՝ որ չի բռնեն ըսպաննեն. ու անանկ թող տրվաւ որ իրեք նոր հասատ ամուր չըվանններով կապեն ինքը՝ որ այլազգիներուն տան խալըսին։ Երբոր սամիսոն ասանկ կապած՝ այլազգիներուն բանակին եկաւ մօտեցաւ, ու անոնքալ սկսան ուրախութիւն կանչըռտելով վրան վազել որ բռնեն, ան տեղը ՝այ զօրութիւր սամիսոնին հասաւ, որ մէկէն թօթվեց կտրրտեց ան չըվանները, ու հոն գետինը մէկ իշու ծնօտը (այ էնեելի ոսկորը) գըտաւ, ան ձեռքը առաւ վազեց այլազգիներուն վրան, ու անով հազար հոգի մեռցուց։ Սամսոն աշխատանքէս ետաւ սամիսոն՝ սասատիկ ծարվեցաւ՝ ՝այմէ ջուր խնդրեց. ՝ածալ ան ծնօտէն ջուր բըխեցուց, որ խըմեց՝ ու անով նորէն ուժ առաւ։ Սաբը ելաւ սամիսոն գազա ըսած այլազգիներուն քաղաքը գնաց. ան որ իմացան իր թըշնամիները՝ եկան ան գիշերը քաղքին դռները առին, որ առտուն ելնէն ինքը բռնեն մեռցունեն։ Սայց սամիսոն կէս գիշերանց ելաւ՝ քաղքին դռները իր շեմերովը՝ կղպաքներովը փըրցուց կռնակը զարկաւ տարաւ լեռան գլուխը հանեց ձգեց, ու անանկ ձեռքերնէն խալըսեցաւ։

Սբաներըս ըլլալէն ետև՝ այլազգիներուն իշխանները տեսնելով որ սամիսոն իրենց երկիրը մէկ դալիլա ըսած կընկանմը քով շատ անգամ կուգա, անոր հետ խօսք կապեցին՝ որ եթէ սամիսոնը խաբելով բերնէն առնէ իմանա որ՝ անոր ուժը ինչ բանով կրկապվինէ, մարդ գլուխ իրեն հազար ու հարուր արծաթի (կիՔ խուռուշ) տան. ուստի այնու հետև ըս-

կրսաւ աս կնիկը անուշ անուշ խօսքերով սամի-
սոնի ետևէն իյնալ՝ որ աս բանը ըսէ իրեն։
Սամիսոնալ առջի բերանը ըսաց, թէ որ եօ-
թը նոր ջիլով (յ՝ քիրիշով) իս կապենին՝ ու-
ժը վրայես կըփախչի, ուրիշ մարդիքներու
պէս կըլլամ։ Կնիկնալ անանկ կապեց ինքը ան
ջիլերովը. ու ետքը փորձելու համար ետևէն
մէյմը կանչեց, սամիսոն՝ այլազգիները եկան
հիմա վրատ կըհասնին. (ու անատենը անոնք
դաղտուկ պահվըտեր էին, որ եթէ բանը ի-
բաւ ըլլանի՝ վրան վազեն բռնեն։) Սամիսոն
աս ձանը լըսածինպէս՝ մէկէն ցաթկեց թօթ-
վէց կարեց ան ջիլերը՝ ու ելաւ տեսաւ որ
մարդ չիկար, ինքնալ ծաղրաբանուի (յ՝ շա-
խտա) կարծեց, անոր համար նորէն որ աղաչեց
կնիկը որ իրաւը ըսէ, սամիսոնալ ըսաւ թէ
անանկ չէ՝ հապա թէ որ եօթը նոր ամուր չը-
վաններով կապվելու որ ըլլամ նէ՝ անատենը
ուժը կըթափի՝ ու կըբռնըվիմ։ Ասալ փոր-
ձեց կընիկը, ու երբոր տեսաւ որ անոմալ չե-
զաւ, նորէն աղաչեց թախանձեց՝ որ շիտակը
ըսէ։ Սամիսոն մէյմընալ ծաղրաբանուն ըսաւ՝
թէ որ գլխես եօթը մաղ բռնես ծարերը դեր-
ձանի հետ կապես ու անոնք պատը գամեսնի՝
ուժը կերթա։ Կնիկը աս բանս ալ ընելէն ետև
երբոր տեսաւ որ անանկ միշտ զինքը կրխաբէ
կոր, ալ բոլոր ուժովը սկսաւ սամիսոնի ե-
տևէն իյնալ շողոքորթել. ու անչափ բան
ըրաւ որ՝ սամիսոնի ձաբը հատաւ չի կրցաւ
գիմանալ. բերնէն փախցուց ըսաւ թէ՝ գիտ-
նաս որ ես իմ մօրրս փորէն ոյ նըվիրած եմ,
որ իմ գլուխրս պիտի ածըլի (յ՝ ուստուռա)
չէդըպչի, և թէ որ մազրս կորըվիլու ըլլանի՝

ուժը վրայէս կրկախչի՝ եսալ ուրիշ մարդիք-
ներուն պէս կըլամ։ Ինտեղը ալ հաստատ
կնիկ՝ որ իրաւ է զուրուցածը. ուստի շուտմը
այլազգիներուն իշխանները գաղտուկ տունը
կանչեց, որ անոնքալ իրեն տալու ըստակնին
մէյտեղ առին եկան. ու ինքը սամիսոնը խաբ-
խրբելով գիրկը առաւ ծընկանը վրա քնացուց.
և ան քընուն մէջը գլխուն մազերը ածըլել
տալուն պէս՝ սկսաւ սամիսոն թուլնալ ու թըմ-
ըիլ։ Ա՛ս ընելէն ետև երբոր կանչեց, սամի-
սոն այլազգիները վրատ հասեր էն. սամիսոն՝
արթընցաւ՝ ուզեց մէկէն ցաթկել ելլել. բայց
տեսաւ որ ան ՝այ զօրութիը վրայէն գացեր է,
որ չի կրընար շարժիր. ուստի շուտմը վրան
եկան այլազգիները զինքը բռնեցին՝ աչվընները
փորեցին հանեցին. ու երկաթներով կապած
դազա քաղաքը տարին. և հոն գերիպէս ջա-
ղացքը (՝ի տէյիրմէնը) դրին՝ որ երթա բանի
աղա։ Ինչմը ատենէն ետքը որ ալ սամիսոնի
մազերը սկսեր էին երկրընալ, ու անով առջի
ուժնալ վրան գալուպէս էր. այլազգիներուն
իշխանները իրենց դագոն ըսած կուռքին մեծ
տօնախմբութիմը ըրին՝ կեր ու խումով ու
բախուք, որ իրենց թշնամին սամիսոնը ձեռ-
վընին տվեր է։ Երբոր աս ուրախութիս կը-
նեին՝ իրենց կնիկներով տղաքներովը անհա-
մար բազմուն մէկ մեծ պալատիմը մէջ՝ վերը
վարը լեցուն. ուզեցին որ սամիսոնալ հոն
բերել տան, որ առջևնին անանկ կուր կուր
խաղա՝ ծաղը ըլլա, որ սրտերնին վրան աւե-
լի պաղըշտրկի։ Սամիսոնալ սանկ խաղալէն
ետև՝ գնաց ան պալատին երկու սիւներուն
(՝ի՝ թէմել տիրէկներուն) քովը՝ որ ան բոլոր

շինվածքը անոնց վրա հաստատված կեցեր էր, ու դեպ՝ի ՝ած կանչելով ըսաւ. ՝որ ՝որ զորուեց՝ յիշ՝ խ, և աս մէկ հեղսալ ինծի ուժ տուր, որ այլազգիներէն իմ երկու աչացը ոխը հանեմ։ Այս աղօթքը ըրաւ՝ ու երկու ձեռքովը ան երկու սիւները բռնեց, ես ալ աս այլազգիներուս հետ մեռնիմ՝ ըսելով՝ անանկ ուժով քաշեց թօթվեց. որ հոնտեղը մէկէն քայ քայեցաւ հիմնայատակ եղաւ ան բոլոր շինվածքը, ու իրեն հետ մէյտեղ բովանդակ մէջի եղած այլազգիները մեռցուց. որ մեծ ու պզտիկ իրեք հազար հոգի էին և ասով սամիսոն մեռնելովը աւելի մարդ ըսպաննեց՝ քան ողջու

կրներ։ Նստատեղնալ դանա ցեղը՝ տեղերնին իրենց նեղվածք գալով, հինգ հոգի լռես խրբ-կեր էին՝ որ երթան պրտրտին ուրիշ բնակե-լուալ տեղ գտնեն. ասոնք Ճամբան երթալնի-նի մեքայի տանը զլատացին հանդիպեցան, ու անոր ձեռքովը՝ հարցուցին՝ իմացան իրենց բանին յաջողուիը։ Այրբոր գացին բաներնին տեսան, ու վեց հարուր հոգի մէկ եղած՝ ելան որ երթան լայիսա ըսած քաղաքը այլազգի-ներուն ձեռքէն առնեն՝ հոն բնակին, նորէն եկան՝ ան զլատացին իր աւելորդապաշտական բաներովը մեքայի տընեն յափշտակեցին վե-բուցին՝ հետերնին առին լայիսա քաղաքը տա-բին, որ հոն իրենց առանձին քահանայութիւն ընէ. ու քաղքին անունը փոխեցին, Դան՝ դրին։ Այս անատենէն աս աւելորդապաշտու-թիւը ան տեղը մնաց՝ մինչվան յերոբոամ իս-բայէլացոց թագաւորին ժամանակը, որ անալ իր չմնած երկու ոսկի հորթերուն մէկը հոս տնկեց, ինչպէս իր տեղը պիտի պատմենք։

Այրկրորդ՝ բենիամենի ցեղին ջարդը կըպատ-մըվի, որ մէկ զլատացիի կնկանմը պատճառով եղաւ։ Այրբոր գաբաա ըսած բենիամենի քաղ-քին անշահ մարդիքը աս կնիկը խայտառա-կելով մեռուցին, երիկը առաւ անոր մեռելը, տասվերկու կտոր բրաւ, ու իսրայէլացոց ամ-մէն ցեղերուն անկեց մէյմէկ կտորը խրբրկեց՝ որ երթան տեսնեն, ու անոր դատաստանը իրենք կտրեն։ Իսրայէլացիքալ աս անօրէնու-թիւը վրա սոսկալով, մէյտեղ եկան խորհուրդ ըրին, մարդիք խրկեցին բենիամինցոց՝ որ ան չարուիը ընողները երթան բռնեն մեռցնեն։ Այայց բենիամինցիք տեր կեցան ան չարագործ,

ներուն ու սկսան ասոնց դէմ պատերազմի պատրաստուիլ տեսնել, որ քսանըվինգ հազար եօթը հարիւր կտրիճ պատերազմող մարդիկ հանեցին։ Այսոր վրա բանը տաքցաւ, ուստի աստիճան իսրայէլացոց բոլոր ցեղերը մէկ եղած իրենք ալ չորս հարիւր հազար զօրք ժողվեցին, ու այ հարցուցին հրամանն առին անանկ բենիամինցոց վրան ելան։ Առջի զարնը վերուն մէջը՝ քսանվերկու հազար իսրայէլացի ներէն ջարդվեցան. անոր վրա թէպէտ սրբտերնին կոտրեցաւ, բայց նորէն այ հարցուցին, և անանկ մէյմալ որ զարնվեցան, և ուրիշ հազար հոգիալ կորսնցուցինք, անատենը ալ պաք պահելով զոհ մատուցանելով, տարաբկուսեցան՝ այ ադաչեցին որ իրենց յայտնէ թէ ինչ ընեն, նորէն ելլան՝ թէ դադրին մի։ Աճալ փինեհէս քէհնայապետին բերնովը հրամայեց որ չվախնան ելլեն. որ վաղը անոնք բոլոր իրենց ձեռքը պիտի տա ըսաւ։ Անանկ եղաւ. մէկալ օրը քսանըվինգ հազար ու հարիւր հոգի բենիամինէն ջարդեցին, ետև դաբաս մայրաքաղաքը՝ և բոլոր իրենց մէկալ քաղաքներն ալ մոռան առանց խնայելու ամենքը կոտրեցին՝ կնիկ՝ տղա՝ իրենց անասուններովը, որ բան չի խալըսեցաւ անոնց մէջը. ու շինվածքներուն ալ կրակ տալին մոխիր դարձուցին, անանկ որ՝ բոլոր բենիամինի ցեղէն միան վեցհարիւր կրտրիճ ձորով չոր գլուխ մէկ անառիկ տեղմը փախան ինկան, որ վէմ ռեմոնայ կըսվեր։ Ասքը աչափիսաւ չիկըշտացան իսրայէլացիքը, հապա ալ գլուխին տաքցած՝ ուզելով որ ան ցեղը բոլորովին աշխարքէս վերնա, մէկ եղան՝ այ առջևը երդումով ուխտ ըրին որ ան մեա-

ցած վեց հարուր հազիւին իրենցմէ մարդ աղ-
ջիկ վտա։ Բայանկ որ չափը անցուցին իսրայէ-
լացիք. ետքէն խելքնին վրանին եկաւ, սկսան
զղջալ ան ըրած երդումին վրա. և անոր Ճարը
այսպէս մըտմտացին որ՝ յաբէս գաղայադին
մարդիքը ջարդէն՝ իրենց կոյս աղջիկներէն 'ի
զատ, ու անոնք աս բենիամէնի մնացած կը-
տրիճներուն տան, որ անով ան ցեղը մընա չի-
կորսըվի. ինչու որ՝ բոլոր իսրայէլացոց մէջը
միան յաբէսցիները գլուխ քաշեր՝ չէին եկեր
ան պատերազմը, որ մէջերնին երդումով հաս-
տատված էր՝ որ ամմէնը գան։ Բայց երբոր տե-
սան որ յաբէսի միան չորսհարուր աղջիկ ելաւ,
որ բաւական չէր ըլլար ան բենիամէնի կտրիճ-
ներուն. մնացած երկու հարուրնալ սելովքաղ-
քէն ուրիշ Ճամբովմը հանեցին անոնց տըվին.
և ասով բենիամէնի ցեղը նորէն ոտքի վրա
կայնեցուցին։

ԳԼ. ԺԸ.

Հռութայ պատմութիւնը։

Աշ Տի կրը 2700։

Իսրայէլացոց դատաւորներուն ատենը՝ և
ինչպէս կերևա՝ սկիզբները, աս հռութայ բա-
նը եղաւ. որ ՇՃաշունչը դատաւորաց ետևէն
մանաւոր գիրքով կըպատմէ, որ դաւիթ մար-
գարէին պապերը կարգով բերէ, մանաւանդ
թէ՝ յոթ քսի մեսիային ցեղը ըստ մարմնոյ. ո-
րով իրեն ազգահամարին մէջը հռութենալ կը-
յիշէ աւետարանիչը։

Իսրայէլացոց երկիրը մէկ սաստիկ սովմը ին-
կաւ, և ան պատՃառով էլիմելէք ըսած մէկ

մարդմը յուդայի ցեղէն որ բեթղեհէմ կրկենար առաւ իր նոոմին հնիկը ու երկու տղաքը մովաբացոց երկիրը գնաց՝ որ հոն նստի ապրի։ Շատ չանցաւ աս մարդոս մեռաւ, եւոքը ան երկու տղաքնալ հոն կարգըվեցան՝ մովաբացի այլազգի հարսեր առին, մէկին անունը՝ որփա, ու մէկալինը հռութ։ Յասը տարիէն ետեւ աս երկու տղաքնալ որ առանց զաւկի մեռան, նոոմին մարեբոնին լսելով թէ իսրայէլացոց երկիրը ալ շրջակրվեր է, ուզեց որ աս հարսերը իրենց տներնին ձամբէ, ու ինքը գլուխը քաշէ իր երկիրը դառնա։ Բոնց մէկը ինչ որ էնէ քովէն գնաց. բայց հռութը ձար չեղաւ իր կեսուրէն չիզատվեցաւ. ու ըսաւ որ՝ իս քեզմէն միան մահը պիտի բաժնէ, դուն ուր որ երթաս՝ ես ալ հետդ եմ. քու ազգրդ իմ ազգս է, և քու ՝ծրդը իմ ՝ծոս ալ է։ Բայսպէս որ եղաւ, նոոմին հռութը հետը առաւ բեթղեհէմ դարձաւ. հոն ելիմելեքի ազգականմը կար բոոս ըսած, ասիկա նոոմինին վրա ձեռք դրաւ. իրենց տեղ տրվաւ որ բնակին։ Բն ատենը որ արտերը ցորեն կրքաղէին՝ հռութ նոոմինէն ուզեց որ երթա ինքնալ արտերը բանի, որ ա նով իրենց աղքատուիը անցունէն ապրին. ա նանկ գնաց բոոսին արաբ ցորեն կարելու։ Բոոս երբոր իմացաւ թէ հռութ նոոմինին հարսն է, վրան մանաւոր հոգ ցրցուց, և իր աղջիկներուն հետ դրրաւ որ կերակուրը մէյ տեղ ուտէ. ու բանվորներուն ապրսպրեց որ ինքը աղէկ նային. և ցորենի հասկերուն մնա ցածը թողուն որ՝ կուզէնէ ժողվէ տուն տանի։ Հունձէն երբոր տուն դարձաւ հռութ, ու բոոսի իրեն վրա ըրած հոգն որ պատմեց կե-

սերոջը. անալ շատ ինտաց վրան, ու հռութի Ամբա ցուցուց որ բոոսի հետը կարգվի, և ասանկ կրվայլե ըսաւ, ինչու որ՝ ան ելիմելէքի ազգական է։ Այսանկ որ բոոս երբոր հռութի միտքը իմացաւ՝ էլ չըսաւ. բայց որով հետև իրմէ աւելի մօտ՝ ելիմելէքի ուրիշ ազգականմընալ կար՝ որ առաջ անոր կիյնար որ հռութը առնէ, բոոս բանը ասանկ ձգեց՝ որ կարգով ըլլա։ Աղքին ծերերը մէյտեղ բերաւ՝ անոնց առջևը ան մէկալ ազգականին ըսաց որ՝ նոոմինը ելիմելէքի որբևաբին՝ իր երկընէն մընացած գետինները ուն մէկ կտորը ծախել կուզէ առաջ քեզի կիյնա որ առնես, չէնէ ես կառնեմ. և տես աս ալ ըսաւ, գիտնաս որ՝ ան տեղը առնողը իրեն հարսը հռութնալ պիտի առնէ, որ անկեց ան մեռնողին ժառանգ թողու։ Այս որ լսեց ան մէկալ մարդը՝ ետ կեցաւ, դուն առ ըսաւ։ Ընատենը բոոս վրկա բռնելով ան ծերերը ու բոլոր հոն գրտնըված ժողովուրդը՝ հռութը իրեն հարազատ կնիկ առաւ, որ ամ մինքը ուրախուք օրհնենք կարգացին վրանին. և ածալ օրհնելով՝ շատ չանցաւ որդիմը տըվաւ իրենց, որ անունը ովբեդ դրին, ու անկեց եղաւ յեսսէն՝ Դաւիթ մարգարէին հարը։

ԳԼ. ԺԳ.

Ընդայն աղօթքով սամուէլը էլծանի՝ ու ամ էնըվերովի։

ա. թագ. ա. բ։ = Ամ Տի 2848։

Եղլի երբոր իսրայէլացոց քահանայապետուն կընէր, որ ետքը դատաւորուն ալ սկսաւ ընել. անատենը եղկանա անունով մէկ ղև-

տացիմը կար արիմաթեմ քաղաքը՝ որ երկու կնիկ ուներ, մէկին անունը աննա, ու մէկալինը՝ փեննանա։ Աննան ամուլ էր տղա չէր բերեր, ու փեննանան զաւակներ ուներ. ուստի աննա միշտ սրբոտցաւ էր աս բանիս համար։ Տղկանան սովորուի ըրեր էր. որ տարին հեղմը կնիկները և տղաքը մէյտեղ առած ուխտ կերթար սեղով քաղաքը՝ տապանակին այս առջևը։ Էկ անգամմալ երբոր սասնկ ուխտ գացին, եղկանան այ զոհ ընելէն ետև սեղան որ նրստաւ՝ փեննանայի ու անոր տղոցը բաժինները մէյտեղ տրվաւ. և աննայիալ զատ մէկ բաժինմը որ տրվաւ, աննան անանկ մինաւորը նրստած ուտելնին, նորէն միտքը ինկաւ աս իր ամուլուիր, ու ախ վախ ընելով կրհալէր կրմաշվեր. թէպէտ եղկանան աննային վրա աւելի սէր ունենալով, սիրտ կուտար իրեն ու կրսեր թէ՝ մի վախնար ես քանի որ կամ նէ քեզի տասը զաւկի տեղ եմ. բայց ձար չէր ըլլար որ աննան աս բանրս մոռնա։ Ուստի երբոր սեղանը խալըսեցաւ՝ աննան մինաւորը ելաւ գնաց այ տաճարին դռանը առջևը ինկաւ, ու սրբոտանց լալով սկսաւ աղաչել պաղատել այ, որ իրեն ողորմի մէկ զաւակմը տա, և ուխտալ ըրաւ որ ան զաւակը ինքնալ այ նվիրէ։ Այս աղօթքը ընելնին աննային բերանը չէր շարժեր, հապա սրտանց կրսեր ու կրհառաչէր, անոր համար հեղի քահանայապետը որ հոն նրստած էր՝ բանը չիգիտնալով, երբոր տեսաւ որ աննա շատ երկինցուց հոն անանկ կենալը, կարծիք գնաց թէ գինովցեր է. ուստի տղան խրրկեց որ երթա չախկ վրանտէ ան տեղէն։ Այնպայալ խոնարհութանորոգին տրվաւ

թէ՝ քաւ լիցի ես գինով չեմ. հապա տրտմութիւն լցուած կնիկմընեմ, որ ՝ի առջև եկեր եմ իմ սրտիս ցաւը կրբանամ։ Հեղնալ անատենը իրեն ըսաւ, անանկ է նէ խաղաղութիւն երթաս, ՝ուծքու խնդիրքդդ լսէ։ Լսով խիստ մխիթարվեցաւ անոնց. և երբոր անկեց իրենց տունը արիամթեմդարձան, աննա յղացաւ մանչ զաւակմը բերաւ, ու անոր անունը՝ սամուէլ դրին, որ ըսել է՝ աստուծմէ խնդրըված։ Լինկէ ետև աննան ալ երկանը հետ սելով փիրնաց՝ ինչան որ տղան քիչմը մեծցաւ ու կաթէն կտրեց. անատենը առաւ ընծաներով սելով բերաւ, և հարը զոհ մատուցանելով անանկ ՝ի նրվիրեցին, ու աննան տղան հեղի քահանայապետին ձեռքը տալնինի ըսաւ, տէր իմ՝ ես ան կնիկն եմ՝ որ ատենով քու աչքիդ առջևը ՝ի աղաչեցի աս տղոս համար, որ ՝ուծ իմ խնդիրքըս կատարեց. հիմա ես ալ ինչպէս որ ՝ի ուխտ ըրին, ասիկա իրեն փոխ կուտամ կընվիրեմ։ Լսքը աննա ան մարգարէական ՝նորհակալութիւնը օրհնութիւնը ընելով ՝ի, որ կրսկրսի՝ Հասարակեցաւ սիրտս ՝ի՝ Տէր. Տոն թողուց սամուէլը. ու ինքը հեղի օրհնենքը առած՝ երկանը հետ տուն դարձաւ։ Լ՝ծալ օրհնեց ինքը, ու սամուէլի տեղը, նորէն ուրիշ իրեք մանչ ու իրեք աղջիկ զաւակ արվաւ իրեն։ Լայց ինքը ամմէն տարի որ սելով կերթար՝ սամուէլը չէր մոռնար, միշտ իրեն լաթ կրչիներ կրտաներ։ Սամուէլ անանկ պըզտըկուց սկսաւ ՝ի տանը ծառայութիւնը ընել, և օրէ օր անմեղութիւնը մեծնալով չէ թէ միան ՝ի՝ հապա ժողովրդոց ալ աչքը կրմտնար՝ որ կրսիրէին ղինքը։

ԳԼ. ԺԳ.

Հեղի էր աղաղնէրուվը հրպարտքովի՝ քահանայութեան կոչ. նա, անոր որդիքը սամուէլ հրնորբովի։

ա. թագ. գ. գ. Ե։ = Ամ Հի 2800

Հեղի քահանայապետը երկու որդի ունէր, մէկուն անունը ոփնի կրսվեր, ու մէկալինը՝ փենեհէս. ասոնք երկուքնալ իրենց հօրը նեռքև՝ Իսրայէլացոց քահանայութի կրնէին այ տապանակին առջևը, անոնց զոհերը կրմատուցանէին, և ուրիշ ամենայն ծէսերը կրկատարէին. բայց իրենց չար ու գայթակղական գործքերով Ժողովրդին սիրտը կերէին, ուստի ամենալիխտ որդողեր էր վրանին։ Հեղի թէպէտ ասոնց անկարգութիւնները միշտ կրլրսեր գիտեր, բայց ինչպէս պէտքէնք աս բաներուս դեղ չէր դներ՝ չէր՝ պատժէր իրենք. հապա անհոգուն մէկ թուլխրատովմը կանցուներ. որդիք՝ կրսեր՝ ձեր վրա աղէկ չէմ լրսեր, ինչու ատանկ կրնեք էն, և անոնքալ իրենց գիտցածէն չէին անցներ։ Ինոր համար ամենայն հեղիի վրայ սաստիկ բարկանալով՝ մէկ հրեշտակմը խրկեց, որ եկաւ չարաչար յանդիմանեց ինքը աս իր տղոցը ըրածներուն համար. ու իրեն ահ տրվաւ թէ քահանայապետութիւդ պիտի քու անէդ ջնջեմ վերը ցունեմ, ուրիշ իմ հաւատարիմ ծառայիս տամ։ որովհետև ըսաւ դուն ապերախտ եղար իմ շնորհքիս. և աս բանիս նշանը ան պիտոր ըլլա՝ որ ոփնի ու փենեհէսը մէկ օրվան մէջ պիտի խլնան մեռնին։

Լրտբը ամենայն աս բանրս սամուէլի ալ յայտնեց. որ երբոր ինքը պզտրկուց տաճարը կը-

պառկէր, մէկ գիշերմը յանկարծակի անկանը ձանմը եկաւ՝ որ ինքը կրկանչէր՝ սամուէլ սամուէլ. անալ գիտնալով թէ հեղին անդիէն զինքը կրկանչէ՝ երաւ վազեց քովը գնաց, ահա եկա ըսաւ՝ ինչ կրհրամմես։ Հեղեալ ըսաւ, ես քեզ չկանչեցի որդի, գնա տեղդ պառկէ։ Սամանկ իրեք հեղ որ եղաւ՝ որ սամուէլը վազեց քովը եկաւ. անատենը հեղի կռահ գնաց թէ՝ ՆԾ տապանակէն ինքը կրկանչէ կոր, ուստի երրորդ անգամին՝ սամուէլի խրատ տրվաւ, որ մէյմալ կանչելու ըլլանէ, ինքնալ ըսէ՝ որ ինչ կրհրամմես քու ծառայիդ։ Սամուէլ ալ հնազանդեցաւ, ու երբոր չորրորդ անգամը կանչվելուն անանկ ըսաւ. անատենը ՆԾ բանը իրեն բացաւ, ու զուրուցեց թէ՝ ինտոր սաստիկ բարկացեր է հեղիին վրա՝ իրեն տղոցը պատճառովը, որ անոնք չի յանդիմաներ Ճամբաբերեր. անոր համար ըսաց՝ Ճար չկա պիտոր զիրենք չարաչար պատժեմ քահանայապետութիւնը ձեռվընէն առնեմ։ Երբոր առտու եղաւ, սամուէլ վախէն չէր ուզեր ՆՅ խօսածները հեղիին պատմել. բայց հեղի անչափ եռևէն ինկաւ՝ որ Ճորով բերնէն առաւ. ու երբոր լսեց հեղի, կամք ՆՆ օրհնեալ եղիցի ըսաւ. և այսու ամենայնիւ՝ անովալ չի զգաստացաւ. նը մանապէս տղաքնալ իրենց ըրածէն ետ չէին կենար։ Այց ՆԾ ան ատենէն սկսաւ սամուէլի հետ ընտանութիւն ընել՝ իր կամքը անոր յայտնել. որ ասով օրէ օր սամուէլի անունը բոլոր իսրայէլացոց մէջ հռչակվեցաւ, թէ ՆՅ սիրելի և հաւատարիմ մարգարէ է ինքը։ Այտև ՆԾ ան հեղիին պատիժն որ տալու եղաւ, թողտրվաւ որ այլազգիները իսրայէլացոց վրա

պատերազմ ելլէն. ու երբոր առջի զարնվելուն ելէլացիք տեսան որ յաղթվեցան՝ չորս հազար հոգի իրենցմէ կորսընցուցին, ուզեցին որ այ տապանակը բանակը բերէն՝ որ անով ամ իրենց օգնուի համար։ Եւ այսպէս սելովէն տապանակը որ վերցուցին բանակը բերին՝ ոփնի ու փենէհէս հեղլին որդիքնալ հետը. անատէնը այլազգիները իսրայէլացոց ժողովրդին ձանէն իմանալով տապանակին գալը, սրտերնին սաստիկ վախ ինկաւ. վայ է ըսին մեզի, ալ բաներնիս բուսաւ, ինչու որ՝ ան իսրայէլացոց ամ մէջերնին եկաւ՝ որ ինչման հիմա բոլոր իրենց թշնամիները ջարդեր կորսընցուցեր է։ Լուստի մէկմէկու սիրտ տալով՝ անանկ յուսահատութիւն որ սկսան իսրայէլացոց վրան վազել. ամ այնպէս կարգաւորեց՝ որ եռասուն հազար հոգի իսրայէլացիներէն կոտրեցին՝ ոփնի ու փենէհէսալ մէյտեղ. ու մնացածը ցիրուցան փախուցին, և այ տապանակնալ գերի առին իրենց ազոտոս քաղաքը տարին։ Այս որ եղաւ՝ շուտմը մէկ մարդմը լաթերը պատռատած գլուխը հող ցանած վազեց սելով քաղաքը՝ որ աս խեղճութիւնները պատմէ. և անատէնը հեղիալ ծերացած ինընսունրու�թը տարվան՝ որ աչքին լուսնալ կորսընցուցեր էր, տանը դռանը առջևը աթոռով նստեր կրսպասեր, ու սիրտը կեփեր տապանակին վրա։ Երբոր աս մարդէս լսեց որ պատերազմին բանը ձախորդ գացեր է, իր երկու տղաքնալ մեռեր են, ու այ տապանակը առնվեր է. ան տեղը հեղի սաստիկ ցաւէն՝ աթոռէն կրռնրկին վրա գետինը ինկաւ՝ ու մէջքը կոտրեցաւ մեռաւ։ Ինկէ ետև փենէհէսի կընիկնալ, որ ան օրերը տղա-

բերքի մօտ էր, անալ իր պարոնտատին և երկանը մեռնիլը մէկէն լսելով ցաւը բռնեց ու տղաբերքին մէջը խղճալար մեռաւ։

ԳԼ. ԺԵ.

Այլազգիները ապստամբին պատճառով Կիպրոսի ոստան նորէն Եկեցող հրդարյոնէն

Ա. Թագ. Ղ. Է. Ը։ = Ամ Տի 2888։

Այլազգիները որ տապանակը գերի բռնեցին ազովտոս տարին, անիկա իրենց դագոն բսած կուռքին տաճարը դրին. և երբոր մէկալ օրը առտվանց կանուխ ելան տաճարը գացին՝ տեսնան որ դագոն կուռքը տապանակին առջևը երեսին վրա գետինը փռված էր. ուստի վերցուցին նորէն իր տեղը կայնեցուցին։ Բայց անոր մէկալ առտուն մէկ յամալ գան գտնան որ՝ դագոն նորէն գետինը կործանած՝ ոընայարը (ՅՐ՝ կեօվտե քիւթիւրիւն) միան ողջ մնացեր էր, ու գլուխը՝ և երկու ոտվընները տաճարին մէջ տեղը ինկեր ջախջախեր էին, և երկու թևերը դռանը շէմին վրա կեցեր էին։ Բսկէ 'ի զատ՝ աստուած ուրիշ պատիժալ խրկեց այլազգիներուն վրա, որ նստուկ տեղերնին խոց կելլէր՝ սաստիկ կրտանջվէին, և սովալ շատ մարդ կըմեռնէին։ Դաև իրենց արտերը անհամար մրկներ կըվըխտային, որ բոլոր վարուցանին կուտէին կաւրէին։ Բս պատուհասներն որ ազովտացիքը տեսան, կարծիք երթալով որ տապանակին պատճառովը կըլլա, խորհուրդ ըրին մէկալ այլազգի իշխաններուն հետը, ու փոխելու համար տապանակը անկեց վերցուցին

գՀԹ ըսած քաղաքը տարին։ Բայց այսու՝ամիւ երբոր հոնալ տեսան որ ան պատուհասները կը լլան, անկէց ալ ուզեցին որ ասկաղոն տանին. ասկաղոնացիները ասոր դէմ կեցան, մեք բոլորըս ջարդուիլ չենք ուզեր ըսին։ Ուստի ասանկ եօթը ամիս տապանակը այլազգիներուն քովը կենալէն ետև, մտմտացին որ նորէն իսրայէլացոց ետ Ղամբէն՝ խալըսին աս պատուհասներէս. և ասոր վրա իրենց քուրմերը խորհուրդ տրվին որ պարապ չիխաւրեն, հապա այլազգիներուն հինգ իշխաններուն համրանքովը՝ հինգ հատ ոսկիէ նստուկ տեղի պատկերը շինեն, ու հինգալ ոսկիէ մրկներ, և ասոնք տապանակին նվիրեն տան որ ան պատիժները վրանէրնէն վերնա։ Նոքը աս ալ ապրսպրբեցին որ՝ նորէն աղէկմը փորձելու համար, որ իմանան թէ աս պատիժներըս անկէց է՝ թէ չէ, տապանակը ան ըսած ոսկիէ բանէրովը առնեն մէկ նոր սայլի (այ՝ առապայիմը) վրա դնեն, ու երկու մատղաշ կովեր որ առջինեկ հորթերնին բերեր են՝ ան սայլին լծեն, ու հորթերնին քովերնէն բաժնեն տունը պահեն, անանկ Ղամբա դնեն անունք որ երթան. եթէ տեսնեն որ աս կովերը շիտակ դէպի իսրայէլացոց երկիրը կերթանէ, գիտնան որ ան պատիժները տապանակին պատճառովը եղած է։ Նոնքալ անանկ որ ըրին, ու եւևէն դացին նայելու. տեսան որ կովերը առանց մէկ դին մէկալ դին ծռելու՝ շիտշիտակ գացին դէպ՝ի բեթսամիս ըսած իսրայէլացոց երկիրը, որ անատունը ցորեն կը հնձէին անոնք։ Ու հոն յովսեայ բեթսամիսացիին արտը որ մնան, իսրայէլացիքը իմացան՝ խնտալով

տապանակին վրան վազեցին սայլէն առին վերուցին. ու սայլը ջարդեցին վառեցին, անոր կրակովը ան երկու կովերը զուտացիները եկան ողջակէզ ըրին տապանակին առջևը։ Այս աս իսրայէլացոց ուրախութիւնը մեծ տրտմութիւն վերջացաւ. որ յիսուն հազար ու եօթանասուն հոգի անատեսը այ պատժըվեցան մեռան, ինչու որ, կըսեն թէ, երբոր տապանակը ասանկ հոն հասաւ, իսրայէլացիք մեծ ու պզտիկ վրան թափեցան, ու առանց անոր պատիւը պահելու՝ սկսան տապանակին դպչիլ հետաքրքրուելու մէջը խառնեցին նայեցան. որ աս բանըս իրենց սաստիկ արդիլեր էր ։ Աստի բեթսամիւսցիքը ալ տապանակին սոսկալով դողալով կարիաթարիմցոց աղաչեցին որ իրենց քաղաքը առնեն տանին. ու անանկ կարիաթարիմը տարին, որ հոն շատ տարի ամենադաբ քահանային տունը կեցաւ։

Հեղի քահանայապետին ետև ինչպէս ըսինքսամուէլ մարգարէն որ սկսաւ իսրայէլացիքը կառավարել, իր առջև հոգը աս եղաւ՝ որ բոլոր կուռքերը և կռապաշտական բանները մէջերնէն վերցուց մաքրեց, ու ճշմարտութիւնը նորոգեց, մանաւանդ տապանակը դառնալէն ետքը։ Իւ աս ատեններըս մէկ հեղմը սամուէլ բոլոր իսրայէլացիները մէյտեղ մասեփաթ ըսած տեղը ժողվաց՝ իրենց քարոզ որ կուտար՝ և այ աղօթք որ կընէին, ան ժամանակը այլազգիները յանկարծակի ուզեցին վրանին պատերազմ ելլել. ան որ խմացան իսրայէլացիները՝ սըրտերին դող ինկաւ, ու սամուէլի գիմեցին որ այ աղաչէ՝ որ անոնց ձեռքէն խալըսին։ Սամուէլալ մէկ գառնուկմը առաւ այ ողջա-

կեզ որ ըրաւ, ՝ած երկինքէն անանկ սոսկալի գոռալու ձայնմը հանեց՝ որ բոլոր այլազգիները իրար անցած սկսան փախչիլ, ու իսրայելացիները ետևնին ինկած անոնք ջարդեցին, ու իրենց քաղաքներնալ նորէն անոնց ձեռքէն առին. և ասով այնպիսի վախ ինկաւ այլազգիներուն սիրտը, որ սամուէլի օրը մէյմալ իսրայէլացոց վրա պատերազմ չի բացին։ Եւ ինքը սամուէլ մարգարէնալ սովորուն ըրեր էր, որ տարին հեզմը իսրայէլացոց քաղաքները կըպըտրտէր՝ անոնց պիտանաւորութիւնը կըհոգար դատաստաններին կըտեսներ. և մէկալ մնացած ժամանակը արիմաթեամ իրեն տունը կըկենար։

ՄԱՄՆ ՀՈՐԻՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐՈՒՆ· ԻՍՐԱՅԵԼԱՑՈՑ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԱՏԵՆԸ ԵՂԱԾԸ ՄԻՆՉԵՒ ԻՐԵՆՑ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ։

ԳԼ. Ը.

Իսրայելացիք իրենց թագաւոր կուղէին դնել. Աստուա-ծուղը սորէ թագաւոր կընորհէ Իսրայելացոց։

ա. Թագ. Թ. Ժ։ = Ամ Ցի 2908

Երբոր ծերացաւ սամուէլ, կառավարութիւնը բեռը իր վրայէն թեթևցունելու համար՝ իրեն երկու որդիքը յուվել ու աբիա ըսած՝ իր տեղը իսրայէլացոց վրա դատաւոր դրաւ։ Սոնք իրենց հօրը բարեպաշտութիւն և արդարութիւն Ամբէն դուրս ելան, որ կաշառքներով (ՅՐ ընդունելով առնելով,) և ուրիշ անիրաւութիւններով ժողովուրդը կը տարաբարէին։ Նոր հասմար ալ չիդիմանալով, ամէնքը եկան սամուէլի ինկան՝ ու միաբերան ըսին թէ՝ մեզի մէկ թագաւորմը դիր, որ աշխարքի ուրիշ ազգերունպէս մենքալ մեր թագաւորէն կառավարվինք։ Սով ժողովուրդը չուղելմը ցրցունելով անմիջապէս աստուծմի կառավարվիլը՝ իր պաշտօնէից ձեռքով, (ինչպէս ինչման ան ատենը եղած էր.) սամուէլ աս բանս որ լսեց՝ խիստ վշտացաւ ու գանկտեցաւ այ հետ։ Նէ՝ ճալ հրամայեց որ անոնց ուզածը կատարէ, միան թէ՝ առաջ իրենց առջևը դրնէ թէ՝ որոնք ի-

բաւունքը, որ ինչպէս սովորուն է՝ ժողովրդոց
վրա բեռ կըլլան, ու իրենք գերիպէս կրբա-
նեցունեն։ Այց աս բանտերովսալ իսրայէլա-
ցոց աչքն որ չի վախցաւ, և իրենց խօսքին վրա
հաստատ կեցեր էին, ան ատենը ՅԾ նորէն
հրամայեց սամուէլի որ սաւուղը իսրայէլացոց
թագաւոր օծէ. որ ասանկ եղաւ։ Լենիամինի
ցեղին մէջը մէկ մարդմը կար՝ կիս անունով.
ասիկա մէկ կտրիճ՝ տղամը ուներ խիստ շնոր-
հալի՝ պատուական, ու բարձրը հասակով (ՅՊ՝
պոյլու պօսլու), անանկ որ՝ ինքը մէկ հա-
տիկմըներ բոլոր իսրայէլացոց մէջը, որ սա-
ւուղ կըսվեր։ Պատահեցաւ որ աս կիսը իր
էշերը կորսընցուց, ուստի սաւուղը, մէկ ծա-
ռայիմը հետը դրաւ ետևէն խրկեց որ երթան
ան էշերը փընտռտեն, անանք ալ աս բանիս
համար ելան շատ տեղմանք պըտրտեցան. ետ-
քը երբոր չի գտան՝ ու յուսահատած պիտոր
ալ ետ դառնայինն՝ յանկարծ ծառային մտ-
քը եկաւ սամուէլ մարգարէն՝ որ հոնտեղ վան-
քը կրգտնըվեր. ու ըսաւ որ երթան իրեն հար-
ցունեն ան կորսըված էշերուն համար։ Այց
օրով առաջ ՅԾ սամուէլի յայտներ էր թէ՝ վա-
ղը աս ատեն քեզի բենիամինի երկրէն սաւու-
ղը պիտոր խրկեմ, որ անիկա թագաւոր օծես
իմ ժողովրդոցս վրա. ուստի երբոր տեսաւ
սամուէլ՝ Ճանչցաւ որ սաւուղն է. և անոր սիր-
տը հանգիստնալուն ըսելն ետև՝ թէ իր հօրը
էշերը գտնըված են, բռնեց զինքը ուրախութ
հետը առաւ սեղան տարաւ. ու հոն պատիւ
բրաւ՝ սաւուղը ամենեն վերնատեղուց, ու ա-
զիկ պատառներնալ իրեն առջևը դնել տրվաւ։
Սեղանն որ լըմընցան՝ չի թողուց որ երթա,

հապա ան գիշերը հոն բռնեց. ու առտուանց
եւաւ գրլուխը եղ լեցուց՝ ըսաւ Թէ ած քեզ
Թագաւոր օծեց իր ժողովրդոցը վրա, որ Թըշ
նամիներուն ձեռքէն իրենք ազատես։ Յետեւ
երբոր ալ իր հօրը տունն որ Ջամբելու եղաւ,
աս Թէ՞ւ ըլլալուն Ջմարտու�նշանի համար
մէկ քանի բանմը մարգարէացաւ սամուէլ,
որ ան երԹալնէնի Ջամբան իրեն պիտի հան-
տըպէին. ու հետը խօսք դրաւ՝ որ եւոքը գաղ
գաղա քաղաքը երԹա իրեն սպասէ. որ եօԹը
օրէն ետեւ ինքնալ հոն կուգա, և ինչ որ պի-
տոր ընէրնէ՝ այ կողմանէ՝ հոն տեղը իրեն պի-
տի յայտնէ։ Ան ամէն նշանները սաւուղի վրա
կատարվելէն ետքը, ինչպէս խօսք կապեր էր-
նէ, գնաց սամուէլ՝ ու բոլոր ժողովուրդը մա
սեփաԹ ժողովեց, որ հոն իրենց Թագաւոր
ընտրէ։ Ասոնի առաջ տասներկու իսրայէլա-
ցոց ցեղերուն վրա վիճակ ձգել տրվաւ ու եր-
բոր բենիամենի ցեղին վրա եւաւ վիճակը, ան
ատենը սամուէլ ածային յայտնուբ սաւուղը
պահվըտած տեղէն բռնեց բերաւ ժողովրդոց
մէջը կայնեցուց՝ ու ըսաւ, ահա ան մարդը որ
ած ձեզի Թագաւոր դրաւ։ Ամբողջ ուրախուբ մէկ բերան կանչեցին՝ Կեցցէ արքայ.
և ան օրէն ածային տրդմամբը սաւուղի քա-
վը սկսան ժողովրվիլ ուժով ու բանի եկող մար-
դիքը, որ անանկ՝ իսրայէլացոց նոր Թագաւոր
բուլթի կայնեցաւ։

ԳԼ. Բ.

Սաղոմոն մեծ յաղթութիւնը ընելէն էտեւ՝ նորէն ըսփոփոր կօծվի։

ՌՃ. թագ. ԺՃ. ԺՃ։ = Ամ Տի 2909։

Եւ բանեարէս մէկ ամսէն եւոքը՝ նասաս ամնացոց թագաւորը ելաւ իսրայէլացոց երկրին մէկ կողմը՝ յաբիս ըսած դաղայադացոց վրա. անոնքաւ դէմ կենալու ուժ չունենալով անոր խրկեցին ըսին թէ՝ մէջերնիս ուխտ ու դաշինք դնենք՝ ու անանկ քու ներքեւդ ըլլանք։ Նա՝ ասանկ պատասխան տրվաւ թէ՝ մէջերնիս դաշինքը աս ըլլա՝ որ ամէն մէկերնիդ ձեր աջ կողմի (ՅՃ՝ սաղ դիի) աչքերնիդ հանէք։ Յաւ բիսցիքը աւ որ ըսեցին՝ իրենց եօթը օր ատեն ուզեցին, ու աստին անդին իսրայէլացոց երկիրը իմացուցին աս բանը։ Սաւուղաւ երբոր լսեց ան անիրաւ բանը՝ վառվեցաւ ՌՃային զօրուք, ու սաստիկ սրդողելով առաւ իր երկու եզը կտոր կտոր ըրաւ, ան կտորվանքը չորս դին իսրայէլացոց երկիրը խրկեց ըսաւ թէ՝ ով որ սաւուղի ու սամուէլի հետ չի գար՝ ասանկ կտոր կտոր կընեն անոր եղեները։ Եւ բանովը այնպիսի սոսկումմը ձգեց ժողովրդոց սիրտը, որ ամէնը ոտք ելան սաւուղի քով եկան, բոլորը վեցհարուր եօթանասուն հազար հոգի. և ասանք սաւուղ իրեք բանակ ըրաւ անանկ ան ամոնացոց վրան որ վազեց, աղեկ ջարդմը տրվաւ անոնց՝ մնացածը ցիրուցան փախցուց կորսնցուց, ու յաբիսցիքը ազատեց։ Եւ ասով սաւուղ ժողովրդոցը շատ աչքը մնաւ, ու սրբոտերնին տաքցաւ վրան, անչափ որ՝ ոտք ելան

բռնել մեռցունել կուզէին ան մարդիքը, որ սաւուղը բանի տեղ չի սեպելով՝ գլուխ քաշեր իրեն տուրք չէին 'ի տար. բայց սամուէլ արգելեց խաղաղցուց ամմէնքը։ Այսքը սամուէլ առաւ բոլոր իսրայէլացիքը գաղգաղա տարաւ. ու հոն շնորհակալուէ զոհ մատուցանելով՝ այ, նորէն սաւուղը թագաւոր օծեց. և ան տեղը ամմէնուն առջևը սամուէլ իր ինչվան ան ատենը արդար կառավարուէ վկայութիւնը՝ ժողովրդոց բերնէն առնելով, և՝ այ իրենց վրա բրած բարերարութիւնները՝ առջևնէն դնելով, խրատեց ու յորդորեց որ իրենց թագաւորին հետ միաբան աստուծմէ վախնան, անոր պատուիրանքները պահեն։ Բայց նորէն աս բանիս նշան թէ իսրայէլացիք՝ այ մեծ անիրաւուէ ըրին որ թագաւոր ուզեցին, աղօթք ըրաւ սամուէլ՝ ու շուտմը երկինքը սկսաւ սաստիկ դոռալով անձրև թափել. անչափ որ՝ ժողովուրդը սոսկալով մեղա՛ ըսին, աղաչեցին սամուէլի, որ ան՝ այ պատուհասը դադրեցունէ։

ԳԼ. Գ.

Սաւուղ նորէն այլազգիները հարձակուիլ, ու անհնազանդութիւնը համար՝ այ ալքին կիյնա։ Յոնաթանան էր ըրած քաջութիւնը մեռնելէն կաղապ։

ա. թագ. ժգ. ժգ։ = Ամ Տի 3911։

Մէկ տարիէն ետև իսրայէլացոց պատերազմ հանտպեցաւ փղշտացոց հետ. աս բանիս համար ամմէնքը մէկտեղ գաղգաղա ժողվեցան. և սամուէլ ալ եօթն օրէն ետքը հոն գանըվելու խօսք տվեր էր՝ որ դա՝ այ զոհ մատուցանէ, ժողովրդոցը սիրտ տա պատերազմ

ելլալու. պատճառն որ՝ ամմէնքը սոսկացեր էին՝ լսելով որ իրենց թշնամիները սաստիկ ուժով եռսուն հազար կառքով վեցհազար ձիաւորով և անհամար զօրքերով վրանին կու գանկոր։ Երբոր եօթը օրը եղաւ՝ ու տեսաւ սաւուղ որ չի հասաւ սամուէլը, և ժողովուրդն ալ տրտընջալով կըցրվէնկոր, ինքը ձեռք զարկաւ զոհ մատուցանելու, որ ալ չըսպասէ՝ թշնամիներուն դէմը ելլէ։ Օ՞ոհն որ լըմընցնալու եղաւ՝ ան ատենը հասաւ սամուէլ, ու սաստիկ սրդողելով սաւուղի անհամբերութիւնը և յանդգնութիւնը վրա՝ ըսաց թէ ՝ծ քեզ ատ բանիդ համար երեսէ ձգեց, անանկ որ՝ քու թագաւորութիւդ քեզմէ քու տղիդ պիտի չանցնի. ու այնպէս թողուց ելաւ գնաց։ Ան լսելով զօրքը՝ աւելի սրտերնին կոտրեցաւ, և սաւուղի հետ միան վեցհարիւր հոգի մնացած՝ անանկ սկսան թշնամիներուն դէմ երթալ։

Ան ատենը յոնաթան սաւուղի որդին մարդու բանմը չըսած՝ միան իր կապարձակիրը (՝ր՝ սիլեհտարը) հետը առած՝ թշնամիներուն բանակը մոտեցաւ, ու գնաց մէկ լեռանմը նեղուցի բերան կեցաւ, անմնցմէ դէմը եկածը մէկմէկու ետևէ քսան հոգի չափ մեռցուց. և ասով ՝ծ անանկ վախմը շփոթութիւնը ձըգեց թշնամիներուն մէջը, որ կարծելով թէ ետևնին կեցած է իսրայէլացոց մեծ բանակը՝ սկսան ցիր ու ցան ըլլալ փախչիլ։ Երբոր այս հեռվանց տեսաւ սաւուղ, ու բանը իմացաւ թէ ինչպէս եղեր է, ինքնալ սիրտ առաւ, (մինդ երբոր ժողովուրդնալ աս բանը իմանալով նոնորէն տասը հազար մարդու չափ իրքովը ժողվեցան.) ուստի ուժով ետևնին ինկաւ աղէկ-

մը ջարդեց՝ մնացածը փախցուց։ Բ.ս մեծ յաղ-
թուեբս մէջը զարմանալին ան էր, որ իսրայ-
ելացոց կողմէն՝ բոլոր այնչափ հոգիին միան
երկուքը՝ սաւուղ ու յոնաթան գեղարդ ու
թուր ունէին, ինչու որ՝ այլազգիքը իսրայէ-
լացոց վրա տիրապետած ատենին այսպիսի
պատերազմական զէնքերը արգելը էին անոնց,
նաև երկաթագործները անոնցմէ վերցուցեր
էին. որ իսրայելացիքը իրենց երկրագործուե
խոփը՝ մանգաղը ու գերանդին սրելու համար՝
այլազգիներուն երկիրը կերթային, հոն շինել
կուտային։ Բ.այց աս փառաւոր յաղթուեն ու-
րախութիւնը մէկէն կարեց մէկ արտամալի դիպ-
վածքմը. պատճառն որ՝ սաւուղ ան այլազգի-
ներուն վրա վազելուն ատենը՝ անխոհեմուբ՝
երդումով ուխտ ըրաւ ՝՝՝ որ ան օրը ինչվան
բոլոր թշնամիները չի կոխոտվինին՝ մինչև իրի-
կուն ծոմ կենան՝ մարդ բերանը բան չի դընէ։
Յոնաթան չէր գիտեր աս իր հօրը երդումը,
ուստի մեղուներուն փեթակներուն քովէն
անցնինինի՝ խիստ անօթի ըլլալով ձեռքի
գաւազանը երկնցուց անկէց մեղրը առաւ կե-
բաւ, և անով աչքը բացվեցաւ ուժը վրան
եկաւ։ Բ.րբոր իրիկուն եղաւ՝ զօրքը ալ սաս-
տիկ յոգնած ու անօթեցած, թշնամիներէն
ինչ որ ձեռվընին ինկեր էր՝ ոչխար, հորթ ան-
համբերութիւն գետնին վրա սկսան մորթել,
ու օրինաց դէմ՝ արունթափ ուտել։ Բ.սի-
կա որ իմացաւ սաւուղ՝ մնացածը իր առջևը
բերել տրվաւ՝ ու մէկ քարիմը վրա մորթած՝
անանկ միսը արունէն մաքրած իրենց տրվաւ
որ ուտեն։ Բ.ացը ան գիշերաւ սաւուղ նորէն
ուզելով որ թշնամիներուն վրա երթա, քա-

հանային ձեռքովը հարցուց ՝այ. երբոր տեսաւ որ ՝ուծ պատասխան չի տրվաւ, գիտցաւ որ մէկ մեղքմը պատահած է, անոր համար հրամայեց որ ամմէնուն վրա վիճակ ձգվի, ու թէ որ ըսաւ՝ յոնաթանն տղես վրայալ վիճակը ելլէնէ՝ չեմ խնայեր մեռցունել կուտամ։ Վիճակը որ ձգեցին, ու յոնաթանու վրա ելաւ. սաւուղ իրեն հարցուց թէ ինչ ըներ ես. անալ ըսաւ թէ կտորմը մեղրը ուտելու համար ես պիտոր մեռնիմ մի. սաւուղալ երդում ըրաւ թէ անանկ է՝ պիտի ասոր մեռնիս։ Ինն ատենը ելաւ ժողովուրդը ասոր դէմ կեցաւ քաւ լեցի ըսին ինչպէս սպաննվի ան մարդը, որ պատճառ եղաւ խրայէլացոց ազատուելը. ու անանկ ժողովուրդը աս մեղքս վրանին առած՝ ՝այ աղօթք ընելով՝ յոնաթանը մեռնելէն խալըսեցին.

ԳԼ. Դ.

Սաւուղ ամաղէկացոց խնայելով, բոլորովին ՝այ ալչէն կելլա։

՝ա. թագ. ԺԵ։ = ԱՄ Տի 2930։

Ամաղեկացոց մեղացը չափն որ լըցվեցաւ, ՝այ հրամանովը սամուէլ մարգարէն գնաց սաւուղի, ըսաւ որ՝ ամաղեկացոց վրա պատերազմ ելլէ, և չի խընայէ բոլորը ջարդէ՝ երիկ մարդ՝ կընիկ մարդ, ինչվան մանրը տղաքնալ, ու անոնց անասուններնալ։ Սաւուղալ զօրք ժողվեց՝ չորս հարուր եռասուն հազարի չափ, ու ելաւ կոտրեց ամաղեկացիքը։ Բայց ՝այ հրամանը լըման չի կատարեց, ինչու որ ողջ բռնեց պահեց ագագ ըսած անոնց թագաւ-

ւորը, ու իրենց կենդանիներուն և ուրիշ բա-
ներուն աղէկներնալ մեղքընցաւ պահեց։ Ա-
նոր համար սաստիկ բարկացաւ ՅԾ, և աս բա-
ները սամուէլի պատմելով՝ հետը գանկտեցաւ
ու ըսաց թէ՝ զղջացեր եմ որ սաւուղը թագաւ-
որ դրի, որ ասանկ իմ խօսքըս չիմընեց։ Սա-
մուէլ ալ ան դիւերը անանկ տրտմած՝ այ առ-
ջևը ինկաւ. ու առտուն գնաց անատեռը վրա
հասաւ՝ որ սաւուղ ամաղէկացոց առած կողոպ-
պուտները այ զոհ կըմատուցանէր։ երբոր սա-
ւուղ սամուէլը տեսաւ, առջևը վազեց ու ը-
սաւ. ահա՛ այ հրամանը ինչպէս ըսերէրնէ կա-
տարեցի։ Ինչ ժամանակը սամուէլ ալ իրեն
հարցուց, հապա ինչ է ըսաւ ան ոչխարներուն
ու կովերուն ձանը որ ես կըլսեմկոր. անոալինն
տրվաւ թէ՝ ատոնք ամաղէկացոցմէ բերածս
է, որ աղէկները ժողովուրդը ուզեց պահել որ
այ զոհ ընեն։ Սամուէլալ ՅԾային նախանձով
վառեալ՝ հոն տեղը չարաչար յանդիմանեց ին-
քը, այ ըսաւ աւելի հաճոյ է հնազանդուիը,
քան թէ զոհ մատուցանելը. անոր համար
ինչպէս որ դուն ՅԾ բանի տեղ չի սեպեցիր,
ՅԾալ քեզ երեսէ կրձգէ՝ թագաւորութիւդ
ձեռքէդ կառնէ։ Ես բանէս սաւուղի սիրտը
դողալ՝ մեղա ըսաւ՝ թողուն տուր ինծի, ու
եկոր մէյտեղ այ աղօթք ըրենք որ մեղքս թող-
ցու։ Սամուէլ ալ մտիկ չըրաւ, ու երբոր երե-
սը դարձուց որ երթա, սաւուղ ետևէն վազեց,
ու անոր վերարկուն բռնեալ քաշէնինի որ չի
թողու որ երթա, կտորմը պատռեցաւ ձեռքը
մընաց. ասոր վրա դարձաւ սամուէլ նորէն ի-
րեն ըսաւ՝ թէ ասօր ՅԾ պատռեց ու քեզմէ
առաւ քու թագաւորութիւդ, որ քեզմէ աղէկ

Հարդումը ձեռքը տա. և ասաց՝ այ ըսած բանը մտի դառնար։ Դաքը սամուէլ՝ ալ տեսնելով որ սաւուղի ձեռքին չիսալըսիր՝ հետը դարձաւ եկաւ որ՝ այ աղօթք ընէ. ու ուզեց որ ադագ թագաւորը իր առջևը բերէն, անալ երբոր դողալով առջևը եկաւնէ՝ անատենը սամուէլ թուրմը առաւ՝ իր ձեռքովը հոն տեղը մեռցուց զինքը, ասանկ ըսելով թէ՝ ինչպէս քու թուրդդ անչափ կնիկները իրենց տղոցմէ զրկեր է, այսպէս ալ հիմա քու մայրդ քեզմէ զրկվի։ Այս բաներուս վրա ալ սամուէլի սիրտը բոլորովին կոտրեցաւ, թողուց երթալ արիմաթեմ իր տունը գնաց, ու անանկ քաշված նստեցաւ, մէյմընալ սաւուղի հետ չի տեսնվեցաւ։

ԳԼ. Ե.

Դաւիթը Նաբաւոր կօծվի։

ա. թագ. ԺԷ. = Սմ Ֆի 2934։

Աճ որ այսպէս սաւուղը երեսէն ձրգեց՝ անկէ ետքը սամուէլ մարգարէն մխիթարելով՝ հրամայեց իրեն որ երթի՝ բեթղեհեմ երթա, հոն յեսսէին տղոցը մէկը, որ ինքը իրեն պիտի յայտնէր՝ անիկա իսրայէլացոց վրա թագաւոր օծէ սաւուղի տեղը։ Սամուէլն ալ ասաց բանիս սաւուղէն գաղտուկ ըլլալու համար՝ որ իրեն զէնմը չընէ, բեթղեհեմ որ գնաց՝ այ հրամանովը՝ ասանկ ձան հանեց թէ՝ զոհ ընելու համար բեթղեհեմ եկեր է։ Լաստի երբոր ուրիշներուն հետ ան զոհին եկաւ յեսսէ ըսած մէկ մարդմը յուդայի ցեղէն՝ իր տղաքներովը, սամուէլ ուզեց որ յեսսէն տղաքը մէ-

կիկ մէկիկ իր առջևը բերէ՝ որ տեսնէ։ Այս պինտ առաջ տեսնելով յեսսէյին մեծ տղան եղիաբ ըսածը, սամուէլ կարծեց թէ ան ըլլա՞յ ընտրածը, բայց ՝ուծ իրեն ըսաւ թէ ատոր երեսը ու հասակին մեծութիւնը մի՝ նայիր, իմ ընտրածս ատ չէ։ մարդը մարդուն երեսը նայելով անանկ դատաստանը կընէ, բայց ՝ուծ մարդուն երեսը չի նայիր, հապա սիրտը կընայի։ Այսոր եռաւէն յեսսէն բերաւ ամենադաբ ըսածը, ա՞նալ չեղաւ. անկէ ետքը մէկալ մնացածները բոլոր եօթնալ կարգով առջևը ելաւ։ Այրբոր տեսաւ սամուէլ որ անոնցմէ մէկնալ ՝այ ուզածը չէ. յեսսէի հարցուց թէ՝ ատչա՞փ է մի բու տղաքներդդ. անալ ըսաց. մէկ պըզտիկմընալ կա որ ոչխար կարածէ, որ ան՝ դաւիթ կըսվէր. սամուէլը կանչել բերել տրվաւ անիկայալ՝ ու տեսաւ որ մէկ շիկուկ շնորհալի տղամընէր աս դաւիթ ըսածըս. և ան տեղը ՝ածային յայտնու

սամուէլ եղը առաւ անոր գլխուն վրա լեցուց՝ ինքը թագաւոր օծեց. ու ան ատենէն ի վեր՝ ալ ՝ոգին սաւուղէն ելաւ հեռացաւ, դաւթին վրան եկաւ։ Այսպէս որ սաւուղ ՝այ երեսէն ինկաւ, ալ դև մըտաւ իրեն, որ ատեն ատեն անով չարաչար կըտանջվէր. և ասնեղութիս քիչմը թեթևցընելու համար՝ մէկ քնար(՝ի՝ սանթուռ) չալօղմը փընտռէնինի՝ դաւիթը գտան սաւուղի քովը բերին. որ երբոր անոր խենթուռ ցաւը կրբռնեռնի՝ դաւիթ անուշիկ չալելով կրդադրեցըներ, կը հանդչեցներ ինքը։ Այս անկէ ետև անանկ սիրելի եղաւ դաւիթ սաւուղի՝ որ առաւ իրեն կապարձակիր ալ ըրաւ։

ԳԼՈՒԽ

Ղասէն գողիաթը էշպաննէ և անով բոլոր այլազգիներէն էշյաղնէվէն։

ա. Թագ. ԺԷ։ = Ամ Տի 1938

Այլազգիները նորէն ուժոգնալով իսրայէլացոց վրա պատերազմ բացին, սաւուղ ալիր զօրքովը գնաց անոնց դիմացնին բանակը դրաւ կեցաւ։ Այլազգիներուն բանակը մէկ հրսկա մարդմը կար՝ գողիաթ անունով, որ վեց կանգուն ու մէկ թիզմը երկան էր՝ (իբր երկու մարդու հասակէն երկան,) ու իր վրայի ունեցած զէնքերնալ անանկ խոշոր ու ահաւոր էին, գլուխը պրղնձէ սաղաւարտ դրրած, բոլոր մարմինը երկրթէ զրահով (ՅՅ՝ զրոխով) պատած. վահանը (ՅՅ՝ խալխանը) վրան առած, և ձեռքը իրէն մեծուութէ չափով մէկ ծանրը տէգմը (ՅՅ՝ մզրախմը) բռնած. (անանկ որ, կրսվի թէ բոլոր վրայի զէնքերուն ծանրուութը՝ իբր հարուր քսան հօխայէն աւելի էր)։ Այսի կա ամմէն իժիր իրէնց բանակէն դուրս կուգար, և դէպ 'ի իսրայէլացոց բանակը քամահրելով կրկանչէր թէ դուք ո՞վ էք որ մեր դիմացը ելեր էք. գոնե ըսաւ՝ ասանկ ընենք որ պարապ տեղը չի ջարդրվիք. ձեզմէն մէկմը ընտրեցէք որ դիմացս ելլէ, էս ու ան մինակ ծեծկրվինք. թէ որ ան իս յաղթելու սպանելու ըլլա՝ մենք ձեր ներքևը ըլլանք, հապա թէ ես ինքը յաղթեմ նէ, դուք մեր ներքևը ըլլաք, և ասով պատերազմը դադրի։ Սաւուղ և բոլոր իսրայէլացիքը աս սոսկալի հրսկաս ան իրէն զէնքերովը տեսնելով ու անոր ըսածը

լըսելով՝ սարսափած կեցեր էին քառասուն օր, ու չէին գիտեր ինչ ընէն. և անատենը թագ-պետ խոստացաւ սաւուղ թէ՝ ով որ սիրտ ընէ անոր դէմը ելլէ սպաննէնէ, իր աղջիկը անոր կուտա, ու ինքը իր ազգովը ազատ կըդրէ. բայց մարդ չի գտնըվեցաւ որ աս բանիս սիրտ ընէր։ Ոնց օրերը հանդըպեցաւ որ՝ յեսսէն իր պզտի դաւիթ տղան իսրայէլացոց բանակը խրկեց, որ երթա հոն իրեն իրեք եղբարներուն հաց տանի, ու տեսնէ թէ ինչպէս են։ Դաւիթ որ եկաւ աս գողիաթին բանը իմացաւ տեսաւ նէ, խիստ տաքցաւ վրան, որ մէկ անհաւատ այլազգիմը ՝այ բանակը ասանկ քամահրէ. ու սկսաւ ինքը բանակին մէջը աստին անդին ձան հանեց թէ՝ ինչ կուտան ինծի, ես աստուծով անոր դէմը կելլեմ ու կըյաղթեմ։ Ողնաբ իր մեծ եղբարը աս որ լսեց՝ չէրսեց ինքը, թէ՝ անդին ոչխարները երեսին վրա ձգեր՝ հոս ինչ եկեր հետաքրքրութի կընես, ու մեծ մեծ կը զուրուցես։

Ոտքը սաւուղի անկաձնալ որ հասաւ աս բանըս, ու առջևը կանչել տրվաւ. դաւիթ իրեն ըսաւ թէ՝ ամենևին մի վախնար, ե՛ս կերթամ՝ ան կըյաղթեմ։ Սաւուղնալ ըսաց. վախնամ թէ չի կրնաս, ինչու որ՝ դուն տղամընես, ու անիկա պզտրկուցմէ պատերազմի մէջ մեծցած մարդ է։ Դաւիթ ասոր պէտն տրվաւ թէ, ես քու ծառատ՝ իմ հօրրս ոչխարները արածելնէնի՝ երբոր առիւծ կամ արջ վրա կուգար կըյափշտակեր, ես ետևէն կրվազեի բերնէն կըփրցունէի կառնէի, ու թէ որ վրաս ելլերնէ անոր վիզէն կրբռնէի կըսպաննէի. յուսամ որ ասանկալ՝ ՝ծ աս այլազգիին ձեռքէն իս խալը

սէ, որ ան անհաւատին բերնէն իսրայէլացոց տրված նախատանքը վերցուցեմ։ Պաւուղի խելքնալ պառկեցաւ ան ատենը աս բանիս վրա. ուստի հրամայեց որ իր պարզմական երկրին հագուստները դաւթին հագցունեն, ու իր զէնքերը անոր տան՝ որ անանկ գողիաթին դէմը ելլէ. բայց դաւիթ սորված չըլլալով այս պիսի ծանրը հագուստներու և զէնքերու՝ մէկ դի թողուց անոնք, ու իր ցուպը (յր՝ տէյէնէկը) մէկ ձեռքը առած, և մէկալ ձեռքը պարսատիկը (յր՝ սափանը). ու հինգ քարալ առաւ իր մախաղին (յր՝ չանթային) մէջը դրրաւ, ա նանկ գողիաթին առջևը ելաւ։ Գողիաթին որ տեսաւ զինքը ասանկ մէկ շիկուկ ու փափուկ տղամը՝ առանց պատերազմական զէնքի իր դէմը ելած, պահ ըսաւ՝ ես շո՞ւն եմ մի՝ որ ցուպով ու քարով վրաս կուգասկոր. դաւիթ ալ իրեն պէտ տրվաւ թէ, շունէն ալ գէշ ես. ան ալ ըսաց՝ եկոր եկոր մատեցիր քովը՝ որ քու մարդ թռչուններուն ու գազաններուն տամ որ ուտեն։ Դաւիթ ալ ըսաց, դուն քու զէնքերդ վրդ իմ դիմացը ելեր ես, բայց ես՝ այ զօրութեց անունովը քու վրադ կուգամ. և յուսամ՝ ած որ քեզ իմ ձեռքիս կուտա որ ըսպաննեմ, ու գլուխդ վրայդ վերցունեմ. և քու ու քեզի հետ եղած բոլոր այլազգիներուն մարմինը աս օրիս թռչուններուն և գազաններուն տամ որ ուտեն. և ասով բոլոր աշխարքս գիտնա որ՝ իսրայէլացոց մէջն է Աշմարիտ՝ ածը, որ առանց թուրի ու զէնքի երբոր ինքը կըկամենանէ՝ յաղթուն ընել կուտա։ Ա՛յս որ ըսաւ դաւիթ՝ ու ալ բիչմը մատեցան մէկմէկու, շուտմը քարմը հանեց պարսատիկը դրաւ՝ դէպ՝ի վրան ու-

ժով քաշածինպէս, քարը գնաց գողիաթին Հակատին մէջը մտաւ, ու ան տեղը մէկէն եբեսն'ի վար գետինը փռվեցաւ ինկաւ. ան ժամանակը շուտմը վազեց վրան ցաթկեց դաւիթ, ու անոր թուրը մէջքէն հանեց անով գողիաթի գլուխը կտրեց փրցուց վրայէն։ Այլազգիները աս տեսածինպէս սկսան ցիրուցան ըլլալ փախչիլ, ու իսրայէլացիքը ետևնին խնելով խելմը ջարդեցին անոնցմէ, և բոլոր բանակը կոխեցին առին։ Այտքը դաւիթ գողիաթի գլուխը և անոր թուրնալ հետը՝ ձեռքը բռնած սաւուղի առջև նոր եկաւ, անատենը սաւուղ, ինչպէս ոմանք կըսեն՝ շատոնց դաւիթը քովէն հեռանալով, և այնպիսի գեղացի հովիւի հագուստով տեսնելով ինքը՝ չիճանծցաւ, ուստի զարմանալով վրան՝ իրեն հարցուց թէ՝ դուն որուն տղան ես։ Ան ալ պատասխան տըվաւ թէ՝ քու ծառայիդ որ յեսսե բեթղեհեմցի կրսվի։ Ան ժամանակը յոփնաթան սաւուղի տըղան՝ դաւթին աս մեծ քաջութիը տեսնալով՝ և իրեն շնորհալի զրուցվածքը լսելով, անանկ սիրտը հետը կապվեցաւ, որ իր վրայի զինվորական հագուստը և զէնքերը հանեց անոր տըվաւ, ու հետը խօսք կապեց աղբրգիր եղաւ։ Սաւուղալ անկէց ետև ալ չի թողուց՝ որ դաւիթ իր հօրը տունը դառնա, հապա իր քովը առաւ։

ԳԼՈՒԽ

Սատանայի նախանձումը դաւթի վրայ։

ՌՈ. թագ. ԺԸ. ԺԹ։ = ԱՄ Յեր 1942։

Դաւիթ աս քաջութիւն ընելէն ետև, երբոր ալ սաւուղի հետ պատերազմէն կը դառնային, անատենը իսրայէլացոց ժողովուրդը քաղաքներէն սկսան շնորհաւորելով դիմացնէն ելլելու խընտումով առջևնէն ինկած, կնիկներնալ պար բռնելով ծնծղաներ չալելով՝ անանկ ուրախութիւնէ կերգէին ու կըսէին. սաւուղը հազար ջարդեց, բայց դաւիթը տասը հազար։ Այսոր վրա սաւուղ սատիկ նախանձելով՝ սկսաւ բսել թէ նայէ դաւիթի տասը հազար տըվին, ու ինծի՝ միան հազար. ալ ինչ կրպակսի դաւիթի, միան թէ իմ թագաւորութիւնս՝ որ անալ առնէ։ Այս ան օրէն ետև սկսաւ ծուռ ծուռ նայիլ դաւիթի վրա, անանկ որ՝ մէկ օրմը իր սովորական դիւահարուելը բռնած՝ երբոր դաւիթ առջևը քնար կըչալէր, յանկարծ գեղարդը անոր վրա շըտկեց նետեց, և հոնտեղը կըսպաննէր, թէ որ դաւիթը չիժըմնէր անկեց փախչերնէ։ Այտքը աս ճամբաս գտաւ սաւուղ դաւիթը մեռցունելու. ինչպէս որ առաջ ըսինք սաւուղը իր խօսք տրվածինպէս՝ մերովը ըսած իր մեծ աղջիկը դաւիթի պիտոր տար, գողիաթը ըսպաննելուն համար. բայց անկէ ետև մոռանցունելով աս բանըս՝ հանեց անիկա ուրիշի հետ կարգեց. ետքը իմանալով որ իր մէկալ մեղքող ըսած աղջիկը դաւիթի վրա աչք ձգեր էր, մըտածեց սաւուղ որ անով դաւիթը որոգայթի մէջ ձգէ որ մեռնի. ուստի իրկեց

դաւթի ըսաւ թէ՝ քեզմէ ուրիշ բան չեմ ու-
զեր որ մեղքողաղջիկս քեզի տամ՝ ինձի փեսա
ըլլաս, հապա ինձի երթաս հարուր այլազգի
մեռցուներս. և անով սաւուղ կրցուսար որ դա-
ւթի այլազգիներուն ձեռքը իյնա մեռնի։ Այս
բանէս թէպէտ առջի բերանը խոնարհութիւն
ետ կեցաւ դաւթի, ըսելով թէ ես արժանի
չեմ թագաւորի փեսա ըլլալ. բայց ետքը դնաց
քաջութիւն սաւուղի ուղածը կատարեց, ու ողջ
առողջ դարձաւ, մեղքողը իրեն կնիկ առաւ։

Դաւթի անանկ օրէ օր ճաճային շնորհքովը
օրէստ առաջ կերթար, ու իր խոհեմութիւնը և
քաջութիւններովը սիրելի կըլլար ժողովրդոց
ը, այնչափ սաւուղի նախանձուելը անոր վրա
կէվեկնար, որ ալ յայտնի սկսաւ ետևէն իյնալ
որ ինքը սպաննէ։ Մինչև մէկ օրմը նորէն իր
դիւահարութիւը բռնած՝ երբոր առջևը դաւթի
քնար կըլալէր. ան մէկալ հեղունպէս մէյմալ
գեղարդով ուզեց որ զարնէ մեռցունէ։ Դա-
ւթալ առջևէն փախաւ իր տունն որ դնաց,
սաւուղ ետևէն մարդիք խրկեց՝ որ երթան
գիշերանց տանը դուռը առնեն՝ որ առաւօտանց
դուրս ելածինպէս բռնեն ըսպաննեն։ Մեղ-
քողը իմացաւ աս բանս՝ ու ան գիշերը գաղ-
տուկ պատուհանէն դաւթը վար ինջեցուց՝
որ երթա ազատի. և իրեն փախչելու ատեն
տարու համար՝ մէկ խամաձիկմը (կիմ խուխլա-
մը) շինեց դաւթի պառկած տեղը դրաւ՝ վը-
րան ծածկեց, ու առաւօտանց սաւուղէն խը-
կած մարդիքն որ եկան՝ անիկա ցրցուց ըսաւ
թէ՝ հիւանդ է չի կրնար դար։ Սաւուղալ
նորէն հրամայեց որ՝ թոզ մահիճովը առնեն
բերեն. ու ետքը երբոր իմացաւ աս մեղքողի

ըրած խաբեբայութիւնը, և լսեց որ դաւիթ ելեր սամուէլի քովնաւաթ հռամա ըսած տեղը փախեր է. անոր ետևէնալ թէպէտ իրեք հեղ մարդիք խրկեց, ու ետքը Ճարը հատած՝ ինքն ալ ելաւ գնաց, բայց ոչ հոնալ դաւիթը խաբսեց։

ԳԼ. Ը.

Դաւիթն սաւուղի յեռոյէն էրկիւղածութիւն՝ փախստական էղեալ։

ա. թագ. ե. խա. իբ. իդ. իդ. իզ։ = Ամ Ցի 2943։

Սաւուղ որչափ որ թշնամի էր դաւիթի, անոր ներկայը յոգնաթան իր որդին՝ սրբոյանց սատիկ բարեկամութիւն ուներ դաւիթի հետ, ու կրջանար որ հօրը սրտինալ անոր նախանձուելը և թշնամութիւնը հանէ։ Բայց ետքը երբոր փորձեց տեսաւ որ աս բանիս Ճարը չկա, գաղտուկ մէյտեղ խօսք դրած՝ դաւիթը գտաւ, ու լալով հետը պագտրվելով իրեն ըսաւ որ գլուխը քաշէ երթա՝ մէյմալ սաւուղի առջևը չերևնա։ Ուստի դաւիթալ չուշացաւ, և անանկ առանց պատրաստուելու որ Ճամբա ելաւ, շուտմը գնաց աքիմէլեք քահանայապետին հանդիպեցաւ, ու անոր ասանկ ցրցուց թէ՝ թագաւորական բանիմը համար ինքը՝ ծածուկ տեղմը խրկրված է. ու անկէց հինկ հատ օրհնած հաց ուզեց առաւ, որ իրեն և հետը եղած մարդիքներուն Ճամբու պաշար ըլլա, ու նաև գողիաթի թուրը որ ոչ նրվիրված՝ հոն կրպահվեր, անալ վրան առաւ, այնպէս ելաւ դաւիթ այլազգիներուն երկիրը գնաց՝ անքուս ըսած՝ գեթացոց թագաւորին քովը։ Բայց

անտեղնալ երբոր բանը իմացվեցաւ թէ՝ աս ան դաւիթն է որ իսրայէլացոց մէջէն իրենց դէմ ան յաղթուինները ըրեր է, անկէց դաւթի սիրտը շատ վախ ինկաւ, ուստի սկսաւ անոնց առջեւը խենթ ու խելառ բաներ ընելով՝ ա նանկ ցուցունել թէ ինքը խենթ մընէ, (կամ թուեթարրիսը). որ անով թագաւորը քովէն վրդ ընտեց՝ և ինքնալ առիթ դտաւ անկէց ել ելու ազատվելու։ Այսքը գնաց իսրայէլացոց սահմանին մօտ մոլաքացոց երկիրը, ու իր քո վը եկան իր հարը մարը եղբարները նաև ու րիշ իսրայէլացոց երկրէն փախստական մարդիք կամաց կամաց հոն ժողվեցան դաւթի հետ մէկ եղան՝ բոլորը չորս հարիւր հոգի չափ, որ ասոնց դաւիթ գլուխ եղաւ՝ իրենց վրա զօրա պետութիւն կընէր։

Այս բաներս որ լսեց սաւուղ, ու իմացաւ որ աբիմելէք քահնայպետը դաւթի տերուն է ըրեր անիկա առջեւը կանչեց՝ բոլոր իրեն նեբքեւը եղած քահանաներովը իրեք հարիւր հիսուն հոգի. ու վրանին չարաչար սրդողելով՝ հոն տեղը իր աչաց առջեւը քահանայական զգեստովնին ամմինքը ջարդել տրվաւ՝ դովեկ ասորի ըսած մարդուն ձեռքովը, որ ինքը եկեր աս բանս մատներ էր սաւուղի։ Այսքը ասովալ սաւուղի սիրտը չի պաղըշտրկեցաւ՝ խրկեց նոմբա ըսած քահանաներուն քաղաքը թրէ անցունել տրվաւ՝ բոլոր բովանդակ թէ մարդ՝ թէ անա սուն կենդանի, անանկ որ՝ միայն աբիմելէքի մէկ տղան աբիաթար ըսածը՝ խալըսեցաւ փա խաւ դաւթի քովը գնաց. որ դաւիթալ սիրով ընդունեց՝ ինքը քովը առաւ. որովհետև ը սաւ իմ՝ պատճառովս քու հարըդ բոլոր տնով

տեղովը ջարդվիլեցան։ Նկիե ետև սաւուղ ալ զօրքով ըսկսաւ դաւթի ետևէն խնալ՝ որ գը-տածինպէս սպանէ ինքը. ան պատճառով դաւիթալ իր հետը եղած մարդիքներովը ե-բեսը պահելով աստին անդին բարբարական կրսպրտրտէր, և ոճ ամէն վրտանդներէն ին-քը կրխալըսէր։

Բ։ չէ թէ միանաս, հապա երկու հեղալ այնպէս աջողեց ոճ՝ որ սաւուղ դաւթի ձեռքը ինկաւ, ու դաւիթ իր հեղուքը և անպիշաչարու-թիքը անոր բան չըրաւ. որ ասանկ եղաւ։ Բ։ դամմը անձուկ դադդայ ըսած այրին (ոյ՝ մաղա-բային) մէջը կրլլարդաւիթ. սաւուղ որ իմացաւ՝ իրեք հազար զօրքով ետևէն գնաց որ բռնէ. ու սա այրիս բերանը երբոր հասաւ, ոճ այրին նա-խասիանամուքը՝ առանց ներս մտնելու անտեղ-վանքը նստաւ հանդչել ուզեց, և հոն ամէն-նուն քունը տարաւ։ Բ։ որ ներսէն դաւթի մարդիքը իմացան, եկան իրեն ըսին թէ ահա այս օրս է՝ որ ոճ թշնամիդ քու ձեռքդ տրվաւ որ անկեց ոխդ առնես։ Դաւիթ սիրտ ըրաւ եկաւ սաւուղի քով եկաւ. ան ատենը շատ վրա տրվին իր հետը եղած մարդիքը, որ անտեղը մէկէն սաւուղը ըսպանէ խալըսի ձեռքէն. բայց դաւիթ՝ քաջ լիցի ըսաւ որ ես ոյ օծած մարդուն ձեռք դպցունեմ. նաև անոնցալ չի թողուց որ բանմը ընէն. հապա միան սաւու-ղի հագած վերարկուին ծարէն կտրեց առաւ, անանկ անոնցմէ մարդ չիմացած իր տեղը դարձաւ. ու ետքը ան վերարկուին կտրելուն համարալ դաւթի խղճմտանքը զարկաւ, որ մէկ քամահրանաց նշանմը կրսեպվի։ Բ։ զրքոր ալ սաւուղ բանմը չիմացած իր մարդիքներով

անկեց ելաւ կերթար, ան ատենը դաւիթ այ-
րէն դուրս ելաւ՝ սաւուղի ետևէն կանչեց,
տէր իմ արքայ ըսաւ՝ ինչու անոնց կրհաւատաս
որ կըսեն թէ դաւիթը քեզ մեռցունել կուզէ.
եթը ան վերարկուին կրտորը իրեն ցրցունե-
լով ըսաւ, ահա տես որ՝ ինչպէս ՝ուծ ասոր քեզ
իմ ձեռքս տրվաւ, ու ես քեզի բանմը չըրի՝
ըսի թէ օծեալ ՝ան է. որ ասով դուն իմ անմե-
ղութիս կրնաս հասկընար. անոր համար ՝այ կը-
թողում որ ինքը մեր դատաստանը կարէ։ Այ
բաներս որ լսեց իմացաւ սաւուղ, անտեղը սիր-
տը կակուղցաւ, ու դարձաւ լալով դաւիթի պիտն
տրվաւ. ատ քու ճանտ է ըսաց որդեակ իմ
դաւիթ. դուն իմէ արդար ես եղեր, որ այս-
պիսի բարիք հատուցիր իմ քեզի ըրած չարու-
թիս դէմ, որ ձեռքդ ինկա, ու դուն իս չի
մեռցուցիր. անոր համար կըհաւատամ որ ՝ուծ
ալ քեզի բարիք պիտի հատուցանէ. իմ թաւ
գաւորութիս հանէ քեզի պիտի տա. միանթէ
ըսաւ՝ քեզմէ աս կըմնդրեմ որ՝ երդում ընես
ինծի, որ իմ զաւակներըս չըսպաննես, և իմ
անունս աշխարքէս չի ջնջես։ Դաւիթալ աս
բանիս վրա երդում ըրաւ. ու անանկ մէյմէկ
բաժնվեցան։

Այց այսու ամենայնիւ քիչմը ատենէն ետև
նորէն սկսաւ սաւուղ դաւթին ետևէն իյնալ.
և վերը ըսածիսպէս ուրիշ հեղմընալ զիփացի-
ներն որ եկան սաւուղի մատնեցին թէ դաւիթ
իրենց կողմերն է. սաւուղ շուտմը իրեք հա-
զար զօրքով ելաւ ետևէն գնաց՝ եբեղատի բլու-
րին վրա բանակը դրաւ նստաւ։ Դաւիթ ա-
նոր բանակը լսեաւ իրկեց. ու իմանալով թէ
ինչպէս տեղաւորեր նստեր են. մէկ գիշերմը

որ սաւուղ և անոր աբեններ զօրապետը, ու բոլոր զօրքը չորս դին պատած պաւիկեր կրքը նանային. դաւիթ աբեսսա ըսած իր կտրիճ մարդուն հետ սիրտ ըրաւ եկաւ սաւուղի բանակը մտաւ՝ անոր քովը գնաց մոտեցաւ։ Նստեր աբեսսան որ սաւուղի գեղարդը տեսաւ իր քովը գետինը մնկած ցցված, դաւիթի ըսաց թէ՝ ահա հիմա ժամանակն է որ ոչ թշնամիդ քու ձեռքդ տրվեր է. թող տուր ըսաւ՝ որ աս գեղարդովըս մէկէն ինքը գետինը կարեմ։ Դաւիթ դարձաւ՝ մի ըսաւ մի ըներ, ով է որ ոչ օծելոյն ձեռք դպցուցեր՝ ու եռքը թողուցեր գտնէ. թողունք որ ոչ ինքը խրատէ, թող օրը գա՝ իր օրհասովը (ցաւ՝ էշ ելովը) մեռնի. միան ըսաւ գեղարդն ու ջրին բարջը առ՝ երթանք ասկէ։ Այսպէս մարդ չիտեսած չիմացած ելան գացին դիմացի լեռն ելան. ու անատենը դաւիթ դէպ ի աբեններ զօրապետը սկսաւ կանչել թէ՝ ինչու ձան չես հաներ աբեններ. անալ որ ցաթ կեց նայեցաւ, դաւիթ ինքը յանդիմանեց ըսաւ՝ դուն միան բոլոր իսրայելացոց մէջ քաջ մարդմը պիտոր ըլլաս՝ ատանկ կրպահես քու տեր թագաւորդ, որ հիմա մէկ մարդմը քու բանակդ մը տաւ ու թագաւորդ ըսպանելու կուգեր. ատ աղէկ բան չէ. ոչ կենդանի՝ որ դուք մահաւ պարտ էք աս բանիս համար. և թէ որ ըսածիս չես հաւատար՝ ահա ըսաւ թագաւորին գեղարդը ու ջրին բարջը՝ որ անոր քովն էր։ Աւուղ երբոր լսեց աս բանս. ատ ըսաւ քու ձանդ է որդեակ իմ դաւիթ։ Դաւիթալ իրեն պիտի տրվաւ թէ՝ ես քու ծառատ եմ տեր իմ արքայ. քեզի ինչ եմ ըրեր ըսաւ՝ որ ա-

տանկ իմ Եսաբոս Էս ինկեր. ատ ինչ բան է որ իսրայէլացոց Թագաւոր ագռաւիպէս լեռնէ լեռ կրպտրտի որ իս բռնէ։ Սաւուղալ նորին զղջացաւ՝ մեղայ ասաւ՝ քոլոս դարձիր քեզի բան չեմ ըներ։ Դայց դաւիթ չի գնաց. հապա իրմէ մէկը ուզեց որ գայ գեղարդը առնէ. և նորէն սաւուղ դաւթի վրա օրհնէնք կարդալով անանկ ամմէնը իր տեղը դարձան։

Այս ատեններըս սամուէլմարգարէնալ խիստ ծերացած վախճանեցաւ ու արիմաթեմ իր տունը Թաղվեցաւ. որ շատ ցաւ տրվաւ իսրայէլացոց։

ԳԼ. ԹԽ.

Ալեբաղէ ու աբիգէայի պատմութիւնը և դաւթի ուրիշ դէպվածները։

ա. Թագ. ԻԵ. ԻԷ. Ը = Ամ Տի 2947։

Դաւիթ երբոր փախստականութիւնը ատենը հետը վեց հարուր մարդով կարմեղոս լեռը կըլլար, հոն մէկ հարուստ մարդմը կար նաբաղ անունով՝ չար ու ագահմը. որ կնիկմը ուներ աբիգեա ասած՝ խիստ իմաստուն ու գեղեցիկ, և աս մարդս հազարաւոր ոչխարներու և այծերու տեր էր։ Ասոր հետ դաւիթ բարեկամութիւն կերթար, որ գողերէն կըսպասներ անոր բաները, և իր մարդիքը չէր թողուր որ նաբաղի զէնմը հացուընեն։ Ասոնք երբոր ոչխարներուն խուզելու օրերը եկաւնէ, (որ ուրախութիւն կեր ու խումով սովորութիւն էր որ կընեին,) դաւիթ տասը հոգի խրկեց նաբաղի, որ երթան իրեն դիէն քաղաքավարութիւն շատ բարև ընեն, ու ասեն որ՝ յիշէ ան իր

ըրած պահպանութիւնը, և ինչպէս որ յարմար տեսնէ՝ իրենքալ ան ուրախութէն չի զրկէ, և բենց ալ բաժինմը հանէ։ Այսաղ որ աս բանը լսեց, վրանին սրդողելով ըսաւ, ով է աս դաւիթը՝ մէկ իր տիրոջմէն փախստական ծառամը, որ ես իմ մարդիքներուս բերնէն հայս կարեմ, իմ չի Ճանչցած մարդիքներուն տամ։ Այրբոր ասոնք դարձան նաբաղն տրված պինը դաւթի որ պատմեցին, դաւիթ կրակ կտրեցաւ վրան, ու շուտմը չորս հարուր հոգի թրերը նին մէջքերնին կապած՝ հետը առաւ Ճամբա ելաւ, որ երթա նաբաղը իր բոլոր բանտերովը ջարդ բուրդ ընէ ձգէ հոն տեղը։ Այայց աս նաբաղն ըրած կոպտութին որ իմացաւ իր աբիգեա կընիկը, շատ դժարն եկաւ՝ չի հաւնեցաւ ըրածին. և սիրտը վկայելով վախնալով թէ աս բանիս վրա մէկ բոթմը կելլէ, ինքնալ շուտմը իր երկնէն գաղտուկ գնաց երկու հարուր հայ Ճարեց, երկու ամսան գինի, հինգ եփած ոչխար, և ուրիշ ալ ուտելիքներ. ասոնք հետը առաւ ելաւ գնաց դաւիթը գիմաւորեց. ու խոնարհութիւն իմաստուն և անուշ խօսքերով դաւթի սիրտը այնպէս ինչեցուց որ անալ ընդունելով բերած ընծաները՝ Ճամբէն ետ դարձաւ իր տեղը գնաց։ Այբիգեան երբոր տուն դարձաւ տեսաւ որ երկիր գինովցած ուրախութիւնի մէջ է, բան չըսաւ իրեն ան իրիկունը. ու առտրվանց ելաւ տեղն 'ի տեղը որ պատմեց իրեն՝ թէ որպիսի փորձանքէ խալըսեր են. նաբաղը վախնէն սաստիկ սրտագողէն յանկարծակիի եկաւ հիվընցաւ, ու տասը օրէն ետքը մեռաւ։ Այրբոր լսեց դաւիթ որ նաբաղը մեռաւ, փառք տրվաւ ՅՍ որ արա-

դարուԹը նաբաղի դատաստանը կըտրեց, ու խըրկեց աբիգեան բերել տըվաւ իրեն կին աւաւ

Ինկէ ետև՝ ալ տեսնելով դաւիԹ որ սաւուղի ձեռքէն ազատում չիկա՝ միշտ և հանապազ իր ետևէն կըպտրտի կոր, նորէն՝ իրեն հետի վեցհարուր մարդովը իր կնիկներով տընով տեղովը՝ ելաւ գնաց այլազգիներուն երկիրը՝ անքուս ըսած գեԹացոց Թագաւորին քովը։ Այց աս անգամ դաւիԹ անչափ սիրելի եղաւ անքուս Թագաւորին որ՝ սիկելակ բաւած քաղաքը հանեց իրեն տըվաւ, որ իր մարդիքներովը հոն բունէ նստի։ ԴաւիԹալ անքուսի աս ծառայուԹիը կըներ. որ ատեն ատեն անոր Թշնամիներուն վրան կելլեր գերի կըբռներ՝ և շատ կողոպուտներ ձեռք կըձգեր. որով դաւիԹի անունը օրէ օր էվէլքք կըմեծնար չորս դին կըհըրաւակվեր։

Ի տեղս մէկ ցաւալի դիպվածը դաւիԹի հանդիպեցաւ, Թէպէտ ետքը աջող վերջացաւ. որ ասանկ եղաւ։ Իսրայէլացոց վրա այլազգիքն որ պատերազմ բացին՝ ինչպէս ետև պիտի պատմենք, անքուս Թագաւորնալ ան այլազգիներուն հետ դաշնակից ըլլալով, դաւիԹնալ իր մարդիքներով հետը ուզեց առաւ որ իսրայէլացոց դէմ երԹա։ Քոր վրա անքուսի իշխանները ՀՀդոհալով իրեն հասկրցուցին ԹԷ՝ դաւիԹ իսրայէլացի դանըվելով՝ իրենց դին պիտի բունէ՝ մեզ անոնց մատնէ, ԷՆ։ Ինպէս ետ որ դարձաւ դաւիԹ՝ իրեք օրէն ետև սիկելակ դա տեսնէ որ՝ ամաղեկացի իր Թշնամիները եկեր սիկելակը կոխեր յափըշտակեր են, քաղքին կրակ տըվեր եբեր են. ու

մէջն մարդիքը և կնիկները բոլոր կահ կարա-
սիներով քաշեր դերի տարեր են։ Այս ողորմ-
լութիւն բաւական չէ՝ ան ատենը նաև դաւթի
հետ եղած մարդիքն ալ՝ իրենց կընիկներուն
ու զաւկներուն վրա սրտերնին երած, դաւթի
վրա դարձուցին իրենց կատաղութիւնը, անչափ որ
անտեղը կուզէին բռնել քարկոծել. իբր թէ
ինքը պատճառ է աս բաներուս։ Դաւիթալ
ան ատենը սաստիկ նեղած էր գիտեր որ դին
դառնա՝ ինչ ընէ։ Վերջը այ դիմելով հրաման
առաւ, անանկ չորս հարիւր մարդով ելաւ գը-
նաց ան ամաղեկացիները գտաւ. ու առտրվանց
ինչվան իրիկուն հետերնին պատերազմ ընե-
լով բոլորը ջարդեց. և բովանդակ յափշտակած
բաներնին, կնիկներով՝ ողջառողջ առաւ ետ
դարձաւ։ Այսպէս աջողութիւն դառնալէն ե-
տեւալ թէպէտ մէկ կռիվմը ծագեցաւ դաւթի
մարդիքներուն մէջը. որ ան չորս հարիւր հոգի
պատերազմ գացողները՝ ասոնի մնացած երկու
հարիւրին՝ իրենց կնիկներէն տղոցմէն 'ի զատ
ուրիշ բան չէին ուզեր տալ, ըսելով թէ մենք
գացինք աշխատեցանք, բոլոր առած կողո-
պուրանիս մեզի կլինա. բայց դաւիթ մէջ
մտաւ յորդորեց իրենք որ սիրով ամմէնուն հա-
ւասար բաժին հանեն։ Այս աս բանսալ անկէ
ետև օրէնք եղաւ իսրայէլացոց մէջը, որ պատե-
րազմի կողոպուրը՝ քաղաքը մնացող պահողին
և պատերազմ գացողին մէջը հաւասարապէս
բաժնվի։

ԳԼ. Ժ.

Սաղոմոնի մահը, ու դարձեալ անոր վրայ ըրած բարի հարցումը։

ա. Թագ. իբ. լա. բ. Թագ. ա. բ։ = Ամ Յն 2948. 2949։

Այս ատենները այլազգիները մէկ եղան զօրքերնին մէյտեղ ժողվեցին, ու սաստիկ ուժով իսրայէլացոց վրա պատերազմ բացին։ Սաւուղալ բոլոր իսրայէլացիքը ժողվեց՝ գնաց գեղբվե ըսած լեռանը քովը՝ անոնց դէմ բանակը դրաւ. բայց երբոր տեսաւ այլազգիներուն բանակը ահաւոր պատրաստութիւն սիրտը վախ ինկաւ. ուստի այ դիմեց Հարցուց Թէ ինչպէս պիտոր ըլլա աս պատերազմիս վերջը, կամ ով պիտի յաղթէ։ Երբոր տեսաւ որ ամենևին իրեն պատասխան չի տրվաւ, ոչ տեսիլքով՝ ոչ մարգարէի ձեռքով. ան ատենը ինքնալ ելաւ լաթերը փոխեց անանկ գաղտուկ գիշերանց մէկ վհուկ (այ՝ պիւյիւձիւ) կընկանմը քով գնաց, որ իրեն ցուցունէ սամուէլ մարգարէն, որ երկու տարիով առաջ մեռած էր։ Ա հուկ կնիկը առջի բերանը քիչմը դրժվարութիւն ցրցունելէն ետքը՝ իրեն երևցուց սամուէլ մարգարէն, որ սրգողելով սաւուղի ըսաց, ինչու իս աշխատցուցիր տեղէս շարժեցիր, ինչ եկեր կըհարցունես ինծի, որ ած քեզ երեսէ ձգերէ, և քու Թագաւորութիւդ ձեռքէդ քաշէ առնէ՝ դաւթի պիտոր տա, որովհետև դուն այ հնազանդուն չըրիր. ու քեզ քու հետդ եղած իսլացիներովը այլազգիներուն ձեռքը պիտի մատնէ, անանկ որ՝ վաղը դուն տղոցդ հետ պիտի մեռնիս։ Այս որ լսեց սաւուղ՝ սարը

սափած հոն գետինը ինկաւ, որ ետքը ծառաները եկան ձորով ոտք հանեցին. և ինկանը պատրաստած կերակուրին կերաւ քիչմը ուժառաւ, անանկ գիշերանց նորէն ելաւ իր բանակը դարձաւ։

Հրբոր ատենը եկաւ պատերազմ սկսան իսրայէլացիքը մէկէն յաղթըվեցան, սկսան փախչիլ և շատ մարդ ջարդըվեցաւ, անոնց մէջը սաւուղի իրեք տղաքնալ զարնըվեցան ինկան. և սաւուղալ տեսնելով որ ինքնալ նետով չարաչար զարնըվեցաւ, յուսահատած՝ ըսաւ իրեն կապարձակիրին որ թուրը հանէ իրեն խօթէ մեռցունէ, որ չըլլա թէ այլազգիներուն ձեռքովը մեռած ըլլա։ Կապարձակիրին որ ետ քաշվեցաւ չուզեց աս բանը ընել. ան ատենը սաւուղ առաւ իր թուրը՝ ու փորուն կոթընցունելով վրան ինկաւ՝ անանկ մեռաւ։ Հրբը իր կապարձակիրնալ աս տեսնելով՝ չդիմացաւ՝ ինքնալ իր թրին վրա ինկաւ զինքը մեռցուց։ Պանակ որ եղաւ՝ այլազգիները մեծ խնտությամով եկան սաւուղի դլուխը վրայէն կըտրեցին, ու քաղքէ քաղաք իրենց կուռքերուն տաճարները շնորհակալուք տանելով պատցունելով՝ իր զէնքերուն հետ մէյտեղ, բերին դաչոնի տաճարը դրին. ու նախատանքի համար՝ իրեն և իր տղոցը մարմինները բեթսան քաղքին պարիսպէն վար կախեցին։ Որ ետքը գիշերանց դաղտուկ յաբիս գաղայադացոց կարիճները եկան անկեց գողցան ան մարմինները, յաբիս քաղաքը բերին թաղեցին. ու քաղաքացիներնալ եօթը օր մեռելի սուգ կատարեցին վրանին, ինչու որ՝ իրենքալ բենիամենի ցեղէն էին։

Լայց դաւիթ աս բաներուս վրա ուրախանալու տեղը, որ իրեն թշնամին մեռաւ կորսըվեցաւ, եվելոք սրտանց՝ ցաւ ցրցուց ու լացաւ, անանկ որ՝ մէկ ողորմուկ ողջմբնալ ըսաւ սաւուղի և յոնաթանի վրա. և յարիսցոց երախտագիտութիւնը շատ գովելով օրհնեց իրենք։ Լչ մանաւանդ աս եաբի գործքովսալ աւելի յայտնեց իրեն բարի սիրտը սաւուղի վրա. որ այսպէս եղաւ։ Լս պատերազմէս երկու օր ետև՝ մէկ ամաղեկացիմը բուրդուբասու սիկելակ եկաւ դաւթի առջևը ելաւ, իբր թէ խորայելացոց բանակէն խալըսած կուգա։ Լաւիթ հարցուց իրեն թէ՝ ինչպէս եղաւ խորայելացոց բանը, ովով ինկաւ, սաւուղ ու յոնաթան ինչ եղան. անիկայալ պատասխան տըվաւ թէ՝ եսալ գեղըվէ լեռն էի, հոն տեսա որ սաւուղ իր նիզակին (ՅՅ՝ մղրախին) վրա կըռթընած զինքը մեռցունել կուզեր. երբոր դարձաւ իս տեսաւնէ, կանչեց աղաչեց որ վրան ելլեմ կոխեմ որ շուտով մեռնի, եսալ այնպէս ըրի. ու մեռնելէն ետքը՝ ահա անոր գըլխու թագաւորական թագը ու թևի ապարանքները առի հրամանոցդ բերի։ Լս որ լսեց դաւիթ՝ սաստիկ տրտմութիւն վրայի լաթը պատռեց. ան որ տեսան իր քովի մարդիքնալ՝ անանկ տրտմութիւն ցրցուցին, և ինչվան իրիկուն սուգ կեցան լացին ծոմ պահեցին։ Լյտքը նորէն դաւիթ ան մարդը առջևը կանչեց ու իրեն ըսաւ, հապա դուն ինչպէս չվախցար որ աստուծմէ օծած մարդուն ձեռք դրպցուցիր ըսպաննելիր. և շուտմը հրամայեց որ՝ հոն իր առջևը ան ամաղեկացին ըսպաննեն, ու ըսաց՝ արունարդ քու գլուխդ ըլլա, որ քու բերնովդ բըռնըվեցար։

ԳԼ. ԺԱ.

Սաւուղի պառնը կը մատի, ու դաւթի թագաւորութիւնը հաստատի

Բ. Թագ. Բ. Գ. Դ. Ե. ա. Մնաց. ԺԵ. Ամ Տի 2956.

Սաւուղի մեռնելէն ետքը՝ դաւիթ ամ հրամանովը՝ իր ամէն մարդիքներով և կնիկներովը՝ այլազգիներուն երկրէն սիկեղակ քաղքէն ելաւ, իսրայէլացոց երկիրը դարձաւ, յուդայեն ցեղէն քերբոն ըսած քաղաքը եկաւ բնակեցաւ։ Հոն պէտք առաջ յուդայի ցեղէն մեծամեծները եկան զինքը թագաւոր օծեցին, որ այսպէս եօթը տարի ու կէս թագաւորեց դաւիթ միայն յուդայի վրա։ Պետոնն որ՝ աբենեսեր խօսքի տէր մարդ՝ իսրայէլացոց զօրապետը, սաւուղը մեռնելէն ետև՝ անոր յեբուսթէ ըսած տղան առաւ իսրայէլացոց տասնըմէկ ցեղէն վրա հօրը տեղը թագաւոր դրաւ. ու անանկ միշտ կրուիվը ու պատերազմը պակաս չէր ըլլար անոնց՝ և դաւթի մարդիքներուն մէջը. թէպէտ դաւթի բանը օրէօր այ յաջողութիւնը առաջ կերթար, ու մէկալներունը ետ կրմընար։ Այսքը աբենեսեր մէկ պատճառովմը յեբուսթէի հետ որ աւրրվեցաւ, ալ ետևէ էր որ անիկա թագաւորութէն ձգէ ու բոլոր իսրայէլացիքը դաւթի դարձունէ. բայց աս բանս եփելու ատենը՝ յովաբ դաւթի զօրապետը՝ որ առաջուց աբենեսերի ոխ պահէր էր՝ իր ասայել ըսած եղբարը ըսպաննելու համար, աբենեսերը խաբեբայութիւն կանչել տրվաւ, ու մէկէն զարկաւ մեռուց։ Անոր վրայալ շատ ցաւեցաւ՝ սուգ մնաւ դաւիթ, և մարմինը

պատվով թաղել տրվաւ, ու յովաբա սաստիկ սրդողելով՝ անէծք կարդաց վրան։

Իսկ ետև շատ չանցաւ որ յեբուսթէն մէկ օրմը քնուն մէջը՝ իրեն երկու զօրապետները գաղտուկ գացին մոթեցին, և գլուխը առին դաւթի ընծաբերին՝ իբր իրեն աչքի լուս ընելով։ Այց դաւիթ իրենց շնորհակալ ըլլալուն տեղը. ինչպէս մէկալ սաւուղի մեռնելուն աւետիս բերողին ըրաւ, ասոնց վրայալ սաստիկ բարկացաւ, որ անմեղ մարդը անանկ անողորմուք ըսպաններ են, ու շուտմը հրամայեց որ ան երկու հոգինալ հոնտեղը բռնեն մեռցունեն, և ձեռվընին ոտվընին կտրեն՝ տանին կախեն, ու ան բերած յեբուսթէի գլուխը մեծարանքով գերեզմանը թաղեն։ Այս բանը բովը դաւիթ իսրայէլացոց աւելի աչքը մտաւանոր համար՝ ալ տեսնելով անոնք որ սաւուղի ազգէն ուրիշ թագաւորուե յարմար մարդ չիմընաց՝ մէկ մեմիբոսթէն 'ի զատ, որ յոնաթանի որդին էր, ան ալ պզտի տղամը՝ ու ոտվընները կաղ անդամալուծ, (որ ետքը դաւիթի իր հօրը սիրուն՝ ինքը քովը առաւ իր սեղանէն կրկերցուներ.) իսրայէլացոց տասնըմէկ ցեղերուն մեծամեծները ելան քեբրոն քաղաքը դաւթի քով եկան, և հետը մէյտեղ ուխտ ու դաշինք ընելով՝ ինքը նորէն թագաւոր օծեցին բոլոր իսրայէլացոց տասվերկու ցեղին վրա։

Դաւիթ երբոր բոլոր իսրայէլացոց վրա տերուելը առաւ, և անով աւելի որ ուժվցաւ, ուզեց որ երթա առաջ երուսաղէմը առնէ՝ իր լեռանը վրայի ամրոցովը (Յ՝ խալէովը), որ սիոն կըսվէր. անատենը անհաւատ յեբուսացոց ձեռքն էր։ Երբոր վրան գնաց պաշարեց,

թշնամիները ներսէն ծաղր ընելով՝ դաւիթի ասանկ պատասխան խաւրեցին թէ՝ դուն հոս չէս մնար, պատճառն որ՝ կուրերը ու կաղերը քեզի դէմ եկեր՝ կրսեն թէ դաւիթը հոս պիտի չմտնէ։ (Ինչպէս ոմանք կրսեն՝ որ աս ըսել էր թէ, պարապ տեղը ետևէ մի խնար, ինչու որ՝ անանկ անառիկ է բերդերնիս՝ որ միան մեր կուրերը ու կաղերը դնենք անիկա պահելուն՝ մարդ չի կրնար անոր ուժ հասցուներ առներ)։ Այց աս խօսքը դաւիթ առնոց վրա դարձուց իր զօրապետներուն խոստացաւ որ՝ ով որ բերդին վրա վազէ առնի՝ և ան կուրերը ու կաղերը ջարդէ անկեղ վերցուներ՝ անիկա իմ զօրապետս ըլլա։ Այս քաջուիս յովաբ որդի շարուհեայ ըսածը՝ կատարեց, որ վրանին վազեց առաւ՝ դաւիթի ըսածինպէս ըրաւ. և ասով իր զօրապետուիր նորէն հաստատվեցաւ։ Դաւիթալ հոն իրեն նորէն քաղաք շինեց, և անոր մէջը իր փառաւոր թագաւորական պալատը ազնիւ փայտերով, որ քիրամ տիւրոսի թագաւորը իրեն խրկեց։ Այսքը այլազգի փղշտացիները երբոր իմացան որ դաւիթ ասանկ օրէ օր կըմեծնա կուժոնկոր, վախնալով թէ օրմը յանկարծ վրանին եկլէ. անոր համար իրենք առանց իմացուներու՝ մէկէն իսրայէլացոց երկիրը թափեցան, ու բեթղէհէմի և եղէմի մէջ տեղը բանակնին դրին։ Դաւիթալ այ հարցուց՝ ու այնպէս ասոնց վրա որ եկաւ, ան ատենը սաստիկ տաքուն դաւիթ ծարվեցաւ, ու ինքիրեն զուրուցեց՝ հայ թէ ըսաւ մէկը ինծի բեթղէհէմի դրան քովի հորէն ջուրմը բերեր՝ որ խմէի ծարաւը անցնէր։ Այս որ լսեցին՝ իրեք հոգի իր

քաջ զինվորներէն շուտմը վազեցին գացին թշնամիներուն բանակը ձրդքեցին մէջը մտան ու մէկ ամանովմը ան ջրէն քաշեցին՝ առին դաւիթի բերին։ Դաւիթ երբոր աս բանը տեսաւ սիրտը լեցվեցաւ, քաւ լեցի ըսաւ՝ որ ատ մարդիքներուն արուինը ես խմեմ՝ որ իրենց կեանքը մեռնելու վտանգի մէջ դրած՝ անանկ բերին ինծի. ու չիխըմեց այ նրվիրեց ան ջուրը։ Դտաւ ան թշնամիներուն վրա քալելով՝ յաղթեց. և անանկ չարաչար հալածեց որ՝ իրենց ուրիշ բաներուն հետ կուռքերնինալ հոն թողուցին անանկ փախան։

ԳԼ. ԺԱ.

Դաւիթ՝ այ դասպանէն էրվերցուն էրուսաղէմ էրթալ։

բ. Թագ. գ։ ա. Մնաց. ԺԳ։ = Ամ Տի 2959։

Ինկեց ետքը ասծային օգնուքը ուրիշ յաղթութիներալ ըրաւ դաւիթ այլազգիներուն դէմ. և ամէն կողմանէ իր բանը աջող երթալով, ուզեց որ՝ի շնորհակալուի այ բարերարութեցը՝ այ տապանակը կարիաթարիմէն վերցուցնէ՝ իր նոր շինած եղէմ քաղաքը բերէ հանգչեցուցնէ։ Ամստի բոլոր իսրայէլացոց մեծամեծները և զօրացիները մէյտեղ եկած, անանկ եօթանասուն հազար մարդով կարիաթարիմ գացին, ամինադաբի տունէն տապանակը վերցուցին մէկ նոր սայլիմը վրա դրին, և ուրախուբ առջևէն կերպ կերպ նրվագարանները (այ՝ սազեր) չալելով, և այ գովասանքներ կարդալով. ու ինքը դաւիթալ հագված կապված մէյտեղ առջևէն պար յաթիկելով՝ անանկ

Համբա Ելան տապանակը կրբերին։ Երբոր հասան քելին ըսած մէկ տեղը, սայլին կովերուն մէկը անկարգ քալելով տապանակը ծռեցնատեսը ոգա զևտացինալ ամինադաբի տղան՝ որ տապանակին քովէն կերթար, (ինչպէս կըսեն՝ վախնալով որ չըլլա թէ կործանի,) ձեռքը որ երկընցուց բռնեց տապանակը, ան տեղը ՀԱԾ ինքը պատժեց որ յանկարծակի գետինը փուլեցաւ մեռաւ։ (Այս պատիժըս ՀԱԾ ինքն տըվաւ կըսեն՝ կամ որ՝ թէպէտ ոգան զևտացի էր՝ բայց քահանայ չէր, որ անոնց միայն կիյնար անմիջապէս ծառայել տապանակին ՀՅ. և կամ որ քէնյբը օրինաց դէմ ուսերնին վրա չէին վերցուցած տապանակը, հապա սայլի վրա դրեր էին։) Այս սոսկալի պատիժս որ հանդրպեցաւ, ամմէնքը զարհուրեցան. և անկէ ետև դաւիթալ վախցաւ տապանակը թագաւորական քաղաքը իր տունը տանելու. ուստի մտածեց որ ան տեղվանքը մօտ՝ աբեդդար գեթացի ըսած զևտացիին տունը տանին դնեն. ինչվան որ տեսնէ քանը ուր կրվերջանայ։ Երբք ամէն ետև երբոր լսեց իմացաւ դաւիթ՝ որ տապանակին պատճառովը օրհնեց ՀԱԾ աբեդդարի տունը տեղը՝ որ ամմէն բարիքներով ու յաջողութիւն լեցվեցաւ, ան ատենը ինքնալ սիրտ առաւ, ուզեց որ նորէն անկէց տապանակը վերցունէ առնէ եղէմ տանի, և հոն մնանաւոր անոր համար շինած խորանին մէջը դնէ։ Ուստի առջինէն աւելի պատրաստուիւ ու հանդիսաւորուիւ՝ կարգացմունքներով՝ և ծնծղաներով դնաց անկէց տապանակը վերցուց, ու այնուհետև զևտացիներուն և քահանաներուն ուսը դրած բարձած անանկ

աւելի մեծարանքով առաւ երուսաղէմ բերաւ։

Ի՛նչ երկրորդ անգամ տապանակը բերելու հանդիսաւէս ատենը՝ դաւիթալ որ բեհեզէ պատմուճանը, (կամ բարակ խուսմաշէ վերարկուն) հագած, ուրախութիւն տապանակին առջևը կը յաղեր ու պար բռնելով որ կը խաղար. և ան վերէն պատուհանէն տեսնելով մեղքոյ սաւուղի աղջիկը, իրեն անչընորք բանմը երևցաւ դաւիթի ըրածը. ուստի երբոր հանդէսը լըմընցաւ՝ դաւիթ տուն դարձաւնէ, մեղքոյ ծաղը ընելով առջևը ելաւ, ասօր ըսաւ՝ ինչպէս փառաւոր կերևաւոր իսրայէլացոց թագաւորը՝ որ անանկ սօթտրված իր ծառաներուն և աղախիններուն առջևը, մէկ կաբաւչի (կամ չէնկիմը) պէս կը խաղար ու կը ցաթի կէր։ Դաւիթալ իրեն պատասխան տրվաւ, անանկ է ըսաւ՝ այ առջևը կը խաղամ. օրհնեալ է տէր ած՝ որ մէկդի ձգեց քու հարը և եղբարներդ, ու իս առաջնորդ ընտրեց դրաւ իրեն իսրայէլացոց ժողովրդոյը վրա. իրաւ է՝ կը խաղամ պար կը ցաթի կեմ այ առջևը, որ ասանկ քու դիմացդ ցած բանմը կերևամ. ու աղախիններուն առջևը ինչպէս ըսիր նէ՝ կը փառաւորվիմ։ Ինոր համար ՝ՀՀծաղ՝(ինչպէս կը ցրցունէ ՀՀծաղաշունը,) աս բանիս պատիժ, մեղքոյ ամենևին զաւակ չի տրվաւ։

Դաւիթ երբոր տապանակը եղէմ բերաւ՝ ու անոր համար շինած խորանին մէջը որ դրաւ, ետքը սկսաւ խոնարհանքը զարնել թէ՝ ինչպէս կը լլա որ ես լան ու արձակ փառաւոր պալատի մէջ բնակիմ, ու այ տապանակը ան պզտի խորանին մէջը անանկ կենա. անոր համար կանչեց խորհուրդ ըրաւ նաթան մարգարէին հետ,

որ ձեռք զարնէ՝ այ մէկ իրէն արժանաւոր մեծ փառաւոր տաճարմը շինէ։ Այլ այս ասաց նաթան մարգարէն նորէն իրէն իրկեց ըսաւ որ՝ դուն ինծի տաճար մի՛ շիներ. հապա քեզի մէկ որդիմը պիտոր տամ որ քու մեռնելէտ ետև՝ ան տեղը կընստի, և աս պատիւրս անոր պիտի ընեմ, որ իմ տաճարս ինքը շինէ։

ԴԱՎԻԹ

Դաւթի որդիք յաղթութիւնքը, որ իր թշնամիներուն՝ և պատերազմներուն։

Բ. Թագ. Բ. Թ. ԺԵ։ = Սմ Ցի 2965։

Մինակ ետքը ալ ուրիշ շատ յաղթութիւններ ալ ըրաւ դաւիթ այլազգի թշնամներուն դէմ, ու անոնց ձեռքէն շատ տեղվանք առաւ. և իրենք որ իսրայէլացոցմէ հարկ կառնէին, տակը առաւ անոնք իրեն հարկատու ըրաւ, ինչպէս եդոմայեցիքը, մովաբացիքը, ամմոնացիքը, ու ասորիքը. և ասով էվէլօք ոսկի՝ արծաթ՝ պղինձ դիզեց դաւիթ, որ ետքը տաճարը շինելու ատենը պէտք եղաւ,

Վերջը ժամանակ խաղաղանալէն ետև՝ հարկ եղաւ որ դաւիթ նորէն պատերազմ բանա ամմոնացոց վրա. և ասոր պատճառը ան էր որ, նաաս ըսած ամմոնացոց թագաւորը դաւթի հետ խիստ սիրելի բարեկամ ըլլալով, երբոր ինքը մեռաւ՝ դաւիթ անոր անոն ըսած տղին, որ հօրը ետևէն նստաւ, երկու դեսպան իրկեց, որ քաղաքավարութիւն իր կողմանէ երեթան հօրը մահվանը ցաւակից ըլլան ու մխիթարեն։ Այս անոն իրեն իշխաններուն տրված ծուռ խորհուրդը մը ընելով, (որ

կրսէին թէ դաւիթ ատ մարդիքը քու երկիր-
ները զրտեսուի ընելու խաւրեր է.) ինքնալ
բռնեց ան դեսպանները խոյտառակելու հա-
մար մորուքնին ածրելլ տրվաւ, և վրայի լա-
թերնին մէջքէն 'ի վար կտրած, անանկ նա-
խատանքով վռընտեց քովէն։ Այս որ լսեց դա-
ւիթ՝ խրկեց իրենց ըսաւ որ երիքովը կենան
ինչվան մորուքնին բուսնի երկրենա. և ինքը
ամոնացոց վրան չարաչար սրդողած՝ ուզեց որ
պատերազմով անոնց ըրած քամահրանքին հա-
տուցումը տա։ Ասստի յովաբ զօրապետը իր
կտրիճ զօրքերովը ամոնացոց դէմը խրկեց որ
անոնքալ առաջուց աս պատերազմիսվրա կռահ
երթալով՝ ասստիէն անդիէն շատ զօրք իրենց
օգնութի առեր էին։ Յովաբ՝ իր զօրքին կէսը
աբեսսա զօրապետին ձեռքը տրվաւ, և կէսը
ինքը առած՝ ասոնց դէմ ելան, ու քաջութիւն
եօթերհարուր պատերազմական կառքեր, և
քառասուն հազար ձիաւոր ան պատերազմին մէջը
կոտրեցին, և անոնցմէ փախչելով ապրածները
իրենց տակը առին՝ դաւթի հարկատուրին։
Այսքը ամոնացիները աս ջարդովը չի
կրտացած՝ նորէն որ ուզեցին պատերազմ ելլել,
դաւիթ մէյմալ խրկեց յովաբ զօրապետը,
որ ալ ան ատենը աղէկմը ջարդեց իրենք. ու ա-
ռաջ քաշեց ինչվան իրենց ռաբաթ ըսած թա-
գաւորական քաղաքը որ հասաւ պաշարեց՝ և
առնելու մտա էր, խրկեց կանչեց դաւիթը՝ որ
ինքը գա իր անունովը առնէ։ Անանկ քաղա-
քը որ առին՝ չարաչար տանջանքով ըսպաննե-
ցին մէջի մարդիքը, ու շատ կողոպուրտ ան-
կեց վերցուցին. որ ասոնց մէջը թագաւորա-
կան թագը կամ ամպհովանին խիստ փառա-

ւոր բան էր՝ տաղանդմը ոսկի ծանրութի ու-
նէր, (որ ինչպէս կրսեն՝ իբր տասնը հինգ հօխա
կուգար,) սուղ քարերով զարդարած. որ անկի
ետև անիկա դաւիթ ինքը առաւ բանեցուց։

Այս պատերազմիս ատեններէն դաւիթ եղէմ
իր տունը հանդիստ որ նստած էր, մէկ օրմը
իրիկվան դէմ թագաւորական պալատին տա-
նիքին վրա Ժուռգալնինի յանկարծ տեսաւ որ
մէկ աղվոր կնիկմը անդին աւազանին քովը
կրվլացվիկոր. դաւիթ անոր ցանկութիւնը վառ-
վեցաւ. ու իմանալով որ ան բերսաբէն է՝ ու-
րիա քետացիին կնիկը, որ իր զօրապետներին
մէկն էր, խրկեց քովը կանչել տրվաւ։ Այս ա-
նոր հետ մեղքը կատարելէն ետև՝ երբոր լսեց
որ կնիկը յղի է, աս խայտառակութիւնը ա-
սանկ գոցել ուզեց, շուտմը խաւրեց յովաբի
քովէն ուրիա քետացին եղէմ իրէն բերել տր-
վաւ, իբր թէ անկեց պատերազմին որպիսուիր
տեղն՝ի տեղը իմանա։ Երբոր ուրիան եկաւ
դաւիթի առջևը եկաւ, դաւիթ պատերազմին
բաները իրէն հարցունելէն ետև՝ ըսաց որ իր
տունը երթա վրացվի սրբրվի՝ քիչմը հանգչի։
Այայց ուրիան իր տունը չիգընաց, հապա դաւ-
թի պալատը ծառաներուն քովը մնաց՝ հան
պառկեցաւ։ Դաւիթն որ աս իմացաւ, կան-
չեց նորէն իրէն ըսաւ որ՝ Ճամբէ եկած ես՝ գը-
նա տունդ հանգչէ. անաղ պատասխան տրվաւ
թէ, տապանակը այ ու բոլոր ժողովուրդը ան-
դին վրաններուն նեղրև են. և յովաբ իմ տերը,
ու քու մէկալ ծառաներդդ բաց տեղը կեցեր
են, ինչպէս կրլլա որ ես իմ տունս երթամ
ուտեմ խրմեմ ու կնկանս հետ պառկիմ, քաւ
լիցի որ ես ատ բանդ ընեմ. անոր մէկալ օրն

ալ դաւիթ եղէմ բռնեց ուրիան, ու իր քովը աղէկմը կերցունելէն խմցունելէն ետև, տեսաւ որ ան գիշերնալ չար չեղաւ՝ ուրիան իր տունը պառկելու չի գնաց, անատենը դաւիթ ուզեց որ առջի գործած մեղքը մէկ ուրիշ աւելի մեծ մեղքովը գոցէ։ Ասոնի առտըվանց որ եկաւ ուրիան իր տեղը ճամբելու՝ յովաբի մէկ գաղտուկ թուղթը գրեց՝ իրեն ձեռքը տըվաւ որ տանի, և անոր մէջը կըհրամայէր որ՝ ուրիան առնէ պատերազմին վտանգաւոր կողմը գնէ՝ ու ինքը մինաւոր թողուն որ զարնըվի մեռնի։ Յովաբալ դաւիթի ըսածինպէս խեղճ ուրիան անանկ անիրաւութիւն սպանելէն ետքը՝ երբոր իրեն խրկեց խմացուց. դաւիթի կեղծաւորութիւնը՝ առջի բերանը սաստիկ սրդողել ցրցուց յովաբի անխոհեմութիւնը վրա, որ առաջ վագեր իրենք վտանգի մէջ ձգեր էն. բայց ետքը դարձուց բանը՝ թէ յովաբի ըսէք որ սիրտը չի կոտրի, պատերազմին բանը ասանկ է, թուրը երբեմն աստիւէն կըկտրէ, երբեմն անդիւէն. ուստի դուն մի յուսահատիր ըսայ՝ նայէ որ քաղաքը առնես։ Ներսաբէն ալ երբոր խմացաւ որ իր երիկը ուրիան մեռեր է՝ սաստիկ սուգ մտաւ. ու սուգը անցնելէն ետև դաւիթ ինքը քովը առաւ, իրեն կընիկ ըրաւ։

Այց աս բաներուս համար խիստ բարկացաւ ած դաւիթի վրա, ուստի այն չնութիւնը զաւակը աշխարքը գալուընպէս՝ խրկեց նաթան մարգարէն, որ գնաց դաւիթի առջևը եկաւ, ու աս առակովը իրեն ըրած մեղքերը և անօրէնութիւնները երեսը տըվաւ։ Մէկ քաղաքիմը մէջ ըսաւ՝ մէկ հարուստ մարդմը՝ ու մէկ աղքատ

մը կար, հարուստը շատ ոչխարներու կովերու տեր էր. իսկ ան աղքատը ալ ուրիշ բան չունէր՝ հապա միայնակ մէկ գառնուկմը՝ որ իր բոլոր ունեցածովը գներ էր, ու անոր վրա դողալով կրպահէր. անանկ որ՝ իր զաւակացը հետ մեծցուցեր էր, և իր բերնի հացը ու ջուրը կրկերցուներ, և իր ծոցը կրպառկեցուներ։ Այդաւ որ մէկ ճամբորդմը եկաւ ան հարուստին քովը ինջաւ. ու աս մարդուս ագահութիւն իր ունեցած ոչխարները և կովերը չի խրմբեալով գնաց քաշեց առաւ ան խեղճ աղքատին մէկ հատիկ գառնուկը, ու մորթեց իրեն եկած հիւրին (այ՝ միսաֆիրին) առվեր անիկա դրաւ որ ուտէ։ Այս որ լսեց դաւիթ անանկ որդողեցաւ կրակ կտրեցաւ՝ որ նաթան խօսքը ցիլմինցած՝ ինքը ցաթկեց ըսաւ թէ, ճշ վկա որ՝ մեռնելու արժանի է ատ բանը ընողը, ու պէտք է որ եօթը հեղ տա վրճարէ ան գառնուկին տիրոջը։ Այն ատենը նաթանալ դարձաւ համարձակութիւն դաւթի երեսը զարկաւ, դուն ես ըսաւ ան մարդը՝ որ ատ բանը ըրիր. տեր ճշը իսրայէլի քեզի կրսէ որ՝ ես քեզ թագաւոր օծեցի բոլոր իսրայէլացոց վրա, ու քու տիրոջդ տեղը նստեցուցի. և քեզի այսչափ բարիքներ ընէլէս ետև՝ դուն իմ օրէնքս կոխես, ուրիա քետացիին կնիկը յափշտակես, և աս հերիք չէ՝ ինքնալ հաւատարիմ ու անմեղ մարդը անգթութիւն այլազգիներուն ձեռքը մատնես ըսպաննես։ Այստի ըսաց՝ չի կարծես թէ ասոր պատիժը պիտի չիքաշես, հապա ասանկ գիտնաս որ՝ թուրը յաւիտեան պիտի քու տընէդ չիպակսի. ու քու կընիկներտալ թողում որ ուրիշը խայտառակէ, դուն աս մեղ

քերը ասա՝ ուզեցիր որ դաղտուկ ընես, բայց ես յայտնի ամմէնուն աչաց առջև պիտի ընեմ ասածներս։ Դաւիթ այ կողմանէ աս յանդիմանութիւնները որ լսեց՝ շուտմը բրածին վրա զղջաց ու խոնարհուելը մեղա տեսաւն ըսաւ։ Նաթանայ իրեն պէտք տրվաւ թէ՝ ասած մեղացդ թողուի կուտա՝ որ դուն չիմեռնիս, բայց մեղացդ պատիժ՝ ան քու շնուելը ծնած որդիդ մեռնի. ու ասածինպէս եղաւ, շատ չանցաւ՝ տղան հիվանդացաւ մեռաւ։ Այսքը այ օրհնուելը դաւթի հարազատ կնիկ եղաւ բերասաբէն, և անկէց ծնաւ սողոմոնը, ու ասած նաթան մարգարէին ձեռքովը՝ Յեդեդի կանչել տրվաւ անոր անունը, որ սիրելի այ՝ ըսել է։ Ինչպէս ինչպէս ըսինք՝ աս բրած մեղքերուն կատարեալ թողութիւնը առաւ դաւիթ՝ Ճշմարիտ զղջումով մեղա որ գոչեց ու ապաշխարեց, բայց մեղացը պատիժները մնաց որ քաշէ, ինչպէս կըտեսնենք աս եւսեբի գլխուն մէջը։

ԳԼ. ԺԴ.

Աբիսողոմ յեռաբէն դաւթի չաղած նեղութիւնները՝ երբեն մեղացը պատիժ։

Բ. Թագ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ։ = Ամ Տի 2974. 2980. 2984։

Դաւիթ՝ իր մասաբա ասած կընիկէն երկու զաւակ ունեցաւ, մէկը մանչ՝ որ աբիսողոմ կըսվեր, և մէկալը աղջիկ անունը թամար։ Այս աբիսողոմը մէկ անբման գեղեցկութիւնը ուներ, որ բոլոր իսրայէլացոց մէջը անոր պէս աղվոր չիկար՝ ու լեցուն գեղեցիկ մազերով. նաև

իրեն Թամար ըսած քրոջը աղվորուհնալ իրմէ վար չէր մնար. անոր Համար ամոն դաւթի տը-ղոց մէջը անդրանիկը սաստիկ ցանկութիւն աս Թամարիս աչք զարկաւ. և խաբէութիւն որ անի-կա ձեռք ձգեց պղծեց, ու ետքը չարաչար ա-տելութիւն քովէն վռընտեց, աբիսողոմ Թամարի Համար ամոնի վրա ոխ պահելով՝ ետևէ էր որ մէկ Ճամբովմը զինքը ըսպաննէ։ Ասոնի իրեք տարիէն ետև աբիսողոմ փառաւոր կոչունք ու-բախութիւնը ըրաւ եղբայրներուն հետ ամոնալ։ Հոն իր մէկալ եղբարներուն հետ ամոնալ չար մտքով ետևէ ինկաւ որ գա։ Այրբոր ա-սունք կերան խմեցին. և ամոնիալ գլուխն որ տաքցաւ, ան ատենը աբիսողոմ իր ծառանե-րուն ձեռքովը ամոնը մեռցուց. և աս պատ-Ճառով ամէնքը ցիրուցան եղան, ու ինքը աբիսողոմալ՝ ելաւ գեսուր ըսած այլազգիներ-ուն երկիրը փախաւ։ Ասոր վրա շատ սրբտադող քաշեց դաւիթ, ու սաստիկ բարկացեր էր ա-բիսողոմի վրա. բայց իրեք տարիէն ետև յա-վար զօրապետար մէջ մնաւ, ու վարպետ Ճամ-բովմը դաւթէն հրաման առաւ՝ որ երթա աբիսողոմը եղէմ դարձունէ բերէ. միանթէ գա իր տունը նստի՝ պալատը չերթա դաւթի առջևը չերևա։

Աբիսողոմ երկու ամիս անանկ իր տունը կե-նալէն ետև՝ ըրաւ չըրաւ նորէն յովաբի ձեռ-քովը գնաց հօրը հետ հաշտըվեցաւ. ու անկէ ետքը ալ կամաց կամաց սկսաւ իր հօրը կենացը և անոր թագաւորուհը որոգայթ լարել, որ ա-նիկա վար ձգէ՝ ինքը տեղը նստի։ Ասոնի պինտ առաջ նայեցաւ որ ժողովրդոց սիրտը վաստ-կի. ամէն օր ձիով ծառաները առջևէն՝ կա-

նուխ կելլեր դուռը կերթար, ու ով որ կուգար՝ որ իրվէճը դատաստանը թագաւորինառջևը տեսնէ կարէ, աբիսողոմ ասոր դէմը կելլար՝ սիրով իրեն կըհարցուներ, ուսկից եկեր ես՝ ինչ բան ունիս. և անոր դանկատը լսելով սրտցաւ կըլլար իրեն, ափսոս կըսեր որ թագաւորը մէկ մարդմը չէ դրեր որ աս բաներս հոգա. ուր եր որ ես ձեզի դատաւոր ըլլայի, ու ամէնուն պիտանաւորուիր տեսնէի հոգայի. և թէ որ մէկը առջևը կելլեր իրեն ծռելու բարևելու, շուտմը կըվազեր աբիսողոմ կըգրկեր կըպագներ անիկա։ Ասոր տարիի չափ այսպիսի կեղծաւորութիւն և խաբեբայութիւն ժողովուրդին սիրտը իրեն քաշելէն ետև, հօրմէն սուտմնէ հրաման ուզեց որ քեբրոն քաղաքը երթա հոն իր ուխտը կատարէ, որ փախստականութիւն ատենը՝ այ ըրեր էր կըսեր։ Այրբոր ասանկ աբիսողոմ երկու հարուր հոգի բանի եկող մարդիքներէն հետը առած քեբրոն գնաց, հոն իր թագաւորութիւնը խորհուրդը դուրս հանեց. և ան որ լսեցին՝ գրեթէ բոլոր իսրայելացոց ժողովուրդը հետը մէկ եղան, դաւիթը թողուցին ինքը թագաւոր Ամնոնցան. և ասոնց հետ աքիտոփել ըսած դաւթի խորհրդակիցը՝ որ շատդէտ մարդ մըներ, ինքնալ դաւթէն բաժնըվեցաւ աբիսողոմի քովը գընաց, որ իրեն խորհուրդ տա՝ Ամբա ցրցունէ, երբոր ալ ելեր դէպ'ի երուսաղէմ դաւթի վրա կը քալեր։

Այս բաներս որ լսեց իմացաւ դաւիթ՝ չորս դին ջուր կտրեցաւ, և աղէկ հասկընալով որ աս այ բանն է՝ Ամբ չիկա դէմ կենալու, զինքը այ ձեռքը յանձնելով՝ իր քովը գրտնըված քիչ

մը զօրքը հետը առած ինքնալ եղէմ ելաւ որ
փախչի, երթա երեսը պահէ։ Ոչն ատենը սա-
դովկ քահանայապետնալ բոլոր քահանաները
մէյտեղ տապանակն որ վերցուցին՝ որ հետ առ-
նեն անանկ երթան. դաւիթ ետ դարձունել
տրվաւ, թէ որ ըսաւ՝ ՝ծ իս արժանի ըլլէ-
նէ՝ նորէն կրդառնամ իր փառաւորուիր կը-
տեսնամ. չէնէ՝ ահա իր ձեռքն եմ, ինքը ինչ-
պէս կրկամիսէ անանկ ընէ։ Ոչտը սադով-
կայ ապրսպրեց որ՝ ինքը և իր տղաքը հոն կե-
նան, որ աբիսողոմի ընելիքները գաղտուկ ի-
ըեն խրկեն իմացուցեն. և ասոնցմէ ՝ի զատ՝
իր քուսի արաքացի ըսած բարեկամինալ՝ դա-
ւիթ ապրսպրեց որ աբիսողոմի քովը երթա,
ու անոր հետը երեսէն բարեկամուի ցրցու-
նելով՝ աքիտոփելին տրված խորհուրդը փճա-
ցունէ, և ինչ որ աբիսողոմ պիտոր ընէնէ՝ իմա-
նա, ու իրեն խրկէ իմացունէ։ Դաւիթ բանը
ասանկ կարգի դնելէն ետև՝ լալով ու բոպիկ
ոտքով երբոր ՝ամբա ելաւ կերթար, մէյմալ
անդիէն իրեն դէմը ելաւ սեմէի ըսած մէկ
մարդմը՝ սաւուղի ազգականներէն, որ դաւ-
թի հազար նախատանք տալով, վրան քարեր
կընետէր, ու քամահրելով կրսէր. ելիր կորիր
արընտեր անօրէն մարդ, հիմա ՝ծ քու գը-
լուխդ բերաւ թափեց սաւուղի տանը արու-
նը. դուն անոր թագաւորուիր քաշեցիր առիր,
անոր համար ՝ծ ալ քու ձեռքդ առաւ ու ա-
բիսողոմ տղդ տրվաւ. և ուրիշն ըրածդ քու
գլուխդ դարձուց։ Ոչն ատենը աբեսսա զօ-
բապետը յովաբի եղբարը ալ վիդիմացաւ ա-
սոր, դարձաւ դաւիթի ըսաւ, աս ինչ է՝ որ մէկ
սատկած շունմը ասանկ կրհայհոյէ իմ տեր

թագաւորքս. եւ՝ ալ չեմ կրնար համբերեր, հիմա կերթամ անոր վրայէն գլուխը կառնեմ։ Դաւիթալ իրեն սրդողելով, ձեղի ինչ ըսաւ՝ թող տվէք որ ընէ, ոչ անանկ կուզէ՝ որ անիկա դաւիթը անիծէ ու հայհոյէ, ոմվ կրնա իրեն դէմ բան ըսեր. ահա իմ որդիս որ իսմէ եղած է՝ իմ ետեւէս ինկեր՝ իս մեռցունել կուզէ, հապա ինչ պիտոր ընէ սաւուղի աղգականը. ուստի մի դպչիք՝ թողուցէք ըսաւ՝ որ իս ասանկ անիծէ. կարելի է որ ոչ տեսնելով աս իմ քաջած տառապանքս՝ ինծի անոր տեղը բարիք հատուցանէ։ Դաւիթ ասանկ ըսելով խմնարհուելէ իրեն մարդիքներովը կրքալեր առաջ կերթար. ու սեմինալ ետեւնին չեր զատվեր անենախատանքները կրզուրուցեր ու վրբանին հող ու քար կրնետեր. ինչվան որ ասոնք ամմինքը հոգնած մէկ տեղմը եկան ինկան՝ որ հանդչին։

Այս ատենները աբիսողոմ ալ մէկալ դիին եկաւ եղէմ մտաւ տիրապետեց, և պիտի առաջ աքիտոփելի խորհրդովը՝ դաւթի հոն տունը թողուցած կնիկները խայտառակեց։ Այսքը աքիտոփել իրեն ըսաւ թէ՝ ատեն չի կորսընցնենք, հապա տասվերկու հազար հոգի ինծի հերիք է, որ շուտմը դաւթի ետեւէն երթամ՝ քանի որ անոր զօրքը հոգնած է. ինքը միան մեռցունեմ, ու հետի եղածները քու կողմդ դարձունեմ։ Այս խորհուրդս որ շատ գեղ էր դաւթի համար, ոչ իր ողորմութիւնը այսպէս խափանեց՝ որ աբիսողոմ աս բանըս քուսի արաքացիներնալ (որ դաւթի հետ ինչպէս ըսինք՝ գաղտուկ սրտանց բարեկամ էր,) ուզեց որ հարցունէ։ Ուստինալ ըսաց թէ՝ աս հեղուս աքիտո-

փել աղեկ խորհուրդ չիտրվաւ. ինքը սկսաւ աբիսողոմի աչքը վախցունել թէ՝ վտանգաւոր բան է ատանկ մէկէն վրանին վազելը, դուն գիտես ըսաւ՝ որ քու հարրդ և իր հետը եղած ները ինտոր ուժով չար մարդիք են. հապա խոհեմութիւն պէտք է՝ որ առաջ զօրքրդ շատցունես՝ ու անանկ վրանին ելլես, որ անոնք բոլորը մէկէն կրլլեսս։ Ուրախ ասով ուզեց որ աբիսողոմ ուշանա ետ մընա, որ դաւիթը փախչելու և պատրաստրվելու ատեն ունենա. անոր համար շուտմը գաղտուկ խրկեց բանը դաւթի անկանը հասցուց։ Ա՛յս խորհրդով՝ ուծ կուրացուց, որ խիստ հաւնեցաւ աբիսողոմ. բայց աքիտոփել ասով յայտնի տեսնելով աբիսողոմի կործանումը՝ ինքը գլուխը քաշեց ելաւ իր տունը գնաց, ու յուսահատութենէն ինքը զինքը կախեց խրխտեց։

ԳԼ. ԺԷ.

Ա՛ԲԻՍՈՂՈՄ ՀԷՍՊԱՆՆԸՎԷ, ՈՒ ԴԱՒԻԹ ՆՈՐԷՆ ԻՐ ՈՒԵՂԸ ՀԸԴԱՈՒՆԱ։

Բ. Թագ. Ժգ. ԺԹ. Ե. լա։ = Ա՛մ Տեղ 2985։

Ա՛բիսողոմ երբոր ասանկ ուշացաւ, դաւիթ անդին ատեն ունեցաւ որ յորդանան գետը անցնի. ու նորէն զօրք ժողվեց իրեք բանակ բաժնեց. և ասոնց վրան զօրապետ դրաւ յովաբը, աբեսսան, ու եթթի գեթացին. և ինքնալ ուզեց որ հետերնին մէյտեղ ելլէ, բայց զօրապետները չիթողուցին։ Ա՛յսքը աս զօրապետները Ամբա դնելու ատենը սիրտը չիգիմացաւ անոնց ապրսպրեց որ՝ աբիսողոմին խնայեն չիմեռցունեն։ Ա՛յրբոր աբիսողոմալ

իր զօրքովը եկաւ, (որ վրանին զօրապետ դրբեր էր մէկ քաջ մարդմը ամէսայի ըսած, որ անալ դաւթի ազգական էր,) ու յորդանան գետը անցաւ սկսաւ դաւթի զօրացը հետ պատերազմիլ՝ անտեղը մէկէն քսան հազար իրմէն ջարդրվեցան. և եղբը ցիրուցան եղած եփրեմի ըսած անտառին (ցր՝ օռմանին) մէջն որ ինկան՝ հոնալ թրով մեռածներէն աւելի մարդ փճացաւ կորաւ աբիսողոմի դիէն։ Աբիսողոմ ալ իր ջորին հեծած ան անտառին մէջէն փախչելնին՝ գլխուն մազերը մէկ կաղնիիմը ծառին ճիւղերուն պրլրվեցաւ, ու ջորին տակէն ելաւ՝ ինքը անանկ կախվեցաւ մընաց։ Ս բանըս մէկ զինվորմը տեսաւ՝ շուտմը եկաւ յովաբայ պատմեց, անալ իրեն ըսաւ թէ ինչու չբնսանեցիր, որ ես քեզի հիմա յիսուն սիկլ արծաթ՝ ու մէկ թուրմը կուտայի։ Զինվորնալ իրեն պատասխան տրվաւ թէ՝ հազարալ տայիրնէ ես իմ թագաւորիս տղին վրա իմ ձեռքս չէի երկնցուներ, որ մեր առջևը ձեզի ապսպրեց որ աբիսողոմի խընայէք։ Ինչ ատենը յովաբալ ըսաւ, հիմա կրտեմնես թէ ես ինչպէս կրմեռցուցնեմ. ու գնաց իրեք նետ աբիսողոմի սրտին կողմը զարկաւ. տասը հոգիալ յովաբի մարդիքը վրան հասան, հոն տեղը զարնելով մեռցուցին, ու մէկ խորունկ փոսիմը մէջ ձգեցին անոր մարմինը։

Յաքը յովաբ փող չալելով դադրեցունել տրվաւ պատերազմը. ու երկու հոգի մէկմէկու ետևէ՝ մէկը աքիմասա ըսած, մէկալը քուսին վազեցին եկան որ դաւթի աւետիս տան։ Դաւիթ երբոր հարցուց՝ անոնցմէ իմացաւ որ աբիսողոմը մեռած է, վրան սաստիկ տրրտ-

մեցաւ. ու մինաւոր տեղմը քաշված, սկսաւ
լալ ողբալ ու ըսել, որդեակ իմ աբիսողոմ,
աբիսողոմ որդեակ իմ, երանի թէ ես քու տե-
ղդ մեռած ըլլայի, աբիսողոմ որդեակ իմ։
Եւ յաղթութենէս ետև՝ յովաբ զօրապետը
իր զօրքերովը դարձած երբոր եկաւ իմացաւ
որ դաւիթ տանը մէջը առանձին քաշված
աբիսողոմի վրա այսպիսի ողբ ու լաց կընէկոր,
եւաւ քովը գնաց, և ծանրը խօսքերով ասբա-
նիս համար յանդիմանելով զինքը՝ առաւ դու-
ռը բերաւ. որ զօրքը ինքը անանկ ուրախ տես-
նելով՝ սիրտ առնեն իրեն համար քաշած աշխա-
տանքին վրա, որ սրտերնին կոտրեր էր ասդա-
թի ըրածին պատճառովը։ Այց ասով՝ և
առջի ըրած անողորմ և յանդգնական գործ-
քերովը՝ յովաբ անանկ դաւիթ աչքէն ինկաւ
որ, դաւիթ ան ամբոխայի ըսած աբիսողոմի
զօրապետին խրկեց՝ իրեն խօսք տըվաւ թէ՝
քեզ յովաբի տեղը ինծի զօրապետ կընեմ։
Այս բանըս յովաբը որ իմացաւ՝ ամբոխային ե-
տևէն էր որ ըսպաննէ. ուստի մէկ օրմը կեղ-
ծաւորութիւն ամբոխային բարևելենին՝ դանակը
փորը խոթեց մեռցուց. ինչպէս ատենով աբեն-
ների սաւուղի զօրապետինաւ ըրեր էր։ Երբոր
բանը ասանկ դարձաւ, և բոլոր իսրայելացոց
ցեղերնաւ դաւիթի առջևը գացին՝ որ զինք
մեծարանքով առնեն յորդանան գետէն ան-
տիս անցուներն՝ նորէն եղէմ իր աթոռը բերեն
նստեցուցեն. անատեսը սեմէինաւ հազար
հոգի բենիամենի ցեղէն հետը առած՝ ինքնաւ
արտորաց դաւիթի առջևը եկաւ մեծարելու
համար, ու գնաց ոտքը ինկաւ՝ մեղայ ըսաւ ան
իրեն ըրած նախատանքներուն համար։ Բէս-

սա զօրապետը ան որ տեսաւ, ինչ է ըսաւ պիտոր սեմէին չի մեռի մի, որ այ օձեալը հայ հայեր է։ Դաւիթ ալ անիկա չեխելով դարձաւ երդում ըրաւ սեմէին թէ՝ մի վախնար քեզ չեմ մեռցուներ։ Այտև մեմիբոսթէ յոլնա թանի որդինալ խոնարհուելթ եկաւ դաւթէն թողուլի խնդրեց, և պատճառը ըսաւ՝ թէ ինչու ինքնալ դաւթի փախչելու ատենը հետը չէ գտնըվեր. ու բանը հասկըցուց որ՝ իր սիբա ըսած ծառան՝ սուտ գացեր իրմէ դաւթի անցեր է, և անով բոլոր սաուղի ժառանգուելը իր վրա դարձուցեր է։ Դաւիթ առ բանըս իմանալով՝ մեմիբոսթէի հրամայեց որ՝ ան ժառանգուելը սիբայի հետ մէջերնին կիսվակէս բաժնեն։

Դաւիթ երբոր փառաւորապէսեկաւ նորէն եղէմ նստաւ, ան ատենը մէկ մարդմը բենիամինի ցեղէն սաբէէ անունով դաւթի դէմ գլուխ քաշեց. ու յուդայի ցեղէն'ի զատ մէկալ իսրայէլացոց ցեղերէնալ շատ մարդիք անոր հետ միաբանեցան։ Յովաբ ու աբէսսան իրենց զօրքերովը սաբէի ետևէն որ ինկան, անիկա գընաց աբէլ ըսած քաղաքը մտաւ գոցվեցաւ. սոնքալ վրան գացին՝ և քաղաքը պաշարելով՝ պարիսպներն որ սկսան կործանել, վերէն պարիսպէն մէկ կնիկմը խելացի խօսքերով յովաբը դադրեցուց որ բան չընէ. ու ինքը գնաց մէջ մտաւ խօսք անցուց իր քաղքի մարդիքներուն, որ յովաբի ուզածինպէս ան ապստամբ սաբէէն գլուխը կտրեցին՝ պարիսպէն վար յովաբայ առջևը ձգեցին, որ անանկ պատերազմը վերջացաւ։

Վոկէ ետև իրեք տարիի չափ մէկ սովմը ին-

կաւ իսրայէլացոց երկիրը. դաւիթ՝ Հարցուց ՝ այ, ու իմացաւ որ սաւուղի պատՀառովն է եղեր ան սովին պատիժը, ինչու որ՝ սաւուղ բռներ ջարդեր է գաբաւոնացիները, իսրայէլացոց՝ յեսուայ ատենի ըրած երդումին դէմ. ուստի դաւիթ գաբաւոնացիները կանչեց իրենց Հարցուց թէ ինչ Հատուցում կուզէք որ ընեմ։ Ոնոնք՝ միան եօթը Հոգի ուզէցին սաւուղի մնացած տղաքներէն կամ թոռներէն, որ կախեն մեռցունեն։ Դաւիթ՝ առաւ սաւուղէ երկու մնացած խորթ տղաքը, ու անոր մերովը ըսած աղջիկանը հինգ տղաքը՝ ձեռվընին տրվաւ, որ անանկ ողջողջ աբեը կախած մեռցուցին. և անով սովը դադրեցաւ։

ԳԼ. ԺԷ.

Իսրայէլացոյ՝ մահապարտամով հրպարտքին։

ք. թագ. իգ։ ա. Մնաց. իա։ = Ամ Տի 2987։

Իսրայէլացոց վրա ՝ածի իրենց մեղացը համար բարկանալով՝ դաւիթ թոյլ տրվաւ որ հպարտութիւնը անոց ամմէնուն համրանքը գիտնալ ուզէ, երբոր ինքը ամմէն գիւին հանգրստացած բոլոր իսրայէլացոց վրա խաղաղութիւնը սատեր կրտիրապետեր. ուստի իր յովաբ զօրապետին հրամայեց՝ որ երթա ծարէ 'ի ծար պըտրտի, ու բոլոր ժողովրդոց համրանքը իրենց բերէ։ Յովաբ ասա բանիս դէմ կեցաւ, տեր իմ ըսաւ՝ ինչ պէտք է համրել, ՝ածի տա որ եղածին վրա հարուր անչափալ եվելնան։ Դայց այսու ՝ամիւ դաւիթ ասոր վրա սաստիկ վառված՝ խօսքը որ ուզեց քալեցունել. ան ատենը

յովաբալ ելաւ ինը ամսէն էվել պրտրտեցաւ՝ ժողվեց անոնց համրանքը բերաւ. որ ծերե-
րէն՝ տղաքներէն՝ և կնիկներէն 'ի զատ՝ միան
իսրայէլացոց կորիզ մարդիքը որ պատերազմ
կրնային ընել՝ ութըհարիւր հազար ելան, ու
յուդայէն ցեղինը՝ հինգ հարիւր հազար։ Դաւ-
դաւիթ աս բանը ընելէն ետև խղճմտանքը
զարկաւ՝ թէ ՝ի դէմ ըրի, ուստի շուտմը մե-
ղա գոչեց ՝ի Թողուի խնդրեց։ Ը՝ծալ անոր
մէկալ օրը դադ մարգարէն իրէն խրկեց որ՝
ան մեղացը համար աս իրեք պատիժէս մէկը
ընտրէ, ՝ի՝ կամ իրեք տարի սով ըլլա բոլոր
իսրայէլացոց երկիրը. կամ իրեք ամիս պատե-
բազմով ջարդըվին՝ ու ինքը բարբարական ըլ-
լա թշնամիներուն ձեռքէն, և կամ իրեք օր
՝ի Թերն նեբքևը ինկած՝ մահտարաժամ ըլա
իր բոլոր տերուներ մէջ։ Ը՝ն ատենը դաւիթ
սաստիկ նեղած՝ պատասխան տրվաւ Թէ, ո՛ր
գէն դառնամ նէ՝ գէշ է. բայց ինչ որ է նէ
ըսաւ՝ աւելի լաւ է որ ՝ի ձեռքը իյնամ՝ որոյ
ողորմութիւնը շատ է, և մարդու ձեռք չիյնամ.
ուստի աս իրեքէս մահտարաժամը ընտրեց։
Ա՛ րան շատ չանցաւ՝ շուտմը մահը սկսաւ, և
անանկ սաստիկ կրջարդեր որ՝ ան առտրվընէ
ինչվան կէս օրվան ատենը եօթանասուն հա-
զար հոգի մեռան։ Դաւիթ երբոր տեսաւ հը-
բեշտակը ՝ի՝ ոռնա յերուսացի ըսած մէկ մար-
դումը՝ կալին (՝ի՝ հարմանին) վրա, որ օդը
կեցած սուրը ձեռքը աս պատիժս կուտար ժո-
ղովրդոցը, խոնարհուած աղաչելով, տէր ըսաւ
ես հովիւրս մեղանչեցի, աս բոլոր չարիքնե-
րուս պատճառ ես եմ; ատ ոչխարները ինչ մեղք
ունին. ուստի ատոնք թող տուր՝ ու իս, և

իմ տունը պատժէ։ Այն ժամանակը ՝ծծալ գուլթ շարժեցաւ վրանին, և նորէն դադ մարգարէին ձեռքովը դաւիթի հրամայեց որ չիուշանա՝ ան կալին՝ մէջը շուտմը սեղանմը շինի՝ վրան ՝ի զոհ մատուցանէ, որ անով ՝ծծ հաշտեցունէ։ Դաւիթալ շուտմը գնաց, ան կալին տեղը՝ իրեն եղեսերովը և սայլերովը ոռնայէն ըստրկով գնեց. հոն սեղան շինեց՝ ու վրան՝ եղնեերը ՝ի ողջակէզ ըրաւ. որ ասով ան մահուան պատիժը դադրեցուց ՝ծծ։ Այս ան տեղն է կրսեն՝ ուր որ Եստրը սողոմոնի տաճարը շինվեցաւ։

Գլ. ԺԷ.

Դաւիթի իր եղեէն սողոմոնը Ռագաւոր էրդնէ՝ ու ինչը էրվոխանի։

Գ. Թագ. ա. բ։ = Ամ Տի 2990։

Այրբոր դաւիթալ ծերանալու եղաւ, ադոնիա ըսած իր տղոց մէջը մեծը՝ հարը չի մեռած ուզեց որ թագաւորուն պատրաստուի տեսնի՝ որ հօրը եռևէն ինքը նստի. և յոլով զօրապետնալ աբիաթարը քէհնայպետին հետ մէյտեղ անոր դին բռնած՝ աս բանը կըջանային որ առաջ տանին. թէպէտ դաւիթի ատենով խոսք տրվեր էր որ սողոմոնը՝ իր բերսաբէ կընկանը որդին իրեն եռևէն թագաւոր նստի։ Այ՝ էկ օրմը ադոնիան աս իրեն բարեկամներուն և ուրիշ իշխաններուն՝ եղէմ դուրս տեղը մէկ մեծ սեղանմը որ ըրաւ, ան ատենը նաթանմարգարէն գնաց աս բանը բերսաբէին հասկըցուց, ու ապրսպրեց որ երթա դաւթի միտքը ձգէ իր սողոմոն տղին վրա ըրած խոստմունը

քը. դուն գնա՛ ըսաւ, որ Եաբեսի Եսալ վրա կը-
հանիմ՝ ու ըսածներդ կը հաստատեմ։ Լուեր-
սաբէնալ գնաց դաւիթի առջևը երկրպագուելի
ըրաւ ու ըսաց. տէր հրամանքդ ինծի երդում
ընելով խօսք տուիր որ՝ սողոմոն տղաս Եսայի
Թագաւոր նստեցունես, ու հիմա ադոնիան
առանց քու գիտնալուդ Թագաւորուելի կընէ.
բոլոր իսրայէլացիները քու բերանդ կընային՝
որ չիմեռած իրենց Թագաւորը ցրցունես. չէնէ
ըսաւ՝ Եսայի ադոնիան կելլէ ու իսալ սողո-
մոնի հետ Թրէ կանցունէ։ Լ՚ս որ բերսաբէն
կըզուրուցէր՝ անժամանակը նաթան մարգա-
բէնալ վրա եկաւ՝ ու ինքնալ երկրպագուիթի
ընելով դաւիթի սկսաւ հարցընել. տէր Թա-
գաւոր՝ հրամանքդ ըսեր ես որ ադոնիան Ե-
սայի Թագաւոր նստի, ինչու որ՝ ասօր գացեր
մէկ փառաւոր սեղանմը ըրեր է, ու բոլոր Թա-
գաւորի տղաքը, և զօրապետները հոն կանչեր
է, աբիաթար քահանալ մէյտեղ. ու ամէն-
քը կերած խմած՝ ՀԵՅՅԷ ԱՐՔԱՅ ԱԴՈՆԻԱ կըսէն.
միան իս ու սադովկ քահանան, ու բանեա որ-
դի յովիդեա զօրապետը, ու սողոմոն տղատ՝
Թողուց չի կանչեց։ Լ՚ն ատենը դաւիթ բեր-
սաբէն քովը կանչեց՝ ու նորէն իրեն երդվընն-
նալով ըսաւ Թէ՝ իմ Եսայէս սողոմոն որդիս պի-
տի նստի. Եաբեսի շուտմը հրամայեց որ սադովկ
քահանան, նաթան մարգարէն, ու բանեան՝
առնէն սողոմոնը իր Թագաւորական ջորին
հեծցունեն, գեհոն ըսած տեղը տանին, և
հոն ինքը Թագաւոր օծեն բոլոր իսրայէլացոց
վրա։ Լրբոր անանկ ըրին, ու փող չալելով չորս
դին իմացվեցաւ որ սողոմոն Թագաւոր օծվեր
է, և բոլոր ժողովուրդը պար բռնելով ուրա-

խուրք՝ ԷԷՂԷ արքայ սողոմոն կրկանչէին, անատեանը անդին ադոնիայի հետը եղածները ամենքը սարսափած վախերնուն ելան փախան ցիրուցան եղան. ու ադոնիանալ իր գլուխը գալիքը գիտնալով՝ ինքնալ վազեց այ խորանը փախաւ ապաւինեցաւ, ու անկէց դուրս չելաւ՝ ինչվան որ սողոմոն իրեն խօսք չիտրվաւ՝ չըսաւ՝ թէ որ հանդարտ կենաս՝ քեզ չեմ մեռցուներ. ու ետքը անանկ ելաւ իր տունը գնաց։

Դաւիթ օրէ օր ալ մեռնելու որ մօտեցաւ, սողոմոնը քովը կանչեց՝ և իրեն բարի խրատներ տրվաւ որ այ պատուիրանքները աղէկ պահէ, ու մովսէսի օրէնաց ըսածինպէս արդար դատաստան ընէ, որ ածալ իր թագաւորութիւնը օրհնէ. ետքը ասալ ապրսպրեց որ յիշէ յովաբի ըրած անիրաւ մարդասպանութիւնները, ու արդարութիւն իրեն գիտցածինպէս անոնց հատուցումը ընէ՝ զինքը մեռցունէ. ասանկալ սեմէիին բանը հոգա, անոր ըրածները իրեն չիթողու՝ անալ մեռցունէ։ Ինչկէ՝ ի զատ այ տաճար շինելու համար սողոմոնի ապրսպրեց յորդորեց, ամենն բաներուն օրինակնալ ցըցուց տրվաւ թէ՝ ինչպէս պիտի ընէ. նաև այս պիսի մեծ գործքիս համար իր առաջուց պատրաստած ոսկին արծաթը և ուրիշ նիւթերը սողոմոնի ձեռքը յանձնելով՝ սիրտ տալով՝ և օրհնելով ինքը, բարի ծերութիւնը եօթանասուն տարվան վախճանեցաւ, բոլորը քառասուն տարի թագաւորութիւն ընելէն ետև. ու իր շինած զարդարած եղէմ քաղաքը թաղվեցաւ։

Դաւիթ՝ մանկութիւնէն ըսկսած անչափ սիրելի եղաւ այ որ՝ թշուրուէ՝ ի զատ իրեն մարգարէական շնորհքալ տրվաւ ած, որով շարադրեց

ան սքանչելի սաղմոսները յօրհնուն և 'ի փառաբանուն ՅԻ. որ միշտ և հանապազ աղօթագիրք եղաւ ՅԱՄ ՅԱԾապաշտ Ժողովրդոց։ Ոչ ա-սոնք հերիք չէ, նաև երդումով իրեն խոստացաւ ՅԱԾ որ մեսիային մարմնաւոր ծնունդը իր ազգէն ըլլա, ինչպէս որ կըցրցունեն աւետարանիչները։

ԳԼ. ԺԱ.

Սողոմոնի Խաչաւորութիւնը։

Ք. թագ. ի. ԺԳ. = ԸՄ Ցի 2990։

Սողոմոն տասվերկու տարվան էր երբոր թագաւոր օծվեցաւ. ու քիչմը ատեն հօրը հետ կենալէն ետև՝ երբոր սկսաւ ինքնագլուխ թագաւորուն ընել, անատենը ադոնիա իր մեծ եղբարը նորէն թագաւորութիւն ետևէ խնալով, գնաց բերսաբէի աղաչեց որ՝ երթա սողոմոնի իր տղին խօսք անցունե՝ որ աբիսակ սոմնացի ըսած կոյս աղջիկը, (որ դաւիթ ծերութիւն ատենը քովը առեր էր,) իրեն կնիկ առնե։ Երբոր բերսաբէն միամտութիւն աս բանը սողոմոնի բացաւ՝ որ աբիսակը անոր տա, սողոմոն աս բանիս վրա սաստիկ բարկանալով բերսաբէի պատասխան տըվաւ թէ՝ ինչո՞ւ աբիսակ սոմնացին կըսես հապա իմ թագաւորուն իսկ՝ որ ադոնիայի տամ, որ ինքը իսմկ մեծալ է, ու աբիաթար քահանայապետը և յովաբ զօրապետը՝ խօսքի տեր մարդիք՝ իրեն դին են։ Ուստի շուտմը վրան վճիռը կարդեց սողոմոն, ու բանեա որդի յովիդեայ ըսած զօրապետը խրրկեց որ երթա ադոնիան ըսպաննե. ու աբիաթարնալ քահանայապետութիւնէ ձգեց՝ իր անա-

թովթ գեղը աքսորեց, անոր տեղը սադովկը դրաւ։ Յովաբ աս բաներս որ լսեց, ինքնալ իր վրա վախնալով՝ վազեց ՅԻ խորանը մտաւ ապաւինեցաւ՝ որ չի բռնեն մեռցունեն, սողոմոն անորալ բանեա որդի յովիդեան խրկեց ըսաւ որ անկեց ելլէ. անալ որ չեմ ելլեր ըսաւ՝ հոս կըմեռնիմ, ան ատենը սողոմոն բանեային հրամայեց որ երթա հոն տեղը զինքը ըսպանէ, ան երկու՛ անմեղ զօրապետներուն արուինը իրմէ ուզելով, որ յովաբ դաւթի կամացը դէմ խաբէութիւն սպաններ էր անոնք. և անոր տեղը սողոմոն բանեան զօրապետ ըրաւ բոլոր իսրայէլացոց վրա։ Յետքը սեմէինալ առջևը կանչեց սողոմոն, և իրեն վրա աս պարտքերս դրաւ որ՝ գա եղէմ բնակի, հապա թէ անկեց դուրս ելլելու ըլլանէ՝ ըսպանելվի։ Իրեք տարիի չափ անանկ կեցաւ սեմէին. ետև հեղմը պատահեցաւ որ իր ծառաները իսրայէլացոց երկրէն փախան գեթացոց երկիրը գացին. սեմէինալ անոնց ետևէն գնաց՝ ու բռնեց երուսաղէմ բերաւ. ան ատենը սողոմոն առջևը կանչեց սեմէին ու իրեն անհնազանդութիւնը և դաւթի դէմ ըրած անօրէնութիւնները երեսը տալով հրամայեց բանեային որ անալ սպաննէ։

Սողոմոն իր թագաւորութիւնը հաստատելէն ետև, պինտ առաջ իշխանները ու բազմութի ժողովրդոց հետը առած ելաւ գաբաւոն ըսած տեղը գնաց, որ՝ կըսեն թէ մովսէսի շինած վրկայութիւնը խորանը հոն էր.) որ ՅԻ ուխտ ընէ. և ան տեղը հազար ողջակէզ մատուց ՅԻ։ Յետ ալ ան գիշերը քնուն մէջը սողոմոնի երևցաւ՝ ըսաց թէ՝ ինչ որ կուզենէ խնդրէ իսկ. սողոմոնալ շնորհակալ ըլլալով ՅԻ իր հօրը

և իր վրա ցրցուցած բարիքներուն համար, որ անանկ պըղծկուց զինքը թագաւոր ընտրեց դրաւ անհամար իսրայէլացոց ժողովրդոց վրա. ուրիշ բան ըսաւ չեմ ուզեր, միան ինձի ի. մաստութիւն տաս որ՝ ասչափ ժողովուրդս կա. ռավարեմ, ու արդարութիւն անոնց դատաստանը տեսնեմ։ Լ՚ս սողոմոնի ըրած խնդիրքը անանկ հաւնեցաւ ՏԾ. որ ըսաւ իրեն. որովհետև դուն ոչ երկան կեանք, ոչ հարստութիւն, ոչ թշնամիներուդ դէմ յաղթութիւն, հապա միան իմաստութիւն խնդրեցիր. անոր համար քեզի անչափ իմաստութիւն կուտամ, որ քեզմէ առաջ այնպիսի իմաստուն մարդ աշխարք եկած չըլլա, ու քեզմէ ետեւալ պիտի չիգա. և ասկէ՝ ի զատ՝ ան որ դուն խմէ չի խնդրեցիր՝ քեզի այնպիսի հարստութիւն տամ որ՝ քու օրերուդ թագաւորներուն մէջը քեզիպէս հարուստ մարդ չի գտնըվի. ու թէ որ իմ պատուիրանքներըս աղէկ պահես, և քու հօրըդ դաւթի շիտակ ճամբէն դուրս չելլես նէ՝ քեզի երկան կեանքաչ տեսցունեմ։ Լ՚ատուն որ ելաւ երուսաղէմ քաղաքը դարձաւ սողոմոն, հոնաչ նորէն ՅՅ ողջակէզ ընեցին ետև, շուտմը յայտնըվեցաւ իր իմաստութիւնը պինտ առջի ըրած դատաստանովը, որ տասանկ եղաւ։

Լ՚րկու աշխարհի կնիկ՝ սողոմոնի առջեւը դատաստան ելան. ասոնցմէ մէկը կըսեր թէ, ես և աս կնիկը մէկ տուն կրկենայինք՝ ու մեզմէ՝ ի զատ ուրիշ մարդ չիկար ան տանը մէջը. ես տղա բերի, իրեք օրէն ետև աս կնիկսաչ իր տղան բերաւ։ Լ՚դաւ որ՝ մէկ գիշերմը ասիկա իր տղին վրա ինկած պառկեցինի՝ տղան մե-

ցուցեր է ու իմ քնուս մէջը եկեր գաղտուկ իմ ողջ տղաս գրկէս առեր տարեր՝ իր հետ պառկեցուցեր է. ու իր մեռած տղան իմ քովը դրեր է. առտվան դէմ ելեմ ըսի կաթ տամ տղիս, տեսնամ տղան մեռած է. ետքը աղէկմը որ լուսցաւ, նայիմ որ ան իմ բերած տղաս չէ։ Մէկալ կնիկնալ անոր դէմը ելեր կըսեր թէ ատանկ չէ, հապա մեռածը քու տղատ է, ու ողջը ինն է. ու ասանկ մէյ-մէկու դէմ կեցեր կռիւ կընէին։ Սողոմոն ասոր ուրիշ Ջար չի գտնելով, մայրական սիրտը վրուզեց իմանալ ասբանիսՀՀմարտուիր. ուստի հրամայեց որ թուրմը բերեն՝ ան ողջ տղան երկու կտոր ընեն, կէսը մէկուն՝ ու կէսը մէկալին տան։ Ա.ս որ լսեց ան ողջ տղին մարը՝ սիրտը չի դիմանալով իր հարազատ զաւակին վրա, դարձաւ աղաչեց որ միան թէ չի մեռցունեն տղան, թող ողջ անոր տան. մէկալ կնիկը նորէն չէ՛ կըսեր, ո՛չ ինձի ըլլա ո՛չ անոր՝ թող կտրըվի։ Ա.ս ատենը սողոմոն բանը իմացաւ, հրամայեց որ տըղան ան մեռցունել չուզողին տան, որ ասով իր անոր հարազատ մարը ըլլալը ցուցուց։ Ա.ս սողոմոնի ըրած խելացի դատաստանը որ իսրայէլացոց ժողովուրդը լսեց, ամէնքը անոր ՀՀ տրված իմաստութէ վրա զարմացան մնացին. և անկէ ետև, սկսան սողոմոնը մեծ սեպել, իրմէն պատկառիլ վախնալ։

ԳԼ. ԺԹ.

Սողոմոն՝ տաճարը և իր պալատը կըշինէ։ Սաբա թագուհին իրեն տես կուգա։

Գ. Թագ. Է. Գ. Է. Ժ։ = Ամ Ցև 2993։

Ինչպէս ըսինք՝ դաւթի սրտին բաղձանքը՝ որ կուզէր այ մէկ իրեն վայել փառաւոր տաճարմը շինել, ահա սողոմոնի յաջողուն տրվաւ որ գործքով կատարէ։ Ուստի ամէն դիւն խաղաղ ու հանգիստ ըլլալով սողոմոն, և անով հարըստութիւնալ օրէ օր էվէլնալով, իր թագաւորութիւնը չորրորդ տարին մեծամեծ պատրաստութիւնք ձեռք զարկաւ որ աս տաճարըս շինէ. Նանակ որ՝ ութսուն հազար հոգի դրաւ՝ որ լեռներէն ան տաճարին շինվածքին պէտք եղած քարերը կըտրեն, և ուրիշ եօթանասուն հազար հոգիա՝ որ ասոնք կրեն բերեն. ու աս բանվորներուսալ վրակեցու՝ երեք հազար հինգ հարիւր հոգի կայրն, թողունք ուրիշ վարպետ արվեստաւորները որ քիրամ տիւրոսի թագաւորը, փարաւոն եգիպտացոց թագաւորը՝ սողոմոնի հետ բարեկամ ըլլալով՝ իրեն խրրկեցին։ Այ կերպովըս տաճարը եօթը տարիին մէջը շինվեցաւ. ու անանկ փառաւոր բան եղաւ՝ որ աշխարքիս վրա անոր նմանը չիպատմըվիր, թէ հարըստութիւնը դիւն, բոլոր մէջը ազնիւ փատերով շինած՝ ու արծաթով ոսկիով ծեփած էր, և թէ՝ վարպետարան զարդարանքներուն կողմանէ, իր ամէն պիտանաւորութիւնը։ Երբոր սողոմոն ասանկ տաճարը լըմընցաւ, ու այ տապանակնալ մեծ հանդիսաւորութիւնք բերաւ ան տաճարին մէջը իր տեղը

դրաւ, տասնրչորս օր բոլոր իսրայէլացիքը մէյ-
տեղ ժողված՝ մեծ տօնախմբուն կատարեց.
և ան ատենը քսանվերկու հազար կով՝ ու հա-
րուր քսան հազար ոչխար զոհ մատուց ։ Յ-
ետ ան տաճարը օրհնելու կամ նվիրելու ատե-
նը՝ ինքը սողոմոնալ ամենեսուն առջևը թևե-
րը վեր տարածած սկսաւ աղօթք ընել, հնոր-
հակալ ըլալով ։ բարերարութեանը՝ որ ինքը արդ-
ամանի ըրաւ որ ան տաճարը շինէ 'ի փառս ։.
ու ասալ խնդրեց որ անտեղը ժողովուրդը ինչ
աղօթք և խնդրվածք ընէնէ, ։ ծ լսէ՝ աղա-
չանքնին կատարէ ։ Յ։ետանկ երկան աղօթք ը-
նելէն ետև՝ ։ ծալ յայտնի հրաշքով ցրցունե-
լով՝ որ աս տաճարըս իրեն ։ ունելի է. անատենը
մէկ լուսաւոր ամպմը եկաւ բոլոր տաճարին մէ-
ջը լեցվեցաւ, ու երկինքէն կրակ ինջաւ ան ըրած
ողջակէզները զոհերը երեց լափեց. ասբանս որ
տեսաւ ժողովուրդը՝ սոսկալով երեսնին վրա
ինկան փառք կուտային ։ Յ։տքը ան գիշերը
։ ծ մէյմալ երևցաւ սողոմոնի, ու ըսաւ թէ քու
ըրած աղօթքներդ մտիկ ըրի, որ աս տաճա-
ռիս համար ինչ որ խնդրեցիրնէ կրկատարեմ.
անիկա իմ տունըս կրսեպէմ, միան թէ իմ տրվ-
ած օրէնքներս և պատուիրանքներս պա-
հէս, ու դաւիթ հօրդդ պէս հաւատարմութիւ-
ինծի ծառայէս. որ անատենը որդւոց որդի
քու թագաւորական աթոռդ կրհաստատեմ։
Հ։ասպա թէ դուն կիմբուս որդիքդդ կիմ ժողովուրդ
դը դառնաք՝ կուռք պաշտելու որ ըլլաք, ձեզ
կրջնջեմ կրվերցունեմ աս երկիրներէս, ու աս
տաճարը երեսէ կրձգեմ՝ կրթողում որ երթա
կործանի ։

Տաճարը լրմնալէն ետև սողոմոն սկսաւ իր

թագաւորական պալատը շինել, անանկ հարուստ՝ մեծաշէն ու փառաւոր՝ որ տեսնողին աչքը կառներ, բովանդակ մէջի բանեցուցած փատերը ու տախտակները սուզ և ազնիւ լի բանան լեռանը մայր ըսած ծառերէն կրտրըված էր. անոր համար, ինչպէս որ կըսեն՝ պոռն անպատին լէբանանոս ըսվեցաւ ան պալատը։ Այս ասոր մէջը ամմէնէն փառաւոր բանը իր թագաւորական աթոռը (կամ թախտն) էր, որ փիլոսկրէ (այ՝ Ֆիլատիլֆէ) էր, ոսկի զարդեր անոր վրա հագուցած, վեց աստիճանով վեր կելլվեր, ու ամմէն մէկ աստիճանին վրա երկու դիէնալ մէյմէկ առիւծի կերպարանք շինած էր։ Այսկէ՛ի զատ՝ մէկ առանձին խիստ փառաւոր պալատմընալ սողոմոն շինեց փարաւոն թագաւորին աղջկանը համար, որ իրեն կընիկ էր առեր. և աս բոլոր շինվածքներըս քսան տարվան մէջը խալըսեցաւ։ Այտքը ծովու վրա նաւերալ շինել տրվաւ սողոմոն՝ ու սովիրը ըսած երկիրը խրկեց. ու իրեք տարին հեղմը անկէց շատ ոսկի ու ազնիւ քարեր և ուրիշ հազար բարիք կըբերէին սողոմոնի։ Այսպիսի կերպով սողոմոն իր մեծ իմաստութէն՛ի զատ հարըստութեամբ կողմանէալ մէկ հատիկ եղաւ, անանկ որ՝ չորս դին աշխարքըս իր անունը ելաւ. ու ան պատճառով շատ մեծամեծ մարդիք անոր տեսուն կըկարծէին։

Այսոնցմէ մէկը որ սաբա ըսած աշխարքին թագուհին էր, իր զօրքերովը և ուղտերով ընծաներ վրան բերեցուցած երուսաղէմ եկաւ՝ որ սողոմոնը տեսնէ՝, անոր իմաստուիրը փորձէ նայի թէ լսածները իրաւ է մի։ Այնտի երբոր ասիկա սողոմոնի առջևը ելաւ, ու իր միտքը

դրած բանները Հարցուց, անկէց տեղն 'ի տեղը ամէնուն իմաստութիւն պատասխանը առաւ. ետև անոր պալատին փառաւոր շինվածքները, ու իր սեղանին կերակուրները և և Հարուրաւոր ծառաներուն կարգն ու կանոնը, ու տաճարը ըրած զոհերը. աս ամէն բաներն որ տեսաւ՝ խելքը թռաւ արմնցաւ մնաց, ու դարձաւ սողոմոնի ըսաւ։ Այս հեռը վանց քու իմաստութիդ և մեծութիդ լսելով հաւատալս չէր 'ի գար. բայց հիմա իմ աչքովս որ տեսա, աս կըսեմ որ՝ ան լսածներդս կէսնալ չէ եղեր աս էվէլջը տեսածներուս. երանի՛ ըսաւ անոնց որ միշտ քու հետդ են, ու քեզի կըծառայեն, և քու իմաստութիդ կըլսեն. օրհնեալ է Տէր Աստծը, որ իսրայէլացիները սիրելուն՝ քեզիպէս մարդ վրանին թագաւոր դրեր է՝ որ արդարութիւն կառավարես իրենք։ Այտքը ան հետը բերած պարգևները սողոմոնի ընծայեց, Հարուր քսան տաղանդ ոսկի, (որ մէկ միլիոնմը խարախուրուշէն աւելի կըներ կըսեն) ու պատվական քարեր(յ՝ ՀԷվահիրներ), և կերպ կերպ անուշահոտ ազնիւ խունկեր (յ՝ պուհուրներ)։ Սողոմոնալ աս ընծաները առաւ, ու ինքնալ անոր տեղը ինչ որ ուզեցնէ տըվաւ իրեն. ետքը անանկ ելաւ թագուհին սաբա իր երկիրը դարձաւ։

ԳԼ. Ի.

Սողոմոնի մեղքը՝ ու իրեն մահը։

Գ. թագ. ԺԱ։ = Ամ Տի 3029։

Սողոմոն տարիքն որ առաւ՝ կամաց կամաց Տէր սիրուն պաղեցաւ, ու մարմնական ցանկու-

թէ տրվաւ զինքը. անանկ որ՝ փարաւոնի աղ-
ջիկն 'ի զատ չափէն աւելի ուրիշալ շատ կը-
նիկներ առաւ այլազգի կռապաշտներէն. որ
ասբանը՝ ճծ օրինաց մէջը իսրայեցոց արգելեր էր։
Նոքը այսպիսի անհաւատ կնիկներուն կամ-
քը կատարելու համար՝ չէ թէ միան անոնց
կուռքերուն տաճարներ շինեց, հապա ինքնալ
սկսաւ ան սուտ աստուածները պաշտել՝ իրեն կնիկ-
ներուն հետը անոնց առջևը զոհ մատուցանել։
Նոր համար ճծալ սաստիկ բարկացաւ սողո-
մոնի, ու ըրած ապերախտութիւնը՝ երեսը դարձ-
նելով, (որ իրմէն այսչափ բարիք առած մէկ-
զի ձգեց՝ գնաց սուտ կուռքերուն ետևէն ինկաւ.) իրեն ըսաւ որ՝ ահա քու մեղացրդ պա-
տիժ՝ ձեռքէդ կըպատռեմ կառնեմ քու թագաւորութիւդ՝ ու քու ծառայիդ ձեռքը կուտամ։
Այց ասբանը ըսաց՝ իմ հաւատարիմ դաւիթի ծառային սիրուն համար քեզի ինայելով, քու
օրդդ չեմ ըներ, և բոլորովին թագաւորութիւդալ քու ազգէդ չեմ առներ, հապա մէկ
գաւազանմը կի՞ ցեղմը կրթողում քեզի։ Նոքը ճծ ինչպէս որ ըսաւ՝ ընելիքը պատրաստեց,
որ սողոմոն աչքը չի գոցած՝ երկու հոգի այլազգիներէն մէկը ադեր ըսած, մէկալը ուասոն,
իրեն դէմ գլուխ քաշեցին, ու թշնամուն կը-
նեին իսրայէլացոց հետ։

Ասոնցմէ 'ի զատ՝ մէյմընալ յերոբովամ որդի
Նաբատայ ըսած, իսրայեցոց մէջէն եփրեմի ցե-
ղէն՝ որ սողոմոնի ծառայուն մէջն էր, ճծ ա-
քիա սիլոնացի մարգարէն ասոր խրկեց՝ որ նոր
լաթմը վրան առած եկաւ յերոբովամի քովը,
ու ան լաթը պատռեց տասվերկու կտոր ըրաւ։
Նտև անոր տասը կտորը յերոբովամի ձեռքը

տրվաւ ըսաց թէ՝ ՇԾ պիտի այսպէս սողոմոնի թագաւորութիւնը պատուէ, և անկէց տասը ցեղին տէրութիւնը հանէ քեզի պիտոր տա, ու միան երկու ցեղը անոր տալին պիտի թողու, որ երթա Եղիմ թագաւորուն ընէ. ան ալ դաւթի սիրուն համար. և աս բանիս պատճառն որ՝ սողոմոն ապերախտութիւն ՇԾ մէկ դի ձգեց՝ գընաց գարշելի կուռքերուն ետևէն ինկաւ։ Այս դունալ ըսաւ՝ թէ որ այ պատուիրանքները պահէս, ինչպէս իմ դաւիթ ծառաս ըրաւ, քու վրա ձեռք կրդնեմ, որ որդւոց որդի թիւրութիւնը քու մնէդ չիպակի։ Այս բանըս երբոր սողոմոնի անկաձը հասաւ, ուզեց որ յերոբոամը բռնէ մեռցունէ. անալ շուտմը փախաւ եգիպտացոց թագաւորին քովը գնաց, ու անկէց չիդարձաւ՝ ինչվան որ սողոմոն մեռաւ. որ բոլոր քառասուն տարի թագաւորուի քշեց։ Շատ վգպտներ կրսեն որ՝ սողոմոն ետքերը խելքը վրան ժողվեց ու ըրած մեղքերը ապաշխարեց, և անատենը ան Յողովող ըսած գիրքը գրեց աշխարքիս ունայնութիւնը վրա, որ առանկ կրսկըսի, Ունայնութիւն ունայնութիւնց ամ ինչ ընդունայն է։ Այց որովհետև ՇԾաշունչը իր մեղքերը պատմելէն ետև՝ անոր դարձին վրա յայտնի բանմը չկիրշեր, անոր համար ինչվան աս օրը տարակուսանքի տակ կրսեպվի անոր փրկուիլը կամ դատապարտուիլը, թէպէտ և իր գրածները ՇԾաշունչ գրոց կարգին մէջն է։

ԳԼ. ԻԵ.

Իսրայելացոց Բաֆաւորութիւնը երկրաւոր Հրաշաքներվն։

Գ. Թագ. Ժբ։ Բ. Մնաց. Ժ։ = Ամ. Յի 3029։

Սողոմոնի մեռնելէն ետև անոր, ինչպէս կըսեն՝ մէկ հատիկ մանչ զաւակը ռոբովամ բսած, երբոր սիկիմ քաղաքը գնաց, որ բոլոր իսրայէլացոց մեծամեծները հոն ժողված՝ ինքը հօրը տեղը Թագաւոր դնեն. և ան վերը բսած յերոբովամեայ հետերնին։ Իսրայէլացիք պինտ առաջ ռոբովամի աս խնդիրքս ըրին. քիչմը ըսին՝ մեզ Թեթեւցուր ան հօրըդ դրած ծանրը տուրքերէն, որ քեզ Թագաւոր նանչնանք՝ ու քեզի աղէկ ծառայենք։ Ռոբովամայ՝ իրեք օրէն ետև եկէք ըսաւ, որ ատոր պատասխանը ձեզի տամ։ ուստի գնաց առաջ սողոմոնի խորհրդատու ծերերուն հարցուց աս բանը. անոնքայ մէկ բերան իրեն խորհուրդ տըվին որ՝ անոնց ուզածը ընէ, առջի բերանը հետերնին անուշուք վարվի սրտերնին վատըկի, որ ետքը իր ուզածինպէս անոնք կառավարէ։ Բայց ռոբովամ, աս ծերերուն տրված խելացի խորհուրդը հերիք չիսեպեց, նորէն կանչեց խորհուրդ հարցուց իրեն բարեկամ տղոցը (կամ իրեն պոյատաշ նահիլներուն). անոնքայ մէկայ ծերերուն ներհակ՝ տուն տըվին՝ որ ասանկ պատասխան տա ժողովրդոցը. գիտնաք ըսէ՝ որ իմ պինտ պզտի մատրս. հօրրս մէջքէն հաստ է. հարրս ձեր վրա ծանրը բեռ դրաւ, ես ան բեռանը վրա նորէն պիտի էվելցունեմ. հարրս ձեզ գաւազանով կրծեցեր ես ձեզ քուքով (կամ փշոտ Թօփուզով) պիտի ծեծեմ։

Ռոբովամալ այ թոյլերվուԹէն կուրցաւ՝ ծերերուն խորհուրդը մէկդի Թողուց, աս անխելք խորհուրդիս հաւնեցաւ. ուստի խօսք դրածինալիս երրորդ օրն որ անանկ պատասխան տրվաւ, ան ատենը իսրայելացոց ժողովուրդը ապըստամբած գլուխ քաշեց ու զինքը ԹոՀվելով ըսին՝ մենք այսուհետև մասն բաժին չունինք դաւԹի տանը հետ, դուն գնա՝ քու ցեղիդ վրա Թագաւորուի ըրէ։ Բայանկ ռոբովամ երեսնին դարձուցին՝ տասը խիլացոց ցեղը մէկ եղած գացին իրենց զատ Թագաւոր դրին ան յերոբոամը որդին նաբատայ, որ ՀՈՍ ըսեր էր աքիա մարգարէին ձեռքովը։ Բայց ռոբովամ ասոնք խնդաղեցունելու վատրկելու համար՝ ետևնին մէկ իշխանմը խրկեց ադոնիրամ ըսած, բայց Հար չեղաւ, անանկ որ՝ խիլացիք անիկա բռնեցին քարկոծելով մեռցուցին. ու ռոբովամալ վախծաւ՝ եկաւ եղէմ փախաւ։ Բնկէ ետև երբոր ռոբովամ նորէն հարուր ութսուն հազար մարդ ժողվեց իր տակը եղած յուդայի ու բենիամենի ցեղէն՝ որ ան տասը խրայելացոց ցեղին վրա պատերազմ ելլէ՝ իրեն հնազանդեցունէ. ՀՈՍ սամ անունով մէկ մարգարէմը իրեն խրկեց, որ ըսէ Թէ աս բաժանումը այ կամքովը եղած է, պարապ տեղը պատերազմ չընէ։ Բյ անանկ վերջացաւ բանը, որ ռոբովամ միան յուդայի ու բենիամենի ցեղովը մնաց, ու յերոբոամ որդին նաբատայ՝ զատ Թագաւորուի սկսաւ ընել մէկալ իսրայելացոց տասը ցեղերուն վրա։ Բյսպէս որ իսրայելացոց մէկ տերութիւը երկուք բաժնվելեցաւ, երկուքինալ ետևէ ետև մէկ ատենի մէջ զատ զատ Թագաւորներ նըստան։ Ուստի մենք

ալ ասոնք մէյտեղ ջիխաւնելու համար՝ հիմա առաջ ԻԷլացոց տասը ցեղի թագաւորութիւն վրա կրպատմենք. ու ետքը յուդայի թագաւորներուն պատմութիւը կրգնենք։

ԳԼՈՒԽ.

Յերոբոամի ԻԷլացոց Թագաւորին մեղքը, և էրեն ջուր յաղերդները։

Գ. թագ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. = Ամ Հի 3030։

Յերոբոամ ուզելով որ իր տերութիւնը հաստատ պահէ, և վախնալով թէ ջուլա որ ԻԷլացիք ուծպաշտուէ համար՝ յուդայի երկիրը եղէմ տաճարը երթալով, կամաց կամաց իրեն ձեռքէն ելլէն՝ ու անոնց տերութիւն ներքեւը մնանէն. անոր համար իր թագաւորութիւն երկու գլխաւոր տեղվանքը, մէկը դան՝ մէկալը բեթէլ ըսած քաղաքները՝ երկու տաճար շինել տրվաւ. և երկուքին մէջնալ մէյմէկ ոսկիէ թափած հորթ դրաւ։ Լու արգիլեց իրեն ժողովրդոցը՝ որ մէյմալ եղէմ՝ երթան, հապա աս տաճարներուն մէկը երթան՝ հոն իրենց զոհը ՚ի մատուցանեն. նաև այսպէս քարոզեց ըսաւ որ՝ ասոնք ան ՚ուծներն են, որ ԻԷլացիք եգիպտոսի գերութէն ազատեր են։ Լակէ ՚ի զատ՝ լեռներուն գլուխը ուրիշ ուխտատեղիներալ սահմանեց, ու իր ուզածինպէս զևատացիներէն դուրս ուրիշ քահանաներալ դրաւ. անանկ որ՝ այսպիսի բաներով ԻԷլացոց մոռցուց իրենց Ճշմարիտ ՚ուծը, որ ալ սկսան յայտնի կուապաշտութիւն ընել. և աս պատճառով գրեթէ միշտ ՚ի պատուհասնալ վրանեներնէն պակաս չէր ըլլար։

Ի՛նչ յերոբովամ թագաւորը պինտ առաջ եր-
բոր բեթելը սեղանին վրա ելած՝ ան իր դրած
կուռքին առջեւը ինքը իր ձեռքովը հանդիսա-
ւոր զոհը կըմատուցաներ, անդիէն յուդայի
երկրէն ուած մէկ մարգարէմը խրկեց, որ հոն
եկաւ ան զոհին ատենը կանչեց ըսաւ՝ սեղան
սեղան, ուած կըսէ որ՝ դաւթի ցեղէն մէկմը
պիտոր ըլլա յոսիա անունով, որ քու վրատ
ատ քուրմերը զոհ պիտի ընէն, որ ատոնք հի-
մա վրատ զոհ կըմատուցանեն։(Ի՛նչ քանըս հա-
ւուրաւոր տարիներէն ետքը կատարվեցաւ՝ եր-
բոր յոսիա յուդայի թագը ան քուրմերուն ու-
կոմնեբը գերեզմաններէն հանեց, ու ան սե-
զանին մնացած քարերուն վրա երեց։) Ի՛նչ
խօսքիս նշան որ ձշմարիտ կրսեմ՝ ըսաւ մար-
գարէն, հիմա ատ սեղանը երկուք ձրդքըվի, ու
վրայի եղածը թափի։ Յերոբովամ ասոր վրա
սաստիկ բարկացած՝ երբոր ձեռքը երկրնցուց
ըսաւ թէ՝ բռնեցէք ատ մարդը, ան տեղը ձեռ-
քը չորցաւ մընաց, ու իր առջեւի սեղանը մար-
գարէին ըսածինպէս երկու կտոր եղաւ։ Ի՛նչ-
ատենը յերոբովամ աղաչեց ան մարգարէին,
ու անոր աղօթքովը բժշկըվեցաւ. բայց անանկ
ալ խելքը գլուխը չիժողվեց՝ չի թողուց ան
կռապաշտութիւնը մեղքը, որ անհամար ժողովուր-
դոցալ մեղայ պատճառ եղաւ։ Ի՛նչ ուած սաս-
տիկ բարկանալով վրան՝ պատժեց իր աբիա ը-
սած որդին. որ ծանրը հիվընտութիւնի մէջ ին-
կաւ։ Ի՛նչ ժամանակը յերոբովամ իր կնկանը
ըսաւ որ լաթերը փոխի՝ որ մարդ ինքը չիճանչ-
նա, ու հետը ընծաներ առած ելլի սելով եր-
թա ան աբիա մարգարէին քով՝(որ ատենով
իր թագորութիւնը համար մարգարէացեր էր,)

ու տղին բժշկութիւնը համար իրեն հարցունել։ Սնիկնալ երբոր ասանկ եկաւ մարգարէին տունը մտաւ, թէպէտ մարգարէն՝ ալ խիստ ծերութէն աչքը չէր տեսներ, բայց շուտմը ճանչցաւնեց իրեն. որ անունը տալով քովը կանչեց կնիկը, և ՝այ կողմանէ՝ յերոբովամի ըրած սպերախտուները ու կռապաշտուիր երեսը զարնելով՝ ըսաւ որ՝ անոր համար ՝ճշալ ինքը իր տրնով տեղովը և իր զաւկներովը պիտի ջնջէ վերցունէ՝ թագաւորութիւր ձեռքէնէն առնէ. և հիմա դուն ըսաւ ՝ուսնրդ դառնալուդպէս՝ ան աբիա ձեր տգան պիտոր մեռնի. և յերոբովամի տնէն միան ասիկա գերեզման պիտի մրտնէ իր բարեգործութիւնը համար. ինչու որ մեկալնոց՝ քաղքին մէջ մեռածը շները պիտոր ուտեն. ու դուրս տեղ մեռածը՝ թռչունները։ Ու անանկ մարգարէին ըսածինպէս բանը կատարվեցաւ։

Յերոբովամ ինչվան ետքը այսպիսի չարութիւն քսանվերկու տարի թագաւորութիւն քրշեց. և մեռնելէն ետև թէպէտ իրեն նաբատ ըսած որդին տեղը անցաւ, (որ ինքնալ հօրը կռապաշտուիւն ՝ամբան բընեց,) բայց երկու տարիէն աւելի չի թագաւորեց։ Պատճառն որ բաասա ըսած զրապետը իրմէ գլուխ քաշեց, ու վրան պատերազմ եկաւ ըսպաննեց՝ թագաւորուիր ինքը առաւ. ետքը աբիա մարգարէին ըսածինպէս՝ բոլոր յերոբովամի տունը թրէ անցուց։

Ու բաասա ըսածնալ մէկ աղէկ մարդմը չէր, ինքնալ կռապաշտուիր ձեռքէ չի թողուց. անոր համար ՝ճշ յէու մարգարէին բերնով յանդիմանեց զինքը, ու սպառնացաւ որ յերոբո-

վամիպէս իրեն ցեղնալ պիտի ոչընչացընէ։ Լ. ու անանկ ըսածնպէս կատարեցաւ. որ քանվի. ըեք տարի թագաւորեցին եաքը երբոր մեռաւ, ու իր որդին էլա ըսածը սկսաւ թագաւորել, անոր թագաւորութեան երկրորդ տարին, իր զորապետներուն մէկը զամբրի անունով՝ երբոր աս էլա թագաւորը կեր ու խումի մէջ էր՝ մնաւ սպանեց, ու ինքը թագաւորութիւնը յափշտակելով՝ մեռցուց ջնջեց բոլոր բաասայի ցեղին մարդիքը։

Լ. յոսիսի անօրէն արքունատէր մարդուս ձեռքնալ քիչ՝ թ էօթը օր միան մնաց տերութիւնը. ինչու որ՝ ամրի ըսած մէկալ զօրապետը անդին իր ներքևի մարդիքը թագաւոր դրին, ու ինքնալ շատ զօրքով եկաւ վրան եկաւ թերսա ըսած թագաւորական քաղաքը. զամբրի երբոր տեսաւ թէ քաղաքը կառնըվիկոր՝ ու ինքը իր թշնամին ձեռքը պիտի իյնա, իր պալատին կրակ տրվաւ՝ ու անանկ ինքնալ մէջը իր բոլոր բանտերովը երեցաւ։ Լ. որ եղաւ՝ նորէն ժողովուրդը երկուք բաժնըվեցան. կէսմը ամրիի հետ եղան. ու մէկալ կէսը եան մէկ ուրիշ մարդմը թամնի ըսած՝ կուզէին որ թագաւոր դնեն, բայց վերջը յաղթեց ամրի՝ ինքը թագաւոր մնաց, թերսա քաղաքը թողուց՝ գնաց իրեն ուրիշ թագաւորական քաղաք շինեց սամարիա անունով։ Լ. սիկայալ տասվերկու տարի յերոբովամիպէս կառապաշտութիւն թագաւորեցին եաքը որ մեռաւ, եուեէն թագաւոր նստաւ իրեն որդին՝ որ աքայաբ կըսվեր։

ԳԼ. ԻԳ.

Լ. ՀԱՅԱԲԻՆ ԱՂԱՅԱԲԻ ՀԱՐՈՒԵԼԸ ԷՅԱՆԴԻՄԱՆԷ՝ ՈՒ ԻՆՉՔԸ ԷՂԱՎԱԾՔԷ։

Գ. Թագ. ԺԷ. ԺԸ. ԺԹ։ = ԱՄ Հի 3092։

Աղքայաբ Թագաւորին կռապաշտութիւնը և անօրէնութիւնը անցուց իրմէ առաջ նստող Իսրայելացոց Թագաւորներուն ըրածը. պատճառն որ՝ Եզաբէլ ըսած իր կնիկը այլազգի Թագաւորի աղջիկ ըլլալով, անաստ զինքը կոչորդորեր այս պիսի չարագործութիւնները առաջ տանելու։ Ինոր համար ուրեմն սաստիկ բարկանալով վրանին՝ եղիա մարգարէն խրկեց որ Աքայաբի ըսէ Թէ՝ Իսրայելացոց Երկիրը տարինէրով պիտի չոր ցամաքուի պատժէ, անանկ որ՝ ամենևին անձրև պիտի չիգա. Եղիայի ըսածինպէս որ եղաւ՝ ան պատճառովը սաստիկ սովմը Լեկաւ Իսրայելացոց Երկիրը։

Ինատենը ուրեմն հրամայեց Եղիա մարգարէին՝ որ ինքը անապատ տեղմը՝ քոռաթ ըսած ջրին քովը երթա բնակի. ու հոն ագռաւները (յիւ խառղանները) առտու իրիկուն իրեն հաց ու միս կրբերէին՝ անով կապրեր։ Լտքը ատենով երբոր ան ջուրնալ ցամքեցաւ, ուրեմն հրամայեց Եղիայի որ անկէց ելլէ երթա սարեփթա ըսած սիդոնացոց քաղաքը, որ հոն իրեն մէկ որբևարի կընիկմը կերակուր տա։ Ուստի ան սովուն ատենը Եղիա աս սարեփթացի կնկանը քով ապրեցաւ՝ այլազգիներուն երկիրը. որ ան կնկանը քիչմը ալուրը ու եղը հրաշքով անանկ առնեցուց՝ որ որչափ կուտէին նէ անկէց չեր պակսեր։ Ասկէ 'ի զատ մէկ ու-

բիշ հրաշքմընալ բրաւ եղիա, որ ան որբևաբի
կնկան տղան, որ պատահմամբ ինկաւ մեռաւ,
եղիա աղօթքով ողջնցուց անիկա։

Այս ատենները աքայաբ ու եզաբել սաս-
տիկ սովին նեղած կատղած՝ եղիա մարգարէն
կրփընտռէին որ ըսսաննեն. անանկ սեպելով
թէ աս պատուհասը անոր խօսքովը եկած
ըլլա. ուստի եղիան որ չիգտան՝ իրենց կատա-
ղուիր մէկալ ՝ծածապաշտ մարգարէներուն վրա
թափեցին, ձեռվընին ինկածը կրմեռցուներին։
Սովին իրեք տարին որ եղաւ, ՝ծծ նորէն ե-
ղիայի հրամայեց որ՝ երթա աքայաբի երե-
նա. անալ երբոր գնաց առջևը ելաւ, աքայաբ
սրդողելով իրեն ըսաւ թէ դուն խորայէլացոց
խռովիչն ես մի, եղիանալ առանց վախնալու
պին տրվաւ, քաւ լոցի ըսաւ՝ ես չեմ խռո-
վեր խորայէլացիները, հապա դուն ըսաւ և
քու հօրդ տունն է, որ թողուցիք ՝որ ՝ծծը՝
ու բահաղ ըսած կուռքերուն ետևէն գացիք։
Այսքը ասանկ խօսք դրաւ աքայաբի հետ, որ
ան իր բոլոր կուռքերուն քուրմերը ութը հա-
րուր յիսսուն հոգի մէյտեղ գան ժողվին, եր-
կու եզ կիմկով բերին, ասանց մէկը որն որ կու-
զեն իրենք առնեն կտրրատեն՝ ու չոր փատերու
վրա դնեն, և անոր վրան իրենք իրենց կուռ-
քերը կանչեն. ու մէկալ ՄՏացած եզը թողուն
որ եղիան առնէ, ինքնալ իր ՝որ ՝ծծը կանչէ ի-
րենին վրա. անատենը որուն վրան որ կրբակ
ինջնի էրենէ, անոր ՝ծծն է Աշմարիտ ՝ծծ։ Այ
բանիս բոլոր ժողովուրդնալ հաւնեցան. ու ը-
սածինպես քուրմերը պինտ առաջ իրենց եզը
չոր փատերուն վրան դրին, և առտվանց ինչ-
վան օհարսակ անոր քովը կրպարտեին ու կը-

կանչէին բահաղ ջուրը. ու ձանձուն չիկար բանմը չէր ըլլար. եղիայալ անտառէնը իրենք ծաղը ընելով կրսէր, ամուր կանչեցէք որ արթընա լսէ՝ չըլլա թէ քնացած է ձեր բահաղ ուրը. և ասանկ ինչման իրիկուն պարապ տեղը կանչելէն ետքը, անոնց՝ մէկդի կեցէք ըսաւ եղիան. ու ինքը սկսաւ պատրաստել իր զոհը. մէկ խորունկ սեղանիմը մէջ չոր փատեր շարեց, անոր վրա եղը կտրրտած դրաւ. ու վրան տասվերկու սափոր ջուր լեցուցնել տրվաւ, անանկ որ՝ ան փատերն ու միսը կըլոզային ան ջրին մէջը. ու երբոր ատենը հասաւ, դէպ ի երկինքը կանչեց եղիա ըսաւ, Տէր Աստուծ Աբրահամու իսահակայ և Իսրայէլ, աս կրակովս դիտցուր քեզ՝ որ դուն ես Իսրայացոց Աստուածը, և թէ՝ քու հրամանովդ ես աս բանըս ըրի։ Այսոր ըսաց եղիա՝ ան տեղը շուտմը երկինքէն կրակ ինջաւ՝ երեց լափեց ողջակէզը ան փատերովը ու ջրովը. բոլոր ժողովուրդնալ աս հրաշքս որ տեսան՝ ամէնքը երեսի վրա ինկան ու ըսին թէ՝ իրաւի ան է Աստուածը Տէր Աստուածը։ Այնատենը եղիայալ հրամայեց ժողովուրդին որ ան բահաղի քուրմերը բռնեն որ չի փախչին, ու ամէնքը ջարդեց։ Յետու եղիա աղօթքալ ըրաւ որ անձրև տա, և անձրևին նշանը մարդ կարծիք չիգնացած՝ ինքը միան գիտնալով աքայաբ թագաւորին ըսաւոր՝ անձրևը քեզ չի բռնած ելլի շուտով տուն գնա կերակուրդ կէր ու անանկ եղաւ՝ որ Աստուծ աքայաբը տուն հասաւ ան սաստիկ անձրևէն Աստուծան չիբռնուած։ Այս եղիայի ըրածները երբոր լսեց Եզաբէլ, մանաւանդ ան քուրմերուն ջարդը, վրան անանկ սաստիկ սրդողեցաւ որ՝ իր կուռ-

քերուն վրա երդում ընելով եղեսայի խըրկեց ըսաւ որ՝ վաղվան օրը իրենալ անանկ պիտոր ընեմ՝ ինչ որ ինքը ան քուրմերուն ըրեր է։ Այդիա ան ժամանակը վախցաւ ուզեց երեսը ծածկել, ու ելաւ դեպ 'ի յուդայի երկիրը ա-նապատը փախաւ. բայց Ճամբան շատ նեղու-թիւն քաշելով անօթի ծարաւ, հրեշտակ ՝ի ի-րեն կերակուր բերաւ. որ անով ուժ առած՝ քառասուն օր քառասուն գիշեր՝ քորեբ սուրբ լեռը գնաց հասաւ. ու հոն մէկ քարայրի(՝ի՝ մաղարայիմը) մէջ կեցած՝ ՝ի հետ կըխօսեր կը-գանկտեր աս ինէլացոց կռապաշտուեր համար։ Այտքը ՝ուծալ իրեն սիրտ տալով հրամայեց որ՝ վերադառնա նորէն ինէլացոց երկիրը դառնա, երթա աղայէլ ըսած մէյմը ասորոց թագաւոր օ-ծէ, ու յէու զօրապետանալ ինէլացոց թագը շինէ. և եղիսէնալ առնէ իրեն տեղը մարգարէ դնէ. որ ասոնցմով աքայաբ ու եզաբէլ իրենց չա-րութիւնը պատիժնին գտնեն։ Այդիայալ ՝ի ըսա-ծիմպէս եկաւ՝ պիտի առաջ եղիսէն կանչեց ի-րեն աշակերտ ըրաւ, ու ետքը անոր ձեռքովը ան մէկալ երկուքնալ թագը օծվեցան։

ԳԼ. ԼԳԼ.

Ասայաբի ուրիշ գործերը, և իր լաւ սարակոմը։

գ. թագ. ՀԼ. ԼԼ. = Ամ Ցի 3103։

Որդի ադերայ ըսած ասորոց թագաւորը՝ ուրիշ այլազգի թագաւորներու հետ մէկ եղած՝ ինէլացոց վրա պատերազմ ելաւ, եկաւ սամա-ռիա թագաւորական քաղաքը պաշարեց. ու աքայաբի դեսպան խրկեց՝ ըսաւ որ, քու ու-նեցած արծաթներդ ոսկիներդ՝ կնիկներդ

ու զաւկներդդ բոլորը իմն են։ Լաքայաքալ վախէն իրեն պէտն տրվալ թէ՝ անանկ է՝ բոլոր ունեցածդս հրամանոցդ է։ Լսորոց թագաւորը նորէն իրեն խրկեց ըսաւ թէ՝ այնպէս է նէ՝ վաղը իմ մարդիքդս կըխրկեմ որ բոլոր ատոնք քովէդ ժողվեն առնեն ինծի բերեն։ Լաքայաք ասոր վրա խոր հուրդ որ կանչեց ինէլացոց ծերերը, ու անոնքալ դէմ կեցան ըսին թէ ատ ըլալու բան չէ. անատենը ասորինեբը ալ սկսան պատերազմի պատրաստուն տեսնել։ Ին ժամանակը մէկ մարգարէմը եկաւ ՝այ կողմանէ աքայաքի ըսաւ որ՝ չվախնա պէտ առաջ ինքը վրանին քալէ. ու տեսնէ որ ինչպէս ՝ուծ անոնք իրեն ձեռքը պիտի մատնէ։ Լու ըսածինպէս որ յանկարծակի ինէլացիք ասորիներուն վրան եկան՝ անոնցմէ խեղմը ջարդեցին ետեւ, ցիրուցան ըրին իրենք իրենց թագաւորներով, ու շատ կողոպուտ ձեռք ձգեցին։

Լ՝տքը ասորինեբը մրտվելնին ասանկ գնելով թէ՝ ինէլացոց ՝ուծը լեռներու ՝ուծ է՝ անոր համար անոնց բանը աջող գնաց՝ ըսելով, անոր մէկալ տարին նորէն պատերազմ բացին իսրայէլացոց հետ յափեկ ըսած գուրգաշինվրա։ Լ՝այց անատեղնալ ՝ուծ նորէն ան մարգարէն աքայաքի խրկեց ըսաւ որ՝ ինքը չէ թէ միան լեռներու՝ հապա գաշտերու ալ ՝ուծ է. ու այնպիսի յաղթուն տրվաւ ինէլացոյց՝ որ մէկ օրվան մէջը ան ասորիներէն հարուր հազար հոգի կոտրեցին, ու ողջ մընացածները իրենց քաղաքն որ փախան՝ անոնց վրայալ քաղքին պարիսպը փըլալ՝ քսանրեօթը հազարալ հոն մեռան։ Լ՝նատենը ասորոց թագաւորնալ մէկ գաղտուկ տեղմը փախստական եղած, իրեն ի-

խանները՝ խոնարհութիւն վրանին քուրձ հագած ու գլուխնին չըվան փաթաթած՝ (որ աս յաղ-թրվելու նշան էր,) եկան աբայաբի աղաչեցին, որ թողուի տա թագաւորին՝ իրեն բան չընե։ Աբայաբալ թողուի տալէն ետև կանչեց մեծարեց անոնց թագաւորը իր քովը հանեց կառքը նստեցուց, ետքը հետնալ ուխտ ու դաշինք ընելով՝ անանկ բարեկամուի թողուց որ երթա։ Այց ՝ի՞նչ աս բրածիս վրա սրդողելով՝ աբայաբի մարդարէին խրկեց, որ եկաւ մէկ առակովմը երեսը զարկաւ իրենց բռնած ճամբան. ու ըսաւ որ՝ ան մահապարտ մարդը չի մեռցունելուդ և ազատելուդ համար՝ քու կենաբրդ անոր տեղը պիտի տաս. ու քու ժողովուրդդ անոր ժողովրդին տեղը պիտոր ջարդվի. ինչպէս որ քիչմը ետև ըսածին պէս կատարվեցաւ։

Սկէ ետքը աբայաբ ու եղաբէլ օրէ օր իրենց անօրէնութիւնը և չարութիւնը էվելցունելով՝ աս ալ վրան դրին։ Նաբովթ ըսած մէկ մարդմը կար՝ որ էգիմը ուներ աբայաբի պալատին քովը. ասոր էգիին աչք տնկեց աբայաբ՝ որ առնէ իրեն պարտէզին հետ խառնէ՝ մեծցունէ։ Նաբովթ ոտք կոխեր էր չէ ուզեր տալ. կըսեր թէ իմ հայրենական ժառանգութիւնս ձեռքս չեմ հաներ։ Նպատակը աս բանիս ճարը եղաբէլ իր վրան առաւ որ հոգա, ուստի սուտ վրկանեքով զրպարտութի՝ (՝ի՞ իֆտիրա) ընել տվաւ Նաբովթի վրա, ու քարկոծելով սպաննել տըվաւ անմեղ մարդը. ու անանկ յափշտակեց աբայաբ Նաբովթի էգին։ Այց աս անօրէնութեան համար՝ ծած խրկեց եղիա մարգարէն՝ որ աբայաբի ըսէ թէ՝ ուր որ ան անմեղ Նաբով

թին թափած արունը շները ու խոզերը լափեցին նէ, անտեղը քու արունդ պիտի անանկ լափեն, ու եզրայել քաղքին պատին տակը եզաբելի մարմինաւ շները պիտի ուտեն. և անկէ ետքը նաև աբայաբի ցեղնաւ բոլոր պիտի ջնջէ ամ, ինչպէս իրմէ առջի նստած չար թագաւորներուն ըրաւ. և այ ըսածինպէս շատ չանցաւ ու՝ աս պատիժներըս ասանկ կատարվեցաւ։ Իրեք տարիէն ետև ամ թագել տրվաւ որ աբայաբ միբիա մարգարէին ըսածը մէկդի ձգէ, ու իրեն սուտ մարգարէներուն խօսքովը նորէն պատերազմ բանա ասորիներուն վրա՝ որ ռամաթ գաղայադու ըսած քաղաքը անոնց ձեռքէն առնէ։ Այս ան պատերազմին մէջը աքայաբ չարաչար վիրաւորված որ մեռաւ, իրեն նստած կառքնաւ որ արունվրա եղեր էր՝ սամարիա քաղաքը ան նաբովթի էգիին տեղը բերած վրանալնինի՝ շները վրան թափեցան արունը կրըզէին։ Այսքը եզաբելի պատիժնաւ վրան հասաւ, ինչպէս տեղովը պիտի պատմենք։

ԳԼ. ԻԵ.

Ասողիայի պատիժը. և եղիա մարգարէին երիներորդ վերանալը։

գ. թագ. ա. բ. գ։ = Ամ Յի 3107։

Աքայաբ քսաներկու տարի թագաւորելէն ու չարաչար մեռնելէն ետքը՝ թագաւորնստաւ իրեն որդիա ըսած տղան, որ ինքնաւ իր հօրը ու մօրը չար ձամբէն դուրս չելաւ. և երկու տարիէն աւելի չմնաց՝ ասանկ մեռաւ։ Մէկ օրմը ասիկա յանկարծակի տանը պատուհանէն վար ինկած չարաչար հիվընացաւ,

անոր համար շուտմը մարդիք խրկեց ակկարան քաղաքը՝ որ հոն Ճանճիկ ըսած կուռքին հարցունեն իր հիվանդութիւնը համար՝ թէ պիտի բժշկվի մի, ինչպէս պիտոր ըլլա։ Բայց ժամանակը այ հրամանովը եղիա մարդարէն աս մարդիքներուն դիմացը հանդիպեցաւ, որ յանդիմանելով իրենց ըսաւ. ամօթ ձեզի՝ իբր թէ իսրայէլացոց մէջէն ՝ած պակաբ է՝ որ դուք ակկարան կերթաք որ Ճանճիկ կուռքին հարցունէք. չէ ատանկ չէ ըսաւ հապա այսպէս կըհրամայէ ՝ած, որ ոքոզիա թագաւորը պառկած տեղէն մէյմալ պիտոր չելլէ հոն պառկած տեղը պիտի մեռնի։ Դրբոր աս բանը լսեց ոքոզիա թագաւորը՝ ու իմացաւ որ եղիա թեզբացին է աս ըսողը, ետևէն յիսուն զինվոր խրկեց իրենց զօրապետովը՝ որ բռնեն իրեն բերեն. գնաց յիսնապետը եղիան գտաւ՝ ու ըսաց, ով մարդ ՝այ, թագաւորը կըհրամմէ որ ելլես իրեն գաս. եղիայալ ըսաց, թէ որ ես մարդ ՝այ եմնէ, հիմա երկինքէն կրակ կիջնա՝ քեզ քու յիսսունովդդ կերէ կըլափէ. ու անանկ եղաւ՝ ըսածինպէս հոն տեղը կրակը ինջաւ իրենք երեց. ետևէն նորէն ուրիշ յիսսունալ խրկեց թագաւորը, ու անոնց վրայալ առջիններուն փորձանքը եկաւ։ Բնկեց եաբը մէկ յիսնապետմընալ խրկեց իր յիսսունովը. որ ասիկա իրմէ առջիններուն օրինակը տեսնելով՝ եկաւ խոնարհուԹը եղիայի առջեը չոքելով աղաչեց որ իրեն խնայէ՝ այնպիսի պատիժ չիտաւ։ Բնդատեր եղիա ՝այ հրամանովը՝ հետը ելաւ թագաւորին գնաց, ու համարձակ երեսն 'ի վեր յանդիմանեց իրեն կուապաշտութիւնը, եաբը ըսաւ թէ դուն պիտոր մեռնիս.

և անոր վրա շատ չանցաւ՝ մեռաւ ոբողիան։
Հտևէն ինքը որդի չունենալով, իր յովրամ՝ ըսած եղբարը թագաւոր նստաւ՝ տասվերկու տարի. ասիկա թէպէտ իր հօրը ու մօրը չար Ամաքէն քիչմը դուրս էր, բայց յերոբովամի մեղքէն ազատ չեղաւ, ան երկու հորթերը պաշտելը չի թողուց։
Հբոր օրը կամեցաւ՝ որ եղիա մարգարէն ողջ ողջ աշխարքէս վերցունէ, ու յայտնեց Եղիայի. անալ կուզեր աս բանը գաղտուկ պահել, որ մարդ չիմանա։ Հայց Եղիսէն Եղիայի սիրելի աշակերտը՝ աս բանիս կռահ երթալով ուր որ Եղիան կերթար կառանձնանար՝ անալ քովէն չէր զատվեր։ Հտբը տեսնելով Եղիա որ Ամաքէ չիկայ քովէն չիբաժնվիր, Եղիսէն իր հետը առաւ՝ ու գնաց հրաշքով յորդանան գետը պատուեց՝ մէջէն քալելով մէկալդէն որ անցան, ալ յայտնեց Եղիսէի թէ ես պիտի աշխարքէս վերնամ երթամ, ուստի ինչ որ ըսաւ՝ կուզեմնէ խնդրէ իսմէն որ քեզի տամ։ Հղիսէնալ ըսաւ թէ՝ քու կրկին հոգիդ իմ վրաս ըլլա, (ցՀ՝ անոր մարգարէուիը և հրաշագործութիը. կամ կրկին (ցՀ՝ երկու խաթ զօրութիդ։) Հղիայալ պէն տրվաւ թէ՝ դժվար բան է ուզածդդ. բայց այսու ամիս թէ որ երկինքը ելլելու՝ տեսնեմնէ՝ թող անանկ ըլլա։ Հբոր աս բանները մէկմէկու հետ խօսելով կերթային, մէյմնալ յանկարծակի հրեղէն կառքեր կրակ կտրած ձիերով եկաւ երկնց երկրքին մէջը մնան, ու եղիա մարգարէն առին յափշտակեցին դէպ՝ի վեր երկինքը կըտանէին։ Հբ որ տեսաւ Եղիսէն՝ սկսաւ ետևէն կանչել՝ հայր իմ հայր իմ, ուր կըթողուս կերթաս՝ որ

իէլացոց կառքը ու կառավարնալ դուն էիր։ Ինանկ տրտմուբ Եղիսէն վրայի լաթերը պատռեց, ու Եղիայի վերարկուն ձեռքը առած (որ Եղիան վերէն իր վրա ձգեր էր, ինչպէս կըսէն. նշան՝ թէ անոր ուզած խնդիրքը կրկատարէ, (Եկաւ անիկա յորդանան գետին վրա զարնելով մէջէն երկուք բաժնեց ջուրը, ու նորէն աստիս անցաւ։

ԳԼ. Լ.Օ.

Լ՝ղիսէ մարգարէին հրաշագործութիւնները։

գ. թագ. գ. Ե. գ. է։ = ԱՄ Տի 3109։

Լ՝բրոր Եղիայէն դարձաւ՝ երիքով քաղաքը եկաւ Եղիսէն, քաղքին մարդիկը իրէն եկան, կրգանկտէին իրէնց երկրին անբերութիւնը (՝ի՝ խռաձուութիւնը) համար, որ լեղի ու անշահ ջրերէն առաջ կուգար. Եղիսէաւ գնացան ջրերուն բխած տեղը աղ ձգեց, որ ասով երիքովի ջրերը անուշցան, ու երկիրը պտղաբեր եղաւ։

Լ՝սկեց ետեւ Եղիսէ երբոր երիքովէն ելեր բեթէլ կերթար. Ճամբան մանրը տղաքներ իրէն առջեւը ելան՝ ինքը ծաղր ընելով կըսէին՝ Է՛լ կընտակ Է՛լ կընտակ, (՝ի՝ տաղ գլուխ) Եղիսէնալ անոնք անիծելունպէս՝ անտեղը մօտ անտառէն (՝ի՝ օռմանէն) երկու արջ փրթան վրանին՝ ու պատառ պատառ ըրին ան տղաքները, որ քառասունվերկու հոգի էին։

Ա՝ԷԿ օրմընալ բարեպաշտ որբեւարի կնիկմը եկաւ Եղիսէին առջեւը ինկաւ, ու լալով իր խեղճութիւը կրպատմէր թէ՝ անչափ աղքատութեամէջ ինկեր է որ՝ իրէն պարտքնտէրը եկեր երկու

զաւակնալ քաշել տանիլ կուզէկոր իր պարա-
քին տեղը։ Այլեսէնալ իրեն հարցուց թէ՝
տունդդ քանմը չէ մնաց մի. կնիկնալ ըսաւ որ՝
ալ ամենէն բանմը չի կա՝ միան ամանով քիչ-
մը եղ մնաց։ Այլեսէ հրամայեց իրեն որ երթա
իր դրացիներէն փոխ պարապ ամաններ ուզէ՝
որչափ որ կրնա. ու տղոցը հետ իր տունը մը-
տած՝ ան եղովը ան ամանները լեցուն է։ Ար-
նաց անանկ ըրաւ կնիկը, որ հրաշքով ան քիչ-
մը եղը շատ ամաններ լեցուց, անանկ որ՝ ա-
նոնցմէ աւելիալ ամաններ գանըվերնէ՝ անոնք
ալ կըլեցվէին։ Այտքը անչափ եղը ծախելով՝
իր պարտքէն խալըսեցաւ։

Այտեսով եղեսէի պէտք եղաւ որ՝ շատ ան-
գամ սոմնա ըսած քաղաքը երթա. և հոն մէկ
բարեպաշտ ամուլ կընիկմը իր երկանը հրա-
մանովը սիրով պատվով իր տունը կառներ
կընդունէր մարգարէն։ Այլեսէ ուզելով որ
ասոր բարի սրտին հատուցումը ընէ, աստուծ-
մէ խընդրեց որ անոր զաւակմը եղաւ. և աս
տղաս մեծնալէն ետքը՝ յանկարծ որ ինկաւ մե-
ռաւ, եղեսէն աղօթքով ողջնցուց տղան, ու
կենդանի մօրը ձեռքը տրվաւ։

Այաև ասոնցմէ 'ի զատ ուրիշ հրաշագործու-
թիւններալ ըրաւ եղեսէ մարգարէն. որ գլխա-
ւորներէն մէկը եղաւ նեեմանի բժշկութիւը։
Այս նեեման ըսածը ասորոց թագաւորին զօ-
բապետն էր որ շատոնցմէ բորոտուէ ախտով
կըտանջվէր ասիկա լսելով որ իսրայելացոց երկի-
ը մէկ հրաշագործ մարգարէմը կա՝ իր թա-
գաւորին հրամանով ու թղթովը հետը շատ
ըստակ և ուրիշ պարգևներ առած՝ եկաւ իս-
բայէլացոց յովրամ թագաւորին առջևը եղաւ,

թուղթը իրեն տըվաւ, որ մէջը գրած էր թէ՝ ահա իմ նէեմանն ծառաս քեզի կըխրկեմ, որ բորոտութէն բժշկես ինքը։ Երբոր աս տեսաւ թէլացոց թագաւորը, սիրտը դող եկաւ վախցաւ թէ՝ աս մէկ վարպետութիւնմէնք որ իրեն վրա ասորոց թագաւորը՝ առիթ կըփնտռէ՝ որ պատերազմ բանա, ուստի ըսաց թէ՝ ես ո՞ւ եմ մի՝ որ մարդ սպանեմ կամ բժշկեմ։ Երբը աս բանը բերնէ բերան անցնելով եղիսէի անկանձը որ ինկաւ, եղիսէ խրկեց թագաւորին ըսաւ թէ, ինչ սոսկացեր կըվախնաս, թող քովը գա նէեմանն, ու ինքնալ գիտնա որ թէլացոց մէջը մարգարէ մարդ կա։ Նէեմանալ իր ձիերովը ու կառքերովը երբոր եղիսէի դրան առջևը եկաւ. եղիսէն չերևցաւ իրեն, հապա խրկեց ուրիշի բերնով իրեն ըսաւ որ՝ երթա յորդանան գետը, ու հոն եօթը անգամ մտնա վերացվի՝ որ բժշկըվի։ Երբ որ լսեց նէեմանն՝ եղիսէի վրա բարկանալով՝ ես ըսաւ՝ կըկարծէի թէ աս մարդս պիտոր ելլէ ձեռքը վրաս դնէ, ու իր ոյ կարգացմունքներ ընելով իս բժշկէ. մեր դամասկոսի գետերը թէլացոց ջրերէն աղէկ չէն մի ըսաւ՝ որ ես հոն չերթամ վերացվիմ ու անով բժշկըվիմ։ Երբոր նէեմանն սանկ սրդոզած թողթվեց եղիսէն՝ ու կուզէր որ ալ երթա, իր ծառաները նորէն մէջ մըտան յորդորեցին ինքը, թէ մարգարէին ըսածը թեթև բանմընէ, թող փորձելու համար ընէ։ Էն ատենը նէեմանալ յորդանան գետը գնաց. ու եղիսէի ապրսպրածինպէս հոն եօթը հեղ որ վերացվեցաւ՝ այնպէս կատարեալ բժշկըվեցաւ որ՝ վրայի միսը մէկ մատղաշ տղամարմին դարձաւ։

Այս հրաշքս որ եղաւ, նեղեման եկաւ նորէն եղիսէին քովը եկաւ, ու շնորհակալութիւն փառք տալով այ կրսէր որ՝ հիմա կը հաւատամ թէ աշխարքիս վրա ալ ուրիշ ոչ մի կա՝ իսրայելացոց երկրի ոչ մէն՝ի զատ. և իր բժշկութիւնը համար երախտագիտութիւն ցուցունելով, ան հետը բերած ընծաներէն հանեց որ եղիսէի տա. բայց եղիսէն ամենևին բանմը չուզեց առնել։ Այն ատենը նեղեմանալ կատարեալ գառնալով ոչ ոչ պաշտ ըլլալով բարի հաւատքով եղիսէին խնդրեց որ՝ երկու ջորիի բեռ իսրայելացոց երկրէն հող վերցունէ առնէ հետը իր երկիրը տանի, որ անոր վրա՝ իբր թէ՝ երկրի վրա կեցած՝ ճշմարիտ այ՝ իր աղօթքը ու բարեպաշտութիւնը ընէ։

Բայց մէկ զարմանալի դիպվածմալ պատահեցաւ աս նեղեմանի կեցիք բարով ընելու երթալու ատենը եղիսէն մէկ փոքրաւորմը ուներ գեհազի անունով, ասոր դժվարը եկաւ թէ՝ ինչու եղիսէ նեղեմանէն բանմը չառաւ՝ որ մարդը սիրով հաներ կուտարկոր. ուստի ինքը ետևէն վազեց գնաց նեղեմանի հասաւ, իրեն սուտ ըսաւ թէ՝ վարդապետս իս քեզի խրկեց որ՝ բերած ընծաներդ մէկ տաղանդմը արծաթ, ու երկու ձեռք հագնելու լաթ տաս. որ երկու աղքատ մարդիքներու պիսի տամ, որ խիստ կարօտուն մէջ են։ Նեղեմանալ սիրով յօժարութիւնը հանեց իրեք տաղանդ արծաթ երկու պարկի (կամ չուվալի) մէջ լեցրնել տրվաւ և ան հագուստներնալ մէյտեղ՝ ծառաներուն կանչակը տրվաւ գեհազիին հետը ճամբեց։ Երիկվան դէմ մթով մարդ չիտեսած՝ գեհազին աս բաները գաղտուկ տունը առաւ խոթեց

պահէց. և մարդու բան չըսած, ատենն որ է-
զաւ՝ կեղծաւորութիւնքերբոր եղիսէին առջևը է-
լաւ որ իր ծառայութիւը ընէ. եղիսէն դարձաւ
իրեն հարցուց թէ՝ ուսկից կուգասկոր. անալ
ըսաւ, ծառագ հոս էի՝ տեղմը չեմ գացեր։
Ան ատենը եղիսէն սրդողելով երեսը տրվաւ
ըսաց, գիտես թէ իմ հոգիս հոն չէր մի՝ երբոր
նէեմանի արծաթները ու հագուստները հա-
ներ քեզի կուտար. որ դուն անով գետինները
էգիներ ու կենդանիներ առնես, մեծնաս ծա-
ռաներու տէր ըլլաս. անոր համար քեզի կըսեմ
որ նէեմանի բորը քու վրադ և քու զաւակը-
ներուդ վրա անցնի։ Այս եղիսէի ըսածինպէս
տեղը շուտմը ձունիպէս գեհեղին վրա բորը
դուրս տրվաւ։

Սակէ եթը ասորոց թագաւորը նորէնպատե-
րազմ ուզեց բանալ իսրայելացոց հետ. ու կրնայեր
որ գաղտուկ վարպետ ձամբաներով իսրայելացոց
վրան ելլէ յաղթէ. բայց քանի անգամ որ կը-
ներ՝ չէր յաջողեր, ինչու որ՝ եղիսէ մարգարէն
անոր ըրածը կիմանար՝ իսրայելացոց թագաւորին
կըյայտներ. որ անալ զգաստ կենալով փուտ
կրլլար թշնամիին բռնած ձամբան։ Այս բա-
նիս վրա ասորոց թագաւորը կրզարմանար,
թէ ինչպէս կիմանա իսրայելացոց թագաւորը։
Այսքը երբոր եռևէ ինկաւ գիտցաւ որ՝ եղիսէ
մարգարէն է պատճառը, վրան զօրքեր խաւ-
բեց՝ որ երթան դովթայիմ քաղաքին բռնեն ի-
րեն բերեն։ Այրբոր աս զօրքերը եկան քա-
ղաքը պաշարեցին, եղիսէին փոքրաւորը ահով
դողով վազեց իրեն քովը՝ ըսաւ, տէր՝ մեր բա-
նը ինչպէս կըլլա։ Այղիսէալ անոր սիրտ տը-
վաւ թէ՝ մի վախնար, մեր հետի եղածները

ըսաւ անոնցմէ շատ են. ու խնդրեց ՝ցայ որ տը-
զին աչքը բանս որ տեսնէ. անալ հրաշքով տե-
սաւ որ բոլոր լեռը ձիաւոր զօրքերով ու հրե-
ղէն կառքերով թշնամիներուն դէմը կեցած՝
եղիսէն կըպահպանէին։ Այտքը երբոր թշնա-
միներուն զօրքը եկան եղիսէի մօտեցան որ բըռ-
նեն, աղօթքով անանկ կուրցուց անոնք՝ որ ա-
ռանց ճանչնըվելու ինքը ըսաւ անոնց թէ՝ եկէք
ան ձեր փընտռած մարդուն քով ձեզ տանիմ։
և անանկ առջևնին ինկած սամարիա քաղաքը
բերաւ. ու հոն ալ՝ինին բացաւ՝ տեսան որ ի-
րենց թշնամիներուն թիրական քաղքին մէջը
գերի բռնըված են։ Յովրամ իշխացոց թագաւորը
աս բանս որ տեսաւ՝ հարցուց եղիսէի թէ
ասանք ջարդեմ սպանեմ մի։ Այղիսէալ իրեն
ըսաւ թէ՝ անոնք որ քու թրովըդ չես բռնած,
իրաւունք չունիս մեռցուցնելու. հապա կերցուր
խմցուր իրենք, ու իրենց տիրոջը քովը ճամբէ.
անալ այնպէս ըրաւ։

Այտև շատ չանցաւ որ՝ ասորոց թագաւորը
նորէն եկաւ սամարիա քաղաքը պաշարեց, ու
այնպէս նեղը ձգեց՝ որ բոլորովին կերակուր-
նին հատած՝ սաստիկ սովէն ինչ որ կրգտնէին-
նէ կուտէին. անանկ որ՝ մէկ օրմը յովրամ թա-
գաւորը յաւսահատած քաղքին պարիսպին վրա
ելած որ կըպըտրտէր, վարէն մէկ կընիկմը ի-
րեն կանչեց ըսաւ թէ՝ թիւրոր օգնէ ինծի. ու
սկսաւ մէկ ուրիշ կնկանմը վրա պատմել թէ՝
աս կնիկս ինծի ըսաց թէ՝ քու տղատ բեր որ ա-
սօր ուտենք, ու իմ վաղը կուտենք. ուստի
իմ տղաս եփեցինք կերանք. և մէկալ օրն որ
կարգը իր տղին եկաւ, պահեց խաբեց իս։ Այ-
բանս որ լսեց թագաւորը՝ եղիսէին վրա կատ-

ղած կրակ կտրեցաւ, (իբր թէ անիկա անչափ հրաշքներ կընէ՝ ու աս նեղուլթեան ձարը չիտ-գարկոր,) երդում ըրաւ որ անոր գլուխը վը-բայէն կառնեմ, ինքը կըմեռցուներմ։ Ասանկ սպառնալիքով երբոր անոր մարդ խրրկեց՝ ետ-քը ինքնալ ետևէն գնաց եղիսէի առջևը եկաւ, և աս բաներուս վրա յուսահատած կըխօսեր. եղիսէն մէկէն իրեն պէտք տըվաւ թէ՝ ՇԱԾ ա-սանկ կըսէ որ՝ վաղվան օրը աս ատենս այն-պէս առատութիւն պիտոր ըլլա, որ մէկ գրիւ (կիսքիլէ) բարակ ալուրը՝ մէկ սիկղ (իբր կէս խուռուշ) պիտի ընէ։ Ամաւորին իշխանե-րուն մէկը ան ժիմկը դարձաւ իրեն ըսաց թէ՝ երկինքէն ալուրը անձրևիպէս մի պիտի գա՝ որ ատ ըսածդդ ըլլա. եղիսէալ իրեն պէտք տըվաւ որ՝ աս բանը դուն աչկովդդ պիտոր տեսնես՝ ու անկէց չուտես։ ու եղիսէին ըսածը այսպէս կատարվեցաւ։

Ղորս հոգի իսրայէլացի՝ բորոտուէ պատճա-ռով սամարիայի քաղքէն դուրս կըկենային. ասոնք ալ ան սաստիկ սովէն ձարերնին հա-տած՝ յուսահատութիւն՝ ան առտուն կանուխ մութուն եկան թշնամիներուն բանակը գա-ցին, որ թէ չըսպաննեն իրենք՝ դոնէ ուտելու բանմը ձեռք ձգեն որ ապրին. և անոնց բանա-կին մէջը վեր վար պրտրտին տեսնեն որ մարդ մարդաման չիկա։ Պատճառն որ՝ ան գիշերը ՇԱԾ անոնց մէջը մէկ սաստիկ ահմը ձգեր էր, իրենց հեռվանց զօրքերու ձիաւորներուն ձա-ներ լսել տալով. անանկ որ՝ կարծելով թէ իմ-ցիք ուրիշ թագաւորներու հետ մէկ եղած վրանին կըհասնին կոր. վախերնին ամմէն բա-ներնին հոն թողած բուրդ ու բապուշ փախեր

էին։ Ուստի աս բորոտները երբոր ասանկ ամէն բարիքով լեցուն գտան բանակը. ան տեղը նստան աղէկմը կերան խմեցին. ու արծաթով ոսկիով լեցված, եկան սամարիա քաղաքին պահապաններուն աւետիս տալին աս բանը։ Դադաւորնալ լսելով՝ առջի բերանը կարծեց թէ թշնամիները խաբեբայութիւն ետ քաշված ըլլան. բայց ետև երբոր մարդիք խըրկեց՝ նշաններէն իմացաւ որ՝ անանկ լեզապատառ փախեր են՝ որ ձամբուն վրայալ լաթերնին և ուրիշ բաներնին թողուցեր են. անկեց ետև՝ ալ բոլոր քաղաքը ելան թշնամիներուն բանակին վրա վազեցին, ու ժողվող ժողվողն անանկ լեցվեցան անոնց թողած բարիքներուվը, որ եղիսէի ըսածինպէս ցորենը ու գարին ոչինչ գընով կրծախվեր։ Լաև աս շիոթուես մէջը ան վերի ըսած թերեհաւատ իշխաննալ, որ քաղքին դուռը թագաւորը ինքը վերակացու դրեր էր՝ որ ժողովրդոց աղմուկը կարգաւորէ. անտեղը ան բազմուն ելլողին մնոողին ոտքին տակը ինկաւ մեռաւ, ինչպէս որ եղիսէ մարգարէացեր էր։ Լսոնցմէ 'ի զատ ուրիշ հրաշքներալ ըրաւ եղիսէ մարգարէն, ինչվան իր վախճանելէն ետքնալ։ Որ երբոր յոլաս թագաւորին օրերը մեռաւ ու թաղվեցաւ. անկեց մէկ տարիէն ետև մէկ մեռելը որ գերեզմանները թաղելու տարեր էին. աս թաղողներուն վրա աւազակներ հասան, անոնքալ վախերնէն շուտմը մեռելը հոն եղիսէի գերեզմանը ձգելունպէս՝ մեռելը ոսկրունցաւ ոտքի վերա ելաւ կայնեցաւ։

ԳԼ. ԻԷ.

Յեռ. ամսոյն ԺԵՂԷ հԷՆՔԷ՝ ԻՆՉԸ հԷՆՔԱՓԱՌՈՒԷ, և անոր Եսայեան Նոսոած Իսրայելացոց Ընթաւորունները։

Գ. Թագ. Թ. Ժ. Ժբ. Ժգ. Ժդ։ = Ամ Ցի 3120։

Ասորէն ասորոց հետ պատերազմ որ բացին Իսրայէլացիք, ու յոլովամ Թագաւորը աս պատերազմին մէջը վիրաւորված երբոր եղբայրը ըսած քաղաքը բերին՝ որ հոն իրեն պէտ ընէն. անատեսը ՅՀրամանովը եղիսէն իր աշակերտներուն մէկը հրամայեց դաղտայագ խրկեց, որ հոն յէհու ըսած իշխանը ինէլացոց վրա Թագաւոր օծէ, որ աբայաբի տանը վրա շատոնցմէ ՅՍպառնացած պատիժը՝ կատարէ։ Յեհուն ալ Թագաւոր եղածինպէս զօրքը ժողվեց շուտմը ելաւ եղբայրը քաղաքը յոլովամ Թագաւորին վրա գնաց. յոլովամ որ փախչել կուզէր, յեհուն ետևէն հասաւ՝ նետով զինքը հոնտեղը սպաննեց. և անոր մարմինը նաբովթի էգին՝ (որ ան տեղվանքը կըլլար) ձգել տրվաւ. որ ասով եղիա մարգարէին խօսքը կատարվեցաւ։ Ետքը դարձաւ յեհու՝ եղբայրը քաղաքն որ պէտի մտներ, տեսաւ որ եզաբէլ հագված կապված աչվրները ծարիր (Ցի՝ սիրմէ) քաշած՝ աղվորցած՝ անանկ իր պալատին պատուհանը կեցած իրեն խօսք կը նետէր, բարի եկար կըսէր՝ զամբրի տիրասպան, իբր Թէ յեհունալ զամբրիինպէս իր տերը սպաններ՝ անոր Թագաւորուիր ինքը յափշտակեր էր, ինչպէս որ վերը պատմեցինք։ Յեհունալ հրամայեց եզաբելի քովը եղած երկու ներքինիներուն՝ որ բըռնեն զինքը անկէց վար ձգեն. ու ձգածինպէս՝

անանկ կտոր կտոր ջախջախեցաւ՝ և ձիերու ոտ-
քի տակ ինկած կոխոխուեցաւ եղաբելի մարմինը՝
որ ետքը թաղելու համար Ձորով միան գլխուն
գագաթը ու ձեռաց թաթերը գըտան. ինչ-
պէս եղիա մարգարէին բերնովը ասս պատիժս
ալ ըսեր էր ՝ած։ Ինկէ ետքը յէհու բռնեց
Յարդել տըվաւ աքայաբի մնացած մէկալ եօ-
թանասուն որդիքը. նաև Ձամբովմը խաբեց՝
բոլոր բահաղ կուռքին քուրմերը մէկտեղ իր
տաձարին մէջը ժողվել տըվաւ, բռնեց ամմէն-
քը թրէ անցուց. ու բահաղի արձանը էրեց,
անոր տաձարը կործանեց, ոտիս Ձամբա չինեց։
Ինչ յէհու թագաւորին ըրած նախանձայուզու-
թիւնը՝ ՝ած վարձը տըվաւ որ չորս պորտ իրէն
զաւակէն թագաւոր նստի։ Ամէնպէտ յէհու այս-
պիսի գովելի բան ըրաւ, որ աքայաբի կռա-
պաշտ ցեղը բոլորովին աշխարքէս ջնջեց վերուց.
բայց ինքնալ յերոբովամի որդւոյ նաբատայ
մեղքէն ետ չիկեցաւ՝ անոր դրած հօրթիերը
պաշտելը չիվերցուց. անոր համար ՝ած ալ ի-
րէն պատիժ՝ նորէն ասորոց ազայէլ թագաւո-
րը իկելացոց վրա հանեց՝ որ իրենցմէ՝ շատ տեղ-
վանք առաւ ու ջարջարեց իրենք։

Յէհու քանըրութիւնը տարի թագաւորելէն ետ-
քը որ մեռաւ՝ եւուէն իրէն յովաքազ ըսած որ-
դին նստաւ տասնրեօթը տարի. որ ինքնալ ան
յերոբովամի կռապաշտութիւնը չիվերցուց. և ան
պատճառովը ՝ած ալ իսրայելացիները երեսէ ձը-
գեց, որ ուժերնին գնաց՝ ու ասորիները իրենց
երկիրները եկան տիրապետեցին։ Յովաքազի
եւուէն թագուհիը առաւ իրէն որդին յովասը։
Ինչ ատենը եղիսէ մարգարէն որ հրվըշտցեր
մեռնելու մօտ էր, քովը գնաց յովաս թա-

գաւորը, ու սկսաւ առջևը լալով ըսել թէ՝ դուն որ մեռնիմնէ իսրայէլացոց բանը ինչ պիտոր ըլլա։ Եղիսէնալ իրեն հրամայեց որ՝ աղեղը (ՅՕԽԵՍՅԸ) ձեռքը առնէ, ու իր ձեռքը անոր ձեռքին վրան դրրած՝ ըսաւ որ պատուհանէն դուրս դէպ 'ի ասորոց երկիրը շրջակ նետէ, որ աս նշան ըլլա ասորիները կոտրելու։ Եվ ասաւորնալ ասանկ իրեք հեղնետելէն ետև կանգ որ առաւ, անատենը եղիսէն ցաւեցաւ՝ վասն ափսոս ըսաւ՝ որ միան իրեք անգամ պիտի ասորիները ջարդես. էյ նէ՝ հինգ կամ վեց հեղնետած որ ըլլայիր՝ բոլորովին կը ջնջէիր անոնք։ Եղիսէի ըսածինպէս յովասաշ իրեք անգամ յաղթուի ընելով ասորոց դէմ, իր հօրը ատենը իսրայէլացոց կորսընցուցած քաղքները նորէն ետ առաւ։ Եղբը ամասիա ըսած յուդայի ցեղին թագաւորնալ, երբոր հպարտութիւն իսրայէլացոց վրա պատերազմ բացաւ, յովաս անալ յաղթեց՝ ինքը պատերազմին մէջը բռնեց, ինչվան եղէմ գնաց առաւ, և անկէց շատ կողոպուտ վերցուց սամարիա բերաւ։ Սիկայալ տասվերկու տարի թագաւորելէն ետև որ մեռաւ՝ տեղը իր տղան նստաւ յերոբովամ երկրորդ ըսած, որ քառասունը մէկ տարի թագաւորուի քրջեց։ Նոր ետևէն իրեն որդին նստաւ զաքարիա անունով. ասիկա յէհու թագաւորին ցեղին պէնտ ետքինը եղաւ, որ միան վեց ամիս թագաւորի ըրաւ։

Սոր չորսնալ առջի յերոբովամ թագաւորին կռաւ պաշտուիթէ Ճամբան գացին, անոր համար այ պատիժնալ վրանէն պակաս չեղաւ. անանկ որ ան ետքի զաքարիային վրան եկաւ սեղզուամ ըսած մէկմը՝ սպաննեց անիկա, ինքը անոր տե-

ղը մէկ ամսումը չափ թագաւորնստաւ։ Հետև սեղջումի վրայալ եկաւ մէկ աւելի զօրաւոր մարդմը մանայեմանուն ով, ու սեղջումը բռպանեց ինքը թագաւորութիւնը առաւ։ Այսիկա թերսա ըսած իսրայէլացոց քաղքներուն մէկը որ իրեն դէմ կեցաւ, երբոր վրան գնաց առաւնէ՝ շատ անողորմութիւնները ըրաւ անտեղը։ Հոգը ծանրը տուրքեր ձգեց իսրայէլացոց ժողովուրդին վրրա, ու տարաւ փուա ըսած ասորեստանի թագաւորին տրվաւ՝ որ ձեռքին խալըսվ վրայէն երթա, և իրեն կրռնակ կենա։ Այս մանայեմալ տասը տարի կռապաշտուք թագաւորելէն ետև մեռաւ նէ՝ իր տղան անցաւ տեղը, փակէէ ըսած. և անորալ թագաւորուեր տասը տարին որ եղաւ՝ իրեն իշխաններուն մէկը՝ որ փակէէ որդի ռովմելայ կրսվէր, ուրիշ ուժով մարդիքներու հետ խօսք դրած՝ եկաւ մեռցուց թագաւորը, ինքը յափշտակեց տերուութիւը։ Այսալ իրմէ առջիններէն վար չմընաց կռապաշտուէ և ուրիշ անօրէնութեց կողմանէ, ուստի ասոր օրերը եկաւ թագղաթփաղասար ըսած ասորեստանի մեծ թագաւորը ու իսրայէլացոց շատ տեղվանքը առաւ տիրապետեց և անոնցմէ շատ գերի բռնեց, ասորեստան տարաւ։

Հոգը փակէի թագաւորուեր քսանեբորդ տարին՝ մէկ ուրիշմը եկաւ ովսէէ որդի ելայի ըսած, որ փակէէն սպանեց՝ ինքը յափշտակեց տերուութիւը. և ան՝ իսրայէլացոց թագաւորներուն վերջինը եղաւ։ Հնչու որ՝ ովսէէ թագաւորը ինքը հարկատու ըլլալով ասորեստանի թագաւորին, խօսք դրաւ եգիպտացոց թագաւորին հետ՝ որ իրեն օգնէ՝ ու ան մէկաւ

լին տակէն եղէ։ Բ.նոր համար ոմսէի թագաւորուն եօթներորդ տարին՝ եկաւ սաղմանասար ասորեստանի թագաւորը, և իրեք տարի սամարիա քաղաքը պաշարելէն ետքը՝ մտաւ առաւ. ու բոլոր իսրայէլացոց տասը ցեղին երկիրը ներքնալ տիրապետելով, ոմսէէ թագաւորը շղթաներով կապած իսրայէլացոց հետը ասորեստան գերի տարաւ։ Բ.ւ անոնց տեղը՝ ասորեստանէն և ուրիշ երկիրներէն աստիէն անդիէն մարդիք ժողված բերաւ սամարիայի կողմերը բնակեցուց. որ ասոնք ետքը մէկ զատ ազգիմ ըլէս եղած Համարացիք ըսվեցան։ Բ.ոչի բերանն որ աս կռապաշտ մարդիքը եկան, ած իրենց պատիժ իրկեց՝ որ առիւծներ վրանին կուգային՝ շատ մարդ կըմեռցուցնէին։ իրենքալ ասորդան թագաւորին ասանկ հասկըցուցին բանը՝ թէ ան երկրին աստուծուն օրէնքը չիգիտնալով՝ կըպատժըվինկոր։ Բ.նատենը թագաւորնալ՝ իսրայէլացոց բըռնած գերի տարած քահանաներէն մէկը իրկեց իրենց, որ եկաւ բեթէլ քաղաքը նստաւ, ու մովսիական օրէնքները անոնց կրսորվուցնէր։ Համարացիներնալ ան ընդունեցան, բայց իրենց ունեցած կուռքերնալ ձեռքէ չի թողուցին, անանկ որ՝ աստուծմալ կրվախնային, ու իրենց կռապաշտուելնալ կրնէին։

Բ.յսպիսի կերպով վերջացաւ իսրայէլացոց տասը ցեղին թագաւորուելը. որ երկու հարիւր յիսուն տարի չափ դիմացաւ՝ առջի յերոբոամէն սկսած՝ ինչվան աս ետքի յոսէէ ըսածը, որ տասնըվիներ ոդ թագաւոր եղաւ։ Բ.ս բոլոր իսրայէլացոց թագաւորները մէկ քան զմէկ չարանալով և կռապաշտուելով ընելով՝ ներքևի

եղած ժողովուրդն ալ իրենց չար օրինակով գլխէ հանեցին. այնքան որ՝ մեղքերնուն չափը լցվելով. ՝ծծալ ձեռվընկն առաւ Թագաւորունին. ու երեսէ ձգեց Թողուց՝ որ երԹան գերի ծառա ըլլան ան Թագաւորներուն և աղ գերուն, որ անոնց կռապաշտու�գերը ետևէն ինկեր չէին զատվեր. ու ամենևին չէին մըռեր այնչափ՝ որ մարգարէից խրատներուն. որ մէկ-մէկու ետևէ ՝ծծ իրենց կըխրկեր՝ որ մտիկ ընեն դարձ գան։ Լչ Թեպետ յուդայի ցեղին մէջնալ պակաս չեղաւ կռապաշտուիը, և չար Թագաւորները. բայց բարինեբալ գըտնըվեցան՝ որ ՝ծծպաշտուՄիը ձեռքէ չիԹողուցին. որ աչնով քիչմը աւելի քշեց իրենց տերուիը. ինչպէս ալ Հիմա պիտի դառնանք անոնց վրա պատմենք։

ԳԼ. ԻԸ.

Յուդայի ցեղին Բռափաորները՝ ռոբովամ սկսած մինչև յոչիաս։

Գ. Թագ. ԺԲ. ԺԵ. ԻԲ։ Գ. Թագ. Գ։ Բ. Մնաց. ԺԲ. ԺԳ։ = Աստ Տի 3030։

Իսրայէլացոց տասը ցեղն որ բաժնըվեցան՝ ինչպէս վերը պատմեցինք, միայն յուդայի ու բենիամենի ցեղին վրա Թագաւոր մնաց ռոբովամ սողոմոնի որդին, որ քառասունը մէկ տարվան մարդ էր։

Ա. Սիկա՝ առջի իրեք տարին ՝ծծպաշտուՄիը աղէկ անցուց. բայց անկէց ետքը իր հօրը չար օրինակին հետևելով Ամբան փոխեց, աչնանկ որ՝ ՝այ տաՀարը մէկդի Թողած՝ կուռքերու տեղվանք շինեց լեռներուն և անտառ-

ներուն մէջը, որ ասով իրեն տակը եղած յու-
դայի ժողովուրդնալ գլխէ հանեց։ Նոր հա-
մար սաստիկ բարկացաւ ՝ծ, ու ռոբովամի
թագաւորու�մը հինգերորդ տարին՝ թող տը-
վաւ որ սուսակիմ եգիպտացոց թագաւորը անհա-
մար զօրքով եկաւ իր երկիրները մտաւ՝ ինչվան
եղէմ հասաւ. ու բոլոր տաճարին և թագաւո-
րական պալատին ոսկեղէն ու արծրթեղէն բա-
ները ժողվեց առաւ. և վրանինալ ծանրը տուր-
քեր դրաւ։ Նոր վրա քիչմը խելվանին գլուխ-
նին ժողվեցին՝ ռոբովամ և իր մեծամեծքը.
յայտնի տեսնելով ՝ծային բարկուելը, որ սա-
միաս մարգարէն իրենց առջևը դրաւ. ու ասով
՝ծալ դադրեցուց պատիժնին, որ թշնամին ի-
րենք թողուց ելաւ իր տեղը գնաց։ Այց այ-
սու ՝ամիւ ռոբովամ նորէն իր առջի չար ՝ամ-
բան դարձաւ բռնեց ինչվան իր մահը՝ որ տաս-
նը եօթը տարի թագրելէն ետև մեռաւ, երուսա-
ղէմ քաղաքը թաղեցաւ։

Բ. Աբիաս կիսաբիու՝ ռոբովամի բանը ու-
թը որդոց մէջ հօրը աւելի սիրելի զաւակը, իր
ետևէն թագրեց. որ ասոր չարութինն ալ կուա-
պաշտութե դիէն՝ իր հօրմէն շատ վատ չէր մը-
նար։ Նէ որովհետև միշտ թշնամուի և ներ-
հակուիմը մընացեր էր՝ յուդայի, ու իսրայէլի
տասը ցեղէն մէջը՝ ան ռոբովամի ատենին բաժ-
նըվելու պատճառովը, աս աբիայի և յերոբո-
վամի իսրայէլացոց թագաւորին մէջը նորէն
մէկ մեծ պատերազմը բացվեցաւ։ Աբիայի
դիէն յուդայի զօրքը չորսհարուր հազար էին,
ու յերոբովամի դիէն իսրայէլացոց զօրքը՝ ու-
թը հարուր հազար։ Երբոր պատերազմ սկը-
սելու եղան՝ աբիաս անատենը ՝ածպաշտուե

կողմը բռնելով՝ ելաւ կանչելով իսրայէլացոց յորդորանքը որ ըրաւ՝ որ նորէն գան դաւ-թի թագաւորութիւն ներքեւը դառնան, ու Ն՚ՀՄարիտ ՝ծ պաշտեն իրեն տաճարին մէջը։ Ն՚ս ասաղ ըսաւ՝ իրաւ որ հիմա դուք մեզմէ շատվոր էք, բայց ձեր օգնականը յերոբովամի չինած հորթէ սուտ ՝ծներեր ըլլալով, և մեր հետը՝ մեր Ն՚ՀՄարիտ ՝ր ՝ծը, ինչպէս ձեր բանը պիտի աջողի, որ անանկ դուք ՝ՅՎ դէմ եղեր կրպատերազմիք։ Ն՚ս բանս որ կրսէր ա-բիանա՝ յերոբովամ անդիէն իր բանակը անանկ կարգաւորեց որ՝ իսրայէլացոց ետևէն գացին յուդայի զօրքը մէջերնին առին։ Ն՚նատեղը ա-բիանալ իր զօրքովը սաստիկ նեղը ինկած՝ սկը-սան ՝ՅՎ աղաղակել օգնուի խնդրել. և այն-պէս չարաչար մէկմէկու հետ պատերազմելով, քահանաներնալ ՝ՅՎ ազօթք ընելով փողերն որ կրշաղեին, ՝ծ օգնութիւն հասաւ յուդայի բա-նակին, որ անտեղը հինգ հարուր հազար հոգի իսրայէլացիներէն կոտրեցին. (որ մէկ զարնը-վելով դեռ այսպիսի մեծ ջարդ աշխարքիս մէջը լսուած չէ,) և մնացած իրեք հարուր հազարին ետևէն ինկան փախցուցին ցիրուցան ըրին, ու առաջ գացին իսրայէլացոց երկիրնե-րէն շատ տեղվանք առին։ Ն՚ծ աս բանս ը-րաւ՝ որ իր ամենակարող զօրութիւնը ցրցունէ բայց ասուալ չիշհվեցաւ աբիայի սիրտը՝ որ կռապաշտութիւնը թողու՝ ՝ՅՎ դառնա. անոր համար ՝ծալ արժանի չի տեսաւ որ ինքը իրեք տարիէն աւելի թագաւորութիւն ընէ։

Գ. Ն՚ստ՝ աբիայի որդին իր ետևէն թագա-ւոր նստաւ։ Ն՚ռջի բերանը շատ գովելի և քա-րեպաշտական գործքեր ըրաւ ասիկա. Ջանաց

որ կռապաշտու�մեջ բոլորովին վերցունել իր տ-
ուրութիւն, այնքան որ չի խնայեց իր մասքա ը-
սած մօրնալ, որ կռապաշտուիւ մեջ հաստատ-
կեցեր էր՝ ինքը թագուհիուիւ վար ձգեց։ Ա-
սա՝ իր հօրմէն աւելի զօրքը շատցուց, որ միայ-
յուդայի ցեղէն իրեք հարուր հազար ունէր,
ուբենիամենի ցեղէն՝ երկու հարուր վաթսուն
հազար, բոլորը քաջ պատերազմող զինվորներ։
Օ արեհ եթովպացոց թագաւորը ասայի վը-
րան եկաւ հազար հազարով (՝՝ միլիոնմը զօր-
քով,) ու իրեք հարուր պատերազմական կառ-
քերով. ասայալ ՝՝՝ օգնուիը խնդրելով անոր
դէմը ելաւ, ու մեկէն սաստիկ ջարդմը տալով
աւրեց ցիրուցան ըրաւ անոնք, և ուրիշ շատ
կողոպուտներէն 'ի զատ եօթը հարուր կով ու
ուլթը հազար ոչխար անոնցմէ ձեռք ձգեց. որ
ասյաղթուիւն համար 'ի հնորհակալուիւ ՝՝՝ բե-
րաւ անոնք տաճարը զոհ մատուց։ Բտքը ա-
զարիա մարգարէին խրատովը ժողովուրդը մէյ-
տեղ ժողվեց ասա. նորէն ուխտ ու դաշինք ը-
րաւ ՝՝՝ հետ, որ բոլորովին կռապաշտական բա-
նները իր տերուէն մաքրէ վերցունէ, միան ՝՝՝
ծառայեն։ Բ՝նա այսպիսի բարի բաները ընտ-
ղէն ետև՝ իր թագաւորութիւն ետքի տարիները
կամաց կամաց փոխվեցաւ, սկսաւ ծուռ ճամ-
բա երթալ։ Ա՝էյմը՝ որ իր մեջը՝ ու բաստա ը-
սած իսրայէլացոց թագուրին մեջ պատերազմ որ
բացվեցաւ, ասա ՝՝՝ չիդիմեց՝ ինչպէս առջի անգ-
ամը, հապա մարգկային ճամբա բանեցու-
նելով ոսկի արծաթ ժողվեց, նաև ՝՝՝ տաճա-
րէնալ բան առաւ, ասորոց թագաւորին խրբ-
կեց՝ որ իրեն կրոնակ կենա օգնէ. և իրեն այս-
պիսի թերահաւատութիւնը համար անանիա

մարգարէն երբոր զինքը կրնայատեր, ասա վրա՝ սրդողեցաւ բռնեց մարգարէն բանտը դնել տրվաւ, ու աս բանիս ժողովրդոց մէջէն դէմ խօսողները՝ ըսպանանել տրվաւ։ Յրկրորդ՝ երբոր ասա իր ծերուէ ատենը մէկ սատիկ ոտքի ցաւովմը ինկաւ պառկեցանէ՝ փոխանակ ոյ դիմելու՝ բժիշկներուն ինկաւ՝ անոնց վրա իր յոյսը դրաւ. որ անոնքալ իրեն ձարմը չկրնալով ընել՝ մեռաւ իրեն թագաւորուելը քառասունը մէկ տարին. թէպէտ և շատ փառաւորութիւն զինքը թաղեցին։

Դ. Յոսափատ ասային բարեպաշտ որդին՝ ետևէն թագաւորեց, որ իր հօրմէն շատ աւելի հոգ ու ջանք ցրցուց ուծպաշտուէ և արդարութիւն կողմանէ. որ ղևտացի քահանաներու հետ՝ իշխաններ խրկեց ասա՝ անդին իր ներքևը եղած բոլոր քաղաքները և գեղերը, որ երթան ուծային օրէնքները աղէկմը սորվեցունեն ժողովրդոցը։ Նոր համար ուծալ օրհնեց իրեն թագաւորութիւնը, որ իր օրերը յուդայի երկրին ամմէն բանը աջող կերթար. անանկ որ՝ տասնըմէկ հարուր վաթսուն հազար (ՅՍ՝ մէկ միլիոն ու հարուր վաթսուն հազար) պատերազմող զօրքի տեր եղաւ. և իր բերդերը ու քաղաքները անանկ ամուրցուց, որ իրեն սահմանակից այլազգի տերութիւնները իրմէ կըվախնային և տուրք ալ կուտային։

Նայպէս որ մեծցաւ հարուստցաւ յոսափատ, աբայաք իսրայէլացոց թագաւորնալ ասորոց դէմ պատերազմ ունենալով յոսափատ թագաւորին աղաչեց որ իրեն հետ ելլէ. անալ չէ չըսաւ, միան թէ ուզեց որ մարգարէիմը ձեռքով՝ այ կամքը իմանա։ Նաբայաք

առ բանիս վրա իր սուտ մարգարէներուն ա-
մէնի հաստատելով որ յաջողութիւն կրնէին, քան
թէ միթիա Ճշմարիտ մարգարէին՝ որ ձախորդ
գուշակութիւն կրնէր ան պատերազմին. այնչափ
յորդորեց յոսափատը՝ որ իր հետ պատերազմ
հանեց։ Այլ ասոր պատերազմիս մէջը երբոր
յաղթեցին ու չարաչար մեռաւ աքայաբ.
յոսափատալ Հորով իր անձը խալըսեց երու-
սաղէմ դարձաւ. և ասոր համար ծանրը յան-
դիմանութիւն ըսեց յէհու մարգարէին՝ թէ դուն
ինչու այ ատելի մարդուն հետ բարեկամու-
ըրիր ու անոր խօսքը մըռեցիր, իրաւի ըսաւ
աս բանիս պատիժը կրգանէիր, եթէ ՝ծ քու
առջի բարեգործութիւններուդ համար քեզի
չիմնայեր։ Յոսափատալ ասոր վրա զղջալով
նորէն հոգ տարաւ որ իր տերութիւնը մէջ ՝ծ
պաշտութիւնը զարդարվի, ու ՝ծային օրէնքնե-
ըը աղէկ պահվին։ Այսկէ ետքը ամենացիք ու
մոլաբացիք և ուրիշ այլազգիներալ մէկ եղած
յոսափատի վրա պատրզմ բացին. յոսափատ
ալ աղօթքով ու պաքով ՝այ օգնականութիւնը
խընդրեց անոնց դէմ ելաւ. անոր համար դեռ
պատերազմը չըսկսած՝ ՝ծ թշնամիներուն բա-
նակին մէջ անանկ մէկ վախմը ու շփոթութիւնը
ձգեց՝ որ գրեթէ բոլորը մէկ զմէկ ջարդելով
հատուցին. ու անչափ բարիք թողուցին հոն
տեղը, որ Հորով իրեք օրվան մէջը կրեցին ա-
ռին երուսաղէմ ելին։ Այսանկ քաջուն քսա-
նըհինգ տարի թագաւորելէն ետքը մեռաւ
յոսափատ։ Մնչպէս ըսինք, թէպէտ այսպիսի
բարի թագաւորմընէր յոսափատ, բայց ետքը
աս պակասութիւնը մէջնալ ինկաւ, որ աքաղեայի
աքայաբի տղին հետալ բարեկամութիւ՝ի զատ

խընամուէ ըրաւ, անոր քուրը եղաբէլի աղջիկը իր տղին կնիկ առաւ։ Նոր համար ասսուծմէ աս պատիժը եկաւ վրան, որ երբոր ոքոզիայի հետ մէյտեղ ընկերու

ԳԼ. ԼԹ.

Հոգեւոյն ցեղին Թագաւորները ոչոչ էին սկսած ինչվան ասող։

Գ. Թագ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. Ի. Մնաց. ԻԲ. ԻԳ։
Ամ Տի 3120։

Զ. Ոքոզիա քանվերկու տարվան էր՝ երբոր հարը մեռաւ, անոր տեղը ինքը Թագաւոր նստաւ։ Յորիկայալ բոլորովին աքայաբի ցեղին կռապաշտուհիները՝ ու իսրայէլացոց երկիրը եղած անօրէնութիւնները յուդայի տերութեանմէջը մտցուց՝ իրեն գոդոզիա ըսած մօրը խրատովը։ Այնոր համար մէկ տարիէն աւելի չի Թագաւորած՝ աստուծմէ առաւ իր արժանաւոր պատիժը. որ իսրայէլացոց յորամ Թագաւորին քովը գտնվելով՝ որ անոր հիվանդութեան դացեր էր, հետը մէյտեղ սպանուեց ինքը յեհու Թագաւորը, երբոր ՝ոյ հրամանովը ելաւ բոլոր աքայաբի ցեղը Թրէ անցուց։ Գոդոզիայալ երբոր տեսաւ որ ոքոզիան մեռաւ, ինքնալ շուտմը ջարդել տրվաւ բոլոր Թագաւորութեան մնացած ժառանգները. ու ինքը նստաւ բրանեց յուդայի Թագաւորութիւնը։ Այն ատենը յովսաբեԹ ոքոզիայի քուրը ուրիշ մօրմէն եղած որ յովիադա քահանայապետին կնիկն էր, ոքոզիայի զաւակներուն մէջէն պզտիկը յովաս ըսած՝ որ մէկ տարվան տղա էր՝ ազատեց պահեց. ու յովիադա քահանայապետին ձեռքը տրվաւ, որ գոդոզիային գաղտուկ անոնք քովը տաճարը պահէ։

Է. Այսքը աս յովասը երբոր ալ մեծցաւ եօԹը տարվան եղաւ՝ յովիադա բահանայա-

պէտք ձեռաց տակէն իմացուց բոլոր թագաւորուն մէջը խօսքի տեր մարդիկներուն՝ ու զօրապետներուն, և մէկ շաբաթ տօնախմբութիւն օրմը սոնք ամմէնը մէյտեղ կանչեց տաճարը բերաւ, ու հոնտեղը անոնց առջևը յայտնի՝ գլուխը թագը դրած թագաւոր օծեց. որ ամմէնոյ ուրախութիւն ծափ զարնելով ցնծութիւնով ընդունեցան՝ Եղիշէ արքայ ըսին։ Ասոր որ բանը չէր գիտեր՝ աս ժողովրդոց իրարանցումն որ լսեց, ինքնալ իր մարդիկներովը վազեց տաճարը գնաց, ու երբոր տեսաւ թագաւորը աթոռը նստած՝ ու անոր քովը իշխանները և բոլոր ժողովուրդը՝ որ խնտութիւնով փողեր չալելով օրհնենք կրկարդային, կատղեցաւ՝ վրայի լաթերը պատռեց՝ աս ինչ դաւաճանութիւն է ըսաւ ձեր ըրածը։ Ինչ տեսներ ժողովուրդը ան տեղը ուզեցին որ բռնեն սպաննեն զինքը. բայց յովիադա չի թողուց, ըսաւ որ տաճարէն դուրս հանեն՝ անանկ մեռցունեն զոզողիան՝ իր խորհրդակիցներուն հետը մէյտեղ։ Ինկէ ետև յովիադա քահանայապետը նոր թագաւորին, և իշխաններուն ուխտ ու դաշինք ընել տրվաւ, որ կռապաշտական բաները մէջերնէն վերցունեն, ու ՚ուծային օրէնքները աղէկ պահեն. ուստի շուտմը գացին կործանեցին բահաղ կուռքին տաճարը՝ որ զոզողիան շինել տրվեր էր, ու բոլոր յուդայի երկիրը կուռքերէն և կռապաշտական բաներէն սրբեցին մաքրեցին. ետքը ՚ոյ տաճարը նորոգելու ալ ձեռք զարկաւ յովաս՝ և անալ պէտք եղածին պէս շինեց կարգի դրաւ։ Ինչանկ ՚ուծպաշտութիւն ու արդարութիւն աղէկ կերթար յովաս թագաւորը՝ քանի որ յովիադա քահանայապետը ողջ էր

և անոր խրատներովը կրկառավարվէր. բայց երբոր յովիտդան մեռաւ, կամաց կամաց իրեն իշխաններուն ծուռ խորհուրդներուն մտիկ ընելով, ինքնալ ՆՀ Թողուց՝ ու սկսաւ կռապաշտութիւն ընել։ Ա՛ս բանիս վրա յովսա Թէպէտ շատ խրատվեցաւ մարգարէներէն, բայց չէ Թէ միան շահմը չեղաւ. հապա ազարիանալ յովիտդայի որդին որ ասուծմէ խրկած տաճարին սրահին մէջը իրեն խրատ որ տալու եղաւ՝ ըսաւ Թէ ատանկ ընելով բանըդ չի յաջողիր. յովսա այնպէս սրդողեցաւ վրան, որ անոր հօրը իրեն վրա ըրած երախտիքը բոլորովին մոռնալով, անտեղը ինքը քարկոծել տրվաւ մեռցուց. որ անալ մեռնելու ատենը ըսաւ, ՆՀ տեսնէ՝ ու քու դատաստանդ ընէ։ Ա՛նոր համար ասոր մէկալ տարին Թոյլ տրվաւ ՆՀ՝ որ ասորիները քիչմը զօրքով յովասի վրա եկան, ու իրեն շատվոր զօրքը ջարդելով, Թագաւորական գանձը կողոպտեցին առին՝ անանկ եղան տեղերնին դարձան։ Ա՛տքը ինքը յովասալ՝ որ աս բանիս համար սիրաբ կոտրած հիվանդացած պառկեր էր, անատենը քանիմը հոգի իրեն ծառաներէն մէկ եղած՝ անմեզ ազարիա մարգարէին մահվանը ոխը հանելու համար, գաղցին ինքը իր մահիճին մէջը մորթեցին. որ քառասուն տարի Թագաւորուն ըրաւ։

Ը. Ա՛մասիա յովասի որդին քսանը հինգ տարվան՝ երբոր հօրը ետևէն Թագաւոր նստաւ. ան իր հարը մեռցուսողները բռնեց ըսպանեց. ու ինքնալ առջի քերանը բարեպաշտութի ցրցուց։ Ա՛սիկա ուզեց որ եդոմայեցիները որ յովրամ Թագաւորին ատենէն գլուխ քաշեր էին՝ նորէն իր տակը առնէ. և իրեն իրեքհարուր

հազար զօրքը բաւական չխնայելով՝ իսրայէլացոցմէն հարուր հազար զօրք՝ հարուր տասնեակ արծաթի վարձք տալու բռնեց, որ չորս հարուր հազարով անոնց վրա երթա։ Զրքոր ամասիա ասանկ պատրաստուելու պատերազմ պիտի ելլեր, իրեն մէկ մարգարէն մը եկաւ՝ ըսելով կոչմանէ ըսաւ որ, թէ որ կուզես յաղթութիւն ընել՝ ան իսրայէլացոց զօրքը քու հետերդինն չէ։ Ամասիանալ պիտի տալու թէ՝ հապա ան տալած ըստակը պարապ մի երթա։ Պարգաբէնալ մի վախնար ըսաւ, ուրիշ անոր տեղը քեզի աւելի շատը կուտա։ Նատենը ինքնալ հնազանդեցաւ, ան իսրայէլացիները մէկդի թողուց՝ միայն իր զօրքովը եդոմայեցիներուն վրան գնաց, անոնց տասը հազարը ջարդեց, ու տասը հազարնալ դերի բռնած չարաչար տանջանքով ըսպաննեց։ Հայց աս յաղթութիւնս իրեն գէշ գուռմը բացաւ, որ եդոմայեցոց կուռքերը առաւ եղէմ բերաւ, ու ուրիշ թողուց՝ սկըսաւ անոնք պաշտել։ Զրքոր երբոր այ կոչմանէ մարգարէն եկաւ ինքը խրատեց՝ թէ դուն ինչպէս ան աստուածները կրպաշտես՝ որ իրեն ժողովուրդը քու ձեռքէդ չիկրցան խլըսել, և ասոր համար պատիժդ պիտի աստուծմէ գտնաս՝ ամասիա վրան սրդողելով քովէն վըռընտեց անիկա ու ըսաւ՝ թէ որ մէյմալ բերանդդ բանանէ՝ քեզ կըմեռցունեմ։ Զրքոր այ պատիժը ասանկ ամասիայի վրան եկաւ որ՝ երբոր հպարտացած և իր ուժին վրա ապաւինած՝ յովասի իսրայէլացոց թագաւորին դէմնալ պատերազմ բացաւ. ան պատերազմին մէջը անանկ պրաչար յաղթըվեցաւ որ՝ ինքնալ բռնըվեցաւ. ու իսրայէլացիքը ինչվան եղէմ եկան առին, քաղ-

քին պարիսպները փլցուցին, ու բոլոր ոսկին արծաթը թալէցին տարին։ Այսալ հերիք չէ, ետև ամասիայի զօրքը իրմէ գլուխ քաշէցին, ինքնալ որ վախցաւ երեսը ծածկեց լաբիս քաղաքը փախաւ, ետևէն գացին հոն սպաննեցին զինքը, ու ետքը անկեց մարմինը բերին եղէմ թաղեցին. որ բոլոր քանըվինը տարի թագաւորութի ըրաւ։

Թ. Զիա կիմ ազարիա ամասիայի որդին տասնըվեց տարվան էր երբոր թագաւոր դրին իր հօրը ետևէն։ Այսալ առջի տարիները բարեպաշտուբ ու ուծպաշտութիւն կրկառավարեր իր տերութիւնը, անոր համար բանը կաջողեր, ու յաղթութիւններ կըներ այլազգի թագաւորներուն դէմ. և իր երկիրնալ շատ շինութիւններ ըրաւ, ու զինվորական բաները անանկ շտկեց կարգի դրաւ, քաղքներուն պարիսպները նորոգեց ամուրցուց որ՝ ուրիշ տերուններ ամէնը իրմէ կըվախնային։ Այց ասանկ երջանկութիւն թագաւորելէն ետքը՝ կամաց կամաց սիրտը այնչափ մեծցաւ հպարտացաւ որ՝ ուզեց քահանայական բաներուալ խառնըվիլ։ Այնոր համար մէկ օրմէնալ երբոր ՚ՈՒ տաճարին մէջ՝ բուրվառը ձեռքը սեղանը ելած քահանայիպէս խունկ որ կրծխեր, ազարիա քահանայապետը հետը ուրիշ քահանաներ առած իրեն դիմացը ելաւ ու յանդիմանելով ըսաւ թէ՝ ատ քու բաներդ չէ, հապա ահարոնի ցեղին քահանաներուն միան տրված է՝ որ ՚ՈՒ առջևը խունկ մատուցանեն, ուստի նայէ՛ չըլլա թէ ատով ՚ՈՒ հաճոյ բան ընելու տեղը՝ զինքը բարկացուցնես։ Զիայ թէրնալ քահանայապետին դէմ՝ սաստիկ սրդողելնին՝ յանկարծակի ՚ՈՒ պատիժը վրան

հասաւ, որ հնտեղը չարաչար մարմինը բորոտեցաւ. աս որ եղաւ՝ շուտմը ձգեց տաճարէն դուրս ելաւ. և անկէ ետև իր տունը քաշվեցաւ, անանկ բորոտած կեցաւ ինչվան իր մահը, որ յիսսունվերկու տարի թագաւորեց. և ան ատենէն իր յովաթամ ըսած որդին դրաւ՝ որ ժողովուրդը կառավարէ։

Ա. Յովաթամ քսանը հինգ տարվան էր երբոր հօրը մեռնելէն ետև սկսաւ ինքնագլուխ թագաւորուն ընել. ու տասնըվեց տարի ուծպաշտութիւն և խաղաղութիւն կառավարեց իր տերութիւնը. և ինքնալ շատ շինութիւններ ըրաւ իր երկրին մէջը։ Նոքը մէկ պատճառովմը հետը պատերազմ՝ որ բացին ամոնացիները, յաղթեց՝ անոնք իրեն հարկատու ըրաւ, որ տարին հարուր տաղանդ արծաթ, տասը հազար քոռ ցորեն, ու տասը հազար քոռ գարի կըբերէը իրեն ամոնացոց թագաւորը։ Յուդայի տերուն վրա կուզէր ելլել փակէտ որդի ռովմելայ ըսած իսրայէլացոց թագաւորը՝ ռասոն ասորոց թագաւորին հետ. բայց դեռ պատերազմը չըսկսած. մեռաւ յովաթամ ու եղէմ թաղվեցաւ։

ԺԱ. Ահազ յովաթամի որդին իր հօրը ետևէն թագաւորութիւն որ առաւ, ՝այ պատուհասէն չի վախնալով՝ որ ժողովրդոց մեղացը համար՝ ինչպէս ըսինք ալ գալու վրա էր. և ժողովուրդն ալ անոր հոտը առնելով ահու դողի մէջ էր, (որ անատենը եսայի մարգարէն իրենք մխիթարելու համար՝ իրենց ետքի աղատութիւնը և ան թշնամիներուն կործանումը մարգարէացաւ). այսու ՝ամիս ինքը մտիկ չըրաւ նորէն կռապաշտութիւնի մտցուց իրեն տերուն մէջը՝ ինչացոց թագաւորներուն օրինակը նայելով. ու անչափ չա-

բացաւ որ՝ ուրիշ այլազգի կռապաշտներուն պէս
իր տղաքնալ կուռքերուն առջեւը կերեր զոհ կը-
նէր։ Աստի ուժգալ վրան սաստիկ բարկանալով՝
Թող տրվաւ որ՝ մէյմը առաջ ռասոն ասորոց
Թագաւորը եկաւ. որ ազէկմը իրենք Ջարդելէն
ետև՝ խէրմնալ գերի բռնեց դամասկոս տա-
բաւ։ Նոր ետևէն եկաւ փակէէն որդի ռով-
մելայ իսրայելացոց Թագաւորը, ու ինքնալ անանկ
Ջարդմը տրվաւ իրենց, որ մէկ օրվան մէջը հա-
ւուր քսան հազար հոգի կոտրրվեցան յուդայի
դիէն. ու իրեք հարուր հազարալ իրենց կնիկ-
ներով տրղաքներով իսրայէլացիները գերի բրա-
նեցին, ուրիշ կողոպուտներուն հետը առին սա-
մարիա տարին։ Ամէպէտ ետքը ովգեդ մարգա-
րէին խրատը մրռելով, խղճացին վրանին՝ ու
իրենց պիտանաւորութիւր հոգալով անանկ ետ
դարձուցին ան ողորմելի գերիները։ Այց
ասովալ երբոր աքազ իրեն բռնած չար Ճամբէն
ետ որ չիկեցաւ, ուժ նորէն ռասոն ասորոց Թա-
գաւորը՝ ուրիշ այլազգիներուն հետը անոր
վրան հանեց, որ եկան յուդայի երկիրներէն շատ
տեղվանք առին։ Էն ատենը աքազալ Ճարը
հատած՝ իր գանձը ու տաճարին գանձը ժող-
վեց Թագղաթփաղասար ըսած ասորեստանի
Թագաւորին խրկեց, որ գա ինքը անոնց ձեռ-
քէն խալըսէ։ Այց անանկալ Ճար չեղաւ, ին-
չու որ՝ Թագղաթփաղասարը ան մէկալ Թա-
գաւորները յաղթելէն ետև՝ նորէն ինքնալ ա-
քազին վրան եկաւ, ու իրեն և իր իշխանները
բոլոր մնացած ստակը քաշեց առաւ. ինքը
հարկատու ըրաւ։ Քազ ա ամէն Թշվառու-
Թիւնները տեսնելով՝ Ճար չեղաւ խելքը գլուխը
չիժողվեց, հասյա իրեն կռապաշտութիւնը մէջ

հաստատ կէցած՝ մոլորած կրսէր թէ՝ ասորեստանի աստուածները աւելի զօրաւոր էն եղեր՝ որ իս յաղթեցին, անոր համար Եսայ այսու հետև ան ածիները կրպաշտեմ՝ անոնց զոհ կըսեմ, որ ինծիալ օգնուին հասնին. ու դամասկոսի կուռքերուն սեղանին օրինակն որ հոն տեսեր էր, անորպէս եղէմ այ տաճարին մէջը շինել տրվաւ, և անոր վրա ինքնալ զոհ կըմատուցաներ. ետքը հոն հասաւ որ՝ այ տաճարին դրռներնալ բոլորովին գոցել տրվաւ։ Այսպիսի անօրէնութիւն տասնըվեց տարի թագաւորուն ըրաւ աքաղ՝ ու անանկ մեռաւ։

ԿԻԼ. Լ.

Եզեկիա Ռափաւորին պատմութիւն, և իր եղբայրն Նոպած յոդայի ցեղին Ռափաւորիները՝ Ինչպէս վերջը։

Գ. Թագ. ԺԶ. ԺԹ. Ե. ԻԱ։ Բ. Մնաց. ԼԹ. Ը. ԸԱ։ Սմ Տի 3278։

ԺԲ. Քաջն Եզեկիա՝ եղեկիա անոր որդին թագաւորութիւր առաւ, որ քսանըվինկ տարվան էր։ Այսորպէս բարեպաշտ ու ճշմարիտ թագաւոր չեղաւ բոլոր յուդայի ցեղին թագաւորներուն մէջ. որ նրստեղուսպէս՝ իր հօրմէն և անկէ առջի թագաւորներէն մտած բոլոր կուռքերը ու կռապաշտական բանները ջնջեց վերցուց, այ տաճարին դուռը նորէն բացաւ՝ առջինպէս մաքրեց զարդարեց տաճարը, և քահանաները ու ղեւտացիները իրենց կարգին կանգնին մէջ դրաւ, որ անպակաս զոհերը ու պատարագները ըլլան՝ ինչպէս որ դաւիթ և սողոմոն սահմաներ էին. ու ճշմարիտ տոնները իրենց ատենովը կատարվին։ Այսև իր նստած

առջի տարին՝ բոլոր իսրայէլացոց երկիրը չորս դին թղթով մարդիք խաւրեց, ու յորդորելով՝ մէկալ իսրայէլացոց ցեղերէնալ շատ մարդ ժողվեց եղէմ բերաւ. և անոնց հետ մէյտեղ ա-նանկ փառաւոր զատկի տօնախմբութիմը ըրաւ, որ սողոմոնի ատենէն 'ի վեր՝ այնպիսի ՝ծծպաշ-տուէ հանդէս տաճարին մէջը եղած չէր. որ երկու հազար կով՝ ու տասնըեօթը հազար ոչ-խար ՝այ զոհ ըրին։ Ու տասնը չորս օր աս տօ-նախմբութիմը դիմանալէն ետև՝ ժողովուրդը իրենց տեղն որ դարձան, այնուհետև սկսան կուռքերը վերցունել, ու կատարեալ ՝ծծպաշ-տուի ընել։ Նոր համար ՝ծծալ եղեկիա թագաւորին բանը աջողեց, որ իր հօրը ժամանա-կէն կորսընցուցած տեղվանքը նորէն այլազգի-ներուն ձեռքէն ետ առաւ, սկսաւ իր տերուէ սահմանը մեծցունել, ուժովնալ։

Ա. յսու կերպով երբոր ասորեստանի թագա-ւորին տուրքնալ չուզեց վճարել, որ ինչպէս ը-սինք՝ իր հօրը ատենէն 'ի վեր վրանին դրած էր. ան պատճառովը իրեն թագաւորութիմը տասնըչորս տարին՝ սենեքերիմ ասորեստանի թագաւորը սաստիկ ուժով եղեկիայի վրա պա-տերազմ եկաւ. ու եռևէ ետև քաղաքները առ-նելով սուաջ որ եկաւ՝ լաքիս ըսած քաղաքը որ հասաւ, ալ եղեկիա վախցաւ թէ եղէմալ կու-գա կառնէ. անոր համար շատ տաղանդ արծաթ ու ոսկի ՝ճարեց ժողվեց իրեն խրկեց՝ որ հետը հաշտուի ընէ՝ վրայէն երթա։ Ա. այց սե-նեքերիմ ան տերիքը չլսելով՝ այսու ՝ոմիւ հպարտուէ խրկեց ռափսակ ըսած իր մեծ զօ-բապետը՝ որ երթա եղեկիայի ըսէ թէ՝ ՝ճար չի-կա պէտք է որ քաղքիդ դռները ինծի բանաս,

որ գամ առանց մէկու

Լոքը ինչպէս կրսէն ան սաստիկ նեղութէն՝ Եզեկիայի մէկ ծանրը հիվընտուն մը եկաւ, ա-նանկ որ՝ Եսայի մարգարէն երբոր քովը գնաց տեսնելու, իրէն ըսաւ թէ՝ կտակդ ըրէ՝ դու կրմեռնիս չես խալըսիր։ Զեզեկիանալ ան ատենը լալով այ դիմեց որ իրէն ողորմի. ճծալ նո-րէն քովը խաւրեց Եսայի մարգարէն՝ որ իրէն ըսաւ թէ՝ քու աղօթքդ լսեցի, ուստի քեզի անանկ կատարեալ բժշկուի կուտամ, որ աս-կէս իրեք օրէն կարող ըլլաս ոտքի վրա ելլել՝ տաճարը երթալ։ Լաւ ասկէ 'ի զատ՝ Եզեկիայի խոստացաւ թէ տասնըհինգ տարիալ պիտի ապրի. և սենեքերիմի ձեռքէն բոլորովին պի-տոր խալըսի ինքը՝ և Եղէմ քաղաքը. Եւրը աս ըսածներուս նշմարտուէը՝ Եսայի մարգարէն նշանալ տրվաւ իրէն, որ աքսաղու ըսած արևի ժամացուցին շուքը հրաշքով տասը աստիճան ետ շարժի։ Զեզեկիայալ անանկ ըսածինպէս կատարեալ որ ողջընցաւ՝ 'ի շնորհակալուի այ ան օրհնուիը չինեց որ՝ կրսկրսի, Լաւ ասայ 'ի վ-բանալ։ Նատենը բաբիլացոց թագաւորնալ որ Եզեկիայի հետ բարեկամ էր, անոր՝ հրաշքով եղած բժշկուիը լսելով, ինքնալ դեսպաններով իրէն աքիլլուսի թուղթ խրկեց, ու ընծաներ ալ հետը։ Զեզեկիա շատ սիրով ընդունեց անոր դեսպանները, ու պարծենալով առջևնին բաց-վեցաւ՝ բոլոր իր ունեցած մեծուիը և հարբ-տուիը ցրցուց իրենց։ Այց աս բանըս ոչ չի հաւնեցաւ, ուստի խրկեց Եսայի մարգարէն՝ որ այ կողմանէ եկաւ յանդիմանեց զինքը, ու ըսաւ թէ՝ մէկ օրմը ատ բոլոր ցրցուցած բա-ներդդ բաբիլոն պիտոր երթան, ու քու տղաք-ներդդ ալ թոռներդդ ալ բաբիլացոց թագաւորին

քով պիտի ծառա ըլլան։ Եզեկիայալ աս չա-
փիս շնորհակալ եղաւ՝ որ իր օրը պիտի չըլ-
լա ան թշվառութիւնները։ Այսպիսի բարեպաշ-
տութիւն քանզի տարի թագաւորելէն ետքը՝ մե-
ռաւ Եզեկիա, ու Երկիր քաղաքը փառաւորա-
պէս թաղուեցաւ։

ԺԳ. Եզեկիայի ետևէն թագաւոր նստաւ
մանասէ իր որդին, որ տասներկու տարվան տղա
էր. բայց վարքը ամենևին չէր նմանիր հօրը
բարեպաշտութիւնը։ Զոր համար տերութիւնը
առաջինպէս՝ փոխեց իր հօրը դրած ճամբան,
նորէն կռապաշտութիւն դարձուց ժողովուրդը.
ու անանկ ըրաւ որ՝ ալ այլազգիներուն մէջը
կուռք չմընաց որ չառնէ պաշտել չիտա ժողո-
վրդոցը. նաև՝ ոչ տաճարին մէջը կուռք տընկեց՝
տաճարը պղծեց կռատուն ըրաւ. ու իր
տղոցմէնալ ան կուռքերուն զոհ կըմատուցա-
ներ ուրիշ կռապաշտներուն պէս. նաև կախար-
դական՝ և ուրիշ այսպիսի կերպ կերպ չար
բաներու տըվեր էր զինքը։ Զսալ հերիք չէ, ի-
բեն քարոզողները խրատ տըվողները՝ որ ետ կե-
նա այսպիսի անօրէնութէն՝ կրբռներ կըսպան-
ներ. որ անանկ շատ անմեղ մարդու արուն մը-
տաւ. և ասոնցմէ մէկնալ կըսեն թէ՝ Եսայի մար-
գարէն եղաւ, որ զինքը խրատելուն համար՝
փատէ սղոցով (ոչ՝ տէստերէով) մէջքէն եր-
կուք կըտրել տըվաւ՝ այնպէս չարաչար սպան-
նեց։ Զս մանասէին ըրած անօրէնութիւնները,
որ անցուց բոլոր իրմէ առջի եղած յուդայի և
իսրայէլի չար թագաւորներուն ըրածները, այն-
չափ սրդողցուց ած, որ ալ կատարեալ վճիռը
կտրեց ըսաւ թէ՝ ինչպէս Իսրայելոց թագաւորի
բոլորովին ջնջեցի վերցուցի, ասանկ յուդայի

տերունական պիտի ընկնեմ։ Բայց այսու համիւ իր անհունն ողորմութիւնը՝ ուզելով որ մանասէ ապաշխարուէ օրինակմը ըլլա բոլոր աշխարքիս, թող տրվաւ որ ասորեստանի թագը գա եղեմ առնէ, ու մանասէն երկաթէ շղթաներով կապած բաբիլոն տանի, և հոն բանտին մէջը ածի իրեն շնորհք տրվաւ որ Ճանչնա իր բրածները՝ ու մեղա գոչէ ՝ այ, և ապաշխարելով ինչպէս կաւանդէն, ան զղջական աղօթքը ընէ, որ կրսկրսի՝ Տէր ողորմեա՛ ածի աբրահամս։ Բայց տասնկ որ սրբատանց դարձ եկաւ մանասէն, ածալ իրեն ողորմեցաւ, որ ան գերուէն ազատեց, նորէն իր առջի թագաւորուէը դարձուց. ու ինքնալ անկէ ետև ՝այ առջևը խոնարհած վերցուց բոլոր իր գրած կուռքերը և կռապաշտական բանները, ու հրամայեց որ առջինինպէս ածպաշտութիւն ըլլա. և մընացած կեանքը բարեպաշտութիւնը անցունելով՝ յիսսունը հինկ տարի թագաւորուի ընելէն ետքը խաղաղութիւն մեռաւ։

ԺԴ. Ամոն մանասէի որդին քսանվերկու տարվան թագաւոր նստաւ իր հօրը ետևէն. ասիկա իր հօրը առջի չար Ճամբուն հետևեցաւ, նորէն կռապաշտութիւն մացուց, բայց անոր ապաշխարուէ չինայեցաւ՝ բարի օրինակ չառաւ։ Նոր համար ածալ ինքը պատժեց. որ թագաւորութիւնը տասվերկու տարին իր ծառաները գացին տանը մէջ զինքը բռնեցին սպաննեցին՝ որ տեղը ուրիշմը թագաւոր նստեցուցին։

ԺԵ. Բոլոր ժողովուրդը մէկ եղած՝ թագաւորին սպաննողները մեռուցին, ու յոսիա ըսած ամոնի որդին՝ (որ ութը տարվան անմեղ տղամընէը,) առին թագաւոր նստեցուցին։

Յոյսիսա խիստ բարեպաշտ ըլլալով՝ բոլոր իր հօրը դրած կուռքերը՝ և անկէց առաջաւ մնացած կռապաշտական բաներըուզէց որ վերցնէ մաքրէ յուդայի երկրէն. նաև բոլոր իսրայէլացոց երկրէն ձեռքը հասած տեղվանքը կուռքերը՝ ու անոնց սեղանները կործանեց. ինչպէս որ իրեք հարուր վեթասուն տարիի չափ առաջ՝ մարգարէն ըսեր էր յերոբովամի իսրայէլացոց թագաւորին։ Նկէ ետքը յոսիա երբոր ձեռք զարկաւ որ այս տաճարը նորոգէ զարդարէ, տաճարին մէջը քահանաները խառնել շտկելենիսի՝ օրինաց գիրքը գտան հրնուց՝ ինչպէս ոմանք կրսեն՝ մովսէս մարգարէին ձեռքովը գրած. աս գիրքս երբոր թագաւորին առջեւը տարին կարդացին, և հոն հասան՝ որ մէջը աստուածային օրէնքները չիպահողներուն պատիժները կրգրէր. անատենը թագաւորը միտքը բերելով թէ՝ իր հարը և իրեն պապերը ինչէր ըրեր էն այ գէմ. որով ՝ած անչափ սրդողցուցեր էն, սատիկ կսկիծէն վրայի լաթերը բրռնեց պատռեց. ու շուտմը մարգիք խրկեց որ երթան մէկ մարգարէիմը հարցունեն թէ՝ ինտոր պիտոր ըլլա իրենց բանը։ Մարգիքնալ երբոր գացին ողդան ըսած մէկ կնիկ մարգարէիմը քով՝ անիկա այ դիէն անոնց ըսաւ թէ՝ բոլոր ան գրքին մէջի գրած պատիժները պիտի գան. բայց թագաւորին բարեպաշտութեր համար ՝ած իրեն կողորմի, որ ինչվան իր մահը խաղաղութ ապրի, որ ան գալու վայերը չիտեսնէ։ Յոսիա թագաւորը աս բանը լսածին պէս՝ բոլոր իշխանները բովը ժողվեց. և անանկ միաբան ժողովուրդնալ մէկտեղ գացին տաճարը, ու հոն նորէն ան գրքին բաները առջեւնին

կարդալէն ետև՝ ուխտ ու դաշինք ըրին՝ որ ան-
կէ ետև ՅՍ պատուիրանքները բոլոր սրտով
պահեն՝ ու կուռքերուն բաները մէջերնէն
վերցունեն, և ՅՍ միայն հաւատարմութիւն ծա-
ռայեն։ Այսանկ պատուիրանապահութիւն շրջ-
կըվեցաւ բոլոր ժողովուրդը՝ յովսիա թագաւո-
րին բարի օրինակը միտ առնելնին ունենալով։
Այսաւ ասկէ՝ի զատ յովսիա մէկ փառաւոր զա-
տիկմընալ ըրաւ բուն մովսիսական օրինաց ըսա-
ծինպէս, անանկ որ՝ նմանը իրմէ առաջ մէկ
թագաւորմը չէր ըրած, որ եռսունն հազար
ոչխար ու այծ, և իրեք հազար կով զոհեց ան
ատենը. և ՅՍ տասանակնալ մեծարանքով ա-
ռաւ տաճարին մէջը իր տեղը դրաւ։ Այս ամէն
բարիքները յովսիա ընելէն ետքը՝ իր թագաւո-
րութիւնը եռսունը մէկ տարին կամեցաւ ՅՍ որ ալ
աշխարքէս զինքը վերցունէ, ու ժողովրդոց
վրան դալու պատիժները չիտեսնէ՝ ինչպէս շատ
անգամ սպառնացեր էր. անոր համար թագ-
տրվաւ որ ինքիրեն պատերազմ բանա նե-
քաւով ըսած եգիպտացոց թագաւորին դէմ.
որ ասորեստանի վրա ելեր էր պատերազմ կեր-
թար։ Այս պատերազմիս մէջը յովսիա մէկ նե-
տովմը չարաչար զարնըվեցաւ՝ անանկ որ ինչ-
վան եղեմ բերին նէ՝ մեռաւ. ու իրեն մահվա-
նը համար սաստիկ սուգ մտաւ ժողովուրդը,
և փառաւորապէս իր գերեզմանը տարին թա-
ղեցին. ու երեմիա մարգարէնալ վրան ողբմը
շինեց։

Յ.Հ. Յովսիայի ետևէն ժողովուրդը անոր տը-
ղոցը մէկը յովաքազ ըսած քսանվիրեք տարվան՝
թագաւոր դրին վրանին. որ իրեն հօրը բարե-
պաշտութիւնը թողուց, անկէ առջի չար թագա-

տորնեբուն հետեւեցաւ։ Ինոր համար ՅԾՄալի-բեն թագաւորութիւր կարձրցուց, անմանկ որ՝ թ-ղեբ ամենն եղբը երբոր ան վերը ըսած նեբաւ-ով եգիպտացոց թագաւորը ասորոց պատերազմն գարձաւ, եղէմ եկաւ՝ յովաքազ թագը աթո-ռէն ձգեց, ու շղթաներով կապած առաւ հե-տը եգիպտոս տարաւ, որ հոն մեռաւ։ Ի իր տեղը թագաւոր դրաւ անոր մեծ եղբայրը քը-սանը հինգ տարվան՝ եղեակիմ ըսած. որ ինքը փոխեց անունը յովակիմ դրաւ, ու վրան ծան-ը տուրքեր կապեց որ տարիէ տարի իրեն վը-ճարէ։

ԺԷ. Ի՛նչ եղեակիմ կամ յովակիմ ըսածսալ՝ չէ թէ միան իր յովսիայ հօրը նման չեղաւ, հապա մէկալ եղբօրմէնալ չար ու անօրէն ճամբա բռնեց. և թէպէտ շատ անգամ կրխրատեր զինքը երեմիա մարգարէն, բայց շահմը չեր ըներ։ Ասսաի չորս տարիէն ետև նաբուգոդոնոսոր բաբիլացոց թագաւորը եկաւ եղէմ առաւ, ու յովակիմ թագաւորը շղթաներով կապած բռնեց բաբիլոն տարաւ. և քիչմը ատեն քովը պահելէն ետև վրան ծանրը տուրքը դրած ա-նանկ թող տրվաւ։ Յովակիմալ առջի բերանը աս տուրքս վճարեց. բայց ետքը գլուխ որ քա-շեց ապրստամբեցաւ նաբուգոդոնոսորէն. ան ատենը նորէն վրան եկան բաբիլացիքը ու քաղ-դեացիքը, և երկան ատեն հետը պատերազմ ընելով, վերջը եղէմ առին մտան կողոպտեցին, ու յովակիմ թագնալ՝ տասնըմէկ տարի թա-գաւորելէն ետև չարաչար սպանեցին։

ԺԸ. Ի՛տուէն թագաւոր նստաւ իրեն որդին յեքոնիա՝ որ յովակիմալ կրսվեր, տասնուութը տարվան. ասոր չարուինալ իր հօրմէն վար չեր

մնար։ Լուսի շատ չանցաւ իրեք ամսէն եաթ-
նորէն եկաւ Նաբուգոդոնոսոր՝ Երուսաղեմ
պաշարեց առաւ, և բոլոր քաղքին ու տաճարին
ոսկին ու արծաթը կողոպտելով. նաև Թագաւոր-
նալ իր բոլոր պալատի մարդիքներովը ու իշ-
խաններովը և ուրիշ հազարաւոր գերիներով
եղէմէն հանեց բաբիլոն տարաւ, և հոն մնա-
ցածներուն վրա Թագաւոր դրաւ իրեն իշխա-
նուԹիներքեւը՝ սեդեկիա ըսած՝ ան վերի յով-
սիա Թագաւորին պզտի տղան՝ քանըմէկ
տարվան։

Ժ.Թ. Այս սեդեկիայի չարուհիները և անօրէ-
նուհիները անցուց իր եղբարներուն ըրածը, ա-
նանկ որ՝ իր չար օրինակովը բոլոր տակը մնա-
ցած ժողովուրդնալ աւրեց, որ կռապաշտնե-
րէն վար չէին մնար. և ամենէն մարգարէից
քարոզուհիները չէին մրռեր, հասպա ծաղրալ
կընէին մարգարէները։ Նոր համար Թոյլ
տրվաւ՝ որ իրենց երգումին դէմ՝ նորէն
դլուխ բաշէն Նաբուգոդոնոսոր Թագաւորին.
որ անոր ձեռքովը ալ բոլոր բովանդակ ջրջ
վերցունէ աս յուդայի ցեղի մընացած տերու-
Թիը, ինչպէս իսրայէլացոց տասը ցեղինը ա-
ռաջ ըրեր էր։ Այսպէս որ ըրին, Նաբուգոդո-
նոսորալ անհամար զօրքով նորէն հրեաստան
եկաւ, ու առաջ եգիպտացիքը յաղԹելով՝ որ
հրեից օգնական եկեր էին, եռքը դնաց եղէմի
վրա, և երկու տարի չարաչար պաշարելէն ետև՝
սաստիկ ուժովմը վրա տրվաւ պարսպին մէկ
կողմէն փլցուց քաղաքը մտաւ։ Այն ատենը գի-
չերանց քաղքի մարդիքը փախչող փախչողն, ա-
նանց հետ սեդեկիա Թագաւորնալ քաղքէն
դուրս սրիրդ վեցաւ եկաւ որ փախչի. քաղդէա-

ցիքը ինքը Հանչցան՝ ու Եռեւէն ինկան բռնե-
ցին՝ Նաբուգոդոնոսորի առջեւը տարին։ Նաբու-
գոդոնոսորայ իրեն ըրած անհաւատարմութիւնը
երեսը զարնելով՝ հոն բերել տրվաւ իրեն տղա-
քը և իր խորհրդակից իշխանները՝ ու աչացը
առջեւը անոնք սպաննել տրվաւ. Եռբը իրեն
երկու աչքնալ հանել տրվաւ, ու շղթաներով
կապած անանկ բաբիլոն տարաւ։

Յետեւ Նաբուզարդանդահ՝ ապետ ըսած՝ Նա-
բուգոդոնոսորի իշխաններեն մէկը եղէմ մեկաւ-
այ տաճարը ու թագաւորին պալատը թալանեց՝
ամմէն բանը վերցուց, ու կրակ տրվաւ երեց.
և բաղաքին պարիսպները հիմնայատակ փլցուց.
ու բոլոր մեծամեծքը և ունևոր մարդիքը բռնե-
նեց բաբիլոն գերի տարաւ. անանկ որ՝ միսն
աղքատները ու բանի չեկող անշահ մարդիքը և
երկրագործները հոն մնացին, և ան մնացած
ժողովրդին վրա Նաբուգոդոնոսորի հրամանով
հրեից ազգէն մէկ իշխանմը գրաւ՝ գոդոլիա
ըսած որդի աբիկամայ, որ մասեփա կրնստէր։
Սիկա քիչմը ատեն խաղաղութիւն կառավարեց,
ինչման որ մէկ ուրիշ մարդմը յուդայի թագա-
ւորական ցեղէն իսմայել որդի նաթանիայ ը-
սած՝ գնաց խաբեբայութիւն ան գոդոլիան իրեն
հետը միաբանած հրեաներովը ըսպաննեց, ու
եռբը երբոր անկէց թալլած բաներովը եղեր
կրփախչէր, յոշնաթան որդի կարեէ ըսած
մէկմը՝ զօրքով անոր ետեւէն ինկաւ, որ անալ
թալլած բաները թողուց Հորով գլուխը փը-
ցուց ամենացոց թագաւորին քովը գնաց, որ
իրեն տրդմամբը գոդոլիան սպաններ էր։
Եռբը աս յոշնաթան ըսածքս որ ան մնացած
հրեաներըքովը ժողված՝ ինքը անոնց իշխանու-

թի կըներ, իրեն սիրտնալ վախ մտաւ թէ քաղ գէացիք նորէն իր վրայալ գան. և ասոր համար թէպէտ հարցուց երեմիա մարգարէին, և անկէցալ ՝ի հրամանովը լսեց, որ ըսաւ թէ չի վախնա տեղէն չիշարժի. բայց այսու ՝ամենայնիվ երեմիայի խօսքը չիմբռնեց՝ բոլոր ժողովուրդը մէյտեղ առաւ եգիպտոս փախաւ. որ ետքը հոն իրենց պատիժնին տրվաւ ՝ած։

Լ. յսպէս, բոլոր իսրայէլացոց թագաւորը սաւուղէն սկսած հինգ հարուր ութը տարի քըշելէն ետև. և իրեք հարուր ութսունը ութը տարի՝ տասը ցեղին տերութիւնը բաժնըվելէն. և հարուր եռասունը չորս տարի անոնց թագաւորը վերցըվելէն. բոլորովին վերջացաւ յուդայի թագաւորութիւնալ, ինչպէս շատ անգամ սպառնացեր էր ՝ած, իրենց մեղքերը և անօրէնութիւնը՝ մարգարէներուն (և մանաւանդ երեմիա մարգարէին) բերնովը երեսնին տալով, ու ըսելով՝ թէ որ չի դառնանն իրենք բոլորովին պիտի կործանի, և այլազգիներուն ձեռքը գերուի պիտոր մնանի, ինտոր եղաւ։ Լ՝նկեց եօթանասուն տարիէն ետև թէպէտ նորէն ողորմեցաւ ՝ած՝ որ իրենց երկիրը դառնան. բայց միշտ ուրիշի տերութիւնի ներքևը եղան, և մէյմընալ ան իրենց առջի ինքնագլուխ ազատուիր ձեռք չի ձգեցին. ինչպէս որ կարդով իր տեղովը պիտի պատմենք։ Հիմա ասկէ ետքը պատշաճ՝ կերևա որ՝ մանաւոր անձանց վերաբերեալ պատմութիւնները դնենք՝ որ իսրայէլացոց և յուդայի թագաւորութիւնի, կամ ետքը՝ անոնց գերուի ատենը եղեր են։

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՄՆԱՒՈՐ ԱՆՁԱՆՑ, ՈՐ ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ԵՏՔԻԼ ԳԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԸ ԵՂԵՐ ԵՆ։

ԳԼ. Ա.

Պատմութիւն Յոբելեայ։

Ամ Հայ. 3290։

Յոբելեայ իսրայէլացի էր նեփթաղեմի ցեղէն՝ Թէզբուէ ըսած քաղաքէն, Իսրայելացոց տասը ցեղին կռապաշտուելէ ատենը, որ ինքը միշտ ուղիղ պաշտուելու և բարեպաշտուելու ապրելով ան յերոբովամի դրրած հորթերը չէր պաշտեր. հապա մովսիսական օրէնաց հետևելով, ամէն ուրբաթին տօնախմբուելէ օրերը կելլեր յուդայի երկիրը կանցնէր՝ Եղէմ տաճարը կերթար, հոն իր ուխտը և աղօթքը կըկատարէր։ Իրենց բոլոր Իսրայելացոց տասը ցեղը գերի տարաւ սաղմանասար ասորեստանի թագաւորը, տոբիթալ հետերնին առնըվերցաւ նինվէ գնաց. ու հոնալ իր անունա ըսած կնկանը հետ՝ մեկհատիկ տոբիա տղեկովը ան կռապաշտներուն մէջը իր բարեպաշտութիւնը չի թողուց. և իրեն ազգին գերիներուն շատ օգնուելի կըհամանէր։ Ինոր համար ուրալ զինքը օրհնեց՝ որ սաղմանասար թագաւորին այնչափ սիրելի եղաւ որ՝ իրեն վաճառական (ֆ՝ վէբիլխարճ) ըրաւ, ու տոբիթի ազատուելի տրվաւ՝ որ ուր ուզէնէ երթա քալէ։ Սաղմանասարին եռեւէն երբոր

սենեբերիմ թագաւոր եղաւ, ու եղեկիային պատերազմն. (ինչպէս վերը ըսինք,) յաղթելած դարձաւնէ. իր տակը եղած իշխացոց հետ սաստիկ թշնամութիւն կըվարվեր, և շատ մարդիք կըբռներ կըսպաններ։ Տոբիթալ գիշերանց գաղտուկ կերթար ան մեռելները կըթաղեր. աս բանիս համար թագաւորը ուզեց որ տոբիթնալ ըսպաննէ. անալ փախաւ երեսը պահվեց. ուստի տոբիթի բոլոր բաները թագաւորական դիւն յափշտակեցին։ Երբոր ըսպանվեցաւ սենեբերիմ, տոբիթ նորէն իր տունը դարձաւ, և իր առջի բարեպաշտական գործերը ձեռքէ չէր թողուր կըներ։ Մինչպէս մէկ օրմընալ փառաւոր սեղան պատրաստած իր ազգականներուն հետ կերակուր որ պիտի ուտեր, սիրտը փղխմացաւ՝ իր տոբիա որդին խրկեց որ երթա պըտրտի՝ իշխացոց ազգէն աղքատ ու կարօտմը որ գտնէնէ, բերէ իրենց հետ սեղան նստեցընէ. գնաց տղան ու շուտմը դարձաւ հօրը պատմեց թէ՝ իշխացոցմէ մէկմը ըսպաննած փողոցը ձգած է։ Ան որ լսեց տոբիթ՝ առջևի կերակուրը թողուց՝ շուտմը գնաց վերցուց ան մեռելը տուն բերաւ՝ գաղտուկ պահեց, ու եւթը գիշերանց մարդ չիմացած գնաց թաղեց անիկա. և ան գիշերը մինչսիսական օրինաց ըսածինպէս՝ պիղծ սեպվելով՝ տունը չի մտաւ պառկելու, հապա դուրսը պատին տակը հոգնած կռնըկին վրա ինկաւ, ու աչքը բաց հոն քանանչնիսի վերէն ճնճղուկներն որ կըծրտեին, ան ծիրտը տաք տաք տոբիթի աչացը մէջ երթալով՝ աչքերը կուրցաւ. անանկ որ՝ ալ ճար չեղաւ բացվելու։ Այլ տոբիթ աս նեղութիւնալ, որ եղ-

բայլսիրուն պատճառով իրեն հանդիսացաւ, զարմանալի համբերութիւն կը բաշէր, ու փառք կուտար նոյ. մանաւանդ երբոր անկէ ետև աղքատութիւնալ աւելի վրան կոխեց, անանկ որ՝ միան կընկանը ձեռքը կընայէր, որ անիկա մատնած մանելով խղճաբար իր տունը կըպահէր։ Ի՛նչ թշուառութիւն մէջը տոբիթ կարծելով թէ ալ ինքը պիտի մնայ երթա, քովը կանչեց իր մէկ հատիկ տոբիա որդին, անոր բարի բարի խրատներ կրտակ ընելով, ապրսպրեց որ երլ մարաց երկիրը երթա, որ հոն գաբայէլ ըսած մէկ մարդէմը իր ատենով տասը քանքար (կիսքէսէ) փոխ տրված ըստակը առնէ իրեն բերէ. անոր ձեռաց գիրնալ հանեց տղին տրվաւ։ Տոբիանալ առ Ճամբորդուէս ընկեր դրանելու համար տնէն դուրս ելածինպէս՝ շուտմը առջևը մէկ կարիճմը տեսաւ Ճամբորդի կերպարանքով, որ ան հռափայէլ հրեշտակն էր, որ ոնծ իրեն խրկեր էր. ինքնալ անիկա կանչեց առաւ իր հօրը քովը բերաւ։ Տոբիթնալ հրեշտակին ըսածինպէս՝ կարծելով թէ ինքը անաւնիայի իր բարեկամին որդին է, ուրախութիւնը տոբիան անոր յանձնեց՝ որ մարաց երկիրը տանի, և հետը խօսք դրրաւ որ իրեն օրը դրամմը վարձք տա, ու իր կերակուրը. և առ գործքրս կատարելէն ու առողջութիւն դառնալէն ետքը՝ խօսք տրվաւ ուրիշ քանալ իրեն տալու, ու այնպէս օրհնելով իրենք Ճամբա դրաւ։

Երբոր առնք գացին եփրատ գետը հասան, ու տոբիա գետին քովը գնաց որ քիսմը վրացվի հանդչի, յանկարծակի անդիէն մէկ մեծ ձուկմը վրան վազեց. անատենը հռափայէլ հրեշտակը իրեն ըսաւ թէ մի վախնար բռնէ

դուրս քաշէ, անալ ցամաքը քաշեց. ու հրեշտակին տրված խրատինպէս՝ ան ձրկան սիրոյ լերդը, ու լեղին հանեց մէկ դի դրբաւ պահեց, ու ձուկը եփեցին կերան։ Նկեց եաքը երբոր ալ եկբատան ըսած մարաց երկիրը հասան. հրեշտակը դարձաւ տոբիայի ըսաց թէ՝ երթանք աս գիշերը հոս հանգուէլի տունը կենանք, որ օտար մարդ չէ՝ քու ազգականդ է. և աս մէկհատիկ սառա աղջիկմը ունի, խելօք ու իմաստուն. քեզի կըվայէ որ դուն առնես անիկա, կուզեմնէ ես հօրը հետ կըխօսիմ՝ բանը կըշինեմ։ Տոբիայալ իրեն ըսաւ թէ՝ ես կըվախնամ, ըսեր եմ որ եօթը հոգի ան աղջիկը առնելու եղեր են, ու ան եօթնալ հարսնիքին առջի գիշերը՝ մէկ դեմը եկեր մեռցուցեր է. ես հօրը ու մօրը մէկհատիկն եմ թէ որ ինծիալ անանկ պատահինէ՝ մեռք իմ ծնողացս։ Հրեշտակը նորէն սիրտ տրվաւ տղին որ չի վախնա, ու սորվըցուց իրեն՝ թէ ինչպէս աս փորձանքէս պիտի խալըսի ապրըսպրեց որ առջի գիշերը հետը քիշմը կրակ առնէ, և ան ձկան սիրտը ու լերդը անոր վրա դնէ ծխէ. և հարսին հետ մէկտեղ աղօթք ընեն աղաչեն ՝այ. ան հոտէն ըսաւ՝ ան դեւը կըփախչի կըկորսըվի, ու ՝այ օրհնուրթը մէկ տեղ կըծերանաք, զաւկընտերու տեր կըլլաք, ինչու որ՝ աս աղջիկըս քեզի միայն պահեր էր ՝ած։ Ասոր եկբատան հանգուէլի տունը որ դացին, հոտփայէլ հրեշտակը ինչպէս որ ըսեր էր. մէջ մնաւ խօսեցաւ աղջկանը հօրը մօրը հետ. անոնքալ շատ ուրախացան ասոր վըրա որ աղջիկնին տոբիայի պիտի տան՝ որ իրենց ազգական էր։ Խօսքը դրածինպէս երբոր ըս-

կրան հարսնիքը ընելու և ան գիշերը տոբիայայ հրեշտակին ապրպարգը ընելով՝ բանը որ յաջող գնաց. ամմինքը փառք տալով ՅՍ՝ տասնը-չորս օր ալ երկնցուցին հարսնիքին ուրախութիւնը։ Այս ան օրերը գնաց հրեշտակը ու ըստակնալ (ինչ պատճառով որ Ճամբա ելելը ելելը էին,) գաբայելի քովէն առաւ բերաւ. ու անանկ տոբիայի հետ հարսը մէկտեղ առած իր ըռզակներով բանեռովը ելան որ դառնան նինվէ գան. որ տոբիթալ իրեն կնկանը հետ աչվընին Ճամբան կըսպասէին, սրտերնին կըհալէր կըմաշէր՝ կըվախնային թէ այնչափ ուշանալով տղին փորձանքը հանդիպած ըլլա։ Այրբոր նինվէ քաղաքը մօտիկցան, հրեշտակը տոբիայի հետ առաջ անցան՝ տուն եկան, և անատենը տոբիան հրեշտակին ըսածինպէս ան պահած ձկան լեղին հանեց՝ հօրը աչքը քսեց և անով շուտմը բժշկըվեցաւ տոբիթ՝ աչվընները բացվեցան. ու ինքնալ ուրախութիւնը իր սիրելի զաւկին վիզը պըլլըվելով փառք կուտար ՅՍ. մանաւանդ երբոր տոբիայի՝ կըլսեր թէ ան Ճամբորդուելը ատենը ինչպէս ողջմեցաւ ՅԾ՝ որ ամմէն բանը աղէկ յաջողեցաւ, ու ինքը իր աղգէն հարս բերաւ իր տունը. անոր համար եօթը օր ալ տոբիթ նորէն հարսնիքի ուրախութիւն ըրաւ։ Այտբը տոբիթ իր տղին հետ խոր հուրդ ըրաւ որ,ան բերած ըստակին կէսը աս Ճամբա ցրցունող կտրիճին վարձ տան, որ իրենց այսպիսի ծառայութիւններ ըրաւ. հարսը բժշկեց, ըստակը գնաց հաւատարմութիւն առաւ բերաւ, ու իրեն կուրցած աչվընները բացվելու պատճառ եղաւ։ Ասոնի երբոր անիկա առջևնին կանչեցին՝ ու ան բերած

ըստ կիսոր կէսը իրեն վարձք տալու որ եղան, ան ատենը անիկայալ ըսաւ յայտնեց անոնց թէ ինքը հռափայէլ հրեշտակն է։ Այս որ լսելին սրտերնին վախ ինկաւ սաստիկ շփոթելեցան անալ իրենց ըսաց թէ մի վախնաք, հապա փառք տալէք ոյ, որ ձեր ըրած ողորմութիւնները և ուրիշ բարեգործութիւնները տեսնելով իս խրկեց որ ձեզի օգնեմ. և հիմա ալ ատենը հասաւ որ՝ նորէն իս խրկողին քովը դառնամ. ու անանկ՝ անոնց ասացը առջևէն անհետացաւ հրեշտակը. ան ատենը տոբիթ փառք տալով ոյ օրհնութիւնը շարադրեց. որ անոր միջը ինորհակալ կըլլա ոյ ըրած բարերարութեցը վրա, ու կրմարգարէանայ թէ ինչցիքը իրենց դերուէն պիտի դառնան, ու եղէմ նորէն պիտի շինվի։ Ինկէ ետքը տոբիթ բարի ծերութիւնը ապրեցաւ ինչվան որ հարուր յիսսուն տարվան եղաւ. և մահվան ատենը տոբիայի զարմանալի խրատներ կտակ ընելով՝ անանկ հոգին աւանդեց։ Տոբիայալ հօրը ապրեցրա ծինպէս՝ զինքը, և իր աննա մարը նիներվ քաղաքը թաղելէն ետև՝ իրեն սառա կնիկովը եւ եկբատան աներոջը քովը գնաց. հոնալ անեռն ու զոնքանչը ինքը թաղեց. ու բոլոր անոնց ունեցածնալ ինքը ժառանգեց. և իր հօրը խրատներովը միշտ բարեպաշտութիւնը ապրելով, ինքնալ ութսանչորս օրհնութիւնը ծերացած՝ հարուր քսանը եօթը տարվան վախճանեցաւ։

ԳԼ. Բ.

Պատմութիւն Յովհաննու

Ամ Տի Էրբ 3348։

Լաբուգոդոնոսոր սասրեստանի թագաւորը՝ արփաքսադ ըսած մարաց մեծ թագաւորն որ յաղթեց, անով աւելի սիրտ առած անանկ քիթը մեծցաւ հպարտացաւ որ, ալ կուզէր բոլոր աշխարքիս տիրապետել, և ամմէնէն աստուծոյ պէս պաշտրվիլ։ Աստի ընտրեց իր զօրապետներուն մէջէն մէկմը աւելի քաջ ու զօրաւոր՝ Հողեփեռնէս անունով. և անոր ձեռքը հարուր քսան հազար հետեւակ (յր՝ եայան) զօրք տրվաւ, այնչափալ ձիաւոր, որ ինչվան ուր որ հասնիներ երթա ամմէնը իր իշխանութենը առներ. ու դէմ կեցողներն չի ինայէ, ջարդէ աւրէ ոչընչացրնէ։ Հողեփեռնէս այսպիսի մեծ պատրաստութիւն նինվէ քաղքէն ելաւ, առջեւը հանդրպած տերու

սահմանին բերդերը զօրք դրին ամուրցուցին։ Բեթիղվա ըսած հրէից քաղաքմը կար՝ Թէնա մինեբուն դրած բանակին առջևը, որ հրեաստանի դրուանպէս էր. աս ալ աղէկմը ամուրցուցած դէմ կեցեր էր։

Հոդեփեռնէս երբորաս հրէից պատրաստուիր՝ իմացաւ՝ կրակ կտրեցաւ վրանին, քովը կանչեց ժողովեց ան տեղացի իշխանները, ու զարմանալով պատճառը հարցուց թէ՝ աս իսրայէլացի ըսած ազգմը՝ իրենց ինչ բանին վրա յուսալով՝ սիրտ կընեն կոր ինձի դէմ կենալու։ Նատանը աքիոր ըսած ամմնացոց գլխաւոր իշխանը, սկսաւ զուրուցել թէ՝ ով են աս հրեաները. և ինչպէս զօրաւոր ազգին, որ քանի որ անոր տրված օրէնքները կըպահենան, մարդ անոնք չի կրընար յաղթեր. անոր համար հիմա հետերնին խնալու ժամանակը չէ ըսաց, որ աղէկ կերթան իրենց աստուծուն հետ. ըսպասենք որ մեղանչեն՝ հետը աւրըվին, անատենը բանմը կրհոգանք. չըլլա թէ հիմա վրանին ելլենքնէ՝ խափք ըլլանք։ Այս որ լսեց հոդեփեռնէս՝ սաստիկ սրրդողեցաւ աքիորի վրա, թէ ինչու բանի տեղ չմսեպելով նաբուզոդոնոսորի ուժը՝ անանկ յանդգնուիր դէմ խօսեցաւ։ Աստի ասոր պատիժ՝ հրամայեց որ ոտքը ձեռքը կապած տանին աքիորը բետիղվայի բերդին տակը ձգեն, որ երբոր ըսա՝ դամ քաղաքը մտնեմ նէ, դուն ալ անոնց հետ քու պատիժդ կատարեալ կըտանես։ Այանկ որ ըրին, Իշլացոց պահապանները ան տեսնելուն պէս՝ բերդէն ելան վրան վազեցին, ու աքիորը առին բետիղվա բերին. անալ հոնտեղը ամմէնուն առջևը պատմեց թէ՝

ինչ պատճառով հողեփեռնէս իրեն ասանկ ը-
բաւ, և ինչպէս ինքը կրպատրաստրվի կոր գա-
լու իրենք ջարդելու։ Հողովուրդը աս լսելով
ահռեցան, ու սկսան պաղատիլ ՝՝՝ որ նայի ա-
նոր հպարտութիւնը, ու իրենց ողորմի. մնա-
ւանդ անկէց ետքը երբոր տեսան որ հողեփեռ-
նէս իր բոլոր անհուն զօրքով ալ եկեր բերդը
չորս դին պաշարեր՝ քաղքին ջուրնալ կորեց։
Հրամունը չորս օր որ աս բետիղվայի պաշարու-
մը քրշեց, ալ ծարաւէն ճարերնին հատած,
քաղքին իշխանները կրմտմտային որ՝ թէ հինգ
օրէնալ ՝՝՝ ծ իրենց չիողորմի չաղատէնէ, քաղա-
քը բանան թշնամին ձեռքը տան։

Աս բետիղվա քաղքիս մէջը մէկ ունեւոր որբ-
եարի կնիկմը կար շատ ունի ցեղէն յուդիթ ը-
սած, խիստ աղվոր տեսքով, և անանկ զարմա-
նալի՝ պարկեշտ, ՝՝՝ծ ամաս, ու առաքինի որ՝
իր մանասկ ըսած երկանը մեռնելէն ետքը ալ
չուզեց նորէն կարգվիլ, հապա առանձնացած
իր տունը կրնստեր, ու պաքով աղօթքով այն-
պէս սրբութիւ կապրեր։ Յուդիթ երբոր լսեց
իմացաւ աս բաներըս, և ինչպէս կրսեն՝ աս-
տուծմէ լուսաւորված, քովը կանչեց քաղքին
իշխանները՝ յանդիմանեց իրենք ան թերհա-
ւատական բանին վրա՝ որ ըսեր էին թէ հինգ
օրէն ՝՝՝ ծ մեզի չողորմինէ՝ քաղաքը թշնամին
ձեռքը տանք։ Հրաբը ուրիշ խրատներով ու օ-
բինակներով ալ յորդորեց անոնք՝ որ աստուծ-
մէ յոյսերնին չի կրտրեն, և իրենց ըսաւ թէ՝
միայն դուք աղօթից մի դադարիք, աս հինգ
օրվանրս մէջ կրյուսամ որ ՝՝՝ ծ իմ ձեռքովըս
ձեզի բարի ելքմը տա. բայց դուք իմ եւակս
միմնաք իմանալու՝ թէ ես ինչ պիտոր ընեմ։

Ի՞նչպէս գնաց յուդիթ իր աղօթք ընելու տեղը, ու վրան քուրձմը հագած, և գլուխը մոխիր ցանած՝ ապաշխարութեան նշան, ինկաւ այն առջև, ու աղաչանքով պաղատանքով խնդրեց այ՝ որ ողորմի իր ժողովրդոցը, և իրեն ուղղեցուցա, որ ինչպէս լոյս տրվերէ ընելուն՝ այնպէս բանը աջողութիւն կատարէ։ Ի՛նքը ելաւ վերացվեցաւ սրբըվեցաւ, մազերը հոսեց շրջեցուցեց, ու իրեն փառաւոր հագուստները հանեց՝ գլխէն ինչվան ոտքը զարդարվեցաւ. և այնպէս հագված կապված՝ հետը առաւ աղախինը, ու անոր ձեռքը տրվաւ իր կերակուրին համանը՝ անանկ բեռիղվա քաղքէն դուրս ելան։

Երբոր քիչմը առաջ գացին, շուտմը վրանին հասան հողեփեռնէսի զինվորները, զարմանալով թէ այնպիսի կնիկ ինչ բան ունի հոն տեղվանքը, անանկ ինքը առին հողեփեռնէսի առջևը տարին։ Հողեփեռնէս երբոր յուդիթը տեսաւ՝ խելքը գնաց, սաստիկ սիրտը կապվեցաւ անոր աղվորութեը վրա. հարցուց իրեն թէ ով ես՝ ուսկից կուգաս. յուդիթաւ խելացի կերպով անուշ շարժմունքներով, (որ անոր սիրտը եվէլոք իրեն քաշէ՝ ու զինքը խաբէ), անոր պատասխան տրվաւ, տէր իմ՝ ըսաւ՝ տեսա որ ՝ծ բարկացեր է մեր ազգին, ու այ երեսէն ինկած՝ պիտի չարաչար թշնամիներուն ձեռքը մատնվի մեր ազգը, անոր համար ես փախա՝ քու քովը եկա քեզի աղաչելու։ Ի՛այց ասալ գիտնաս որ՝ ես ՝ծած պաշտ եմ, ուստի կըմնդրեմ որ ինծի հրաման տաս, որ մարդ չիդպչի՝ գիշերները մինաւորբանակէն դուրս ելլեմ, որ իմ աղօթքս առան-

ձին կատարեմ, ու դառնամ. ու ես անանկ իմ
աստուծմէս ատենը խմանալով առանց մէկմը
քու զօրքերդ կոտրրվելու, քեզ առնեմ երուսա-
ղէմի մէջը տանիմ։ Հողեփեռնէս աս բաներըս
ըսելով սիրտը աւելի կապվեցաւ ու տարցաւ
յուդիթի վրան, և անոր բոլոր ըսածներուն
հաւատալով՝ հրամայեց որ ներսը իր քովը առ-
նեն բերեն զինքը. ու ապրսպրեց որ իր աղէկ
կերակուրներէն և աղնիւ գինիներէն անոր
տան. բայց յուդիթ աղաչեց ըսաւ որ՝ ես ձեր
կերակուրներուն չեմ կրնար դպչիր անոր հա-
մար հետը ինձի կերակուր բերեր եմ, կը հրամ-
մեանք ես անկէց կուտեմ։ Ասանկ իրեք օր ի-
րեք գիշեր յուդիթ հողեփեռնէսի հետը անց-
ցուց. ու ըսածինպէս գիշերները մինաւոր բա-
նակէն դուրս կելլեր՝ այ առջև կինար աղօթ-
քը կըներ, որ ինչ բանի համար եկերէնէ, ա-
ջողվի։ Ասորրորդ իրիկունը հողեփեռնէս ու-
զեց որ մէկ փառաւոր սեղանմը ուրախութիմը
ընէ իր զօրապետներուն. յուդիթնալ հոն կանչ
չեցին՝ որ հագված կապված եկաւ՝ ինքնալ
նստած՝ իր հետը բերածներէն կուտէր. և
անատենը հողեփեռնէս յուդիթի վրա՝ որչափ
կընայեր այնչափ ցանկուիր աւելի շարժելով
զինքը կրկորսուանցուներ՝ ու գինին կըխմէր։
Երբոր սեղանը լըմընցաւ՝ ամենին մարդ ելան
իրենց տեղը գացին, միան յուդիթ ու հողե-
փեռնէս հոն մնացին. հողեփեռնէսալ ծածային
նախախնամութիւնը՝ թըմրած ինկաւ իր մահիճ
ձին վրա պառկեցաւ՝ առանց յուդիթի դպչե-
լու։ Երբոր խորունկ քնուն մէջն էր հողե-
փեռնէս անատենը յուդիթ ըսաւ թէ հիմա
է ժամանակը, ու քովը գնաց անոր թուրը հա-

նեց՝ մէկ ձեռքովը մազերէն բռնեց՝ տէր ՝ած ըսաւ՝ դու ինձի օգնէ, ու մէկալ ձեռքովը երկու հեղ զարնելուսնպէս՝ Հողեփեռնէսի գլուխը կարեց վրայէն փրցուց. անանկ առաւ գուրս ելաւ իր աղախնին տըվաւ՝ որ ան իրէն կերակրին ամանին մէջը դնէ։ Այս այսպէս մարդ չի մացած՝ (որ ամէնքը հոգնած քուն էին,) գիշերանց անոնց բանակէն ելաւ՝ բետիզվային պարսպին տակն որ հասաւ, սկսաւ ուրախուշ պահապաններուն կանչել ըսել թէ՝ ալ դռները բացէք՝ ՝ած մեզի հետ է։ Պահապաններն ալ շուտմը վազեցին բացին. և ան որ լեցին ամէնքը հոն եկան՝ Ջահերով Ճրագներով վրան թափեցան, որ տեսնեն թէ՝ ինչ է, յուդիթալ ամանէն հանեց ցրցուց իրենց, ասաւ հողեփեռնէսի գլուխը, որ ամբարտաւանութիւնը մեր ՝ածը կըքամահրեր. որ ինծիպէս մէկ կընկանմը ուժ տըվաւ որ ես իմ՝ ձեռքովս ինքը սպաննեմ։ Հողովուրդնալ փառք տըվին ՝այ, ու ուրախութէնն չէին գիտեր ինչպէս շնորհակալ ըլլան յուդիթի՝ որ զինքը այսպիսի վտանգներուն մէջ ձգեց իրենք ազատելու համար։ Հոնտեղը կանչել տըվաւ յուդիթ ան վէրը ըսած աքիոր ամոնացոց իշխանը. որ երբոր եկաւ աս բաներըս լսեց՝ ու հողեփեռնէսին գլուխը տեսաւ, զարմանալէն խելքը թռաւ. ու յուդիթի ոտքը ինկած գովասանքներ կուտար իրեն. և ան պատճառով ինքնալ դարձաւ ՝ածապաշտ եղաւ։

Այսքը երբոր լուսցաւ առտու եղաւ, յուդիթի ըսածինպէս՝ առաջ ելան ան հողեփեռնէսի գլուխը իրենց բերդին վրա կախեցին. ետքը դուրս վազեցին գացին թշնամիներուն բանա-

կին վրա։ Հնոնքալ աս բանքս տեսնելով՝ շուտ մը գացին Հողեփեռնէսի ձան տալու՝ որ եկեն ինչպէս պէտքէնէ ասոնց դէմ պատերազմին։ Երբոր Հողեփեռնէսի պառկած տեղը մնան, ու տեսան որ անիկա արունթափ գետինը փռուած ինկած, գլուխնալ վրան չէ, բանը իմացան, սկսան կանչել վայ տալ իրենց որ մէկ իսրայէլացի կնիկմը խափը խայտառակ ըրեր է իրենք, ու շիտեան ամմէն բանէրնին հոն թողուցին՝ ցիրուցան ըսկսան փախչիլ։ Ու անատենը իսրայէլացիքալ ետևնին ինկած շատ մարդ ջարդեցին. ու բոլոր ուսնեցածնին թալանեցին առին, անանկ որ եռասուն օր քաշեց աս բոլոր թշնամեաց բանակին բաները վերցունելը՝ քաղաքը բերելը. ու Հողեփեռնէսի խոռանը (ՅՅ՝ չատրաը) իր բոլոր արծաթեղէն և ոսկեղէն բաներովը յուդիթի հանեցին ընծա տրվին. որ անալ ետքը եղէմի տաճարին նվիրեց։ Ու 'ի շնորհակալութի աս յուդիթի ըրած քաջութիւնը՝ չորս դիին ամմէն քաղքներէն մեծամեծները՝ երիկ մարդ կնիկ մարդ կուգային յուդիթ տեսնելու, ու աչքիլուս ընելու։ Ալև եղէմէն յովակիմ քահանայապետնալ եկաւ, ու օրհնեանքներ կարդաց վրան. յուդիթալ աս իր ըրած քաջութիւնը և փառաւոր յաղթութիւնը՝ ՅՅ նվիրելով. մէկ յորդորական օրհնութիւնմը կարդաց ՅՅծային ամենակարողութիւն։ Ամսպիսի ուրախութիւս իրեք ամիս քշեցին ետքը, յուդիթ նորէն իր առջի ձամբան բռնեց՝ գնաց իր տունը առանձնացած կըկենար, և անանկ բարի վարքով ապրեցաւ ինչվան հարուրըհինգ տարի. ու հոն բետիղվա քաղաքը թաղվեցաւ իրեն երկանը քովը։

ԳԼ. Գ.

Պատմութիւն Լաստիերայ։

Ամ 3448։

Լսեցաք՝ մեծ ու զօրաւոր պարսից թագաւորը, իր թագաւորութեան երրորդ տարին եղեալ փառաւոր յաղթութիւնը ըրաւ՝ որ հարուր քսանրեսեթը գաւառ հնդոստանի երկրին իր տակը առաւ. ուզեց մէկ մեծ կոչունքը ուրախութիւնը ընել իր իշխաններուն՝ սիսիս ըսած թագերական քաղաքին մէջը, որ վեց ամիսի չափ ատեն քաշեց. անկէց ետքը նմանապէս վեց օրալ ռամիկ (ցր՝ պայաղի) մարդիկներուն ըրաւ։ Լս կոչունքներըս անչափ փառաւոր և ամէն դիէն զարմանալի եղաւ, որ էլ ըսված թէ ատոր նմանը եղած ըլլա աշխարհիս մէջ. և ասէ թէ միան երիկ մարդոց, հապա անորպէս զատ կոչունքալ ըրաւ ասթինէ թագուհին՝ կանանց կողմը (ցր՝ հարէմը,) բոլոր մեծամեծաց կնիկներուն։ Լս ուրախութիւններուս ետքի օրը արտաշէս թագաւորը աւելի զրվարճացած (ցր՝ քէֆ չաթմիշ ըրած,) խրկեց կանչեց որ ասթինէ թագուհին ելլէ ասոնց գա՝ որ իր իշխաններուն և բոլոր մարդոց առջևը երևնա ցրցունէ իր գեղեցկութիւնը։ Լրբոր ասթինէ չի հնազանդեցաւ թագաւորին՝ ու չուզեց գալ. թագաւորը շատ սրդոդեցաւ վրան, ուստի իր իշխաններուն հետ խորհուրդ ըրաւ ըսաւ որ՝ աս բանս առանց պատիժ տալու թողունքնէ՝ ամէնունն կնիկները ասկէց չար օրինակը կառնեն՝ իրենց էրիկնին չեն սեպեր՝ ոտից տակ կառնեն. անոր համար ասթինէն թագուհիութ

վար ձգեց՝ հանեց. և բոլոր պարսից տերու-
թեան մէջ հրաման եղաւ որ՝ գեղեցիկ աղջիկներ
ժողովուին, որ անոնցմէ ասթինէի տեղը ուրիշ-
մը թագուհի ընտրուի։

Այն ժամանակները սիսիս քաղաքը հրէայմը
կար մուրդէք անունով՝ բենիամէնի ցեղէն. որ
նաբուգոդոնոսորի ատենին գերի եկածներէն
էր. ասիկա իր հօրը եղբօրը աղջիկը, որ որբ
մնացեր էր՝ էսթեր ըսած, պզարկուցմէ քովը
առած կրսպահէր. աս էսթերսալ խիստ աղ-
վոր ըլլալով՝ արտաշէս թագաւորին համար
ընտրած աղջիկներուն մէջը առին։ Հրբոր ա-
տենը եկաւ՝ ան աղջիկները թագուրին առջևն
որ հանեցին, մէջերնէն թագաւորը էսթերը
հաւնեցաւ ընտրեց որ՝ իրեն թագուհի ըլլա
ասթինէին տեղը. և անոր համար փառաւոր
թագաւորական հարսնիք ըրաւ։ Հայց էսթեր
մուրդէքի խրատը պահելով՝ առջի բերանը
չի յայտնեց իր ինչ ազգէ ըլլալը, ու գաղտուկ
ներսըվանց իր ճծպաշտութիւնը ձեռքէն չը թո-
ղուց. ինչպէս մուրդէքնալ անանկ կրներ, որ
ինքնալ թագաւորական պալատին ծառայու-
թեանը մէջ էր։ Հրբ ան ատենները մասալ պա-
տահեցաւ որ՝ երկու ներքինի (կամ թագաւորա-
կան հարէմին վերակացուներէն,) մէկ պատ-
ճառովմը թագաւորին վրա ոխ պահելով՝ գաղ-
տուկ խօսք դրին՝ որ թագաւորը մեռցուներն.
մուրդէքն երբոր աս խմացաւ՝ կամացմը հասկը
ցուց ներսը էսթեր թագուհիին. թագաւորն
ալ անկէց բանը իմանալով, բռնեց կախել
տրվաւ ան ներքինիները. ու հրամայեց որ
մուրդէքի ըրած աս հաւատարմութիւնը՝ յիշատա-
կարանը գրվի։

Բայց արտաշէս թագաւորին իշխանութեան մէջը գլխաւոր մէկմը կար՝ Համանը սած, Հպարտ ու ամբարտաւան մարդմը. ասիկա աւելի երես գրտնալով թագաւորին առջևը, հրաման հանել տրվաւ որ՝ բոլոր պալատի մարդիքը թագաւորէն ետքը ինքը Ճանչնան՝ և իրեն երկրպագութիւն ընեն՝ ամէնքնալ հնազանդեցան անանկ կրնէին՝ ու միայն մուրդքէն եղաւ որ ինքը չուզեց համանի գլուխ ծռել երկրպագութիւն ընել։ Համան ասս բանիս վրա այնչափ առնրվեցաւ ու կատղեցաւ, որ անոր ոխը բոլոր հրեաներէն կուզեր հանել, գիտնալով թէ մուրդքէն հրեայ է. ուստի ասանկ հասկրցուց թագաւորին՝ թէ աս հրեից ազգը մէկ խաբեբա խառովարար ու վընասակար ազգմրնէ, պէտք է որ բոլորովին մեր մէջէն վերցրվի, որ պարսից տէրութիւնը խաղաղութիւն գտնէ։ Որոր համար թագաւորական հրովարտակով (ՅՓ՝ ֆէրմանով) հրաման հանել տրվաւ որ՝ հրեից ազգար ամսուն տասվերեքին բոլոր պարսից իշխանութեան մէջ եղած հրեաները, որ քաղաք որ գտնրվիննէ՝ երիկ մարդ, կնիկ մարդ, ծեր, տղա, ամէնքը ան մէկ օրվան մէջ թրէ անցուցնեն. ու բոլոր իրենց բանները թիրին գանձը առնեն. և աս հրովարտակրս առաջ հոն թիւրական քաղաքը կարդացվեցաւ, ու անկեց չորս դին խրրկրվեցաւ՝ սր ան ըսած օրը ամէնը պատրաստ կենան։ Հրեաները երբոր աս բանս լսեցին՝ ալ սատիկ յուսահատած չէին գիտեր ինչ ընեն, պաքով ու աղօթքով՝ այ կաղաչէին որ ան վոտձանքէն իրենք խալրսէ։

Մուրդքէնալ երբոր աս իմացաւ՝ խելքը գրլխէն թռաւ, ուստի վրայի լաթերը պատառ

պատառ ըրած, և մէկ քուրձմը հագած՝ գլուխը մոխիր ցանած՝ փողոցները ինկեր սատին անդին կրկանչեր՝ կրսեր թէ՝ ինչ ըրաւ իմ ազգս որ սասնկ պարապ տեղը պիտի կորսըվի։ Այդբը մէկ ներքինիին ձեռքով խրրկեց ներսը եսթերի հասկըցուց թէ՝ յիշէ՛ խ՝ և քու ազգդ, ու թագաւորին խօսք անցուր որ աս փորձանքէս ազատինք։ Այսթերալ պին խրկեց թէ՝ չէմ կրնար, ինչպէս դուն ալ գիտես օրէնքը՝ որ եթէ թագաւորը չի կանչած առջևը մարդ ելլելու ըլլանէ՝ կրմեռնի, և աս պատճառովըս ասաւ եռասուն օր է՝ որ եսալ թագաւորին քով չէմ գացեր։ Մուրդքէ նորէն իրեն խրկեց ըսաւ թէ՝ եսթեր՝ չի կարծես որ աս փորձանքէս դուն ազատ ես. հապա թէ որ դուն անհոգ ըլլաս, գիտցիր որ ՝ուծ կարող է մեզ ամմենքըս ազատել, ու քեզ քու ազգականներովդ պատժել, որ ձեռքէդ կրնար գար աս բանիս ձարմը հոգալու, ու չընեսնէ։ Այս որ լսեց եսթեր՝ տակնու վրա եղաւ, անդրկեցաւ չեր գիտեր որ դէն դառնա՝ ինչ ընէ. ուստի խրկեց ապրսպրեց մուրդքեի, որ երթա ան սիս սիս քաղքի հրեաները մէկտեղ բերի՝ և իրեք օր գիշեր ցորեկ ծոմ պահեն իրեն հետ՝ ու աղօթք ընեն, որ ՝ուծ իրեն ուժ կարողութիւն տա՝ թագաւորին առջևը ելլելու. թէ և ըսաւ՝ ասով իմ կենացըս զենմինալ հանելու ըլլա։ Ուստի եսթեր ալ ան ատենը իր թագաւորաական փառաւոր լաթերը հանեց վրայէն, ու մէկ քուրձմը հագաւ, և անուշահոտ եղերը խունկերը քովէն վերցուց՝ մոխիր ու աղբ ցանեց գլուխը, ապաշխարու

որ՝ իրեն լոյս տա ցրցունէ թէ ինչ ընելու է։
Յանկ երեք օր ապաշխարուէ աղօթելէն
ետև՝ երրորդ օրը վերայէն հանեց ան քուրձերը
ու իր փառաւոր լաթերը հագած զարդար-
ված, հետը երկու աղախին առաւ՝ այնպէս
սիրտ ըրաւ գնաց Թագաւորին առջևը ելաւ։
Այց երբոր Թագաւորին երեսը սրդոզած
պէս տեսաւ, որ առանց կանչելու իր առջևը
ելելը է, ասթեր սաստիկ վախէն մարեցաւ խ-
նալուպէս որ եղաւ, ան ատենը ած Թագաւո-
րին սիրտը շարժեց՝ որ շուտմը ցաթկեց աթո-
ռէն՝ ելաւ եկաւ բռնեց վերցուց ինքը. ու ա-
նուշ խօսքերով սիրտ տալով իրեն ըսաւ՝ մի
վախնար ասթեր տիկին, իս քու եղբարդ սեպ՝
ու անանկ համարձակ հետը խօսէ. աս ըսելով
ոսկիի գաւազանը առաւ վրան դրաւ։ Յասթեր
ասոր վրա քիչմը իրեն եկաւ, բայց խօսիլնէն
մէյմալ սիրտը դող ինկաւ՝ ու մարեցաւնէ, Թա-
գաւորը իր ծառաներուն հետ նորէն վերան
զորզորալով բռնեցին վերցուցին, ու ըսաւ Թէ՝
ասթեր տիկին՝ ինչ է քու ուզածդ, գիտնաս
որ կէս Թագաւորութիւնալ ուզեսնէ՝ քեզի կու-
տամ։ Յասթերալ ան ժամանակը բերանը բա-
ցաւ ըսաւ, իմ ուզածը աս է ասոր ես մէկ սե-
զանմը պատրաստեր եմ, կըխնդրեմ որ՝ հա-
մանը հետը գանես հրամմես իմ սեղանը
գաս։ Թագաւորնալ խիստ աղէկ ըսաւ. շուտ-
մը համանը կանչել տրվաւ, ու անանկ մէյ-
տեղ ան օրը ելան ասթերի պատրաստած սե-
զանը գացին. երբոր կերան խմեցին, Թագա-
ւորը նորէն ասթերի ըսաւ որ՝ իսմէ խնդրէ ինչ
որ կուզեսնէ՝ որ քեզի ընեմ. ասթերալ ըսաց,
կըխնդրեմ որ հրամմես համանի հետ վաղը

նորէն իմ սեղանս գաս։ Բ. բանիս վրա համանշնալ սասափիկ ուրախանալով, երբոր եկաւ տուն կըդառնար, Ճամբան պատահմամբ մուրդքէն դիմացը տեսնելով որ իրեն երկրպագուն չըրաւ, նորէն բարկութիւնը շարժեցաւ վրան։ Այսքը տուն որ գնաց, խնտումով իր փառքը պատիվը սկսաւ իր կնկանը՝ և բարեկամներուն առջևը պատմել՝ ու պարծենալով աս ալ ըսաւ թէ՝ եսթեր թագուհին թագաւորին սեղան ըրաւ, ու անոր հետը իսմէ 'ի զատ՝ ալ ուրիշ մարդմը չիկանչէց։ Այց ասոնք ըսաւ առջևը բանմը չէն երևար՝ երբոր կրսեսնեմ ան մուրդքէն՝ որ մէկ անչահ հրեամը թագաւորին պարտատը մըտեր՝ իս չի սիպեր։ Ինոնք ալ ըսին թէ ատ մէկ դրժար բանմը չէ. յիսաուն կանգուն բարձրը մէկ փատմը շինել տուր, վաղը գնա թագաւորէն հրաման առ՝ անանկ բռնէ անկէց կախել տուր մուրդքէն. աս բանիս համանի միտքնալ պառկեցաւ՝ ուստի շուտմը հրամայեց որ ան ըսած փատը պատրաստեն։ Այց տես այ բանը, որ ան իրիկունը թագաւորունը եսթերի սեղանէն դարձաւ՝ ամենևին քունը չիտարաւ, եկաւ նըստաւ՝ ուզեց որ անցած գացած բաներուն յիշատակարանները առջևը բերեն կարդան։ Այրբոր կըկարդային՝ ու հոն հասաւ որ գրած էր թէ՝ երկու նեբքի նի կուզէին թագաւորը մեռցունել, ու մուրդքէն հաւատարմութիւն թագաւորին յայտնեց ասոնց խորհուրդը. անատենը թագաւորը դարձաւ հարցուց թէ՝ ասոր համար մենք մուրդքէին ինչ վարձք տըվինք. ծառաներնալ ըսին թէ՝ բանմը չեղաւ իրեն։ Այսքը թագաւորը աս բանիս վրա ինքիրեն մըտմըտալով, առաջ

վանց կանուխ ելաւ հարցուց թէ՝ ո՞վ կայ դուռ-
սը եկած։ (Համմնտալ ան վերը ըսածինպէս
կանուխ ելեր թագաւորին դուռը եկեր էր,
որ հրաման առնէ մուրգէն կախելու։) ծա-
ռաները նայեցան, ըսին թէ, Համմնը եկեր է։
Թագաւորնալ Համմնը ներս կանչել տրվա-
ու աս հարցուց իրեն, դուն ըսէ ըսաւ, թէ ո-
ես մէկը ուզեմ փառաւորեցնէ՝ ինչ պէտք է ա-
նոր ընեմ։ Համմնտալ մտմտաց թէ՝ իսկ
Իզատ ո՞վ պիտոր փառաւորէ թագաւորը, ու-
տի պատասխան տրվաւ թէ՝ կըվայլէ որ ան
մարդուն՝ թագաւորական հագուստը հագ-
ցունեն, ու թագաւորին ձին հեծցունեն, ետ-
քը թագաւորին խիստ սիրելիին ձեռքը տան,
որ ան առնէ բոլոր քաղաքը քալեցունէ, ու ա-
նոր առջևէն քարոզ (յ՞ թելալ) կանչվի թէ
ասանկ կըլլա ան մարդուն՝ ո՞վ որ թագաւորը
ուզէ փառաւորել։ Այս Համմնի ըսածին թա-
գաւորնալ հաւնեցաւ՝ խիստ աղէկ է ըսաւ
գնա ատ բոլոր ըսածներդ մուրգէի ըրէ,
ատենով մէզի անանկ հաւատարմութի ցրցուցի
է։ Համմնտալ այսու կերպով իր խօսքովը բը-
նրված՝ շուտմը հնազանդեցաւ թագաւորին
գնաց ան բանները մուրգէին ըրաւ. և ասոր
վրա սատիկ սիրտը կոտրած գլուխը կախ ա-
նանկ տուն դարձաւ։ Այտքը երբոր ժամանակը
եկաւ Եսթեր թագուհիին սեղանը գնաց. հոն
թագաւորը ուտել խմելէն ետև, նորէն Ես-
թերի հարցուց թէ՝ ինչ է քու խնդիրքդ,
գիտնաս որ՝ թագաւորուես կէսնալ ուզեմնէ,
քեզի կուտամ։ Այսթերալ անատենը սիրտ ա-
ռաւ, ու բանը բացաւ ըսաւ թէ՝ տէր թագա-
ւոր՝ ես իմ և իմ ազգիս կեանքը միան քեզմէ կը-

ինդրեմ. որ ատ բանսարկու՝ ու խաբեբա հա-
մանը քեզի ծուռ հասկրցուներով, ուզեց որ
մեզ բոլորս ջարդի՝ աշխարքէս վերցուներ։
Լ՝ս որ լսեց Թագաւորը՝ ներքև վրայ եղաւ՝
սեղանը ձգեց դուրս ելաւ. համանալ անա-
տենը մինաւոր որ մնաց՝ ելաւ դողալով եսթե-
րի տաքը ինկաւ՝ կաղաչեր որ իրեն խնայէ։ Լ՝-
նոր վրա նորէն որ դարձաւ Թագաւորը՝ ու ան տե-
սաւ, բարկուէն կրակ կտրեցաւ, կարծեց Թե
Թագուհիին բռնաբարուի կընէ. ուստի շուտ-
մը հրամայեց որ բռնեն տանին զինքը ան փա-
տէն կախեն, որ սրով առաջ ինքը մուրդքէի
համար պատրաստեր էր։ Լ՝ու ան օրը մէկէն
Թագաւորը բոլոր համանի ունեցած բարիքը
հանեց եսթերի պարգև տրվաւ. նաև ասալ
իմանալով որ մուրդքէն եսթերի աղգականն է
եղեր, համանի իշխանութիւնը մուրդքէին վրա
դարձուց. ու շուտմը ան հրէից վրա եղած հրա-
վարտակին դէմ՝ նորէն ուրիշ հրովարտակ շի-
նեց՝ առջի ըսածները դարձուց ետ կանչեց,
ներհակ հրաման հանեց որ՝ հրեաները իրենց
թշնամիները ջարդեն ադար ամսուն տասվի-
ըրեքին, ան օրնոր իրենք պիտի ջարդվեին,
ինչպէս որ համանը սահմաներ էր. անանկ որ՝
միան սիսիս Թագաւորական քաղաքը ան օրը
հինկ հարուր հոգի սպաննեցին. ու համանի
տասը զաւակներուն հետ հարուրաւոր հոգիալ
հրէից թշնամիներէն կախեցին. և բոլոր պար-
սից տերութիւնէ մէջ ասոնց անդէն աս պատ-
ճառովս հազարներով սպաննեցին։ Լ՝տքը աս
աղատուելու համար 'ի շնորհակալութիւն այ
հրեաներնալ տուն հաստատեցին ադար ամսուն
տասնըչորսը. որ ինչվան այսօրս կըպահեն,

ու իրենց լեզվովը Փո�-ԷՄ կըսեն, որ վիճակ ըսել է. պատճառն որ՝ առ օրըս վիճակ ձգելով հանեց սահմանեց համար՝ որ հրեայքը ջարդի. բայց իրենք այ ողորմութիւն ան օրը իրենց թըշնամիները կոտրել տալին։

Գ.Լ. Գ.

Պատմութիւն Արքաբէից։

Եսայ. ԺԳ։ Երեմ. ՌԼ։ Եզեկ. ՌԼ։ Ամ Տի. 3246. 3390. 3410։

Աճառունչին մէջը շատ մարգարէներ կըլլային որ անոնցմէ ոմանք մենաքալ տեղովը մէջ բերեր էնք. բայց մասնաւոր գիրքով մարգարէութիւն գրող, բաց 'ի մովսէս մարգարէն, որ ածաշունչը ծարէն ինչվան իր ժամանակի պատմութիւն ինքը գրեր է. ու սամուէլ մարգարէ, որ անալ ինչպէս կըսեն՝ գատաւորաց ատենէն ինչվան իր մահը եղած պատմութիւնները գրեց. մնացածը միան տասնըվեց են՝ որ իրենց գրըվածքը՝ որ գիրք սեպվեցան։ Անոնց չորսը՝ ցի՝ եսայի, երեմիա, եղեկիէլ, դանիէլ, իրենց մարգարէական գրվածքին շատու�ը համար՝ մեծ մարգարէ ըսվեցան. իսկ մէկալ տասվերկուքը որ մարգարէական գրվածքնին կարճկեկ է, փոքր մարգարէ ըսվեցան։ Հիմա կարգը կըբերէ որ ասոնց վրայալ համառօտ կերպով տեղեկութիւնը տանք, ու իրենց գրվածքէն երևելի պատմութիւնները հոս դնենք։

Եսայի մարգարէն որդի ամովսայ՝ յուդայի ցեղին տերուան մէջը՝ ողիա թագաւորին ատենէն սկսաւ իր մարգարէութիւնը, և ինչվան եզեկիայի ատենը քըշեց. որ իրեն շատ օգնուի

հասաւ ՝այ կողմանէն, ինչպէս տեղովը ըսեր
ենք։ Հասայի մարգարէին մեսիային վրա գրած
մարգարէութիւնները մանակ տեղն ի տեղը բաց
ու յայտնի են, մանաւանդ անոր հրաշալի ծը-
նունդը՝ ու նախատալից մահը, որ կարծես թէ
աւետարանչիկս եղածը անցածը կրպատմէ։
Բ.սոր տեսիլքներուն մէջը գլխաւորը ան եղաւ
որ՝ իր մարգարէուն սկիզբը տաճարին մէջը տե-
սաւ ՝ած՝ բարձրը փառահեղ աթոռ նստած,
և բոլոր տաճարը լուսաւոր հրեշտակներով
լեցուն, սերոբէները՝ ՝այ չորս դին պատած վեց
վեց թևերով (ՀՀ՝ խանսանտերով), որ ՝այ ահէն՝
երկու թևովը երեսնին կը գոգոցէին՝ երկուքովը
ոտքերնին կը ծածկէին, և մէկալ երկուքովը
կը թռչըտէին, ու դաս դաս կանչելով կըսէին՝
ՍԲ ՍԲ ՍԲ զօրութեամբ լի է ամ երկիր փառաւորութիւն։ և
անոնց ձանէն բոլոր տաճարը ահռելով կը թընը-
տար։ Բ.ս որ տեսաւ մարգարէն, ինքնալ սոսկ-
կալով՝ վայ ինծի ըսաւ, որ ես ողորմելիս ՝ար
զօրութեան աչքիս առջևը կը տեսնամ, ու ասանկ
կապված կեցեր եմ. պատճառն որ՝ պիղծ բե-
բան մարդ եմ ես, ու պիղծ բերան ժողովրդոց
մէջ կը կենամ։ Բ.ն ատենը սերոբէներէն մէկը
ունելով (ՀՀ՝ մաշայով) սեղանին վրայէն մէկ
կրակի կածմը առաւ բերաւ մարգարէին բե-
բանը մօտեցուց՝ ու ըսաւ, ասիկա քու բերնիդ
դպչելով կըսրբէ կըմաքրէ քու մեղքերդ ու
անօրէնութիւնները։ Բ.տքը ես այի ըսեց որ ՝ած կը
հարցունէր կըսէր թէ ո՞վ խրկեմ՝ ո՞վ երթա ան
ժողովուրդին քովը։ Ինքնալ պիտն տրվաւ թէ՝
ահա ես կեցեր եմ, իս խրկէ. ՝ածալ ան ժամա-
նակին խրկեց ինքը, որ երթա քարոզէ իսրայ-
էլացոց։ Բ.ս շատ տարի քարոզելէն ետև՝ ինչ

պէս վերը ասեր է նք, մանաւանդ Թադէոսին հրամանովը սղոցվելով վախճանեցաւ։

Երեմիա մարգարէն որդի քեղկեայ՝ ղևտացի քահանայական ցեղէն անաթովթ քաղաքը ծնաւ. որ մօրը փորէն ՝ծ սրբեց՝ իրեն մարգարէ ընտրեց. ուստի պզտիկուց սկսաւ մարգարէութիւն ընել՝ յովսիա յուդայի Թագաւորին ատենէն ինչման որ բոլորովին կործանեցաւ հրէից տէրութիւնը։ ՝Ի՝ Երեմիայի շատ տեսիլքներ ցուցուց, որով հրէից վերջի դալու մօտ կործանումը կիմացուներ։ ՝Ին տեսիլքներուն մէջը մէկնալ աս եղաւ որ՝ երկինքը հիւսիսային դիէն մէկ կաթսամը (՝ի՝ խազանմը) սաստիկ բոցով կրակի վրա դրած կեռարկոր. և ասով ՝ծ իմացուց որ՝ ան կողմէն պիտոր քաղդէացիքը հրէից վրա խրկէ իրենց մեղացը պատիժ։ Երեմիա ամէն մարգարէներէն աւելի իր ազգին անօրէնութեցը ու Թշվառութեցը վրա կը հալեր կըմաշեր ու կուլար. որ եաքը ալ յուսահատութիւնէ անխեղճալի ողբը ըսաւ վրանին՝ որ կըսէի. Օ էրդ պատա նսպատ դաշնոցնէալ գաղդն բաղմաձողով։ ՝ղեմի պաշարման ատենը երեմիա այս պիսի երած սրբոտով՝ աստուծմէ իր բերանը դրած խօսքերը ու յանդիմանութիւնները համարձակ որ կըքարոզեր հրէից. անոնք դառնալու ապաշխարելու տեղը՝ սաստիկ կատէին ու կըհալածէին զինքը. և աս հերիք չէ, եաքը խօսքալ դրին որ բռնեն ըսպաննեն, իբր Թէ ինքը սասանկ քարոզութիւններով ժողովրդին ձեռքը կըԹուլցուցնէ՝ որ Թշնամիին դէմ չեն կրնար աղէկ պատերազմ ընել։ Ուստի երբոր ինքը բռնեցին՝ սեդեկիա Թագաւորին առջևը տարին, և անալ մեղքցաւ բան չուզեց ընել.

անունք բռնուք առին Երեմիան մահապարտնե-
րուն գուբը (ոչ՝ խանը խուչուն) ձգեցին՝ որ
երթա մեռնի. և Հոն կրմեռնէր՝ թէոր աբ-
դամելէք եթովպացի ըսած իշխանը՝ շուտմը
մէջ չիմանար՝ թագաւորին հասկցուներ թէ՝
ասանկ նեղուելու տեղը այսպիսի սուրբ մարդ
մեղի հարկաւոր է ըսելով. ու անանկ Երեմիան
գուբէն հանեց, որ անկէ ետև ինչվան եղէմի
առումը բանտը կեցաւ։ Հոգը Երբոր նաբու-
զարդան գահճապետը եկաւ Հրեաները գե-
րի բռնեց բաբիլոն տարաւ, Երեմիան անկէց
խնդրեց որ՝ ինքը իր բարուք ըսած աշակերտին
հետը՝ (որ անալ մարգարէութիւն կընէր Երե-
միայի ձեռաց նեղքևը) Երկուքնին եղէմ մը-
նան։ Հայց անկէ ետև յովնաթան որդի կարէի
ըսածը Երբոր տիրեց մնացած Հրեաներուն վրա՝
ու նաբուզոդոնոսորէն վախնալով ժողովուրդը
մէյտեղ առած եգիպտոս փախաւ, Երեմիայալ
ան ատենը անանց հետ տարաւ. և Հոն եգիպ-
տոս կըսեն թէ՝ Հրեաները չիդիմանալով իրեն
ըրած քարոզութիւներուն՝ վերջը քարկոծելով
մեռցուցին զայ մարգարէն։

Հզեկիել մարգարէն որդի բուզեայ՝ զե-
տացի քահանայ էր. որ նաբուզոդոնոսոր Եր-
բոր եկաւ՝ յովակիմ կամ յեքոնիա թագաւորը
եղէմէ բռնեց բաբիլոն տարաւ, եզեկիելալ
ուրիշ Հրեից գերիներուն հետը մէյտեղ Հոն
գնաց. ու բոլոր մարգարէուհիները և ուծային
տեսիլքները Հոն իրեն յայտնըվեցան։ Հրջի
տեսիլքը ուծ եզեկիելի այսպիսի կերպով ցը-
ցուց. որ Երբոր մէկ անգամմը ինքը քոբար
գետին քովը կեցեր էր, յանկարծակի երկինքը
ամպերուն մէջը մէկ սոսկալի մեծ կառքմ-

տեսաւ՝ ամմէն դիէն աչքերով լեցուն, որ
չորս կենդանի անիկա կը քաշէին կը տանէին.
ու կենդանիներուն մէկը մարդու կերպարանք
ունէր, երկրորդը՝ առիւծի, երրորդը՝ կոլու,
ու չորրորդը՝ արծիվի, և ասոնց ամմէնը չոր-
չորս երեսս ունէին, ու չորսական թեւերով
էին, որ երկուքովը մարմիններն ծածկեր էին.
ու մէկալ երկուքովը կը թռչէին, և անանկ
լուսաւոր էին կը փայլէին ասոնք՝ որ աչք չեր
դիմանար վրանին նայելու տեսնելու՝ կարծես
թէ կայծակներ կը ցաթկեցունէին իրենց վը-
բայէն։ Եւ ասոնց վրան երկինքը սաստիկ
պայծառ ու լուսաւոր բացված՝ մէջ տեղը տե-
սաւ որ մէկ փառահեղ մարդմը աթոռը նստած,
ու չորս դին բոլոր ծիրանի գոտիպէս ճառա-
գայթներով պատած՝ ինքը մէջը արևուպէս
կը փայլեր։ Եւ տեսիլքովը, ինչպէս կրսեն
ոմանք՝ ՝ծած ուզեց հրեից ցրցունել թէ՝ իրենց
շինված տաճարին՝ և հոն տեղը դրած քերու-
բէից ինքը կարօտ չէ. որ իրենք իրենց տաճա-
րին վրա պարծենալով մարդարէից դէմ կը-
սէին թէ՝ քանի որ մեր տաճարը եղէմ կեցեր է՝
մեզի թշնամին չիկրնար մօտենար. որ ասանկ
չէ, հապա ամմէն տեղ անկէց ալ շատ փառա-
ւոր՝ ու սքանչելի կերպով ինքը կրպաշտրվի
իրեն ըստեղծվածներէն. և թէ որ մեզ բերանէն
չիգառնանք՝ չի խնայեր ան տաճարը նաբու-
գոդոնոսորի ձեռքը կուտա. որ թէպէտ բնուէ
մարդ է, բայց ՝ծած իրեն անանկ զօրուն պիտոր
տա որ՝ առիւծիպէս ուժով ըլլա, արծիվիպէս
աչքրբաց սրատես, ու կովուպէս ջարդ ու
բուրդ ընող. որ այնպէս հիմնայատակ ընէ ի-
րենք իրենց տաճարովը։ Այց եղեկիել աս

տեսիլքը տեսածինպէս՝ սարսափելով երեսին վրա որ ինկաւ, ան ատենը ձանմը լսեց որ ի-բեն կըսէր՝ ովդի մարդոյ, ելիր ոտից վրա կե-ցիր՝ որ ըսածըս լսես. ու անանկ ՝ծ սկսաւ ի-բեն գանկտիլ ինչացոց ըրած ապերախտութիւնը. ու հրամայեց որ երթա քարոզէ իրենց, որ ծուռ Ճամբանին թողուն՝ ՝ոյ դառնան։ Հտքը գէպ՝ի ինքը ձեռքմը երկընցաւ՝ որ մէկ գիրքմը բռներ իրեն կուտար ու կըհրամայեր որ բերանը դընէ ուտէ. ու ան գրքին ներսը դուրսը ողբ ու վայ գրած էր. մարգարէինաւ անանկ երևցաւ որ՝ ան ուտելուընպէս բերանը անուշցաւ, ու ՝ծ հրամայեց որ անով լեցված՝ երթա քարոզէ։

Ի՛ս եզեկիէլ մարգարէս՝ ինչացոց մեղքը և անօրէնութիւնները երեսնին տալով՝ իրենց վրա եկած՝ և գալու թշվառութիւնները՝ շատ առակներով ու օրինակներով քարոզելէն ետև, ՝ծ ինչացոց մէկ ուրախական տեսիլքմընալ իրեն յայտնեց, որ ան իրենց գերութիւնը բոլորովին չի յուսահատվին. ու ասանկ եղաւ։ ՝՝՝էկ օրմը ՝ծ եզեկիէլը մէկ դաշտմը (՝ոյ՝ օվա տեղմը) տարաւ, ու չորս գին պլորտացուց՝ տեսաւ որ բոլոր մեռելներու չորցած ոսկորներով լեցուն էր ան դաշտը. ու հոն եզեկիէլի ըսաւ որ՝ կանչէ հրամայէ՝ որ ամմէն մէկ մարդու ոսկորները իրենց տեղը գան շարվին, ջիլով (՝ոյ՝ սինյիրով) կապվին, միս գա լեցվի, ու մարթը վրանին պատէ։ Հրբոր ըսածինպէս անանկ կատարեալ մարմիններ եղան, նորէն իրեն հրամայեց ՝ծ որ՝ ըսէ՝ որ չորս դիէն հով փչէ վրանին. ու ան հովէն ան մարմինները կենդանուն առին՝ ամմէնքը ելան ոտքի վրա

կայնեցան, այնպէս որ բոլոր դաշտը անհամար մարդով լեցվեցաւ։ Եւ ասով հաստատեց ՀԱԾ իր խելացոյ ըսած խոստմունքը, որ մէկ օրմը պիտի անոնք չորս դիէն գերուէն ազատէ մէյտեղ բերէ՝ մեռնելէն յարուէ առաջիպէս։ Լսէք Ի զատ ՀԱԾ եղեկիել մարգարէին տեսիլքներուն մէջը եղէմի տաձարին մէկ նորձևմը ցրցուց, որ ինչպէս կրսեն՝ խելացիք գերուԹէն դառնալու ատենը՝ անոր պէս նորէն շինեն ոյ տաձարը։

ԳԼ. Լ.

Պատմութիւն Դանիէլի մարգարէին։

Դան. ա. ԺԴ. Ի։ = Ամ Հի. 3398.3401։

Բաբուգոդոնոսոր բաբիլացոյ Թագաւորը երբոր եկաւ եղէմ առաւ, ու մէջն մարդիքը հետը քշեց բաբիլոն գերի տարաւնէ իր իշխանութիւնէն ասփանեզ ըսած մէկին յանձնեց որ՝ ան հրէից գերիներէն՝ շնորհալի խելացի ու սրբամիտ տղաքներ ընտրէ, Թագաւորական ծախքով առնէ պահէ, ու իրենց քաղդէացոյ լեզուն՝ և ուրիշ ուսումներ սորվեցունէ։ Այս ընտրածներուն մէջէն էին՝ դանիէլ յուդայի Թագաւորական ցեղէն, և իրեն իրեք ընկերները, անանիա, միսայէլ, ու ազարիա, որ անոնց անունը ասփանեզ փոխեց, դանիէլի անունը բաղտասար դրաւ, և մէկալներնոյնը՝ սեդրաք, միսաք, աբեդնաքով։ Թագաւորը ապրսպրեր էր, որ ամ տղոցրս կերակուրը իրեն սեղանէն երԹա, աղէկ ուտելիքներ ու ըմպելիքներ տան։ Այց դանիէլ և իրեն իրեք ընկերները մովսիսական օրէնքը պահելով՝ վերակեցուն ապ-

չեցին որ՝ իրենց միան հունտեղէն տա ուտելու, ու սոսկ ջուր տա խըմելու։ Նալ առջի բերանը աս բանիս Թոզ չիտրվաւ, վախնալով թէ տղաքը անանկ կըհալին կըմաշին, ու ետև ինքը Թագաւորին խօսք կըլըսէ։ Այց ետքը փորձեց տեսաւ որ՝ ան չորսը անանկ Հգնաւորիպէս հունտ ուտելով, մէկալ տղոցմէն՝ (որ Թագաւորին փառաւոր կերակուրներէն կուտէին,) աւելի գեր ու կայտառ էին։ Երբոր աս տըղոցը սորվելու ատենին լըմընցաւ, և փորձելու տեսնելու համար Թագաւորին առջևն որ էլան, դանիէլ և իրեն իրեք ընկերները ամմէնէն աւելի գիտուն ու իմաստուն երևցան. որ ինչ որ կըհարցուներ Թագաւորը, ամմէն բանին պէնը տերն՝ի տեղը կուտային՝ մանաւանդ դանիէլ. անանկ որ՝ բոլոր բաբիլացոց կարդացողներուն բերանը բաց կըմնար, և իրենց չի գիտցածները անիկա կըշուրուցեր, ու կըմեկներ։

Այս դանիէլ մարգարէս, ինչպէս կըսեն՝ տասվերկու տարվան տղա էր, որ իր իմաստութիւնովը շուշան բարեպաշտ կինը մեռնելէն խալըսեց. որ ասանկ եղաւ բանը։ Երեից բաբիլոնեկած բնակած գերիներէն մէկ մարդմը կար յովակիմ անունով, որ մէկ շուշան անունով կնիկմը ունէր՝ տեսքով՝ խիստ գեղոր. և հոն պէտք եղած ատենը հրէաներուն ծերերը ասոր տունը կուգային՝ իրենց մէջի դատաստանը կըտեսնէին։ Այս ծեր դատաւորներէն երկուքը՝ շատ գալով երթալով յովակիմի տունը՝ շուշանին աչք զարկին, ու դիպուկ ատեն կրփընտռէին որ իրենց չար ցանկութիւը կըշտացուներ։ Լուստի մէկ օրմը որ շուշանը խիստ տաքէն նեղացած

ելաւ իր պարտէզը գնաց, որ հոն աւազանը մտնա վլացվի, ու երբոր իր աղախինները քովէն խրկեց որ երթան աՀառ (ՅՀ՝ սասոն) բերեն, ու ինքը մնաւոր մնաց. ան ատենը աս երկու դատաւորները որ ետևէն գացեր պարտէզին մէկ կողմը պահվըտեր էին, եկան շուշանի վրա հասան, ու կրբռնաբարէին որ իրենց չար կամքը կատարէ, հապա թէ չէ՝ քեզ կըմատնենք ըսին, թէ մէկումը հետ բռնեցինք՝ որ մեզը կըգործէր։ Ի՞նչ քանոս որ տեսաւ շուշան՝ ախ ըսաւ՝ որ դին դառնամ նէ գէշ է. ատ բանը ընելը՝ ինձի մեռնելու չափ է, և թէ որ չընեմ՝ ձեր ձեռքէն պիտի չի խալըսիմ. բայց այսու՝ ամիս աւելի կընարեմ ատ չարուքը չընել՝ ու ձեր ձեռքը մատնըվիլ, քան թէ այդ առջև մեղանչեմ. ասանկ ըսաւ շուշան՝ ու սկսաւ կանչվրտել։ Ի՞նատենը ամոնքնալ կանչվրտեցին. ու երբոր մարդիք վրա հասան, անոնց ըսին թէ մենք պարտէզը ժուռ դալնինի տեսանք որ շուշան մէկ կարիճիմ հետ մեղք կրգործէր, և երբոր վրանին երթալու եղանք, մարդը ձգեց փախաւ։ Ի՞սանկ զրպարտուքի ընելով, մէկալ օրն որ դատաստան հանեցին անմեղ շուշանը, ով որ զինքը կրձանչնարնէ՝ կրզարմանար՝ որ ասանկ բանի մարդ կարծիք չուներ շուշանի վրան. բայց ետքը ան երկու ծերին հաւատալով վճիռը կարեցին թէ՝ մնոխիսական օրէնքով պէտք է որ մեռնի։ Ը՞ ուշանալ անժամանակը կանչեց. ՀՀՀ յաւիտենական ըսաւ՝ դուն որ ամէն դաղտուկ բաները ըլլալէն առաջ գիտես, ասալ գիտես որ՝ ասանքը սուտ կրվկայենկոր իմ վրաս և այնպիսի անօրէնութէ համար կրմեռնիմ՝ որ չեմ ը-

բած։ Լ՝ծալ լսեց շուշանի աղօթքը, ուստի երբոր ալ մեռցուցնելու կրտանէին, Համբան Հոգին՝ որ լոյս տրվաւ Դանիէլի, որ Ժողովուրդին մէջէն ամուր ձանով սկսաւ կանչել թէ ես անպարտ եմ ատոր արունը մտնալէն։ Երբոր աս լսեց բոլոր Ժողովուրդը՝ կանկ առին։ ու հարցուցին թէ ինչ կրսէ։ Ինալ ըսաց՝ ատանկ անխէլք եղաք որ՝ առանց բանը իմանալու՝ դատապարտեցիք աստ անմեղը. դարձիք նորէն դատաստան ըրէք։ Դարձաւ բոլոր Ժողովուրդը, նորէն դատաստան նստան. ու Դանիէլը առին մէջ տեղերնին նստեցուցին, իրեն աղաչեցին որ՝ ինքը աս դատաստանը նորէն տեսնէ. անալ կանչեց ան երկու չար դատաւորները, ու մէկիկ մէկիկ հարցընելով անոնց սըտուերը և չարութիւր յայտնի ցըցուց. ու անանկ մեռնելէն խալըսեց անմեղ շուշանը. և անոր տեղը սպաննեցին ան երկու ծեր դատաւորները։ Այսով Դանիէլի անունը շատ հռչակվեցաւ հրեաներուն մէջը, և օրէ օր մեծնալով բաբիլացոց առջևնալ շատ անուն առաւ, մանաւանդ երբոր ետքը նաբուգոդոնոսորի տեսիլքները կամ երազները մեկնեց. ինչպէս որ հիմա կըպատմենք։

Նաբուգոդոնոսոր թագաւորը քնուն մէջը երազմը տեսաւ, ու երբոր արթնցաւ՝ անոր վախէն չփոթած՝ բոլորովին մոռցաւ մըտքէն եկաւ տեսած երազը. ուստի շուտմը հրամայեց՝ առջևը կանչել տրվաւ բոլոր բաբիլացոց կարդացողները և իմաստունները, որ իրեն ըսեն թէ ինչ էր երազը, ու անոր մեկնութիւնը տան։ Երբոր ասանք չիկրցան գիտնալ նաբուգոդոնոսոր սաստիկ սրդողեցաւ վրանին, հրա-

մայեց որ բոլոր բաբիլացոց կարդացողները
ըսպաննեն։ Այս բանըս դանիէլի՝ և իրեն իրեք
ընկերներուն անկածը հասաւ, որ իրեքնալ ան
կարդացողներուն մէջը կըսպանէին. ան ա-
տենը դանիէլ խնդրեց որ մէկ օրմը ատեն տան
իրեն, որ ան երածը ինքը զուրուցէ Թագաւո-
րին. ուստի ան գիշերը այ դիմեց աղաչեց,
որ աս բանըս իրեն յայտնէ. ու առտուանց գնաց
Թագաւորին առջևը եղաւ՝ խնդրեց որ դադրին՝
պարապ տեղը չի ըսպաննեն ան կարդացողնե-
ը. ինչու որ ըսաւ՝ ատքու հարցուցած բանըդ
ադամորդի չի կրնար գիտնալ, Թէ որ ոՒծ
երկնքէն անոր չի յայտնէնէ, ինչպէս ինծի
յայտնեց՝ որ քեզի ըսեմ։ Երածիդ մէջը ըսաւ՝
Թագաւոր՝ դուն մէկ մեծ արձանմը տեսար
առջևդ կայնած՝ ահաւոր կերպարանքով. ա-
սոր գլուխը ոսկիէ էր, ձեռվընները կուրծքը ու
Թևերը՝ արծրԹէ, մէջքէն ինչվան ծնկվընե-
ը՝ պղինձէ, սրունքները երկրԹէ, և ոտվընե-
ուն կէսը երկրԹէ ու կէսը հողէ։ Այս նայ-
իլինի՝ տեսար որ անդիէն լեռնէն մէկ քար-
մը փրԹաւ՝ եկաւ անոր ոտվընեբուն զարկաւ,
ու ձգեց ջախջախեց փոշի դարձուց ան արձա-
նը, ետքը փոշինալ հովը փչեց տարաւ, ու ան
քարը աձեցաւ՝ մէկ մեծ լեռմը եղաւ, այնչափ
որ՝ բոլոր աշխարքս լեցուց։ Երազն աս երա-
ծիս մեկնուինալ զուրուցեց դանիէլ. ան արձա-
նին ըսաւ ոսկի գլուխը՝ քեզ կընշանակէ, որ
Թագաւորներուն Թագաւորն ես. քու ետևէդ
ուրիշ Թագաւորութիմը պիտոր ելլէ քեզմէ
վար, որ ան արծաԹը կրցուցունէ. անոր ե-
տևէն մէկ ուրիշնալ աւելի տկար. ու անկեց
ետքը չորրորդը՝ երկաԹովը կրցրցունէ որ՝ ա-

նիկա իր ուժովը պիտոր մէկանոնք կործանէ. բայց անոր կէսը հողէ ըլլալը՝ անորալ տկարութիւը կերևցունէ։ Յետոյ ասոր ատենը՝ ածմէկ նոր թագաւորութիւնը պիտոր հանէ, որ բոլոր թագաւորները պիտի կործանէ իր տակը առնէ. ինչպէս ան քարը՝ որ ամէնը ջախջախեց, ինքը միան լեցուց բունեց բոլոր աշխարքս, ու ինքը մինակայ իսեան պիտի մնայ։ (Յետ ըսած թագաւորութիւը՝ թէպէտ ոմանք հռոմայեցոց վրա ուզեցին իմանալ. բայց ամէն կողմանէ աւելի յարմար կրմեկնեն եկեղեցոյ վարդապետները՝ մեսիայի թագաւորութիւ վրայ հոգևորապէս իմանալով ասս բանը։)

Յաբուգոդոնոսոր երբոր ասս լսեց, շուտմը ելաւ դանիելի առջևը ինկաւ երկրպագութիւ ըրաւ, ու հրամայեց որ՝ անոր խունկ ու զոհ մատուցանեն. և ըսաց իրեն թէ՝ հիմա իմացա որ՝ ձեր ածն է բոլոր ածներուն ածը ու թագաւորներուն թագաւորը, որ ինքը միայն գիտէ բոլոր ծածուկ բաները՝ որ ասս բանսալ քեզի յայտնեց։ Յետ ասոնց հրամայեցաւ թագաւորը դանիելի շատ պարգևները տալէն ետև՝ զինքը գլխաւոր դրաւ բաբիլացոց իշխանութիւն ու բոլոր կարդացողներուն վրա։ Դանիելալ թագաւորէն խնդրեց, որ իրեն իրեք ընկերները անանիան միսայելը և ազարիան առաջ քաշէ՝ թագաւորական բանի վրա դնէ։

ԳԼ. Զ.

Լրբէ մանկանց պատմութիւնը.

Դան. Է։ ԱՄ Տիւ. 3434։

Այաբուգոդոնոսոր իր թագաւորութեան տասնրուութը տարին ոսկիէ արձանմը կիմ կուռքմը շինել տրվաւ, վաթսուն կանգուն երկանքը, ու վեց կանգուն լանքը. և աս բերաւ կայնեցուց դէերա ըսած դաշտին մէջը բաբիլացոց երկիրը։ Այտքը չորս դին իր տերութեան մէջ խրկեց հրաման հանեց, որ բոլոր մեծամեծները ու իշխանները և գըլխաւոր մարդիքը գան հոն ժողվըվին, ու մեծ հանդէսով աս արձանը պաշտեն։ Այն արձանին քովնալ մէկ հնոցմը կիմ կրակի փուռմը շինել տրվաւ, որ՝ ով որ չի հնազանդի՝ ան չի՝ պաշտենէ, հոն կրակը ձգեն զինքը։ Մէջերին ըսածինպէս եկան ամէնքը, ու կերպ կերպ նըվագարանները (ջի՝ չալղրներ) չալելով աս հանդէսը կընէին, և ամէնքը երկրպագութիւն կրմատուցանէին ան արձանին։ Այս բանին՝ դանիէլի իրեք ընկերները՝ անանիան միսայէլը ազարիան չի հնազանդեցան՝ չեկան պաշտելու. անոր համար նաբուգոդոնոսորը որ իմացաւ՝ սրդողելով անոնք իր առջևը բերել տրվաւ, ու հարցուց թէ՝ իրաւ է որ դուք չկաք իմ արձանս պաշտելու. Եւրը խրատ տրվաւ յորդորեց որ իրենք ալ երթան երկրպագութիւն ընեն, հապա թէ չէ ըսաւ՝ գիտնաք որ՝ ձեզ ան կրակին մէջը ձգել կուտամ. ան ատենը տեսնենք թէ որ ածը պիտոր գա ձեզ իմ ձեռքէս խալըսէ ըսաց։ Անոնքալ չվախցան, համարձակ իրեն ըսին թէ, թագաւոր՝ աս բա-

նիս համար աւելորդ է որ մենք քեզի պատաս-
խան տանք. բայց նորէն քեզի կըսենք որ՝
մենք քու կուռքդ չենք պաշտեր, մենք մեր
ածը ունինք երկինքը, մենք ան կրպաշտենք,
որ քու կրակէտ մեզ կարող է ազատել և քու
ձեռքէտալ մեզ կրխալըսէ։ Այրբոր աս բանըս
լսեց Նաբուգոդոնոսոր սաստիկ բարկութիւն
կատղեցաւ վրանին, շուտմը հրամայեց որ՝
հնոցին կրակը չափէն աւելի վառեն, և ա-
սոնք մէջը ձգեն որ երթան երին մոխիր դառ-
նան. Թագաւորին տրված հրամանն որ կա-
տարեցին, աս երեք կտրիճները իրենց վրայի
լաթերովը բռնեցին կապեցին ան սոսկալի
կրակին մէջը որ ձգեցին, եւեւէ եւեւ անչափ
կսկիծցուցին կրակը որ՝ բոցը քառասունրվինը
կանգուն վեր կելլեր, ու չորս դին գտնրված
մարդիքը կերեր կըլափեր։ Այն ատենը ածի
հրեշտակմը խրկեց կրակին մէջը, որ եկաւ
իրենք կրակէն պահեց, անանկ որ մէկ բա-
նէրնին չերեցաւ, և պաղուկ հովմընալ փչել
տրվաւ հնոցին մէջը, որ տաքէնալ չէին նե-
ղեր. ու իրենք ան հրեշտակին հետը մէկտեղ
կրակին մէջը ժուռգալով ուրախութիւն փառք
կուտային ու կըգոհանային այ, և ան տեղը
ազարիան իրեն մէկալ ընկերներուն հետ ան
օրհնուիրը ըսաւ, որ կըսկըսի։ Օրհնեալ ես դու
ածի հարցն մերոց. փառաւորեալ է անուն սո-
յաւիտեան։ Այս ձաներըս ու օրհնուիներըս եր-
բոր Թագաւորին հասկըցուցին, ինքնալ վա-
զեց եկաւ որնայի. ու զարմանալով կըհարցու-
ներ Թէ՝ աս ինչ բան է, մենք երեք հոգի կա-
պած կրակին մէջը ձգեցինք, ու ես հիմա չորս
մարդ կըտեսնեմ որ արձակ հանգիստ ժուռ կու-

գանկոր, և ան չորրորդը ըսաւ՝ ՅԻ որդի կը-նմանի, (որ ան՝ ինչպէս կըսեն, իր կուռքերուն տղոցը մէկը կարծեց)։ Ետքը հնոցին բերանը գնաց ու կանչեց, սէդրաք, միսաք, աբէդնա-գոյ՝ ծառայք ՅԻ բարձրելոյ՝ ելէք դուրս եկէք։ Ինքնաքալ երբոր ելան։ ամէնքը եկան վրա-նին Թափեցան՝ ու տեսան որ ամենևին կրբա-կը չէ Թէ միան իրենց զէնքը չէր ըրած, հա-պա վրայի հագուստներուն՝ չէր դպած՝ չէր խանծած։ Ինքնատենը նաբուգոդոնոսոր աս մեծ հրաշքը տեսնելով ինքնաքալ զարմացաւ մնաց։ ու սկսաւ փառք տալով ՅԻ՝ ըսել Թէ, իրաւի ամէնէն մեծ ՅԻՆ ան է՝ որ այսպիսի կարողութիւն ունի, և այսուհետև ըսաւ՝ ով որ անոր դէմ զուրուցէնէ՝ կը մեռցուներմ զին-քը։ Ինչ աս պատճառովը անանիայի միսայելի և ազարիայի՝ առաջինէն աւելի պատիվ ու իշ-խանութիւն տրվաւ։

ԳԼ. Լ.

Դանիէլ մարգարէին ուրիշ պատմութիւնը։

Դան. Գ. Ե. Զ. Է. Ը. Ժ. = Սմ Ծի. 3434. 3444. 3449։

Աս բաներէս ետև՝ նաբուգոդոնոսոր Թա-գաւորը նորէն ուրիշ տերութիւններու դէմ յաղ-Թուի ընելով, ու աստիէն անդիէն շատ կո-ղոպուտներ ձեռք ձգելով, անով բաբիլոն քա-ղաքը որ եվելոք հարբստացուց՝ մեծցուց, իր սիրտնաչ չափէն աւելի մեծցաւ ու հպարտա-ցաւ։ Ինչ ան ատենը մէկ երազմը տեսաւ, որ երկրիս մէջ տեղը մէկ ծառմը տնկրված կե-ցեր էր։ անանկ մեծ որ՝ անոր բարձրութիւը երկինքը կը հասներ, ու լանութիւը աշխարքիս

չորս դին կրտարածվեր. ասոր տերևները շատ աղվոր լեցուն, ու պտուղը այնչափ շատ էր՝ որ ամենուն կգտեր ուտելու, իր շուքին տակը կբնակեին բոլոր գազանները, և իր ճեղերուն վրա թառեր էին բոլոր թռչունները, ու անկեց կկերակրվեին բոլոր կենդանիները։ Ինկե ետքը տեսաս որ՝ երկինքէն մէկ հրեշտակմը ինջաւ, կանչեց թէ՝ կտրեցէք ատ ծառը, իրեն տերևները թափեցէք, պտուղները ցիրուցան ըրէք, անոր ներքևէն ու վրայէն գազաններն ու թռչունները ելլեն, միայն անոր արմատը երկրիս վրա թողէք՝ երկաթէ ու պղնձէ զինձիլով կապած, որ երթա բաց տեղը խոտերուն մէջը գազաններուն հետը կենա, մարդկային սիրտը անկեց վերցրվի, ու անոր տեղը գազանի սիրտ տրվի իրեն՝ ինչվան եօթը ժամանակ։ Այսուգոդմոսոր աս երածիս վրա շատ շփոթեցաւ. ուստի բոլոր կարդացողները քովը կանչեց՝ որ իմանա թէ աս ինչ պիտոր ըլլա, ու մէկը չկրցաւ աս երածըս մեկնել. ինչվան որ դանիէլը եկաւ՝ ու իրեն սկսաւ մէկիկ մէկիկ զուրուցել։ Ինչ ծառը ըսաւ՝ մեծ ու բարձր՝ դուն ես թագաւորը, որ անչափ մեծցար ուժովցար որ՝ քու տերութիդ բոլոր աշխարքիս վրա տարածվեցաւ։ Այս ան հրեշտակը որ եկաւ ըսաւ, կտրեցէք ու ապականեցէք ատ ծառը. գիտնաս տէր իմ թագաւորը, որ ՝ծ քու վրատ ասանկ վճիռ կտրեր է, որ մարդիքներուն մէջէն դուն պիտոր վրուընտրվիս ելլես, ու անբան անասուններուն հետ դուրս տեղը կենաս, եզանպէս խոտ ուտես՝ եօթը տարիի չափ, ինչվան որ իմանաս թէ ՝ծ կըտիրէ աս մարդ-

կային թագաւորութիւնները վրա, և ինքը ո-
ւրուն որ կուզէ նէ՝ անոր կուտա։ Այս ան որ
ըսաց թէ՝ միան արմատը թողէք, կիմացուն է
թէ՝ այ կարողութիւնը իմանալէդ ետքը, թագա-
ւորութիւդ նորէն քու ձեռքդը պիտոր դառնա։
Այնոր համար աս խրատս քեզի կուտամ ով
թագաւոր, նայէ՛ որ քու մեղքերդդ և անօրէ-
նութիւններդդ՝ աղքատաց ողորմուն տալով սրբ-
էս. կարելի է որ ՀԱԾ այսպիսի բարեգոր-
ծութիւններ տեսնելով՝ քու մեղքերդդ թողու։

Այ բան շատ չանցաւ որ՝ աս բոլոր դանիէլի
ըսածները եկաւ եղաւ։ Այ՝ էկ տարիէն ետքը
օրմը երբոր աս Նաբուգոդոնոսոր թագաւո-
րը իր պալատին վրան եկած, բաբիլոն քաղ-
քին վրա նայելով ու զբաղանալով կըքալեր-
և հպարտուբ կըսեր թէ՝ աս ան բաբիլոն չէ՞
մի՝ որ էս իմ ուժովս՝ իմ փառաց և պատ-
վուս համար շինեցի. ան տեղը դեռ խօսքն
որ բերանը կըզուրուցէր՝ մէյմալ երկինքէն ձան-
մը եկաւ թէ՝ քեզի՛ կըսեմ Նաբուգոդոնոսոր
թագաւոր, թագաւորութիւդ քեզմէ վերցրված է,
մարդոց մէջէն ելէս՝ ու գազանները և անա-
սունները հետ կենաս. և ան վարկեանին մէջը
Նաբուգոդոնոսոր գետինը ինկաւ, ինչպէս կը-
սեն՝ մէկ եղանմը կերպարանք փոխվեցաւ. որ
տարին ուրիշ անասուններուն քովը կապեցին,
անոնց հետ խոտ կուտեր։ Այնանկ եօթը տա-
րի կենալէն ետև խելքը վրան եկաւ՝ ճանչցաւ
այ կարողութիւնը, և ինքնիշխան տերութիւնը,
ուստի ՀԱԾալնորէն իր առջի կերպարանքը դաձ-
ուց զինքը, որ եկաւ իր թագաւորութիւնը
նստաւ։

Այս Նաբուգոդոնոսորի, որդի մի կըլլա՝ կամ

թոռը ըսենք՝ բաղտասար անունով, որ իրմէ ետև բաբիլացոց Թագաւոր նստաւ. ան-գամմը մէկ մեծ սեղանմը ըրաւ իր մեծամեծ իշխաններուն հազար հոգիի չափ մարդու, և հոն ուտել խմելնին՝ բաղտասար Թագաւորը հրամայեց որ երթան ան ոսկիէ ու արծրթէ ամանները՝ որ առեռով Նաբուգոդոնոսորի եղբէմի տաճարէն կողոպտեր առեր էր, հոն սեղանը բերեն՝ որ անոնվայ խըմեն։ Երբոր աս այ նըվիրած ամաններովը՝ այ Թագաւորը զըվարճացած իր իշխաններուն հետ՝ իր կընկեներովը ու հարճերովը խնտու�մով գինի կըխըմէին իրենց կուռքերուն կենացը. և ճշմարիտ այ յիշատակը ամենևին մոռվընէն չէր անցներ, ան առենը յանկարծակի ասոնք դիմացնին տեսան, որ մէկ ձեռքմը եկաւ՝ ու ճրագին լուսուն առջևը պատին վրա բանմը գրեց։ Ի՛նչ որ եղաւ՝ Թագաւորը ահռեցած խունկ կարեցաւ, ու կըդողար. ուստի շուտմը հոն կանչեց բերել տրվաւ բոլոր բաբիլացոց մոգերը ու կարգացողները, ու խոստացաւ իրենց Թէ՝ ով որ աս գրվածքս կարդանէ՝ իրեն մեծ պատիվ կընեմ, ինչվան Թագաւորուն երրորդ մասը իրեն կուտամ կըսէր. բայց մարդ չի գտնըվեցաւ որ ան գիրը կարդա, ուր մնաց որ մեկնէ. որ անանկ շատ իրար անցումը եղաւ մէջերնին։ Ի՛նչ շփոթութիւն մէջը յանկարծ Թագուհիին միտքը ինկաւ, Թագաւորին ըսաւ որ դանիէլը կանչեն, որ Նաբուգոդոնոսորի առենը շատ այսպիսի խորհրդական բաներ մեկներ էր։ Երբոր կանչեցին՝ եկաւ դանիէլ, Թագաւորը շատ մեծարանքով առաւ հետը խոսեցաւ, ու ան մեկնունց ըրած խոսա-

մունքները իրենալ ըրաւ, միանթէ ան գիրը կարդա՝ իրեն մեկնէ։ Դանիէլալ իրեն պատասխան տրվաւ թէ՝ ատ ընծաներդդ քեզի ըլլա, և ատ պատիվդդ ուրիշի տուր, ես ըսաւ ան գիրը ձրի (՝ի՝ ձապա) կըկարդամ՝ կըմեկնեմ քեզի. ու թագաւորին երեսը տալով՝ այդ դէմ ըրած ապերախտութիւնը, որ իր հօրը վրա եկած պատիժներովը ինքը չիխրատվելով՝ այդ տաճարին ծառ ամանները առեր պղծեր է։ Լատքը դարձաւ գրին վրա նայեցաւ ու ըսաւ։ ասանկ գրած է. ՄԱՆԷ. ԹՈՒԷԼ. ՓԱՐԷՍ։ Մանէ՝ ըսել է թէ, համրեց ած քու թագաւորութեդ օրերը, ու վերջացուց։ Թուկէլ, կշիռքով կըշռուվեցար, ու պակաս ելար։ Փարէս՝ երկուք բաժնըվեցաւ քու թագաւորութիդ, կէսը մարաց տըրվեցաւ, կէսը պարսից։ Ա՛ռ բանիս վրա թագաւորը շուտմը հրամայեց որ դանիէլի կապա հագցունեն, ոսկի զինձիլ վիզը ձգեն. ու առջևէն քարոզ (՝ի՝ թէլալ) կանչէ թէ՝ իշխան եղաւ դանիէլ թիւորուեը երրորդ մասին։ Դայց դանիէլի տրված մեկնութիւնը շատ չուշացաւ՝ շուտով կատարվեցաւ ինչու որ՝ դարեհ մարաց թագաւորը որ եկեր բաբիլոնը պաշարեր էր, ան գիշերը մտաւ քաղաքը, ու բաղտասարը ըսպանանեց՝ անոր թագաւորությունալ ինքը առաւ։

Դանիէլ աս դարեհ թագաւորունալ շատ սիրելի եղաւ՝ իրեն իմաստութիւնը և հաւատարմութիւնը. այնչափ որ՝ թագաւորը զինքը իր իշխաններուն գլուխ էր ըրեր. և աս պատճառովը բոլոր իշխանները կընախանձէին վրան, ու եաւէ էին որ վրան մեկ պակասութիմը գըտնեն՝ անով զինքը թիրին աչքէն հանեն։ Հատի

աս Ճամբովը ուզեցին որ զինքը ձգեն. Թագաւորին ասանկ հրամանմը հանել տրվին, որ եռսուն օր մարդ մէկմը խնդիրը չընէ, ոչ մարդէ և ոչ աստուծմէ, հապա միան Թագաւորէն ըլա խնդիրը. և ով որ ասոր դէմ ընէ՝ առիւծներուն գուբը ձգվի։ Բ։ հրամանիս դանիէլ մտիկ չըրաւ, հապա ինչպէս սովորութիւն որ ըրեր էր՝ օրը իրեք անգամ իր տունը կերթար, ու վերնատունը կելլեր պատուհանին առջևը՝ որ դէպ 'ի եղէմ կընայեր՝ ՝ի իր աղօթքը կընէր։ Դանիէլի թշնամիները աս որ իմացան՝ շուտմը գացին հաւաքցուցին Թագաւորին թէ՝ դանիէլ քու հրամանիդ չի հնազանդեցաւ. Թագաւորնալ շատ ջանաց որ դանիէլը աս պատիժէս խալըսէ, բայց եարը Ճարը հատաւ՝ հրաման տրվաւ որ ան առիւծներուն գուբը ձգեն. և իրեն ասանկ ըսաւ թէ՝ քու ՝ուծդ որ միշտ կրպաշտեիր՝ քեզ կըխաւլըսէ. ուստի երբոր անանկ տարին դանիէլը հոն ձգեցին, մեծ քարովմը գուբին բերանը գոցեցին՝ ու Թագաւորին մատնիովը հնքեցին, որ մարդ չիբանա խալըսէ։ Բ։ իրիկունը Թագաւորը տրտմութէն ո՛չ բան կերաւ՝ ո՛չ քունը տարաւ, ուստի առտրվանց կանուխ ելաւ գնաց՝ գբին բերանը բանալ տրվաւ, ու տեսաւ որ դանիէլը ողջ առողջ կեցած՝ փառք կուտար ՝ի որ զինքը ազատ պահեր է ան առիւծներէն. ասոր վրա Թագաւորը խիստ ուրախացաւ, շուտմը գուբէն հանել տրվաւ դանիէլը, ու հրամայեց որ անոր տեղը իր թշնամիները իրենց տղաքներովը ու կնիկներով գուբը ձգեն. որ ասանք դեռ վար գետինը չի հասած՝ առիւծները վրանին ցաթկե-

ցին բզկի բզկի ըրին։ Լ՚սանկ ոյ օգնականու-
թիր իր իշխանութիւնը մէջը ունայ դանիէլ՝ բո-
լոր դարեհի թագրուն ատենը. և անոր ետևէն
կիւրոսի ժամանակնալ, որ պարսից թագը ըլ-
լալով՝ դարեհի մեռնելէն ետքը եկաւ բաբի-
լացոց թագաւորութիւնալ ինքը առաւ։

Լ՚ս կիւրոս թագաւորին ատենը բաբիլացիք
մէկ կուռքմը ունէին բէլ ըսած, որ շատ մե-
ծարանքով ասիկա կրպաշտէին. անանկ որ՝
ամէն օր կապած (կամ թային եղած) էր ա-
նոր՝ տասվերկու արդու (կամ քիլէ) բարակ ա-
լուր, քառասուն ոչխար. ու վեց մար (կամ
մէտրէ) գինի։ Թագաւորնալ կրպաշտէր ասկ
կուռքը. ուստի մէկ օրմը դանիէլի հարցուց
թէ՝ դուն ինչու չես պաշտեր բէլ աստուածը.
դանիէլալ պին տրվաւ թէ՝ ես մարդու ձեռ-
քով շինած կուռք չեմ պաշտեր, հապա կեն-
դանի ամծը կրպաշտեմ. որ երկինքն ու երկիրս
ինքը ստեղծեր է։ Լ՚նատենը թագաւորը դար-
ձաւ իրեն ըսաւ, ինչ՝ կարծես որ բէլը կեն-
դանի ամծ չէ մի. չես տեսներ որ ամէն օր որ-
չափ կուտէ կրխրմէ. դանիէլալ խնտալով ի-
րեն ըսաւ. մի խաբվիր թագաւոր, ատ բէ-
լըդ ներսէն հողէ է. ու դրսէն պղինձէ շինած
է. ամենևին ատ ոչ կերեր է ոչ խրմեր է։ Լ՚ս
բանիս վրա թագաւորը սրդողելով ան կուռ-
քին քուրմերը կանչեց իրենց ըսաւ, թէ որ ինչ-
ձի չըսէք որ՝ ով կուտէ ան կերակուրները նէ՝
ձեզ կրսպանեմ։ հապա թէ յայտնի ցրցունէք
որ ան բոլորը բէլը կուտէ՝ դանիէլը կրմեռ-
ցունեմ, որ ասանկ հայհոյանք ըրաւ բէլին դէմ
դանիէլալ թագաւորին ըսաւ որ՝ անանկ ը-
սածիդպէս թող ըլլա։ Ուստի թագաւորը

դանիէլի հետ ելան եկան բելին տաճարը. ու հոն քուրմերը գացին ըսին որ ահա մենք դուրս կելլենք, ու դուն Թագաւոր բելին առջևը կերակուրները ու գինիները դիր դռները գոցէ մատնիովդ կնքէ. եթէ առտուն գանք տեսնենք Թէ որ բելը կերած չէ ատ բաներդ. ան ատենը մենք մեռնինք. հապա Թէ կերեր է, դանիէլը մեռնի, որ մեր վրա ատանկ սուտ բան զուրցեց։ Քուրմերը ասբանիս վրա վախ չունէին՝ ապահով էին, պատճառն որ՝ սեղանին ներքևէն մէկ ծածուկ Ճամբամը ըրեր էին, որ միշտ անկէց կըմտնէին ան դրած կերակուրները կուտէին։ Երբոր դուրս ելան ասոնք, ու Թագաւորը ըսածինպէս ան կերակուրները բելին առջևը դրաւ. անատենը դանիէլ մոխիր բերել տրվաւ՝ և ուրիշներէն գաղտուկ Թագաւորին աչաց առջևը բոլոր տաճարին գետինը ցանել տրվաւ. անանկ դուրս ելան դուռը գոցեցին ու Թագաւորին մատանիովը կնքեցին՝ ելան գացին։ Ինչ գիշերնալ քուրմերը՝ որ եօԹանասուն հոգի էին, իրենց սովորուեր պէս կնիկներովը ու տղոցմովը ան ըսած գաղտուկ Ճամբովը տաճարը մտան, ու բոլոր բաները կերան խըմեցին՝ ելան գացին։ Գրտրվանց կանուխ Թագաւորը դանիէլը հետը առած եկաւ տաճարին դուռը, ու դանիէլի ցըցունելով որ ինչպէս ամբողջ կեցեր է իր դրած կնիքը (՝ մէօհիւրը,) երբոր դուռը բացաւ տեսաւ որ կերակուրները հատած են, ուրախուԹիւն սկսաւ կանչել Թէ՝ մեծ ես դուն ով բելը ամենևին խաբեբայուն չիկա եղեր քու վրատ։ Ինչ ատենը դանիէլ ծիծաղելով բռնեց Թագաւորը որ ներս չի մտնէ, ու իրեն ըսաց, մէյմը

գետինը նայէ, տեսս թէ ինչ ոտվրնեբու նշան է ատ։ Թագաւորնալ նայեցաւ, ըսաւ թէ՝ մարդու՝ կնկատց՝ ու տղոց ոտքի նշաններ կերևա կոր. այսպէս որ խմացաւ քուրմերուն ըրած խաբեբայութիւնը, ետքը ան գաղտուկ շինած ճամբանալ որ տեսաւ, սաստիկ սրդոզեցաւ վրանին՝ հրամայեց որ անոնք ամէնքը իրենց տղոցմով և կնիկներովը մեռցուսին. բելին կուռքնալ դանիէլի ձեռքը տրվաւ որ ջարդէ, ու անոր տաճարնալ կործանէ։

Ի՛նչ ատենները բաբիլացիք մէկ ահաւոր վիշապը (՝ՅՕ՝ աժտերը) կրպահէին, որ ամէնքը սոսկալով՝ ՅՕ տեղ դրած անիկա կրպաշտէին։ Ինչ կուռքին բանն որ ասանկ եղաւ, թէ՞ զուսրը դարձաւ դանիէլի ըսաց թէ՝ աս վիշապիս համարալ չես կրնար ըսել թէ պղինձէ շինած է. ահա կենդանի է, կուտէ կրխրամ. ուստի դո՛ւնալ մեզի հետ ասոր երկրպագուն ըրէ։ Դանիէլ իրեն պէտ տրվաւ թէ՝ ես իմ աստուծուս երկրպագուն կրնեմ, որ կենդանի ու անմահ՝ ած է. և թէ որ ըսաւ ինձի հրաման կուտասնէ՝ ես ատ վիշապը քու առջևդ առանց թուր կամ գաւազան բանեցուցնելու ըսպաննեմ։ Թագաւորնալ հրաման որ տրվաւ, դանիէլ՝ քիչմը եղ, ու ձիւթ (՝ՅՕ՝ զիֆթ) առաւ, մէջը ճարպ ու մազ դրաւ մէկտեղ եփեց կունտմը շինեց, ան վիշապին բերանը ձգեց. որ ուտելուն պէս ան տեղը ճաթեցաւ վիշապը. ու դանիէլ իրենց երեսը տրվաւ ըսաւ թէ նայեցէ՛ք որ ինչ կրպաշտէիք։ Բաբիլացիքը աս բանիս վրա սաստիկ կատղեցան, ու թագաւորին դէմ ելան կըսէին թէ թագաւորը հրէայ եղաւ, որ բելը կործանեց, վիշապը ըսպաննեց

ու քուրմերը ջարդեց. ուստի գայլին թիգրին քովէն դանիէլը քաշեցին առին տարին առիւծներուն գուբը ձգեցին։ Հոն եօթը առիւծ կայ-ին ասոնց սովորուի էր որ օրը երկու մարդու մարմին ու երկու ոչխար կուտային. բայց երբոր դանիէլը առջևնին ձգեցին՝ անսատեանը բանմը չի տրվին՝ որ երեթ ան շուտով մեռցունեն ուտեն։ Ոչ օրերը ամբակում մարգարէն որ հրեաստան կըլլար, ապուր եփեր էր ու մէջը հացալ բրդած, անանկ ամանի մէջ դրած առեր արտը կրտաներ որ իր բանվորներուն տա. Ճամբան իրեն հրեշտակը հանդիպեցաւ, ըսաց որ՝ ատ կերակուրդ բաբիլոն դանիէլի տար, որ առիւծներուն գուբը կըլլա։ Ամբակում ալ անոր ըսաւ, տէր՝ ես բաբիլոն գնացած չեմ, ու գուբը չեմ գիտեր ուր է։ Հրեշտակը անսատեանը անոր գլխուն մազերէն բռնեց վեր վերցուց, ու ինքը շուտմը բաբիլոն տարաւ՝ առիւծներուն գուբը ինչեցուց. և ձեռքի եղած կերակուրը հոն դանիէլի տալէն ետքը, ան վայրկեանը նորէն ամբակումը իր տեղը դարձուց։ Դանիէլ անանկ վեց օր գուբին մէջը կենալէն ետև, երբոր եօթներորդ օրը թագաւորը գուբին բերանը գնաց՝ որ ցաւակից ըլլա դանիէլի վրան. ու նայեցաւ տեսաւ որ՝ հոն դանիէլը ողջ նստեր էր. պաղեցաւ մնաց՝ ու կանչելով ըսաւ, մեծ ես Տէր ՀԱԾ դանիէլի՝ իրաւ որ քեզմէ ուրիշ ՀԱԾ չիկա. և հրամայեց որ շուտմը անկէց վեր հանեն խալըսեն. և անոր տեղը իր թշնամիները ձգեցին. որ ան գազաններուն առջևը ինկածներնին պես բզիկ բզիկ եղան։

Դանիէլ մարգարէին՝ ՀԱԾ շատ խորհրդա-

ւոր տեսիլքներէն՝ի զատ՝ մեսիային գալըստեա-
նը վերայալ ըստուգ ատենովը յայտնեց։ Եր
ասիկա երբոր անդամմը իր ազգին գերու�
վրա տրտմած պաք պահելով այ աղօթք կը-
նէր. ու ինչպէս կըսեն՝ ան երեմիա մարգա-
բէին ըսածին վրա կըմըտմտար թէ՝ երբ պիտի
ըլլինա հրեից գերուածը եօթանասուն տա-
ըին, որ ած աս չափը դրեր էր. յանկարծակի
գաբրիել հրեշտակը իրեն երևցաւ, ու սիրով
բարևելով, դանիէլ այր ցանկալի ըսաւ. ած
քու աղօթքդ լսեց, ուստի եկա որ քու ուզած
խնդիրքդ քեզի հասկրցուցնեմ։ Եր ամանակ
սկսաւ իրեն տեղն՝ի տեղը զուրուցել՝ մեսիային
գալը, և իրեն մահը, որ մինչև ան ատենը եօ-
թանասուն եօթնեակ պիտի ըլլա. որ ամէն
մէկ եօթնեորդը ածաչնչի ոձովը եօթը տարի
իմանալով, կընէ չորս հարուր ինն ըսուն տարի.
ինտոր որ ձշմարտապէս ատենովը կատարվե-
ցաւ։ Ինոր համար ետքէ եկած անհաւատ
հրէաները՝ աս մարգարէական բանիս դէմ ու-
րիշ ձար չիգտնելով՝ սկսան դանիէլ մարգարէն
սուտ մուտ խաբեբա պոձռներով մարգարէ-
ներուն կարգէն դուրս սեպել. իբր թէ՝ մէկ
սք պատմագիրմըներ կըսեն՝ որ եղած հանդը-
պած բաները գրեց։

ԳԼ. Ի.

Յրէոդասան մարգարէները։

Ինչպէս վերը ըսինք՝ չորս մեծ մարգարէ-
ներէն՝ի զատ տասվերկու մարգարէուն գրոշ-
ալ եղան, որ իրենց գրվածքին քիչութիւնը հա-
մար՝ փոքր մարգարէ ըսվեցան. և ասոնքալ

մկալնոց ատենները ՝ծային յայտնութենն մարգարէութեն կընէին իսրայեցոց մէջը, ու ՝այ հրամանովը շատն քիչը գրի վրա անցուցին իրենց մարգարէուներ. ու իրենց անուններեր աս են. Ովսէէ, Ամոս, Միքիէ, Յովէլ, Աբդիու, Յոնան, Նաւում, Մամբակում, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա, Մաղաքիա։ Այսոնցմէ որովհետև միան Յոնան մարգարէին նինվէացոց քարոզուն պատմուիր ՝ծաշաունին մէջը տեղն ՝ի տեղը երկան գրած է, (որով բոլոր իր մարգարէուիր կըբովանդակի։) ուստի հիմա ան կըպատմենք։

Յոնան մարգարէին պատմուիր։

Ամ Ցի իրր 3197։

Յոնան որդի ամաթեայ, որ երկրորդ յերոբովամի իսրայէլացոց թագաւորին ատենը հրեաստան մարգարէութի կըներ. ՝ած հրամայեց իրեն՝ որ երթայ նինվէ քաղաքը երթա, ու հոն իրենց քարոզութի ընէ, որ մեղքերնէն դառնան ապաշխարեն, որ ՝ած չիպատուհասէ՝ քաղաքնին վրանին չիկործանէ։ Յոնան մարգարէնալ աս նոր կերպ ՝այ հրամանին վրա զարմանալով, որ իսայէլացոցմէ դուրս ինքը այլազգիներուն կրխրկէ որ քարոզէ. ու նաև ասալ մըտմտալով որ ՝ած ողորմած է, անոնք որ ապաշխարելու ըլլան՝ պիտի ըսած պատիժը չիտա, և անատենը ինքը սուտ մարգարէ պիտոր երևնա նինվէացոց առջևը. ուստի՝ (ինչպես կրսեն՝ շփոթված ասանկ կարծիք երթալով թէ՝ ՝այ յայտնուիր միան իսրայեցոց երկրին մէջը կրլ-

լա, ու անկէց դուրս եկէնէ՝ կըխալըսի աս վտանգէս,) ինքնալ փախաւ եկաւ յոպոկ քաղաքը գնաց, ու անկէց նաւմը մտաւ՝ որ Թարսիս ըսած հեռու այլազգիներու երկիրը երԹա՝ երեսը աստուծմէ ծածկէ։ Այլ երբոր նաւը ծովը եկաւ քիչմը առաջ գնաց, յանկարծակի մէկ ամանակ սաստիկ մրրիկմը (ՅԻ՝ խայմը) հանեց ծովուն մէջը՝ որ ալէկոծուէն նաւը կըջարդըվեր կոր. ուստի նաւարարները դողալով ամէնը իրենց աստուածները օգնուԹի կրկանչէին, ու բեռերնին ծովը կըձգէին՝ որ ԹեԹևնան խալըսին։ Այն ատենը յոնան մարդարէնալ, վախէն մի կըլլա՝ կի՞ սաստիկ տրտմուէն՝ նաւուն մէկ կողմը քաշված մտած խրռկալով որ կըքնանար, նաւապետը գնաց չեխելով ինքը արԹընցուց՝ ատ ինչ է ըսաւ որ անհոգ պառկեր կըխրռկաս, դուն նալ ելիր քու ՅԻՊ աղօԹք ըսէ՝ կարելի է որ ան ըսէ՝ մեզ աս փորձանքէս խալըսէ։ Այսպէս որ ՀԱՐ չէր ըլլար չէր դադրեր ան ծովուն ալէկոծումը, նաւարարները ըսին ԹԷ՝ չըլլա՝ որ մէջերնիս մէկուն գաղտուկ մեղացը համար աս ՅԻ պատիժը վրանիս եկաւ. ուստի խորհուրդ ըրին որ մէջերնին վիճակ ձգէն՝ տեսնէն ԹԷ որուն համար է։ Երբոր ձգեցին՝ ու վիճակը յոնանու վրա եկաւ, սկսան իրեն հարցունել ԹԷ՝ դուն ովլ ես՝ ինչ բան ունիս, ուր կերԹաս. ան ժամանակը յոնանալ իրենց յայտնեց ԹԷ՝ ես ՅԻ ծառան եմ՝ որ ծովն ու ցամաքը ինքը ստեղծեր է. և անոր ձեռքէն ուզեցի որ փախչիմ, անոր համար աս պատիժը դուրալ հետը կըքաշէք կոր։ Նոնքալ որ անՀրկած չէին գիտեր ինչ ընեն, յոնան իրենց ըսաւ որ բը-

նեն զինքը ծովը ձգեն՝ որ ան ալեկոծութենէն խաղաղիսին։ Լաւարարները այսու ամենայնիւ մեղքընցան վրան՝ ու կրկնային նաւը դէպ 'ի ցամաքը դարձուցանել. եաքը ալ բոլորովին որ Աստուերնին հատաւ, առաջ ոչ աղաչելով՝ որ ան բանը մեղք չիսեպէ. և իրեն ըսածինպէս՝ երբոր բռնեցին յոնանը ծովը ձգեցին, շուտ մը հովը դադրեցաւ՝ ծովը խաղաղեցաւ. մարդիքնալ աս հրաշքը տեսնելով փառք տրվին ոչ՝ ու զոհ մատուցին։ Ան առեներ ծովուն մէջը ՝ած մէկ մեծ ձուկմը խրկեց որ եկաւ յոնանան մարգարէն կրլլեց. ու իրեք օր իրեք գիշեր աւնոր փորուն մէջը ողջ կեցաւ յոնանան, և իր ըրած մեղացը թողուլն խնդրելով՝ ան աղօթքը կրսէր՝ որ կրսկրսի. Ի Նեղութենէ իմոյ աղաղակեցի առ Տէր Աստուած իմ։

Լաքը ոչ հրամանովը մէկ ցամաքիմը քով գնաց ան ձուկը՝ ու հոն ողջ ողջ դուրս որ փրխեց յոնանան մարգարէն՝ ՝ած նորէն իրեն հրամայեց որ ինչպէս առաջ ըսեր էր՝ նինվէ քաղաքը երթա քարոզէ։ Յոնանաալ ան ժամանակը հնազանդելով ոչ նինվէ գնաց. որ աս անանկ մեծ քաղաքմընէր որ՝ իրեք օր կուզեր բոլորը քալելու. առջի օրն որ իրեն քարոզութիւը լսեցին նինվէացիքը, որ կրկանչեր թէ՝ ՝ած իրենց մեղացը պատիժ՝ իրեք օրէն ետև պիտի նինվէ քաղաքը վրանին կործանէ. շուտմը մարդարէին ըսածին հաւատացին, ու սկսան մեղայ գոչել։ Լաւ թագաւորն որ աս իմացաւ, ինքնալ վրայի լաթերը հանեց՝ քուրձմը հագաւ մոխիրի մէջը նստաւ. ու հրաման հանեց որ մեծ ու պզտիկ՝ ինչվան անբան անասունները՝ ամմէնքը քուրձ հագած ՝ոմ պահին ապաշ-

խարեն։ Լինվեացիքը ասանկ սրտանց իրենց մեղացը վրա որ զղջացին, ՝ այ գութնալ շարժեցին՝ որ ողորմեցաւ մեղքերնին թողուց, ու ըսած պատիժը չի խրկեց։ Լ.սոր վրա սաստիկ դըժվարը եկաւ յոնան մարգարէին, որ սուաղուրուց երևցաւ անոնց առջևը. ուստի սկսաւ ՝ այ գանկտիլ, ահա ես էր ըսաւ պատճառն որ ես փախա՝ չուզեցի որ հոս գամ քարոզեմ։ գիտէի որ դուն ՝ ած ողորմած գթած երկայնամիտ ես, որ զղջացողներուն մեղացը թողուլի կուտաս. անոր համար կրխնդրեմ ըսաւ՝ որ հոգիս առնես մեռնիմ երթամ։ Լ.ւ ասանկ տրտմած գլուխը քաշեց ելաւ նինվէ քաղքին դիմացը իրեն մէկ տեղը շինեց՝ հոն պարտըկ վեցաւ, որ անկէց տեսնէ թէ՝ այսու ՝ ամիւ քաղքին պատիժը կուգամի, անոր վերջը ինչպէս պիտոր ըլլա։ Լ.ծալ ան տեղը մէկ դըդմենիմը(կիբ խասպախի ֆիտանմը) բուսցուց, որ շուտմը մեծցաւ՝ տերևներովը շուք ըրաւ յոնանի վրա՝ ան սաստիկ արևուն տաքէն կըպահպանէր. որ ինքնալ շատ ուրախացաւ ասոր վրա։ Լայց այսպէս հանգիստ մէկ օրմը կենալէն ետև՝ անոր մէկալ օրը առտըվանց ՝ ած մէկ որդմը խրկեց՝ որ գնաց ան դըդմենին արմատէն կտրեց. ետքը արևն որ ելաւ, տաք հովմընալ զարկաւ վրան՝ դըդմենին չորցաւ. ան ատենը յոնան ան արևուն տաքէն սաստիկ տանջըվելով, նորէն ըսկսաւ ՝ այ գանկտիլ թէ՝ մեռնէի ու աս տառապանքէս խալըսէի։ Լ.ն ժամանակը ՝ ածալ դարձաւ խրատելով իրեն ըսաւ, դուն ադչափ կըցաւիս ու կըտանջըվիս ատ մէկ դդմենիին համար, որ դուն չես աշխատեր տընկեր մեծցուցեր, ինքիրեն մէկ գի-

ՀԵՐՎԱՆ ՄԷՋ ԲՈՒՍԵՐ Է՝ ՈՒ ՄԷԿԱԼ ԳԻՇԵՐԸ ՀՈՐ-
ՑԵՐ Է. ՀԱՊԱ ԻՆՉՊԷՍ ԿՈՒՂԷԻՐ ՈՐ ԷՍ ՀՈՂՈՐՄԷԻ
ԱՆԱՆԿ ՄԵԾ ՆԻՆՎԷ ՔԱՂՔԻՆ՝ ՈՒ ՀՈՒՏՄԸ ԿՈՐԾԱ-
ՆԷԻ, ՈՐ ՀԱՐՈՒԸ ՔՍԱՆ ՀԱՂԱՐ ՀՈԳԻԷՆ ԱՒԵԼԻ
ԷՆ՝ ՄԻԱՆ ԱՆՈՐ ԱՆՄԷՂ (ՏՂԱՔԸ,) ՈՐ ՀԱՐԸ ԲԱ-
ԲԻՆ ՀԷՆ ԳԻՏԵՐ. ԹՈՂ ՏՈՒՐ ԻՐԵՆՑ ԱՆՀԱՄԱՐ
ԱՆԲԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԶՐԱՅԱՑ՝ ԵՒ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՑ ԳԻՐՔԵՐՈՒՆ. ՀՐԻՒՑ ԳԵՐՈՒԹԵՆԷ ԴԱՒՈՒԱԼԻՆ ԵՏԵՒ ՀԱՆԴԻՊԱՆՆԵՐԸ։

ԳԼ. Ա.

Հրէայք Բաբիլացւոյ գերութենէն դարձանան։

ա. եղ. բ. ք։ բ. եղ. ա։ գ. եղ բ։
Ամ Տի 3468. 3489։

Ա՝յ բարկութեամբ չափը երբոր լրմընցաւ, որ եօթանասուն տարի ատեն սահմաներ էր աս իսրայէլացւոց գերու�ը. կիւրոս ըսած պարսից թագաւորին սիրտը շարժեց, որ բաբիլացւոց վրա թագաւորնստելուն ատենը հրաման հանեց որ՝ իր տերութեամէջ գրտնըված հրէաները բոլոր իրենց բաներովը երկրին երդմամ դառնան, և հոն երթան այս տաճարը նորէն շինեն։ Նոր համար որչափ ոսկիք ու արծաթեղ ամանները կար՝ որ ատենով Նաբուգոդոնոսոր երդմամ կողոպտեր առեր բաբիլոն տարեր էր, բոլորը հանեց կիւրոս հրէից տըվաւ, որ իր տեղը դարձունեն. և ասկէ 'ի զատ՝ հրամանաւ տըվաւ՝ որ ան տաճարը շինելու համար որչափ ըստակ կիմնիւթ (այ՝ քերէստե) պէտք ըլլանէ՝ թագաւորական գանձէն տըրվի։

Ուստի առջի բերանը աս հրամանիս վրայիսուն հազարի չափ հրէայ՝ իրենց առաջնորդ ունենալով զօրաբաբելը սաղաթիէլեանց ըսած՝ որ յեքոնիա յուդայի թագաւորին թոռն

էր, և յեսուն յովսեդեկեանց՝ որ անատեանը հրեից քահանայապետն էր, ելան եղէմ եկան ու առաջ՝ սկսան քիչմը քաղաքը նորոգել, ետ-քը շուտմը ձեռք զարկին տաճարը շինելու։ Այլ աս շինվածքներըս առաջ չիգնաց ան ա-տենը. պատճառն որ՝ հոն իրենց մտաց եղած սամարացոց ազգը՝ հրեից դեմ թշնամի ըլլա-լով, գրեցին՝ բան խառնեցին թագաւորին իշխաններուն հետ. որ անանկ՝ ուշացաւ շին-վածքը՝ ինչվան կիւրոսի ետևէն ուրիշ թագա-ւոր նրստաւ. որ անոր օրը՝ աս սամարացիքը ալ կատարեալ հրաման հանել տալին որ տա-ճարին շինվածքը խափանվի։ Այնպէս տաս-նըհինգ տարիի չափ բոլորովին խափանած մնաց, ինչվան դարեհ թագաւորին երկրորդ տարին. որ նորէն հրաման հանեց որ տաճա-ըը ու եղէմ քաղաքին պարիսպները շինվին։ Այս աս ազատուելս հրամանը այսպիսի կեր-պով եղաւ։

Դարեհ թագաւորը մէկ մեծ փառաւոր սե-ղանմը ըրաւ իր իշխաններուն, և աս ուրախու-թէս ետքը երբոր ելաւ իր սենեակը գնաց որ քիչմը քուն ըլլա հանգչի, ան առենը թագա-ւորին իրեք սենեկապանները, այ՝ անմիջապէս իր քովը ծառայողները, որ ասոնց մէկին էր զօ-ըաբաբելը. (կարելի է թէ նորէն հրեաստա-նէ գարձած եկեր թագաւորին ծառայութիւնը մտեր էր,) մէկ տեղ խորհուրդ ըրին՝ որ ամ-մէն մէկը զատ զատ մէյմէկ խելացի բան գը-ըին, ու որուն բանին որ թագաւորը աւելի հաւանիսի՝ անիկա մեծամեծ պարգևներ առ-նէ, ու մեծութիւն հասնի. անանկ որ՝ թագա-ւորէն ետև ինքը ըլլա, ու թագաւորին պինտ

առջև բարեկամը սեպվի. ուստի անանկ իրեքն
ալ գրեցին իրենց կարծիքը, ու Թղթերնին
կնքած Թագաւորին բարձին ներքևը դրին։
Լսոնց առջինը գրեր էր Թէ՝ ամէնն բանէն
յաղթողը ու զօրաւորը գինին է. երկրորդը
Թէ՝ ամէնէն յաղթողը ու զօրաւորը Թագա-
ւորն է. և երրորդը՝ որ զօրաբաբէլն էր, գրեր
էր Թէ՝ ամէնէն յաղթող ու զօրաւոր կնիկ-
մարդիքն են. և անոնցմէ ալ աւելի յաղթող՝
Ճշմարտութիւն է։ Թագաւորը երբոր արթնա-
ցաւ՝ ու ան Թղթերը տեսաւ կարդաց, առջևը
կանչել տրվաւ իր բոլոր մեծամեծները ու իշ-
խանները, և անոնց առջևը հրամայեց աս ի-
րեքին՝ որ ամէնն մէկը իր գրածը պատճառ-
ներով հաստատել ցրցունէ։ Լրբոր ասոնք ե-
լան մէյմէկու ետևէ խօսեցան իրենց գրած
բնաբանին վրա. ամէնքը առհասարակ զօ-
րաբաբէլին ըսածին հաւնեցան, ու սկսան
կանչել Թէ՝ մեծ է Ճշմարտութիւը, ու ամէնէն
յաղթողը և զօրաւոր ան է։ Լյսպէս որ ե-
ղաւ, դարեհ Թագաւորնալ զօրաբաբէլի ը-
սաւ, խնդրէ խսմէ ինչ որ կուզեսնէ, որ գրած-
ներդդ աւելի բանալ կուտամ, որովհետև ամ-
ենէն էվելի իմաստուն դուն գանըվեցար։
Լն ատենը զօրաբաբէլնալ ուրիշ բան չուզեց՝
որ եղէմի տաճարին շինվածքը, որ կիւրոս Թա-
գաւորին ատենէն խափանած կեցեր էր, հրա-
ման տա որ շինվի խալըսի։ Թագաւորնալ
շուտմը հրաման հանեց չորս դին գրեց Թէ՝
Թագաւորական գանձէն ինչոր պետքէնէ՝ տան՝
որ եղէմի մէջ այ տաճարը շինվի։ Լու անանկ
ինքը զօրաբաբէլը իշխան կեցած հրեից ազ-
գին վրա՝ չորս տարվան մէջ բանը գլուխ տա-

բաւ՝ շինեց լըմընցաւ տաճարը, ու Եռքը ուրա-
խութեշատ զոհեր մատուցանելով նըվիրեցին այ։
Ինկէ Եռև Եզրաս քահանան արտաշէս Թա-
գաւորին հրամանովը, որ դարեհի Եռևէն նըս-
տաւ, եկաւ Եղէմ, ու հրէից, (որ ՀԱԾպաշ-
տութեն Ճամբէն Թուլցեր էին,) նորէն մով-
սիսական օրէնքները առջևնին կարդաց, սոր-
վըցուց իրենց։ Այաև աս արտաշէս Թագաւո-
րին ատենը նէեմիաս ըսած հրէից գլխաւորնե-
րէն մէկը, որ Թագաւորին քովը կըծառայեր,
և իրեն շատ սիրելի էր եղեր. ասիկայաև նո-
րէն հրաման առաւ Թագաւորէն, ու ինքնաև
գնաց Եղէմ քաղքին պարիսպները վրա կեցաւ
շինել տըվաւ։ Ամէպէտ ասոր վրայաև նախան-
ձելով սամարացոց իշխանները՝ սանաբաղատ
ու տուբիա ըսած՝ և Թագաւորին ծուռ բան
հասկըցունելով շատ Եռևէ ինկան որ խափա-
նեն, բայց բանը չի կրցան ընել. անանկ որ
յաջողութեն այ քիչ ատենի մէջ կատարեց
նէեմիաս, ու քաղաքական բաներնաև կարգի
դրաւ. ինչպէս Եզրաս քահանան՝ ՀԱԾային օրի-
նացը բաները։ Անանկ Եղէմը և ուրիշ հրէաս-
տանի քաղքներնաև կամաց կամաց շինվելով,
նորէն հրէայքը աստիճան անդիրէն հոն եկան
Ժողվեցան՝ յուդայի և բենիամենի ցեղէն՝ ի
զատ՝ նաև մէկալ իսրայէլացոց ցեղերէն ալ. որ
սաղմանասար Թագաւորին ատենէն՝ ի վեր ու-
րիշ տեղուն մէջը ցրված էին։

ԳԼ. Բ.

Լաղէմ նորէն զինվելն եւս՝ հրէից աղգին հանդերձ-պատերազմները։

ա. Մակ. ա։ դ. Մակ. ա. բ. դ։ = Ամ Տի 3684. 3727։

Հրէայք գերուէ դառնալէն ետքնալ՝ քահանայապետին 'ի զատ՝ իրենց աղգէն ուրիշ ինքնագլուխ Թագաւորմը կամ իշխանմը չունէին. հապա անանկ պարսից տերութիւնը ներքեւը մընային երկու հարուր քսան կամ եռասուն տարիի չափ, որչափ որ քաշեց պարսից տերութիւնը. ինչվան որ մեծն աղէքսանդր եկաւ պարսիկները զարկաւ. ու բոլոր աշխարքիս տիրապետեց։ Լաղէքսանդրի մեռնելէն ետեւ չորս զօրք որ բաժնվեցաւ իր տերութիւնը, հրէաստան պտղոմէոսի (որ սոտեր ալ կըսվեր,) տակը մնկաւ, որ եգիպտացոց Թագաւոր եղաւ։ Լսոր՝ ու իր երկու յաջորդ Թագաւորներուն օրերը հրէայքը հանգիստ անցուցին։

Հայց անոնց ետեւէն՝ պտղոմէոս փիլոպատորը անտիոքոսի յաղԹելէն ետքը երբոր երուսաղէմ եկաւ, հրէայքը զինքը սիրով ընդունեցին. ու ինքնալ ուրախութիւնը տաճարին մէջը զոհ մատուցանելէն ետեւ, ալ չափը անցուցնելով հետաքրքրութիւնը սրբութիւն սքցնալ ուզեց մըտնալ տեսնել. որ հոն քահանայապետին 'ի զատ ուրիշ մարդ չեր կրնար մտնալ։ Լոյս բանիս շատ դէմ կեցան հրէայքը. բայց ձար չեղաւ, ուստի երբոր գնացներս մտաւ՝ աստուծմէ իր յանդգնութիւնը պատիժը գտաւ. որ ան տեղը դողմը եկաւ վրան՝ ու աստին անդին զարնըվելով անդամալուծ գետինը փռված մնկաւ,

անանկ որ՝ վրան հասան իր ծառաները բռնե-
ցին դուրս քաշեցին, և խելմը առնելն ետև
ձորով խելքը վրան եկաւ։ Երբոր ասիկա իր
երկիրը դարձաւ, զղջալուն տեղը՝ չարաչար սիր
պահելով հրեից վրա, հրաման անելց որ՝ բա-
լոր իր թագաւորութեան մէջը եղած հրեաները
իրենց հաւատքը թողուն՝ կուռք պաշտեն. և
ով որ չի հնազանդիսի՝ բռնեն շղթաներով կա-
պած աղեքսանդրիա քաղաքը բերեն։ Հա-
հրեայ բռնեցին աս պատճառովը՝ երիկ մարդ՝
կնիկ մարդ, ծեր, տղա, մարդու չէին խնայեր.
ու թագաւորին հրամայածնպէս ասոնք ժող-
վեցին բերին մէկ մեծ տեղը դրին, ու հինգ
հարուրի չափ փիղեր պատրաստեցին՝ որ կատ-
ղեցուցած ասոնց վրա թողուն, որ կոխկռտե-
լով՝ անանկ տանջանքով ան ողորմելիները ըս-
պաննեն։ Երբոր աս բանիս պատրաստութիւը
կըտեսնէին, հրեայքնալ մէկ դիէն ոչ առջևը
ինկած կանչռտելով կուլային կաղաչէին որ
ողորմի՝ իրենք աս փորձանքէս խալըսէ։ Ինչ
ատենը յանկարծակի երկինքէն երկու հրեշ-
տակ ինջան՝ ու թշնամիներուն մէջը մէկ ա-
նանկ վախմը և շփոթութիւմը ձգեցին, որ ան
փիղերը իրար անցնելով սկսան իրենց տերերը
կոխկռտել սպաննել։ Ու ան ժամանակը թա-
գաւորին սիրտնալ կակըղցուց ՝ՀԱՇ, որ սկսաւ
մեղքննալ ան խեղճ հրեաները, ու հրամայեց
որ արձրկեն՝ թողուն իրենք. և աս հերիք չէ՝
նաև ուր որ պիտի ան ողորմելի ըսպաննուիը
ըլլար, հրամայեց որ թագաւորական ըստը-
կով ան տեղը սեղան ըլլլի. որ եօթն օր ու-
տելով խմելով ուրախութի ընեն հրեայքը իրենց
ազատութիւնը համար։ Ետև անոնց ՀԱՄՔուն

պիտանաւորուիր հոգալով անանկ մեծարան-
քով ամենն մարդ իրենց տեղը Ճամբեց՝ ուս-
կից որ բերել տըվեր էր։

Ինկէ ետքը աւելի սեր կապեց պտղոմէոս
հրէից վրա, ու հրեայքնալ հաւատարմութիւն
տակը կեցան. ինչվան որ անոր մեռնելն
ետև եկաւ անտիոքոս մեծ ըսած ասորոց
թագաւորը, ու եգիպտացոց թիւրութիւնը տա-
կը առնելով հրեաստանի վրայալ տիրեց. և
ասիկայալ շատ սիրով բարեկամութիւն գնաց հը-
բէից հետ, անչափ որ՝ տարեկան տուրքալ կա-
պեց տաճարին զոհերուն համար։ Իր մեռնելն
ետև՝ իր որդվնալ սելևկիոս փիլոպատորը
ըսածը, ինքնալ առջի բերանը հօրը Ճամբան
բռնեց՝ բարեկամութիւն կրվարվեր հրէից հետ։
Հրէտնեերնալ անատենները խիստ հանգիստ
ու բարեկարգութիւն կերթային՝ ոնիա ըսած բա-
րեպաշտ ու խոհեմ քահանայապետին կառա-
վարութիւն ներքևը։

ԳԼ. ԳՐ.

Հեղիոդորոսի պատիժը։

Ք. Մակ. Գ։ = ԱմՅի 3828։

Այս սելևկիոսի ատենի հրէից հանգստութիւնը
տակնուվրա ըրաւ սիմոն ըսած մէկ գլխաւոր
հրեամը. որ իր անկարգութիւնը համար ոնիա
քահանայապետէն յանդիմանվելով. և ան
պատճառով քահանայապետին վրա ոխ պահե-
լով գնաց ապողոնիոսի, (որ ան կողմերուն վե-
րակացու զօրապետն էր,) մատնեց անկաձը
լեսուց թէ՝ եղէմտաձարը անհամար գանձ պա-
հած կա, թէ որ թիւրին պէտք էր նէ ըսաւ՝

կրնար անկէց առնել։ Վերև կիսոյ թէ գերծնալ երբոր աս բանը իմացաւ. շուտմը եղեմ խրկեց հեղիոդորոս ըսած մէկը իր իշխաններէն, որ երթա ան ըսած գանձը առնէ իրեն բերէ։ Երբոր եկաւ հեղիոդորոս աս գանձս ուզեց. ոնիա քէշիշպետը առջևը ելաւ ըսաւ թէ՝ իրաւ չորս հարուր քանքար արծաթ՝ ու երկու հարուր քանքար ոսկի կա բայց ասոնք որբերուն ու որբևարիներուն ապրուստն են, որ տաճարին հաւատացեր տրվեր են, ու անկէց կապրին ան ողորմելիները. որ մեծ անիրաւուի կրլլար ատ յափշտակելը։ Հեղիոդորոս մրտիկ չէր ըներ, կըսեր թէ՝ պէտք է որ թագաւորին հրամանը առաջ երթա, ու ատ գանձը իրեն հանի. ուստի օր սահմանեց որ՝ ինքը երթա տաճարը մտնէ անկէց իր ձեռքովը առնէ։ Անանկ ատենն որ եկաւ՝ հեղիոդորոս տաճարը մտաւ, քէշիշպետը իր բոլոր քէշիշներով, ու բոլոր քաղաքը իրար անցած՝ սկսան լալ ու աղաչել ոյ՝ որ աս բանիս ձարը ինքը հոգա՝ ողորմի ան խեղճ որբերուն։ Ամենալ լսեց անոնց աղաչանքը. ուստի հոն տեղը տաճարին մէջը հեղիոդորոս իր հետը մարդիքներովը թուլցած թըմբած գետինը ինկան փրուվեցան. ու յանկարծակի մէկ փառաւոր ձիաւոր մարդմը հետը երկու աղվոր կարիճներով,(որ հրեշտակներ էին,) հեղիոդորոսի վրա եկան՝ ու չարաչար ծեծելով ինքը մահվան դուռը հասուցին, որ ալ մեռելիպէս ինկած բան չէր իմանար. միան շունչը վրան մնացեր էր. ու այնպէս վերցուցին տաճարէն դուրս հանեցին, անատենը հեղիոդորոսի հետ եղողները ոնիա քահանայապետին ոտքը ինկան՝ որ աղօթք ընէ վրան որ բժշ-

կրվի։ Պ.Հնչյապետնալ անոր համար ՝ այ զոհ մատուցանելու ատենը՝ նորէն ան փառաւոր կտրիճները ինչան եկան հելիոդորոսի ըսին թէ՝ գնա՛ հնորհակալ եղիր ոնիա քհնչյապետին, որ ՝ած անոր աղօթքովը քու կեանքդ քեզի դարձուց. և դուն ատ քաջած պատիժդ գնա՛ ամ մնուն պատմէ՝ քարոզէ՝ այ մեծ կարողութիւն. ու անանկ անելեւոյթ եղան։

Հելիոդորոսալ ան ժամանակը բժշկվելով եկաւ ինքնալ զոհ մատուցանել տրվաւ ՝այ. ու հնորհակալութիւն պարգևներ տալով ոնիա քահանայապետին, դարձաւ թիւրին քովը եկաւ. և որուն որ կրհանդիպերնէ՝ աս հրաշքները կրպատմէր։ Պ.այց թիւորին միտքը աս բանիս վրա աղէկմը չիպառակելով, երբոր ուզեց որ նորէն մէկ ուրիշ մարդմը խրկէ, անատենը հելիոդորոս երած սրտով իրեն ըսաւ թէ՝ ո՛վ որ քեզի թշնամի կրհամարիս, կի՛ քեզի դէմ մեծ յանցանքմը ըրեր է, ու դուն ինքը պատժել կուզեսնէ՝ անիկա աս բանիս համար եղէմ խրկէ. ու կրտեսնես թէ ինչպէս չարաչար ծեծած փեթատած կրդառնա, միան թէ չիմեռնի ողջ մնա. աս ըստոյգ է ըսաւ՝ որ ՝ած ային զօրութիւնը կա ան տաճարին մէջը, որ՝ ո՛վ որ անոր դրպչելու ըլլա՝ չարաչար կրպատժվի։

Գ.Լ. Գ.

Հրէից խաղաղութիւնը ներքեւ վրա կելլա անտիոքոսին ապենը։

Բ. Մակ. Դ. Ե. Ղ. = Ամ Ցի. 3829. 3836։

Սելևկիոսի մեռնելէն ետքը անտիոքոս Եպիփան կի՛ երևելի ըսած անոր եղբարը յափշտակեց թագաւորութիւնը, որ սաստիկ թշնամի

էր հրէական օրինաց։ Ինչ առնէր յասոն ոնիա քահանայապետին եղբարը՝ գնաց Թագաւորին աւելի տուրք ըստակ խոստացաւ, և իրեն խօսք տրվաւ որ՝ հրէից մէջը կռապաշտական բաներ մտցուցնէ, կամաց կամաց անոնք կռապաշտուն դարձուցնէ. անանկ ոնիայի ձեռքէն քահանայապետութիւնը ինքը առաւ յափշտակեց։ Այլ աս չար յասոնը՝ իրեք տարի իր ըսածինպէս՝ հրէից բարեկարգուիր ու ՅԾպաշտուիր աւելէն ետքը, երբոր մենեղաւոս ըսած մէկիմը ձեռքովը իր տարեկան տուրքը անտիոքոս Թագաւորին խրկեց. մենեղաւոսը գնաց Թագաւորին սիրտը իրեն դարձուց, ու յասոնի վրա ինքը տարեկան տուրքը էվելցնելով՝ եկաւ յասոնի ձեռքէն յափշտակեց քահանայապետութիւնը։ Տրը աս մենեղաւոսը տեսնելով որ չի կրնար անչափ խոստացած Թագաւորին տուրքը լեցունել, գաղտուկ տաՃարին արծԹեղէններուն ձեռք զարկաւ, ու անկեց խելմը անդրոնիկոսի կաշառք տրվաւ, (որ Թագաւորին մեծ իշխաններէն մէկն էր,) ու կեսմընալ ծախեց։ Տաւ երբոր իմացաւ որ՝ ոնիա քահանայապետը աս իր ըրած գողութիւը դուրս հանեց, անդրոնիկոսի ձեռքովը անողորմաբար բռնեց մարԹել տրվաւ։ Եր քահանայապետը։ Ինչ անդրոնիկոսի ըրած անօրէնութիւը վրա սաստիկ ցաւեցաւ ժողովուրդը. ուստի երբոր գացին Թագաւորին գանկտելով աս անողորմութիւնս որ հասկըցուցին, անորալ անանկ գութը շարժեցաւ՝ սիրտը լեցվեցաւ անմեղ մարդուն վրա, որ շուտմը հրամայեց որ անդրոնիկոսի վրայէն իշխանական լաԹերը հանեն, ու անանկ խայտառակ բոլոր քաղաքը

պլըտրցունելէն Եռա՝ ան ոնիայի սպաննած տեղը տանին՝ գլուխը կարէն։

Յաստենները լիւսիմաքոս մենեղաւոսի եղբարը, որ մենեղաւոս Թագաւորին քովը էր Թանկնի՝ իր տեղը եղէմ քահանայապետ դրբեր էր, ու իրեն յանձներ էր որ տաճարին արծաթները կամաց կամաց կողոպտէ իրեն խրբկէ. Ժողովուրդն որ աս բանըս իմացան՝ ոտբելան զինքը ձգել կուզէին։ Լուսիմաքոսալ անոնց վրա իրեք հազար հոգի հանեց. ու երկու գիէն իրար անցած՝ մէկ մէկէ շատ մարդ սպաննեցին. և աս խռովութիներուս պատճառով Թէպէտ հրէից կողմանէ Թագաւորին առջևը ամբաստանվեցաւ մենեղաւոս, բայց ինքը Թագաւորին բարեկամին մէկուն ըստակ խոստանալով, անոր ձեռքովը բանը անանկ դարձուց որ՝ իր տեղը ան ամբաստանողները յանցաւոր ինկան, ու ըսպաննըվեցան։ Յեղէմի խեղճութիւնս ատենը ՝ծածալ վերէն նշան տրվաւ եղածները ու գալու Թշվառութիները յայտնելով. որ քառասուն օր եղէմի վրա երկինքը ձիաւոր մարդիք կերևային՝ պատերազմական գործիքներ ձեռվընին, ու մէյմէկու հետ կրզարնըվէին, անանկ որ՝ ասոնց ձաննալ կըլըսվեր. ու ժողովուրդը սոսկալով կաղաչէին այ որ 'ի բարին կատարէ ան ցրցուցած նշանները։

Նկէ ետքը անտիոքոս Թագաւորը եգիպտացոց վրա պատերազմ որ գնաց, ու հոն քիչմ ուշացաւ. ասոնց եղէմի կողմերը սուտ ձանմ ելաւ Թէ՝ Թագաւորը մեռեր է. և ասոր վրա հրէայքը ուրախութի որ կրցուցունէին, անդիէն յասնիանալ որ ամոնացոց երկիրը փախստական

էր եղեր, ինքնաւ շուտմը հազար մարդով ե-
կաւ եղէմ մտաւ՝ որ քահանայապետուիր նո-
ւրէն ձեռք ձգէ, ու մենեղաւոսը անկէց փախ-
ցունելով՝ ինքը սկսաւ տիրապետել. և իր աղ-
գին հայրուն ընելու տեղը՝ դահիճպէս մար-
դու չէր խնայէր անողորմաբար կը ջարդէր։
Այլ շատ չիքրշէց՝ որ իմանալուն պէս թէ ան-
տիոքոս թագաւորը ողջ է, նորէն ելաւ փա-
խաւ, ու տեղէ տեղ փախստական պտըտելով՝
և ամենուն ատելի ըլլալով՝ ետքը անանկ օ-
տար երկիրները չարաչար մեռաւ։ Նոյնիոքոս
երբոր աս հրէից մէջը եղածները իմացաւ,
կարծիք երթալով թէ հրէայքը իրմէ ապստամ-
բիլ կուզեն, եգիպտացոց յալթելէն ետքը՝
գազանիպէս կատղած իր բոլոր զօրքով եղէմի
վրա եկաւ. ու քաղաքը մրտածինպէս՝ հրա-
մայեց որ ամենեւին մէկումը չխնայեն՝ բրա-
նածնին ջարդեն. և անանկ՝ միայն երեք օր-
վան մէջը ութսուն հազար հոգի կոտրըվե-
ցան, ու քառասուն հազարաչ բռնեցին գերիե-
պէս ծախեցին։

Ետքը ասչափովսաչ չի կըշտացաւ, հապա մե-
նեղաւոսի մատնու

գաւորական տուրքերը ժողովէ անմնցմէ, ու
չափահաս մարդիքը՝ որ զինվորութեան կընան
գար՝ ջարդէ. և իրենք մնացած կնիկները ու
տղաքները գերի ծախէ։ Լսողնիոս առջի
բերանն որ եկաւ՝ սիրով վարվեցաւ հրեից հետ,
սպասեց մինչև շաբաթ օրը, և ան ատենը ա-
պահով ըլլալով թէ հրէայք շաբաթը՝ զբ պա-
հելու համար դէմ չէն կրնար կենալ, յանկար-
ծակի վրանին ելաւ՝ ու խելմը մարդ ջարդեց։
Լսածը շատ ցանցաւ որ անտիոքոս թագաւորը
մէկ ծեր իշխանմընալ հրէաստան խրկեց՝ ա-
թենոբիոս անունով, որ ինչ կրնէ ընէ՝ բոլոր
հրէաները կռապաշտական օրէնքը դարձունէ,
վերցունէ զոհ մատուցանելը, շաբաթ պահե-
լը, և ՝ այ տաճարը կռատուն շինէ, անանկ որ՝
հրէայ անունը մէյմալ չիլլըսվի ըսաւ։ Լնալ
եկաւ այնպիսի խստուրթ սկսաւ թագաւորին
հրամանը առաջ տանիլ, որ ով որ չէր հնազան-
դեր՝ հրամանին դէմ կրներ, ամենեին առանց
խրնայելու կրսպաններ։ Լնոր համար երբոր
լսեց թէ երկու կնիկ ան օրերը իրենց նոր ծը-
նած տղաքը մոլսիական օրինացպէս թլփա-
տեր էն. սանոք բռնել տրվաւ, տղաքնին ծը-
ծերնէն վար կախած՝ անանկ մերկ խայտառակ
բոլոր քաղաքը պտրտցունելէն ետև՝ բարձրը
պարիսպէն վար ձգել տրվաւ. ու ալ ուրիշ ա-
սանկ անողորմ տանջանքներով կրսպաններ ով
որ իր հրեուն հաւատքը չէր ուրանար։ Լու ա-
պատճառով շատ մարդիք ելան աստին անդին
ամսվարի անապատ տեղվանք փախան, որ
հոն գաղտուկ իրենց աստուածպաշտութիւնը պահեն։

ԳԼ. Լ.

Լ՝ սահապաղոնքի եղէսաղար ծերոնէին. Լ ԵՕԹԸ ԵՂԲԱՐՑ
մակաբայեցոց՝ էրենց մօրը հետ։

Բ. Մակ. Ձ. Լ։ = ԱՄ Տի 383դ։

Աս սաստիկ հալածանացս ատենը քահանայմընալ բռնեցին՝ եղիազար անունով, որ մեկ տարիքը առած չնորհալի ու ծածավախ իմաստուն վարդապետմընէր. ասոր բերանը դալլ (ՅՊ՝ քելէփէլ) դրած՝ անանկ բռնի բացած՝ խողու միս կրխոթէին, որ օրինաց դէմ ընէ՝ ուտէ։ Ինալ բոլոր ուժովը ասոր դէմ կեցած, կըսէր որ՝ աւելի կուզէմ մեռնիլ՝ քան թէ օրինաց դէմ ընել, ու յաժարուբ տանջանաց տեղը կրվազէր կերթար։ Ցանողներուն մէջէն իր ձանչվորները վրան խղճալով գաղտուկ խրատ կուտային կըսորդորէին թէ՝ քեզի ուրիշ միս կուտանք որ ուտես, միան դուն երևցուր թէ թագաւորին կըհնազանդիս խաղու միս կուտես, որ գոնէ ասանկ խաբելով մեռնելէն ազատիս։ Այց եղիազար՝ քաւ լիցի կըսէր՝ ատ բանըդ ինծի չի վայլեր՝ որ կեղծաւորուբ խղճմտանքս մաքուր պահելու համար՝ կտրիճ մարդիկ գայթակղեցունեմ, որ ըսեն թէ՝ նայէ եղիազարը ինն ըսուն տարվան ծերմը՝ ալ մահուն դուռը հասած՝ չի համբերեց գնաց այլազգի եղաւ. ասով իրենց չար օրինակ ըլլամ, և ծերուէս ատենը աս գեղ անունը իմ ետևէս թողում։ Եվ որ բաւ՝ ուրանալովը անչափ տարիալ տան ինծի, որ հանգիստ ապրիմ որչափ ապրեցանէ, այսուհամիւ այ ձեռքէն ոչ կենդանութէս ատենը՝ և

ոչ մեռնելէս ետքը կրնամ մէկ տեղը փախ-
չիլ. ուստի աղէկը ան է՝ որ իմ ծերուէս ինչ-
պէս կրվայլէնք՝ քաջութիւն աս աշխարքէս ելլեմ,
ու բարի օրինակ թողում կարիձներուն. որ
անոնքալ ինծիպէս առանց վախնալու սրտանց
մեր նոր օրինացը վրա կեանքերնին տան։ Ա-
սանկ ըսելով սիրով զինքը տանջողներուն ձեռ-
քը տրվաւ. ետքը հոգին աւանդելու ատենը
հառաչելով՝ տէր իմ ըսաւ, դու որ ամմէն բա-
նը գիտես, ասալ կրտեսնես որ ես կրնայի մեռ-
նելէս խալըսիլ, բայց քու արդար դատաստա-
նդդ վախնալով մարմնովը չարաչար կրտան-
ջվիմ՝ ու հոգւովս սիրով կըհամբերեմ. և
անանկ հոգին տրվաւ։

Ինչ ատենները ուրիշ եօթը եղբարք իրենց մօ-
րը հետ մէյտեղ՝ բռնեցին թագաւորին առջևը
հանեցին. երբոր իրենց հաւատուն վրա ասոնց
սկսան հարցունել, մեծ եղբարնին առաջ ե-
լաւ՝ ու ըսաւ. ինչ կեցեր պարապ տեղը մեզի
բան կրհարցունէք, մենք պատրաստ ենք որ
կեանքերնիս տանք՝ քան թէ մեր հայրենա-
կան օրէնքները թողունք։ Նոր վրա սաստիկ
սրդողեցաւ թագաւորը, հրամայեց որ շուտ-
մը անոր լեզուն ու ոտվընքերուն ձեռվընքերուն
մատներուն ծարերը կրտրտեն, ու գլխուն
կաշին քերթեն երեսին վրա դարձունեն. աս
տանջանքներէս ետև երբոր տեսաւ որ դեռ
ողջ է տղան՝ հրամայեց որ կրակին վրա դնեն
տապկեն։ Եկայ եղբարքը մորերուն հետ
աս սոսկալի տանջանքներրս տեսնելով՝ սկսան
մէկմէկու սիրտ տալ, ըսել՝ թէ մենքալ ա-
սանկ քաջութիւն մեռնինք, ու մեր անուանը՝ և
հոգինիս փրկենք 'ի փառս նոյ։ Նոր ետևէն

երկրորդ եղբարը առաջ քաշեցին, ասորաց գլխուն կաշին մազերովը քերթեցին երեսին վրա ձգեցին, ու կըսեին. Հնազանդէ՛ խոզի մա՛կեր՝ բոլոր մարմինդ կտոր կտոր չեղած. անաց հաստատուն կենալով իր օրինացը վրա անտանջանքով վախճանեցաւ. և հոգին տալու ատենը թագաւորին ըսաւ, ով հպարտ ամբարտաւան՝ դուն մեզ աս կեանքէս կըզրկես, բայց գիտնաս որ՝ բոլոր աշխարքիս թագաւորը ծած մեզի յարութիւն առնել կուտա յաւիտենական կենաց, որ հիմա իրեն օրինացը համար կըմեռնինքկոր։ Ինկեց եւս երրորդ եղբարը կանչեցին, և ասորաց երբոր լեզուն ուզեցին որ դուրս հանէ, շուտմը հանեց. ու անանկ առանց վախնալու ձեռվընեներնաց երկնցուց որ կըտրըտեն, որ թագաւորնաց զարմացաւ մնաց տղին քաջասրտութիւնը վրա։ Ինոր մեռնելէն ետքը չորրորդ եղբարնաց ան տանջանքը տըվին. որ մեռնելուն ատենը թագաւորին ըսաւ, երանի է մեզի՝ որ նորէն յարուցի առնելու յուսով՝ աս աշխարքէս կըրաժնըվինք կերթանք, քան թէ քեզի՝ որ կենդանի ես, ու ան յարուցէն զրկըված ես։ Ինչրորդ հինգերդ եղբարը ետեւէն սկսան տանջել՝ դէպ 'ի թագաւորը նայեցաւ ու ըսաւ, դուն մահկանացու մարդմը ըլլալով՝ մարդկային իշխանութիւնդ ինչ որ կուզեմնէ կընես, բայց ասով չի կարծես թէ մեր աղգնաց այ երեսէն բոլորովին ինկած խեղճ մնացեր է, քիչմը կեցի՛ր որ տեսնես այ մեծ կարողութիւնը՝ թէ ինչպէս քեզ քու աղգովդ պիտի տանջէ։ Ինեցերրորդնաց նոյն տանջանքով մեռնելու ատենը դարձաւ թագաւորին ըսաւ, ա՛նով մի խաբվիր ու հպարտանար՝ որ մեզի աս

չափ բան կրցար ընել. մենք այդ դէմ մեղանչենուս համար աս չարչարանքներըս կրքաշենք կոր, ուստի զարմանք չէ. բայց դունալ որ այդ դէմ եղեր պատերազմ կընես, չի կարծես թէ ատոր պատիժը պիտի չի քաշես։ Այսանք նահատակվելու ատենը՝ երանելի մարերինն քովերնին կեցած՝ իրենց լեզվովը՝ որ ուրիշները չէին հասկնար, ամմէն մէկուն սիրտ կուտար կրոր դորեր որ սիրով ու քաջութան տանջանքներուն համբերեն 'ի փառս այ։ Այսքը երբոր կարգը եօթներորդ եղբօրը հասաւ. որ ամմէնէն պզտիկն էր. թագաւորը աս իրեն ամօթ սեպեց որ գոնե առոնցմէ մէկը իր տրված տանջանքներովը չիկրցաւ դարձունել. անոր համար աս պզտիկիս ետևէն շատ ինկաւ՝ քովը կանչեց անուշ անուշ խօսքերով յորդորեց ինքը, ու մեծամեծ պարգևներ և մեծութիւն իրեն խոստացաւ տալու, միան թէ իր հայրենական օրինացը դառնա. և ետքը տեսնելով որ անանկալ ձար չեղաւ տղին միտքը փոխելու. կանչեց մօրը տրված՝ որ ան ալ աս բանիս վրա իրեն խրատ տա։ Այն՝ արնալ առջի բերանը չուզեց խօսիլ. բայց երբոր շատ վրա տրված թագաւորը՝ ինքնալ անոր դէմ սկսաւ տղան յորդորել ու ըսել, ողորմի ինձի իմ սիրելի որդեակս՝ յիշէ որ ինը ամիս քեզ արգանդը կրեր եմ. և իրեք տարի իմ գիրկը կաթով պահեր եմ, ատ հասակդ քեզ հասուցեր եմ. քեզ տեսնեմ որդի. նայէ երկինքը ուռ կա քեզի օգնական, չըլլա որ ատ անողորմ դահիճը քեզ վախցունէ. գուն ալ մէկալ եղբարներուդ ճամբան բռնէ՝ մեռնելը աւելի լաւ սեպէ՝ քան թէ աս աշխարհիս կեանքը. որ անդին այ ողորմութիւն

ատէնը՝ քեզալ քու եղբարներուդ հետ նորէն մէկտեղ ինձի առնեմ ընդունիմ։ Այն ատենը դեռ խօսքը մնը բերանն էր, որ տղան էվելոք սիրտ առնելով սկսաւ կանչել. որուն կրապասէք, ինչ կուշանաքկոր. Թագաւորին հրամանին չեմ հնազանդիր, հապա մեր օրինացը հնազանդեր եմ, որ ՝ծ մովսէսի ձեռքովը տվեր է։ Այտքը դէպ ՝ի Թագաւորը դարձաւ ու ըսաց, դուն ալ ով պիղծ անօրէն մարդ, որ ՝ծ դառաները այսպէս կրտանջես, գիտնաս որ անոր արդար դատաստանէն պիտի չի խալըսիս. ու քու հպարտուեդ և անգրՀԹուԹեդ արժանաւոր պատիժը քաշելուդ ատենը՝ իմանաս որ ինքն է միայն ՀՇմարիտ ՝ծը. նաև աս ալ գիտնաս որ՝ ես իմ եղբարներուս հետ մեր հայրենական օրինաց համար մարմինիս ու կեանքերնիս աս չարչարանքներուս տալով, կրյուսանք ՝ծ՝ որ մեզի ասոր տեղը յաւիտենական կեանք կուտա. և ասով՝ մեր բոլոր աղգին մեղացը Թողութիւն ընէ. Թագաւորը երբոր աս բաներըս լսեց, էվելոք կատղեցաւ աս պղտիկին վրա, ուստի աւելի սաստիկ տանջանքով ինքնալ հոն տեղը սպաննել տրվաւ։ Այտքը ամենէն ետև՝ ան եօԹը երանելի տղացը քաջասիրտ և երանելի մարը. որ ամենամիկ որդւոցը հետ կեցած՝ ինքնալ սրտովը կընահատակվեր, ու մէկիկ մէկիկ անոնք ՝ծ ձեռքը կընըվիրեր, ինքնալ նոյն տանջանքներով՝ չուշացաւ ետևնին հասաւ, որ անոնց հետ մէկ տեղ վայելէ ՝ծ պատրաստած բարիքը։

ԳԼ. Օ.

Մատաթիա փափանային և իր որդւոցը թարգմանչաց և անանց փալաքինները։

ա. Մակ. բ։ = Ամ Տի. 3837։

Անտիոքոսի սաստիկ հալածանաց ատենը՝ անվանի ու սրբակաց քահանամը կար եղէմ՝ մատաթիա ըսած, որ հինկ հատ հասած կըտ բիՀ՝ որդիք ունէր. մէկուն անունը յովհաննէս, երկրորդինը՝ շմաւոն, երրորդինը՝ յուդա մա- կաբէ, չորրորդինը՝ եղիազար աւառան, հինգերորդինը՝ յոնաթան։ Ասիկա տեսնելով բոլոր հրեաստանի՝ մանաւանդ եղէմի այսպիսի խեղճութիւնները, ալ չդիմացաւ՝ իր որդիքը առաւ գնաց մոդգիիմ ըսած քաղաքը քաշվեցաւ. և հոն անանց հետ անմխիթար կողջային ու կուլային իրենց աղգին ողբրմելի գերութիւնը վրա. թէ ինչպէս այ տաՀարը պղծըվեր է, և իրեն սրբ կահ կարասիքը կողոպտըվեր են. և աս բաներուս համար սաստիկ սրտցաւէն վրայի լաթերնին պատռատած քուրձ կըհագնէին։ Ան- տեսնելը անտիոքոս թագաւորէն խրկած մարդիքը մոդգիիմ քաղքնալ եկան, հրեաները կըստիպէին որ կուռք պաշտեն. ու շատ մարդ վախերնէն հնազանդեցան՝ կռապաշտուի դարձան։ Այց մատաթիա առանց վախնալու համարձակ իրենց պատասխանն տըվաւ ըսաւ թէ՝ աշխարքիս բոլոր աղգերնալ թագաւորին հրամանին հնազանդելու որ ըլլան, և բոլոր ինչպիսի իրենց օրէնքը թողուն, այսպէս գիտնաք որ՝ ես ու իմ որդիքս և եղբարներս մեր հայրենական օրէնքը չենք թողուր՝ կուռք չենք

պաշտեր։ Ինգամմը աս բանս ըսելնին՝ տեսաւ մատաթիա որ անդիէն մէկ ուրացող հրեայ մը եկաւ հոն տեղը իր առջևը կուռքին զոհ մատուցանելու. ինքնալ ան ատենը սատիկ ուծային նախանձայուզուէն լիդիմացաւ՝ անոր վրան վազեց ու ոտքով անանկ զարկաւ որ՝ ան տեղը կուռքին առջևը սատկեցուց անիկա։ Եւ ան Թագաւորական մարդը որ եկեր զինքը կլլորդորեր՝ ան ալ անտեղը մեռցուց, գնաց կուռքը կործանեց. ու սկսաւ ամուր ձանով կանչլատել Թէ՝ ով որ հայրենական ուծային օրինաց կուզէ տեր կայնիլ պահպանել՝ իմ հետս գա. և անանկ ինքը իր տղոցմով իրենց ամէն բաները հոն Թողուցին, քաղքէն դուրս ելան մէկ լեռմը գացին քաշվեցան. անոր նայելով՝ շատ ուծապաշտ մարդիք իրենց տունով տեղովը ելան քովը գացին, ու մէկտեղ հոն լեռը այրերու մէջ անառիկ տեղվանք կրընակէին։ Ինամիները աս բանս որ իմացան, շաբաթ օր ելան վրանին եկան՝ ու կլլորդորէին որ դառնան՝ Թագաւորին հրամանին հնազանդին։ Ատը երբոր տեսան Թէ շաբաթ օրվան պատճառով ան հրեաներին իրենց դէմ կեցող չիկա, ալ համարձակ վրանին վազեցին՝ ու հազար հոգի ջարդեցին անոնցմէ։ Ինչ բանիս վրա մատաթիա շատ ցաւեցաւ, ուստի ժողովեց խորհուրդ ըրաւ որ՝ անկէց ետև շաբաթ օր Թէ որ վրանին Թինամի գալու ըլլանէ, առանց խղճմտանքի՝ ուծային օրինացը համար պատերազմին։ Ինկէ ետև ուրիշ հրեաներալ մատաթիայի քով եկան հետը միաբանեցան՝ ու անչափ շատցան որ՝ ալ խումբ կապած կելլէին կռապաշտից հետ կրպատերազմէին,

կուռքերուն նըվիրած տեղվանքը կաւրէին կը-
կործանէին , ուրացողները կըջարդէին , և
ճծային օրէնքները պահել կուտային ։ Ը-
քաջութիւններս ընելէն ետքը՝ տեսնելով մա-
ահ թիա որ օրէ օր աւ իր մահը կըմօտենակոր,
առջևը կանչեց իր որդիքը՝ ու բարի խրատնե-
ըով յորդորեց իրենք որ թշնամիներէն չվախ-
նան, հապա սկսած բարին քաջութիւն առաջ
տանին , ճծպաշտուիր նորէն հաստատեն . ու
շմաւոն եղբարնին՝ իրենց գլխաւոր ու հօր տեղ
դնելով, և յուդա մակաբէն՝ իրենց զօրապետ,
ասանկ իր հայրական օրհնութիւնը անոնց տա-
լով հոգին աւանդեց ։

ԳԼ. Լ.

Յուդա մակաբէին քաջութիւնները ։

ա. Մակ. դ։ բ. Մակ. ը. թ։ Ամ Տի. 3838 ։

Յուդա մակաբէն հօրը մեռնելէն ետև
երբոր զօրապետութիւնը ձեռք առաւ՝ ջանաց
որ իր զօրքը շատցունէ. ու անոնք միան կըն-
տրըեր հետը կառներ, որ միշտ ճծային օրէնաց
մէջը հաստատ մնացեր էին։ Ը.ջի բերանը
բոլորը վեցհազարի չափ մարդով ապողոնիոսի
դէմ ելաւ , որ աւելի զօրքով իրեն վրա եկեր
էր . ու յուդա ճծային օգնուիրը անանկ յաղ-
թեց անիկա՝ որ բռնեց իր ձեռքովը ապողոնիո-
սը մեռցուց , ու ուրիշ շատ կողոպուտներէն
'ի զատ ապողոնիոսի թուրը որ վրայէն առաւ,
անկէ ետքը անիկա ինքը սկսաւ բանեցունել։
Ը.ջ յաղթութիւնը յուդայի անուն որ մեծցաւ
չորս դին տարածվեցաւ՝ նրէն կամ սերոն ըսած
ասորեստանի կողմին մեծ զօրապետը՝ նորէն

աւելի զօրքով յուդայի դէմ եկաւ։ Յուդայի զօրքը իրենց քիչութիւնը տեսնելով վախցան դէմ դնելու. յուդայայ յորդորելով իրենք որ չի վախնան՝ ՝՝այ ապաւինին՝՝ անանկ քաջութիւն վրանին վազեց, ու ուղիղ հարուր հոգի ջարդելով՝ թշնամիներուն բանակը ցիրուցան ըրաւ փախցուց։ Ինչ ատենը անտիոքոս թագաւորը աս յուդայի ըրած յաղթութիւնները լսելով շատ դժվարը եկաւ, մըտմտաց որ իր բոլոր տերութիւն նորէն զօրք ժողվի, ու ինքը իր բոլոր ուժովը անոր դէմ ելլէ, ինչպէ վերցունէ հրէից աղգը. բայց տեսնելով որ աս բանքս առաջ տանելու բաւական ըստակ չունի իր գանձին մէջը. անոր համար ուզեց որ առաջ պարսից երկիրը երթա զարնէ՝ անկէց ըստակ հանէ։ Ուստի երթալու ատենը՝ իր տեղը լիւսիաս անունով մէկ իշխանմը թողուց, անոր յանձնեց աս պատերազմիս բաները. և իր անտիոքոս ըսած որդինալ անոր ձեռքը հաւատաց՝ որ ինքը պահէ մեծցունէ։ Լիւսիասալ խորհուրդ ընելով փիլիպպոսի հետ, (որ երուսաղէմի քաղաքապետն էր, ինչպէս վերը ըսինք,) աս հրէից դէմ պատերազմին վրա իրեք հոգի զօրապետ ընտրեց՝ պտղոմէոսը, նիկանորը ու գորգիասը. և ատոնց ձեռքը տրվաւ քառասուն հազար հետեւակ զօրք, ու եօթը հազար ձիաւոր. որ երթան բոլոր հրէաստանի երկիրը աւրեն, ու հրէայքը բոլորովին աշխարքէս վերցունեն, ինչպէս որ անտիոքոս թագաւորը մտմտացեր էր։ Ինչ բանիս յաջողութիւնը վրա անանկ ըստոյգ էր նիկանոր՝ որ վաճառականներ կանչեր հետեւենին խոսք կապեր էր՝ որ աս պատերազմիս մէջ գերի բռնած հրէաները իրենց ծա-

խէ՝ ինն բսուն մարդ՝ մէկ քանքարի, ու կրկաբ-
ծէր որ՝ միան աս հրէից զերինեբուն գնովը
հռոմայեցոց հարուր կամ երկու հարուր քան-
քարի տարեկան թագաւորական տուրքը վը-
ճարվի։

Յուդա մակաբէին հետեղած զօրքը՝ որ միան
վեց հազարի չափ էին. երբոր թշնամիներուն
պատրաստուիը իմացան՝ շատ վախ ինկաւ սրը-
տերնին։ Յուդայալ քաջութիւն սկսաւ իրենց
սիրտ տալ, ու առջևնին դրաւ այնչափ մեծա-
մեծ հրաշքները՝ որ ուծ ատեն ատեն ըրեր էր՝
իրենց նախահարքը թշնամիներուն ձեռքէն
խալըսելու համար։ Լաբը բոլոր հրէից ա-
զօթք ու պաք ապրսպրելով՝ որ ուծ աս պատե-
բազմիս բարի կատարումն տա, զօրքը կարգի
դրաւ, այ օգնութիւնը անանկ յաղթութիւնը ըրաւ
որ՝ ան պատերազմին մէջը հրէայքը ինը հազար
հոգի թշնամիներին ջարդեցին, ու մնացածէն-
ալ՝ որ ասոնց անդին ցրված կրփախչէին՝ ի-
րեք հազարի չափ կոտրեցին. և իրենց ամբա-
տաւան նիկանոր զօրապետը աղքատի լաթեր
հագած՝ որ չի ճանչնըվի ու ինքնալ բռնըվի,
այսպէս խայտառակաբար անտիոք փախաւ։
Լսկէ 'ի զատ հրէայքը թշնամիներուն բանա-
կէն խելքը կողոպուտալ ձեռք ձգեցին. և ան
վաճառականները որ շատ ըսարկով՝ նիկանո-
րի ըսածինպէս իրենք գնելու որ եկեր էին, ա-
նոնքալ բռնեցին՝ ու ըստակնին ձեռվընին ա-
ռին. և աս կողոպուտները յուդայի հրամանո-
վը զինվորաց ինկած բաժինին 'ի զատ՝ առա-
տապէս աղքատաց ու որբոց բաժնեցին։ Լսկ-
էտև յուդա նորէն յաղթութիւնալ ըրաւ մէ-
կալ երկու զօրապետներուն՝ տիմոթէոսի ու

բաքիդի դէմ, քսան հազարալ անոնց զօրքէն ջարդեց, փախցուց իրենք. ու անոնցմէ՝ շատ կողոպուտ առաւ։

Լուսիաս որ անտիոքոսի տեղը կեցեր էր յուդա մակաբէին յաղթութիւնները որ տեսաւ, ուզեց որ ինքնալ դէմը ելլէ անոր ուժը փոքձէ. ուստի մէկ տարիէն եաքը վաթսուն հազար հետեւակ զօրքով՝ ու հինգ հազար ձիաւորով հրեաստան եկաւ։ Յուդայալ բոլոր տամնը մէկ հազարով միան անոր դէմ ելաւ, ու աղօթքով իր բոլոր յոյսը ՝ այ վրա դնելով՝ երբոր սկսան պատերազմիլ՝ մէկէն հինգ հազար հոգի ջարդեցին թշնամիներէն, և անով բոլոր բանակը ցիրուցան ըրին փախցուցին։ Լ.յապէս որ յաջողեցաւ հրեից բանը՝ ու ալ գրեթէ բոլոր այլազգիները հրեաստանէ հանեցին փախցուցին, անկէ ետեւ յուդա մակաբէն՝ որ ալ բոլոր հրեից իշխան էր եղեր, երուսաղէմ գնաց, որ իրեն տարի կռապաշտ այլազգիներուն ձեռքը մատնըված էր. ու բոլոր կուռքերու և կռապաշտական բաներու նըշանները անկէց վերցուց կործանեց. ու ձեռք զարկաւ ՝այ տաճարը մաքրելու նորոգելու։ Լ.նոր մէջը ամէն կահ կարասիները նորէն շինեց, ու քահանաները զատեց իրենց կարգին կանոնին մէջը դրաւ. և աս յաջողութեան համար ՝ի շնորհակալութեան ՝այ եօթը օր տօնախմբուն սահմանեց, որ բոլոր հրեայքը ուրախութիւն կատարեցին։ Լ.յապիսի հրեից յաջողութիւնները տեսնելով իրենց սահմանակից կռապաշտ ազգերը, նորէն սկսան թշնամուի ընել հրեից դէմ, յուդայալ ասոնք ամէնը յաղթեց յայտնի ՝այ օգնականութիւնը. անանկ որ՝

անգամմինալ կըպատմըվի թէ՝ հինկ փառաւոր ձիաւոր կորիձներ երկինքէն ինջած երևցան պատերազմին մէջը, որ յուդան մէջերնին առած կըպահպանէին, ու թշնամիներուն վրա նետ ձգելով կըկուրցուցնէին անոնք, որ չիոթված իրար կանցնէին, ու անանկ կըյաղթըվէին։

ԳԼ. Ը.

Անտիոքոս Բաֆաւորին սարսափոմը, և անոր էրթէն նոպած Բաֆաւորիներուն պարերազմը հրէից դէմ։

Ք. Մակ. Թ. Ձ. ժա. ժբ։ = Ամ Տի. 3840։

Անտիոքոս Թագաւորին միտքը դրածը՝ պարսկաստան որ չի յաջողեցաւ. և անկէց խայտառակ էտ դարձաւ բաբիլոնի կողմերն որ հասաւ, հոն լսելով ան իր զօրապետներուն հրէից յաղթըվիլը, և յուդա մակաբէին հրէաստան տիրապետելը, սաստիկ կատղեցաւ աս բանիս վրա. ուստի ուզեց որ պնուհետև ինքը իր զօրքով հրէից վրա եկնէ՝ չիսընայէ ամմէնքը թրէ անցունէ, երկիմ քաղաքը հիմնայատակ ընէ։ Երբոր Նամբա եկաւ՝ ու իր կառքը նստած սաստիկ արտորնօք կրակիպէս քըշել կուտար, որ օրմը ժամմը առաջ հասնի՝ աս միտքը դրած անօրէնութիւնները կատարէ, անատեղը ոչ պատուհասնալ վրան հասաւ, որ յանկարծակի կառքէն վար ինկաւ՝ ջարդուբարդ եղաւ բոլոր մարմինը. ու ներսէնալ աղիքներուն զէն դրպաւ՝ որ խոցվեցան, և քիչ քիչ անանկ փթատեցաւ ներսի գին՝ որ չորս դիէն որդեր դուրս կըթափէին, և սաստիկ գարշահոտութէն մարդ քովը չէր կրնար

մեռեալներ։ Նոտիոքոս ասանկ մահվան դուռն որ հասաւ, անտեսնը խելքը վրան եկաւ, իմացաւ որ աս պատիժը անմեղ հրեից վրա բրած անողորմութիւնէրուն համար կրբաշէ. ուստի սկսաւ առաջադրութիւն ընել թէ՝ առողջանալու ըլլանէ՝ հրեից ամէն բանները իրենց դարձուներ, և տաճարը իր բստրկով առջևինէն պէս ամէն կողմանէ զարդարէ. ու նաև ինքնալ հրեայ ըլլա, և այ մեծ կարողութիւը ամէն տեղ քարոզէ։ Այց այ ողորմութիւ չափը լցվելով, իր արդար դատաստանովը երեսէ ձգեց թողուց, որ երթա անանկ չարաչար սատկի օտար աշխարքի մէջ։

Լուսիաս երբոր անտիոքոսի մեռնիլը լսեց, շուտմը անոր տղան անտիոքոս անուանով, հօրը տեղը թագաւորական աթոռը անցուց, և անոր մականուն դրբաւ՝ Եւպատոր էմ հօրամոյն՝ այ ազնիվ հօրէ ծնած. ու ինքը լուսիաս՝ անոր փոխարքայ (այ՝ վէզիր) եղաւ։ Սալ իր հօրը ձամբան բռնեց՝ հրեից դէմ թշնամուի ցրցուներով. ուստի նորէն պատերազմ բացաւ վրանէնին։ Այց յուդա մակաբէին ըրած քաջութիւններէն յաղթվելով, (որ աս համառօտութեամ մէջը կրթողունք չենք երկրնցուներ.) ետքը հաշտուի ըրաւ հետերնին։ Նկէ ետև շատ չանցաւ որ՝ դեմետրիոսը իրեն հօրեղբօրը որդին եկաւ անտիոք քաղաքը մտաւ, ու ըսպաննել տալով աս անտիոքոս թագաւորը՝ լուսիասմանալ հետը, ինքը տիրապետեց անոր տերութիւնը։

Նոատենը շուտմը աղկիմոս ըրած մէկ հրբէամը՝ որ առջև պղտորուն ժամանակը եղէմ քահանայապետուի էր ըրեր, ու ետքը բարե-

կարգուՔՆ ատենը՝ ինկած անկեց վերնտած էր. գնաց Թագաւորին ասանկ հասկրցուց Թէ՝ քանի որ յուդա մակաբէն կեցեր է, ոչ քու տերուՔդ հրեաստանի վրա ապահով է, և ոչ մեր ազգը հանգիստ խաղաղ կըլլա։ Այս ը-սածիս ուրիշներնալ վրա տրվին՝ Թագաւորը տրդեցին որ աղկիմոսը մէկ բաքիդ ըսած զ-ըրապետիմը հետ եղէմ խրկեց՝ որ երԹան աս հրեից բաները կարգի դնեն։ Բայց երբոր ա-սանք, եկան խաբեբայութ խելքը մարդ յու-դայի բարեկամներին բռնեցին սպաննեցին. և յուդայնալ եռևէն որ ինկան, ու տեսան որ յուդան իր եղբարներովը իրենց դէմ յայտնի պատերազմի պատրաստուն կրտեմնէկոր, ան-ատենը Թողուցին Թագաւորին քով դարձան, ու նորէն յուդայի վրա անանկ գրգռեցին՝ սբ-դողցուցին Թագաւորը, որ անալ անոնց տեղը մէկ երևելի իշխանմը նիկանոր ըսած՝ աւելի շատ զօրքով խրկեց որ երԹա յուդան բռնէ, ու իր զօրքը ցրվէ վերցուՔնէ, աղկիմոսը հրեաս-տանի քահանայապետ դնէ։ Այրքոր եկաւ նի-կանոր՝ տեսաւ որ յուդա զօրքովը իրեն դէմ պատրաստրված կեցեր է. և անոր կորբՁու-ԹՔնալ գիտնալով, սիրտ չբռաւ հետը պատե-րազմ ընել. հապա ուզեց որ խաղաղութ բա-նը լըմնցուՔնէ։ Բայց յուդա միշտ իր զգու-շուՔը ընելով՝ որ չըլլա ԹԷ խաբէութ բանմը ընէ, Թող տրվին որ նիկանոր եղէմ եկաւ, ու յուդայի հետ սկսաւ անանկ սաստիկ սիրով բարեկամուԹՔ վարվիլ, հետը խնամուԹՔնալ ընել, որ աղկիմոս կարծիք գնաց ԹԷ նիկանո-րի միտքը բոլորովին փոխվեցաւ. անոր համար ինքնալ շուտմը գնաց Թագաւորին ամբաստա-

նեց։ Ի՞նչ աւագաւորնալ շատ սրդողեցաւ, գը-
բեց նիկանորի թէ՝ ատ ձեր ըրած բարեկամու-
թիւնը չէմ հաւնիր. հապա ինչպէս հրամայեցիք
նէ ոտվընները ձեռվընները կապած յուդան ին-
ծի խրկես. աս բանս որ իմացաւ յուդա՝ երեսը
ծածկեց։ Նիկանորալ ամ կերպով ետեւէ ին-
կաւ զինքը բռնելու. ուստի գնաց եղէմ տա-
ճարը քահանաներուն կրսպաւ, թէ որ ըսաւ՝
յուդան պահերէքնէ՝ հանեցէք ձեռքըս տը-
վէք. և ձեռքը այ տաճարին վրա զարնելով,
չէ նէ ըսաւ աս տաճարս հիմնայատակ կընեմ,
և ասոր տեղը կուռքի մեհեան կրշինեմ։ Քա-
հանաները աս որ լսեցին, սոսկալով տաճարը
մնան՝ ու լալով աղաչէին այ որ պահէ իր տա-
ճարը, և անոր ըրած հայհոյանքը իրեն չի թո-
ղու։ Նիկանորալ ասկէ ետեւ կատղած՝ մար-
դու չէր ողբմէր, հրէայքը սկսաւ տակնու վրա
ընել։

Ի՞նչ ատենները եղէմ՝ հռաքս ըսած մէկ
ամծապաշտ ու խելացի անվանի ծերմը կար. նի-
կանոր ասոր ետեւէն ինկած վրան հինգ հարու-
ի չափ զինվոր խրկեր էր՝ որ ողջ բռնեն իրեն
բերեն։ Ի՞նչ ասիկա՝ աւելի ընտրեց քաջուք
մեռնիլ քան թէ ան կռապաշտին ձեռքը խյ-
նալ. ուստի երբոր ալ ինքը բռնելու եղան,
ան ատենը իրենալ ձարը հատած՝ ինք իր ձեռ-
քով թուրը փորը խոթեց ձրդրեց. ու անանկ
զինքը պարիսպին վար ձգեց, և հոն դեռ չի-
մեռած՝ ամպէս արունվըլա ոտք ելաւ կայնե-
ցաւ՝ փորոտիքը ձեռքը առած դէպ 'ի վեր ե-
կինքը վերցուց ցրցուց՝ ու ըսաւ, որ՝ այպէս
դունալ իրեն հատուցանես. ու անանկ ինկաւ
հոգին աւանդեց։

Լտքը Նիկանոր իմանալով որ յուդա մակաբէն սամարիայի կողմերը զօրք ժողված պատրաստ կեցեր է, սպասեց ինչվան շաբաթ, և ան օրը ուզեց որ իր բոլոր ուժովը վրան վազէ։ Լիկանորի զօրաց մէջը շատ հրէայքալ կային։ Լոնք երբոր աղաչեցին որ ան օրը թողու՝ շաբաթը՝ որ պահեն՝ ինչպէս ած հրամայեր է. Նիկանոր ասոնց սրդողելով՝ այ դէմ հայհոյեց ու ըսաւ, ած թող երկինքը հրամայէ, երկրիս վրա ով որ ուժով է նէ՝ ան կը հրամայէ՝ որ զէնք վերցունեն պատերազմին։ Յուդա մակաբէալ անդին իր զօրքը յորդորելու և սիրտ տալու ատենը՝ ած իրեն մէկ տեսիլքմը յայտնեց, որ իր մարդոցը պատմելով՝ աւելի զօրացան. ու տեսիլքը ա՛ս էր։ Ցեսաւ որ ոնիա՝ որ քահանայապետը իր շնորհալի կերպարանքով երևցած՝ ձեռվընները տարածած հրէից համար աղօթք կրնէր. ու ցրցունելով մէկ ուրիշ փառահեղ ծերունիմը անդին կեցած՝ կըսէր թէ՝ ա՛ս երեմիա մարգարէն է, որ եղբայրսիրու թէ միշտ և հանապազ ձեզի համար կաղաչէ այ, ա՛ս ըսելենին՝ երեմիան մէկ ոսկիով պատած թուրմը յուդայի ձեռքը կուտա ու կըսէ. ա՛ռ ա՛ս ատուծմէ պարգևած սէր թուրը, ու ասով քու բոլոր թշնամիներդ ըսպանանէ։ Լտքը երբորալ Նիկանորի հետ դէմադէմ եկան, հրէայքը որ քիչվոր էին՝ Լ. բենց յուդա զօրապետին յորդորանքովը սիրտ առնելով՝ և բոլորովին այ ապաւինելով, ա՛նանկ քաջութիւն պատերազմ ըրին, որ ան մէկ դարնրվելուն մէջը եռասունը հիսնկ հազար հոգի թշնամիներէն կոտրեցին, Նիկանորնալ անոնց մէջը. ու մնացածը ցիրուցան ըրին։ Լտքը ու-

բախուբ օրհնենք տալով ՝ այ. հրամայեց յու-
դա որ նիկանորի գլուխը՝ և աջ թևը կտրեն
վերցուցնեն վրայէն. ու հետը առաւ եղէմ բե-
բաւ ամէնուն ցրցուց. և անոր հայհոյիչ լե-
զուն հանեց կտոր կտոր ջարդեց՝ թռչուննե-
րուն առջևը ձգեց, գլուխը բերդին վրա կա-
խել տրվաւ, և ան ձեռքը որ տաճարին զար-
կեր սպառնացեր էր՝ թէ պիտի հիմնայատակ
ընեմ տաճարին առջևը կախեցին։ Լոտքը աս
յաղթութիւն օրս ալ՝ մեծ տօն սահմանեցին 'ի
շնորհակալութիւն այ։

ԳԼ. ԹՕ.

Յոտքա մակաբէէն էաւէէն յոշխարհն անոր գեղը կանցնի։

ա. Մակ. ը. Թ. Ժ. = Ամ Տի. 3843։

Նիկանորը յաղթվելէն ետքը՝ հրեաստա-
նի երկիրը քիչը ժամանակ խաղաղեցաւ. ուա-
տի յուդանալ ատեն գտաւ հռոմայեցոց դես-
պան խրկելու, որ շատոնցմէ մէջերնին եղած
ուխտ ու դաշինքը նորէն ամրացունեն։
Լայց դեմետր թագաւորը նիկանորի մեռնե-
լէն ետև՝ նորէն բաքիդը աղկիմոսի հետ քսան
հազար հետևակ զօրքով, և երկու հազար ձիա-
ւորով յուդայի դէմ խրկեց։ Յուդայի զօրքը՝
որ անատենը միան իրեք հազար էին, երբոր
թշնամիներուն շատվորութիւնը տեսան՝ սրտեր-
նին կոտրեցաւ յուսահատեցան, ու շատնալ
քովէն զատվեցան ցրվեցան. որ միան ութը
հարուր ձիաւորով մնաց յուդա, ու ասոնքալ
կլորդորդէին զինքը թէ՝ աս անգամ որ ասանկ
քիչվոր մնացինք՝ ետ կենանք՝ ինչվան որ նորէն

մարդ ժողովենք։ Յուդա իրենց պատասխան տրվաւ՝ քաւ լիցի որ ես թշնամիներէս երեսս դարձուցեմ փախչիմ. հապա թէ որ ժամանակը հասերէնէ՝ քաջութիւնք մեր եղբարները ազատելու համար։ Լսանկ ըսաւ՝ ու ան ուրիշ հարուրով թշնամիներուն մէջը մտաւ, և առտրվանց ինչվան իրիկուն անանկ քաջութիւն պատերազմեցաւ, որ բանակին աջ թեւը զարկաւ յաղթեց։ Բայց ետքը անոնց ետևէն իյնալնին, ձախ թեւին զօրքը եկան զինքը իր մարդիկներովը մէջ առին, և ան ատենը յուդայաւ՝ այ այնպէս կարգաւորելովը՝ ինկաւ. ու մնացած զօրքը փախան ցիրուցան եղան։ Լսաքը շմաւոն ու յոնաթան իր եղբարքը՝ եկան յուդայի մարմինը անկեց վերցուցին տարին իրենց հայրենական գերեզմանը թաղեցին. ու վրան մեծ սուգ ըրին իսկայիքը։ Յուդայի մեռնելին ետև անտեր որ մնացին հրեայքը, շատ նեղուն կրելով բաքիդի ձեռքէն, յոնաթանը անոր եղբարը իրենց քահանայապետ ու առաջնորդ դրին։ Բաքիդ ետևէն ինկաւ որ բռնէ սպաննէ. յոնաթանաւ հետը զօրք ժողված մէկ անապատ տեղը քաշվեցաւ, բաքիդ վրան գնաց՝ ու շաբաթ օրը որ պատերազմ բացաւ հետը. յոնաթան ասոր դէմ ելաւ, ու անանկ քաջութիւ հետը պատերազմեցաւ՝ որ հազար հոգի կոտրեց բաքիդի զօրքէն՝ անանկ զինքը փախցուց։ Ինկէ 'ի զատնաւ ուրիշ անգամմալ բաքիդ յոնաթանի թշնամիներէն գրգռվելով ու հետը պատերազմելով երբոր յաղթվեցաւ, ալ խելքը կտրեց որ յոնաթանի քաջութինալ յուդայէն վար չի մընար. ուստի յոնաթանի ուզած հաշ-

տուէր՝ բաբիդ խօսք տալով, հրէաստանէն ելաւ՝ անտիոք քաղաքը դարձաւ. մանաւանդ որ՝ հոն դեմետրեթագաւորնալ նեղուէր մէջ էր աղէքսանդր եպիփան ըսածին կողմանէ, որ նոր թագաւորուն հաստատեց իր սահմանին քովը։ Ասոր վրայ քիչմը հանգիստ գտաւ յոնաթան, ու մաքմաս քաղաքը նստած՝ ըսկսաւ ժողովուրդը կառավարել. պատճառն որ՝ երուսաղէմի բերդը դեռ դեմետրեթագաւորին զօրաց ձեռքն էր։

ԳԼ. ԺԲ.

Յոնաթան քահանայապետին ուրիշ պատմութիւնները։

ա. Մակ. Ժ. ԺԱ. ԺԲ։ = Ամ Տի. 3843։

Յոնաթանի քաջութիւնը լսուս դին հռչակվելով, աս երկու հրէաստանի սահմանակից թագաւորները դեմետր ու աղէքսանդր՝ որ մէկ մէկու դէմ էին իրարու ձեռքէն յոնաթանը կրնանային իրենց կողմը դարձունել գիտնալով որ անոր օգնութիւնը իրենց շատ ուժ կուտար։ Այլ յոնաթան խոհեմութիւն երկու դին ալ հաւասար կրնէր, թէպէտ միտքը բերելով դեմետրի հրէից դէմ ըրած անօրէնութիւնները, անոր ըրած բարեկամական խոստմունքներուն անչափ չէր հաւատար. հապա աղէքսանդրին վրա աւելի հաւատարմութիւն ունէր, որ զինքը քահանայապետ ձանչնալով ոսկի թագ ու ծիրանի կապա իրեն խրկեց. որ աս մեծ սիրոյ ու բարեկամութիւն նշան էր։ Այսքը դեմետրալ աս բանս ըսելով թէպէտ նորէն բարեկամութիւն թուղթ գրեց հրէից, որով շատ աղատութիւներ իրենց կուտալ. բայց այսու սմիս

հրեայք իրեն չի հաւատացին, հաստատ կեցան աղէքսանդրի հետ։

Սկէ ետքը աղէքսանդրը պատերազմ եւաւ դեմետրի վրա՝ ու քաջութիւն յաղթելով սպանեց դեմետրը. և երբոր անոր տէրութիւնը բոլոր իր տակը առաւ, պտղոմէոս եգիպտացոց թագաւորին հետեւալ ուղերով բարեկամանալ՝ անոր կղեոպատրա ըսած աղջիկը իրեն կին առաւ։ Երբոր աս թագաւորական հարսնիքին պատճառովը ան երկու թագաւորները մէյտեղ պտղոմայիդ քաղաքն էին, յոփնաթանալ աղէքսանդր թագաւորին հրավիրված՝ մեծ մեծ պարգևներով ան հարսնիքը գնաց, ու հոն աղէքսանդրը ինքը եվեղբ մեծարեց, ու նորէն ծիրանի կապա հագցունելով փառաւորեց. և ամենաժիր մտիկ չի դրաւ յոփնաթանի թշնամիներուն՝ որ գացեր վրան ամբաստանուելի կը նեին. ու անանկ փառաւորապէս եւաւ նորէն եղէմ դարձաւ։ Ան աղէքսանդր թագաւորը քիչմը ատենէն ետքը՝ կամաց կամաց թուլնալով՝ և զինքը ուրախուելե (կամ զինքի սեֆայի) տալով, անդիէն մեռած դեմետր թագաւորին մեծ որդին դեմետր նիկանորը ըսած՝ եւաւ իր հօրը տէրութիւնը նորէն ձեռք ձգեց, ու անոր քաղաքը եկաւ նստաւ։ Սկիկա ոխ պահելով յոփնաթանի վրա՝ թե ինչու իր հօրմէն զատվեցաւ աղէքսանդրի դին եղաւ. անոր համար ապողոնիոս մէկմը զօրապետ դրաւ՝ ու ութը հազար հետեւակ զօրքով և իրեք հազար ձիաւորով հրեաստան յոփնաթանի վրա խրկեց։ Սոր դեմ եւաւ յոփնաթան իր շմաւոն եղբօրը հետը տասը հազար զօրքով, ու անանկ քաջութիւն պատերազմ ըրաւ՝ որ անոր ութը հազարը ջար-

դեց, և դագոն կուռքին տաճարը՝ հոն փախ-
չողներուն վրան երեց, ու անոնցմէ շատ կո-
ղոպուտ առած անանկ եղէմ դարձաւ։ Ի-
բանիս համար Էվելօք ուրախանալով աղէք-
սանդր Թագաւորը, նորէն յոփնաթանի Թա-
գաւորական նշան՝ պարգև խրկեց, ու անոր
իշխանու

լոր զօրքը զինքը թողուցին՝ ան տրիփոնին հետ մէկ եղան, ու զինքը փախցուներլով՝ անտիոքոսը թագաւոր Ճանչցան իր տեղը։ Ինչ ալ երբոր աթոռը նստաւ՝ ուխտ ու դաշինք հաստատեց յոնաթանի հետ, և ինքը հրէից քահանայապետ ու գլուխ Ճանչնալով իրեն թագաւորական ընծաներ խրկեց, և անոր Շմաւոնն եղբարնալ զօրապետ դրաւ։ Այսքը աս երկու եղբարքսալ շատ քաջութիւններ ըրին՝ որ անտիոքոս թագաւորը իրեն թշնամիներուն ձեռքէն պահեն. անոնցմէ մէկնալ տրիփոնն էր, որ անտիոքոսը ըսպաննել կուզէր՝ որ ինքը անոր տեղը թագաւոր ըլլա. բայց երբոր տեսաւ որ յոնաթան քառասուն հազար ուժով զօրքով կեցեր է, վախցաւ դէմը պատերազմ բանալու։ Ուստի սկսաւ խաբէութիւն յոնաթանի հետը բարեկամութիւն ցրցուցնել. ու անանկ զօրքը քովէն հեռացուներլով միայն հազար հոգի հետը առած պտղոմայիս քաղաքն որ մտաւ յոնաթան, տրիփոն քաղքին դռները վրան գոցել տրվաւ. այնպէս զինքը բռնեցին կապեցին, հետի եղած մարդիքը բոլոր թրէ անցուցին. ու անկէ ետև տրիփոն նորէն զօրք ժողվեց, պատրաստվեցաւ որ հրէաստանին վրա ելլէ։

ԳԼ. ԺԱ.

Շ մաւոն էլեազարդէ յոնաթանի տեղը։

Ա. Մակ. ԺՃ. ԺԴ. ԺԵ. ԺԶ։ = Ամ Հի. 3860. 3869։

Երբոր յոնաթան ասանկ խաբվելով բռնվեցաւ, հրէաստան անանկ ձան ելան թէ մեռած է, ուստի սաստիկ տրտմած՝ և գրե-

թէ յուսահատած էին հրէայքը։ Բ. ան ատենը շմաւոն՝ (որ ինչպէս ըսինք՝ մատաթիայի հինգ որդւոյ մէջը պզնտ մեծերնին էր,) հրէայքը քովը կանչեց, մխիթարելով սիրտ տալաւ իրենց՝ ու ըսաց թէ՝ եսալ իմ եղբարներուս պէս՝ այ օրինացը և մեր ազգին ազատութիւնը համար պատրաստ եմ իմ կեանքս տալու։ Յետոյ ժողովուրդնալ շատ ուրախացաւ ասոր վրա. ու ինքը յոնաթանի տեղը իրենց առաջնորդ ընտրեցին։ Ետքը արիփոն երբոր հրէից վրա եկաւ՝ տեսաւ որ շմաւոնը ալ զրպետ եղած պատերազմի աղէկ պատրաստուած տեսեր է, ինքնալ խաբեբայութիւն քանը փոխեց, շմաւոնի դեսպան խրկեց ըսելու թէ՝ յոնաթանը հարուր քանքար արծաթ տալիք ունէր թագաւորական գանձին, անոր համար քովը բռնըված կեցեր է. ուստի եթէ կուզէք որ ազատի, աս ըստակը խրկեցէք, և անոր երկու տղաքնալ իմ ձեռքս պատանդ տրվէք, որ զինքը թողում։ Շմաւոն թէպէտ իմացաւ անոր չար միտքը, բայց այսու ամենայնիւ ըսածինպէս խրկեց ան ըստակը ու անոր տղաքը, մտմըտաց որ՝ չըլլա թէ աստին հրէաներէն ետքը գրլխացաւուն քաշէ, որ ըսեն թէ. ագահութիւն ըստակը չիտրվաւ, ու ան պիտվական մարդը կորսընցուց։ Բայց արիփոն աս բաներըս առնելէն ետև՝ չէ թէ յոնաթանը չիխալըսեց, հապա բռնեց մեռցուցալ. ու ինքը ելաւ իր տեղը դարձաւ։ Բ. ան որ լսեց շմաւոն, մարդիք խրկեց անկէց վերցուց յոնաթանի մարմինը մովդիիմ քաղաքը բերել տրվաւ՝ իր հօրը և մէկալ եղբարց գերեզմանը դրաւ. և ան գերեզմաններուն վրա փառաւոր քարաշէն շին-

վածք չինեց, որ յիշատակին անմոռաց մնայ։ Անկեց եւս ալ շմաւոն զզվեցաւ տրիփոնէ, որ աս յոմնաթանի ըրած անպէտութէն՝ ի զատ գնաց գաղտուկ անտիոքոս թագաւորը սպանել տրվաւ, ու ինքը անոր թագաւորութիւնը յափշտակեց։ Այս անալ իմանալով շմաւոն՝ որ անդիէն դեմետր թագաւորը նորէն իր տերութիւնը կուժովցունէ կոր, ինքնալ անոր ընծաներով դեսպան խրկեց, և անկեց հրեից շատ ազատութիւններ առաւ։

Այսոր վրա խելմը ատեն խաղաղութիւն վարեց շմաւոն իր իշխանութիւնը, ինչվան որ անտիոքոս ըսած մէկմը՝ թագաւորական ցեղէն, որ ըսկիզբը շմաւոնի բարեկամութիւն կրցրցունէր, ետքը երբոր եւաւ տրիփոնը յաղթեց ու անոր թագաւորութիւնը բոլորովին տիրապետեց, սկսաւ շմաւոնի հետ թշնամութիւն երթալ շմաւոնի տրված ընծաները, և երկու հազար իրեն օգնուն համար խրկած զօրքը, քամահրելով ետ դարձուց։ Այսքը աթենոբիոս իր բարեկամը շմաւոնի խրկեց ըսելու թէ՝ իմ հայրենական քաղաքներս որ ասչափ տարի բռնուած տիրապետեր էք, և անչափ տեղվանք աւերեբէնք՝ անոնց գինը տրվէք, ու անկէ՝ ի զատ ասչափ ատենի թագաւորական խափանված մնացած տուրքերը տրվէք. թէ որ չէք ուզեր որ բռնուած վրանիս եկլեմ։ Շմաւոնալ չիվախցաւ իրեն պատասխան տրվաւ՝ թէ օտարի երկիրը մենք յափշտակած չենք, մեր հայրենական երկիրները թշնամիներուն ձեռքէն առեր ենք միայն յոպպէ ու գազարա քաղաքներուն համար որ դուք հարուր քանքար կուզէք, անոր ըստակը կուտանք։ Այս պատասխանն որ ըսեց

անտիոքոս Թագաւորը, սաստիկ սրդողեցաւ. ուստի կենդեբոս ըսած մէկ զօրապետմը շատ զօրքով հրեաստան խրկեց։ Շմաւոնալ ան ատենը քսան հազար զօրք տրվաւ իր երկու տղոցը ձեռքը, որ ասոնց մէկը յուդա կըսվեր, ու մէկալը յոհան, և իրենց սիրտ տրվաւ յորդորեց որ՝ այսուհետև իրենք հրեից ազգին թշնամիներուն դէմ ելլեն պատերազմին, որովհետև ինքը՝ ալ ծերացեր էր։ Նանկ այ օգնութիւնը որ ելան ասոնք՝ շատ ջարդ տրվին՝ թշնամիները յաղթեցին. ու յոհան փախըստականներուն ետևէն խլնալով տարաւ ազովտոսի կողմերը մէկ բերդմը հասցուց, և ան բերդը վրանին էրելով՝ երկու հազար հոգիալ հոն մեռցուց. և այսպիսի քաջութիւն հրեաստան դարձաւ։

Ն՚ ատենները պտղոմէոս աբուբբենց ըսած մէկմը կար՝ որ շմաւոնի փեսայ էր եղեր. ու երիքովի կողմերը իշխան դրված էր։ Ն՚սիկա շմաւոնի տերութիւնը վրա աչք տնկելով՝ անգամմը շմաւոն ան կողմերը տես երթալնինի, դուկք ըսած քաղաքը՝ պտղոմէոս խաբէութիւն ինքը սեղան մեծարեց՝ և իր երկու տղաքնալ հետը մատաթի ու յուդա. ու հոն տեղը ուրախութիւն ուտել խմելն ետքը՝ յանկարծ պտղոմէոս՝ որ իր մարդիքներովը պատրաստված էր՝ վրան վազեց՝ շմաւոնը իր տղաքներովը և ծառաներովը ըսպաննեց։ Ն՚տքը աս բանքս շուտմը խրկեց իմացուց անտիոքոս Թագաւորին որ՝ իրեն օգնական զօրք խրկէ՝ որ հրեաստանը բռնեն տիրապետեն, մակաբայեցոց ձեռքէն հանեն. ու գազարա քաղաքնալ մարդիք խրկեց՝ որ շմաւոնի մէկալ յովհան տղան-

ալ Հոն բռնեն մեռցունեն։ Բայց յոհան աս բաներըս առաջուց իմանալով՝ շուտմը ան ե կողները ձեռք ձգեց սպաննեց, և իր հօրը տեղը ինքը անցաւ քահանայապետ եղաւ։

Հոս կըվերջանա մակաբայեցոց գիրքը, ուր հրէից բոլոր պատմուիր, որ հին կտակարանաց գրքերուն մէջ կըպատմըվի։ Բայց յարմար կերևա որ ասկէց սկսեալ ինչվան յոյ քրիստոս մերոյ ծնունդը, յր մնացած հարուր եռասունը մէկ տարվան ատենի գլխաւոր հրէից ազգին հանդիպածները՝ համառօտ պատմենք, որով շարունակեալ կըկպչի հին կտակարանին պատմութիւնը նոր կտակարանին հետ։

ԳԼ. ԺԷ.

Յաւելած հրէից պատմութիւն մինչև ՌՃԾ ծնունդը։

Ի պատմագրութենն յովսեպոսի։ = Ամ Ցել 3869։ Եւ նախ քան զքրիստոս 131։

Յոհան շմաւոնի որդին որ հիւրկանոսաւ կոչվեցաւ, ինչպէս կըսեն՝ հիւրկանիա գաւառը մէկ յաղթութիւնը ընելու պատճառով. ասիկա պտղոմէոսը յաղթելէն ետև սկսաւ բոլոր հրէաստանի ինքը տիրապետել իրեն հօրը տեղը։ Բայց թէպէտ անկէ ետքը անտիոքոս իր թշնամիներէն խաղաղանալով նորէն բոլոր ուժովը եկաւ եղէմ պաշարեց. բայց յոհան քաջութիւն պատերազմելով բանը հոն հասցուց որ ալ գրեթէ անոր ձարը հատած հետը հաշտութիւն ըրաւ։ Բայց աս անտիոքոս անչափ բարեկամացաւ յոհանի հետ, և քաջութիւն դիրեն անանկ մեծ կըսեպէր անիկա, որ պարսից դէմ պատերազմ ելլալու ատենը յոհաննալ իր զօր-

քովը հետը առաւ, որ հոն շատ յաղթուիներ ըրաւ։ Այլ ետև անտիոքոսի բանը ձախորդ երթալով երբոր ինքը զինքը ըսպաննեց, ու ան պատճառով զրբին որ ցրվեցան, անատենը յոհան փառաւորապես հրեաստան դարձաւ, ու բոլորովին ազատուի գանելով հրեաստանի սահմանը նորէն մեծցուց, բոլոր քովը եղած մանրը ազգերը քաջուքի իր տակը առաւ։ Այլ ասոնց թէ աս ալ կրպատմվի որ՝ ան ատենները հրեից մէջ սադուկեցիի ու փարիսեցիի աղանդները տարածված ըլլալով, յոհան ետքերը զինքը սադուկեցիներուն կողմը ցրցուց. որով մակաբայեցոց բարի անունը աւրեց, և ասով ինքնալ իր զաւկըներովը հրեից ատելի եղաւ։

Յոհանի հինգ տղոցը մէջէն արիստոբուլոս ըսածը՝ հօրը մեռնելէն ետև առաւ իշխանութիւնը, ու ինքը զինքը հրեաստանի թագաւոր անվանեց։ Այս աս անունովս հաստատ պահելու համար՝ իր մարը՝ որ անալ իշխանութիւն ետևէ էր՝ մեռցուց. ու իրեք եղբարները բանտի մէջ գոցել տրվաւ. և մէկալ եղբարը անտիգոնոս ըսած, որ իրէն թագաւորութիւն ընկեր էր առեր, անգամմը պատերազմէն յաղթուելէ դառնալինին, անոր վրայալ արիստոբուլոս կարծիք առնելով՝ թէ ինքը կուզէ թագաւորութիւն յափշտակել. անոր համար անողորմաբար ան ալ մարթել տրվաւ։ Այլ ՅՅ դատաստաննալ շատ չուշացաւ՝ վրան հասաւ, որ մէկ տարիէն աւելի չի քաշեց իր իշխանութիւնը. հապա ինչպես կրպատմէն, ուր որ իր եղբօրը անմեղ արունը թափել տրվաւ՝ անտեղը իրմէ այնքան արուն եկաւ՝ որ ալ խրխտրված ինկաւ հոգին փչեց։

Արիստոբուլոսի կնիկը զաւակ չունենալով երկանը մեռնելէն ետև իր տագերը մէկը աղէքսանդրոս յանձնէոս ըսածը՝ բանտէն հանել տրվաւ, ու հետը կարգըվեցաւ, և առջի երկանը տեղը անիկա թագաւոր ընտրեց։ Սակայն երբոր Իշխանուհիը ձեռք ձգեց՝ թէպէտ պատերազմական քաջութիւն հրէաստանի սահմանը շատ մեծցուց. բայց իր անկարգութիւնը և մանաւանդ անգութութիւնը սաստիկ ատելի եղաւ հրէից, անանկ որ՝ ալ սկսան դաղտուկ ետևէն պրտրտիլ որ զինքը ըսպաննեն։ Աղէքսանդրոս աս իմանալով՝ աւելի կատղեցաւ, և ինչպէս կրսեն՝ վեց տարվան մէջը յիսսուն հազար հոգիի գլուխ կտրեց. և մէկ հեղմալ ուրիշ հարիւր հոգի հրէից մեծամեծներէն, որ աս իրեն ըրած բռնակալութիւնները չէին հաւներ՝ իրեն դէմ կըխօսէին, անանկ բռնել տրվաւ՝ ու ինքը սեղան նստած ուրախութիւն ուտել խմելու ատենը՝ մէկէն ամանք խաչի վրա կախել տրվաւ. և աս հերիք չէ, ան ողորմելիներուն կնիկները ու զաւակները իրենց աչաց առջևը բերաւ մորթել տրվաւ։ Աղէքսանդրոս թագաւորը ետքերը չափէն աւելի զինքը գինիի տալով, և ան պատճառովը իրեք տարիալ հիվանդութիւն քաշելէն ետև՝ իր Իշխանուհը քանը եօթը տարին մեռաւ։ Յետևէն թէպէտ երկու որդիք թողուց մէկը հիւրկանոս՝ ու մէկալը արիստոբուլոս ըսած, բայց ասոնք դեռ պզտիկ ըլլալով թագաւորուհ Ժառանգուհիը իր աղէքսանդրա ըսած կնկանը յանձնեց. որ ան ալ քհնայպետութիւնը հիւրկանոսի տրվաւ, ու միան թագաւորական կառավարուհիը ինքը կընէր, փարիսե-

ցիները առաջ քաշելով՝ և անոնք իրեն կռնակ ընելով. որովհետև ինչպէս կրսեն՝ ան ժամանակները աս փարիսեցիները բռներ էին, և բենց խօսքը խիստ անցուկ էր։

Զէքսանդրա Թագուհին՝ որ սողոմէալ կրսվի, ինը տարի խելքը ու խաղաղութիւն կառավարելէն ետքը երբոր մեռաւ՝ բոլորովին հիւրկանոսի ձեռքը մնաց իշխանութիւնը։ Այց հիւրկանոս մէկ թուլ ու անզօր մարդմը ըլլալով՝ և արիստոբուղոս՝ իր եղբարը անոր ներկայ՝ յանդուգն ու տաքարուն՝ (որ իրեն մօրը ատենէն ինքը գլուխ քաշեր էր,) հիւրկանոսի վրան պատերազմ ելաւ. ու հիւրկանոսը յաղթըվելով դէմ չի կրնալով դնել՝ խոնարհեցաւ գնաց հաշտուի խնդրեց եղբօրմէն։ Արիստոբուղոսալ աս դաշամբ հետը հաշտուիը ըրաւ որ՝ թագաւորական ու քահանայապետական իշխանութիւնը ինքը ընէ, հիւրկանոս երթա իր տունը հանգիստ նստի։ Բանկ իրեք տարիի չափ խաղաղութիւն կենալէն ետքը՝ մէկ անդիպատրոս ըսած ունևոր մարդմը եդոմայեցի կամ ասկաղոնացի, նորէն հիւրկանոսը տրդեց որ գնաց արետաս արաբացոց թագաւորին ինկաւ՝ որ իրեն իրաւունքը պաշտպանէ. արետասալ զօրքով արիստոբուղոսի վրա եկաւ, ու արիստոբուղոսը փախցունելով ինքը սկսաւ հրէաստանի վրա տիրապետել։ Ինչման որ սկաւրոս ըսած մէկ հռոմայեցոց զօրապետմը արիստոբուղոսէ չորսհարիւր քանքար առաւ՝ արետասի աչքը վախցուց, որ եղէմ ելաւ գընաց. ու նորէն արիստոբուղոս հիւրկանոսի վրան վազեց եօթըհազար հոգի ջարդեց, ասնանկ ինքը առաւ տերութիւնը։

Բայց ան ատենները պոմպէոս Հռոմայեցոց մեծ զօրապետը ասորեստանի կողմերը գտնը-վելով, (որ տիգրան Հայոց թագաւորը Հռոմայեցոց հետ հաշտութիւն ընելով իրենց թշնամուցեր էր, որով բոլոր հրէաստանը Հռոմայեցոց տէրուն ներքեւը անցեր էր.) աս երկու եղբարքս՝ հիւրկանոս ու արիստոբուղոս՝ պոմպէոսի պարգևներով դեսպան խրկեցին, աղաչեցին որ իրենց դատաստանը ինքը կտրէ՝ իրաւունքը ցրցունէ։ Պոմպէոսալ երբոր հրէաստան երթալու եղաւ որ աս բանը տեսնէ, արիստոբուղոս իր վրա վախ ունենալով սկսաւ բերդերը ամուրցունել ու պատերազմի պատրաստութիւն տեսնել։ Բայց աս բանը աւելի գէշ եղաւ, ինչու որ՝ պոմպէոս ալ թշնամութիւն գնաց եղէմը զարկաւ առաւ, ու հիւրկանոսը նորէն քահանայապետ ու թագաւորդրաւ. և հրէայքը Հռոմայեցոց հարկատու ընելով, աս տուրքերուս անդիսպատրոսը վերակեցու դրած՝ ինքը արիստոբուղոսը իր զաւկներովը կապած հետը առաւ որ՝ անանկ յաղթութիւն Հռոմ դառնա։ Բ. Ճամբորդութեանմէջը աղէքսանդրոս ըսած արիստոբուղոսի տղոց մէկը ձեռքէն փախաւ հրէաստան եկաւ ու իրեն հետ խելմը զօրք ժողվեց մէկ քանի բերդմը առաւ՝ սկսաւ Հռոմայեցոցմէ գլուխ քաշել տիրապետել. անոր վրայալ գաբիանոս Հռոմայեցոց զօրապետը հասաւ յաղթեց ցրվեց իրենք, ու աղէքսանդրոսը փախցուց։ Լուրը տարին ետքը արիստոբուղոս իր մէկալ անտիգոնոս ըսած տղովը Հռոմայի բանտէն ինքնալ փախած հրէաստան եկաւ, և երբոր աղէքսանդրոս տղին հետ պատրաստուի կրտես-

ներ որ նորէն գլուխ քաշէ, հռոմայեցիք բրո-
նեցին զինքը ու նորէն իր երկու տղաքներովը
հռոմ խրկեցին։ Ինկէ ետքնալ Թէպէտ յու-
լիոս կայսեր հրամանովը ազատեցան, բայց
ինքը արիստոբուղոս մէյմալ ետ չի դարձաւ,
հապա հոն պոմպէոսի բարեկամներէն դեղով
մեռաւ, ու աղէքսանդրոսալ եկաւ անտիոք
քաղաքը բռնըվեցաւ՝ հոն ըսպաննըվեցաւ։
Ի՛նչ առեններբս յուլիոս հռոմայեցոց կայսրը՝
պոմպէոսի Թշնամին՝ ասորեստանի կողմերը
գտնըվելով, Թէպէտ անտիգոնոսը արիստո-
բուղոսի որդին՝ գնաց լալով անոր ոտքը ին-
կաւ՝ ու իր հօրը և եղբօրը մահը առջևը դնե-
լով, (որ միան իրէն կողմը ըլլալուն համար՝
պոմպէոսի բարեկամներէն սպաննըվեցան,)
հրէաստանի իշխանութիւնը ինքը ուզեց առնել.
բայց բանմը չիկրցաւ ընել. որովհետև ան-
դիպատրոս, (որ հիւրկանոսի հետ խիստ բա-
րեկամութիւն կապվելով, մէյտեղ եղբօրպէս կը-
կառավարէին հրէաստանը,) յուլիոսի աչքը
անանկ մտած էր՝ որ՝ նորէն անոնց իշխանութիւը
հաստատեց յուլիոս։ Դաքը անդիպատրոս կա-
մաց կամաց կառավարուե մէջ խոթեց իր եր-
կու որդիքը, մէկին անունը փասայել ըսած
որ եղէմ դրաւ, և մէկալը հերովդէս՝ գալի-
լեայի կողմերը։ Ի՛նչ երկուքսալ իրէնց կառա-
վարուե մէջը շատ խելք և քաջութիւներ ցրցու-
նելով՝ ամէնուն սիրելի եղան, մանաւանդ
հերովդէսը. անանկ որ՝ հիւրկանոսի անունը
միան կար, ու բոլոր կառավարուելը անդիպատ-
րոս իր տղացմովը կըտեսնէր. ինչվան որ ինք-
նալ մէկ ուրիշմը դեղած մեռաւ. ու անկէ
ետքը հերովդէսալ աւելի երես գտնելով հռո-

մայեցոցմէ՝ սկսաւ ինքնիշխան Թագաւորի-
պէս վարել իր տէրութիւնը։

Լսելով անտիգոնոսնալ ինչպէս ըսինք՝ տես-
նելով որ հռոմայեցոց աղաչելով բանմը չիկրը-
ցաւ ընել. դարձաւ բազափրան ըսած Հայոց
մեծ զօրապետին դիմեց, (որ տիգրան Թա-
գաւորը զինքը նորէն շատ զօրքով հռոմայեցոց
դէմ խրկեր էր.) ու անոր խոստացաւ որ՝ ե-
թէ հիւրկանոսի տեղը զինքը եղէմի քէնայա-
պետ ու Թագաւոր դրնէ, իրէն հազար քան-
քար ոսկի՝ և հինկհարուրալ աղվոր կնիկներ
տա։ Հիւրկանոս ու փասայէլ տեսնելով բա-
զափրանի մեծ ուժը, որ զօրքը գնել զօրա-
պետին ձեռքը տրված՝ վրանին խրկեց. ալ
դէմ չի դրին՝ հետը հաշտուի ըրին, սիրով ըն-
դունեցան իրենք. բայց հերոդէս աւելի շատ
դէտ փրթաւ, որ շուտմը տունը տեղը ժող-
վեց գնաց մէկ անառիկ բերդմը մնաւ. ու
հետքը անկեց ալ մինաւոր ելաւ հռոմ փախաւ։
Հետքը երբոր հիւրկանոս ու փասայէլը անանկ
խափված ելան բազափրան զօրապետին քով
դացին՝ որ իրենց բանը հոգա. անատենը բա-
զափրան երկուքնալ կապած անտիգոնոսի ձեռ-
քը տրվաւ։ Անտիգոնոս ալ մէկէն հիւրկա-
նոսի անկաձնները կտրել տրվաւ, կիմ ինչպէս
կրսեն՝ կատղած ինքը վրան վազեց խածնե-
լով փրցուց, որ թէ մէկմնալ բանը փոխվինէ՝
քահանայապետ չիկրնա ըլլալ. ինչպէս մով-
սիսական օրէնքը կարգիլէ, որ այսպիսի պա-
կասաւոր մարդ քահանայապետ չըլլա։ Փա-
սայէլնալ բանտը դրած՝ ձեռվրնէրն որ կապ-
ված կեցեր էր, յուսահատութէն ինք իրեն
գլուխը քարի զարնելով մեռցուց զինքը։ Ուս-

տի բազափրան՝ անանկ անտիգոնոսը եղէ
Թագաւոր ու քահանայապետ դնելով, հիւ
կանոսը բռնած ուրիշ հրեից գերիներուն հե
տը առաւ Հայաստան տիգրան Թագաւորին
տարաւ։ Այսքը ատենով աս հիւրկանոսը Թե
պէտ գերութիւն դարձաւ. բայց մէկմընալ
քահանայապետուի չըրաւ։

Իսկ հերովդէս ինչպէս սկսինք՝ հռոմայ
աս բաներըս պատմեց, անկէց անտոնինոսի
հիւպատոսին ձեռքովը, (որ առաջուց իրեն
հօրը և իր հետը շատ բարեկամ էր,) հռո
մայեցոց շատ տուրք խոստանալով բոլոր հր
էաստանի Թագաւորութիւնը ինքը առած, հռո
մայեցոց զօրքովը դարձաւ անտիգոնոսի վրա
եկաւ։ Անտիգոնոսալ հայոց մնացած զօրքը
իրեն կրռնակ ունենալով իրեք տարիի չափ
անանկ դէմ դրաւ հերովդէսի՝ որ բան չիկրը
ցաւ ընել։ Բայց ետքը երբոր եկաւ անտոնի
նոս հռոմայեցոց մեծ զօրապետը՝ ու սոսին
ասած զօրապետը վրան խրկեց, հինգ ամսի
չափ պաշարելէն ետև եղէմը առաւ՝ հերով
գէսը հոն Թագաւոր դրաւ, ու անտիգոնոսը
կապած անտիոք քաղաքը անտոնինոսի խրկեց
որ հերովդէսի ուզածինպէս ան տեղը խայտա
ռակաբար գլուխը կտրել տրվաւ։ Այս ան
տիգոնոսը պիտի ետքի իշխանը եղաւ մակա
բայեցոց ըսած զևտացի քահանայական ցեղէն
և անկէ ետև ալ մէյմընալ հրեից ազգէն իրեն
իշխան չի նստաւ. որով հետև քսի մեսիային
գալստեան ատենը ալ եկեր հասեր էր, որ ինքն
էր Աշմարիտ Թագաւոր և քահանայապետ
որ ասկէ եռասունվիրեք տարիէն ետքը ծնաւ
ինչպէս որ յակոբ նահապետը մարգարէացեր

Եր, որ կլսէ՝ ծննդոց. խԹ. 10. Ա՝է պակասեաց
ցէ իշխան 'է յուդայ, և Ի պէտ չերանայ նը՝ մինչև
եկէսցէ նա, որոյ է՝ուն է հանդերձեալն, և նա է ակնկա
լու�հեթանոսաց։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ

Մ. ԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՀԱՒԱՏԵԱԼ Ի ՀՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ։

ԳԼ. Ա.

Գաբրիել հրեշտակապետը աւետիս կուսին զաւրիայի և կուսին մարիամու։

Ղուկ. ա։ = Մմ Յեր. 3999։ քրիս. ։

Այրը որ ալ աստուծմէ սահմանած ժամանակը հասաւ, որ մեսիան աշխարքիս փրկիչ խրկէ, ինչպէս մարգարէին բերնովը շատ անգամ խոստացեր էր պինտ առաջ անոր կարապետը (յիշ՝ խրլաւուզը,) ուղեց որ խրկէ, այս կերպովը։ Վերը ըսած հերովդէսի թագաւորութեան տեսնը. իբր անոր եռասունը հինգ տարին, հրէաստան մէկ քահանայմը կար զաքարիա անունով, որ կիսիկմը ուսնէր եղիսաբեթ ըսած. ասոնք երկուքնալ ալ արդար, ամուլ էին՝ որ ինչվան ծերութեան տեսնին իրենց զաւակ չեր եղած։ Այս զաքարիաս անգամմը եղէմի տաճարը խորանը մտած ոյ առջևը

խնկարկելնին՝ հրեշտակմը իրեն երևցաւ, ու ըսաւ. մի վախնար զաքարիա՝ քու աղօթքդ ած լսեց, որ քու եղիսաբեթ կնիկըդ քեզի որդիմը պիտի ծնանի, անոր անունը յովհաննէս դնես, (որ կընշանակէ՝ շնորհք այ,) և ան զաւակը՝ քեզի և ուրիշ շատ մարդիքներուն ուրախութիւն պատճառ պիտի ըլլա. և այ խիստ սիրելի ըլլալով, դեռ մօրը փորէն հոգւոյն սրբոյ շնորհքովը պիտոր լցվի. որ իսրայէլացոցմէ շատ մարդիք պիտոր դարձունէ իրենց ՝որ աստուծուն, ու անոր առջևէն երթալով՝ եղիա մարգարէինպէս, նախանձայոյզ քարոզութիւն ժողովրդոց սիրտը անոր հետ պիտի կապէ։ Եւ ասալ ապրսպրեց հրեշտակը որ՝ աս զաւակըս այ ուխտաւոր ըլլալուն համար, զգուշանա որ գինի ու օղի չի խըմէ։ Զաքարիա երբոր աս լսեց՝ տարակուսեցաւ որ՝ ըսաց, ատ ինչպէս կըլլա՝ որ ես ծերացեր եմ՝, ու կնիկսալ տարիքը առած է։ Հրեշտակնալ իրեն ըսաւ թէ ես գաբրիէլ հրեշտակն եմ՝, որ ՝ած իս խրկեց աս բանըս քեզի աւետիս տալու. բայց դուն որ ըսածիս չես հաւատար, անոր համար ահա քեզի պատիժ ըլլա՝ որ համր (այ՝ տիլսիզ) մնաս ինչվան ան օրը՝ որ ըսածս իր ատենովը կատարվի։ Եւ ըսածինպէս շուտմը անտեղը զաքարիայի լեզուն կապվեցաւ պապանձեցաւ. ետքը երբոր եկաւ տուն գնաց՝ մէկ քանի օրէն ետև եղիսաբեթը յղացաւ, ու անալ պատճառը իմանալով՝ փառք կուտար այ՝ որ աս շնորհքս իրեն ըրաւ։

Յետոյ վրա հինկ ամիս անցնելէն ետև՝ ՝ածնոլէն գաբրիէլ հրեշտակը խրկեց գալիլէայի մէկ քաղաքը նազարէթ ըսած, որ հոն կը-

բնակէր կոյսն մարիամ, (որ նշանած էր յովսեփայ արդարոյն հետը՝ որ անալ իրենպէս դաւիթ մարգարէին ցեղէն էր. և կուսին մարիամու եկաւ հրեշտակը բարև տալով ըսաւ, Ո՜-բարի՛ եր էէրէրեալ կամ էն ը-էհոտ, որ ընդ ԷԷ։ Կոյսն մարիամ ան հրեշտակին որ տեսաւ, և աս բանս լսեց՝ շփոթեցաւ, սկսաւ ինքիրեն մտածել թէ՝ աս բարևս ինչ պիտոր ըլլայ։ Հրեշտակնալ նորէն դարձաւ ըսաւ. մի վախնար մարիամ, դուն այ այնչափ սիրելի եղար՝ որ ահա պիտոր յղանաս որդիմը ծնանիս, ու անոր անունը՝ Յիսուս դնես, (որ կրնշանակէ՝ փրկիչ կամ ազատիչ,) որ մեծ պիտոր ըլլա, ու որդի բարձրելոյն պիտի ըսվի. և ոՏՏալ անոր դաւիթ հօրը աթոռը իրեն պիտի տա, ու յաւիտեանս յաւիտենից թագաւորէ յակոբայ՝ Յիսրայէլացոց ազգին վրա։ Ինչ ատենը կոյսն մարիամալ դարձաւ հրեշտակին ըսաւ՝ ինչպէս ատ բանը լինծի պիտոր ըլլա՝ որ ես էրիկ մարդ չեմ ճանչնար։ Հրեշտակնալ պատասխան տըվաւ թէ՝ հոգին սրբ քեզի կուգա, ու ՏՏայինն ամենակարողութիւնը ատ բանը կըկատարէ. որովհետև ան սրբ զաւակը որ քեզմէ պիտոր ծնանիսէ՝ որդի այ պիտոր ըսվի։ Ու աս ալ գիտնաս որ ըսաւ, քու եղբսաբեթ ազգականդալ՝ որ ամուլ կըսվէր, աս ծերութեն ատենը անալ վեց ամիս կըլլա որ յղի է. որովհետև այ առջևը անկարելի բան չիկա։ Ինարիամալ ան ժամանակը ըսաւ. ահա ես այ աղախինն եմ. լինծի ինչպէս որ ըսիրնէ՝ անանկ թող ըլլա. և աս խօսքս ըսելուն պէս՝ յղացաւ քամն մեր իր ամենամոր արգանդին մէջը։ Ու այնպէս հրեշտակը քովէն եկաւ գնաց։

ԳԼ. Բ.

Կոյսն Մարիամ աչքիլուս կերթա Եղիսաբեթի. ու Եղիսաբեթի յուշանդէս դրուելը կը ծանանի։

Ղուկ. ա։

Աւետումը առնելէն ետքը՝ կոյսն Մարիամ ելաւ որ Եղիսաբեթի աչքիլուս երթա՝ տեսնէ. ու անոր տունը մտած ինքը բարևելուն պէս, Եղիսաբեթի փորուն մէջը վեց ամսվան յղացած տղան՝ շարժեցաւ, և ան ատենը շուտմը Եղիսաբեթ հոգւով սրբ իմացաւ թէ որպիսի ընտրհքով լցված է իրեն քովը եկողը, ուստի կանչելով կուսին Մարիամու ըսաւ. (Երանելի ես դու՝ է կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո. ապ ինչ մեծ պատիվ է ինծի՝ որ իմ աստուծուս մայրը ելլէ իմ ոտքս դա. և ապ բանով կիմանամ՝ որ, քու բարևելուդ ձանը լսելուսպէս՝ տղաս փորուս մէջը ուրախութէն շարժեցաւ. և երանի ան մարդուն որ այ յայտնած խորհուրդներուն կը հաւատա՝ թէ ատնովը պիտի կատարվի։ Կոյսն Մարիամ ալ ան ժամանակը ընտրհակալութիւն փառք տալով այ, սկսաւ ան խորհրդաւոր օրհնութիւնը ըսել. Այ՝ Եծացուսոյն անդ իմ ոգի, ևն. ու անանկ Եղիսաբեթի քով իրեք ամիս կենալէն ետքը՝ նորէն իր տունը դարձաւ։

Եղիսաբեթ ինն ատենը երբոր հասաւ՝ որ տղան ծնաւ, իր ազգականները քովը ժողվեցան շատ ուրախութիւն ըրին՝ ու փառք կուտային այ։ Երբը ութերորդ օրը մոլխական օրինացպէս տղան թլփատելուն ատենը ուզեցին որ անունը հօրպէս զաքարիա դնեն. մարը

չէ կըսեր՝ հապա յովհաննէս դրբէք. ուրիշները չէին ուզեր, կըսէին թէ չըլլար՝ ձեր աղգին մէջ սա անունը չիկա. եւ նշմարով հօրը որ հարցուցին թէ՝ ինչպէս կուզէ. խնայլ չիկրնալով բերնով ըսել՝ երբոր տախտակը ձեռքը առաւ սկսաւ գրել թէ՝ Յովհաննէս է ատոր անունը, ան ատենը շուտմը զարբիայի լեզուն արձրկվեցաւ, ու ինքնալ հոգւով սրբվ լցված սկսաւ մարգարէանալով ան օրհնուիր ըսել. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, եւն։ Այս հրաշալի բաներըս ան կողմերը չորս դին որ հռչակվեցաւ, լսողները կրսոսկային ու զարմանալով մէյմէկու կըսէին թէ՝ արդեօք որպիսի մեծ մարդ պիտոր ըլլա սա տղան որ Տայ հնորհքը միշտ վրան է։ Յովհաննէսալ անանկ սրբութիւն մեծնալունպէս՝ գնաց անապատը քաշվեցաւ կեցաւ՝ ինչվան որ ժամանակը եկաւ, Աստուած ինքը խրկեց որ երթա խրայէլացոց մէջը քարոզութիւն ընէ։

ԳԼ. Գ.

Յայտնութիւն Յովհաննէսի։

Գաս. Ա։ Ղուկ. Բ։ = Ամ Տիր. 4000։ քրիս. 1.

Կոյսն Մարիամ երբոր եղիսաբեթի քովէն ելաւ՝ նազարէթ իր տունը դարձաւ. յովսէփ իր նշանածը անոր դրսի նշաններէն տեսնելով որ յղացեր է, և չի գիտնալով թէ՝ հոգւով սրբվ բանը եղած է, շատ շըփոթվեցաւ վրան. բայց ինքը բարի ու արդար մարդ ըլլալով՝ չուզեց մովսիական օրինաց ըսածինպէս բանը դուրս ձգէ՝ խայտառակէ զինքը, հապա կըմտմտար որ առանց ձանձուն հանելու՝ քո-

վէն զինքը Ձամբէ։ Երբոր Յովսէփ աս բանը ասանկ միտքը դրած կըքնանարկոր, հրեշտակ ՅԷ երևցաւ իրեն ու ըսաց, Յովսէփ որդի Դաւիթի, մի վախնար Մարիամ Հարսդ քովդ պահելու. գիտնաս որ անոր յղուելը Հոգւով սրբի եղած է. ուստի անկէ ծնած տղին անունը՝ ՅԻՍՈՒՍ դնես, պատՁառն որ՝ ան պիտոր ազատէ իրեն ժողովուրդը իրենց մեղքերէն։ Եւ գիտնաս որ անոր վրա կըկատարվի ան ՅՕ ըսածը Եսայի մարգարէին բերնովը, թէ՝ Ահա կոյսն յղեսցի և ծնցէ որդի, և կոչեսցին զանուն նոր Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստ։ Եւ քանիս վրա Յովսէփ որ արթընցաւ, ալ սիրտը հանգչեցաւ, հրեշտակին ըսածինպէս ըրաւ. իր քովը պահեց Մարիամ կոյսը, ու միչտ հետը սըրբութիւն ապրեցաւ։

Երբոր Յսի ծնանելուն ատենը եկաւ, որ մարգարէներուն ըսածինպէս բեթղէհէմ քաղաքը պիտոր ըլլար. Աստ անանկ կարգաւորեց որ՝ օգոստոս ըսած՝ ան ատենի հռոմայեցոց կայսրը հրաման հանեց՝ որ բոլոր իր իշխանութիւնը ներքև եղած մարդոց անուններնը՝ իրենց ցեղովը և քաղաքներովը գրվին։ Եւ պատՁառովը Յովսէփալ կոյսն Մարիամ հետը առած նազարեթէն ելաւ բեթղէհէմ երթալու՝ իրենքալ դաւիթի մարգարէին ցեղէն ըլլալուն համար, որ բեթղէհէմցի էր։ Հոն հասածնինպէս՝ կուսին Մարիամու ատեննալ եկաւ որ իրեն առջինեկ մէկհատիկ զաւակը ծնաւ. և ան իրենց մտած իջևանին (ՅՕ՝ խոնախին) մէջը օրորոց (ՅՕ՝ պէշիկ) կի՞ ուրիշ յարմար տեղ չիգտնալով, նոր ծնած տղան խանձաբուրով փաթաթած մնուրը (ՅՕ՝ կենդանիներուն եէմլիխը) դրաւ։

Գիշեր առեն ըլլալով յսի ծնունդը, հովիվ-
ներ կային անկողմերը, որ բացը արթուն կե-
ցած իրենց ոչխարները կըպահէին. անառեանը
առանց սաստիկ լուսաւորութիւն հրեշտակ այ
երևցաւ, որ իրենքալ ահռելեցան մնացին։
Հրեշտակը իրենց ըսաւ, մի՛ վախնաք. ես ե-
կեր եմ մէկ մեծ ուրախական բանը ձեզի ա-
ւետիս տալու, որ ան՝ բոլոր աշխարքի ալ ու-
րախութիւն է. գիտնաք որ դաւթի բեթղէհէմ
քաղաքը ձեզի ասօր փրկիչ ծնաւ, որ է օծեալ
Տէր, կի՛ք ա՛ն. ու նշանը աս ըլլա ձեզի՝ որ
դուք անիկա Հանէնաք. կերթաք մէկ տղեկմը
կըգտնէք խանձարուրով փաթաթած՝ մսուրը
դրած։ Լ՚ս ըսելուն պէս մէյմալ յանկարծա-
կի ուրիշ անհամար հրեշտակներ անոր հետը
երևցան, ու սկսան այ օրհնութիւն կարդալով
ըսել. Փառք ՝ի բարձունս այ, և յերկիր խաղաղութիւն
՝ի մարդիկ հաճութիւն։ Յետքը երբոր ալ երկինքը ե-
լան անտեսանելի եղան ան հրեշտակները, հո-
վիվները շուտմը ելան բեթղէհէմ եկան. ու
հոն փնտռելով երբոր գտան մարիամը ու յոսէ-
փը՝ և հրեշտակին ըսածինպէս ան տղեկը
մսուրը դրած, շնորհակալ ըլլալով փառք կու-
տային այ. և ով որ աս բաներըս հովիւներէն
կըլսեր, ամմէնքը կըզարմանային։ Նէկ եան
ութը օր եղածինպէս՝ մովսիսական օրէնքը
կատարելով աս տղեկս թլփատեցին. ու անուն-
ը Յիսուս դրին, ինչպէս որ հրեշտակը առաջուց
իրենց ապրսպրեր էր։

ԳԼ. Գ.

Իրեւ մոգերը յետ երկրպագութեան, և ան պատուհասը հերովդէս թեթղեհեմի մանկունքը էջարդէ։

Մատ. բ։

Յետի ծնած ատենը՝ իրեք մոգ, կամ ինչպէս կըսեն՝ աստղաբաշխ (յայ՝ մինէՀիմ) Թագաւորներ՝ արևելքի երկիրներէն մէկտեղ միաբանած՝ եղէմ եկան, ու ասոր անոր կըհարցունէին թէ՝ ուր է ան նոր ծնած հրէից Թագաւորը. որ մենք անոր աստղը տեսանք մեր երկիրը՝ որ ղինքը կըցրցունէր, անոր համար եկեր ենք որ իրեն երկրպագուն ընենք։ Հերովդէս,) որ հրեաստանի Թագաւորուն ինքը յափշտակեր բռներ էր,) աս բանս որ լսեց՝ շատ վախցաւ չփոթեցաւ, և բոլոր եղէմցիք ալ ան պատճառով տակնուվրա եղան։ Աստի հերովդէս քովը կանչեց բոլոր հրէից քահանայապետները ու կարգացողները, հարցուց իրենց թէ՝ ան քրիստոս կամ գալու մեսիան՝ ուր տեղ պիտոր ծնանի։ Նոնքալ ըսին թէ՝ բեթղեհեմ՝ քաղաքը, ինչպէս որ միքիա մարգարէն կըգրէ։ Նոատենը հերովդէս գաղտուկ քովը կանչեց ան իրեք մոգերը. և տեղն 'ի տեղը աստղին երևնալուն բանը անոնցմէ իմանալէն ետև՝ Թող տրվաւ որ բեթղեհեմ երթան. ու իրենց ապրատրեց որ՝ աս ծնած տղան գտնելու որ ըլլան, անոր տեղը իրենալ իմացունեն, որ ինքնալ երթա անոր երկրպագութիւն ընէ։ Այրբոր մոգերը հերովդէսի քովէն ելան, ան աստղը նորէն իրենց երևնալով առջևնին ինկաւ ինչվան բեթղեհեմ բերաւ.

ու երթալով՝ յոի եղած տեղին վրա կենալով անանկ իրենց ցրցուց։ Նոնքալ երբոր մոան տեսան յո աղեկը իր մօրը հետը, ուրախանալով անոր առջևը ինկան երկրպագուի ըրին՝ ու հանեցին իրեն պարգև տրվին. ոսկի, կընդրուկ (կամ անուշահոտ խունկ,) ու զմուռս (կամ ասբլակնտ։) Նոա՝ ան գիշերը մոգերը հրեշտակին իմանալով հերովդէսի չար միտքը, ալ անոր քով չդարձան, հապա մէկ ուրիշ ճամբովմը երան իրենց տեղը գացին։

Հերովդէս երբոր տեսաւ որ մոգերը մէյմալ քովը չդարձան, շատ սրդողեցաւ. և վախնալով թէ չըլլա որ՝ աս բեթղէհէմ ծնած տղան մէկ օրմը ելլէ իր ձեռքէն թագաւորութիւնը առնէ, անոր համար զինվորներ խրկեց՝ ջարդել տրվաւ բոլոր բեթղէհէմի և անոր քովի տեղերուն մանրը տղաքը՝ երկու տարվընէ՝ի վար, որ անոնց մէջը յիսուսալ ըսպաննըվի։ Այց խաբվեցաւ հերովդէս. պատճառն որ՝ յոսեփի առաջուց հրեշտակին իմանալով հերովդէսի չար կամքը, յոր առեր մօրը հետ եգիպտոս քաղաքը փախուցեր էր. ու հոն կեցաւ՝ ինչվան որ հերովդէսի մեռնելէն ետքը նորէն հրեշտակը երևցաւ ըսաւ որ իրէ ելլացող երկիրը դառնա։ Յոսեփալ երբոր եկաւ տեսաւ որ արքեղայոսը հերովդէսի տղան թագաւոր նստեր էր, (որ անոր չարութիւնալ հօրմէն շատ վար չէր մնար,) վախցաւ նորէն եղէմ կամ բեթղէհէմ երթալ, հապա հրեշտակին առաջնորդութեամբը գալիլեայի կողմերը նազարէթ քաղաքը գնաց բնակեցաւ, որ արքեղայոսի իր եղբօրը՝ անդիպաս հերովդէս ըսածին իշխանութեան տակն էր։

ԳԼ. Ի.

Յոգ. տաճարը ընծայելը. և տասներկու տարվան տղայ ճարին հիշը հերոնելը։

Գլուկ. Ի։ = Մատթ. 12։

Մոգերուն գալէն առաջ, կամ (ինչպէս կրսեն ուրիշները,) անոնցմէ քիչմը ետքը՝ բեթզէհէմի տղոցը կոտրըվելէն առաջ, երբոր ալ յա մանուկը քառասուն օրվան եղաւ, մովսիսական սրինացը բաածինպէս՝ երկու տատրակի (յա՝ խուտրիի) կամ երկու աղաւնիի (յա՝ կէօվէրճինի) ձագ հետերնին առած՝ յա եղէմի տաճարը տարին որ ա՝յ ընծայեն։ Ինն ատենը եղէմ մէկ ոբ ու արդար ծերունի մարդմը կար սիմէոն անունով, որ մեսիային կրսպասէր, ու հոգին ոբալ յայտներ էր իրեն թէ՝ ինչվան որ ան չիտեսնէնէ՝ պիտի ինքը չիմեռնի։ Ա՝յ ծերունիսալ ան ժամանակը աստուծմէ իրեն յայտնուի ըլլալով տաճարը եկաւ, ու ուրախութ գիրկը առաւ յա մանուկը՝ փառք տալով ա՝յ ըսաց. որ՝ ինչպէս ըսիրնէ՝ ալ ասկէ ետև թող տուր որ երթա խաղաղութ հանդչի քու ծառատ. որովհետև աս այվրներս տեսան քու աչխարքը գալ փրկելդ. հեթանոսները լուսաւորելով, ու իսրայիլը որքու ժողովուրդդ են՝ աւելի փառաւորելով։ Յաքը դարձաւ դէպ 'ի կոյսն մարիամ, ու իրեն մարգարէանալով ըսաւ թէ՝ ասիկա իսրայեցոց շատին կործանումմ և շատին փրկութի պիտոր ըլլա, և ասոր վրա շատ ներհակուի պիտի ըլլա, այնչափ որ՝ քու սիրտդալ իրրև թէ սրով պիտի խոցվի աս բաներուս համար. (ինչպէս

որ Եսբը Հանդիպեցաւ յոի չարչարանաց ատե-
նը։) Ի ժամանակը անոնա մարգարէնալ,
որ Եօթը տարի երկանը հետ ապրելէն Եսբը
ինչվան ութսունը չորս տարին որբևարի կե-
ցեր էր, ու գիշեր ցորեկ պաքով և աղօթքով
տաճարէն չէր զատվեր. ինքնալ ուրախութ-
փառք տալով ՝այ, յոի մեսիա ըլլալը սկսաւ
քարոզել անոնց՝ որ յուսով կըսպասէին։ Ի-
նանկ օրինաց ըսածինպէս կատարելէն Եսբը՝
մէյտեղ առին յոը՝ նորէն իրենց նազարէթ-
քաղաքը դարձան։ Յետոյ ՝ծածային շնորքովը
օրէ օր սկսաւ աճիլ ու մեծնալ, և իմաստուն
զօրանալ։

Յովսէփ ու կոյսն մարիամ սովորութի ունէին
որ տարին հեղմը զատկին՝ Երուսաղէմ տաճա-
ը ուխտ կերթային. մէկ անգամալ Եբրոր
յոտասերկու տարվան էր, ասանկ որ Եան
ուխտ գացին, անկէց դառնալնէնի՝ ինչպէս
եղաւ որ՝ առանց իրենց գիտնալու յոը եղէմ
մնաց։ Իրենքալ կարծելով թէ ուրիշ ճամ-
բորդներու հետ մէյտեղ կուգա, առջի բերա-
նը հոգ չբրին. Եսբը օրվանմը ճամբա ընեելէն
ետև՝ Եբրոր ասոտիս անդին փնտռեցին՝ որ չի-
գտանենք, նորէն եղէմ դարձան, և հոն իրեք
օր վեր վար պրտրտելէն Եսբը՝ տաճարը գտան,
որ վարդապետներուն մէջը նստած՝ անոնց ը-
սածները մտիկ կըդներ, ու իրենց բաներ կը-
հարցըներ. անոնկ որ՝ ամէն լսողները կը-
զարմանային իրեն իմաստութիւնը ու շնորհալի
կերպով զուրցվածքներուն վրա։ Ի ատե-
նը կոյսն մարիամ զարմանալով դարձաւ իրեն
ըսաւ. որդի, աս ինչ բան ըրիր մեզի, որ ինչ-
վան հիմա կըսրբրկեինք Եսեւ Եդ ինկեր քեզ

կլսնտաէինք։ Յետ ասաւ, իս ինչու ուրիշ տեղ կրփրնտաէիք, չէիք գիտեր որ ես իմ Հօրս տանը մէջ պիտի ըլլամ։ Լսաքը եկաւ հեռ տերնին նազարէթ եկաւ, ու անոնց ձեռաց ներքևը հնազանդութիւն կեցաւ՝ և օրէ օր աւելի աճելով հասակով ու իմաստութիւն, և ճծային ընորհքովը լցեալ, անանկ մարդիկներուն սիրելի կըլլար։

ԳԼ. Օ.

Յոի հրդեհելը, ու սարանայէն դուրս գալը։

Մաս. դ. գ։ Ղուկ. դ. գ։ = Ամ. քն. 30։

Յոսի քսի աշխարքիս յայտնըվելու ատենը համանելով. յովհաննէս մկրտիչ՝ որ ինչման ան ժամանակը անապատը կըՀգներ, այ հրամանովը ինքնալ եկաւ յորդանան գետին քովը. ու սկսաւ ժողովրդոցը ապաշխարուի քարոզելով՝ ասանկ ըսել թէ՝ ապաշխարեցէք, մօտեցաւ այ թագաւորութիւնը։ Յովհաննու մկրտչի քով ով որ կերթար՝ անոր քարոզութիւնը մտիկ կըներ, ու զեղջ կուգար ապաշխարելով մեղքը կրխոստովաներ, յովհաննէս իրենք կըմկրտեր 'ի նշան ապաշխարուն։ Լսաքը բոլոր ժողովուրդը տեսնելով իր բարի վարքը ու սրբակաց կերպը՝ իմացան թէ այ խրկած մէկ մարգմընէ յովհաննէս մկրտիչը. նաև վրան կարծիք գնացին թէ մեսիան ինքը ըլլա։ Այս բանիս համար երբոր մէկալ հրեայքնալ քահանաներ խրկեցին իրեն՝ որ հարցունեն թէ դուն ով ես, յովհաննէս մկրտիչը պատասխան արվաւ թէ՝ ես մեսիան չեմ, հապա անոր կարապետը (այ՝ խրլաւուզն) եմ, ինչպէս եսայի

մարգարէն ըսեր է ինծի համար. Զայն բարբառոյ յանապատի. որ ելեր մեսիային առջևէն կուգամ՝ Ճամբաները շըտկելու ու պատրաստելու, որ իմ ետևէս պիտոր անալ հանին. որ ես արժանիալ չեմ ծառայիպէս անոր կօշիկները (՝ՅՈ՝ ոտից փօստաները) քակելու կիր վերցունելու։ Ես միան ջրով ձեզ կրմկրտեմ՝ ինչան ապաշխարուն. բայց անիկա պիտի ձեզ մկրտէ հոգւով սրբով որ կրակիպէս ձեր մեղքը կերէ։ Երբոր Յովհաննէս աս քարոզութիւնները ու մկրտութիւնները կընէր, յա՝ ալ եռասուն տարվան չափ եղած նազարեթէն յորդանան գետը գընաց՝ որ ինքնալ մկրտըվի։ Յովհաննէս երբոր ինքը տեսաւ, քաւ լեցի ըսաւ՝ ինծի պէտք է որ քեզմէ մկրտըվիմ՝ ու դուն իմ ոտքըս կուգաս որ քեզ մկրտեմ։ Յն ալ իրեն պատասխան տրվաւ. Հիմակու հիմա թող տուր՝ որ ասանկ ըլլա, որովհետև ըսաւ մեզի կըվայլէ որ բոլոր արդարութիւն պարտքը կատարենք։ Այսպէս ըսելով երբոր մկրտըվեցաւ յա, ու ջրէն դուրս ելած աղօթք որ կընէր, յանկարծ երկինքը պատռեցաւ բացվեցաւ՝ լոյս ծագեց, ու հոգին որ աղաւնիի կերպարանքով յոր գլխուն վրա ինջաւ, երկինքէնալ ահաւոր ձանմը եկաւ թէ դուս ես իմ սիրական որդիս՝ որ քեզմէ եմ հաւներ։

Յն մկրտըվելէն ետքը անապատը գնաց քաշվեցաւ. և հոն քառասուն օր քառասուն գիշեր ծոմ պահելէն ետև որ անօթեցաւ, ան ատենը սատանան եկաւ որ ինքը փորձէ. ու ըսաց իրեն, թէ որ դուն այ որդին ես նէ՝ հրամայէ որ աս քարերըս հաց ըլլան։ Յն ալ պատասխան տրվաւ թէ՝ ՝ՅՈ՝ աշաչունչին մէջը գրած է որ՝

միան հացով մարդ չապրիր, հապա բոլոր այ տրված պատվիրանքներովը։ Լսեցը սատանան յոր վերցուց երուսաղէմ տարաւ, ու տաճարին բարձրը աշտարակին (այ՝ խուլէին) վերա կեցուցած, իրէն ըսաւ՝ թէ որ այ որդին եսմ՝ քեզ ասկէ վար ձգէ, որովհետև գրած է (սաղմոսին մէջը՝) թէ ան քեզի համար իր հրեշտակներուն ապրսպրեր է՝ որ քեզ ձեռքերնուն վրա վերցունեն բռնեն՝ որ չըլլա թէ ոտքդ քարի զարնես։ Յիսուս ըսաւ, անտեղ ասալ գրած է թէ, չըլլա որ փորձես քու տէր աստդ։ Լսնկէ ետքը սատանան առաւ յոր մէկ բարձրը լեռանմէ վրա հանեց, անկէց բոլոր աշխարքիս թագաւորութիւնները փառք ու պատիվը ցրցունելով իրէն ըսաւ. աս ամէն բաներըս քեզի կուտամ՝ թէ որ առջևըս իյնես ինձի երկրպագուն ընես։ Լն ատենը յիսուս դարձաւ. գնա՛ ըսաւ քովէս կորիր սատանա. գրըրած է որ՝ քու տէր աստուծուդ երկրպագութիւն ընես, ու ան միան պաշտես։ Լս փորձուինելուս ետև հրեշտակները եկան յոր քովը, ու իրէն սեղան դրան կրծառայեին։ Լսկէ որ ելաւ դարձաւ յոր որ ալ աշխարքիս յայտնըվի. և նորէն յորդանան գետին քովէն անցնելին՝ երբոր տեսաւ զինքը յովհաննէս մկրտիչը, (որ միշտ հոն կեցած կրբարոզէր քոյ աշխարքը գալուն վրա, ու իր քովը մարդիկ առած իրէն աշակերտալ շիներ էր,) յոր իրէն աշակերտներուն ցրցունելով ըսաւ, ահա ան է իմ ձեզի քարոզած քոյ այ դառը, որ աշխարքիս մեղքը պիտի վերցունե։ Լս որ լսեցին՝ ան աշակերտներէն երկուքը ելան յոր ետևէն գացին. և անկէ ետքը ուրիշներալ սկսան յոր աշակերտ ըլլալ։

ԳԼ. Լ.

Կանա գալիլեացոյ դարձնէր, և անկէ ետև դէպ հոն ղբաղած բաները։

Յովհ. Բ. Գ։

Կանա ըսած գալիլեայի մէկ քաղաքը՝ Հարսնիքմը եղաւ. որ հոն յսի մարը կոյսն մարիամ՝ Հարսնեւորներուն մէկն էր. յիս ալ հոն կանչուեցաւ՝ իր աշակերտներովը գնաց։ Լրբոր աս Հարսնիքին մէջը գինին պակսեցաւ՝ որ ալ չի մնաց, կոյսն մարիամ եկաւ յսի ըսաց թէ՝ գինի չունին։ Յետոյ պատասխան տըվաւ, մեր ինչ վրան պէտք է, իմ ատենսալ չէ եկեր։ Բայց կոյսն մարիամ գիտնալով յսի միտքը, ծառաներուն ապրսպրեց որ՝ յիս ինչ որ ըսենի՝ անանկ ընեն։ Լ.ս Հարսնիքին տունը վեց քարէ թակոյկ (յիս՝ ջրի տէստի) կար, որ ամէնն մէկը երկու կամ իրեք մար (յիս՝ քառասուն կամ վաթսուն օխայի չափ) բան կառնէր. յիս հրամայեց որ ասոնք ջրով լեցուն են, ու տաճարաւ պէտին (յիս այլախձի պաշին) բերեն ցրցուն են։ Լ.նոնքալ անանկ ինչման բերանը ջրով լեցուցին, ու տաճարապետին բերին. անալ երբոր համը առաւնի՝ տեսաւ որ պատվական գինի է եղեր. և չի գիտնալով թէ աս ուսկից է, (բայց ծառաները գիտէին, որ ջուրը իրենք լեցուցին,) դարձաւ փեսային ըսաւ թէ, սովորութիւր չէս գիտեր՝ որ առաջ աղէկ գինին կրբաժնեն կուտան, և ետքը երբոր ալ խրմած կրլլան, ան ատենը գէշը կուտան. ու դուն ասոր ներ հակը՝ ինչման հիմա ինչու պահեցիր ատ պատվական գինիդ։ Յիս աս հրաշ-

քովը պինտ առաջ ան մարդիքներուն յայտ նեց իր մեծուքը, և ասով աշակերտներնալ աւելի հաւատացին իրեն։

Ինկէ եկաւ յա՛ իր մօրը և աշակերտներուն հետ կափառնաւոր եկաւ, ու անկէցալ մէկ քանի օրէն ետքը՝ զատկին պատճառովը երուսաղէմ գնաց։ Երբոր տաճարը մտաւ տեսաւ՝ որ հոն տեղը կով՝ ոչխար՝ աղաւնի՝ կրծախեկին, ու լումայափոխները (յա՛ սառաֆիները) նըստած առուտուր կընէին, յա՛ մէկ չըվանէ խարազանմը (յա՛ խամչիմը) շինեց, ու անոնց վըրա սրդողելով իրենք ծեծելով սեղաններն (յա՛ թեզկեահներն) կործանեց, ըստակներն ցրվեց անանկ ամէնքը դուրս վըռընտեց, ըսելով թէ՝ տարէք ասկէց կորսընցուցէք, իմ հօրը տունը առուտուրի տուն մի՛ ընէք։ Ինչ ատենը հըրէաները դարձան իրեն ըսին, ինչ նշանով կրընաս հաստատել մեզի՝ որ դուն ատ բանը ընելու իրաւունք ունենաս. յա՛ ալ առակով իրենց պատասխան տրվաւ, (իբր թէ ըսելով՝ նշանը աս ըլլա,) քակեցէք ըսաւ ատ տաճարը, ու տեսնէք որ ես ան իրեք օրվան մէջը նորէն կայնեցուցնեմ։ Հրէաներնալ ըսին թէ՝ քառասունըվեց տարի շինվեցաւ աս տաճարը, դուն ինչպէս իրեք օրվան մէջ պիտի շինես։ Ու անանկ չիմացան որ յա՛ իր մարմինը՝ տաճարի նմանցուցնելով աս բանը ըսաւ. ինչպէս աշակերտներնալ յետ մեռնելէն և իրեք օրէն յարուցի առնելէն ետքը՝ աս բանս մըտվընին բերին, ու ըսածը իմացան որ Հչմարիտ է ը-ղեր։ Ու զատկին ատենը շատ մարդիք տեսնելով յետ ըրած հրաշքները՝ իրեն հաւատացին, բայց յա՛ չէր խաբվեր, ու զինքը իրենց

չեր հաւատար, աղէկ գիտնալով մարդկային
անհաստատութիւն։

Այս ատենս հաւատացեալներէն մէկնալ նի-
կոդիմոսը եղաւ՝ որ իշխանմարդիներ փարիսեցի ա-
զանդով. որ ուրիշ հրեաներէն գաղտուկ գի-
շերով յոյի քովը եկաւ, որ Աշմարիտ հաւատ-
քին բանը իմանա. ու յոյ սորվեցաւ որ՝ մարդ
չի կրնար երկնային արքայութիւը երթալ՝ ինչ-
վան որ վերստին անոր հոգին նորէն չի-
ծնանի. և ասկէ՝ ի զատ յոյ մարդեղութեան խոր-
հուրդը սորվեցաւ, ու իմացաւ թէ՝ այ սիրե-
լուն չափը հոն հասաւ որ՝ չիխնայեց իր միակ-
ածին որդին անոնց սիրուն համար տալու, որ
երթա խաչվի ու մեռնի. և ով որ անոր հաւա-
տանի՝ փրկվի, ու ով որ չիհաւատանի՝ դա-
տապարտվի։ Այսքը եղէմ դեպ՝ ի յորդա-
նանի կողմը դարձաւ յոյ, ու ինքնալ իր աշա-
կերտներուն հետ սկսաւ քարոզ տալ՝ վերստու-
թիւն ընել։ Այսոր վրա յոհաննու վերջին աշա-
կերտները նախանձութիւն ցրցունելով, երբոր
գացին իրենց վարդապետին գանկտեցան.
յոհաննէս անոնց խրատ տալու ցրցուց թէ՝
յոյ Աշմարիտ մեսիան է. ու ես բաւ անոր ա-
ռաքելոը ըլլալով՝ ինչպէս որ ձեզի քարոզեր
էի, ալ հիմա ժամանակը եկաւ որ՝ ան աճի
մեծնա, ու ես քաշվիմ պզտիկնամ։ Այնպէս ա-
նանկ կարգաւորեց որ ասկէ ետև շատ չան-
ցաւ՝ յոհաննէս վերտիչը՝ հերոդէսը խրատե-
լուն համար՝ բռնվեցաւ բանտը մնաւ։

ԳԼ. Բ.

Սամարացի կնկանը պատմութիւնը. ու Խափարարաց աղէն բժշկութիւնը։

Յովհ. Դ։ Ղուկ. Դ։ = Ամ քան. 31

Յետ երբոր լսեց Թէ յովհաննէս մկրտիչ բռնըվեցաւ, ու գիտնալով փարիսեցոց իրեն դէմ նախանձուելը, ան կողմերէն ուզեց հեռանալ նորէն գալիլեա երթալ. Համբան սամարացոց երկրէն անցնելենին՝ կէս օրվան դէմ հոգնած՝ մէկ հորումը քով նստաւ որ քիմը հանգչի։ Ան ատենը սամարիա քաղքէն մէկ կնիկը եկաւ որ ան հորէն ջուր առնէ։ Յիսուս անկէց խմելու ջուր որ ուզեց, կամաց կամաց մէջերնին խօսք բացվեցաւ մեսիայի աշխարը գալուն վրա, և բանը հոն հասաւ որ՝ կնիկը զարձաւ հաւատաց յոն, ու շուտմը վազեց քաղաքը քարոզեց ըսաւ Թէ՝ ասանկ մէկ մարգարէ մարդմը կա, որ կերեւա Թէ քան է։ Երբոր կնիկը յոն քովէն գնաց՝ աշակերտները տեսնելով որ յոն կերակուրը մոռցեր բան չուզերկոր ուտելու, միտքը ձգեցին որ հաց ուտէ։ Յետոյ պատասխան տրվաւ Թէ՝ ես ուտելու կերակուր ունիմ, որ դուք չէք գիտեր։ Աշակերտները սկսան մէկմէկու հարցունել Թէ՝ ով իրեն ուտելու բան բերաւ։ Ան ժամանակը յոյ ըսաւ. իմ կերակուրս ան է՝ որ իս խրկողին կամքը ընեմ ու անոր գործը կատարեմ։ Երբոր աս բաներըս կըխօսէին. մէյմալ տեսնեն որ կնիկը անդիէն խէլմը մարդիք հետը առած յոյ քով բերաւ. ու անոնքալ յոյ հաւատացին, ետքը աղաչելով յոր առին

հետերնին տարին՝ երկու օր հոն քաղքերնին բռնեցին. և նորէն յոի տրված քարոզները լսելով ուրիշալ շատ մարդիք սամարացոցմ հաւատացին, անանկ որ՝ ան կնկանը կըսէին թէ՝ այսուհետև չէ թէ քու խօսքիդ համար կըհաւատանք, հապա մենք մեր անկըճովը լսեցինք, ու գիտցանք որ ահա է Ճշմարիտ փրկիչը բոլոր աշխարքիս։

Անկէ ալ երբոր ելաւ յոր գալիլեա եկաւ՝ ու իր նազարէթ քաղաքը գնաց, ան ատենը հոն դրսկեցաւ կըսեն յոի՝ հրէաներուն ժողովարանը կի՞ սինակոկան մտնելը, ու Եսայի մարգարէին գրածը կարդալը թէ՝ Հոգին Տեառնայ է ինձ։ Եւ երբոր յոր ասա բանը իր վրա մեկնեց, ու հրէից կուրուելը և ապերախտութիւնը երեսնին տրվաւ, այնչափ նախանձեցան ու սրդոզեցան յոի վրա, որ բռնեցին զինքը քաղքէն դուրս լեռան գլուխը հանեցին, որ անկէց վար ձգեն մեռցուցնեն. բայց յոր հրաշքով մէջերնէն դուրս ելաւ խալըսեցաւ։

Յոտքը երբոր նորէն կանա գալիլեացոց գընաց, ան տեղը մէկ թագաւորական ցեղէ մարդմը կար, որ լսելով թէ յոր եկեր է, քովը գնաց կաղաչեր որ հետը կափառնաւում գա իր որդին բժշկէ՝ որ մեռնելու վրա էր։ Յոտալ իրեն պատասխան տրվաւ թէ՝ ինչվան հրաշքմը չիտեսնիք նէ՝ չէք հաւատար։ Ան ալ կարտորցըներ կըսեր՝ եր շուտ ըրէ հասիր՝ որդիս չիմեռած։ Յոտալ ըսաւ, դուն գնա քու որդիդ ողջ է։ Արդնալ հաւատաց, ու երբոր Ճամբա ելաւ երթալու, մէյմալ տեսաւ որ իր ծառաները դիմացը ելան՝ իրեն աւետիս տրվին թէ՝ որդիդ ալ ողջկ է։ Հարցնալ ան ատենը հար-

ցուց իրենց՝ թէ Երբ բժշկրվեցաւ. անոնքալ ըսին թէ՝ երեկ եօթը ժամին ջերմը դադրեցաւ։ Ան ատենը ինքնալ իմացաւ որ՝ յիսուսնալ թէ որդիդ ողջ է, ան վարկեանը անդին տղան բժշկրվեր է. ուստի աս բանիս վրա ինքնալ իր տնովը տեղովը դարձաւ հաւատաց յիսի։ Անկից ետքը յիսուս երբոր կափառնաում գնաց, հոնալ քարոզուն ընելով շատ հիվանտներ ու դիւահարներ բժշկեց, որ ասով յիսի անունը չորս դին հռչակվեցաւ։

ԳԼ. ԼԱ.

Լուսաւորչը՝ հրաշքով յոյսի բռնելը. ծովին ալեկոծուելը դադրիլը. և գերգեսացոց դիւահարներուն բժշկուելը։

Ղուկ. Ե։ Մատ. Ը։ Մարկ. Դ։

Անգամմը յիսուս գալիլեա դաւառին մէջ նեսարէթ ըսած պզտի ծովուն քովը գտնըվեցաւ, ու հոն ժողովրդոցը բազմութէնն նեղած՝ տեսաւ որ երկու ձկնորսի նաւ կար պատապ կեցած. ասոնց մէկը սիմոն պետրոսին էր, և մէկալը՝ յակոբոսի ու յոհաննու՝ զեբեդեայի որդւոցը. յիսուսնին նաւը մտաւ՝ ու անկէց սկսաւ ժողովրդոցը քարոզ տալ։ Երբոր քարոզը լըմընցաւ՝ յիսուսնի ըսաւ որ՝ դէպ 'ի ծովը բացվի՝ ու ուռկանը ձգէ ձուկ բռնէ։ Սիմոն պետրոսնալ գանկտեցաւ թէ՝ վարդապետ բոլոր գիշերըս աշխատեր ենք՝ բանմը չենք բռնեց, բայց հիմա ըսաւ քու ըսածիդ կը հնազանդինք. և անանկ երբոր ուռկանը ձգեցին, այնչափ ձկներով լեցվեցաւ, որ եթէ մէկալ նաւը վրա չիհասներ չօգնեցնէ՝

պատառ պատառ կըլլար ուռկանը. և ան մէկ քաշելովը երկու նաւնալ ձկով անանկ լեցվեցան՝ որ ալ քիչ մնաց կընկղմէին։ Երբոր սիմոն պետրոս աս հրաշքս տեսաւ՝ ահռելով է կաւ յոի ոտքը ինկաւ ու ըսաց, տէր քովէս հեռու կեցիր, որովհետև ես մէկ մեղաւոր մարդ մընեմ. այնպէս ալ՝ վախցան մէկալ իր հետը եղողները յակոբոսը ու յովհաննէսը։ Յետալ ըսաւ՝ մի՛ վախնար՝ այսուհետև քու արվեստդ ձկան տեղը մարդ բռնել պիտի ըլլա՝ որ արքայուն տանիս։ Ատքը նաւը ցամաքին քովը քաշեցին, և ամէնն բանտերնին հոն թողուցին՝ վազեցին յոի ետևէն գացին, ու մէյմալ ձկնորսուի ընելու չի դարձան։

Էսկէ ետև շատ չանցաւ որ՝ մէկ օրմընալ յոուզեց որ իր աշակերտներուն հետ նաւով անդալիլեայի ծովուն մէկալ դին գերգեսացոց երկիրը անցնի. երբոր նաւը մոտն սկսան բացվիլ երթալ, յոն մէկդին նաւուն խելքին (ցի՝ խըչին) վրա գլուխը բարձին դրաւ՝ ու կըքնանար։ Էն ատենը յանկարծ մէկ սաստիկ հովմը ելաւ անանկ ալեկոծեց ծովը՝ որ կարծէին թէ նաւը ընկղմելու վրա է։ Էս որ տեսան աշակերտները՝ վախերնին սրտերնին փրթաւ, ու յոը արթընցուցելով կըսէին՝ վարդապետ վարդապետ կրկրսրվինք կոր, ելեր մեզ խալըսէ։ Յետալ արթընցաւ ու ըսաց, ինչ կա, ձեր հաւատքին պակասուին է որ ատչափ վախծաք. ու ելաւ՝ ծովուն հրամայելուն պես թէ դադրէ՛ պասանծէ՛, շուտմը հովը կըդրեցաւ՝ ու ծովուն ալիքը դադրեցան, խաղաղեցան։ Էլաւին մէջը եղողները ամէնքը երբոր աս հրաշքս տեսան՝ սոսկալով սկսան մէկմէ-

կու նայել ըսել թէ՝ աս ոմ պիտոր ըլլա, որ ա-
սանկ հոլի ու ծովը մէկէն հրամանին կը հնա-
զանդինկոր։ Բրբոր անդիի ցամաքը գերդե-
ացոց երկիրը ելան, մէյմալ դիմացէն գերեզ-
մաներէն երկու կատղած դիվահարներ կու-
գային, որ անանկ ցուցանքաւոր բան էին՝ որ
մարդ չէր կրնար ան ճամբէն անցներ. ու ա-
սանք մերկ հոն տեղվանքը կրկենային, գիշեր
ցորեկ կանչվռտելով քարերով կրծեծկրվելին,
և մարդ կարող չէր ասանք բռնել՝ շղթայովալ
կապել։ Բ.ս դիւահարները հեռըվանց յա տես-
նելնուն պէս վազեցին եկան առջևը ինկան. ու
կանչվռտելով կըսէին՝ յա որդի աղ, մենք քեզի
հետ ինչ բան ունինք՝ որ եկեր ես ատենէն ա-
ռաջ մեզ կրտանջեսկոր. պատճառն որ՝ յա
կրհրամայեր սատանային որ անոնցմէ ելլէ։
Հարցուց յա թէ ձեր անունը ինչ է. անոնքալ
ըսին՝ մենք լեգէոն կրսվինք, (որ կրցրցու-
նէ թէ շատ սատանաներ էին մէկտեղ եկած
մտած)։ Բ.ստը ելլելու որ եղան՝ յոի ազատ-
ցին որ՝ իրենք դժոխքը չիսրկէ, հապա ան
կողմերը խոզեր կարծէին, իրենց հրաման տա-
որ ան խոզերուն մէջը մտնեն. յա ալ հրա-
մայեց որ անանկ ըլլա։ Բ.նատենը աս սատա-
նաները ան մարդիքներէն ելած խոզերուն
մէջ մտնելնուն պէս, խոզերը՝ որ երկու հա-
զարի չափ կային, անանկ դիվահարեցան որ՝
բարձրը տեղաց զիրենք ծովը նետեցին՝ ու բո-
լորը խրիտրվեցան. խոզերուն պահապաններ-
նալ սոսկալով փախան քաղաքը գացին աս բա-
ներըս պատմելու։ Բ.ղքի մարդիքնալ ելբ-
որ եկան տեսան որ դիվահարին մէկը խելքը
ցած յոի առջև նստած էր, զարմացան մնա-

ցին եղած հրաշքին վրա. ու վախնալով յոլ-
զորուէն՝ աղաչեցին որ ելլէ իր տեղը երթա։
Երբոր յետոյ նաւ մտաւ որ դառնա՝ աս բժշկը-
ված դիվահարնալ իրմէ չէր բաժնվեր՝ կու-
զէր որ հետը երթա. բայց յիսուս չի թողուց, հա-
պա՝ տունդ դարձիր ըսաւ, ու գնա պատմէ
ոյ քեզի ըրած ողորմութիւնը։

ԳԼ. ԺԸ.

Ընդամալուածին բժշկութիւնը։ Մատթէոս առաքելոյն
կոչումը։ Յայրոսի աղջիկանը, ու պեռապես կնկանը
բժշկութիւնը։

Ղուկ. Ե։ Մատ. Թ։ Մարկ. բ։

Երբոր յիսուս գերեզմանացումէ ելաւ գալիլեա
դարձաւ. ու կափառնաումի քաղաքը մէկ օր-
մը տանը մէջ կրքարողէր հրէից վարդապետ-
ներուն և կարդացողներուն առջևը, որ չորս
դիէն իր քովը ժողվեր էին որ լսեն. ան ա-
տենը չորս հոգի մէկ անդամալուածմը իր մա-
հիճովը (այ՝ եաթախովը) վերցուցած եկան
որ՝ յոլի առջևը դնեն որ բժշկէ։ Բայց երբոր
ասոնք տեսան որ անչափ ժողովրդոց բազմու-
թիւն ճար չկա որ դռնէն ներս խօթեն, կեր-
պովմը ան յոլի կեցած տեղին տանիքին վրա ե-
լան, ու առաստաղը քակելով բանալով, աս
կեց վերէն 'ի վար կախած՝ անդամալուածը իր
մահիճովը յոլի առջևը ինջեցուցին։ Յետոյ
տեսնելով ասոնց հաւատքը՝ դարձաւ անդա-
մալուածին ըսաց, որդի՝ թողութիւն ըլլա քու
մեղքերուտ։ Ինչ որ լսեցին իր քովը եղած
կարդացողները՝ սկսան մտքերնուն մէջը դա-
տել թէ՝ յիսուս հայհոյական բան կըսէ. որ միան

ած կրնա մարդուն մեղայը թողութիւն տալ։ Յետոյ իմանալով անոնց ծուռ միտքը, իրենց հարցուց, ատ ինչ է որ կըմրտածէք. մէկ անդամալուծիմը որը դիւրին (՝ի՝ խօլայ) է ըսելը, աս թէ՝ թողութիւն ըլլա քու մեղքերուա, թէ ըսելը՝ ելի կայնէ մահիճդ վերցուր ասկէ գնա։ Բայց դուք ըսաւ անսալ գիտնաք որ՝ ես երկրիս վրա իշխանութիւն ունիմ մեղայ թողութիւն տալու. ահա կըհրամայեմ քեզի (ըսաւ անդամալուծին,) որ ելլես մահիճդ առնես քու տունդ երթաս։ Բայց որ ըսաւ յա՝ անդամալուծը շուտմը ելաւ կայսեցաւ՝ ներքևը եղած մահիճը կըռնակը զարկաւ, ու փառք տալով ՝ի՝ անանկ տունը դարձաւ։ Բայց աս հրաշքս ամէն տեսնողները զարմացուց, որ իրենքալ փառք տալով ՝ի՝ կըսէին թէ՝ ասանկ բան տեսնըված չէր։

Բնկէ ետքը սնէն դուրս ելաւ յա՝ ու քարոզելով մաքսատան (՝ի՝ կէօմրիւկին) կողմերը քալելնէի՝ մէկ մարդմը տեսաւ մատթէոս անունով՝ որ մաքսաւորութիւն կրնէր. յա դարձաւ ասոր ըսաւ՝ ելիր իմ հետս եկոր։ Բնալ շուտմը ամէն բանը թողուց՝ յսի ետևէն գընաց։ Բտքը ասիկա յսը առաւ իր տունը տարաւ, ու փառաւոր սեղանմը ըրաւ յսի՝ իր աշակերտներուն հետ, և աս սեղանքս ուրիշ իրենն բարեկամ մաքսաւորներալ կանչված էին։ Ի՝աքսաւորութիւն արվեստը հրեից մէջը գէշ անուն ունենալով, և պիղծ ու անօրէն սեպվելով մաքսաւորները, փարիսեցիները ու կարդացողները երբոր աս իմացան, սկսան յսի և իր աշակերտացը վրա մռմռալ թէ՝ մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կընստին՝

յա՛ալ անոնց պատասխան տրվաւ թէ՝ ողջե-
ռուն բժիշկ պէտքը չէ՛, հապա՝ հիվանտնե-
ռուն. ես ալ չէ՛ թէ արդարներուն՝ հապա մե-
ղաւորներուն համար եկեր եմ, որ իրենք ա-
պաշխարութիւն ընելու կանչեմ։ Լսոր վրա մէկ
խօսքմալ ելաւ որ՝ յովհաննու մկրտչին՝ ու փա-
րիսեցիներուն աշակերտները շատ պաք կը-
պահեն՝ երկան աղօթք կընեն, ու յոհանները՝
ուտելու խըմելու հետ են։ Յետալ աս բանիս
առակով պատասխան տալէն ետքը՝ ըսաւ, ա-
տենը կուգա որ՝ իմ աշակերտներսալ ատանկ
ձգնութիւներ պիտի ընեն։

Լրբոր աս բաներըս յա՛ կըխօսէր, մէկ տրեւից
իշխանմը յայրոս անուանով եկաւ յոի ոտքը ին-
կաւ՝ կաղաչէր որ իր մէկ հատիկ տասվերկու
տարվան աղջիկը, որ ալ մահվան դուռը հա-
սեր էր՝ շուտով գա ձեռքը վրան դնէ բժշկէ։
Յետալ երբոր իր աշակերտներով ելաւ՝ որ հետը
երթա, ճամբան բազմուն ժողովրդոց մէջը
մէկ տեռատեսնկնիկմը, (որ խեղճը տասվեր-
կու տարի աս հիվանտութիւն կրտանջըվեր, ու
բոլոր ունեցածը բժիշկներու տալով՝ իրեն
ցաւուն ճարմը չէր տեսած, հապա եվելցեր
ալ էր,) յոի ըրած բժշկութիւնները լսելով, հոն
եկաւ՝ ու բարի հաւատքով կամացուկմը ե-
տևէն յոի լաթերուն դըպաւ, ու շուտմը կա-
տարեալ բժշկըվեցաւ։ Լնատենը յա՛ալ իր ա-
մենագիտութիւնը աս բանս իմանալով՝ ետևը
դարձաւ դէպ 'ի ժողովուրդը, ու հարցուց
թէ՝ ո՞վ իմ լաթերուս դըպաւ։ Լշակերտներն
ալ ըսին որ՝ վարդապետ այսչափ ժողովրդոց
մէջը սրխմըվեր ես, ու կըհարցունես թէ ո՞վ
ինձի դըպաւ. յա՛ալ ըսաւ. դիտեմ որ մէկը ին-

ծի մանաւոր կերպովմը դրպաւ, և խմէ զ-
բուիմը ելաւ. ու նորէն սկսաւ չորս դին նայիլ՝
որ աս բանը ընողը գտնէ։ Այն ժամանակը
երբոր տեսաւ կնիկը որ ըրած բանը ալ չի
ծածկրվիրկոր, գաղտուկ ընելուն համար
վախնալով ու դողալով՝ ինքիրէն եկաւ յոն
ոտքը ինկաւ, ու տեղն 'ի տեղը պատմեց թէ՝
ինտոր իրէն դրպչելուն պէս բժշկրվեցաւ։
Յետոյ ըսաց իրէն. սիրտդ ամէնը բռնէ աղ-
ջիկս, քու հաւատդ քեզ բժշկեց խաղաղու-
թիւն երթաս։ Այս կնկանը բանը լսմընցունե-
լու վրա էր յոյ՝ որ անդիէն յայրոս իշխանին տը-
նէն մարդիք վրա հասան՝ ու հօրը ըսին թէ՝
աղջիկդ մեռաւ՝ ալ վարդապետը մի՛ աշխատ-
ցուներ. Յետոյ երբոր աս լսեց, դարձաւ սիրտ
վուրդնալ ըսելով թէ յա կուգա կոր՝ ամմէնքը թաւիեցան դէմը ելան, ու ձեռվընին արմաւենիի և ձիթենիի կանանչ ճղեր առած՝ անանկ մեծ ցնծումով ուրախութիւն յոի առջևէն ինկած՝ մէկ թագաւորիմպէս զինքը կրբերէին։ Ընոնցմէ ոմանք վրայի հագուստնին ոտքին տակը գետինը կըփռէին, ոմանք ծառերու ճղերով ճամբաները կըզարդարէին, և ամմէնը մէկ բերան աշակերտներուն հետ ուրախութիւն կերգէին՝ Օրհնեալ որդւոյ դաւթի՝ օրհնեալ եկեալ յանուն տն. օրհնեալ է բարձունս։ և ասով զաքարիա մարգարէին ըսածը կատարվեցաւ թէ՝ Ասացէք դստեր սիոնի՝ ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, հեծեալ յէշ և յաւանակի էշոյ։ Փարիսեցիները ու կարգացողները՝ որ յոի թշնամի էին, երբոր աս բաներըս տեսան, սաստիկ նախանձէն չէին գիտեր ինչ ընեն. մանաւանդ երբոր կըլսէին ան օրհնութիւն ձայները՝ որ մեծ ու պզտիկ կըկանչէին՝ օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն տն. ուստի եկան յոի ըսին որ՝ ինքը անոնց արգիլէ որ ասանկ չկանչեն։ Յետոյ իրենց պատասխան տըվաւ ըսաւ, թէ որ ատոնք ձան չի հանեն նէ՝ անատենը քարերը կըսկսին կանչվռտել։ Ինքը յա երբոր եղէմի քաղքին ալ մօտեցաւ, վրան նայեցաւ ու արցունք թափելով սկսաւ ըսել. գոնէ հիմա խելքդ վրատ ժողվէիր ու զգաստանայիր, հապա թէ չէ՝ գիտնաս որ քու թշնամիներդդ վրատ պիտի հասնին, ու քեզ պաշարեն և անանկ հիմնայատակ ընեն որ՝ քարքարի վրա պիտոր չի թողուն. որովհետև դուն չիճանչցար այ ողորմութիւնը ատենը որ իրեն դառնայիր։ Ինչպիսի փառաւորութիւն թագաւորիպէս յա երուսաղէմ

մանելէն ետքը՝ տաճարը գնաց, ու Հոն՝ ինչ-պէս մէկ ուրիշ անգամմընալ Հանդրպէր էր, տեսնելով որ մարդիք նստեր բան կըծախէին առուտուր կընէին, վրանին սրդողելով ամ-մէնքը անկէց դուրս վըռընտեց, ու իրենց ըսաւ թէ՝ մարգարէից գրքերուն մէջ ՝ծ կը-հրամայէ որ՝ իր տունը աղօթքի տուն ըլլա՝ որ դուք աւազակներու այր (՝ի՝ ՀԷլալիներու մաղարա) էք ըրեր։ Ու Հոն տաճարին մէջը նորէն կուրերը ու կաղերը բժշկելէն ետքը՝ իրիկ-վան դէմ քաղքէն դուրս ելաւ, աշակերտնե-րուն Հետ անտեղը մնաց բեթանիա գեղը գնաց որ Հանգչի։

Ա՝էկալ օրը առտուանցնորէն յ՝ աշակերտնե-րուն Հետ եղէմ դառնալնին՝ անօթեցաւ, ու Համբուն վրա մէկ թզենիմը (՝ի՝ ինՀիրի ծառը) տեսաւ բոլոր տերևներով լեցված, երբոր ասոր քովը մօտեցաւ՝ ու նայեցաւ որ՝ վրան ամենևին պտուղ չունի՝ որ փրցունի, ու-տէ, անատենը անիկա անիծելով ըսաց, մէյ-մալ ասկէ ետև քեզմէ մարդ պտուղ չուտէ։ և աս ըսելուն պէս՝ շուտմը ան թզենին սկսաւ չորնալ, (որ հրեից սինակոկային օրինակը ե-ղաւ)։ Ա՝իւս օրը մէկմալ նորէն յ՝ աշակերտ-ներովը անկէց անցնելնին, զարմացան աշա-կերտները՝ ու յոի ցրցուցին թէ՝ նայէ ինչպէս շուտմը բոլոր արմատէն չորցեր է ծառը։ Ի՝ա-ալ իրենց պատասխան տրվաւ թէ՝ Հաւատրիտ կըսեմ ձեզի, թէ որ կատարեալ Հաւատքով՝ չէ թէ միան թզենին, հապա ատ լեռանդալ ըսէք թէ ելի՝ ծովը ինկիր, անանկ կըլլա։ և ինչ որ Հաւատքով ձեր աղօթքին մէջը խընդ-ըէքնի՝ կառնէք։

ԳԼ. Ի.Ջ.

Յ՝ նորէն առաքնէրով էլեւրաւէ՝ ու էրդպանծէցու նէ հրէայչէը։

Մատ. ԺԵ։ Ղուկ. Է։

Երկու օրէն ետև երբոր յի նորէն տաճարը գնաց, կերպ կերպ հարցմունքներով քահանայապետները ու կարգացողները սկսան փորձել զինքը, յաղ այսպիսի առակներով յանդիմանեց իրենք։ Մէկ մարդմը ասաւ՝ երկու որդի ունէր, ասիկա մէկուն ըսաց թոռ՝ ասոր էգին գնա բանէ։ Ինչ հրամայես կերթամ ըսաւ, ու չի գնաց։ Երբոր տեսաւ թէ անիկա չի գնաց, դարձաւ մէկալ տղին ըսաւ որ ինքը երթա։ Ինչ առջի բերանը պատասխան տրվաւ թէ՝ չեմ երթար. բայց ետքը զղջացաւ՝ ու գնաց էգին բանեցաւ։ Ի՞նչ պատմելէն ետքը յի հարցուց թէ՝ աս երկուքէս ո՞րը իր հօրը կամքը կատարեց. անոնքալ ըսին թէ ետքինը։ Յիսուս ըսաւ, ճշմարիտ կըսեմ որ՝ ասանկ ալ մաքսաւորները և պոռնիկները ձեզ մէկգի կըթողուն, ու իրենք արքայութիւն կերթան։

Ինոր ետևէն՝ յի աս առակալ ըսեցէք ըսաւ։ Մէկ տանուտերմը էգի տնկեց, ու ամէն կողմանէ աս էգիս հոգալէն՝ պէտ ընելէն ետքը, մշակներուն ձեռքը տրվաւ, ու ինքը ելաւ մէկ հեռու տեղմը գնաց։ Երբոր ալ էգին կթելու ժամանակը մօտեցաւ՝ իր ծառաները անոնց խրրկեց, որ էգիին պտուղը ժողվին առնեն։ Մշակներնալ բռնեցին աս ծառաներուս մէկը տանջեցին, մէկը ըսպան-

նեցին, ու մկկալը քարկոծեցին։ Յանուտերը նորէն առջինէն շատ ուրիշ ծառաներ խրկեց, մշակները ասոնցալ անանկ ըրին։ Յետքը տանուտերը իր մկ հատիկ սիրական որդին խրկեց, կարելի է որ ըսաւ՝ մշակները ասկէց ամչնան։ Բայց մշակները ան որդին որ տեսան, մէջերնին ըսին որ՝ ահա աս տանուտիրոջը ժառանգն է, ասիկա ըսպաննելու է, որ ասոր ժառանգութիւնը մեզի մնա. ուստի անանկ էգիւին դուրս հանեցին՝ ու անալ ըսպաննեցին։ Իմա՝ ըսաւ յա, ինչ կրկարծէք՝ երբոր էգիւին տէրն որ դառնա ինչ կրնէ անոնց։ Սողնեերնալ պատասխան տրվին թէ՝ ան անօրէն մշակները չարաչար կրսպաննէ, ու էգիւին կառնէ ուրիշ մշակներու ձեռքը կուտա, որ ատենովը պտուղը իրեն հասցուներն։ Յետքը երբոր իմացան հրեաքը աս առակիս միտքը՝ որ իրենց սինակոկային վրա է, քաւ լեցի ըսին՝ ուռ չլնէ որ ատանկ ըլա։

Մկ ուրիշ առակմընալ յա անոնց պատմեց։ Բրքայուին երկնից ըսաւ կընմանի մկ թագաւորիմը, որ իր տղին ուզեց հարսնիք ընել, ու ծառաները խրկեց որ երթան հարսնեվորները կանչէն։ Յրբոր տեսաւ որ անոնք գալ չուզեցին, նորէն ուրիշ ծառաներ խրկեց իրենց ըսաւ թէ՝ ահա սեղանիս ամմէն բանները պատրաստ է, գիրցուցած կենդանիներս մորթած կեցեր են, ելէք հարսնիքը եկէք։ Բայց այսու ամիս անոնց հոգը չեղաւ մտիկ չըրին, հապա ամմէն մարդ ցրվեցան ելան իրենց բանը գացին՝ մկը իր արտը, մկկալը իր առուտուրին եռեւէն, նաև անոնցմէ ոմանքաչ բռնեցին աս ծառաները քամահրելով սպան-

նեցին։ Լ՚ս որ լսեց Թագաւորը՝ սաստիկ սրդ-
զեցաւ վրանին՝ զինվորներ խրկեց ան ըսպան-
նողները մեռցուց. ու իրենց քաղաքը վրանին
երել տրվաւ։ Լ՚տքը դարձաւ ըսաւ իր ծառա-
ներուն. Հարսնիքս պատրաստ էր, ու հարս-
նեվորները անոր արժանի չեղան. ուստի դուք
ալ գնացէք փողոցներէն (յն՝ սօխասխներէն)
մարդիքը հարսնիքս կանչեցէք։ Լ՚նոնքալ ե-
լան՝ ով որ գտաննէ չար ու բարի ժողվեցին
բերին, ու անանկ բոլոր նստելու տեղվանքը
հարսնեվորներով լեցվեցաւ։ Լ՚տքը երբոր ա-
սոնց քով եկաւ Թագաւորը, ու մէջերնին մէ-
կը տեսաւ որ հարսնիքի լաթ չէր հագած,
դարձաւ ասոր ըսաւ, դուն ինչպէս հոս եկար
մտար՝ որ հարսնիքի լաթ չունէիր։ Լ՚նալ պա-
պանծեցաւ՝ չիկրցաւ պատասխան տալ։ Թա-
գաւորնալ շուտմը հրամայեց ծառաներուն
որ՝ անոր ոտքը ձեռքը կապած դուրս ձգեն
զինքը։ Որովհետև կոչվածները շատ են. բայց
անոնցմէ ընտրվածները քիչ են։

Լ՚սկէ ետքը մէկուն մեռ խօսք դրին փարիսեցի-
քը՝ որ յն իր բերնովը Թագաւորական բանի
վրա յանցաւոր (յն՝ սուչլու) ձգեն, ու բրա-
նել տան. ուստի կեղծաւորութիւն եկան ըսին
Թէ՝ վարդապետ գիտենք որ դուն ճշմարտա-
խօս մարդմընես, ու մարդու երեսպաշտութիւն
չես ըներ՝ շիտակը կրզուրցես. ուստի մեզի
ըսէ՝ քեզի ինչպէս կերևա, պէտք է որ մենք
հռոմայեցոց կայսերը հարկ (յն՝ խաուաճ)
տանք՝ Թէ չէ։ Յիսուս իմանալով անոնց սատա-
նուիը, իրենց ըսաւ՝ կեղծաւորներ՝ ընչու իս
կուզէք փորձել. հարկին ըստակը ինծի ցըցու-
ցէք որ տեսնեմ։ Լ՚նոնքալ հանեցին ձեռքը

մէկ դահեկանմը տրվին։ Յետոյ հարցուց ա-նոնց թէ՝ ասոր վրայի պատկերքը ու գրվածքը որո՞ւն է. անոնքալ ըսին՝ Հռոմայեցոց կայ-սերն է։ Ան ատենը յիսուսալ անոնց պատասխան տրվաւ. անանկ է նէ ըսաւ գնացէ՛ք կայսերը բանը՝ կայսերը տրվէք, ու՝ այ բանը՝ այ։ Ա՛ս որ լսեցին՝ զարմացան՝ ու պապանձած թո-ղուցին երան գացին։

Ա՛սոնց ետեւէն սադուկեցիները յիսի քով է-կան, (որ անանկ աղանդ կի՞մ մեսէպ ուներին՝ որ յարուն մեռելոց չէին ընդուներ.) ասոնք-ալ փորձելով՝ աս տարակուսանքս յիսի առջեւը դրին. Ա՛ ադդապետ ըսին՝ մովսէս մարգարէն օրէնաց մէջը գրեր է, թէ որ մէկ կարգված մարդմը առանց զաւկի մեռնելու ըլլանէ, եղբարը՝ անոր որբեւարի կնիկը առնէ, ու ան-կէց իր եղբօրը զաւակ թողու։ Ի՞նչը որ ը-սին՝ ատենով եօթը եղբար կային, ասոնց առ-ջինը կարգըվեցաւ՝ ու առանց զաւկի որ մե-ռաւ, ան կնիկը՝ երկրորդ եղբարը առաւ, ու ան-ալ անկէց զաւակ չունեցաւ, և ասանկ ան եօթը եղբարնալ մէկմէկու ետեւէ աս կնիկը առին՝ ու առանց զաւկի մեռան. ետքը անոնց ետեւէն կնիկնալ մեռաւ. հիմա ըսէ՛ ըսին՝ վերջի դատաստանի երբոր ամմէնը յարուն առնելու ըլլաննէ, աս եօթը եղբարներէն ո-ր՞ուն պիտոր ըլլա աս կնիկը, որ առաջ եօթն-ալ անոր հետը կարգված էին։ Յետոյ իրենց պատասխան տրվաւ թէ՝ դուք մոլորեալ էք, անոր համար չէք գիտեր՞ գիրքը ինչ գրած է, ու չէք իմանար՝ այ կարողութիւնը։ Ա՛ս աշ-խարքիս մարդիքը ըսաւ՝ կըկարգըվին, բայց ո՞վ որ արժանի կըլլա անդիի աշխարքը երթա-

լու, հոն կարգըվիլ չկա, ու մեռնիլ չկա, հապա հրեշտակացպէս ամմէնքը այ որդի կըլլան։ Այլ մեռելոց յարուցեալ վրա չէք կարդացեր մովսէսի գիրքը՝ որ կըսէ, Այս եմ ես աբրահամու, ես իսահակայ, և ես յակոբայ. ուստի թէ որ ասոնք հոգւով կենդանի չըլլայինն՝ ասանկ չէր ըսեր ձեզ, որով հետև ինքը չէթէ մեռած ոչընչացածներուն, հապա կենդանի-ներուն ես է։

ԳԼ. ԻԷ.

Յոն եռոյ վարդապետ-ՐԻՆԵՐը՝ և առաքիները։

Մարկ. ԺԲ։ Ղուկ. ԻԹ։ Մատ. ԻԵ։

Յոն ետքի ատենները մէկ հեղմը տաճարը գանձանակին դիմացը կեցեր՝ կընայեր թէ ինչպէս ժողովուրդը գանձանակը ըստակ կըձգէ. ու տեսաւ որ՝ շատ հարուստ մարդիք եկան՝ առատ տուրք ձգեցին. ետքը տեսնէ որ մէկ որբևարի աղքատ կնիկմընալ եկաւ՝ երկու լումա(յ՝ մանրը) ձգեց ան գանձանակը։ Այն ատենը յոն դարձաւ իր աշակերտներուն ըսաւ՝ ձեզի ճշմարիտ կըսեմ որ աս աղքատ որբևարիս ամմէնէն շատ ձգեց գանձանակը. ինչու որ՝ մէկալներնք ամմէնքը իրենք էվելցած ըստրկէն այ ընծա տրվին. բայց աս կնիկը բոլոր իր ունեցածը որ իրեն ապրուստիկն էր՝ հանեց տրվաւ։ Այտև երբոր յոն տաճարէն դուրս ելլելու եղաւ, աշակերտները ան տաճարին փառաւոր շէնքին վրա զարմանալով՝ սկսան իրեն ցրցունել։ Յոսալ անոնց պատասխան տրվաւ թէ՝ աս որ հիմա ատանկ կըտեսնէք, պիտոր ատեն գա՝ որ ատոր մէկ

քարը մկալին վրա պիտի չի թողուն։ Ինկէ ետքը երբոր գնացին ձիթենեաց լեռը նստան՝ որ տաճարին դիմացն էր. յս նորէն աս բանիս վրա երկան խոսեցաւ, թէ ինչպէս սոսկալի պատերազմներով եղէմ պիտի կործանի. և իրեն հաւատացեալները ինչ նեղութիւններ պիտի քաշեն. ու թէ աշխարքիս ետքը ինչպէս պիտի մարդիք իրար անցնին. և ինքը ինչպէս փառաւորուած պիտոր գա՝ որ վերջին դատաստանը ընէ։

Այս բաներուս ետեւէն՝ ասառակներսալ պատմեց։ Ինատենը ըսաւ արքայութիւն երկնից կընմանի տասը կուսանքներուն, որ իրենց լապտերները (յս՝ ֆէնէռները) ձեռվընին առած գացին որ փեսան ու հարսը դիմաւորեն։ Ասոնցմէ հինկը յիմար (յս՝ անխելք կիմխենթ) էին, ու մկալ հինկը խմաստուն էին։ Յիմարները լապտերնին վառած ձեռվընին որ առին՝ չի մտածեցին որ՝ հետերնին ուրիշ եղալ առնեն. բայց խմաստունները իրենց լապտերներուն հետը ուրիշ ամանով եղ ալ առին։ Ուրջի բերանը փեսան երբոր ուշացաւ չեկաւ, ասոնց ամմէնուն քունը տարաւ քընացան. ետքը կէս գիշերուն յանկարծ ձան եղաւ թէ՝ ահա փեսան կուգակոր՝ շուտ ըրէք առջեւը ելէք։ Ան ատենը աս ամմէն կուսանքը ելան՝ ու սկսան լապտերնին շինել։ Այս յիմարները տեսնելով որ եղերնին կարճ կուգակոր, խմաստուններուն ըսին թէ՝ ձեր եղէն քիչը մեզի տրվէք, որ լապտերնիս չի մարի։ Խմաստուններնալ ըսին՝ թէ որ մեր եղէն ձեզիալ տալու ըլլանքն է՝ անատենը ոչ մեզի՝ ոչ ձեզի օգտ. ուստի կուզէքնէ գնացէք ձեզի հա-

մար խանութեն եղ գնեցէք։ Երբոր անոնք գնելու գացին ան ատենը փեսանալ եկաւ հասաւ, ու ով որ պատրաստ կարնէ՝ հետը հարսնիքին տունը մտան, դուռը գոցվեցաւ։ Յետքէն երբոր եկան ան յիմարները՝ ու դուռը զարնելով կըսէին՝ տէր տէր դուռը բաց մեզի. նէրսէն պատասխան տըվաւ թէ՝ ճըշմարիտ կըսեմ որ՝ ես ձեզ չեմ ճանչնար։ Յետքը ըսաւ յիսուս, ուրեմն պէտք է որ միշտ արթուն ու պատրաստ կենաք, ինչու որ՝ չէք գիտեր անոր գալու օրը ու ժամը։

Սակէ եղբը յիսուսանալ ըսաւ թէ՝ ինքը վերջի դատաստանին ինչպէս փառաւորապէս պիտի գա՝ բոլոր հրեշտակներնալ իր հետը, ու աթոռ փառաց նստած, բովանդակ աշխարքիս մարդիքը առջեւը պիտի ժողվին. և անոնք երկու դաս պիտի բաժնէ, արդարները աջ դին՝ ու մեղաւորները ձախ դին։ Արդարներուն ըրած բարի գործքերը իրենց առջեւնին դնելով պիտոր ըսէ՝ եկէք իմ հօրմէս օրհնըված՝ ներ՝ մտէք վայելեցէք արքայութիւնը՝ որ ձեզի համար պատրաստած եր։ Եւ մեղաւորներուն չար գործքերը երեսնին տալով անոնցալ պիտի ըսէ. քովէս գնացէք կորիք անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստըված է սատանայելի ու իր սատանաներուն։ Եւ անատենը ըսաւ՝ ասոնք յաւիտենական տանջանքը կերթան, ու արդարները յաւիտենական կեանքը։ Այս քարոզներըս տալէն ետքը, յիսուս յայտնեց իր աշակերտացը՝ թէ սակէ երկու օրէն զատիկ կըլլա, ու ան զատկին ատենը զինքը պիտի հրեաները բռնեն խաչ հանեն։

ԳԼ. ԻԲ.

Յաւ մատնումը, և վերջին ընթրիքը։

Մատ. իգ։ Մարկ. ժգ։ Ղուկ. իգ։ Յովհ. ժգ։

Զատիկն երկու օր առաջ՝ յաւ աս վերի բանները ժողովրդոց կրքարողէ, հրեից քահանայապետները ու ռաբբիները ան ատենը մէկտեղ ժողվեցան կայիափա քահանայապետին քովը, ու խօսք դրին որ՝ յիսը մէկ կերպովմը բռնեն ըսպաննեն. բայց աս ալ մտմտացին որ՝ ան տօնին օրերը չընեն, չըլլա թէ ըսին ժողովուրդին մէջը մէկ շփոթութիւն ելլէ։ Ինատեննալ յսի աշակերտներուն մէկը՝ որ յուդա իսկարիովտացի կըսվէր՝ սատանան ասոր փորը մրտաւ, որ գնաց անոնց ըսաւ թէ՝ ինծի ինչ կուտաք որ ես յսը ձեր ձեռքը մատնեմ։ Ինքնալ շատ ուրախացան ասոր վրա, ու իրեն խոստացան որ եռասուն արծաթի (կամ զօլաթա) տան, թէ որ աս բանս գլուխ տանի։ Յուդայալ ան ատենէն՝ ետևէ էր որ առանց ժողովուրդը ոտք հանելու՝ յսը մատնէ՝ անոնց ձեռքը տա։

Խաղարջակերաց (յաւ՝ խամուրսուղի) առջի օրը աշակերտները յսի միտքը ձգելով հարցուցին թէ՝ ուր կուզես որ երթանք պատրաստենք զատկական գառը ուտելու։ Յետալ անատենը ձիթենեաց լեռը գտնվելով՝ պետրոս ու յովհաննէս առաքեալը խրկեց որ աս բանս տեսնեն, իրենց ըսաւ՝ գնացէք եղէմ, ու քաղաքը մտնելնուն մէկ մարդմը դիմացնիդ կելլէ, որ սափորը կըռնակը ջուր կըտանի, ասոր ետևէն գացէք, ու որ տունը որ ան

մրանէնէ՝ անոր տանտիրոջը ըսէք թէ. վարդապետը մեզ քեզի խրկեց ըսելու՝ որ ալ իմ ատենս մօտեցեր է, կուզեմ որ զատիկը քու քովդ ընեմ իմ աշակերտներուս հետ. ան ալ ձեզի մէկ մեծ զարդարած վերնատունը (յր՝ տիվանխանամը) կը ցուցունէ. ու հոն ըսաւ սեղանը պատրաստեցէք։ Ինոնքալ դացին ըսածինպէս ամէն բանը անանկ գտան, ու պատրաստեցին։ Երեկվան դէմ յետոյ եկաւ հոն եկաւ, ու երբոր սեղան նստաւ տասներկու աշակերտներուն հետ՝ յոն առջի խօսքը աս եղաւ. խիստ կը բաղձայի ըսաց՝ որ աս զատիկս իմ չարչարվելէս առաջ՝ ձեզի հետ ուտեմ։ Յետքը ուտելու ատենը դարձաւ աշակերտներուն ըսաւ թէ՝ ձեզմէ մէկը պիտոր իս մատնէ։ Ինոր վրա անոնքալ իրար անցան՝ ու ցաւելով սկսան մէկը մէկալը իրէն հարցունել թէ՝ արդեօք ես եմ մի։ Յետոյ պատասխան տըվաւ թէ՝ ան է՝ որ իր ձեռքը իմ հետս սկաւառակը (յր՝ թասպիրը) երկնցուց խօթեց։ Ինատենը յուդա որ աս բանս կընէր՝ ինքնալ հարցուց թէ՝ արդեօք ես եմ վարդապետ. յետոյ իրէն ըսաւ, դուն ըսիր։ Կերակուրը ալ լըմընալու ատենը՝ յոն ձեռքը հացմը առաւ օրհնեց, գոհութի տըվաւ ոյ, ու ան մանրեց աշակերտացը բաժնելով ըսաւ, առէք կերէք աս իմ մարմինս է որ ձեզի կըտրվի. ետքը դուբալ ասանկ ըրէք իս յիշելու համար։ Ինոր ետևէն բաժակը (յր՝ գինիով գաւաթը) ձեռքը առաւ օրհնեց, ու երկընցուց աշակերտներուն ըսաւ թէ՝ ամէնդ ասկեց խմեցէք, որ իմ արունս է՝ նոր ուխտի, որ ամէնուդ մեղացը թողութի համար պիտի

թափվի։ Այս ասելանովը՝ յոթ պատարագին
ձը խորհուրդը հասատեց։

Երբորայ սեղանը խալըսելու եղաւ՝ յոթ վրայի
լաթերը մէկ դի դրաւ, ու մէկ ղենձակմը (ոյ
փեշտիմալմը) առաւ վրան, ու կոնքին (ոյ
լէնին) մէջը ջուր լցած՝ սկսաւ աշակերտնե-
ռուն ոտքը վլանալ, և ան ղենձակովը սրբել։
Վլացվելու կարգը երբոր պետրոսի հասաւ,
պետրոս ետ քաշվելով ըսաց, տէր ատ ինչ է՝
դուն իմ ոտքս պիտոր վլանաս, քաւ լեցի ատ
բանը չէմ թողուր որ ընես։ Յետոյ իրեն ը-
սաւ, ես ինչ որ կընեմնէ՝ դուն հիմա չէս գի-
տեր, բայց ետքը կիմանաս. թէ որ քեզ չիվը-
լանամ՝ նէ՝ հետս մասն ու բաժին չէս ունե-
նար։ Ան ատենը պետրոսալ ըսաւ, տէր ա-
նանկ էնէ՝ չէ՞ թէ միան ոտքս, հապա ձեռքս
ալ գլուխսալ վրայ։ Յետոյ ասոր պատաս-
խան տրվաւ թէ՝ վրան գլուխը վրայցված
մարդուն՝ ոտվընեռէն 'ի զատ պետքը չէ որ
ուրիշ տեղնալ վրայցվի. որ անով բոլորովին
մաքուր կըլլա։ Այսանկ ամմէն աշակերտաց
ոտքը վլանալէն ետև՝ յոթ նորէն լաթերը վրան
առաւ նստեցաւ՝ ու ըսաւ իրենց. դիտէք ինչ-
չաւ համար ձեզի ասանկ ըրի. դուք իս վարդա-
պետ կըսէք, տեր կըկանչէք, և շիտակը կը-
սէք՝ ինչպէս եմ նէ. ուրեմն թէ որ ես ձեր
տերն ու վարդապետը ըլլալով՝ ձեր ոտքը վլա-
ցի, պէտք է որ դուքալ մէկզմէկու ոտքը վը-
լանաք, ինչպէս որ ձեզի սրինակ տրվի։

Այսոր ետևէն յոքիմնալ խօսելէն ետքը՝ նո-
ռէն ըսաւ թէ ձեզմէ մէկը պիտի իս մատնէ։
Աշակերտները մէյմալ սկսան ասելիս վրա
շփոթվիլ. և ան տեղը յոթ քով նստած ըլլալով

յովհաննէս իր սիրելի աշակերտը, աստիւնն պետրոս անոր աչք ըրաւ որ հարցունէ թէ՝ ով պիտոր ըլլա անն մատնիչը։ Յետոյ իրեն պատասխան տրվաւ թէ՝ որուն որ ես աս թրջած պատառս տամ՝ ան է. ու երկնցուց յուդայի տրվաւ. և ան ատենը սատանանալ յուդայի սրտին մէջը աւելի հաստատեց՝ յոի դէմ ատելութիւր, ու իր ագահութէ ախտը։ Նոր համար յոյ իրեն ըսաւ թէ՝ ինչ որ պիտի ընեսնէ շուտով ըրէ. բայց աս ըսածիս միտքը ուրիշները չիմացան, հապա ոմանք անանկ կարծիք դացին թէ, իրենց գանձանակը յուդայի քով ըլլալով յոյ ասով իրեն ապրսպրած ըլլա թէ՝ աս տօն օրերը ինչ որ պէտք է նէ գնէ, կամ գնա աղքատները հոգա։ Յուդան աս բանս որ լսեց շուտմը դուրս ելաւ, և ան գիշեր ատենը վազեց յոի թշնամիներուն քովը գնաց՝ որ ալ մատնուէ բանը հոգա, ինչպէս որ հետեւելին խօսք դրեր էր։ Յետոյ անոր երթալէն ետքը պատրաստվեցաւ՝ որ ինքնալ մէկալ աշակերտացը հետ ձիթենեաց լեռը երթա։ Յուան ատենը աշակերտներուն իր վերջի սիրոյ կտակը ընելէն ետքը, ըսաւ թէ՝ աս գիշերը դուք իս երեսէ պիտի ձգէք։ Նոր վրա շուտմը պետրոս դարձաւ ըսաւ թէ, ատ բանը դամմէնքնալ ընելու ըլլաննէ՝ ես չեմ ըներ. հապա պատրաստ եմ քեզի հետ բանտը երթալ՝ ու մեռնիլ ալ։ Յետոյ իրեն պատասխան տրվաւ թէ՝ ինչ կրսես ինծի համար մեռնիլ. Չիմարիտ կրսեմ քեզի պետրոս, որ աս գիշեր դուն գեռ հաւը (յի՝ խօռօզը) երկու հեղ չի կանչած՝ իրէք հեղ պիտի իս ուրանաս։ Բայց պետրոս իր խօսքին վրա կեցած կըսէր թէ՝ ես

մեռցունելու ալ ըլլաննէ՝ քեզ չեմ ուրանար և սասկ մէկալ աշակերտներնալ ըսին։

ԳԼ. ԻԹ.

Յետ պարոնէն աղօթելոյ, ըմբռնուն, դատապարտուիլը, և պետրոսի ուրանալը։

Մատ. իզ։ Մարկ. ժգ։ Ղուկ. ին։ Յովհ. ժգ։

Դ՝ս բաներէս ետքը՝ գիշերանց ելաւ յա իր աշակերտներովը դէպ 'ի ձիթենեաց լեռը երթալու. ու կերդրոն ըսած ձորէն (յ՝ տերէյէն) որ անդիի կողմը անցաւ, հոն մէկ գեթսեմանի ըսած դեղմը աշակերտները թողուց, ու միսն անոնցմէ իրեքը, յ՝ պետրոսը յակովբոսը ու յովհաննէսը հետը առած, քիչմը առաջ գնաց մէկ պարտէզմը մտաւ, և դարձաւ անոնց ըսաւ թէ՝ շատ մեծ տրտմութիւն նեղուած մէջ եմ, դուք հոս տեղս արթուն կեցէք սպասեցէք ինծի։ Դ՝ս ինքը անոնցմէ քիչմը առաջ գնաց հեռացաւ, ու երեսին վրայ ինկաւ հօր՝ յ՝ աղօթք ընելով ըսաւ. հայր թէ որ կարելի է նէ՝ աս իմ վրայ գալու չարչարանքներէն խս խալըսէ, հապա թէ չէ ինչպէս որ կըկամենամէ՝ անանկ թող ըլլա. ու ան ատենը սաստիկ նեղութիւնէն արուն քրտինք սկսաւ թափել. և ան տեղը երկինքէն մէկ հրեշտակմը եկաւ քովը՝ որ մխիթարէ սիրատուա իրեն։ Դ՝տքը ելաւ եկաւ տեսաւ որ՝ ան իրեք աշակերտները սաստիկ տրտմութիւնէն ինկած կըքընանային, արթնցուց անոնք՝ ըսաւ որ ելլէն աղօթք ընեն որ փորձուելու մէջ չիյնան։ ու ինքը նորէն գնաց աղօթելու։ Դ՝տքը մէկմալ դարձաւ քովերնին՝ նորէն արթնցուց, ու

գնաց։ Երրորդ անգամը որ եկաւ, այսու-
հետև ըսաւ պառկեցէք ու հանգչեցէք, ահա
ժամանակը հասաւ որ Թշնամիներուս ձեռ-
քը մատնըվիմ. անանկ էնէ ելլենք առջևնին
երթանք։

Այս որ կըսէր՝ մէյմալ տեսնես որ անդիէն
խելմը մարդիք՝ բռնող զինվորներալ հետեր-
նին, յուդայ առջևնին ինկած, ջահերով (ցոր՝
մաշալներով), որը Թուր ձեռքը առած, որը
բիր՝ (ցոր՝ սօփա) եկան յսի մօտեցան։ Ան ա-
տենը յուդա՝ ինչպէս որ անոնց նշան տըվեր էր
յիսը ճանչնալու ու բռնելու, գնաց յիսը պագ-
նելով ըսաւ՝ բարև քեզ վարդապետ։ Ցոր՝
պատասխան տըվաւ. յուդա ըսաւ՝ իս պագ-
նելով եկեր կըմատնես։ Անտքը յիսուսն ան բաղ-
մուԹիւնը առջևը ելաւ կեցաւ, ու իրենց հարց-
ցուց Թէ ով կըփնտռէք կուզէք։ Անոնքալ ը-
կին. յիսուսն նազովրեցին կուզենք։ Ցոր՝ անոնց
ըսելունպէս Թէ՝ ան էս եմ. յուդայի հետ ան
ամբոխը սոսկալով ետ ետ գացին ու գետինը
զարնըվեցան։ Այս որ եղաւ՝ նորէն մէյմալ յիսուսն
անոնց հարցուց Թէ ով կուզէք. անոնքալ նո-
րէն ըսին. յիսուսն նազովրեցին։ Ցոր՝ պատասխան
տըվաւ Թէ՝ ձեզի ըսի որ էս եմ. ուստի Թէ
որ իս միան կուզէք նէ, Թող տըվէք ըսաւ՝ մէ-
կալ աշակերտներուս համար, որ բանտերնին
երթան։ Ան ատենը երբոր յիսուսն Թոյլ
տըվաւ, ինքը բռնեցին կապեցին. բայց աշա-
կերտները աս բանիս չկրնալով՝ սկսան
դէմ կենալ, ու յիսուսի հրաման ուզեցին որ դա-
նակով անոնք զարնեն, և ան շփոԹուած մէջը
շուտմը պետրոս մէկուն վրա Թուրը ինքեցուց՝
ու աջ անկանը Թուրը վրայէն, որ աս՝ քահա-

նայապետին ծառաներէն մէկն էր՝ մաղբոս ը-
սած։ Բայց յո՛ հոն տեղը վրա հասաւ անկա-
ՀԸ բժշկեց, ու պետրոսի ըսաւ թէ՝ թուրքա
տեղը դիր, հօր ա՜յ ինծի տրված չարչարանաց
բաժակը պիտի ես չի խմե՞մ մի։ Ինչ կարծես
ըսաւ՝ չե՞մ կրնար իմ հօրս աղաչել՝ որ հիմա
հոս եօթանասունվերկու հազարէն աւելի հը-
բեշտակ իրկէ՝ որ իս ասոնց ձեռքէն խալըսէ.
բայց ան ատենը ըսաւ՝ չէր կատարվեր ան գը-
րած մարգարէութիւնները, որ ըսեր են թէ՝ պէտք
է որ ասանկ ըլլա։

Բայց յո՛ անանկ բռնած կապած, առաջա-
ւին աննա քահանայապետին տարին, որ յոի
սկսաւ հարցունել փնտռել իր աշակերտներ
ժողվելուն՝ և ըրած քարոզութիւններուն վրա։
Յետոյ իրեն պատասխան տրվաւ թէ՝ ես ծա-
ծուկ բան չեմ խօսած, իմ տրված քարոզնե-
ըրս ամմէնքը լսեր են ինծի ինչ կըհարցու-
նես, ըսողներուն հարցուր։ Այ որ ըսաւ յո՛,
ան ատենը քահանայապետին ծառաներէն մէ-
կը՝ ապտակմը (յո՛ շամառմը) զարկաւ յոի, ա-
տանկ ըսաւ քահանայապետին պատասխան
կուտաս։ Յետոյ իրեն ըսաւ, թէ որ ծուռ բան
մը խօսեցանէ՝ ըսէ ինչ է. հապա թէ ըսածս
շիտակ էնէ, ինչու՞ ինծի կըզարնես։ Բայց
յոը անկէցյալ հանեցին կայիափա քահանայա-
պետին առջևը բերին, և հոնալ բոլոր քահա-
նաները ու կարդացողները միյտեղ եկեր էին՝
որ յոի դատաստանը տեսնան. ասոնք սկսան
սուտ վկա փնտռել, որ անով յոը դատապար-
տեն ու ըսպաննեն. բայց Ճորով երկու հոգի
դան՝ որ աս բանը վրան վրկայեցին թէ՝
մենք մեր անկըՃովը ասկէց լսեցինք որ կըսեր

թէ՝ ես կընամ այ տաչարը քակեր, ու իրեք օրվան մէջ նորէն շիներ։ Բայց այսու ամենայն ասվկաներուս ըսածնալ մէկմէկու նման չէր։ Ան ատենը քահանայապետը ելաւ կայնեցաւ՝ յսի ըսաւ թէ՝ ինչու ասոր պատասխանը չես իտար. յս ամենեին լուռ կեցաւ բան չըսաւ։ Քահանայապետը նորէն յսի ըսաւ քեզ այ անուանովը կերդվընցունեմ որ ըսես թէ՝ դուն քոն ես այ որդին։ Ան ժամանակը յս պատասխան տըվաւ թէ՝ դուն կըսես որ ես եմ, որ վերջին դատաստանին օրը ահագին կարողաւ թագաւորին աջակողմանը։ Ան որ լսեց քահանայապետը՝ կատղեցաւ վրայի լաթերը պատռեց ու ըսաւ, տեսէք սրվոր ըրած հայհոյանքը, այսուհետև վկայալ պէտք չէ, որ ամենքդ լսեցիք. ուրեմն ինչպես կերևնա ձեզի։ Ասոնք պատասխան տըվին թէ մեռնելու արժանի է. և անտեղը շուտմը մէկը մէկալը սկսան նախատելով յսի երեսը թքնել, զարնել՝ ու հազար քամահրանք նախատինք ըսել իրեն, և ոմանք ալ գլուխը լաթմը ձգեցին որ չիտեսնա, ու անանկ կըզարնէին՝ ծաղր ընելով կըհարցունէին՝ թէ որ քոն ես նէ՝ մարգարէացիր գիտցիր թէ ով է քեզի զարնողը։

Ան ատենը պետրոս՝ որ ինքնալ յսի ետևէն քահանայապետին տունը եկեր էր, երբոր դուրսը ծառաներուն հետ կրակին քովը նստեր կըտաքնար, ան տեղը քահանայապետին աղախինը եկաւ՝ իրեն նայեցաւ ու ըսաւ, հա դուն ալ յսի նազովրեցիին հետ էիր։ Պետրոս ալ ամենուն առջևը ուրացաւ ըսաց թէ ես ան չեմ ճանչնար, չեմ գիտեր դուն ինչ կըսես. ու ան

որ եղաւ՝ եւեւէն մէկմը հաւը կանչեց։ Յետ-
քը երբոր նստած տեղէն ելաւ դուրս եկաւ՝
ուրիշ կնիկմընալ զինքը տեսաւ անալ անտե-
ղը եղած մարդիկներուն ըսաւ թէ՝ ամ ալ յիս
նազովրեցիին հետ էր. անոնքալ վրա տալով
որ հարցուցին՝ պետրոս մէկմալ ուրացաւ էր-
դում ընելով ըսաւ թէ՝ ես ան մարդը չեմ գի-
տեր չեմ ճանչնար։ Նոկէ ետքը քիչմընալ որ
անցաւ՝ քահանայապետին ծառաներուն մէկը,
որ ան անկաձը կտրած մաղքոսին ազգական
էր. ասիկայալ պետրոսը տեսածինպէս ըսաւ
թէ՝ դուն ան չէս մի՝ որ ես քեզ պարտէզը տե-
սա յին հետը. աս բանիս ուրիշներնալ
տէր ելան, ըսին թէ՝ իրաւ որ ասալ յին հետ
էր, որ ինքնալ գալիլեացի է՝ ինչպէս իր լե-
զուն կրցրցունէ։ Ոնց ատենը պետրոս երրորդ
անգամ սկսաւ նզովելով (յիշ՝ նալէթ տալով)
երդվընալ թէ՝ ես ան մարդը չեմ ճանչնար
չեմ գիտեր. ու շուտմը ըսածինպէս՝ հաւնալ
երրորդ անգամ կանչեց։ Դառալ ան ատենը որ
անդին չարչարանաց մէջ էր՝ գլուխը վերցուց
դէպ 'ի պետրոսը նայեցաւ. և աս նայելովս՝
պետրոսի միտքը ինկաւ յին ըսածը, ու շուտմը
ինքիրէն գալով՝ սաստիկ զղջացաւ, ձգեց ան-
կէց դուրս ելաւ. ու սկսաւ լալ ողբալ իր ը-
րած ուրացութիւնը։

ԳԼ. Լ.

ՅԾ պիղատոսի դատաստանը կը գտանեն, և չարչարելն եւս կը դատապարտին որ խաչվի։

Մատ. ԺԷ։ Մարկ. ԺԵ։ Ղուկ. ԻԳ։ Յովհ. ԺԹ։

ՅՀ այսպէս ան հինգշաբթի գիշերը տանջվելէն ետքը, ուրբաթ օրը առտվանց կանուխ նորէն մէկտեղ ժողվեցան բոլոր քահանաները ու կարդացողները՝ խօսք դրին որ ալ չուշացուցնեն զինքը շուտով սպաննելն։ Բայց հրէաները իշխանուն չուզենալով աս բանը գլուխ տանելու, առին յիսուս պիղատոսի տարին, որ հռոմայեցոց դիէն դատաւոր գրած էր եղէմի վրա։ Բն ատենը յուդանալ տեսնելով որ՝ յիսուս դատապարտվեցաւ որ մեռնի՝ իրեն մէկ զղջումը եկաւ. ուստի տարաւ քահանայապետներուն ետ տվաւ ան իր առած եռասուն արծաթը ու ըսաւ թէ՝ մեղա որ ասանկ արդար մարդու արունը մնա։ Բնոնք ալ ըսին թէ՝ մեր ինչ հոգն է, դուն գնա մտմտա։ Յուդայալ ան ըստակը տարաւ տաճարը ձգեց, ու յուսահատուէն գնաց ինք զինքը կախեց խըղդեց։ Բրահանայապետներնալ՝ ան ըստակը արունի՝ գին է ըսելով արժանի չի տեսան որ տաճարը առնեն, հապա խորհուրդ ըրին՝ անով մէկ բրտի ագարակը (յի՝ չէօմլեկճիի թառլամը) գնեցին, որ օտարականներու (յի՝ խարիսներու) գերեզմանոց ըլլա. և աս պատճառովըս ետքը ան տեղը՝ արունի ագարակ ըսվեցաւ։

Հիմա գանք որ՝ երբոր յիսուս պիղատոսի առջև հանեցին, սկսան վրան սուտ բաներ ըսել թէ՝

աս մարդս մեր ազգը կրմոլորցունէ, ու թող
չիտար որ հռոմայեցոց կայսերը դրած հարկը
կիմ տուրքը վճարենք տանք, և կրսէ թէ ինքը
քրիստոս է ու թագաւոր է։ Պիղատոս
ալ յիսը առանձին քովը կանչեց առաւ՝ ու իրեն
հարցուց թէ դուն հրէաներուն թագաւորն
ես մի։ Յիսուս պատասխան տրվաւ թէ՝ անանկ
է՝ ինչպէս որ ըսիր, բայց իմ թագաւորութիւն
աս աշխարքիս վրա չէ, հապա թէ անանկ ըլ-
լար նէ՝ իմ ծառաներս չէին թողուր՝ որ աս
հրէաներուն ձեռքը իյնամ։ հապա ես աշ-
խարքը եկեր եմ որ ճշմարտութիւնը քարոզեմ։ Պի-
զատոս նորէն տարաւ յիսուսն առ-
ջևը հանեց, ու ըսաւ թէ՝ ես աս մարդուս
վրա վնաս (յիսուս) չեմ գտնար, որ զինքը
սպաննել տամ։ Բայց ատենը անոնք նորէն
կատղած՝ սկսան կերպ կերպ բաներ ըսել յիսուսի
վրա։ Յիսուս ամենևին պատասխան չէր ի տար
այնչափ որ՝ պիղատոսալ զարմացաւ թէ յիսուս
ինչպէս բերանը չի բանար իրեն անմեղութիւնը
ցրցունէր։ Բայց անոնց ըսածէն երբոր իմա-
ցաւ պիղատոս որ յիսուս գալիլեացի է, որ աստուած
հերովդէսի իշխանութենէն կկիսար, վրայէն
թողվեց՝ յիսուս հերովդէսի խրկեց, որ անալ
ան օրերը եղեմ եկեր էր։ Հերովդէս առջևի
բերանը երբոր յիսուս տեսաւ՝ շատ ուրախացաւ,
ինչու որ՝ շատոնցմէ լսեր էր յիսուսի վրա, ու հե-
տաքրքրութիւն կուզեր որ մէկ հրաշքմընալ յիսուս
առջևը ընէ. ուստի սկսաւ շատ բաներ յիսուսի
հարցունել։ Բայց յիսուսն ամենևին մէկ պա-
տասխանմը որ չի լսեց, անոր համար հերով-
դէսալ ինքը քամահրելով ու ծաղր ընելով՝ վը-
րան ճերմակ լաթմը ձգել տրվաւ, ու նորէն

պիղատոսի դարձուց՝ որ երթա ինքը յոի դատաստանը տեսնէ։

Ան ատենը պիղատոս յոի ամբաստանողներուն յայտնի ըսաւ թէ՝ դուք ասիկա ինծի բերիք ըսիք թէ՝ մէկ խռովարար մարդմընէ, բայց ինչպէս դուքաք տեսաք՝ ես վրան ատ ձեր ըսածներէն բանմը չեմ գտներ. ինչպէս հերովդէս ալ տեսաւ որ անանկ բանմը չէ ըրեր՝ որ մեռնելու արժանի ըլլա, ուրեմն քիչմը պատիժ տանք ասոր՝ ու թողունք որ երթա, ինչպէս դուք ալ սովորութի ունիք՝ որ զատկին մէկ բանտարկեալմը ազատէք, թող աս՝ յոի քսաներորդ ըլլա անիկա։ Ան ատենները բանտը մէկ չարագործ մարդասպան աւազակմը կար՝ յեսու բարաբբա անուանով. ուստի երբոր պիղատոս աս բանս առջևնին դրաւ, քահանայապետները և իշխանները ժողովուրդը յորդորեցին, ու անանկ ամմէնքը մէկ բերան կանչեցին թէ՝ կուզենք որ բարաբբան արձակես, ու յոը մեռցունես։ Ան՝ սոր վրա պիղատոսալ աղէկ հասկընալով յոի անմեղութիւնը՝ ու անոնց չար նախանձը, և ուզելով որ յոը խաչըսէ, բանը ուշացուց, նորէն իրենց հարցուց թէ՝ հապա ինչ կուզեք որ ընեմ ձեր հրէից թագաւորը։ Անոնքաք կանչեցին թէ խաչը հանէ, թող խաչվի։ Ան ալ ըսաւ, ինչու, ինչ չար բան գործեց, ես մեռնելու պատմը անոր վրա չի տեսա։ Անոնքաք ամմէնքը աւելի կատղած ոտք կոխեր՝ կրկանչլռտէին թէ՝ կուզենք որ խաչ հանես։ Պիղատոս ան ատենը ջուր ուզեց առջևնին ձեռքը վրայ՝ ըսաւ թէ՝ ես իմ՝ ձեռքս ատ արդար մարդուն արունովը չեմ պըղծարկեր, դուք գիտէք։ Ան՝ սոր երբոր

բոլոր ժողովուրդնալ պատասխան տրվաւ թէ՝ թող մեր վրա և մեր տղոցը վրա ըլլա ատոր աբ-
ուունը ան ատենը պիղատոսալ յոր իր զինվոր-
ներուն ձեռքը տրվաւ որ տանջեն։ Զինվոր-
ներն ան ատենը նորէն յոր աղէկմը ծեծելէն
ետև, մէջերնին առին՝ լաթերը վրայէն հա-
նեցին, ու ծաղը ընելով վրան մէկ կարմիր
լաթմը ձգեցին. մէկ փուշէ ոլորած պրսակ-
մը՝ թագի տեղ գլուխը անցուցին, ու ձեռքը
մէկ եղէգմը (յո՝ խամիշմը կատը) տրվին գա-
ւազանի տեղ. և զինքը անանկ նստեցուցած՝
կուգային առջևը ծունկ կրչոքէին, ու ծաղը
ընելով կըսէին՝ ողջ լեր թագաւոր հրէից.
ետքը կելլէին երեսը թքնելով ան եղէգը
ձեռքէն կառնէին՝ անով գլխուն կըզարնէին.
ու ոմանքալ երեսը ապտակ (յո՝ շամաւ) կը-
զարնէին։

Ետքը պիղատոս յոր այսպիսի ողորմելի կեր-
պարանքով նորէն հրէաներուն առջևը հանեց
ու ըսաւ, գիտնաք որ ես ասոր վրա դատապար-
տելու բան չի գտա, ահա ձեր մարդը ձեզի,
դուք առէք ինչպէս կուզէքնէ խաչեցէք։ Ա-
նոնքալ պատասխան տրվին թէ՝ մեր օրէնքը
կըսէ որ այդպիսի մարդը պէտք է որ խաչվի,
ինչու որ՝ ինքը զինքը Աստուծի տեղ կըդրնէ։
Ա՛ս որ լսեց պիղատոս՝ սիրտը վախմը ինկաւ,
ուստի նորէն յոր առանձին առաւ, սկսաւ ի-
րեն հարցունել թէ՝ դուն ինչ ես, ուսկից ե-
կեր ես։ Յիսուս ան բանիս ամենևին պատաս-
խան չի տրվաւ։ Պիղատոսալ ըսաւ, ատ ինչ
է հետս չես ուզեր խօսիլ, չես գիտեր որ իմ
ձեռքս է իշխանութիւնը քեզ խաչ հանելու կամ
թէ խալըսելու։ Ան ատենը յոյալ ըսաւ, դուն

իմ վրա իշխանութիւն չունիս՝ թէ որ վերէն քեզի տրված չըլլար նէ, անոր համար ով որ իս քեզի մատնեցին՝ մեծ յանցաւորը (յ՝սուչլուն) ան է։ Այս բանիս վրա պիղատոսի խղճմտանքը աւելի զարկաւ, կուզէր որ յիսը ազատէ. բայց հրէաները նորէն սկսան կանչռտել, ու պիղատոսի ասանկ ըսել թէ՝ ատ մարդը ազատեսնէ՝ հռոմայեցոց կայսերը բարեկամը չէս. ինչու որ՝ ով որ զինքը թագաւոր կըսէնէ՝ անիկա կայսերը դեմ գլուխ կըվերցունէ։ Այն ատենը պիղատոս նորէն յիսը հրէից առջևը հանեց ու ըսաց, ահա ձեր թագաւորը ձեզի կուտամ։ Այսոնքալ նորէն սկսան կանչել, վերցուր վերցուր մեր մէջէն ատ մարդը, ու խաչ հանէ. Պիղատոսալ հարցուց ըսաւ թէ՝ ինչ է՝ կուզէք որ ես ձեր թագաւորը խաչ հանեմ։ Քահանայապետներնալ ասոր պատասխան տըվին թէ՝ մենք կայսերմէն 'ի զատ թագաւոր չունինք։ Այսքը երբոր ալ ուրիշ ճար չի տեսաւ պիղատոս, ինքնալ վճիռը կարեց ան ուրբաթ օրը՝ հրէից պասքայի տօնին կէս աւուր ատենը, ձեռվընին տըվաւ որ առնեն տանին ուզածնիկպէս յիսխաչը հանեն, ու յիսու բարաբբա աւազակը ազատեն։

ԳԼ. ԼԶ.

Հրէ խաչելուները՝ ու Խաղոմը։

Մատ. ԻԷ։ Մարկ. ԺԵ։ Ղուկ. ԻԷ։ Յոհ. ԺԹ։

Պիղատոսի զինվորները անատենը յիսը բըռնեցին մէջերնին առին, ան կարմիր լաթը վրայէն հանեցին՝ ու իր լաթերը նորէն հագուցին, աննկ խաչը ուսը (յ՝ օմուզին վրա)

դրած սկսան դէպ՝ի գողգոթա լեռը տանիլ։ Ամբան երթալնին մէկ մարդմը դիմացին ելաւ՝ որ սիմոն կիւրենացի կըսվէր. ասիկայալ բռնեցին որ յետ հետ վերցուցնէ տանի ան խաչափայտը։ Յետ հետևէն շատ ժողովուրդ էրիկ մարդ կնիկ մարդ կերթային, ու գուլթերը նին շարժելով կուլային յետ խեղճութիւնը վրա։ Յետալ դարձաւ անոնց ըսաց. դստերք Երէմի, իմ վրաս մի լաք, հապա ձեր վրա և ձեր որդւոցը վրա լացէք. ատեն պիտոր գա որ՝ երանէկ ըսեն ամուլներուն որ զաւակ չեն բերեր. և սաստիկ նեղուէն լեռներուն պիտի ըսեն թէ՝ վրանիս փլէք մեզ ծածկեցէք որ աս խեղճութիւնները չի տեսնենք։ Թէ որ թալար կի՞ կանանչ ծառին այսպէս կընեն՝ ինչպէս կրտեսնէք իմ վրաս, հապա չորցած ծառին ինչ պիտի ըլա։

Երբորալ գողգոթա լեռը հասան, յետ լեղիով խառնած գինի տրվին, անալ համը առաւնէ՝ չուզեց խըմել։ Յետքը լաթերը վրայէն հանած անանկ մերկ յետը խաչին վրա հանեցին գամեցին. ու իրեն երկու գին մէկ մէկ աւազակ մարդէքալ հրեաները ան օրը բերին խաչել տրվին, որ ասով աւելի նախատինք ըլա յետ։ Յետ որ խաչին վրա ելաւ, առջի խօսքը իր խաչ հանողներուն վրա աղօթելը եղաւ՝ որ ըսաց. Հայր իմ՝ ասոնց թողուն տուր որ չեն գիտեր ինչ կընեն։ Պիղատոս մէկ տախտակիմը վրա՝ յետ վրան գրած յանցանքները (ի՞ սուչը) ասանկ գրել տրվաւ՝ թէ ասիկա է՝ Յետ Նազովրեցի Թագաւոր Հրէից. և աս բանը իրեք ազգի լեզվով ի՞ հրեաներէն, հռոմայեցիներէն ու հռոմերէն ըլաւ, անանկ խաչին

վրա դնել տրվաւ, որ ամմինքը կարդան ի
խմանան։ Բ՝ն որ տեսան հրեաները՝ պիղատո-
սի աղաչելին որ անանկ չի գրէ՝ Թագաւո-
հրեից, հապա՝ ասանկ թէ՝ ինքը ըսաւ որ Թա-
գաւոր եմ հրեից։ Պիղատոսալ իրենց պատաս-
խան տրվաւ թէ՝ գրածս գրած է, փոխել
չըլլար։ Բ՝նատենը զինվորները յոթ լաթերը
առին չորս բաժին ըրին՝ մէջերնին բաժնե-
ցին, ու պատմուշանը կիմ կապան վերէն 'ի
վար բոլորը հուսվածքով գործած ըլլալով՝
մեղբընցան կրտրրտել. ուստի վրան վիճակ
գեցին՝ որ անանկ մէկուն ինկաւ։

Հրեից քահանայապետները ու իշխանները
իրենց մարդիքներովը՝ ան ժամանակը յոթ առ-
ջևը եկած՝ օխ կանչելով հազար նախատանք
ու հայհոյանք կուտային յոթ, ու քամահրե-
լով կըսեին, թէ որ քու ըսածիդպէս դուն այ
որդին ես նէ՝ քեզ հիմա խալըսէ, ատ խաչէդ
վար ինջիր՝ որ քեզի հաւատանք. տեսէք սը-
վոր կըսեին՝ որ ուրիշները ազատեց, ու ինքը
զինքը չիկրնար ազատել. թէ որ իր յոյսը այ
վրա դրերէնէ, թող ՝ած հիմա զինքը ասկեց
ազատէ։ Զինվորներնալ անոնց ըրածը տես-
նելով, իրենքալ ծաղր ընելու բաներ կըսեին։
Բ՝ւ աս հերիք չէ՝ նաև ան յոթ քով խաչված
աւազակներուն մէկը դարձաւ ինքնալ յոթ ը-
սաց. թէ որ դուն քեն ես նէ՝ քեզալ մեղի
հետ ասկեց ազատէ։ Բ՝այց ան ժամանակը
մէկալ աւազակը անիկա չէխեց թէ՝ այ չես
վախնար, որ դունալ ան պատիժը կըքաշես-
կոր. մենք ըսաւ արժանապէս մեր ըրածին
պատիժը առեր ենք, բայց ասիկա մէկ չար
բանմը չէ գործած։ Բ՝տքը դարձաւ յոթ ըսաւ,

տէր յիշէ իս երբոր քու թագաւորութիւդ գալու որ ըլլաս։ Եւ ասաւ իրեն պատասխան տալաւ թէ՝ Ճշմարիտ կըսեմ քեզի՝ որ այսօր դրախտը իմ հետս մէյտեղ պիտի ըլլաս։

Եւ թէ խաչելութեան տեսնը իրեն ազգականնե-ըն քովը եկեր կեցեր էին. ասոնց մէջը յիսուսի մարը կոյսն Մարիամ տեսնելով, և իր սիրական յովհաննէս աշակերտը, մօրը ցրցուն-ելով ան աշակերտը՝ ըսաւ թէ՝ ահա՛ քու որդիտ, ու աշակերտին՝ իր մարը ցրցունելով ըսաց՝ ահա քու մարդդ. և անկէ ետքը յովհաննէսալ կոյսն Մարիամ որ յոթ որբ մնացած էր՝ իր տունը առաւ պահեց։ Եւ կէս օրվան դէմ վեց ժամին (այ՝ սահաթին) խաչին վրա բաւեռվելունպէս՝ արևը խաւարեցաւ՝ և բոլոր աշխարքը մթընցաւ իրեք ժամի չափ, ու ինը ժամին ատենները՝ կէսօրը իրեք ժամ անցած՝ յիսուսի ամուր ձանով կանչեց՝ Էլի Էլի լամա սաբաքթանի, որ ըսել է, ՈՏ իմ ՈՏ իմ, ինչու իս երեսէ թողեր ես։ Յետքը երբոր ըսաւ, թէ ծարվեր եմ, շուտմը մէկը վազեց՝ սպունգը (այ՝ սիւնակերը) հոն քացախը թաթխեց՝ ու եղեգիմը վրա անցուցած դէպ՝ի յոթի բերանը երկընցուց։ Եւ երբոր ան քացախը բերանը առաւ, ըսաւ՝ ալ ամմին բան լըմընցաւ. ու նորեն ամուր ձանով կանչեց ըսաւ, հայր՝ քու ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս. անանկ գլուխը վար ծռեց՝ հոգին տրվաւ։ Ան ատենը երուսաղէմի տաճարին վարագուրը վերէն՝ի վար երկուք ճղքըվեցաւ, երկրաշարժութիւն եղաւ, որ ապառաժ քարեր պատռեցան, գերեզմանները բացվեցան, ու շատ արդար մարդիքներ յարուցի առած՝ եղէմի մէջը շատ մար-

գոյ երևցան՝ յոի Ճշմարիտ յարութիւնը հաստատելու համար։ Ոչ տեղը հարիւրապետնալ իր զինվորներուն հետ աս հրաշքները տեսնելով, սոսկացին՝ ու յոի համար ըսին թէ՝ Ճշմարիտ աս մարդը այ որդի էր։ Ասանապես քովը գտնըված ժողովուրդնալ յոի վրա խղճալով կուրծքերնին զարնելով ելան ետ դարձան։ Բրբորալ իրիկունը մօտեցաւ՝ հրեաները խղճմտանք ընելով՝ թէ օրինաց դէմ՝ չըլլա որ ան խաչածներուն մարմինները ինչման մէկալ օրը խաչին վրա մընան, որ ան շաբաթնօրը իրենց մեծ տնախմբութիւն էր. գացին պիղատոսէն ուզեցին որ անոնց ծրնկվընները ջարդէն՝ որ շուտով մեռնին, ու անկէց վերցուին։ Ասատի եկան զինվորները առաջ ան երկու աւազակներուն ծրնկվընները ջարդելով մեռուցին. ետքը երբոր յոի տեսան որ հոգին աւանդեր է, անորը չիջարդեցին. հապա զինվորներուն մէկը ձեռքի տեգովը (՝ՅՇ՝ մզրախովը) յոի կողը խոցեց. ու շուտմը արուն ու ջուր բղխեց կողէն։

Ասատենը յովսէփ արեմաթացին, որ ինքնալ հրեից իշխաններէն մէկն էր, և գաղտուկ յոի աշակերտուի կըներ՝ գնաց պիղատոսէն հրաման առաւ, որ ինքը երթա յոի մարմինը խաչէն ինջեցուցնէ գերեզման դնէ։ Ասատի նիկոդիմոս բսած իշխանէն հետ, (որ անալ ծածուկ յոի աշակերտներէն էր, (եկան խաչէն ինջեցուցին յոի մարմինը՝ մեծարանքով զըմրասեցին. ու մաքուր կտաւով պատած՝ հոն խասեցին. ու մաքուր կտաւով պատած՝ հոն խասեցին. ու մաքուր կտաւով պատած՝ հոն չէրուէ տեղին մօտ մէկ պարտէզիմը մէջ՝ նոր քարէ փորած գերեզմանը դրին, ու մէկ մեծ քարովմը գերեզմանը գոցեցին՝ ելան գացին։

Բայց շաբաթ առտըվանց քահանայապետնե-
ըը ու փարիսեցիները նորէն պիղատոսի գա-
ցին ըսին թէ՝ կըյիշենք որ ան խաբեբան ոգ-
էընէ կըսէր թէ՝ իրեք օրէն ետև յարուցի պի-
տի առնեմ, ուստի հրաման տուր որ՝ գերեզ-
մանին քով աս իրեք օրըս պահապան կենա,
որ չըլլա թէ իր աշակերտները գիշերանց գան
մարմինը գողնան, ու ժողովրդին մէջը ձան
հանեն թէ յարուցի առաւ. և ասով եսքի մո-
լորութիւնը առջինէն գէշ ըլլա։ Պիղատոսալ ը-
սաւ թէ՝ գացէք ինչպէս կուզէք նէ՝ անանկ
ըրէք։ Նոնքալ գացին գերեզմանին քարը ա-
ղէկմը ամուրցուցին, կընիք (՝՝՝ մէօհիւր)
զարկին վրան, ու անանկ քովը զինվորներ պա-
հապան դրին։

ԳԼ. ԼԷ.

Յետ քառասուր յարութիւնը, և աշակերտաց երևումը։

Մատ. իբ։ Մարկ. ժգ։ Ղուկ. իդ։ Յովհ. ե. իա։

Շաբաթ իրիկունը իւղաբեր կանայքը, ՝՝՝
մարիամ մագդաղենացին, մարիամ յակո-
բայ ըսածը, յոհաննա ու սողոմի՝ մէկտեղ ե-
կան, խունկեր ու անուշահոտ եղեր առին,
պատրաստեցին՝ որ երթան յիսի մարմինը նորէն
օծեն՝ աւելի պատիւ ընեն։ Ուստի առտըվանց
կանուխ երբոր եկան որ գերեզմանը երթան՝
Ամբան անձրկեր էին թէ՝ ան գերեզմանին
մեծ քարը վրայէն ով պիտոր վերցունէ. բայց
հոն հասնելնուն՝ յանկարծակի մէկ շարժ-
մը եղաւ, ու երկինքէն լուսաւոր ձունիպէս
Ամերմակ լաթերով հրեշտակը ինջաւ, ու ան
դռանը քարը մէկ դի դրած վրան նստաւ։ Ան

բանս որ եղաւ, ան զինվոր պահապանները վախէն մեռելի պէս հոն տեղը գետինը ինկան. և անոնցմէ ոմանքալ քաղաքը վազեցին քահանայապետներուն ամ հրաշքս պատմեցին. անոնքալ մէյտեղ խորհուրդ ըրին, ու շատ ըստակ տրվին անոնց, որ ամ բանը գաղտուկ պահեն, մարդու չիզուրուցեն, հապա անանկ ձան հանեն թէ՝ գիշերանց իրենք որ քունն էին՝ յոի աշակերտները եկեր անոր մարմինը գողցեր են. և իրենց ասալ ըսին՝ թէ որ ձանը դատաւորին անկաձը հասնինէ՝ դուք մի վախնաք անհոգ կեցիք, մենք բանը կըշինենք։ Այս անանկ հրեաներուն մէջը ամ սուտ խօսքըս փըռվեցաւ։

Հիմա գանք որ, երբոր ամ իւղաբեր կանայքը գերեզմանին դուռը ասանկ բաց գտած ներս որ մտան, հոն յոի մարմինը չիգտան. հապա անոր տեղը երկու լուսաւոր հրեշտակ տեսան, որ մէկը դարձաւ ասոնց ըսաւ. մի վախնաք, դուք եկեր էք յոը կըփնտռէք. բայց հոս չէ՝ ինքը յարուցի աւեր է, ինչպէս որ ձեզի առաջուց ըսեր էր. և իրենց ասալ ըսաւ որ՝ երթան յոի աշակերտացը ամ բանը աւետիս տան։ Այլ ասոնցմէ մարիամ մագդաղենացին, ինչպէս կըսեն՝ առջի բերանը շուտմը տեսածինպէս որ յոի մարմինը գերեզմանին մէջը չէ՝ վազեց եկաւ պետրոսն ու յովհաննէսը գըտաւ, իրենց ըսաւ թէ՝ մեր տերը գերեզմանէն վերցուցեր են, չենք գիտեր ուր դրեր են։ Անոնքալ ելան հետը գերեզմանը եկան՝ տեսան որ իրաւ ըսածին պէս յոի մարմինը հոն չիկա, ուստի իրենքալ թողուցին նորէն դարձան որ մէկալ աշակերտներուն ամ բանս պատմեն։

Ինատէնը մագդաղենացին որ միսակ գերեզ-
մանին քովը կեցած կուլար, ան հրեշտակները
իրեն հարցուցին թէ՝ կրնիկ ինչու կուլաս։
Նայ ըսաւ թէ՝ հապա իմ տերը աս գերեզ-
մանէս վերցուցեր են, ու չեմ գիտեր ուր տա-
բեր դրեր են. աս ըսելենին՝ ինչպէս եղաւ որ՝
դէպ 'ի ետը դարձաւ մէկ մարդմը տեսաւ,
որ յոն էր. ու ինքը չի ճանչցաւ, կարծեց թէ
պարտէզպանմընի։ Նոյնայ հարցուց իրեն, կը-
նիկ ինչու կուլաս, ով կրփնտռես։ Նայ պա-
տասխան տրվաւ թէ, տէր թէ որ դուն առիր
նէ, խնդրեմ որ ինծի ըսես՝ ուր տարիր դրիր,
որ ես երթամ անկէց վերցունեմ։ Ինատէնը
յոյալ իր սովորական ձանովը զինքը կանչածին
պէս՝ մարիամ. մագդաղենացին շուտմը իմա-
ցաւ, ու իրեն պատասխան տրվաւ՝ բաբբու-
նի, ՝՝՝ հրամմէ վարդապետ, ու վազեց որ
ոտվընները պրլբվի. բայց յոն չի թողուց որ ան
ժամանակը իրեն մօտենա, հապա ասրսպը-
բեց որ երթա աշակերտներուն պատմէ, ու ը-
սէ թէ ինքը առ ածի պիտի համբառնա։ Նա-
քը յոն ան տեղէն անյայտ եղածինպէս՝ մագ-
դաղենացինալ շուտմը վազեց գնաց աս բանը
աշակերտներուն պատմելու։

Ին օրը յոի մէկալ աշակերտներէն երկու հո-
գի՝ եմմաուս գեղն որ երթային աս բանե-
ըրը մէջերնին խօսելով. յոն առանց զինքը ա-
նոնց յայտնելու՝ քովերնին եկաւ, ու հետեր-
նին երթալով՝ ինքնալ հարցուց իրենց թէ ատ
ինչ բանի վրա է ձեր խօսքը, ինչու ատանկ
տրտում կերթաք։ Նոնցմէ մէկը որ կղէո-
պաս կըսվեր, դարձաւ իրեն ըսաւ թէ՝ դուն
միան մնացեր ես եղէմ՝ որ աս օրերըս հոն է-

զած բաները չէս իմացեր. որ ինտոր ան յա-
նաղվրեցին սէր ու արդար մարդը՝ մեր իշ-
խանները բռնեցին խաչին վրա սպաննել տը-
վին. որ մենք յոյսերնիս վրան դրեր էինք թէ
ան պիտի ինչացիքը փրկէ. ու ետքը ասալ ը-
սին թէ՝ ինչպէս ան կինիկները հրեշտակներէն
լսեր են թէ՝ յոր ողջ է։ Այս բաներըս լսելով՝
յոսալերեանին տրվաւ որ ինչպէս մրտվընին չէն
բերեր մարդարէից քոի վրա ըսածները՝ որ կա-
տարվեցաւ. ետքը մէկիկ մէկիկ իրենց տնօրի-
նական խորհուրդները մեկնելով, երբորալ
իրիկվան դէմ եմմաուուս գեղը հասան, յա ա-
նանկ ցրցուց թէ ինքը ալ առաջ պիտոր եր-
թա. անոնքալ իրիկուն է ըսելով չի թողուցին՝
հոն հետերնին բռնեցին։ Ետքը երբոր մէկ
տեղ սեղան նստան որ ուտեն. յա հացը ձեռ-
քը առաւ օրհնեց՝ ու կրարտելով իրենց ձեռ-
քը տալուն պէս, աչվընին բացաւ, որ Ճանչ-
ցան զինքը. ու ինքը շուտմը առջևնէն անե-
ւոյթ եղաւ։ Անոնքալ ելան նորէն եղէմ
մէկալնոց քով եկան, ու դեռ իրենք իրենց
հանդիպած բանը չըսած, լսեն որ մէկալ
առաքեալները իրենց կրպատմէին թէ՝ յա յա-
ղուն առեր է, ու պետրոսի երևցեր է։

Հոնառաքեալքը մէկ տեղ ժողված՝ հրէանե-
բուն ահէն դռները գոց, երբոր աս բաներուս
վրա շփոթված կըզրուցէին, յա նորէն յան-
կարծ մէջերնին երևցաւ, ողջոյն ձեզ ըսաւ՝
ես եմ մի վախնաք. անոնքալ որ ահռած կեցեր
էին. յա՝ եկէք ըսաւ ձեռքս ու ոտքս բռնե-
ցէք որ իմանաք թէ ես եմ։ Ետև աս բանըս
հաստատելու համար՝ իրենցմէ կերակուր ու-
զեց. անոնքալ քիչմը խորված ձուկ՝ ու մեղը

ունէին, ան տրվին. յետ առաւ առջևնին կը-
տորմը անկեց կերաւ. ու ետքը իրենց հոգւոյն
սէր ընորհքը պարգևելով հրաման տրվաւ որ՝
ալ երթան չորս դին աշխարքը քարոզեն. ա-
նանկ անելուց եղաւ։ Այս ատենը Թումաս
առաքեալը հոն չէր, ուստի ետքը երբոր դար-
ձաւ առաքելոց քով եկաւ, և անոնցմէ լսեց որ
կրսէին թէ մենք հիմա յոր տեսանք. Թու-
մաս ըսաւ որ ես ինչվան որ իմ աչքովս անոր
ձեռացը մէջի գամին նշանը չտեսնեմ, ու
ձեռքովս չի բռնեմ, և ձեռքս խոցված կո-
ղը չի խոթեմ նէ՝ չեմ հաւատար։ Նոր համար
ասկէ ուրեք օրէն ետքը երբոր բոլոր աշակերտ-
ները նորէն հոն տեղը ժողված՝ Թումասալ
մէջերնին էր, յա մէկմալ երևցաւ իրենց, ու
ողջոյն տալէն ետև՝ դարձաւ Թումասի ըսաւ,
եկո՛ ձեռքովդ իմ ձեռվընեռուս խոցերուն
տեղը բռնէ նայէ, ու ձեռքդ կողս խոթէ,
անանկ անհաւատ մըլլար, հապա հաւատա-
ցեալ եղիր։ Ան ժամանակը Թումասալ հա-
ւատալով կանչեց ըսաւ. տէր իմ և ՝ած իմ։
Յետալ իրեն պատասխան տրվաւ թէ՝ դուն իս
տեսար՝ ու անանկ հաւատացիր, երանի՛ անոնց
որ իս չի տեսած՝ ինծի հաւատան։

Ասկէ ետքը անգամմըմալ աշակերտները տի-
բերայ ծովուն քովը ձուկ բռնելու ատենը՝ ի-
րենց երևցաւ յա. և անոնք որ բոլոր գիշերը
դատեր էին՝ ու բան չէին բռնած, յա իրենց՝
ծովուն մէկ կողմը ցրցուց որ ուռկանին հոն
ձգեն. երբոր անանկ ըրին, շուտմը հարուր յիս-
սունի չափ խոշոր ձկներ ուռկանին մէջը ա-
ռին, անանկ որ՝ Ճորով առանց պատռելու
վերքաշեցին։ Այս հրաշքիս վրա աշակերտներն

ալ իմացան որ ինքը յին է. ուստի քովը ե-
կան Ժողվեցան, ու մէյտեղ նստան ան ձկները
եփեցին կերան։ Ուտելէն ետքը յիսուսի պետրոսի
իրեք հեղ հարցուց թէ՝ իս կըսիրես մի. պետ-
րոսալ բոլոր սրտով պատասխան տըվաւ որ՝
այո տէր դունալ գիտես որ քեզ կըսիրեմ։
Յիսուսալ իրեն ըսաւ ատանկ է նէ՝ դունալ իմ
գառնները ու իմ ոչխարները արածէ։ Յիսուս
ասով պետրոսի իրեք անգամ ուրացուէ մեղաց
գեղը դրաւ, ու իրեն թողութիւն տըվաւ՝ հետը
հաշտըվեցաւ։ Յետքը յիսուսի վրա աս
մարգարէութեանալ ըրաւ՝ որ ծերութիւն ատենը
իր ձշմարիտ հաւատուն համար մարտիրոսութիւն
կեանքը պիտի տա։

Այս մէկ քանի պատմածներէս 'ի զատ յիսու-
սի առնելէն ետև ուրիշ շատ անգամ (ան
քառասուն օրը՝ որ աշխարքիս վրա կեցաւ՝)իր ա-
շակերտացը երևցաւ, ու քրիստոնէական հա-
ւատքին բաները իրենց սորվըցուց։ Յետքի
անգամը որ երևցաւ, իրենց ապըստրեց որ
սպասեն ինչվան ինքը հոգին սրբը խրկէ, որ
գա իրենք շնորհքով լեցուն է. ու անկէ ետ-
քը ալ երթան իր աւետարանը բոլոր աշխար-
քիս քարոզեն։ Անկէ ետև յիսուս մէյտեղ ժողվեց
իր աշակերտները ու առաւ անոնք բեթանիայի
քովը ձիթենեաց լեռը ելաւ, և հոն օրհ-
նելով իրենք՝ անոնց աչաց առջևը դէպ 'ի
երկինքը համբարձաւ գնաց։ Յիսուս երբորալ
ամպերուն մէջը մտաւ անտեսանելի եղաւ. ան
տեղը երկու հրեշտակ ճերմակ լաթեր հագ-
ված եկան աշակերտներուն երևցան ու ըսին,
ով գալիլեացիք՝ ինչ զարմացեր դէպ 'ի երկին-
քը, կընայիք աս յիսուսը որ հիմա ձեզմէ զատվեցաւ

երկինքը գնաց, նոյն կերպովը փառաւորապէս պիտի մէկ օրմը նորէն դառնա գա։ Աշակերտ ներնալ անանկ յոի երկրպագութի ընելով և ուրախութի փառք տալով ՝այ երուսաղէմ դարձան։

ՄԱՅՆ ԵՐԿԻՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՅ։

ԳԼ. Ա.

Հոգւոյն սքի գալուստը՝ ու հաւատացելոց շահնալը

Գործ. ա. բ։ = Ամ քանի. 32։

Պետ ասին մեր երկինքը համբառնալու ատենը ինչպէս որ ապրստպրեր էր՝ բոլոր առաքեալները և աշակերտները մէյտեղ՝ մէկ տունմը Ժողվեցան, կոյսն մարիամալ հետերնին, ու անդադար աղօթք ընելով կըսպասէին հոգւոյն սքի գալուն որ իրենց խոստացեր էր խրկելուն. որ ան գա իրենք ճծային շնորքով լուսաւորէ, որ քանի նոր եկեղեցւոյն առջի հիմունքը պիտի ըլլային։ Ան օրերը պետրոս առաքեալը մէջերնին ելաւ ըսաւ որ՝ յուդայի մատնիչին տեղը՝ որ կորեր գացեր էր, մէկ ուրիշմը ընտրեն, որ տասվերկու առաքելոց համրանքը լըման մընա։ Լուստի երկու հոգի, ինչպէս կըսեն՝ որ ան քանի աշակերտներէն էին, ընտրեցին առաջ բերին, մէկին անունը յովսէփ կամ յուստոս ըսած, մէկալինը՝ մատաթիա. և աղօթք ընելով վիճակ որ ձգեցին ասոնց վրա, մատաթիայի ելաւ վիճակը, ու անանկ ինքը տասվերկու առաքելոց համրանքը մնաւ։

Համբարձմանէն տասն օր որ անցաւ՝ որ պենտեկոստէ կըսվէր, այ՝ զատկէն յիսսուն օր

եսու, առտրվան դեմ յանկարծակի երկինքը գոռալով մէկ սաստիկ հովմը եկաւ՝ եկաւ ան տունը մնաւ թրնտացուց՝ ուր որ ասունք ժողված կեցեր կըսպասէին. ու իրենց ամէնն մէկուն գլխուն վրա մէյմէկ կրակի բոցի պէս լեզուի ձևով լուս երևցաւ. (որ ան դրսրվանց նշան եղաւ թէ հոգւոյն սրբոյ շնորհքը եկեր է վրանին։) Ա՛ս եղածինպէս՝ ամէնքը հոգւով սրբով լեցված՝ սկսան կերպ կերպ լեզուներով համարձակ զուրուցել ու քարոզել քրիստոս հաւատքը։ Ա՛նատենը դրսի ուրիշ երկիրներէն շատ հրէաներ որ եղէմ ուխտ եկեր էին, երբոր աս բանըս իմացան վազեցին հոն եկան, տեսան որ ասունք իրենց գիտցած լեզուները համարձակ կըզուրուցենկոր՝ մէկը պարթևերէն, մէկը պարթևերէն, մէկը հոռմերէն, մէկը արապերէն, ու ալ ուրիշ շատ կերպ լեզուներ. պաղեցան մընացին, աս ինչ զարմանալի բան է ըսին՝ որ աս միամիտ գալիլեացի մարդիքը այսպիսի լեզուներ կրխօսին։ Ա՛ն մարդիքներէն ոմանքալ եղան որ՝ սկսան քամահրելով ըսել թէ աստնք գինովցեր են։ Պետրոս առաքեալը անատենը մէկալ առաքեալներուն հետը մէկ բերան եղած՝ աստնց պատասխան տրվաւ թէ՝ քաւ լիցի գինով չենք, դեռ առտու է՝ աս ատեն՝ գինի չիխըմիր. հապա՝ հոգւով սրբով լցված ենք, ինչպէս յովելեայ մարգարէին բերնովը ՅԾ առաջուց ըսեր էր թէ՝ Հեղէց յոգւոյ իմմէ 'ի վերայ ամ մարմնոյ, և մարգարէանայցեն որդիք ձեր և դուստրք ձեր, ևն։ Ա՛տքը յոգի վրա խօսքը դարձուներով համարձակ առջևնին դրաւ անոնց քարոզեց թէ՝ աս յոնաղովը եցին որ անչափ հրաշքներովը, (որ դուք-

ալ տեսեր էք,) հաստատեր է թէ ինքը ձշմարիտ մեսիան է. ու դուք երբոր անիկա բռնեցիք խաչին վրա մեռցուցիք, ինքնալ մարդարէից ըսածինպէս՝ որ մեռնելէն յարուցեր առաւերկինքը համբարձաւ, անկէց հոգին սը խրբկեց մեզի, որոյ նշանը դուք հիմա մեր վրա կըտեսնէք և մեզմէ կըլսէք։ Ա.յսպիսի քարոզութիւնը ան լսողներէն իրեք հազար հոգի չափ զղջացան՝ դարձան, և ան օրը մկրտվեցան՝ քսի հաւատացեալ եղան։ Այս ասոնք ամմէնը առաքելոց քովէն չէին բաժնվեր, միշտ անոնց քարոզները մտիկ կըդնէին. հացերնին, աղօթքնին, ամմէն բանէրնին մէյտեղ. անանկ որ՝ մէջերնին իմիս քուկըդ չկար. ՈՒԾալ առաքելոց ձեռքովը շատ հրաշքներ գործելով մէկալ ժողովուրդնալ իրենցմէ կըպատկառէր, և ասով օրէ օր հաւատացեալքը կըշատնային։

ԳԼ. Բ.

Ի ԾԸՆԷ ԽԱՂԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ։

Գործ. Գ։

Ա.ռաքեալները ան օրերը շատ անգամ տաճարը կերթային աղօթք ընելու. անգամմը հանդիպեցաւ որ պետրոս ու յովհաննէս առաքեալը մէյտեղ իրիկվան ժամուն երթանին՝ տեսան որ տաճարին դուռը մէկ կաղ (կամ քէօթրիւմ) մարդմը քառասուն տարեկան, որ միշտ հոն կըբերէին կըդնէին, որ ողորմութիւն մուրա, իրենցմէալ ողորմուն ուզեց։ Պետրոս առաքեանալ դարձաւ ըսաւ իրեն. նայէ ինչ կըսեմ, ես արծաթ ու ոսկի չունիմ, հապա՝

ունեցածքս ամ է որ քեզի կուտամ, յոի քոի նազովբեցիին անունովը կրսեմ որ՝ ոտքի վրա ելլես քալես երթաս. այսպէս ըսելով անոր ձեռքէն որ բռնեց վեր վերցուց, շուտմը մարդը բժշկըվեցաւ, ելաւ վազելով ինքնալ հետերին տանմարը մըտաւ, ու շնորհակալ ըլլալով փառք կուտար ՝ այ։ Լ։ հրաշքիս պատճառովը՝ շատ ժողովուրդ զարմանալով եկան առաքեալներուն վրան թափեցան, մանաւանդ տեսնելով որ ան բժշկրված մարդնալ որ ի-բենքալ աղէկ կրճանչային, եկեր քովերինին կեցեր ամմինուն կրցրցուներ անոնք։ Պետրոս առաքեալնալ անտեղը նորէն անոնց յոի վրա քարոզելով՝ որ անոր անունովը աս բժշկութիս կատարվեցաւ, և յորդորելով իրենք որ դառնան յոի դէմ ըրած անօրէնութինին ապաշխարեն. անանկ զղջում բերաւ որ՝ ան օրնալ հինգ հազար հոգի դարձան հաւատացեալ եղան։ Լ՝այց առաքեալներուն դեռ աս քարոզութիը բերաննին էր՝ որ հրեից քահանայապետները և տաճարին իշխանները սրդողելով եկան վրանին հասան՝ ու երկուքնալ բռնեցին ան գիշերը բանտը դրին. և մէկալ առտուն անկա ու կայիափա քահանայապետներուն առջևը ժողով ժողված՝ հոն բերին ասոնք, ու իրենց սկսան հարցունել թէ՝ դուք որոնն ուժովը կամ անունովը աս կաղը ոտք հանեցիք։ Լ՝նատենը պետրոս հոգւոյն սրբ շնորքով լցված՝ պատասխան տրվաւ թէ՝ աս ինչ զարմանալի բան է որ դուք որ ի՝ելացող իշխաններն էք մեզ դատապարտել կուզէք ան ողորմելի մարդուն աս բարիքը ընելնուս համար. որ յոի քոի անունովը բժշկրվեցաւ, ան

որ դուք խաչ հանեցիք մեռցուցիք, ու ՝ած ի-
բեն յարուցեալ առնել տրվաւ, և ինքը բոլոր
ստեղծվածոց գլուխ դրրաւ, անանկ որ՝ ա-
ռանց յոի քոի մարդ չկրընար փրկուիլ հաս-
նիր։ Երեից իշխանանեբնալ տեսնելով առաքե-
լոց այսպիսի խորունկ բանեբով համարձակ
զուրուցվածքը, կրզարմանային վրանին. գի-
տեին կրՀանչնային որ ասունք ռամիկ տգէտ
մարդիք էին՝ որ յոի հետը կրքալեին. և մէ-
կալ դիտենալ ան բժշկրված մարդը առջևնին
տեսնելով, պապանձեցան մնացին։ Լուսոի
խորհուրդ ըրին որ բանը ժողովրդոց մէջ
շատ չի տարածված, իրենց աղեկմը սալրսալը-
բեն որ՝ մէյմընալ յոի անունը բերաննին չառ-
նեն, անոր վրա մարդու բան չիխոսին։ Լ-
ռաքեալներնալ ասոր պատասխան տրվին թէ՝
ատ ըլալու բան է որ ՝այ հրամանը թողունք՝
ու ձեզի հնազանդինք. մենք չենք կրնար մը-
տեսածը և լսածը պահել չիզուրուցել։ Լ-
նոնքալ Ճարերնին հատած՝ որ չըլա թէ ասոնց
պատիժ տաննե՝ ժողովուրդը ոտք ելլէ, ա-
նանկ թող տրվին որ երթան. և երբոր եկան
մէկալ առաքելոց ու հաւատացելոց աս բանե-
բը պատմեցին՝ ամմէնքը մէյտեղ փառք տրվին
՝այ։ Լ՝տքը միաբան աղօթք ըրին աղաչեցին
՝այ, որ իրենց ուժ կարողուի տա համարձակ
քոի աւետարանը քարոզել, ու հրաշքներով
հաստատել. ՝ած ալ նշան թէ իրենց աղօթքը
լսեր է՝ան կեցած տեղերնին շարժմը հանեց,
ու հոգւոյն սՀ նոր ուժ զօրուի եկաւ վրանին։

ԳԼ. Գ.

Լնանէայ ու սաֆիրայի պատիժը, և առաքելոց խարազանքը։

Գործ. Գ. Ե։

Այս նոր քսի հաւատացեալներն որ ըսինք ամմէնքը միաբան առաքելոց հետ մէկ սիրտ մէկ հոգի եղած, իրենց ունեցած ըստակնին և ուրիշ բաներնին կըբերէին առաքելոց ձեռքը կուտային, որ անոնք ամմէնուն հաւասար բաժնելով բոլոր հաւատացելոց պիտանաւորուելը թէ հոգւոր՝ թէ մարմնաւոր՝ իրենք կը հոգային։ Լնանկ որ գետին կիր տեղ ունեցողներնալ՝ տեղերնին կըծախէին՝ ու անոր ըստակը լման առաքելոց կուտային. ինչպէս որ ասանկ ըրաւ յովսէփ ըսած մէկը՝ որ ետքը անունը բառնաբաս կոչվեցաւ։ Լայց ասոնցմէ մէկ մարդմը անանիա անունով իր սափիրա ըսած կնկանը հետ մէյտեղ խօսք դրած՝ երբոր իրեն ագարակը (այ՝ չիֆտլիկը) որ ծախեց, անոր ըստակը առաւ իր քովը վար դրբաւ. ու միան քիչմը բան հանեց տարաւ առաքելոց ձեռքը տրվաւ, անանկ ցրցուռնելով թէ՝ անչափ է եղեր ան ագարակին գինը։ Պետրոս առաքեալը իմանալով աս մարդուս խաբեբայուելը, քովը գնաց յանդիմանելով իրեն ըսաւ. անանիա՝ ինչու դուն սատանայի մռեցիր՝ ու հոգին ՝ծը խաբելով՝ ան ըստրկին խոսրեցիր. ասանկ գիտնաս որ՝ դուն ասով չէ՛ թէ մարդ՝ հապա ՝ծ ուզեցիր որ խաբես։ Լնանեան աս լըսածինպէս՝ անտեղը ՝այ պատիժը վրան եկաւ գետինը ինկաւ հոգին տրվաւ.

ու շուտմը եկան իր ծառաները անկէց վերցու-
ցին տարին զինքը Թաղեցին։ Լսող վրա իրէք
ժամ որ անցաւ, կընիկը իր երկանը գլուխը
եկածը չի գիտցած, երբոր ինքնալ եկաւ պետ-
բոսի առջևը ելաւ. պետրոս անորալ նորէն
հարցուց՝ իրաւ ըսաւ՝ դուք անչափ ըստրկով
ծախեցիք ան տեղը. կընիկինալ ըսաւ Թէ՝
հրամերես այնպէս է։ Նատէնը պետրոս ա-
նորալ երեսը տրվաւ Թէ՝ ատ ինչ է որ դուք
երկուքդնալ մէյտեղ խօսք դրեր էք որ հոգին
ոբ փորձէք. ահա ըսաւ՝ անոնք որ քու երիկրդ
դրանը առջևը Թաղեցին՝ քեզալ հոն տանին
Թաղեն։ Կնիկինալ շուտմը հոն յանկարծակիի
եկաւ՝ ինքնալ ինկաւ մեռաւ. ու ըսածինպէս
անալ տարին երկանը քովը Թաղեցին. և աս
պատիժներըս շատ ահ ու սոսկում ձգեց ը-
սողներուն սիրտը։

Նկէ ետև առաքեալները հոգւով սրբվ ըց-
ված՝ շատ հրաշքներ բժշկուիներ սկսան ընել,
անչափ որ՝ աս բաներըս ձանձրնվելով՝ ուրիշ
քաղքներէնալ հիվանտներ ու ցաւագարներ
կառնէին եղէմ կբերէին. ու պարապ ատեն
չի գտնալով որ ամէնը առաքելոց քովը տա-
նին, ոմանքալ անանկ իրենց հիվանդները
պատգարակով (ֆ՝ թէՀՀերէով) ձամբուն
վրա կդնէին, որ պետրոս անկէ անցնելինի՝
գոնէ շուքը վրան զարնէ՝ ու անով բժշկվին։
Լս հրաշքները տեսնելով և քարոզուԹիներ
լսելով՝ շատ մարդ կրդառնային հաւատացեալ
կըլլային. և անով բոլոր ժողովուրդը առա-
քեալներէն կըպատկառէին, որ իրենց Թշնա-
միներնալ սիրտ չէին ըներ առաքելոց դպչելու։
Լայց ետքը քահանայապետը սադուկեցոց հեռ

մէկ եղած՝ սատանիկ նախանձէն ալ չի դիմացան, առաքեալները բռնել տալին բանտը դրին. և ան գիշերը Հրեշտակ ՝ մարդ չիմացած եկաւ բանտը բացաւ՝ ու իրենց ըսաւ որ չի վախնան երթան տաճարը երթան առջևնինպէս քարոզուելնին ընեն։ Լուսավանց քահանայապետը մարդիք խրկեց՝ որ բանտէն առնեն իրենց սինոդոսին առջևը բերեն, անոնքալ գացին հոն մարդ չիգտան. ու դարձան ըսին թէ գացինք տեսանք որ բանտը աղեկ գոց էր, ու պահապանները դրանը քով կեցեր կըպահպանէին, ետքը բանտը բանանք նայիք որ մէջը մարդ չիկա։ Լուս բանիս վրա սինոդոսալ շփոթած որ կըզարմանար. ան ատենը մէկ ուրիշմը եկաւ իրենց պատմեց թէ՝ ան ձեր բանտը դրած մարդիքը հիմա տաճարը կեցած ժողովրդոց քարոզ կուտան։ Լնոր համար նորէն ետևնին մարդ խրկեցին, որ գնաց ժողովուրդին վախէն անուշուք կանչեց բերաւ առաքեալները. ու քահանայապետը վրանին սրդողելով ըսաւ թէ՝ ձեզի չապրսպրեցինք չըսինք որ մէյմալ ան յիսին վրա բերանիդ չի բանաք, որ դուք բոլոր եղեմ քաղաքը ատ ձեր աղանդովը լեցուցիք. և անով մեզալ անիրաւ կուզէք երևցունել թէ՝ մենք պարապ տեղը ան մարդուն արունը մտած ըլլանք։ Պետրոսալ մէկալ առաքեալներուն հետ իրեն պատասխան տալին թէ՝ պէտք է որ մենք աւելի՝ այ հնազանդինք՝ քան թէ մարդու. և անանկ համարձակ խօսեցան յսի վրա, ու իրենց ըսած անօրէնութիւը երեսնին տալին, որ անոնքալ աս բաներըս լսելով նորէն աւելի կատղեցան, ու ալ սկսան խորհուրդ ը-

նել որ առաքեալները մեռցուցանեն։ Բայց ան ատենը մէջերնին գամաղիել ըսած մէկ ռաբ-բիմը, որ օրինագէտ ու խոսքիտէր մարդ էր. ասիկա էլաւ իրենց խոր հուրդ տրվաւ ըսաւ որ՝ ատ մարդիկը թող տրվէք, դուք բան մը նէք ատոնց. տեսնենք՝ թէ որ մարդկային է ատոնց բռնած ճամբանին՝ ինքիրեն կը ոչընչանա կերթա, ինչպէս որ ըսաւ՝ քիչմը առաջ էլաւ թէ դասը՝ և անոր ետևէն մէյմալ յուդա գալիլեացին, որ խելմը մարդիկ գլխի հանեցին, ու ետքը ցիրուցան եղան կորան գացին. հապա թէ ըսաւ աստուծմէ է՝ դիտնաք որ ատոնք չէք կրնար աւրեր վերցուցներ. և անով ոճամարտալ կրսեպվիք։ Այս գամաղիելի ըսածին թէպէտ ամմէնքը հաւնեցան, բայց այսու ոամիւ մէկ ծեծմը քաշեցին առաքեալոց, նորէն ապրսպրեցին որ մէյմալ յոի վրա քարոզ չիտան, ու անանկ թողուցին որ երթան։ Անոնքալ էվէլոք ուրախութի ցրցուցին ասոր վրա՝ որ յոի համար նախատվելու արժանի էղան. ու մտիկ չըրին՝ նորէն իրենց քարոզուելը չէին դադրեր կընէին։

ԳԼ. Գ.

Սուրբ Պետրոսի նախավկայն գործքերը։

Գործ. գ. է. = Սմ գրի. 34։

Անրբոր ալ օրէ օր շատցան հաւատացեալքը ասոնց մարմնաւոր հոգնալ էվէլցաւ առաքեալոց վրա. ուստի աս բանիս համար առաքեալքը ժողովք ըրին՝ սահմանեցին որ աշակերտներին եօթը հոգի ընտրեն դնեն, որ ասոնք հաւատացելոց մարմնաւոր պիտանաւո-

բուԹիը հոգան, ու իրենք բոլոր հոգևորին և քարոզուԹ հետ ըլլան։ Այ ան ընտրըվածներ ասոնք էին, ստեփանոս, փիլիպպոս, պրոքորոն, նիկանորա, տիմոնա, պարմենա, նիկողայոս։ Այ եօԹը հոգիս մէջը՝ (որ սարկաւագ ըսվեցան,) գլխաւորը ստեփանոս, մէկ բարի ու հոգւոյն սրբ շնորքով լցված մարդմըներ, որ ամենայն ձեռքովը շատ հրաշքներ կըներ, ու քարոզուԹ և վիճաբանուԹիւն անանկ կրպապանծեցուներ հրեայքը, որ ալ չար չունենալով անոր դէմ բերան բանալ բան զուրուցել, սկսան վրան զրպարտուԹ (ոյ՝ իֆտիրա) ընել՝ Թէ ինքը այ ու մովսէսի դէմ միշտ հայհոյանք կըխօսի։ Անանկ բունեցին զինքը քահանայապետին առջևը դատաստան քաշեցին. ու երկու սուտ վկայ դրին, որ կըսեին Թէ մենք լսեցինք որ աս մարդը կըսեր Թէ՝ յիս նազովրեցին աս տեղը պիտի կործանէ, ու մովսէսի մեզի տրված օրէնքը պիտի փոխէ։ Քահանայապետը երբոր հարցուց իրեն Թէ անանկ է մի. անատենը ստեփանոս բերանը բացաւ ու շնորհալի կերպով սկսաւ իրենց տեղնիտեղը երկան ածաշունչին ցրցունել՝ Թէ իր ըրած քարոզուԹիը յոի վրա ճշմարիտ ու շիտակ է, ու երեսնին տրվաւ հրեից ազգին խստասրտուԹիը և չարուԹը, որ անչափ որ մարգարէներ հալածեր մեռցուցեր են, որ ամենին յոի քոի գալուստը կըմարգարէանային, ու եռքը ելան ամնալ մատնեցին ըսպաննեցին։

Այ բաներըս խօսելէն ետև՝ ստեփանոս երբոր դէպ 'ի երկինքը նայեցաւ ու ըսաց. ահա երկինքը բացված կըտեսնեմ որ՝ յոը այ աջ

դին կեցեր է. ան ատենը լսողները իբր թե այ դէմ հայհոյանք ըրածիպէս անկաձնին գոցեցին, ու կանչվռտելով կատղած ստեփանոսի վրան վազեցին բռնեցին, առին շուտմը քաղքէն դուրս հանեցին՝ ըսկսան զինքը քարկոծել։ Ի՛նչ հրէից մէջը մէկ մարդմընալ կար սաւուղ անունով, (որ ետքը պօղոս ըսվեցաւ՝ ու ինքնալ առաքելոց կարգը մտաւ,) ասիկայալ ան ժամանակը անանկ թշնամի էր հաւատացելոց որ՝ ան ստեփանոս քարկոծողներուն վրայի լաթերնին ինքը առեր կըպահեր, որ անոնք հանգիստ բանեցնին տեսնան։ Ի՛նչ-բոր այսպէս կըքարկոծէին, ստեփանոսը կանչելով կըսեր՝ տէ՛ր յիսուս քեզի կըյանձնեմ, դուն առ։ Ի՛տև ալ հոգին տալու ատենը ծունկ չոքեցաւ ու ամուր ձանով կանչեց՝ տէ՛ր ասոնց ըրածը մեղք մի սեպեր. ու աս ըսածին պէս անտեղը ինկաւ վախճանեցաւ։ Ի՛տքը բարեպաշտ հաւատացեալքը եկան, ու ողբով լացով մարմինը անկեց վերցուցին՝ տարին թաղեցին։

ԳԼ. Ի.

Ամէն մարդ առաքելոցներէն հընդհանր. Ներքինին հաւատացեալ եղաւ։

Գործ. Ը։

Երկանները ստեփանոս մեռցունելէն ետև՝ նորէն անանկ սաստիկ հալածանք հանեցին հաւատացելոց վրա, որ աշակերտներէն շատը եղէ մէն եկան՝ ասոնց անգին ցիրուցան եղած այնպէս իրենց քարոզունին կընկեին։ Ի՛սոնցմէ մէկնալ փիլիպպոս ըսած՝ սամարացոց քա-

զաքը գնաց քարոզելու. ու հոն հրաշքներ գործելով, և ցաւագարներ բժշկելով շատ մարդ դարձուց մկրտեց՝ հաւատացեալ ըրաւ։ Ի՛նչ սամարացոց մէջը սիմոն անունով մէկ կախարդ մարդմը կար որ իր կախարդական գործքերովը մեծ անուն ունէր մէջերնին. ասիկայ ալ հոնտեղը մկրտվեցաւ, ու փիլիպպոսի քովէն չէր զատվեր, և անոր ըրած հրաշքները տեսնալով շատ կրզարմանար։ Ի՛նչ առաքեալներնալ սամարիա եկան, որ մկրտածներուն (ինչպէս կըսեն՝ դրոշմ ընելով,) հոգին ՝ոբ տան։ Սիմոն մոգը տեսնելով որ աս առաքեալները ձեռվընին մարդու վրա դընելով հոգւոյն սրբոյ շնորհքը յայտնի կերևակոր մկրտելոց վրա, ինքնալ հանեց անոնց ըստակ տվաւ՝ ըսաւ որ իրեն ալ աս իշխանութիւնս տան՝ որ որուն վրա ձեռք դնեմ՝ հոգին ՝ոբ առնէ։ Ի՛սոր՝ պետրոս առաքեալը սաստիկ սրդողելով տրված ըստակը երեսը զարկաւ ու ըսաւ. քու ըստակդ քեզի հետ երթա կորսըվի, որ կարծեցիր թէ այ պարգևը ըստակով պիտի գնես. դուն աս բանիս մէջը մասն ու բաժին չունիս, որովհետև սիրտդ այ հետ շիտակ չէ. ուստի աչքդ բաց ապաշխարէ՝ որ այ՝ծ քու մեղացդ թողուի տա։

Ի՛նկէ ետքը հրեշտակ այ փիլիպպոսի հրամայեց որ՝ երթա եղէմի ու գազա քաղքին Ճամբուն վրա։ Փիլիպպոսալ հոն հասածինպէս՝ տեսաւ որ կառքով մէկ եներբինիմը կերթալկոր, որ եթիոպացոց թագուհիին գանձապետն էր՝ որ եղէմ ուխտ էր գացեր. փիլիպպոս հոգւոյն ՝ոբ տրդմամբը ասոր քովը մոտեցաւ, տեսաւ որ ասիկա եսայի մարգարէին

գիրքը կըկարդար. իրեն հարցուց թէ կարդացածդ կըհասկընաս մի։ Ընալ ըսաւ՝ ինչպէս պիտի հասկընամ ինչվան որ մէկը ինձի չմեկնէ. ու փիլիպպոսի աղաչեց որ ելլէ տեղը կառքը քովը նստի. և ՅՍ կարդաւորուրը անոր կարդացածնալ Եսայի մարգարէին ան խօսքն էր, որ քեր վրա կրսէ թէ՝ մէկ ոչխարի մըպէս զինքը մորթելու տարին, ու մէկ գառնիմըպէս իր բուրդը կտրողին առջեւը բերան չիբացաւ ձան չիհանեց՝ ևն։ Ուստի ներքինին փիլիպպոսի հարցուց թէ՝ մարգարէն աս բանը որուն համար ըսեր է։ Փիլիպպոսալ ան ժամանակը սկսաւ տեղն 'ի տեղը քեր վրա իրէն քարոզ տալ՝ ու քրիստոնէական հաւատքը սորվըցունել։ Յետքը ճամբան առաջ որ գացին, և երբոր մէկ ջրիմը քով հասան, ներքինին ալ կատարեալ սրտով հաւատալով քեր, փիլիպպոսի աղաչեց որ զինքը մկրտէ. Յս հոնտեղը մկրըտվելէն՝ և հոգին ՏԲալ վրան ինջնալէն ետև, հրեշտակը յանկարծակի քովէն փիլիպպոսը յափշտակեց վերցուց՝ ուրիշ տեղ տարաւ որ քարոզէ. ու անանկ ներքինին ալ ուրախութիւն փառք տալով ՅՍ ելաւ իր ճամբան առաջ գնաց։

ԳԼ. Ը.

Պատուէր էհամ պօղոս առաքելոյն դարձեալ։

Գործ. Թ։ Եմ քեր 35։

Ընտատենները սաւուղը ինչպէս վերը ըսինք՝ ամմենէն աւելի մովսիսական օրինաց ջատագով ըլլալով սաստիկ ետևէ էր քեր հաւատացեալները հալածելու. ուստի

ցաւ թէ հաւատացեալքը դամասկոս քաղաքը փախած՝ հոն կըշտանկոր՝ եղէմ քահանայապետին թուղթ (կիմ ֆերմանմը) հանել տըվաւ, ու ինքը առաւ ելաւ որ դամասկոս երթա՝ աս քոի հաւատացեալները բռնէ կապած եղէմ բերէ։ Այց Համբան երթալնին երբոր դամասկոսի մօտեցաւ, մէյմալ տեսնէ ոյանկարծակի երկինքէն մէկ սաստիկ լոյսմը ինքած չորս դին պատեց ու ինքը ձգեց գետինը զարկաւ. և ան ատենը ասանկ ձանմը եկաւ իրեն, սաւուղ սաւուղ դուն ինչու ետեւէս ինկեր իս կըհալածես։ Սաւուղնալ սուս կալով հարցուց թէ՝ ո՞ր՝ դուն ո՞վ ես։ Անոր էրեն իրեն ձան եկաւ թէ՝ ես յիսուսնամ՝ որ դուն իս կըհալածես։ Սաւուղալ հարցուց՝ տէր ինչ կուզես որ ես ընեմ։ Անալ ըսաւ, ոտք ելիր կայնէ քաղաքը գնա, ու հոն քեզի կըսվի թէ ինչ պիտոր ընես։ Սաւուղի հետ եղած մարդիքնալ զարհուրած մնացեր էին՝ չէին տեսներ թէ խոսողը ո՞վ էր։ Անոր որ եղաւ՝ սաւուղը այնպէս կուրցաւ որ՝ աչքերը բաց բան չէր տեսներ. ուստի հետը մարդիքը իրեն ձեռքէն բռնած անանկ առին զինքը դամասկոս քաղաքը տարին։ Անոնք հոն անանկ կուր՝ սիրաը կոտրած իրեք օր անօթի կենալէն ետքը, ոՀ հրամայեց անանիա ըսած մէկ աշակերտին՝ որ դամասկոս կըլլար, որ երթա սաւուղը գտնէ՝ բժշկէ ու մկրտէ զինքը։ Անանիան առջի բերանը վախցաւ՝ ետ կեցաւ չուզեց երթալ, գիտնալով որ ինչպէս հաւատացելոց թշնամի մարդ է ան սաւուղը։ Այց ոՀ իրեն սիրտ տըվաւ ըսաւ թէ՝ գնա մի՛ վախնար. ես ան մարդը ինծի առեր եմ, որ իմ ա-

նունս բոլոր աշխարք պիտի քարոզէ, ու ինքնալ ինծի համար շատ չարչարանք պիտի քաշէ։ Ինչ ատենը անանիան եկաւ զինքը դտաւ, ու ձեռքը վրան դրաւ ըսաց. սաւուղ եղբայր Տէր յիսուս որ Դամբան ճանապարհին երևցաւ՝ ան իսկ խրկեց որ քու աչքերդդ բժշկիլն և հոգւով սրբվ լեցվիս։ Ինչ որ ըսաւ՝ շուտմը սաւուղի աչքերէն կՁեպիպէս բան թափեցան բացվեցան, որ սկսաւ տեսնել. ու ելաւ մկրտվեցաւ։ Ինչ կէ ետև սաւուղ հաւատացելոց մէջը մնաւ. ու շուտմը ինքնալ սկսաւ քարոզել, և հրեից դէմ հակառաւուն ընել ցրցունել թէ՝ յիսուսը Ձէմարիտ մեսիան է. անանկոր՝ ով որ կըտեսներ ու կըսէր՝ կըզարմանար թէ աս մարդս հաւատացեալները հալածելուն տեղը՝ ինչպէս հիմա ինքը անոնց հաւատքը աւեր կըքարոզէ։ Ինոր համար անոնքալ անչափ կատղեցան սաւուղի դէմը՝ որ կուզէին բռնել ըսպաննել, թէ որ աշակերտները գիշերանց զինքը դամասկոսէ եղէմ չի փախցունէին նէ։ Սաւուղալ երբոր ասանկ նորէն եղէմ դարձաւ՝ ու հաւատացելոց մէջը ուզեց մտնել, առջի բերանը անոնք բանը չիգիտնալով իրմէ վախցան քաշվեցան, ինչվան որ բառնաբաս աշակերտը առաւ զինքը առաքեալներուն քովը տարաւ, ու տեղն 'ի տեղն հասկըցուց որ ինչպէս յիսուսի երևցեր է, ու հետը խօսեր է. և ինքնալ դամասկոս ինտոր քարոզուն կընէ եղեր։ Ինտրը սաւուղ եղէմալ սկսաւ համարձակ յիսուսը քարոզել, ու հրեից հետ հակառաւութի ընել։ Այց քիչը օրէն ետև՝ երբոր իմացան հաւատացեալքը որ հրեաները հոնալ մէկտեղ խօսք դրեր են որ զինքը մեռ-

ցունեն, անկեց փախցուցին տարսոն քաղաքը խրկեցին։

ԳԼ. Լ.

Կուռնելիոս հարիւրապետին դարձումը։

Գործ. Ժ. ԺԱ։

Պետրոս առաքեալը աս ժամանակ Լիւդիա ու Յոպպէ ըսած քաղաքները կը բարոզէր, և շատ բժշկութիւններ կրնէր. ասոնց մէջը մէկ ութը տարվան անդամալուծմը՝ ենոնա ըսած, բժշկեց ոտք հանեց. ու մէկ բարեպաշտ հաւատացեալ կնիկմը տաբիթա անունով՝ որ հիվընցեր մեռեր էր, հրաշքով ողջընցուց։ Ինչ ատենը կեսարիա պաղեստինացոց քաղաքը՝ հարիւրապետմը կար կուռնելիոս անունով. որ թէպէտ հրեայ չէր՝ այլազգի էր, բայց մէկ բարեպաշտ ու ՝ածավախ մարդմը ըլլալով՝ անպակաս ողորմութիւն կուտար, և ամէն օր աստենովը իր աղօթքը աղաչանքը ՝այ կրնէր։ Մէկ օրմը ասիկա աղօթք ընելնին՝ հրեշտակ ՝այ երևցաւ իրեն ու ըսաւ թէ՝ քու աղօթքդ և ըրած ողորմութիւնդ ՝այ ընդունելի եղան ուստի յոպպէ քաղաքը մարդ խրկէ՝ ու անկեց պետրոս առաքեալը կանչէ, որ գա քեզի սորվեցունէ թէ՝ ինչ պիտոր ընես որ փրկվիս։ Կուռնելիոսաւ շուտմը իր ծառաներէն իրեք հոգի խրկեց՝ որ երթան պետրոս առաքեալը անկեց առնեն իրեն բերեն։ Ինոնքաւ երբոր գացին յոպպէ մօտեցան, անատենը պետրոս կես օրվան դէմ տանիքը ելեր աղօթք կրնէր. ու ալ կերակուրին ատենը ըլլալով՝ որ անօթեցեր էր, յանկարծակի մէկ տեսիլքմը տեսաւ՝

որ երկինքը բացվեցաւ, ու անկէ մէկ կրտաւ-
մը (կամ չարաֆիպէս լաթմը) չորս ծարէն
բռնած կախած առջևը ինջաւ. և ասոր մէջը
կերպ կերպ կենդանիներ՝ օձեր ու թռչուններ
կային։ Պետրոսալ աս բանիս վրա զարմացած
որ կընայէր, երկինքէն իրեն ձանմը եկաւ թէ
պէտրոս՝ էլը մորթէ ու կէր ասոնք։ Պետրոս
պատասխան տրվաւ թէ՝ քաւ լեցի որ ընեմ,
որ ես դեռ իմ բերանս պիղծ բան դրած չէմ։
Նորէն մէյմընալ ձան եկաւ թէ՝ ՀՅ սրբած
բանը դուն պիղծ մի սեպեր, ու ասանկ իրեք
հեղ ըսելէն ետև՝ վերցաւ անյայտ եղև ան
տեսիլքը։ Այս տեսիլքիս վրա պետրոսալ որ
սկսաւ մտմտալ, անատեսնը կուռնելիոսի խրբ-
կած մարդիքնալ հոն հասան, որ փնտռելով
տունը գտան՝ քովը գացին, ու կուռնելիոսի
հանդրվանած տեսիլքը իրեն պատմեցին, և ա-
ղաչեցին որ եկլէ հետերնին գաւ։ Հոգին՝ որալ
տուն տրվաւ պետրոսի, որ անանկ անոր մէ-
կալ օրը հետը հրեաներէն մէկ քանի հոգիմը
առած՝ եկաւ կեսարիա կուռնելիոսի քով է-
կաւ. որ անալ բոլոր իր ազգականները ու
բարեկամները մէկ տեղ ժողված կրսպասէր։
Նրբոր պետրոս տունը մտաւ, կուռնելիոս
առջևը վազեց ոտքը ինկաւ։ Պետրոսալ բըռ-
նեց զինքը վերցուց, ինչ կրնես ըսաւ՝ եսալ
քեզիպէս մարդմընեմ. ու ետքը իրեն բանը
բացաւ թէ՝ դունալ գիտես որ հրեաներուն օ-
րինաց դէմ է՝ այլազգիներուն քովը երթալը
հետերնին խառնրվիլը, բայց ՀՅ ինձի տեսիլք
ցրցուց յայտնեց որ այսուհետև աս խտրանք-
ները (ՀՅ՝ այրը սէյին) պիտի մեր մէջը չըլա.
անորհամար եսալ դէմ չիկեցա ելա քովդ է-

կա. ուստի ինձի ասէ՝ պատճառն ինչ է որ իս կանչեր ես։ Կուռնելիոսալ սկսաւ կարդալ ի-բեն երևցած հրեշտակին տեսիլքը պետրոսի պատմել ու ետքը ասաւ թէ՝ ահա մենք ամ-մէնքս քու առջևը դողվեր ենք որ քեզմէ այ հրամանը լսենք։ Այն ժամանակը պետրոս ա-ռաքեալնալ բերանը բացաւ, ու սկսաւ իրենց տեղն 'ի տեղը յոի քրի վրա քարոզել. ետև տեսնելով որ յայտնի հոգւոյն սրբ շնորհքնալ անունց վրան ինչաւ՝ շուտմը ամէնքը հոնտեղը մկրտեց, քրի հաւատացեալ եղան։ Այս բանս կատարելէն ետքը մէկ քանի օրէն ետև պետ-րոս երուսաղէմ որ եկաւ, հրէաներէն դար-ձած հաւատացեալները պետրոսի վրան գայ-թակղած սկսան իրեն ծուռ ծուռ նայիլ թէ՝ գացեր այլազգիներուն մէջը մտեր է՝ ու հե-ատերնինալ նստեր հաց կերեր է։ Այդ ետքը իմանալով պետրոսի աստուծմէ եղած յայտ-նուիրը՝ և կուռնելիոսի տեսիլքին բանը, ամմէ-նուն միտքը շինվեցաւ, սկսան փառք տալ այ, որ անով յայտնեց թէ այլազգի կռապաշտնե-րուն մէջնալ ալ ճշմարիտ կուզէ որ քրի հաւատը տա-ծվի։

ԳԼ. Բ.

Պետրոս առաքելոյն բանտէն ազատվելը։

Գործ. ժբ։ = Ամ քրի. ԺԸ։

Այս բաներէս ետև հերովդէս ագրիպպաս ասած՝ հրէաստանի թագաւորը ուզելով որ աւելի հրէից աչքը մրտնա սիրելի ըլա, հա-լածումմ հանեց հաւատացելոց վրա, ու առաջ յակոբոս առաքեալը՝ յովհաննէս աւետարան-

ին եղբայրը բռնեց գլուխը կտրել տրվաւ։ Այդքը տեսնելով որ աս բանքս հրէայք շատ հաւնեցան, ետևէն պետրոս առաքեալնալ բռնել տրվաւ բանտը դրաւ, որ զատկէն ետև անալ սպաննէ. անոր համար բոլոր եղէմ ե-զած հաւատացեալքը աղօթք կընէին՝ որ ՆԱԾ զինքը խալըսէ։ Այկաւ ան գիշերն որ ալ առ-տրվանց հերովդէս պիտի բանտէն հաներ մեռ-ցունէր. և պետրոս շղթաներով կապած՝ պա-հապանները չորս դին առած կըքընանար, մէկ լուսաւոր հրեշտակմը եկաւ պետրոսի քով՝ ու մշտելով զինքը արթնցուց ըսաւ՝ շուտ ըրէ ե-լիր կայնէ. անատենը յանկարծակի բոլոր շղթաները վրայէն արձըկվեցան գետինը ին-կան։ Հրեշտակնալ ըսաւ՝ գօտիդ կապէ հո-ղաթափներդդ հագիր՝ լաթըտ վրատ առ, ու ետևէս եկող. պետրոսալ զարմացած շփոթած չէր գիտեր թէ աս իրաւ բան է մի՝ թէ երազ է, ու աս պահապանները ուն մէջէն անցնելով հրեշտակին ետևէն կերթար. երբոր բանտին երկրթէ դուռը հասաւ, անալ ինքիրեն բաց-վեցաւ, ու դուրս ելածինպէս հրեշտակը քա-վէն անհետացաւ։ Այնատենը պետրոսի խելքը վրան եկաւ, իմացաւ որ ՆԱԾ հրեշտակ իրկեր է որ զինքը խալըսէ. ուստի ՆԱՅ փառք տալով՝ ելաւ ան տունը եկաւ, ուր որ հաւա-տացեալքը մէկտեղ ժողված իրեն համար ա-ղօթք կընէինկոր։ Դուռն որ զարկաւ, շուտ-մը մէկ աղախինմը վազեց որ նայի. ու երբոր լսեց ձանէն Հանչցաւ թէ պետրոսն է՝ ալ ու-բախուելէն շփոթած՝ դուռը չիբացաւ՝ ներս վազեց ըսաւ թէ պետրոսը դուռն է։ Այնոնք ալ սաստիկ զարմանալով և ամենեին կարծիք

չունենալով՝ քա խենթեցար ըսկն. պետրոս անդին դուռը ափ առեր կըշարներ. եռբը՝ ինչ և իցէ վազեցին բացին, ու երբոր զինքը տեսան՝ ամենքը ան տեղը պաղեցան մընացին։ Պետրոսալ աստուծմէ իր վրա եղած հրաշքը անոնց պատմելէն ետքը՝ եղէմէն ելաւ գնաց կեսարիա քաշվեցաւ։ Բայց առտվանց երբոր հերոդէս պետրոսը ուզեց, ու չի գտաւ նէ պահապանները բռնեց սպաննել տըվաւ. վրանին անանկ կարծիք երթալով թէ՝ իրենք պետրոսը փախուցած ըլլան։

Գլ. Թ.

Պօղոս առաքելոյն դարձուածները։

Գործ. ԺԳ. ԺԴ. ԺԵ։

Ստեփանոսի հալածման ատենը, ինչպէս ըսինք՝ շատ հաւատացեալներ եղէմէն ելան ասոնց անդին ցրվեցան. ասոնցմէ անտիոք քաղաքնալ գնացին, և հոն կամաց կամաց շատ մարդիք վաստրկեցան հաւատացեալ ըրին, անոր համար եռբը բառնաբաս աշակերտնալ ելաւ հոն գնաց, որ ինքնալ շատ պտուղ ըրաւ։ Բայց տարսոն քաղաքը գնաց, անկեց առաւ հետը բերաւ սաւուղը կիպրացիներ, ու երկուքը մէկտեղ տարիիմը չափ անտիոք քարոզելով կռապաշտներէնալ խելմը հոգի շահեցան. և աս քոի հաւատացեալները հոնտեղը պինտ առաջ Քրիստոնեայ ըսվեցան։ Ինկէ ետև մէկ օրմը հոն աշակերտները մէյտեղ աղօթք որ կընէին, հոգին ՝ըս յայտնեց որ՝ աս երկուքս բառնաբաս ու պաւղոս ելլէն կռապաշտից երկիրները քարոզութի՝ երթան. ուս-

տի իրենքալ առաջ՝ նաւով կիպրոս (ՅՒ՝ խրպ
ուրդ) գացին, ու հոն սկսան քարոզել շա
հոգի շահիլ։ Կիպրոսի մէջ պափոս ըսած քա
ղաքը մէկ կախարդ սուտ մարգարէմը կար բա
ռեյիսուս անունով՝ ասիկա իր խաբեբայութիւնովը
եռևէ էր ինկեր՝ որ սերգի պաւղոս ըսած փո
խանակ բգեշխին (կամ վեզիր քահիանային ը
սենք՝) հաւատքին հանէ, որ սաւուղը ինքը
դարձուցեր քրիստոնեայ էր ըներ, (և ինչ
պէս կրսեն՝ անկեց առաքելոյն անունենալ փոխ
վեցաւ՝ ետքը սաւուղ ըսելուն տեղը պաւղոս
կամ պօղոս ըսվեցաւ)։ Ինոր համար պօղոս ա
ռաքեալը յանդիմանելով ան կախարդը ըսաւ՝
ով խաբեբայ սատանայի որդի, որ միշտ եռևէ
ես՝ որ ՅՒ շիտակ Ճամբան ծռուես. ուստի ՅՒ
պատիժը վրատ ըլլա՝ որ կուրնաս լուս չիտես
նես՝ ինչվան որ խելքդդ գլուխդդ գա։ Ինչ ը
սածինպէս եղաւ՝ շուտմը կուրցաւ. սերգի իշ
խանմնալ աս հրաշքը որ տեսաւ՝ աւելի հաս
տատվեցաւ իր հաւատքին վրա։

Ինտը պօղոս բառնաբասի հետ կիպրոսէ ե
լաւ անտիոք պիսիդեայ ըսած քաղաքը եկաւ,
ու հոն հրէից սինակոկան մտաւ քարոզելու։
Ինրբոր ասոնք իրեն քարոզուիը չընդունեցան
և մանաւանդ անտեղի կռապաշտներնալ ոտք
հանեցին որ քաղաքէն հալածեն դուրս ընեն,
առաքեալները անկեց ելան իկոնիոն եկան.
և հոնալ հրէից ձեռքովը հալածվելով՝ նորէն
փախան լիւստրա գացին։ Ինս տեղը պօղոս՝
մէկ մօրէ ծնած կաղ մարդումը հանդրպեցաւ՝
որ սիրով մտիկ կըներ իր քարոզուիը, պօղոս
ալ ան կռապաշտ ժողովրդոց առջևը աս մար
դուս կանչեց՝ ըսաւ, քեզի կրսեմ՝ ՅՒՆ մերոյ

յոի քոի անուանովը, որ ելլէս ոտքի վրա չիտակ կայնիս. ու անանկ շուտմը մարդը բժշկրվեցաւ՝ ոտք ելաւ սկսաւ վազելով քալել։ Ի հրաշքս որ տեսան ան կռապաշտները՝ կարծելով թէ բառնաբասը ու պօղոսը իրենց կուռքերն են, զարմանալով սկսան կանչել թէ՝ ճծները մարդու կերպարանքով երկինքէն ինջեր եկեր են. ու շուտմը իրենց քուրմը կամ կուռքերուն քահանան վազեց հոն տեղը կովեր բերաւ, որ զոհ մատուցանէ առաքելոց առջևը։ Ի՝ն ատենը պօղոս ու բառնաբաս սրդողելով՝ վրայի լաթերնին պատռեցին, ու կանչվռտելով անոնց կրսէին թէ, մարդիք ատ ինչ է որ կընէք. մենք ալ ձեզիպէս մահկանացու մարդ ենք, որ եկեր ձեզի կրքարոզենք որ՝ այդպիսի փուչ բաները թողուք, ու դառնաք կենդանի ճծը ճանչնաք, որ աս բոլոր աշխարքս ինքը ըստեղծեր է։ Ի՝սանկ ըսելով ճորով դադրեցուցին ժողովուրդը՝ որ իրենց զոհ չի մատուցանեն։

Ի՝այց ան մէկալ ըսած քաղաքներուն հրէաները երբոր իմացան թէ՝ հոս առաքեալները քարոզելով ժողովուրդ կըշահին կոր, ելան եկան՝ ու այնչափ ըրին տրդեցին ժողովուրդը, որ քարկոծելով չարչարելով անանկ քաղքէն դուրս ըրին պօղոս առաքեալը։ Ի՝նալ նորէն բառնաբասի հետ անկէց ելաւ ուրիշ շատ յունատանի քաղաքները պտրտելով քարոզուելու կըներ, և ամէն տեղ շատ մարդիք դարձուց քրիստոնեայ ըրաւ։

Ի՝ս ատեններս հաւատացելոց մէջը մէկ կրիվմը վէճմը ինկաւ, որ հրէաներէն դարձածները՝ կռապաշտներէն դարձածներուն կրսէին

թէ՝ ինչվան որ դուքալ մովսիսական օրինաց պէս չի թլփատվիլքնի՝ չէք փրկվիլը. ուստի պողոսը ու բառնաբասը եղէմ խրկեցին, որ մէկալ առաքելոց հետ աս բանիս վրա մտմտան՝ խօսքը կտրեն։ Նանկ երբոր առաքելոց ժողովն եղաւ, ուրիշ բաներու հետ աս ալ սահմանվեցաւ որ՝ կռապաշտներէն դարձածները չի թլփատվին. ու Լաքը նորէն պողոս անտիոք դարձաւ։

ԳԼ. Ժ.

Պողոս առաքելոյն Խարոպոսնէ պարձառով գալուն նեղությունները։

Գործ. ԺԷ. ԺԸ. ԺԹ։

Նանկ եղբը պողոս շիղայի հետ նորէն քաղաքէ քաղաք քարոզելով, և շատ մարդիք դարձընելով, ՝ած յայտնեց իրեն որ յունաստան մակեդոնիայի կողմերը երթա քարոզէ։ Հոս պատահեցաւ որ մէկ դիվահար աղախին մը՝ քանի անգամ որ Ճամբան պողոս իր աշակերտներուն հետ մէյտեղ կրտեսնէր՝ ասոնց ետևէն կրկանչէր թէ, աս մարդիքս ՝ոյ ծառաներն են՝ որ ձեզի փրրկու

ըսին թէ՝ աս մարդիքս եկեր չիոթուն կրձգեն մեր քաղաքը, նոր հաւատք մեզի կըքարոզեն, ու անանկ չարաչար ծեծելով առաքեալները ոտվընին կոձեղը (յր՝ թօմրուխը) զարկած բանտը դրին։ Այց կէս գիշերուն երբոր առաքեալները ելեր աղօթք կընէին; յանկարծակի բանտը շարժմը եղաւ բոլոր դռները բացվեցան. ու իրենցալ վրայի կապերը արձըկվեցան։ Բանտին վերակեցունալ ան ձանէն արթընցաւ՝ ու տեսաւ որ բանտին դռները բացեն, կարծելով որ բանտարկեալները փախեր են, ինքնալ յուսահատուէն երբոր թուրը քաշեց որ ինքը զինքը ըսպանէ, պօղոս անդիէն աս տեսնալունպէս շուտմը կանչեց թէ՝ ինչ կընես, մի վախնար մենք ամէնքս հոս ենք։ Ինքնալ ան ժամանակը Ճրագով ներս դնաց քովերնին, ու երբոր տեսաւ իրենք, և իմացաւ ան եղած հրաշքը, ահով դողով առաքելոց ոտքը ինկաւ. անանկ եռքը առաւ անոնք մեծարանքով իր տունը տարաւ, վրանին վլաց սրբեց, և ինքնալ բոլոր իր անով տեղովը ան գիշերը մկրբտվեցաւ քրիստոնեայ եղաւ։ Առտվանց կանուխ երբոր դատաւորները բանտը մարդ խրկեցին որ ալ ազատեն առաքեալները. պօղոս անատենը իրենց պատասխան տըվաւ թէ՝ մեզիպէս ազատ հռոմայեցի գրված անմեղ մարդիք՝ հրապարակաւ (յր՝ հալխին առջևը) ծեծելով բանտը դրին, ու հիմա գաղտուկ կըհանեն. ատանկ չըլլար ըսաւ, հապա թող իրենք գան իրենց ձեռքովը հանեն։ Ընոնքալ իմանալով որ ասոնք հռոմայեցի են եղեր, շատ վախցան, ու եռքը եկան թողուն խնդրելով՝ աղաչեցին որ ելլեն անկէց երթան։

Լսաբը պողոսալ իր ընկերներովը անկէ ելաւ Թեսաղոնիկէ (յմ՝ սելանիկ) եկաւ, ու հոն ալ շատ մարդիք շահեցաւ։ Բայց աս տեղի հրէաներնալ վրան նախանձելով, ու ինքը քաղաքէ քաղաք հալածելով անչափ ըրին որ, վերջը ելաւ գնաց պողոս անթէնք (յմ՝ աթինա) քաղաքը։ Բ։ աթէնք քաղաքը որ փիլիսոփաներուն տեղն էր, հետաքրքրուելէ ասոնք պողոս առաքելոյն վրան եկան Թափեցան, որ անոր ըրած քարոզութիւնը իմանան Թէ ինչ է։ Պողոսալ Թէպէտ իրենց ինչպէս պէտքերնէ խօսեցաւ զուրուցեց քրիստոնէական հաւատքին վրա. բայց անոնցմէ քիչ մարդ շահեցաւ։ որ աս հաւատացեալներէն մէկնալ դիոնէսիոս արիսպագացին եղաւ։ Բ։տև պողոս աթէնքէն ելաւ կորնթոս (յմ՝ կէօրտէս) քաղաքը գնաց. և հոնալ տարի ու կէս կենալով՝ շատ մարդ դարձուց քրիստոնեայ ըրաւ, մանաւանդ կռապաշտներէն քան Թէ հրէաներէն. որ աս հրէաները Թէպէտ իրեն դէմալ կեցան՝ ու գաղիոն ըսած փոխանակ բդեշխին մատնեցին, բայց ետքը խախք եղան անոր բանմը չիկրցան ընել։ Բ։տև անկէցալ ելաւ պողոս, ու աստիս անդին ուրիշ շատ տեղ պրտրտելով և անդադար քարոզելով՝ նորէն յունաստան դարձաւ՝ եփեսոս քաղաքը գնաց։ Բ։ւ հոն երկու տարիէն աւելի կեցաւ. ու քարոզութիւն և հրաշքներ գործելով էվէլքը պտուղ ըրաւ. մանակ որ՝ պողոսի քրտինքը սրբելու Թաշկինակը կամ վարշամակը՝ երբոր կրտանէին ցաւագարներուն ու դիվահարներուն կրպացուներիններ՝ անով կը բժշկրվէին։ Բ։ս եփեսոս քաղաքս մէկ սկեւռըսած հրէայ քահանայապետիմը եօթը տղաք

կային, որ երդմնեցուցիչ կըսվէին՝ մարդէ դև հանելու եռեւէ էին. ասոնք պօղոս առաքելոյն նայելով որ յոի անուանովը դև կըհանէ կոր, իրենքալ յանդգնեցան ուզեցին որ անանկ ընեն։ Լուստի մէկ հեղմը երբոր դիվահարիմը ըսին թէ՝ քեզ կերդվընցուանէնք յոի անուանովը՝ որ պօղոսը կրքարոզէ. շուտմը ան դիվահարը ասանկ պատասխան տալով թէ, յոը գիտեմ ու պօղոսնալ կրձանչնամ, բայց դուք ով էք ըսելով կատղած ասոնց վրան վազեց, ու անոնց երկուքը բռնեց անանկ չարչարեց որ՝ ձորով ողորմելիները մերկ ու վիրաւորած անէն դուրս գլուխնին փրցուցին ձեռքէն փախան ազատեցան։ Լսոր վրա բոլոր ժողովուրդը ահռեցան. ու երկիւղածութիւն կերթային մեղքերնին կրխոստովանէին՝ և կախարդական գրվածքնին կրակը կրձգէին կերէին. և այսպիսի քանելով քսի հաւատքը ան քաղքին մէջը էվէլօք տարածվեցաւ։ Բայց մէկ դէմեարիոս ըսած արծաթագործմը որ կուռքեր կըշիներ, երբոր տեսաւ որ ասանկ քրիստոնէուն մոնալով ան կողմերը՝ իր շահը կըդադրիկոր, բոլոր իր արվեստին մարդիքը (ՅՇ՝ էսնաֆը) արդեց պօղոսի դէմ ոտք հանեց, անչափ ըրաւ որ՝ պօղոսալ թողուց եփեսոսէ ելաւ. և նորէն ան առջի քարոզած տեղվանքը պրտրտելով, ու աշակերտած հաւատացեալները իրենց հաւատքին վրա հաստատելով, ետքը նաւով ճամբա ելաւ որ երուսաղէմ՝ դառնա։

ԳԼ. ԺԸ.

Պօղոս եղէմ կերթուելիս, ու անկեց հոմ կերթա՝ որ էր դատաստանը հոն պէտքուելիս։

Գործ. ԻԵ. ԼԲ։ = Ամ. քնի. 60։

Պօղոս առաքեալը երբոր կեսարիա հասաւ, որ անկեց ալ եղէմ պիտոր երթար, հոն տեղի ազգաբոս ըսած մէկ աշակերտմը՝ հոգւով ՝ՍԲՎ մարգարէացաւ պօղոսի վրան՝ թէ եղէմ հրէաները զինքը կապած կռապաշտներուն ձեռքը պիտի մատնեն։ Այս որ լսեցին ան տեղի հաւատացեալքը՝ լալով սկսան իրեն աղաչել որ եղէմ չերթա. պօղոսալ անոնց պատասխան տրվաւ թէ՝ ես յսի քսի համար պատրաստ եմ չէ թէ միան բռնրվելու կապվելու, հապա եղէմին մէջը մեռնելու ալ։ Ուստի անանկ երբոր եղէմ գնաց հասաւ, հրէաները որ միշտ իր վրա կընսխանծէին ու կըմրնամայէին, մէկ օրմը տաձարին մէջ պօղոսի վրան թափեցան՝ իբր թէ հեթանոս մարդ հետը առեր օրինաց դէմ տաձարը մոցուցեր է. և ասպատձառիս համար կանչվատեղով աղմուկով բոլոր քաղաքը վրան ժողված՝ ձեռքերով առաքեալը հոն կըսպաննէին, թէ որ հռոմայեցոց դատաւորին մարդը չիգար բռնուք անոնց ձեռքէն առներ։ Այսպէս երբոր պօղոսի ոսոխներովը (՝ՅՊ՝ տաւաձինեներովը) դատաւորին դիմացը որ էան, պօղոս ամենուն առջեւը իր ՝ՍՎ ըլալը՝ և բոլորը գլխէն անցածները մէկիկ մէկիկ կարգով պատմեց, թէ ինչպէս ինքը հրէայ ըլալով՝ ՝ՍԾ հրաշքով իրեն դարձ տրվաւ, ու խրկեց զինքը որ երթա աշխարքիս

քարոզէ մեսիային Ճշմարիտ հաւատքը։ Իր թշնամի հրէաներըս աս բաներըս լսելով՝ աւելի կատղեցան, ու մէկ բերան սկսան դատաւորին դէմ կանչել թէ՝ այսպիսի մարդը արժանի չէ որ աշխարքիս վրա ապրի, հապա՝ վերցուր աշխարքէս։ Դատաւորնալ կուսպաշտ ըլլալով՝ և հրէից օրինաց բաներէն չի հասկընալով՝ պօղոսի դատաստանը հրէից քահանայապետին ձգեց՝ որ անոր առջևը տեսնըվի։ Պօղոսալ աս դատաստանին մէջը երբոր տեսաւ որ անոնց կէսը սադուկեցի աղանդէն էին ու կէսը փարիսեցի, ինքնալ կանչեց թէ՝ գիտնաք որ ես փարիսեցիի որդի փարիսեցի եմ, որ հանդերձեալ կեանքը ու յարութիւն քարոզելուս համար՝ ես բռնըված հիմա ձեր առջևը կըդատվիմ կոր։ Խանկ ըսելով թէպէտ իր կողմը շահեցաւ բոլոր փարիսեցիքը, որ ըսին թէ անանկէնե աս մարդս մեղք չունի. բայց սադուկեցիքը աւելի կատղեցուց, անչափ որ ալ մէջերնին երդումով խօսք դրին որ չուտեն չիխըմեն ինչվան որ պօղոսը մեռցունեն։ Բայց որ դատաւորին անկաձը հասաւ՝ շուտմը անոնց մէջէն պօղոսը առաւ, ու զգուշութիւն կեսարիա քաղաքը փելիքս ըսած մեծ դատաւորին խրկեց, որ հրեայքը հոն երթան՝ ու անոր առջևը պօղոսի դատաստանը տեսնըվի։ Երբոր եկան՝ ու երկու դիւնալ խօսվեցաւ, ան ատենը փելիքսնալ իմացաւ որ պօղոս անմեղ է, բայց այսու ամիս հրէից երեսպաշտութիւն ընելու համար, ջազատեց առաքեալը, հապա բանտը դրաւ պահեց, ինչվան որ ինքը փոխվեցաւ՝ իր տեղէն փեստոս անունով ուրիշ դատաւորը տեղը եկաւ։

Այս փեստոսը երբոր երուսաղէմ գնաց, պօղոսի թշնամիները չարու

քաւոր նաւակոծութեէ հանդիպելով ուրիշ Ճամբորդները ու նաւարարները կենաց որ կրյուսահատեին, պողոս վանին կեցած միշտ իրենց սիրտ կուտար կրյորդորեր, որ չվախնան կերակուրնին ուտեն որ ուժ առնեն. և մէկ հեղմը ասալ պատմեց որ հրեշտակ ՝այ ինծի երևցաւ. ըսաց թէ՝ պողոս, մի՛ վախնար գուն կայսերը դիմացնալ պիտոր երլես. անոր համար բոլոր նաւիդ մէջը եղած մարդոց կեանքնալ ՝ածք քեզի շնորհեց, որ քու պատՃառովդ իրենքալ զէնի չիդան: Պէնտ ետքը նաւը սաստիկ ալեկոծութէ մէկ ցամաքիմը զարնելով երբոր սկսաւ քայքայիլ, ան ատենը պահապան զինվորները մէջերնին խորհուրդ ըրին որ իրենց հետի բռնած կապածները ըսպաննեն, որ չփախչին ազատին. բայց հարիւրապետը ուզելով որ պողոս առաքեալը խալըսի, աս բանը թող չիտրվաւ, հրամայեց որ ով որ կրընանէ թող լողալով ցամաք ելլէ. և այնպէս ամենքը ազատեցան ցամաքնոր ելան, տեսան որ ան՝ մելիտինէ ըսած կղզին է եղեր:

Այս կղզիս բնակիչքը թէպէտ լեռնցի կոպիտ մարդիք էին, բայց սիրով առին ընդունեցան աս նաւաբեկուէ խալըսած Ճամբորդները, որ պողոսալ հետերնին էր. և անձրևին ու ցրտուն առին կրակ ըրին անոնց՝ որ վրանին գլուխնին չորցուսնեն՝ տաքնան հանդստանան: Այն ատենը պողոսալ կրակին վրա խոտիւ (՝այ չալըչբրփը) դնելնին՝ մէջէն օձմը ելաւ՝ պողոսի ձեռքէն բռնած խածած կախվեցաւ. աս որ տեսան մարդիքը՝ սկսան ըսել թէ՝ անանկէնէ աս մէկ չարագործմընէ եղեր, որ ՝ածք զին-

քը ծովու ու ցամաքի վրա կուզէ պատժել մեռցունել։ Այլ եթէ պօղոս շուտմը ձեռքը կրակին վրա թօթվելունպէս օձը փրթաւ կրակին մէջը ինկաւ, ու իրէն ամենևին զէնմը չեղաւ. անոր վրա մարդիքնալ խօսքերին փոխեցին, ու նորէն զարմանալով կրսէին թէ՝ աստուածներէն մէկ պիտոր ըլլա։ Այս մեկտեղ կղզին պօղոս իրեք ամիս կեցաւ, և շատ հիվանդներ բժշկելէն ետև՝ նորէն նաւ մտաւ. ու երբոր ալ հոմ գնաց հասաւ, ան տեղը եղած հրէաներուն հասկրցուց իր հոմ երթալուն պատճառը։ Այ ան տեղը երկու տարիի չափ իր դատաստանին բանը որ երկրնցաւ, մէկ առանձին տունմը բռնած՝ հոն կընդունէր, և քովը եկողներուն համարձակ կրքարոզէր ու կրսորվեցուներ քրիստոսի հաւատքը։

Ինչվան հոս կրպատմէ գործք առաքելոց գիրքը. որով կրլրմընա նոր կտակարանին պատմութիւը։

ԳԼ. ԺԲ.

Յաւելված պատմութիւն առաքելոց գրքի։

Գործք առաքելոց գրքին մէջը եղած քսի՝ ան մերոյ առաքելոց և աշակերտաց պատմութիւները կարգով համառօտ պատմելէն ետև, պատշաճ՝ կերևա որ՝ թէ գրքին ուրիշ տեղերէն առած՝ քիչմընալ տեղեկութի տանք անոնց գրքվածքներուն վրա։ Այս՝ ան՝ մեր՝ ինչպէս աւետարանը կրսէ, տասվերկու առաքեալ, և եօթանասունվերկու աշակերտ իրէն ընտրեց առաւ. և իր նոր օրինաց հաւատքը պիտի առաջ տանց սորվեցունելով, (որ ասով իրենք՝ նոր

եկեղեցոյ առջև հիմունքը եղան,) հրամայեց որ երեթան չորս դին բոլոր աշխարքքս քարոզեն իր ՝ի՛ր հաւատքը։ Այտքը տասներկու առաքելոց մէջէն յուդան որ պակսեցաւ, ՝ի՛ծայնն կամ՝քը անոր տեղը ուրիշ երկու հոգի ընտրելն ցան մնան առաքելոց կարգը, մէկ՝ մատաթիա, ու մէկալը՝ պօղոս, ինչպէս որ վերը պատմեր ենք։

Այս բոլոր առաքելոց և աշակերտաց մէջէն միան ութ հոգին ՝ի՛ծ ընտրեց, որ գրվածքովալ իրեն քրիստոնէական քարոզուելը թողուն եւ գնան եկող հաւատացելոցը, անանկ որ՝ ասոնց գործքը ՝ի՛ծաշունչի կիմ՝ՈՐ գրոց կարգը անցաւ։ Պէտք առաջ՝ ասոնցմէ չորսը, ՝ի՛ մատթէոս առաքեալը, մարկոս աշակերտը, ղուկաս աշակերտը, ու յովհաննէս առաքեալը՝ յոի քոի բուն համառօտ վարքը և վարդապետութիւնները գրեցին, ու անոր համար իրենց գրվածքնալ՝ Աւետարան կոչվեցաւ, որ ըսել է՝ ուրախական բանի (կիմ միւ՝ՀՀտէի) գիրք, որ մարդուն կրծանուցանէ կիմ աւետիս կուտալիր ՝ի՛յ հետ հաշտվելը և փրկուելը։ Երկուքը աս չորս աւետարանիչներէս՝ ասկէ ՝ի զատ ուրիշ բանալ գրեցին։ Մէկը ղուկաս՝ գործք առաքելոցը գրեց. որ քոի համբարձմանէն ետև նոր եկեղեցոյ սկզբնաւորութիւնը կրպատմէ, ինչպէս աս վերջի մասիս մէջը տեսանք։ Մէկալը յովհաննէս՝ իրեք թուղթալ գրեց, որ առջինին մէջը՝ քոի բանն ՝ի՛ծ ըլլալը հերետիկոսաց դէմ հաստատելէն ետև՝ բոլորը սիրոյ կիմ եղբայրսիրուն վրա կը քարոզէ։ Դաև ասոնցմէ ՝ի զատ Յայտնութիւն գիրքնալ գրեց. որ ինչպէս կըսեն՝ աւետարանը գրելէն առաջ

երբոր աս ՝ոբ առաքեալը քրիստոնէութեան համար պատմոս բսած յունաստանի կղզին աքսորվեցաւ, ՝ոած անտեղը յայտնեց իրեն ան տեսիլքները. որ բոլորը առակով մարգարէութիւն են՝ ինչ որ քսի առջի գալըստեանէն ինչվան վերջի գալուստն որ պիտոր կատարվի եկեղեցւոյ մէջը։ Ամանք աս տեսիլքներսալ ՝ոբ գրոց պատմուէ ետևէն գրած՝ կարգով կրպատմեն. բայց մենք տեսնելով որ՝ ըստ ինքեան անոնք եղած պատմուի չեն. մէյմընալ որ՝ անանկ առանց մեկնուէ դնելը՝ անպտուղ բանմը մեզի երևնալով, իսկ մեկնուելը՝ էվելոք կերկրնցուներ գրվածքնիս. և անալ շատ անգամ անորոշ պիտոր ըլլար, (որովհետև խիստ խրթին ու անանկ խորհրդաւոր են ան տեսիլքները, որ ինչվան աս օրս վարդապետները կըտառապին՝ և անոնց բուն մեկնութիւնը չեն կրնար տար,) անոր համար մենքալ զանց ըրինք՝ աս համառօտութեամ մէջը չիդրինք։

Աւետարանիչներէն 'ի զատ՝ պետրոս առաքեալնալ երկու թուղթ գրեց հրէից ազգին հաւատացելոցը, որ բոլոր աշխարք ուրիշ կռապաշտ ազգերուն մէջը ցրված էին։ Այս ատոնց մէջը կրցուցունէ թէ՝ քսի տնօրէնութիւնները մարգարէք առաջուց քարոզեցին. ու հոգեշարժ յորդորանքներով մեծ ուպզտիկ կրխրատէ՝ որ ամէնքը իրենց պարտքը ընեն. և հերետիկոսներէն զգուշանան, անոնց խօսքին մտիկ չընեն՝ չիսարվին։ Նորպէս նալ յայտնոս առաքեալը, որ եղբայր ՝ոն կոչվեցաւ, ինքնալ թուղթմը գրեց հրէայ հաւատացելոց՝ կերպ կերպ երկան զարմանալի խրատներով։ Ինչպէս իր եղբարը յուդա առաքեալնալ՝

որ թագէոսալ կրսվի. անալ մէկ համառօտ թուղթմը գրեց ան նոր հաւատացեալոցը, որ այվընին բանան չիսաբվին հերետիկոսաց ըրած ծուռ վարդպտուէն։ Իր ըսած չորս առաքելոց եօթը թուղթը՝ Պաղուղէէոյ ըսվեցան՝ որ կընշանակէ ընդհանրական. որովհետև՝ ինչպէս կրսեն, աշխարքիս չորս դին ուր որ հրեից ազգէն հաւատացեալ կար՝ անոնց գրվեցաւ։

Իսկ պօղոս երեքտասան առաքեալը՝ որ աշխարքէ աշխարք պրտրտելով՝ գրեթէ իր բոլոր քարոզութիւնը կռապաշտից ըրաւ, որ ան պատճառովալ վարդապետ հեթանոսաց կոչվեցաւ. տասնըչորս թուղթ գրեց՝ ասոնց ան դին մասնաւոր հաւատացեալոց եկեղեցիներուն, որ մեծ մասը ինքը իր քրտինքովը հիմը գրեր հաստատեր էր։ Հաստի իր թղթին մէկը՝ խրկեց հռոմայեցոց, երբոր ինքը կորնթոս էր. և աս թուղթս՝ ինչպէս կերևա, ինքը տուն կուտար՝ ու տերտիոս ըսած իրեն մէկ աշակերտը կրգրեր։ Իր աս թղթովը առաքեալը՝ կրջանա որ խաղաղեցունէ դարձած հրեից և հաւատացեալ հեթանոսաց կռիւը որ մէյմէկու վրա կրպարծենային՝ ու մէկ զմէկ վար կրզարնեին։ Իրկու խրատական թուղթալ գրեց կորնթացոց, որ ատենով յունաստանի մեծ քաղաքներէն մէկն էր. ասոնց առջինը՝ եփեսոսէ կամ փիլիպէէ հոն խրկեց. ու մէկալը՝ մակեդոնիայէն։ Ղորրորդ թուղթը գրեց գաղատացոց, որ փոքր ասիային (այ՝ աստաօլուի) մէջը կկայա. ու աս թուղթը հռոմայէ, կամ ըստ այլոց՝ եփեսոսէն հոն խրկեց։ Հինգերորդ թուղթնալ հռոմայի բանտէն

գրեց՝ Եփեսացոց, որ հին ատենը Եփեսոս՝ ծովեղերեայ մայրաքաղաք էր փոքր ասիայի. ու տիքիկոս աշակերտին հետ խրկեց իրենց։ Պ. Յերորդ Թուղթը փիլիպեցոց գրեց, որ մակեդոնիայի (կամ ուռուսմելի) կողմը մեկ ծովեղերեայ քաղաքմըներ, և ինչպէս կըսեն՝ աս ալ հռոմայի բանտէն խրկեց եպափրոդիտէս ըսած մեկումը ձեռքովը։ Չորրորդը՝ կողոսացոց գրած Թուղթն է՝ հռոմայէ խրկած, որ հին ատենը՝ աս ալ փոքր ասիայի քաղաքներէն մեկն էր։ Հինգերորդը և հիններորդը՝ Թեսաղոնիկեցոց գրած երկու Թղթերն են, առջինը աթենք քաղքէն խրկած է կըսեն, ու երկրորդը՝ կորնթոսէ կամ հռոմայէ. աս Թեսաղոնիկէ ծովեղերեայ քաղաքը՝ հին ատենը մայրաքաղաք էր մակեդոնիա գաւառին, որ հիմա՝ սելանիկ կըսվի։ Յաներորդը՝ եբրայեցոց Թուղթն է, որ ինչպէս կըսեն՝ պողոս իդալիայէ գրեց՝ ու դեպ 'ի հրեաստան խրբկեց հաւատացեալ հրէից, սիրտ տալով իրենց՝ որ հեթանոսաց ու անհաւատ հրէից ձեռքէն քաշածներուն սիրով համբերեն։ Պողոս առաքեալը որ մեկալ ամենն Թղթերուն ծարը իր անունը կըդնէ, միան աս Թղթիս վրա չի դներ։ Զսոր պատճառը կարելի է Թէ աս է կըսեն, որ գիտնալով Թէ ինքը նախանձուԹը ատելի ըլլալով իր ազգին մէջը, անոր համար մեկալ Թղթերուն վրա որ հեթանոսաց դարձածներուն խրկրվեցաւ, յայտնի գրեց իր անունը, ու ասոր վրա զանց ըրաւ։

Տասնըմէկ և տասվերկուերորդը՝ տիմոթէոսի գրած երկու թուղթն են. որ իրեն սիրելի աշակերտն էր, ու ինքը անիկա եփեսոսի եպիսկոպոս ձեռնադրեր էր. ասոնց մէկը մակեդոնեայէն գրեց, ու մէկալը հռոմայէն։ Տասվիրեքերորդ թուղթը տիտոսի գրեց որ, ասալ իրեն աշակերտն էր, ու ինքը էպիս ըրեր էր կրետացոց (՝ի կիրիտի)։ և աս թուղթս իրեն խրկեց նիկոպոլիս ըսած մակեդոնացոց քաղքէն։ Տասնըչորսերորդ վերջին թուղթը՝ գրեց իր փիլիմոն ըսած բարեկամին, ասնոր ոնեսիմոս ծառային պատճառովը, որ յանցանք ըրած տիրոջը քովէն փախեր հռոմ եկեր էր, պոլոս ալ ինքը խրատով Ճամբա բերելով, անիկա աս թղթովը նորէն իր տիրոջը կըյանձնէ։ Ա՛յս պոլոս առաքելոյն գրած տասնըչորս թղթերուն մէջը՝ բոլոր քրիստոնէական հաւատոյ ուսումը, ու բարոյական և հոգևոր վարդապետուիր այնպիսի զօրաւոր կերպով գրած է, որ կարդացողին միտքը կրկապվի. մանաւանդ անոնց մէջը յայտնի տեսնելով Այ մեծագործութիւնը, որ իրեն հաւատքը հալածողը՝ և իր անունը հայհոյողը, անանկ քարոզուի ընէ աւետարանին վրա, որ չէ թէ միան կենդանութիւնն ատենը, հապա ինչվան ասօրըս իր գրած թղթերովը պապանձեցունէ հաւատոյ թշնամիքը։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ։

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ։

Ա. Պատերազմը աշխարհի՝ և առաջի մարդոն. 5։
Բ. Ցախահարց մեղքը ու պատիժը. 6։
Գ. Կայենի և Աբելի պատմությունը. 9։
Դ. Աստ մարդոց լարությունը Լամեխեղով հրապարակ. 10։
Ե. Խաբելոնի աշտարակը. 14։
Զ. Հայր Աբրահամու հոլովումը, ու իրեն որդիք գործերը. 15։
Է. Աբրահամու հետ աստ ուխտ ու դաշինք հնանք, և իրեն խամայել զաւակ հուտա. 18։
Ը. Աբրահամու և զովայ հիւրասիրությունը, ու սոդոմացոց պատիժը. 20։
Թ. Իսահակ ծնանելն եւ Աբրահամ խամայելը դուքն հրաձամբ. 23։
Ժ. Աստ հրամայել Աբրահամու՝ որ Իսահակը իրեն ողջակէզ ընէ. 24։
ԺԱ. Աբրահամ Իսահակը հրաւիրէ, և այնպէս հրավառանի. 26։
ԺԲ. Իսահակայ որդիքը՝ Եսաւ ու Յակոբ. 28։
ԺԳ. Յակոբ հօրը օրհնությունը եղբօրը յեռուէն հրայարդանէ, ինչը հառնէ. 30։

ԺԴ. Յակոբ Դիլափեան երիտասարդին սեսնելը հը-
սեանք, ու հոն կերթա կէտարէնի
դուռն սեղ հելլա. 33
ԺԵ. Յակոբ կենալի էր երկիրը դառնալու. 35
ԺԶ. Յակոբայ ճամբորդութիւնքն ալ ուրիշ հան-
դիպած բաներըն. 37
ԺԷ. Յակոբայ դիկալ պղոյզ նախանձութիւնքը և
դառաձանութիւնքը յովսէփ փեղեցիին վրա. 41
ԺԸ. Յովսէփ եգիպտոսի ալ հրձգելի, ու հոն
պրպտրտութիւնքի բանի հըմանք. 44
ԺԹ. Յովսէփ փարաւոնի երազներըն մեկնելվ
բանդին հըկալըսի, և իշխանութիւնքի հը-
հանի. 47
Ի. Յովսէփայ եղբարներըն սովին պատճառովը
երկրն ու հերթելն, յովսէփ անոնց հը-
դորյնի. 50
ԻԱ. Յովսէփ իր եղբարներըն փիմնալ դորյելին
եկա՝ ինչը անոնց հըյայտնի. 53
ԻԲ. Յակոբ բոլոր ընտանիովը հելալ եգիպ-
տացոց երկիրը հերթա. և հոն իր զաւակ-
ներըն օրհնելվ բարի ծերութիւնքի հըվախ-
ճանի. 58
ԻԳ. Յովսէփ իր հարը հըթաղի, և եղբարնե-
րուն ընդդիմութիւնքի պալին եկա ինչնալ հը-
վախճանի. 61

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

Ա. Իսրայելացոց հալածումը և նեղութիւնքը ե-
գիպտացոց յեռուքն. 63
Բ. Փարաւոնի աղջիկը՝ մովսէսը գետէն հը-
խալըսի՝ երեն որդեգիր կանի. 64

Գ. Ովքեր ապաշխարությունը պարձառով մատնեցող երկիրը էբեխելի, և մարդկանքն հրաշքը էրեսնեն. 66:
Դ. Ովքեր եկեղեցու էրեսանեն. որ ինչպես եկեղեցոյ չեռուքն խաչքն. 70:
Ե. Եկեղեցոյ տասը հարվածները էամ պատիժները. 72:
Զ. Տասներորդ եկեղեցոյ հարվածը, որ խաչելոյ եկեղեցոնն ելնելը. 78:
Է. Խաչելոյ էարդը ծովքն կանգնին, որ գարանն էր աշխարհը հոն էլնելու. 81:
Ը. Նոպաքը ամ ինչոյ ջրին պակասությունը էնդոգա, և մանանան էրենց ինքնուրույն գալա. 83:
Թ. Մաղնիկոյնը էրջարդվին ինչոյնեքն։ Զորոր գոգա մովքսը բարեկամ. 86:
Ժ. Ամ սինա լեռը գանգաբանքոյ պարարանքները գալա ինչոյ. 88:
ԺԱ. Ինչոյ ամ էրնոլոն՝ հորն էրպալանքն. 91:
ԺԲ. Սրանքն՝ որ պապանաքին շինելը, և որել ամպարանքն ծքսերը. 94:
ԺԳ. Լաբար որ աբեղար, և որելյանցարանքերը էրպարծվին. 96:
ԺԴ. Ինչոյ այ դեմ էրարքանքան, որ էրպարծվին. 98:
ԺԵ. Հարն որ մարիամ էրպարծվին. 100:
ԺԶ. Ովքեր լրանքներ էրնրվին սահեսացերվին. և ինչոյ հորն էրպարծվին. 101:
ԺԷ. Որին, դարանը և աբերանը էրպարծվին, որ ահարանքն գարանքը էրծաղին. 105:
ԺԸ. Ինչոյ ճամբորդանքն վերջն դարն հանդերպած բանները. 110:
ԺԹ. Խաղաղաց պարմանքը. 112:

Ի. Անվնաս մարգարէն հրավիրեալներ, յեսու որդի Նաւէին անուր տեղը կանգնի. 116։
Յաւելուած. Յոբ երանելւոյն պատմութիւնը. 118։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ։

Ա. Յեսու կառաջնորդէ իսրայելացոյ՝ որ յորդանանն գետը կանգնին. 125։
Բ. Երիւոյ ու գայլ ըսած խաղիներուն առու�ը. 128։
Գ. Գաբաւոնացոյ խաբէութիւնը, և խանանացոյ հինգ թագաւորներուն ջարդուելիքը. 131։
Դ. Յեսու բոլոր աւելցեալ երկիրը պերապետելով անիկա իսրայելացոյ հրաբանել, ու անանկ հրավիրեալներ։ 134։
Ե. Յեսուայ եռանդ՝ դարձարարայ ապէնի իսրայելացոյ որդիներուն. 139։
Զ. Գնեորայի, բարակայ սխաբայի, և յայելի պատմութիւնը. 142։
Է. Գնդէոն զօրաղեա հրաւիրուելի՝ իսրայելացիներ մարդիանացոյ յեռոգէն կալանք. 145։
Ը. Աբիմելեքայ բռնակալութիւնը. 150։
Թ. Յեփթայէի պատմութիւնը. 153։
Ժ. Սամսոնի պատմութիւնը. 157։
ԺԱ. Միքայի պատմութիւնը, և բենիամենի ցեղին ջարդուելիքը. 164։
ԺԲ. Հռութայ պատմութիւնը. 167։
ԺԳ. Աննայի աղօթքով սամուէլը հրաւանք՝ ու այ հրաւիրուելիք. 169։
ԺԴ. Հեղի իր որդիներու

ԺԵ. Այլաղանդները պապանակին պարձառով հըպարծըվին՝ ու ան նորքն ինքլացոց հըդարձոնին. 175:

ՄԱՍՆ ՁՈՐԲՈՐԴ:

Ա. Խրայելայոց իրենց նախաւոր կուռքն դընել. ամաչ սուռողը աւել նախաւոր հընորք իսրայելացոց. 179:
Բ. Սաուղ ինքյաղնումը ընելն ինչ՝ նորքն նախաւոր հօրվի. 182:
Գ. Սաուղ նորքն այլաղանդները հայաղնի, ու անհնազանդությունը համար այ ազքն կիսնա: Ոնվելանա իր ըրած չարությունը ռնանելն կապարի. 183:
Դ. Սաուղ ամաղնկացոց խնայելով, բոլորվին այ ազքն կելլա. 186:
Ե. Դաւիթը նախաւոր հօրվի. 188:
Զ. Դաւիթ փաղիանը հըպարանի, ու անով բոլոր այլաղանդները հայաղնըվին. 190:
Է. Սաուղն նախանձությունը դաւիթ վրա. 194:
Ը. Դաւիթ սուռողի յետոքն հըհալածվի՝ փախապահան հըպարտի. 196:
Թ. Հաբաղ ու աբիգեայի պարմանը և դաւիթ ուրիշ դիպվածները. 201:
Ժ. Սաուղի մահը, ու դաւիթ անոր վրա ըրած բարի հարությունը. 205:
ԺԱ. Սաուղի դանը հըմարի, ու դաւիթ նախաւորությունը կաղնի. 208:
ԺԲ. Դաւիթ այ պապանակը հըվերցընե երուսաղեմ հըդարձի. 211:
ԺԳ. Դաւիթ ուրիշ յաղանդները, ու իր ձեռքը՝ և ապաշխարությունը. 214:

ԺԳ. Բ.իսուսի յեհուդէն դաւաճան եղածն ինչ-
ներ՝ իրեն մեղացը պատճառ. 219
ԺԴ. Բ.իսուսմ հրաշագործելէ, ու դաւաճանն
իր տեղը երթալուն. 224:
ԺԶ. Լեղայի մահարարածամով հրաշագործելէն. 228:
ԺԷ. Դաւաճանը իր եղբարն սողոմոնը բռնաւոր
հրերելնէ՝ ու ինքը հրավառնալու. 230:
ԺԸ. Սողոմոնի բռնաւորութիւնը. 233:
ԺԹ. Սողոմոն դատարը և իր պալատը հրաշնէ:
Սաբա թագուհին իրեն գալ կոչ. 237:
Ի. Սողոմոնի մեղքը՝ ու իրեն մահը. 240:
ԻԱ. Իսրայելացոց թագաւորութիւնը երկուքի հրաբաժնելէ. 243:
ԻԲ. Յերոբովամի իսրայելացոց թագաւորին մեղքը, և իրեն լար յանդիմանութիւնները. 245:
ԻԳ. Աղիա մարգարէն ահայիի լարութիւնը հրայանդիմանելնէ՝ ու ինքը հրապարակ. 249:
ԻԴ. Ահայիի ուրիշ գործերը, և իր լար սատակումը. 252:
ԻԵ. Ասուրայի պատերազմը. և Եղիա մարգարէին երկինքը վերանալը. 255:
ԻԶ. Աղիա մարգարէին հրաշագործութիւնները. 258:
ԻԷ. Յեհու ահայիի տեղը հրաշնելէ՝ ինքը հրաթագաւորելու, և անոր եղբարն Նադաբ իսրայելացոց թագաւորները. 266:
ԻԸ. Յոթպայի տեղին թագաւորները՝ ասորեստանի սկսած ինչվան յովրամ. 271:
ԻԹ. Յոթպայի տեղին թագաւորները ասորեստանի սկսած ինչվան ատաղ. 278:
Լ. Աղեքիա թագաւորին պատմութիւնը, և իր եղբարն Նադաբ յոթպայի տեղին թագաւորները՝ ինչվան վերջը. 285:

ՄԱՄՆ ՀԻԳԵՐՈՐԴ։

Ա. Պատմութիւն Տոբիանոյ. 297։
Բ. Պատմութիւն Յուդիթայ. 303։
Գ. Պատմութիւն Աստերայ. 310։
Դ. Պատմութիւն Մարգարէից. 318։
Ե. Պատմութիւն Դանիէլի մարգարէին. 324։
Զ. Իրեւ մանկանց պատմութիւնը. 330։
Է. Դանիէլ մարգարէին սուրբ պատմութիւնը. 332։
Ը. Արկոպասան մարգարէները. 342։
Յոթան մարգարէին պատմութիւնը. 343։

ՄԱՄՆ ՎԵՑԵՐՈՐԴ։

Ա. Հրեայք Բաբելացւոց գերութեան կրդաստանան. 348։
Բ։ Աղէմ նորին շինվելին եւ՝ հրէից ազգին հանդիպածները. 352։
Գ. Հեղինոդորոսի պատիժը. 354։
Դ. Հրէից խաղաղութիւնը Ներսեհ Վրաց կաթուղիկոսի ապին. 356։
Ե. Ամենապատուութիւն եղիսաղոր ծերունուին, եւ եօթը եղբարց մակաբայեցւոց՝ երկնից մօրը հետ. 361։
Զ. Պատանեաց հանդանայնին եւ երդոյը բարեպաշտութիւնը, եւ անոնց հաջողութիւնները. 366։
Է. Յուդա մակաբեին հաջողութիւնները. 368։
Ը. Ինոքոս ընտրաւորին սատակումը, եւ անոր եղեւեն նոսաց ընտրաւորներուն պատերազմը՝ հրէից դէմ. 372։

Թ. Յոտրա մակաբէին եղեալն՝ յոթնամեան անոր պեղը կանոնի. 377։
Ժ. Յոթնամեան հանանայպէտին ոսրիշ պատմութիւնները. 379։
ԺԱ. Շատոն կը յայտնուրդէ յոթնամեանի պեղը. 382։
ԺԲ. Յաւելուած հրէից պատմութիւնը՝ մինչև չորեքտասանդը. 386։

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ։

Ա. Գաբրիել հրեշտակապետը աստուծոյ կոչեցեալ զարքայի, և կուսին մարիամա. 395։
Բ. Կոյսն մարիամ այցելուսի կերթայ ի Եղիսաբեթ յոթնամեանէս մինչեւ ի ծնունդն. 398։
Գ. Յայտ Վասն Ծնունդը. 399։
Դ. Իրեւ մոգերը յայտ երկրպագումն կուգան, և ան պարգևատուին հերոդէս թագաւորն մանկունքը կը ջարդէ. 402։
Ե. Յայտ դաշտաբը ընծայելը. և դասուերկոտասարվան առնարքն մեջը գերեալելը. 404։
Զ. Յայտ հրդեհը, ու սատանայեն փորձելը. 406։
Է. Կանա գալիլեացոց հարսնիքը, և անկէ ետեւ չորս հանդերձած բաները. 409։
Ը. Սամարացի կնկանը պատմութիւնը. ու բանգասորաչին պղնի բծղկութիւնը. 412։
Թ. Աստուծոյ՝ հրաշագործ յոյսի բաները. ծանվին ալեկոծութիւնը դադրիլը. և գերգեսացոց դիվահարներուն բծղկութիւնը. 414։

Ժ. Ընդհանրութիւն բծղնոցին: Մարմնոյ առաջելոյն հոլովումը: Յայրոսի աղջկանը, ու պետրոսի կնկանը բծղնոցին. 417:
ԺԱ. Պրոպոսիկեի անդամալուծին, ու յեղոտը ղրոյծ մարդուն, և ուրիշ յաստուածքանչելի բծղնոցներուն. 421:
ԺԲ. Տասնեքիս առաջելոց ընդարձակը: Ղորդին և հարիւրապետին ծառային բծղնոցը. 424:
ԺԳ. Լայնի փաղչին մեռելին ողջենալը: Մեղաւոր կնիկին դարձը: Սերմանացանին առակը. 426:
ԺԴ. Յովհաննու հրաչք գլխապտումը: Յոգի հինգ հացով, և ելքը հացով հալածաւոր մարդ դղրացոնելը, և ծովուն վրա երեսնալը. 430:
ԺԵ. Բանանոյ կնիկան աղջկանը բծղնոցը. 433:
ԺԶ. Յոգի այլանդերձութիւնը: Մէկ լուսնոտիմը բծղնոցը: Մանրը փղոցը խոնարհութիւնը օրինակ ընելը. 435:
ԺԷ. Պարբէնանին ու սամարացուին առաքինութիւնը. և փասը բորոտներուն բծղնոցը. 438:
ԺԸ. Լոմանասունվերջին աշակերտները: Մարիա ու Մարիամ: Ի ծնել նոր բիրին բծղնոցը: Յոգի էր ածուցը յայտնի փարոցը. 441:
ԺԹ. Ընտակ որդուին առակը. 445:
Ի. Տնտէսին, ու անողորմ մեծատան առակները. 447:
ԻԱ. Դատաւորին, ու քարեսիրին և մաքսաւորին առակները. 450:
ԻԲ. Հարուստ մարդուն [illegible] է արքայութիւնը [illegible]. 451:

ՀԱՅԿ — ՍՍՌ

Գ. Պաղարոսի բարեկիրթին տեր յարութիւնը. 454
Դ. Օգոստոսի դարձը։ Պանդվանին առաքը, և մարիամոս՝ յոբ եղով օթեւը. 456։
Ե. Յ՚ փառաւորութեան երուսաղէմ կերթա, ու հոն նորին հրաշքներ կընէ. 460։
Զ. Յ՚ նորին առաքիներով կընթանա՝ ու կը-պատանեցուցանէ հրէայքը։ 463։
Է. Յ՚ երուն վարդապետութիւնները՝ և առաքիները. 467։
Ը. Յ՚ մահուանը, և վերջին ընթրիքը. 470։
Թ. Յ՚ պարտեզը աղօթելը, ըմբռնուիլը, դատապարտիլը, և պետրոսի ուրանալը. 474։
Ժ. Յ՚ը պիղատոսի դատաստանը կը հանին, և չարչարելին եւ կը դատապարտին ու խաչելի. 479։
ԺԱ. Յ՚ի խաչելութիւնը՝ ու խաղումը. 483։
ԺԲ. Յ՚ի փառաւոր յարութիւնը, և աշակերտաց երեւումը. 488։

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ։

Ա. Հոգւոյն սրբոյ գալուստը՝ ու հաւատացելոց շատնալը. 495։
Բ. Ի ծընեալ կաղին բժշկութիւնը. 497։
Գ. Անանիայի ու սափիրայի պատիժը, և առաքելոց տարողութիւնը. 500։
Դ. Պետրոսի նախավկային պատմութիւնը. 503։
Ե. Սիմոն մոգը առաքելոցերին կընդդուեցաւ. ներչինին հաւատացեալ կըլլար. 505։
Զ. Սաւուղի կամ պօղոս առաքելոյն դարձը. 507։
Է. Կոռնելիոս հարիւրապետին դարձը. 510։

Ը. Պետրոս առաքելոյն բանքէն ազատվելը. 512։
Թ. Պօղոս առաքելոյն խարուրքները. 514։
Ժ. Պօղոս առաքելոյն խարուրքէ պատճառով խաղաց ղեղուքները. 517։
ԺԱ. Պօղոս եղբայր հրբռնըվի, ու անկէց հոսմ հերքնա՝ որ էր դատաստանը հոն պէտքը-վի. 521։
ԺԲ. Յառելվաց պատմութէ առաքելոց տեր. 525։

Mary Hughes